








Bzhshkean, Minas

Chanaparhordutiwn i Lehastan ew...

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ
'Ի ԼԵՀԱՍՏԱՆ

ԵՒ ՅԱՅԼ ԿՈՂՄԱՆՍ ԲՆԱԿԵԱԼՍ 'Ի ՀԱՅԿԱԶԱՆՑ ՍԵՐԵԼՈՑ
'Ի ՆԱԽՆԵԱՑ ԱՆԻ ՔԱՂԱՔԻՆ

ՇԱՐԱԳՐԵԱԼ ՀԱՆԴԵՐՁ ԶԱՆԱԶԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՏԵՂԵԿՈՒԹԵԱՄԲՔ

ՅՆ. Հ. ՄԻՆԱՍԱՅ ԲԺՇԿԵԱՆՑ

ՎԱՐԴԱՊԵՏԻ 'Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ
ԱՌԱՋՆՈՐԴԻ 'Ի ՏԱՒՐԻԱ

ՏՊԱԳՐԵԱԼ
'Ի ՅԱՒԷՐԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՒՈՑ
ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԵՒ ՄԵԾԱՆՈՒՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԻՆ
ԱՂԱ ՍՏԵՓԱՆԻ ԱՄՊԱՐԵԱՆ ՏՐԱՊԻԶՈՆՑՒՈՑ
ՓԱՓԱՔՈՂԻ ԳՈՐԾՈՅՍ

424 p. + 1 [illegible]



'Ի ՎԵՆԵՏԻԿ
'Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑ ՂԱԶԱՐՈՒ

1830 ՌՄՀԹ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ազգ երթայ և ազգ գայ՝ և երկիր յաւիտեան կայ, ասաց Սողոմոն։ Քանզի Արարչապետն բոլորեցուն գեղեցիկ արարչագործեալ զայս մեծատարած աշխարհ ետ մարդկութեանս 'ի բնակութիւն։ Այնպէս զի՝ բազմացեալ 'ի նմին միասցին ընկերական ոգւով և յաջորդաբար 'ի տեղի միմեանց փոխաբերելով՝ շէն և զարդարուն պահեսցեն զաշխարհ բնակութեան իւրեանց։ Որով մնայ նիւթականս աշխարհ 'ի կայի իւրում յաւիտեան, թէև բնակիչք անդադար փոփոխեսցին յանկայուն յաջորդութեան իւրեանց։ Սակայն և այնպէս ոգի ընկերական գիտէ յաւէրժաբար թագաւորել յաշխարհի յորդւոց յորդիս առ 'ի պահել զնոսա 'ի քաղաքականութեան և զաշխարհ 'ի շինութեան կարգօք և կանոնօք, ըստ որում անկ մարդկութեանս բանական մասին, որով միայն լինի ճանաչել և ծառայել Արարչապետին 'ի բնական կարգի ունելով զամենայն։

Տինա՝ ընդ տեսանել մարդկան զարև՝ սկսան բնաբոյս բերմամբ շինուածս կառուցանել և բնակարանս հաստատել առընթեր միմեանց առ 'ի միանալ ընկերական ոգւով։ Յոր որչափ առաւել սովորիլ կրթե-

ցան, այնչափ առաւել իմաստնացան քաջալաւութեամբ և միաբանասիրութեամբ. մինչև ձեռն 'ի գործ արարեալ վայելուչ կանգնել մեծաշէն քաղաքս և հաստատել տէրութիւնս : Այլ ուր ուրեք բազում չէնս առ միմեանս շարունակեցին, անդ եղև մեծ քաղաք և մեծ միաբանութիւն. և ուր սակաւ՝ սակաւ միաբանութիւն և փոքր քաղաք կամ գիւղաքաղաք :

Նա քանզի 'ի կենակցիլ բազմաց 'ի միասին՝ մեծ և զօրաւոր լինի ոգի ընկերական, անպակաս ուսանելով յիրերաց զպիտանիս, և հաղորդելով միմեանց զհանճար և զգիւտ. նմին իրի անդէն և անդ ծավանայ ոյժն և յառաջ գան հիացմանց մեծագործութիւնք, և իմաստուն կարգք մեծիմաստ աշխարհաշինաց 'ի մայրաքաղաքս աշխարհի. յորս Թագաւորէ պանծանօք ոգի ընկերական և քաղաքականութեան : Նորին աղագաւ ուղղադատ իմաստունք՝ ընդ տեսանելն 'ի քաղաքամէջս զերևելի և հոյակապ շինուածս՝ անվրէպ կշռադատէին, թէ գոյ անդ ընկերական ոգի, և անպակաս միաբանասէր աշխարհաշէնք :

Ըստ այսմ 'ի սկզբան անդ 'ի բազմանալ աճելութեամբ ծննդոց Նախահօր՝ հարկ եղև վեհ աշխարհապետաց քաղաք շինել. որպէս զի միացեալ 'ի մի մարդիկ զօրասցին քաղաքականութեամբ. որով և եղեն արուեստապետք պիտոյից մարդկութեանս և ճարտարապետք մեծագործութեանց աշխարհի. (Ծն. 568) : Սապէս յետ աշխարհակուլ ջրհեղեղին երկրորդ Նախահայր մարդկութեանս ընդ կոխել 'ի ցամաք, յառաջին գործսն կարգեաց կառուցանել զասպնջարան անձին զիւրն Նախիջևան, որպէս զի՝ յառաջ քան ըզցրուիլ մարդկան՝ տեսցի անդ ոգի միաբանութեան և քաղաքական ընկերութեան :

Իսկ զկնի աշտարակաշինութեան իբրև ցան և ցիր եղեն մարդիկ տարագնաց խուժապմամբ՝ գունդ գունդ ’ի կողմանս կողմանս աշխարհի եկեալք և միացեալք քաղաքականութեամբ տէրութիւն կազմեցին, քաղաքս շինեցին, ազգք և ժողովուրդք եղեն ոգւով միաբանութեան։ Ուր ուրեք առաւել զօրացաւ այն ոգի, անդ բազմաժողով ազգ եղև ծաղկեալ կարգօք իմաստութեամբ և վաճառականութեամբ։ Իսկ ուր ոչ զօրացաւ՝ անդ և ոչ մի ինչ ’ի լաւագունից տեսաւ. մանաւանդ զի մարդիկ անուս և անքաղաք մնացին անմիաբան ոչ ինչ ընդհատ ’ի լեռնաբնակ գազանաց, որպէս տեսանի ցարդ յանկիւնս ինչ ինչ աշխարհաց. (Հմփ. 284)։ Այսպէս ’ի հնումն բազում էին այսպիսի վայրենամիտ անմիաբանասէր ազգք, մանաւանդ ’ի Յունաստան և յԻտալիա. որք ապա պիտանի կարգօք և իմաստուն օրինօք Փիլիսոփայից յղացան զհոգի ընկերսիրութեան, և անդէն իջեալ ’ի լերանց անտի մերկացան զվայրենութիւն, և միացեալ քաղաքականութեամբ բոլորեցին զքաղաքս, և հաստատեցին զտէրութիւնս զարմանալի կարգաւորութեամբք. որպիսի էին Աթենացիք, Հռովմայեցիք, և այլք։

Այսպիսի իմն օրինակաւ եղեն քաղաքական և Ամերիկացիք, որոց վայրենութիւն գլխովին օտարացուցեալ զնոսա ’ի մարդկութենէ՝ տայր նոցա որսալ զմիմեանս և ուտել գազանաբար, համարելով զայն գործ իմն բարեպաշտութեան (Ռոպէն, դէպ. ծե.)։ Իսկ սակայն մեծահանճար օրէնք բազմիմաստ Եւրոպացւոց այնպէս ’ի գեղեցիկ քաղաքավարութիւն ածին զնոսա, մինչև յապուշ կրթիլ իմաստուն մնաց ’ի վերայ մեծագործութեանց և բարեկարգութեանց նոցին։

Եւ այսպէս Եւրոպացիք և Ամերիկացիք որչափ առաւել զօրացան ոգւով միաբանութեան, այնչափ առաւել մեծացան աշխարհօք՝ Թագաւորութեամբք և իմաստութեամբ, մինչև կանոնս և օրէնս տալ աշխարհի: Իսկ Ասիացիք և Աֆրիկեցիք 'ի սկզբան անդ գոլով քաղաքական և միաբանասէր, նախ քան զայլս ինքեանք ծաղկեցան յաշխարհի քաջալաւութեամբք հաստատելով զականաւոր մայրաքաղաքս և մեծազօր տէրութիւնս:

Ապաքէն Հայկ և Հայկազունն նահապետք, նաև Բէլ, Նինոս, և Շամիրամ մեծապանծ գործովք զաշխարհ դողացուցին, և զԱսիա դշխոյ կացուցին 'ի վերայ ամենայն աշխարհաց երևելի շինութեամբք, կարգօք, և մեծութեամբք: Սեսոտրեմ շինօղ Եգիպտոսի, եւս և փիւնիկեցիք, Սիդոնացիք, և Կարկեդոնացիք այնպէս ծաղկեցան քաղաքականութեամբ, մինչև հետք մեծագործութեանց նոցա յապուշ կրթէ զմիտս իմաստունս: Սոքա եղեն կանգնիչք եօթնաթիւ հրաշալեաց աշխարհի (Դէմ. 546:) 'Ի սոցանէ եղեն առաջին Թագաւորք, առաջին քանիբունք և հանճարիչք գիտութեանց, արուեստից և ամենայն կարգաց: Սակայն զարմանք մեծ, զի երբ Եւրոպացիք սկիզբն արարին քաղաքականութեան, Ասիացիք և Աֆրիկեցիք սկսան վերջանալ անտի: Սոքա միաբանութեամբ հաստահիմն կանգնէին զմեծանուն քաղաքս, նոքա անմիաբանութեամբ տապալէին բերէին զանքակտելի ամրութիւնս իւրեանց: Սոքա բազմահանճար կարգօք Թագաւորութիւնս ծաղկեցուցանէին, նոքա վայրենացեալ զիրեարս կոտորէին մոռացեալք արդարև զմարդկութիւն: Որով հիմնայատակ եղեն այն մեծաշէն մայրաքաղաքք և հոյակապ արքունիք, անհետ լինելով ան-

նուաճելի թագաւորութեանցն ընդ ամենայն ճոխութեանց և բարեկարգութեանց ։ Մինչ զի՝ այն անբաւ ժողովուրդք ոչնչացեալք կէս մի ինքնահալած ցրուեցան յանմիաբանութենէ ընդ ոլորտս երկրի . և կէս մի ծախեցան 'ի ծառայս սրոյ թշնամեաց ։ Այնպէս զի՝ ծառայք իւրեանց առին զմիաբանական ոգի նոցա, եղեն ազգ և զօրացան, և տիրեցին տերանց իւրեանց ։ Իսկ ինքեանք վատացեալք գերի և ծառայ եղեն ծառայից իւրեանց դանդաչեալք յօտար աշխարհս և 'ի ժողովուրդս ։

Մանաւանդ ազգ Հայոց, որչափ յինքն պահէր զոգի միաբանութեան պանծալի հանդիսանայր արութեամբք և մեծագործութեամբք . որպէս վկայեն ցարդ դրութիւնք օտարաց, և հետք շինութեանց նոցին ։ Բայց սակայն ընդ կորուսանել զայն ոգի՝ իբրև զոյժ Սամփսոնեան, վերացաւ 'ի նոցանէ և ոգի արութեան՝ անբաժ գտեալ յամենայն բարելաւութեանց, զրկեալ 'ի մեծապանծ թագաւորութենէ ընդ գեղեցկադիր շինանիստ գաւառաց, և յարքայակերպ նախարարութեանց ։ Որոց տեարք և բնակք եղեն օտարազգիք կամ այլազգիք, ինքեանք ցրուեալք 'ի հեռաձիգ խորշս աշխարհաց յորս դէպ եղև մեզ ըստ մասին ճանապարհորդել ։

Արդարև ողբալի լինէր պատմութիւնս, եթէ մարթ էր զամենայն արկածս թշուառութեանց պատահելոց ազգիս 'ի գիր արձանացուցանել ։ Աղէտալի դարձեալ՝ եթէ զանցս ամենայն երևելի քաղաքաց մերոց լինէր ինձ բանագրել 'ի կարգիս, թէ զի՛նչ ինչ կրեցին այն բարեշէն քաղաքք . և թէ զիա՛րդ բազմաթիւ ժողովուրդք գերի վարեալ ոտնակոխ եղեն ։ Դառն է ապաքէն լսել անգամ զաղէտ տարակուսա-

նաց, զոր անցուցին պարսիկք ընդ քաղաքս և ընդ ազգն մեր՝ սրով, հրով, և գերութեամբ մաշեալ զամենեսեան ։

Այլ մեզ յայսմ վայրի յաւէտ ընտրելի, 'ի բաց միանգամայն թողեալ զայն ամենայն՝ միայն զանցս մեծի քաղաքին Անւոյ առնուլ 'ի վէպ յայս հիւսիսաձեմ ուղեգնացութեան մերում, յորս բնակեալ հայկազունք ըստ մեծի մասին գալով սերեալք 'ի նախնի Անեցւոց, ցանկալի է նոցա գիտել զանցս և զպատմութիւն Անւոյ, երբ նախնի հայրենւոյ իւրեանց ։ Վասն որոյ քննելով նախ պատմեսցուք թէ զիարդ ծաղկեցաւ, և որպիսի թագաւորք տիրեցին, և զօրացան 'ի նմին ։

Երկրորդ՝ թէ քանիցս առաւ 'ի թշնամեաց, և որպիսի աւերմամբ կործանեցաւ ։

Երրորդ՝ թէ ուր ցրուեցան Անեցիք, և յինչպիսի վիճակի կան մինչև ցայժմ ։

Չորրորդ՝ թէ յինչ աշխարհս բնակին այժմ. և զինչպիսի շինութիւնս արարեալ են ։ Ուր շրջեալ մեր անձամբ 'ի բազում տեղիս յորս ցրուեալ կային ազգ մեր 'ի կողմանց անտի Անւոյ, և ստուգեալ աշխարհագրական քննութեամբ 'ի մատենից և 'ի զննութեանց՝ պատմեմք, սկսեալ զվէպն 'ի Շիրակ գաւառէ, ուր է Անի. և անցեալ ընդ տեղիս՝ յորս մասամբ իւիք յածեալ է մեր՝ ընդ Լեհաստան, ընդ Ռուսաստան, ընդ փոքրն Թաթարստան, և ընդ Վրաստան, բովանդակեալ զամենայն յերիս մասունս ։

Առաջին մասն է Տեղեկութիւն 'ի վերայ Անւոյ ։ Երկրորդ մասն է Ճանապարհորդութիւն, կամ բուն Պատմութիւն ուղեգնացութեան մերոյ ։ Իսկ երրորդ մասն է Յաւելուած, կամ շարունակութիւն պատմութեանս ։

Այս գործ ակներև ունի ցուցանել խոհական մտաց զոյժ և զզօրութիւն աշխարհաշէն միաբանութեան, և զաղէտալի վնաս աշխարհակործան անմիաբանութեան. միովն երկնահանդէտ բարձրացաւ Նոյ, և միւսովն անկանգնելի կործանեցաւ։ Յորմէ պանծալի հանդիսանայ ճշմարտութիւն բնաբանիս, թէ Ազգ երթայ և ազգ գայ, ոչ միայն փոփոխականութեամբ ծննդեան և մահուան, այլև անմիաբանութեամբ և անքաղաքականութեամբ. իսկ երկիրս անքակ միաբանեալ ընդ տարբերաց՝ յաւիտեան այսինքն ցկատարած աշխարհի կայ անսասան։

* ԺԱՄԱՆԱԿԱՑ ԵՐԿԱՐՈՒԹԵԱՄԲ ԵՍ ՈՉ ՀՆԱՆԱՄ,
ՀՈՂՄՈՑ ՀՆՉՄԱՄԲ ՈՉ ՍԱՍԱՆԻՄ, ԱՅԼ ԿԱՆԳՈՒՆ ԿԱՄ·
ԵՍ ԵՄ ՊԱՏՃԱՌ ԵՐԻՑ ՍԵՌԻՑ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ,
ՆՈՑԻՆ ՄԱՀՈՒ ԴԱՐՁԵԱԼ ԼԻՆԻՄ ԵՍ ԳԵՐԵԶՄԱՆ ‖ ։

Շնորհալի ։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՈՐ Է

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

'Ի ՎԵՐԱՅ ԱՆԻՈՅ ԵՒ ԱՆԵՑՈՅ

Ըստ ծանուցանելոյ մեր 'ի յառաջաբանութեան, քանզի ցանկալի է ամենայն հայկազանց սիրելոյ յօտար աշխարհս Եւրոպիոյ, յորս շրջեցաք, գիտել զվիճակ Անի քաղաքին, յորմէ է նախկին ծագումն նոցա, վասն որոյ նախ քան զսկսանել մեր զպատմութիւն ճանապարհորդութեան մերոյ, յայսմ վայրի պատմեսցուք կարգաւ զսկզբնաւորութիւն այնր մեծի քաղաքի և զկատարած նորա:

Արդ Անի 'ի հնումն էր փոքրիկ և աննշան բերդշինեալ յԱրարատեան աշխարհի 'ի Շիրակ գաւառի. քանզի 'ի ժամանակս Թագաւորութեան Արշակունեաց՝ արքայանիստ քաղաքն էր Վաղարշապատ. ուրանօր էին և ծաղկեալ քաղաքք Հայոց. իսկ Շիրակ գաւառ չէր 'ի համարի: Ապա յամի Տեառն 321. յորժամ Տրդատ արքայ ետ զայն գաւառ Կամսար իշխանին, այնուհետև կամսարական Նախարարք տէրէին Շիրակայ և Անւոյ. որ սկսաւ հետզհետէ ծաղկիլ իմաստուն կառավարութեամբ իշխանացն. զորմէ ասէ Խոր. Է. 90. * Տայ ժառանգութիւն (Կամսարայ նահապետին) ... զգաւառն Շիրակ ||:

2. Դիրք գաւառիս գոլով դաշտավայր մերձ յԵրասխ գետ՝ այնչափ բարեբեր և արգաւանդ է՝ զի 'ի հնումն Թոռն Հայկայ Արմայիս ետ զայն Շարայի որդւոյ իւրում, որպէս զի մարթասցի հայթայթել ըզպէտս շատակերն այն առատութեամբ երկրին՝ ըստ

Խոր. Ա. 12: * Եւ զորդին իւր զՇարայ գյոլովածին
„ և զշատակեր, առաքէ ամենայն աղխիւ իւրով 'ի
„ դաշտ մի մօտաւոր արգաւանդ և բարի, յորում
„ գնան ջուրք... յորոյ անուն և զգաւառն ասեն ա-
„ նուանել Շիրակ: Վասն որոյ արդարանալ թուի
„ առասպելին՝ որ ասի 'ի մէջ գեղջկաց, թէ քո Շարայի
„ որկորն է ասեն, մեր Շիրակայ ամբարքն չեն»: Այս
է, եթէ դու նման Շարայի շատակեր իցես, սակայն
մեք չունիմք զբարելից համբարս Շիրակայ յագեցու-
ցանել զքեզ:

3. Այս գաւառ թէպէտ 'ի սկզբանէ անտի անուա-նի եղև, մանաւանդ առ Կամսարական իշխանօք, սա-կայն բերդն Անի կառուցեալ 'ի դաշտավայրի անդ՝ փոքր էր. և մնաց այնպէս մինչև ցբարձումն թագա-ւորութեան Արշակունեաց: Իսկ զկնի անկման այնր մեծապանծ Իշխանութեան, վեր 'ի վայր տապալեցաւ Հայաստան յերեսաց կրակապաշտ Պարսից, և ան-միաբանութեամբ Նախարարաց Հայոց: Յայնմ հե-տէ նուաղեցան ամենայն բարեկարգութիւնք, և նսե-մացան ծաղկեալ քաղաքք մեծամեծ նահանգաց. և իսպառ անշքացաւ թագաւորանիստ քաղաքն Վաղար-շապատ յԱրարատեան նահանգի:

Այնուհետև ապա նախարարք Հայոց թողեալ զաշ-խարհն 'ի ձեռս օտար ազգաց՝ ոչինչ փոյթ առնէին. նմին իրի՝ էր զի Պարսիկք տիրէին 'ի ձեռն Մարզպան իշխանաւորաց, և էր զի Արաբիկք 'ի ձեռն Ոստի-կանաց: Որք և այնչափ բռնացան և կեղեքեցին ըզ-Հայս, մինչ զի բարձաւ բոլորովին ոգի միաբանու-թեան 'ի Հայաստանեայց, և ամենեքեան շուարեալ կային յուսակտուր: Նմին իրի արժանապէս ողբայ Շնորհալին յողբսն Եդեսիոյ:

Դ. 'Ի նմին իսկ ժամանակի Աշոտ և Շապուհ իշ-խանազուն եղբարք որդիք մեծի իշխանին Սմբատայ բագրատունւոյ՝ վառեալք ոգւով ազգասիրութեան՝ այնպիսի քաջութեամբ պատերազմեցան և յաղթեցին օտարաց, մինչև զամենայն թշնամիս հալածական արա-րին 'ի Հայաստանէ և խաղաղացուցին զաշխարհն: Եւ ապա 'ի ձեռն բազում գանձուց գնեցին զՇիրակ գաւառ 'ի կամսարական նախարարութենէ: Յայն-ժամ Աշոտ, որ և 'ի հագարացւոց կոչեցաւ մսակեր,

նորոգ չինեալ ամրացոյց զԱնի, և անդ բնակեցոյց զընտանիս իւր յամի Տեառն 783։

5. Այլ ծաղկիլ քաղաքին Անւոյ ամենայն վայելչութեամբ սկսաւ յաւուրս Աշոտոյ Գ. Թագաւորին, զորմէ ունիմք գրել սորին. քանզի յայնմհետէ արդարակորով իշխանք կառուցին հետզհետէ զերևելի շինուածս, մեծամեծ պալատս, զականաւոր եկեղեցիս, իջևանս և վաճառանոցս այլովքն հանդերձ. մինչև անուանեցաւ մայրաքաղաք նոյն գաւառին. զոր Մատթէոս պատմիչ կոչէ Թագաւորաքաղաք։ Ուրանօր ապա զօրացաւ ոգի ընկերսիրութեան և քաղաքականութեան, մինչև լինել ցանկալի բազմաց, և վայր իմաստնոց։ Այդէն 'ի նմին մեծանուն հայրապետք, մեծազօր Թագաւորք, հոյակապ եկեղեցիք և վանորայք, մեծաշէն հայրապետանոցք և գեղեցիկ արքունիք։ Վասն զի բագրատունի Թագաւորք 'ի Շիրակ գաւառի զօրացան, և յԱնի սկսան Թագաւորել։ Սկիզբն այսր պայազատութեան եղև յԱշոտ իշխանէ յամի Տեառն 856. և ձգեցաւ մինչև ցվերջին Գագիկ Թագաւոր յամի 1079։ Ուստի Ձոխութիւն և Թագաւորութիւն Բագրատունեաց տևեաց զամս 224։

6. Այս արդ՝ ժամ է մեզ կարգաւ դնել զյաջորդութիւն Թագաւորաց նոցա նշանակելով, թէ զինչպիսի շինութիւնս արարին, և զիարդ ծաղկեցուցին կամ թէ որպէս զօրացան ինքեանք ոգւով ազգասիրութեան և զիարդ նանրացան անմիաբանութեամբ։ Որով և գեղեցիկ քաղաքն Անի, թափեալ 'ի փառաց անկանգնելի կործանեցաւ. մինչև կոչել զայն յողբս իւր Շնորհալւոյն յասելն դիմառնութեամբ.

* Բայց և ըզքեզ յայս հրաւիրեմ,
„ Արևելեան քաղաքդ Անի...
„ Շինեալ եղեր տուն արքունի,
„ Ընտրեալ նահանգըդ Շարայի.
„ Թագաւորաց բագրատունի,
„ Որ 'ի ցեղէն Իսրայելի...
„ Գեղեցկանուն զարմանալի,
„ Որ երրակի տառիւ բերի ||։

Ողբ. Եդես.

7. Թագաւորք Անւոյ էին 'ի նախարարութենէ Բագրատունեաց 'ի ցեղէն Հրէից: Իբրեւ զի՝ յորժամ Նաբուքոդոնոսոր եառ զԵրուսաղէմ եւ զՅուդա գերի վարեաց 'ի Բաբելոն իբր 600 ամօք յառաջ քան զՔրիստոս, Հայկակ արքայ Հայոց գոլով ընդ նմա՝ խնդրեաց եւ եառ 'ի Նաբուքոդոնոսորայ զիշխանաւոր Հրեայն Շամբատ հանդերձ ընտանեօքն, եւ բերեալ բնակեցոյց պատուով 'ի Հայաստան յամի աշխարհի 3398: 'Ի ցեղէ սորա էր Բագարատ քաջ եւ զօրաւոր իշխան. զոր արքայն Վաղարշակ կարգեաց Թագադիր Նախարար յամի աշխարհի 3859. որոյ պաշտօն էր Թագ դնել արքային Հայոց յորդւոց յորդիս: Սոքա յերկար ժամանակ պահելով զիւրեանց աստուածպաշտութիւն՝ ոչ դարձան 'ի կռապաշտութիւնս Հայոց. մինչ զի բազումք նահատակեցան վասն չզոհելոյ կռոց 'ի ժամանակս Արշակայ արքային մերոյ:

Իսկ 'ի ժամանակս քրիստոնէութեան, որչափ առաւել քրիստոսասէր եւ բարեպաշտք էին, այնչափ զօրացան բազումք 'ի նոցանէ: Որոց վառեալ ոգւով ազգասիրութեան՝ բազում երեւելի գործս կատարեցին քաջութեամբ հալածելով զԹշնամիս եւ ազատելով զազգն 'ի բռնութենէ անհաւատից. մինչեւ արժանացան օծանիլ Թագաւոր 'ի վերայ Հայոց. որոց առաջին եղեւ Աշոտ իշխան: Այս անուն ելեալ է յանուանէս Ասուդ. որ էր որդի առաջնոյն Շամբատայ, եւ աստի ելեալ է անունս Սմբատ:

8. Արդ Բագրատունեան ցեղ յետ լինելոյ Թագադիր նախարար Արշակունեան Թագաւորաց Հայոց, եւ յետ բարձման այնր Թագաւորութեան միշտ մեծանուն գտաւ. եւ 'ի տեղիս տեղիս զօրացան բազումք 'ի նոցանէ Սպարապետութեամբ եւ Կիւրապաղատութեամբ կամ Պատրկութեամբ. որպէս Սմբատ Բագրատունի կարգեցաւ Կիւրապաղատ 'ի Լեւոնէ կայսերէ յամի Տեառն 695: Ապա յամի Տեառն 743. առաւել նախապատիւ հանդիսացաւ Աշոտ իշխան որդի Վասակայ Բագրատունւոյ. եւ կացուցաւ Պատրիկ կամ Իշխան իշխանաց 'ի Մրուան Ոստիկանէ Հագարացւոյ:

Որոյ երեց որդին էր Սմբատ. և սորա որդին էր վե-
րոյգրեալ քաջն Աշոտ մսակեր, որ գնեաց զՏ՟նի քա-
ղաք (4). Որդին Աշոտոյ էր Սմբատ խոստովանող,
որ մեռաւ ՚ի հալածանս հագարացւոց. և սորա որդին
էր Աշոտ իշխան, որ օծաւ թագաւոր:

9. ա̅. Աշոտ սմբատեան մեծազօր իշխան նախ եղև
Սպարապետ Հայոց. և այնչափ գեր ՚ի վերոյ հանդի-
սացաւ յաւէտ քաջութեամբ, իմաստութեամբ, առ-
գասիրութեամբ և բարեպաշտութեամբ, մինչև փա-
րելի և սիրելի լինել ամենեցուն՝ շահելով զբոլոր ազգն
յամի Տեառն 856. զորմէ այսպէս գրէ պատմիչն Յով-
հաննէս կաթուղիկոս. * ՚Ի տիս հասեալ միջակու-
„ թեան՝ քաջահասակ էր նա և անձնեայ և թիկնա-
„ ւէտ և զուարթերես և մրայօն. նկարէն իմն և նիշ
„ արեան յաչս ունելով, որպէս զյակինթ կարմիր ՚ի
„ մէջ մարգարտի ծագեալ, և վայելչացեալ գեղեցկու-
„ թեանն ալեօք. մեծիմաստ և քաղցրաբան. և առ
„ կերակուրս խորախճանաց զգաստ. ոչ խանդացեալ նա-
„ րա ընդ լաւագոյնսն, և ոչ արհամարհեալ զնուաս-
„ տագոյնսն. այլ հասարակաց ՚ի վերայ տարածէր զըզ-
„ գեստ խնամոց իւրոց, և լծակօք իմն կշռէր նախ զիւր,
„ և ապա զամենեցուն կենցաղս. միանգամայն իսկ ա-
„ սել, եթէ որ ինչ մարդկութեանս է պիտանի, ոչինչ
„ կասեցուցանէր ‖:

Դարձեալ նա ինքն գրէ այսպէս * Դիւրեթէ ամենե-
„ ցուն քան զնա նախագունիցն վեհագոյն ճանաչիւր.
„ վասն զի ընկալեալ զմեծարանս՝ ՚ի բաց արհամար-
„ հէր զանարգանս. և միշտ ՚ի հրահանգս բարւոյ կըր-
„ թութեան զինքն վարժէր, և բարի ազդումն իւրոյ
„ ոգւոյն տայր, ընդ ամենեսեան կալեալ սերտ սէր,
„ ոչ ՚ի հակառակութիւնս ինչ կամ ՚ի կռիւս ընդ թըշ-
„ նամիսն մաքառեալ, քան թէ բարեգգեաց բանիւք
„ և բարի օճանաւ զնոսա ածել յուղղութիւն և ՚ի
„ կամս իւր. իսկ զպաճարանս մնոտի շահուց վնաս իւր
„ վարկեալ, և առատաձեռն առ ամենեսեան գտեալ՝
„ յինքն զբազմաց միտս յանգուցանէր սիրալիր սրտիւ.
„ որպէս զի՝ յայսմ սակս ամենեքեան իսկ նմա հաճեալ
„ հաւանեալ էին ‖:

Իսկ Կոստանդին կայսրն Պերփիւռուժէն այսպէս
գովաբանէ. * Մեծն այն և տիտանեան հայ, երկայ-

„ նաձեռն այն և յերկոցունց ձեռաց յաջողակն , զոր
„ ՚ի Հայ բարբառ Աշոտ կոչէին . զայն ասեմ՝ որ եկն
„ երբեմն առ Լևոն (Հայր իմ) երևելի կայսր Ա.
Գիրք ա :

Աշոտ սպարապետ այսպիսի իմաստութն և բարեպաշտ կարգօք այնչափ մեծանուն պանծացաւ, մինչև Մաք-սամ Ամիրապետ լուեալ զհամբաւ նորա՝ առաքեաց առ նա պարգևս մեծագինս և ազնիւ զգեստս, անուանելով զնա Իշխան իշխանաց. որ և այնուհետև իբր անկախ սկսաւ պայազատել՝ տալով միայն հարկս Ամիրապետին :

10. Յամի տն 859 սկսաւ Աշոտ գեղեցիկ իմն բարեկարգել զաշխարհ իւր և զզօրս. և եդ սպարապետ ՚ի վերայ զօրաց իւրոց զեղբայր իւր Աբաս : Այս մեծամեծ քաջագործութեամբք խոնարհեցոյց ՚ի կամս իւր զամենայն ապստամբս. յետ որոյ նստաւ իբրև մեծ Պայազատ կառավարելով զազգն ամենայն խոհեմութեամբ : Նորա մեծագործութիւնք և քաջալերութիւնք ստիպեցին զնախարարս և զկաթուղիկոսն խորհիլ վասն թագաւորեցուցանելոյ զԱշոտ ՚ի վերայ Հայոց, զոր և ծանուցին Ամիրապետին Բաբելոնի : Որ և յոյժ հաճեցաւ ընդ խորհուրդ նոցա, և առաքեաց վասն նորա թագ և զգեստ թագաւորական, զարդ և ձի ահաւոր. զորս եբեր Ոստիկանն Յիսաէ : Այս մեծաւ հանդիսիւ եդ զթագն ՚ի գլուխ Աշոտոյ, և արկեալ զնովաւ զարքայական զգեստն ՚ի մէջ պալատի նորա՝ անուանեաց զնա Թագաւոր ՚ի դիմաց Ամիրապետին : Ընդ էին ամենայն նախարարք Հայոց և Գէորգ Կաթուղիկոս, որք մեծաւ հանդիսիւ ածին զնա յեկեղեցին, և անդ կաթուղիկոսն եօծ զնա Թագաւոր յամի տեառն 885 : Իբրև լուաւ կայսրն Յունաց Վասիլ, ինքն ևս առաքեաց առ Աշոտ թագ և մեծագին զարդ, անուանելով զնա որդի սիրելի. և ՚ի սէր նորա յետս դարձոյց զբերդսն Հայոց, զորս սեպհականեալ էին Յոյնք :

11. Աշոտ յետ օծանելոյ Թագաւոր՝ ձեռն էարկ նորոգել զամենայն եղծեալ կարգս, և հաստատել զօրէնս՝ կարգելով զպետս, զիշխանս, զդատաւորս, ևս և զօրականս, տասնապետս, Հարիւրապետս և Հազարապետս : Կառոյց զամրոցս, արար և զերևելի երևե-

ըն շինութիւնս. միով բանիւ, բարեզարդեաց զհայրատան ամենայն Ճոխութեամբ և վայելչութեամբ։ Իսկ զաթոռ Թագաւորութեան եդ 'ի Բագարան քաղաք շինեալ յարքայէն Երուանդայ 'ի վերայ Ախուրեան գետոյ։

Ապա չոգաւ 'ի Կոստանդնուպօլիս և մեծապէս պատուեցաւ 'ի Լևոն կայսերէ։ Իբրև դարձաւ անտի, 'ի Ճանապարհին մերձ 'ի Շիրակ հիւանդացաւ. և կոչեալ առ ինքն զկաթուղիկոսն՝ կատարեաց զամենայն հոգևոր գործս աստուածպաշտութեան՝ բաշխելով բազում գանձս աղքատաց՝ եկեղեցեաց՝ և վանօրէից։ Եւ այսպէս բազում գովութեամբ և օրհնութեամբ վախճանեցաւ Աշոտ արքայ 72. ամաց, զկնի հնգամեայ օծութեան իւրոյ. յամի տեառն 889. պայազատեալ ընդ ամենայն ամս 31։ Իսկ մարմին նորա թաղեցաւ թագաւորական հանդիսիւ 'ի մայրաքաղաքն Բագարան. թողեալ զթագաւորութիւն իւր երեց որդւոյ իւրում Սմբատայ։

Տեսաք զաւետարան մի մագաղաթեայ երկաթագիր գրեալ 'ի սմին ժամանակի, ըստ որում պատմէ 'ի ըսկիզբն այսպէս. * Գրեցաւ սուրբ եւ կենսաբեր աւե-
„ տարանս այս ՅԼԶ (887) թուականութեան հայոց.
„ 'ի հայրապետութեանն Գէորգայ հայոց կաթուղի-
„ կոսի եւ յիշխանութեանն Աշոտի իշխանաց իշխանի.
„ և 'ի տէրութեան Սմբատայ բագրատունւոյ. ես սա-
„ հակ վանանդացի որդի վարդա վանանդացւոյ. որում
„ կրկին մլեհ կոչէին ‖. և այլն։

12. Ա. Յամի տեառն 890. Սմբատ յաջորդեաց հօրն և շինեաց զհոյակապ եկեղեցին Սուրբ Փրկչէ՝ յԵրազգաւորս քաղաք, որ է Շիրակաւան. ուրանոր եդ զաթոռ թագաւորութեան իւրոյ։ Այլ զկնի երկուց ամաց իբրև լուաւ Ամիրապետն զթագաւորել նորա 'ի տեղի հօրն՝ առաքեաց առ նա թագ արքայական և զգեստ ոսկեզարդ. և այնուհետև հանդէս արարեալ օծաւ 'ի կաթուղիկոսէն թագաւոր յիւր շինեալ եկեղեցւոջ։ Յետ այնորիկ Լևոն կայսր առաքեաց առ նա թագ և նամակ սիրոյ հանդերձ մեծամեծ պարգևօք՝ նորոգելով զուխտ բարեկամութեան իւրոյ, զոր ունէր ընդ հօր իւրում. նաև ամ ըստ ամէ առաքէր առ նա ընծայ և գանձ։

Որչափ փառաւորեցաւ անուն Սմբատայ, մինչև
մեծամեծ իշխանք 'ի հեռուստ երթային 'ի տես նորա,
և զարմանային ընդ իմաստութիւն և ընդ քաջութիւն
նորա։ Որչափ առաւել պանծալի հանդիսացաւ անուն
նորա, այնչափ առաւելաւ բարեսիրութիւն և խոհա-
կանութիւն նորա. մինչ զի լուեալ Ամիրապետին ըզ-
համբաւ լաւութեան նորա՝ առաքեաց առ նա զար-
ձեալ թագ, ոսկի կամար, և սուր. նաև հրաման ա-
րար, զի ինքնին կարգաւորեսցէ զամենայն ինչ՝ առանց
ոստիկանի, և վճռեսցէ ըստ խոհականութեան իւրում.
զորմէ այսպէս գրէ Յովհաննէս Կաթ. * Յաւուրս յայ-
„նոսիկ այց արարեալ տեառն, և պարապեալ և յա-
„ջողեալ 'ի բոլոր բարութիւնս՝ բնակեցան իւրաքան-
„չիւր ոք 'ի ժառանգութիւնս իւրեանց։ Եւ սեպհա-
„կանեալ զերկիր՝ տնկեցին զայգիս, և արմատացու-
„ցին բուրաստանս ձիթենեաց և պարտիզաց. հերկե-
„ցին հերկս արտաքոյ փշոց, և կթեցին պտուղս հա-
„րիւրաւորս ... Եւ գլխաւոր նախարարք մեր յապա-
„հովացեալք 'ի հինից ապստամբաց՝ շինէին եկեղեցիս
„վիմարդ հաստահեղոյս ձուլեալ կրով ... 'Ի վերայ
„այսոցիկ բարեբարութեանց՝ թագաւորն հոռոմոց
„լեոն ոչինչ սակաւ նախախնամէր զարքայն ... և բա-
„զում ընծայս և պարգևս և պատիւս ամ յամէ ա-
„ռաքէր ‖։

13. Մեծանուն արքայս Սմբատ արդարև ըստ բա-
րեպաշտութեան իւրում ունէր և զաստուածային յա-
ջողութի. որով դողացուցեալ զամենեսեան՝ հալածա-
կան առնէր զթշնամիս 'ի սահմանաց իւրոց, և զօրա-
նայր քաջութեամբ՝ ցորչափ նախարարք իւր ունէին
զգեցեալ զոգի ազգասիրութեան և միաբանութեան։
Այլ երբև մերկացան զայն, հեռացաւ 'ի նոցանէ
աստուածային յաջողութիւնն, և զրկեցան 'ի մեծու-
թենէ անտի. Այսուհետև ոմանք սկսան նախանձիլ
ընդ միմեանս և հակառակիլ ատելութեամբ. և ոմանք
ապստամբիլ յարքայէն։ Այնչափ եղև կատաղութիւն
նոցա, մինչև ոմանք յանդգնեալ յարձակեցան 'ի քա-
ղաքն ուր նստէր նա, և կողոպտեցին, յորժամ չէր
արքայն 'ի Շիրակ։

Ի լուր եղև այս թշնամեաց, որք անդէն և անդ զօ-
րացան, և սկսան հարստահարել զհայաստան. Իսկ

անմիաբան նախարարքն փոխանակ միանալոյ ընդ արքային և հալածելոյ զթշնամիս, միաբանեցան ընդ Յուսուփ այլազգի Ոստիկանին, և սկսան պատերազմիլ ընդ Սմբատայ և ընդ Հայոց։ Յետ բազում աշխատից տեսեալ մեծին Սմբատայ, թէ Հայք սպառին 'ի միմեանց և ոտնակոխ լինին յայլազգեաց անձնատուր եղև Յուսուփայ և դադարեցոյց զպատերազմն, զի մի խսպառ կործանեսցի ազգն։ Իսկ անօրէն Ոստիկանն ընդդէմ երդմանն զոր արարեալ էր նմա՝ անտանելի տանջանօք չարչարեաց զնա, որպէս զի տկարացուցէ զնա 'ի հաւատոց։ Նա և նորա քաջութեամբ ընդդէմ դարձեալ նահատակեցաւ յամի տեառն 914. յետ թագաւորելոյ ամս 24։

14. Է. Աշոտ Ը. որդի նահատակին Սմբատայ գոլով 'ի հեռաւորութեան իբրև լուաւ զմահ հօրն 'ի խոր խոցեցաւ անհնարին տրտմութեամբ. Ապա սթափեալ եկն 'ի Հայաստան, և ժողովեալ զքաջս՝ սկսաւ հալածական առնել զթշնամիս և վրէժխնդիր լինել արեան հօրն։ Այնչափ էր 'ի սմա ոգի արիութեան, մինչև 'ի սուղ ժամանակի զօրացեալ քաջութեամբ՝ չէր ոք, որ համարձակէր ելանել ընդդէմ նորա։ Յետ վանելոյ յաշխարհէն զամենայն թշնամիս, տեսին նախարարքն, թէ Աստուած օգնական է նմա յաջողութեամբ, եկին առ նա յամենայն կողմանց, և միաբան ոգւով թագաւորեցուցին զնա 'ի տեղի հօրն յամի տն 915. Սկսաւ այնուհետև ուղղութիւնս առնել և զօրացուցանել զՀայս։

15. Յայնժամ Կոստանդին Պերփիեռուժէն կայսր Յունաց հրաւիրեաց զնա առ ինքն, և նա յօժարութեամբ չոգաւ անդ 'ի Կոստանդնուպօլիս քանի մի նախարարօք։ Կայսրն յոյժ սիրեաց զնա և մեծարեաց ընդ նախարարացն։ Յոյն պատմիչք բազում գովութիւնս գրեն սորա քաջագործութեանց Աշոտոյ, հաստատելով, թէ յաւուր միում առեալ 'ի ձեռն զհաստ գաւազան երկաթի՝ բոլորեաց պսակաձև, և յայնմանէ անուանեցաւ Աշոտ երկաթ։ Ապա զկնի դարձին 'ի Կոստանդնուպօլսոյ այնչափ մեծամեծ պատերազմունս մղեաց և քաջութեամբ յաղթեաց բազմաց, մինչև տկարացեալ հիւանդացաւ, և առ մեծի վշտացն, զոր կրեաց յանմիաբանութենէ ազգակից նախարարաց ան-

որ՝ վտանգեցաւ, և մեռաւ անորդի յամի տեառն 928. յետ տիրելոյ ամս 14. և զամիսս 6 ։

16. Գ. Աբաս եղբայր Աշոտոյ Թագաւորեաց յամի տեառն 929. և խաղաղացոյց զազգ իւր 'ի թշնամեաց անտի. Նմին իրի 'ի բազում տեղիս երևելի երևելի շինուածք կառուցան, և բազում վանորայք հաստատեցան. յորս ոչ սակաւ գիտնական վարդապետք ծաղկեցան ։ 'Ի նմին ժամանակի կառուցան կամ նորոգեցան Դպրէվանքն և Նարեկայ վանքն. յորս ծաղկեցան սուրբն Գրիգոր Նարեկացի և Բարսեղ ։ * Նոյն արար (ասէ Մարդան) 'ի ձեռն սրբոյն Բարսղի մականուն „ Ճոն կոչեցելոյ, որ էր առաջնորդ սուրբ ուխտին՝ որ „ Դպրավանքն կոչի 'ի գաւառին Անոյ ‖ ։ Նոյն այլուր ասէ. * 'Ի Դպրավանից տարան զխաչն որ յանուն „ սուրբ աստուածածնին. որ արդ վարձիոյ կոչի ... և „ է սրբոյն Մեսրոպայ օրհնեալ և կամ Բարսղի սրբոյ „ Ճոնին. և ունի գիր հայերէն յաջ թևն, և ծածկեալ „ էն ոսկով ‖ ։ Պատմէ Ասողիկ վասն վանացն, զոր շինեաց Մովսէս վարդապետ, և զայն ելից ասէ * Բա-„ րեզարդ կարգադրութեամբ, բազմութեամբ եղ-„ բարց, բազմապայծառ բանական իմաստնովք ‖ ։

Իսկ Աբաս արքայ այսպիսի բարեշինութեամբ 'ի խաղաղութեան պահելով զաշխարհ իւր մեռաւ 'ի 951. յետ տիրելոյ ամս 24 ։

17. Ե. Աշոտ Գ. երէց որդի Աբասայ Թագաւորեաց 'ի տեղի հօր իւրոյ. որ և զամս հինգ զարմանալի քաջագործութեամբ վանեաց զթշնամիս և հալածական արար. որով և ազատեաց զՀայաստան 'ի բռնաւորաց անտի. այնպէս զի աշխարհ իւր 'ի մեծի խաղաղութեան վայելէր ։ Յայնժամ ամենայն նախարարք միաբանեալ ժողովեցան յԱնի. ուր եդուն բերել զԱնանիա կաթուղիկոս, որ եօծ զԱշոտ Թագաւոր յամի տեառն 961 ։ Անդ էին անհամար իշխանք և իշխանազունք. նաև արքայն Աղուանից ։

Այնուհետև ապա Անի եղև արքայանիստ քաղաք, ուր շինեցաւ հոյակապ պալատ արքունի և այլ մեծակառոյց շինուածք ։ Շինեցան յայնժամ 'ի Շիրակ գաւառի երևելի վանորայք և եկեղեցիք. մինչ զի ամենեքեան ջանային վասն շինութեան աշխարհին ։ Իսկ Խոսրովանոյշ բարեպաշտուհի Դշխոյն Աշոտոյ շինեաց

զերկու հաշակաւոր վանորայս . զմին 'ի գիւղն Սանահին, և զմիւսն 'ի Հաղբատ, միով ժամու հեռի 'ի միմեանց, որք են մեծակառոյց շինուածք . մանաւանդ Հաղբատայ վանքն սուրբ Նշան որ ամրաշէն է մինչև ցայժմ : Տեսաք զյիշատակարանս, որք յիշեն զՍմբատ և զԳուրգէն Թագաւորս . տես 'ի Թիւն 119 :

18 . Որգ՝ Աշոտ արքայ այնչափ զօրացաւ մեծամեծ քաջագործութեամբք, մինչև Օմրապետն յղեաց առ նա կրկին թագս անուանելով զնա Շահնշահ . զորմէ այսպէս գրէ Ասողիկ . * Այս Աշոտ խաղաղա-
,, սէր բարուք կալեալ զաշխարհս հայոց խոնարհու-
,, թեամբ և ողորմածութեամբ զանցոյց ամենեքումբք :
,, Սասն զի զգոնջացեալսն և զկաղսն և զկոյրսն հա-
,, ւաքէր առ ինքն՝ բարձակից ինքեան առնելով 'ի
,, խրախճանութիւնս . որոց զոմանս իշխանս, և իշ-
,, խանաց իշխանս և կիւրապաղատս անուանէր ... Եւ
,, այնքան առատաձեռնութեամբ բաշխէր կարօտելոց,
,, մինչև 'ի մահուն իւրոյ ոչ լինել դրամ մի 'ի գան-
,, ձատան նորա ॥ : Եւ վասն այսպիսի բարեգործութեանց անուանեցաւ Աշոտ ողորմած :

19 . Աշոտ շինեաց զներքին պարիսպս Անւոյ և ամրացոյց մեծագործ աշտարակօք և զարմանալի բրգօք : Ուրանօր կառոյց զմեծաշէն պալատս, զվանորայս, պայծառ եկեղեցիս, կուսանոցս, աղքատանոցս, հիւանդանոցս և զայլ հոգևոր պիտանի շինուածս . մինչև ըստ ամենայնի զարդարեցաւ քաղաքն՝ ամենայն բարեզարդութեամբ և գեղեցկաշինութեամբ . և եղև մի 'ի թագաւորանիստ մայրաքաղաքաց . * Զփոքր պա-
,, րիսպ քաղաքին Անւոյ շինեաց (Աշոտ, ասէ Սար-
,, գան) և զամենայն բրգունսն եկեղեցիս յօրինեաց
,, 'ի ՆԺԳ Թիւն ॥ (964) : Ի սմին ժամանակի այնչափ զօրացեալ էր ոգի միաբանութեան և սիրոյ 'ի մէջ Անեցւոց, զի ամենեքեան 'ի պատիւ զմիմեամբք եղանէին . մեծ և փոքր վառեալ էին ոգւով ազգասիրութեան . նմին իրի միշտ 'ի լաւ անդր թևակոխէին մեծութեամբ :

20 . Այս թագաւոր ոչ միայն ողորմած էր, այլև ազգասէր և խոնարհ, փութաջան միայն վասն օգտի հասարակաց . իշխանք և մեծամեծք 'ի մի կապ սիրոյ հաստատեալք՝ ծայրագոյն հպատակութեամբ ջանային

վասն զօրութեան Թագաւորին, և վասն պայծառու-
թեան ազգին: Ոմսաւ ածեալ միանգամայն խոհա-
կան կշռութեամբ, թէ երբ գլուխ իւրեանց լինի զօ-
րաւոր, ինքեանք ևս զօրաւոր լինին. ապա թէ ոչ՝ ա-
մենեքեան 'ի կորուստ դիմեն: Եւ նորին աղագաւ օր
քան զօր ինքեանք զօրանային, և թշնամիքն կորանայ-
ին. քաղաքք և ժողովուրդ իւրեանց պայծառանային.
իսկ թշնամիքն խաւարեալ կորնչէին. ուր և գնային՝
յաղթող հանդիսանային յամենայն մրցմունս: Մինչ
զի օտար թագաւորք և այլազգիք սասանեալ հայէին 'ի
սարսափ զօրութենէ Հայոց. քանզի աստուածային զօ-
րութիւն ակներև փայլէր 'ի վերայ միաբանասիրացն
այնոցիկ:

Ուստի և 'ի բազում տեղիս սկսաւ ծաղկիլ գիտու-
թիւն. երևեցան յայնժամ մեծանուն գիտնական վար-
դապետք, և լուսաւորեցին զՀայաստան. որպիսի էր
Յովհաննէս գիտնական առաջնորդ վանաց Սանահնի.
մեծն Խոսրով անձևացի, և մեծիմաստ որդիք իւր Յով-
հաննէս վանական, և Գրիգոր Նարեկացի. Պետրոս
վարդապետ փիլիսոփայ, Յովհաննէս խաչակիր, Ստե-
փանոս երէց և այլք. Ահա այսպիսի գեղեցիկ կարգաւո-
րութեամբ և զարմանալի քաղաքավարութեամբ կա-
ռավարեաց Աշոտ զազգն զամս 26. և ապա մեռաւ
յԱնի. յամի տեառն 977:

21. Է. Սմբատ Բ անդրանիկ որդի Աշոտոյ 'ի նմին
աւուր նստաւ Թագաւոր յԱնի: Այլ քանզի հայրն
բազում բարեկարգութիւնս արարեալ և զհիմն պի-
տանի պիտանի գործոց եդեալ էր, նմին իրի Սմբատ
կալեալ զգովելի շաւիղ հօր իւրոյ, անդէն զօրացաւ և
անուանի եղև քան զամենայն Թագաւորս Հայոց: Ոչ
եթող 'ի Հայաստան ապստամբ և բռնաւոր ոք. դո-
ղացոյց զհեռաւորս և զմերձաւորս, մինչև կոչեցաւ
յայլազգեաց Շահնշահորդն կամ Տիեզերակալ:

22. Սմբատ Տիեզերակալ կամելով մեծագործ ինչ
յիշատակ թողուլ յաշխարհի յամի տեառն 979. կա-
ռոյց շուրջ զքաղաքաւ Անւոյ զահագին մեծ և լայն
պարիսպ բարձր յոյժ, որ սկսեալ յԱխուրեան գե-
տոյ հասանէր մինչև 'ի Ծաղկոցաձորն: Ուրանօր կանգ-
նեաց զբարձրաբերձ բրգունս և աշտարակս. նաև ետ
փորել շուրջ զպարսպաւ խրամ խոր և լայն. զոր և

պատեաց քարաշէն և ամրուապարծ որմովք, որոյ վասն աշխատ եղև ամն 8. ուստի առաջին քաղաքն կոչեցաւ ներքին բերդ։ Գրէ Ասողիկ Գ. 11. * Իբր ասելով
„ պարսպափակ առնէ զպարիսպն Անւոյ, յԱխուրեան
„ գետոյ մինչև ցձորն Ծաղկոցաց՝ կրով և վիմով մա-
„ ծուցեալ մահարձանօք և աշտարակօք բրգացն բարձ-
„ րաբերձ պարսպեալ, բացագոյն քան զհին պարիսպն
„ յընդարձակութիւն քաղաքին, և մայրադրան դը-
„ րամբք երկաթագամ հաստահեղոյս բևեռալինոք ա-
„ մրացուցեալ ||։

Նա ինքն Սմբատ շինեաց 'ի մէջ Անւոյ հոյակապ և մեծապանծ եկեղեցիս. նաև հիմն եդ կաթուղիկէ մայր եկեղեցւոյն ձեռամբ մեծանուն հայ ճարտարապետին Տրդատայ յամի 989։ Այս հռչակելի քաղաք բաց 'ի փառաւոր շինուածոց ունէր անբաւ մեծութիւն. և ըն բազմութեամբ մեծամեծաց. միայն հարիւր հազար պալատք և հազար մի եկեղեցիք կային 'ի նմա։ Ուստի ռամիկք 'ի վերայ 1001 եկեղեցեաց երդնուին։ Այսպէս պատմէ յիշատակարան հին Յայսմաւուրաց, զոր գտաք 'ի Նոր ռուսիա. * Մեծ թագաւորանիստ քա-
„ ղաքն մեր Անի իշխանաց և ազնուականաց էր բնա-
„ կութիւն. և զի ոչ կարեմք նեղ սահմանի արկանե-
„ լով պատմել՝ զանսահման և զանհուն հարստութիւնս՝
„ յիշխանացն ազնուականացն մինչև ցդռնեհիկս. և
„ բաց 'ի զանազան ոսկեզօծ պալատից իւրաքանչիւ-
„ րոցս ունէաք նաև 'ի նմա հազար և մի եկեղեցիս ||։
* Այսպէս երդնուին (ասէ Կիրակոս) Անոյ հազար և
„ Գ եկեղեցին ||։

Եւ արդ՝ ահա այսպէս է գործ միաբանութեան և ազգասիրութեան, սա միայն է շինող աշխարհաց և հաստատութիւն թագաւորաց։ Վասնզի յառաջ քան զԱշոտ՝ կորուսեալ իշխանաց զոգի միաբանութեան, և անկեալ 'ի խորշս Հայաստանու ապառէին 'ի թշնամեաց. բայց ընդ լինել միաբանութեան՝ եհաս առ նոսա նախախնամութիւնն աստուածային. որով հալածական արարեալ զամենայն թշնամիս բռնացեալս՝ ազատեցին զՀայս յայնչափ աւերմանց և՛ գերութեանց. նաև այնքան հիացական շինութեամբք պայծառացուցին զազգն միանգամայն և զքրիստոնէութիւնն։

23 Ի նմին ժամանակի բազում էին 'ի Հայաստան

Երեւելի եւ բարեպաշտ իշխանք, որք միամիտ հպատակութեամբ միացեալ ընդ Սմբատայ գործէին զարմանալի քաջագործութիւնս։ Մեծ իշխանն Վասակ Պալհաւունի 'ի ցեղէն Լուսաւորչայ էր Սպարապետ, որոյ որդին էր Գրիգոր Մագիստրոս։ Իսկ Վահրամ եղբայր Վասակայ այնչափ բարեպաշտ եւ աշխարհաշէն էր, մինչեւ կառուցանել զբազում վանորայս. մանաւանդ զՄեծագործ Մարմարաշէն եկեղեցին, որ մինչեւ ցայժմ կանգուն կայ. զորոյ արձանագիր տես 'ի կարգս յիշատակարանաց (116)։ Զայս յիշէ եւ Սամուէլ Անեցին 'ի թուին ՆԼԵ (986) * Սկիզբն շինուածոյ Մեծ-„անուն եւ վայելչաշէն զարմանակերտ եւ հոյակապ „ուխտին Մարմաշինոյ՝ 'ի քրիստոսասէր իշխանաց իշ-„խանէն Վահրամայ ։ Որոյ աւարտն եղեւ 'ի ՆԽԳ (994)։ Այս իշխան ապա նահատակեցաւ վասն 'ի քրիստոս հաւատոց (66)։

Զայսու ժամանակաւ Խաչիկ կաթուղիկոս շինեաց մերձ յԱնի 'ի մէջ Արգինայ գիւղաքաղաքի զփառաւոր կաթուղիկոսարան եւ զմեծագործ եկեղեցի զարդարեալ զարմանալի արձանօք եւ զարդուք։ Շինեաց նաեւ զերիս փառաւոր եկեղեցիս նորաձեւս, եւ զգրատուն մի փառաւոր՝ լի մատենիւք։ Այս կաթուղիկոս ընտրեցաւ յԱնի 'ի ձեռն ժողովոյ։ Իսկ Սմբատ աշխարհակալ յետ թագաւորելոյ ամս 13. ամենայն յաջողութեամբ, մեռաւ յամի տեառն 989։

ԻԴ. Է. Գագիկ Ա. միջին որդի Սմբատայ՝ որ կարգեալ էր իշխան իշխանաց, 'ի նմին աւուր նստաւ թագաւոր յԱնի, եւ կոչեցաւ Շահնշահ։ Բայց յառաջ քան զհանդէս թագաւորութեանն՝ կին ումն անեցի շփոթութիւն իմն եհան, թէ երազ տեսի՝ զի ողջ է Սմբատ արքայ. յորմէ այնչափ մեծ այլայլութիւն եղեւ 'ի մէջ ժողովրդեան, մինչեւ Գագիկ ոչ կարաց այլազգ խափանել զայն, բայց եթէ՝ տուեալ հանել զմարմինն Սմբատայ. զոր եւ ցուցեալ ժողովրդեան՝ հանդարտեցոյց։

Իսկ սակս Գագկայ արքային այսպէս գրէ Ասողիկ ականատեսս. * Էր այր սրամիտ եւ վարժ 'ի պատերազ-„մի, եւ առատաձեռն 'ի բաշխել. եւ իւրով իմաստու-„թեամբ եւ քաջութեամբ՝ զբաժ հարկաց յոլովից տե-„ղեաց ազատեաց. եւ զկիւրակեանն զգայգուն պաշ-

» տօն տաղմներգութեանն կատարէր ‖ ։ Այլ Լաստի-
վերացին անուանէ զնա * Այր հզօր և յաղթօղ 'ի
» պատերազմի. սա 'ի խաղաղութեան կալաւ զաշխարհս
» Հայոց. 'ի սորա ժամանակս պայծառացան կարգք ե-
» կեղեցւոյ, և լուսաւորեցան մանկանք ուխտի սրբու-
» թեանն ‖ ։

25. Կատրանիդէ թագուհին սորա կատարեաց զկա-
թուղիկէ եկեղեցին Անւոյ, զոր հիմնեալ էր Սմբատ
արքայ (22), և եղև պայծառ յոյժ և մեծագործ բարձ-
րակամար և գմբէթայարկ, զարդարեալ և զներքին
վայրն եկեղեցւոյն անգին զարդուք, արծաթեղէն և
ոսկեղէն անօթովք ։ Որ և կատարեցաւ յամի 993, և
այնուհետև յԱնի հաստատեցաւ աթոռ կաթուղիկո-
սութեան ։ Այս եկեղեցի դեռ կանգուն կայ յԱնի աւ-
էրի թագաւորական պալատին. տես զարձանագիրն 'ի
կարգս յիշատակարանաց (113) ։ Իսկ ինքն թագու-
հին բարեպաշտութեամբ և աղօթասիրութեամբ կան-
խեալ հանապազ յեկեղեցին՝ պաքապէր յաղօթս ։

Յիշէ Ասողիկ (Գ. 30). թէ ոչ կարաց Սմբատ 'ի գը-
լուխ հանել զայս եկեղեցի առ կանխելոյ օրհասին և կա-
տարեաց Կատրամիդէ թագուհի կին տն Գագկայ ար-
քային. * Այլ կին նորա Կատրամիդէ թագուհի (ասէ)
» բարեպաշտուհի եղեալ, որ էր դուստր Վասակայ սիւ-
» նեաց իշխանին, շինեաց զհիմնարկեալ եկեղեցին
» Սմբատայ, ամենապայծառ վայելչութեամբ, բարձ-
» րաբերձ կամարօք գմբեթաւորեալ խորան երկնա-
» նման. և զարդարեաց 'ի զարդ ծիրանեծաղիկ ոս-
» կէթել նկարագործ անկուածոց, արծաթեղէն և ոս-
» կեղէն անօթոց, և բազմապայծառ լուսատու անօ-
» թոց վայելչութեամբ, որովք Ջահանայր ըստ երկ-
» նային կամարին կաթուղիկէն սուրբ՝ որ 'ի քաղա-
» քին Անւոյ ‖ ։

Ըստ այսմ երգէ և Շնորհալին.

* Յարմարածով յօրինուածով,
» Կաթուղիկէ եկեղեցի.
» Ի Նոր հանգէտ և հաւասար,
» Սենեկառայցըն խորանի,
» Հայրապետաց եպիսկոպոսք,
» Այլ քահանայք այլ ըստ կարգի.

„Նաւ որդիքըն Միհրի,
„Նման գառանցըն հօտեղինի ։
Մագ. Նրգ. ։

Իսկ Գէորգի արքայ յետ Թագաւորելոյ ամս 30, մեռաւ յամի տեառն 1020. Թողեալ 'ի բարեպաշտ Թագուհւոյն իւրմէ զերկու որդիս զՅովհաննէս և զԱշոտ ։

29. Ը. Յամի տեառն 1020. Յովհաննէս երէց որդին նստաւ Թագաւոր յԱնի քաղաք յանձնարարութեամբ հօրն. որ Թէպէտ էր այր խոհական, բայց տկար և Թուլամորթ էր յոյժ. իսկ եղբայրն Աշոտ ընդհակառակն էր այր քաջ և փառաւոր ։ Նմին իրի մերժեալ զեղբայր իւր՝ կամեցաւ ինքն Թագաւորել. յորմէ բազում խռովութիւնք ծագեցան, և բաժանումն չարաչար ։ Աստի և այնուհետ ժողովուրդն միշտ ըզՅովհաննէս ճանաչէր Թագաւոր ։ Յայնժամ զօրաժողով եղև Աշոտ և բազում զօրօք եկն և պաշարեաց զԱնի, որ 'ի նմին ժամանակի ամենայնիւ մեծութեամբ և ճոխութեամբ պանծայր. Նախարարքն Հայոց խառնեալ ընդ Վաթուգիկոսին զինուացին, Թէ այն գործ 'ի չարն ունի եղերել. Ջանահնար եղեն հաշտեցուցանել զնոսա ։ Բայց նախ զերդումն առին յերկոցունց այսու դաշամբ, զի Յովհաննէս նստցի Թագաւոր յԱնի, և տիրեսցէ նորին կողմանց. իսկ Աշոտ իբր երկրորդ Թագաւոր իշխեսցէ այլ կողմանց Հայաստանու. և Թէ Յովհաննէս յառաջ մեռցի, Աշոտ լիցի Թագաւոր ։

Այսու Թէպէտ խաղաղութիւն եղև, այլ չար բաժանումն անկաւ 'ի մէջ. քանզի ոմանք 'ի նախարարաց զմի կողմն, և այլք զմիւս կողմն ունէին. որով և անդէն տկարացաւ և նուաղեցաւ տէրութիւնն. իսկ Թըշնամիքն զօրացեալք գլուխ ամբարձին. և կատարեցաւ բան տեառն, Թէ * Ամենայն Թագաւորութիւն բաժա„նեալ յանձն իւր՝ աւերի, և ամենայն քաղաք կամ „տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ ॥ ։

30. Արդ՝ Յովհաննէս արքայ որչափ սիրող էր խաղաղութեան, այնչափ անպակաս էր խռովութիւն, և կործանումն յաւէտ անմիաբանութեամբ նախարարաց. մինչև կորուսին ընդ քաղաքական հոգւոյ, և զյաջողութիւն աստուածային. ըստ որպ նկարագրէ Գա-

զոր փորձեցին զանմիաբանութիւն իշխանաց իւրեանց ժամանակի. * Ի միաբանիլն (ասէ) տեսանէին զմեր „ օգնականութիւն յանձինս եւ յաշխարհս. եւ 'ի քա-„ կելն եւ 'ի պառակտելն՝ զվնաս եւ զկորուստ եւ յան-„ ձինս եւ յաշխարհս ||:

31. Այս ահա այսպէս եղեւ սկիզբն կործանման ամենայն Թագաւորութեանց. ուր փոխանակ զիրեարս շահելոյ, ջան դնեն իշխանք զմիմեանս կործանել դառն ատելութեամբ. եւ որ չարն է, երթան միաբան ընդ Թշնամեաց, եւ կուրութեամբ իմն կոչեն զնոսա փութալ կործանել զաշխարհ եւ զտուն իւրեանց. որպէս արարին 'ի սմին ժամանակի Անեցիք: Վասնզի ոմանք յիշխանաց դիմեցին առ Թագաւորն Վրաց, որպէս զի զօրութեամբ նորա ձգեսցեն զՅովհաննէս 'ի Թագաւորութենէ: Եկին զօրք Վրաց մերձ յԱնի, եւ դարանեալ սպասէին, զի ընդ ելանելն 'ի քաղաքէ արքային՝ կալցեն զնա: Իսկ նորա ոչ գիտելով զայս խորհուրդ Թշնամեաց՝ ել յԱնւոյ գնալ 'ի ձմերոցն, եւ ահա դարանակալ Վրացիք յանկարծ յարեան 'ի վերայ նորա: Յովհաննէս գոլով Թանձրամարմին ոչ կարաց փախչել. նմին իրի կալան զնա, եւ մտեալ յԱնի կոտորեցին զբազումս, եւ մտին 'ի կաթուղիկէ եկեղեցին, եւ հանեալ զբեւեռս խաչելութեանց՝ աղաղակէին նախատանօք, Թէ զայսուհիկ բեւեռս արասցուք պայտս երիվարաց մերոց. քանզի ինքեանք առանց բեւեռի ունին զխաչս:

32. Իսկ՝ ածին զՅովհաննէս արքայ 'ի Վրաստան առ Գէորգի Թագաւոր իւրեանց. որ արկ զնա 'ի բանտ, եւ ապա զերծիս ամրոցս առեալ 'ի նմանէ՝ արձակեաց 'ի տեղի իւր: Սակայն ոչինչ փոյթ եղեւ նախարարաց օգնել արքային, եւ վրէժս հանել 'ի Թշնամեաց. այլ ատելութիւնն քաղցրացոյց նոցա կրել զայնչափ Թշնամանս 'ի Վրացւոց. եւ երագել անձանց զաղետալի կործանումն: Զայսպիսի ցուրտ եւ վտանգաւոր անմիաբանութիւն տեսեալ Աշոտոյ՝ հաստատեաց 'ի միտս իւր, Թէ ցորչափ ողջ է Յովհաննէս, նախարարքն ոչ միաբանին ոչ ընդ ինքեան, եւ ոչ ընդ արքային: Նմին իրի խորհուրդ վատ եդ 'ի մտի իւրում. փոխանակ միաբանելոյ ընդ եղբօր իւրում, եւ վանելոյ զԹշնամիս, որպէս բազում անգամ արարեալ էին, հիւանդ ձեւա-

ցաւ, և 'ի նմին ամենեկի մերձ 'ի մահիճս իւր եւս փարել զորոգայթ, և ապա կոչեաց զՅովհաննէս 'ի տեսութիւն։ Իսկ նա ընդ մտանելն առ Աշոտ՝ անկաւ 'ի մէջ որոգայթին։ Յայնժամ հրամայեաց Աշոտ իշխանին Ապիրատայ կապել զեղբայր իւր և սպանանել. իսկ Ապիրատայ ոչ հաճեալ ընդ անգթութիւն Աշոտոյ՝ կապեաց զՅովհաննէս և տարեալ յԱնի՝ նստոյց յաթոռ իւր աւելով. լաւ է Հայոց ունել զարքայ իմաստուն, քան զանողորմ բռնաւոր։

33. Իսկ Թշնամիք տեսեալ զպայօրինակ թշուառութիւն արքային՝ զօրացան, մանաւանդ զի տեսեալ զանմիաբանութիւն նախարարաց՝ սկսան նեղել զաշխն յամենայն կողմանց։ Ուստի ոչ միայն Պարսիկք և Այլազգիք, այլ Հոռոմք և Վրացիք հարստահարէին զՀայս։ Իսկ իշխանք ընդդարմացեալք՝ ոչինչ շարժէին 'ի տեղւոջէ իւրեանց, միայն զանձանց օգնել խնդրելով. և զայն ոչ զմտաւ ածէին, թէ երբ գլուխն վիրաւորի և ցաւի, զիա՞րդ անդամոց մարթ իցէ ողջ մնալ. և յորժամ տունն կործանի, զիա՞րդ կարեն ընտանիքն 'ի հանգստեան մնալ։

34. Յամի տեառն 1021. Գէորգի Թագաւոր Վրաց ապստամբեցաւ 'ի տէրութենէ Յունաց, որում խորհրդակից և ձեռնտու եղև Յովհաննէս արքայ։ Իսկ Վասիլ կայսր 'բազում զօրօք եկ 'ի վերայ նորա, և նկուն արարեալ՝ տանակալս արար զՎրաստան, մինչև մազապուրծ փախեաւ Գէորգի։ Յայնժամ յուսահատեալ Յովհաննու՝ սկսաւ դողալ. զի լսէր թէ կայսրն հանդերձեալ է ելանել 'ի վերայ նորա։ Այլ նա չոքաւ 'ի Տրապիզոն՝ ձմերել անդ. սակայն իբրև լուաւ Յովհաննէս թէ կայսրն 'ի գարնան ունի յարձակել 'ի Հայաստան, խորհեցաւ առ անարի բնութեանն զխորհուրդ վտանգաւոր։ Զի այս է գործ փոքրոգի ակարաց՝ 'ի նեղ ժամանակի նկուն լինել առաջի թշնամեաց. իսկ առաքինիք քաջ եւս արիանան յայնպիսում ժամանակի։ Նմին իրի լաւ էր թէ այնպիսի անձինք բնաւ ոչ զհետ պնդէին իշխանութեան. այլ մնային յառանձնութեան, առ 'ի չլինելոյ պատճառ կործանման տէրութեանն, զոր նախնիք ստացեալ էին այնչափ աշխատանօք զարիւնս թափելով։

35. Արդ՝ յամի տեառն 1022. Յովհաննէս արքայ

առաքեաց զՊետրոս կաթուղիկոս 'ի Տրապիզոն առ
կայսրն՝ խօսել 'ի հաշտութիւն ։ Այլ քանզի Յովհան-
նէս անզաւակ էր, և անարգեալ յամենայն իշխանաց
Հայոց, նմին իրի խորհեցաւ տալ կայսեր զքաղաքն
Անի ։ Սատի գրեաց առ նա նամակ հանդերձ երդ-
մամբ, թէ տայ կայսեր զԱնի ընդ ամենայն գաւառաւ․
միայն թէ յորչափ ողջ եմ ասէ՝ մնացից թագաւոր, և
դու լիցիս ինձ բարեկամ և պաշտպան ։
Իբրև ընթերցաւ կայսրն զայս թուղթ՝ յոյժ ուրախ եղև,
և հաձեցաւ ընդ դաշնադրութիւնն անկարծելի ․ զոր
բազում զգուշութեամբ պահէր առ իւր ։ Այլ զՊետ-
րոս կաթուղիկոս մեծարեալ՝ պահեաց առ իւր ժամա-
նակ մի ․ և 'ի տօնի մկրտութեան ետ օրհնել զջուրն
'ի գետն Տրապիզոնի ․ որպէս տեսաք զառեղջն, ուր ե-
րևեցան սքանչելիք ։ Տես 'ի Պատմու 134 ։
36 ․ Կայսրն Վասիլ յետ դառնալոյ 'ի Կոստանդ-
նուպօլիս՝ ոչ յետ բազմաց մեռաւ, և թագաւորեաց
Կոստանդին եղբայր իւր յամի տեառն 1025 ․ որ զկնի
երից ամաց սաստիկ հիւանդացաւ, և տեսեալ թէ մե-
ռանի, հարաւ խիղձ նորա, և յիշեալ զնամակ Յով-
հաննու արքային՝ ցաւեցաւ 'ի վերայ ազգին Հայոց ։
Սատի հրամայեաց դառնել զհաւատարիմ այր 'ի
Հայոց անտի Կոստանդինուպօլսոյ ․ և նոցա տուեալ
զերէց ոմն Կիրակոս անուն, որ յառաջ եղեալ էր հիւ-
րատես կաթուղիկոսարանին, և գնացեալ էր անդր
սակս գործոց ինչ, ածին առ կայսրն, որ ետ նմա զայն
նամակ ասելով ․ Տուր զայս թուղթ արքային ձերոյ և
ասա յինէն կողմանէ ․ որովհետև հողածին եմք, եհաս
ինձ մահ իմ, և ոչ կամիմ զի նամակ նորա մնասցէ
ասս ․ տացէ զթագաւորութիւնն զաւակի և ազգի իւ-
րում և որդիք որդւոց իւրոց փոխանցուցեալ պահես-
ցեն զտէրութիւն իւրեանց, և մի լիցին գերի օտարաց,
և կործանեսցին քաղաքք և աշխարհն զլխովին ։ Այս
ասէ ցԿիրակոս քահանայ ․ տես որչափ է գութ իմ 'ի
վերայ ազգի ձերոյ ․ յորմէ օրինակ առեալ ձեր՝ ուսա-
րուք ունել սէր և միաբանութիւն ։ Եթէ դու ես հա-
ւատարիմ գտցիս, այսու մեծի փառաց արժանի լինիս ։
Իսկ Կիրակոսի յամի տեառն 1028 ․ առեալ զայն նա-
մակ 'ի կայսերէ՝ պահեաց առ իւր լռութեամբ ։

37. Յստակ է ստորաց, թէ վասն Հայոց չէ հարկ յայլոց խնդրել զթշնամի. այլ ինքեանք են զօրաւոր թշնամի 'ի կորուստ ազգին: Նաւական է սուր իւ-րեանց կտորել զիրեարս, և չէ պիտոյ մատնիչ և լրտես վասն նոցա, զի ինքեանք քաջ մատնիչ և լրտես են կորուսիչ. որպէս եղև և այս Կիրակոս երէց: Զկան-զի զինի կայսերացն Կոստանդեայ և Ռոմանոսի իբրև նստաւ կայսր Միխայէլ, այս անօրէն քահանայ չոքաւ առ կայսրն, և ետ նմա զայն նամակ Յովհաննու ար-քային, և էառ զանձ բազում 'ի նմանէ յամի տեառն 1034: Իսկ կայսրն ուրախութեամբ պահեաց զայն թուղթ յարքունի դիւանին, և սպասէր մահուան Յով-հաննու. որպէս զի՝ առեալ զԱնի տիրեսցէ բոլոր Հայ-աստանեայց: Ընդ որ այսպէս ողբայ Արիստակէս վար-դապետ. * Ով դառն վաճառուն տխուրիկ. քանի՞ ա-
„րեանց զանձն պարտական կացոյց. քանի՞ եկեղեցիք
„'ի ձեռն վաճառուն այնորիկ աւերեցան. քանի՞ գա-
„ւառք անմարդ յամայի դարձան. քանի՞ մեծանիստ
„աւանք մարդաթափ 'ի բնակչաց եղեն... Այս վա-
„ճառ անմարդադաւն զոլ թուի ինձ, քան զՅուդայ-
„ին. քանզի անդ թէպէտ վաճառօղն ընդ պարսաւա-
„նօք, այլ վաճառն գինք եղև փրկութեան ամենայն
„աշխարհի... իսկ աստ վաճառօղն յոյժ ապառումն
„և տմարդի. զի այսքան չարեաց զանձն պարտական
„կացոյց. զի այգի, զոր տնկեաց տէր, և մշակեաց Լու-
„սաւորիչն մեր իւրով հնդետասանամեայ քրտնալիր
„աշխատութեամբն, նա քակեաց զցանկ նորա, և կոր-
„ծանեաց զաշտարակս նորա և արար զնա կոխան ան-
„ցաւորաց. մինչև ապականեաց զնա խոզ անտառի,
„և կինճ վայրի ճարակեցաւ 'ի նմա, ըստ դաւթական
„ողբոցն ||:

38. Յամի տեառն 1036. հրամանաւ Յովհաննու արքային եղև մեծ ժողով յԱնի վասն բարեկարգու-թեան, ուր կային բազմութիւն հայրապետաց և վար-դապետաց. յորս էին բազում երևելի և գիտնական անձինք: 'Ի սմին ժամանակի դեռ պանծալի էր Անի մեծագործ շինուածովք, փարթամութեամբ և բազ-

ձամարդութեամբ. մինչ զի՝ մի էր յականաւոր մայրաքաղաքաց աշխարհի: Այնպէս թուէր թէ բազում ժամանակաց, և մեծի դժուարութեան կարօտի տիրել մեծի մայրաքաղաքիս սակս զարմանալի ամրութեան, անմատչելի մարտկոցաց և աշտարակաց: Սանաւանդ զի անկարելի թուէր, թէ ոտք թշնամեաց ունիցին կոխել 'ի նմին յերեսաց անպարտելի քաջաց պատերազմականաց, որք 'ի սուղ ժամանակի օգնով միաբանութե՛ հալածական արարեալ զամենայն թշնամիս ոչ միայն ազատեալ էին զազգն 'ի գերութենէ, կանգնելով զաթոռ թագաւորութեան Բագրատունեաց, այլ և յայն վիճակ հասուցեալ էին զքաղաքն Անի, մինչև ցանկալի լինել օրքայից և կայսերաց:

39. Բայց սակայն անյեղլի է վճիռ իմաստնոց, թէ չէ մարդն տիրող աշխարհի, և ոչ կայսերաց զօրութիւն, այլ միաբանութիւն հանդերձ իմաստութեամբ. զի ուր գոյ իմաստութիւն զոյգ ընդ միաբանութեան, անդ գոյ ամենայն բարելաւութիւն անթերի. և ուր պակասի՝ անդ տկարանայ ամենայն զօրութիւն, փութով կործանի անկանի տէրութիւն և մեծութիւն: Նաև հեռանայ իսկ աստուածային յաջողութիւն, որպէս եղև յԱնի. ուր քարինք, և ամրոցք ոչ ինչ զօրեցին ընդդէմ անմիաբանութեան. այլ ամենայն զօրութիւնք և կարծեալ մեծութիւնք 'ի սուղ ժամանակի յոչինչ դարձան. ազատ ազատ ոտնակոխ արարին թըշնամիք. կործանեցին զահեղ ամրութիւնս և բարձին զամենայն վայելչութիւնս: Նա չէին ինչ զարմանք. զի ասէ Նողիշէ վարդապետ, թէ * Ընդ քակտիլ միաբա„նութեան, և երկնաւոր առաքինութիւնն հեռանայ‖:

40. Արդ՝ յամի տեառն 1039. մեռաւ Յովհաննէս արքայ Հայոց յետ թագաւորելոյ ամս 20. և յառաջ քան զնա 'ի նմին ամի մեռաւ և Աշոտ եղբայր նորա. և երկոքին իսկ թաղեցան յԱնի 'ի գերեզմանս արքայից. և մնաց որդի մի Աշոտոյ Գագիկ անուն 14 ամաց, մանուկ իմաստուն և քաջ, ուր Յովհաննէս գոլով անորդի՝ սա էր ժառանգ թագաւորութեան: Սակայն նախարարքն անմիաբանութեամբ գլխովին անպիտանացեալ էին. և չունէին փոյթ դնել թագաւոր: Նմին իրի մնաց Հայաստան անտէր, և Անի անխնամ: Մինչ զի նախարար ոմն Վեստ Սարգիս կոչեցեալ բըռ-

նացաւ յԱ՟նի , և կողոպտեաց զզանձն արքունի , և խորհէր նստել թագաւոր ։

41 . Իսկ կայսրն Միխայէլ իբրև լուաւ զմահ Յովհաննու , սկսաւ ջանահնար լինել յափշտակել զԱ՟նի , իբրև սեպհական ժառանգութիւն իւր , որպէս խոստացեալ էր Յովհաննէս (35) ։ Նմին իրի դեսպան առաքեաց 'ի Հայս՝ յանձնել նմա զքաղաքն Ա՟նի ։ Հայք իբրև լուան զայս՝ շուարեալ խռովեցան , և բնաւ ոչ հաւանեցան տալ . վասն զի մի միայն մնացեալ էր 'ի Հայաստան մեծաշէն , բազմագանձ և մարդաշատ քաղաք ։ Սակայն և այնպէս Միխայէլ կայսր ոչ դադարէր 'ի պահանջելոյ զայն . բազում անգամ դեսպանս առաքելով՝ հնարս հնարէր 'ի ձեռս բերել ։ Նաև իբրև ետես թէ ամենայն հնարք իւր 'ի դերև ելին՝ խորհեցաւ պատերազմաւ վճարել զգործն . ուստի առաքեաց 'ի Հայաստան զօրս հարիւր հազար առ 'ի տիրել Ա՟ւոյ ։

42 . Այս բնութիւն է Հայոց . զի երբ կորուսանեն զոգի միաբանասիրութեան, առաւել ընտրեն ծառայել օտար ազգաց և սիրելի լինել նոցա . և որ չարագոյն է , արհամարհեալ զազգն միանան ընդ թշնամեաց ։ Որպէս եղև անօրէն Վեստ Սարգիս , որ յայնժամ գլուխ գոլով անգլուխ ազգին՝ եկեալ ընդդէմ զօրացն Յունաց . բայց փոխանակ հալածելոյ զնոսա , օգնական եղև նոցա , որք անաշխատ մտեալ 'ի Հայաստան՝ սկսան չարաչար հարկանել և կողոպտել զՀայս ։ Ուր չէր ազդանէր ոք , որ ընդդէմ դառնայր նոցա . նորին աղագաւ յաճախ ոտնակոխ առնելով զաշխարհն , տկարացուցին զզօրութիւն նոցա , մինչև յառաջացեալ հասին Յոյնք 'ի Շիրակ գաւառ , և պաշարեցին զԱ՟նի ։ Ապշուառ Հայք յայնժամ զարթեան 'ի քնոյ , և բորբոքեալ սրտմտութեամբ դիմեցին ամենեքեան առ ծեր Սպարապետն Վահրամ պալհաւունի , և խնդրեցին լինել նոցա առաջնորդ առ 'ի պատերազմել ընդդէմ Յունաց ։ Վահրամ վառեալ ոգւով ազգասիրութեան՝ յանձն էառ . խնդրեաց 'ի նոցանէ 30 հազար հետևակս , և 20 հազար ձիաւորս . որք յերիս գունդս բաժանեալ՝ ելին 'ի Ծաղկոցադրանէ արտաքս , և յանկարծ անկեալ 'ի վերայ բանակին Յունաց՝ չարաչար շփոթեցին զզօրսն՝ ամենայն քաջութեամբ և արագութեամբ .

մինչ զի Յոյնք սարսափեալ ցիրուցան եղեն և առ հատարակ սկսան փախչիլ։ Իսկ զօրքն Հայոց արագութեամբ ինն կալեալ զառաջս նոցա, այնպէս անխնայ կոտորեցին, մինչև արիւնն հեղեղեալ ընդ փողոցս ներկեաց զջուր Ախուրեան գետոյ. շատք ևս գետակուլ եղեն։

43. Տեսեալ Յունաց, թէ սպառին 'ի ծառայս արոյ Հայոց, սկսան աղաղակել, զի խնայեսցեն 'ի նոսա։ Յայնժամ քաջն Վահրամ յառաջ մատուցեալ սկսաւ յորդորել զզօրս իւր դադարիլ 'ի հարկանելոյ զՅոյնս։ Նա այսպէս հազիւ կարաց դադարեցուցանել զնոսա. որով և Յոյնք ոգի առեալ սկսան փախչիլ մինչև յաշխարհ իւրեանց։ Իսկ անօրէնն Սարգիս սկսաւ այնուհետև գաղտնի հնարիւք որսալ զսիրտս Հայոց, նստուցանել զինքն յԱնի թագաւոր։ Սակայն Վահրամ սպարապետ 30 իշխանօք և նախարարօք խորհեալ ընդ Պետրոս Կաթուղիկոսի՝ որոշեցին օծանել թագաւոր զԳագիկ եղբօրորդի Յովհաննու արքային, որ փախըստական շրջէր 'ի ձեռաց Սարգսի. ուստի ամենայն ըզգուշութեամբ ետուն բերել զնա յԱնի և օծին թագաւոր։

44. Թ. Յամի տեառն 1042. Գագիկ Բ. եօթնետասնամեայ նստաւ թագաւոր յԱնի. որ 'ի մանկական տիս կրթեալ 'ի պէսպէս ուսմունս Հելլենացւոց, և 'ի գեղեցիկ կարգս աստուածպաշտութեան, եղև զօրաւոր և քաջ, իմաստուն և վեհանձն։ Յորոյ վերայ այնպէս փայլէր ա̃ծային յաջողութիւն, զի եթէ նախարարք միաբան և միակամ լինէին ընդ նմա՝ ոչ ինչ պակաս քան զնախնիս Հայկազունս տիրէր բոլոր Ասիոյ, և շարժէր 'ի տեղւոջէ իւրմէ զկայսերութիւն Յունաց։ Սակայն երբ ազգն էր անմիաբան և տիրատեաց, ոչ ինչ ունէին զօրել այն ամենայն քաջութիւն և մեծութիւն. թագաւորն ձրչափ իմաստուն և քաջ լիցի, երբ ժողովուրդն է անմիաբան, և խնդրօղ կորստեան, զի՞նչ օգուտ անտի։ Որպէս ոչինչ օգուտ գիտաց առնել իմաստութիւն և քաջութիւն Գագիկ թագաւորին. զի բարձեալ էր յիշխանաց ոգի ազգասիրութեան, և տիրեալ էր չար ոգի անմիաբանութեան և ատելութեան, մինչ զի ընտանի իւն թշնամի եղեալ էին բնիկ Տէրութեան. որոց գլուխ և առաջնորդ էր անօրէնն Սարգիս։

Վասնզի այս Սարգիս տեսեալ, թէ Գագիկ նստաւ թագաւոր, ժողովեալ զսիկարեանս՝ եմուտ 'ի ներքնաբերդն Անւոյ, և անդ ամրացաւ ։ Զայն լուեալ արքային անդէն և անդ եւ միայնակ՝ և՝ չոքաւ 'ի ներքս անդ ․ և զայնպիսի իմաստուն և զօրաւոր բանս խօսեցաւ անվեհեր, մինչև նկուն արար զՍարգիս առաջի իւր ։ Սակայն այր նենգամիտ ոչ գիտէ դադարել 'ի չարեաց իւրոց ․ այլ միշտ ջան դնէ անհանգիստ առնել զամենեսեան ։ Սոյնպէս և այս անօրէն սկսաւ գրգռել զՅոյնս ընդդէմ Հայոց, և ինքն աստանդական շրջեալ հարկանէր զՀայաստան ։ Իսկ Գագիկ քանի մի քաջ արամբք ել 'ի վերայ նորա, և կալեալ կապեաց զՍարգիս, և տարեալ յԱնի եդ 'ի բանտի ․ այլ խնայելով 'ի նա ոչ կամեցաւ սպանանել, և 'ի խնդրոյ ոմանց ազատեաց զնա ։

45 ․ Ապաքէն վտանգ մեծ է մեծամեծաց երբ կարի իմն 'ի գութ շարժեալ բարիս առնեն անզգամաց ․ որք ոչ միայն այնու ոչ ուղղին, այլ և համարձակութիւն իմն գտեալ՝ չարաչար ևս զհետ լինին կորուսանել զբարերարս ։ Որպէս արար Սարգիս Գագկայ արքայի, որ խաբեալ 'ի կեղծուպատիր բանից նորա, արար զնա ինքեան խորհրդական ․ իսկ նա գոլով միշտ նոյն, միշտ մատնիչ եղև արքային, և արքունական քաղաքին Անւոյ ։

46 ․ 'Ի նմին ժամանակի Գագկայ պատերազմեալ ընդդէմ Սկիւթացւոց՝ մեծ յաղթութիւն արար հալածելով զթշնամիս ։ Յայնժամ Մոնոմախոս նստաւ 'ի Կոստանդնուպօլիս կայսր Յունաց զկնի Միխայէլի ․ որ և գտեալ 'ի դիւանի իւրում զնամակն տուեալ յարքայէն Հայոց (35) ․ դեսպան առաքեաց առ Գագիկ՝ զի տացէ նմա զքաղաքն Անի ։ Գագիկ մեծ պատուով և խոհեմութեամբ խօսեցաւ՝ ցուցեալ զինքն խոնարհ հպատակ կայսեր ․ սակայն ոչ երբէք հաւանեցաւ տալ զարքայանիստ քաղաքն Անի ։ Մոնոմախոս անդադար ստիպէր զնա տալ ․ այլ իբրև ետես թէ չէ հնար լինել կամագիւտ, ժողովեաց զբազում զօրս և տուեալ 'ի ձեռս Նիկիտ իշխանին առաքեաց 'ի վերայ Անւոյ ։ Որք բազում հնարս հնարեցին յափշտակել զայն ․ բայց Գագիկ անպարտելի քաջութեամբ ել ընդդէմ նոցա, և այնպիսի չարաչար հարուածս ետ Յունաց, մինչև խայտառակեալ փախեան 'ի Հայաստանէ ։

47. Ընդ այս աւելի իմն զայրացեալ կայսեր՝ մեծաւ պատրաստութեամբ առաքեաց զՆիկողայոս զօրավարն. նաև նամակ գրեաց առ Ապուսվար պարսիկ իշխան Դւնայ, զի 'ի միւս կողմանէ ելեալ շփոթեսցէ զՀայս. որ և յանկարծ ելեալ յափշտակեաց զբազում ամրոցս: Իսկ Գագիկ եւ քաջութեամբ ընդդէմ Նիկողայոսի, և ահագին պատերազմաւ աշխատ արար զնա յոյժ: Այլ տեսեալ թէ Ապուսվար պարսիկ 'ի միւս կողմանէ զօրանայ, զարմանալի խոհեմութեամբ հաշտութիւն խօսեցաւ ընդ նմա, և շատ գանձ տուեալ բարեկամացաւ: Ապա դարձեալ անդրէն 'ի վերայ Յունաց կոտորեաց զնոսա, և խորտակեալ զզօրութիւն ահեղ պատրաստութեանն՝ հալածական արար զնոսա յաշխարհէն իւրմէ: Սակայն և այնպէս ոչ օգուտ ինչ եբեր այս մեծ յաղթութիւն. զի թէպէտ արտաքին թշնամիք կորագլուխ կորեան, այլ ներքին թշնամին միշտ գոլով ընդ նմա, իբրև լրտես և մատնիչ միշտ գրգռէր զՅոյնս առնուլ զԱնի: Եւ ոչ այսչափ միայն, այլև անդադար քսութիւն և բանսարկութիւն արարեալ էարկ զատելութիւն 'ի մէջ արքային և իշխանաց. նոյնպէս ցրտութիւն պատճառեաց 'ի մէջ կաթուղիկոսին և արքային: Մինչ զի եւս փախուցանել 'ի Հայաստանէ զերևելի գիտնական իշխանն Գրիգոր Մագիստրոս:

48. Եւ այսպէս Սարգիս գոլով անօթ սատանայի էարկ 'ի մէջ մեծամեծաց Հայոց խռովութիւն ամենաչար՝ քակեալ յիրերաց զամենեսեան: Եւ բիւրակերպ կեղծաւորութեամբ քայքայեաց զազգն, և վրդովեաց զտէրութիւնն: Եւ քանզի ոչ զօրեաց զօրութիւն Յունաց և Պարսից խորտակել զանպարտելի սիրտ Գագկայ և Հայոց, այնչափ հնարք և պատերազմունք չկարացին պարտել զՀայս: Նմին իրի հարկ եղև 'ի ձեռին ունել զսովորական կորուստ ազգին. այն է անմիաբանութիւն. զի բաց յայնմանէ այլ հնար ոչ գոյր, որպէս բազում անգամ փորձեալ էին:

49. Այն զի՝ ցորչափ 'ի տեղի ազգասիրութեան ազգատեցութիւն բուռնեալ էր 'ի մէջ Հայոց՝ չէր ինչ դժուարին նկուն առնել զանդրդուելի քաջութիւն արքային, և մատնել զմեծաշէն արքայանիստ քաղաքն Անի: Որով և յաջողեցաւ անօրէն Սարգսի մատնել

զայն օտարաց, և կործանել զազգն գլխովին. որպէս եղև առ քաջն Վարդանաւ, ուր յաղթեցաւ անօրէն Վասակայ մատնել զաշխարհն և զազգն Հայոց 'ի ձեռս Պարսից: Գողով և Սարգիս 'ի ցեղէ նորա՝ ժառանգ գտաւ կեղծաւորութեան նորա, մատնութեան և վատանունութեան: Ուստի իմաստութեամբ ասաց Յովհան Մանդակունի. * Ամենայն անօրէնութիւն եր-
» բեմն սատակացեալ բորբոքի, և երբեմն դադարի.
» իսկ քինահանութիւնն միշտ բորբոքի յանօրէն խա-
» բամանկութեան խորհուրդս»:

50. Կարի վտանգաւոր է և պատճառ կործանման մեծամեծաց՝ յորժամ իշխանաւորք հաւատան կեղծաւորաց, և հաճելի լինին նոցա շողմոք բանք մարդելուզաց. մանաւանդ երբ փոքր և խոնարհական մարդիկ ազդ առնեն հեռի կալ 'ի ստուտակասպաս բանից, և նոքա ոչ ինչ լսօղ լինին: Այլ որ չար ևս է, թագաւորք ոչ միայն զայնպիսիսն ոչ հեռացուցանեն յիւրեանց, այլև զխորհուրդ բարեխորհուրդ բարեկամաց թողեալ, այնպիսի խորամանկ խորհրդականաց հետևին: Որ թէ և ոչ ինչ չար երևէր նոցա բանսարկութիւն մարդահաճոյից, գէթ պարտ էին հետևիլ ազդարարութեան հաւատարիմ խոհականաց: Ուստի որ միանգամ զայս կանոն ոչ պահեաց, միշտ սխալեցաւ հանդերձ մեծամեծ կորստեամբք. և պատճառս ետ կործանման, թէ անձին և թէ տէրութեան: Քանզի ծառ չար պտուղ բարի ոչ առնէ. և այր անօրէն չունի գործել զգործ օրինաւոր: Այս վայ նմա, որ անկեալ 'ի ձեռս անօրինին՝ հաւատայ բանից նորա. որով և խաբի չարաչար. որպէս եղև Գագիկ արքայ, որ խաբեալ 'ի բանից չարարուեստ Սարգսի՝ ոչ ինչ կամեցաւ այնուհետև անսալ օգտակար ազդարարութեանց հաւատարիմ բարեկամաց և իշխանաց: Այլ որ չարն է, արհամարհեալ զհաւատարիմ անձինս՝ անձնատուր եղև մատնչին, և կործանեաց զթագաւորութիւնն. զի գոյ և իմաստնոց քուն:

51. Արդ՝ խորամանկ Սարգիս առ ՚ի գլուխ տանել զվատ խորհուրդ իւր՝ գաղտ ծանոյց Մոնոմախոս կայսեր որչափ ինչ քսութիւնս արարեալ էր և որչափ ատելութիւնս սերմանեալ ՚ի մէջ իշխանաց, կամ թէ որպիսի որոգայթ լարեալ էր վասն Գագկայ։ Կայսրն լուեալ զայս ամենայն՝ ուրախ եղև յոյժ. և վստահ եղև, թէ այս ամենայն վասն իւր են մեծ յաջողութիւնք, և վասն Հայոց պատճառք կործանման։ Նմին իրի յուսայր թէ սակաւ աշխատանօք կարասցէ տիրել Անւոյ, և բառնալ զթագաւորութիւն Հայոց։ Ապա պատգամ առաքեաց առ Սարգիս և առ այլ նախարարս խոստանալով բազում ինչ, որպէս զի որսացեալ զմիտս Գագկայ արքային հաւանեցուսցեն տալ զԱնի կայսեր։

52. Այս անօրէն իշխանք գոլով միախորհուրդք ՚ի ծածուկ, սկսան այնուհետև զօրանալ. և խորհուրդ չար խորհեցան մատնել զԱնի և զԳագիկ միանգամայն։ Սուտի գրեցին թուղթ առ կայսրն՝ խորհրդատուեալ, զի պատճառաւ իմն հաշտութեան կոչեսցէ զԳագիկ ՚ի Կոստանդինուպօլիս, և արկցէ ՚ի բանտ։ Այնուհետև, ասեն, հեշտ լինի առնուլ զԱնի և զտէրութիւն Հայոց։ Ըստ որոյ և կայսրն գրեաց առ Գագիկ թուղթ սիրոյ լի կեղծուպատիր բանիւք. և յորդորէր զնա երթալ ՚ի Կոստանդինուպօլիս առ ՚ի հաստատել զսերտ բարեկամութիւն։ Բայց Գագիկ ամենևին ոչ կամեցաւ երթալ. զի կասկած ունէր, թէ Յոյնք վրէժխնդիր լինին այնչափ արեանհեղութեանց, զոր կրեցին։ Ապա կրկին անգամ գրեաց կայսրն մեծամեծ երդմամբք վկայ կոչելով զսուրբ խաչն և զսուրբ աւետարանն. մինչև խոստացաւ տալ նմա զնամակն Յովհաննու արքային, և հաստատել ՚ի մէջ իւրեանց սէր և հաշտութիւն մշտնջենական։ Սակայն Գագիկ առաւել ևս կասկածոտ եղև սակս երդմանցն. և հաստատեաց ՚ի միտս չերթալ բնաւ։ Որովհետև Վահրամ մեծ սպարապետ և այլք յիշխանաց միաբան անդադար յորդորէին զարքայն, չհաւատալ երբէք Յունաց և ոչ գնալ ՚ի Կոստանդինուպօլիս։

53. Իսկ նենգամիտն Սարգիս ընդ խորհրդակից նա-

խաբաբայ սկսաւ ստիպել զարքայն գնալ առ կայսրն ։ Եթէ ոչ կամիցիս գնալ, ասէին, մեծամեծ չարիք և խռովութիւնք ծագին 'ի մէջ մեր և Յունաց. և մեք չկամիմք այլ ևս պատերազմիլ ընդ կայսեր ։ Ապա եթէ ունիցիս կասկած ինչ, ահա աստ եմք մեք, և պատրաստք պաշտպանել, թէ զքեզ, և թէ զաշխարհ մեր ։ Սակայն և այնպէս Գագիկ ոչ հաւանեցաւ բանից նոցա. մինչև կոչեցին զՊետրոս կաթողիկոս և զայլ նախարարս երդուան զահագին երդմունս առաջի սրբոյ պատարագին. և որպէս ասեն պատմիչք, զգիր երդմանն գրեցին արեամբն Քրիստոսի, և յանձնեցին 'ի ձեռս կաթողիկոսին ։

54. Գագիկ արքայ վստահացեալ ընդ երդմունսն հաւանեցաւ և պատրաստեցաւ գնալ 'ի Կոստանդինուպօլիս ։ Աւատի յանձնեաց զքաղաքն Կաթողիկոսին, և յատկապէս ետ վերակացու զիշխանն Ապիրատ ։ Իսկ զընտանիս իւր յանձնեաց անօրէն Սարգսին. և ինքն հաւատարիմ արամբք չոգաւ առ կայսրն 'ի չորրորդ ամի թագաւորութեան իւրոյ. յամի տ̃ն 1045 ։ Մոնոմախոս իբրև լուաւ զգալուստ Գագկայ ուրախութեամբ մեծաւ առաքեաց զմեծամեծ իշխանս ընդ առաջ նորա, որք մեծաւ փառօք ածին զնա առաջի կայսեր. որ յայնժամ մեծ պատիւ և սէր եցոյց նմա ։ Ապա զկնի աւուրց ինչ սկսաւ պահանջել 'ի նմանէ ըզքաղաքն Անի. և խոստանայր տալ նմա փոխանակ ըզՄալաթիա քաղաք փոքր Հայաստանու ։ Իսկ Գագիկ ամենևին չէառ յանձն տալ. մինչև կատաղեալ կայսեր արգել զնա չփախչել 'ի քաղաքէն. և ընդդէմ ահագին երդմանցն ետ զնա թշուառաբար 'ի բանտի 'ի կղզի ինչ Պօլսոյ ։

55. Եղկելի կալանաւոր եղև առիւծանման արքայն երբ փակեցաւ 'ի բանտի անդ. որ առ անհնարին տըրտմութեան ոչ գիտէր զինչ առնել ։ Արդ միջնորդ զմեծամեծս, որպէս զի հաւանեցուսցեն զկայսրն, այլ չեղև հնար ։ Յիշեցուցանէր նմա զոսկալի զերդմունսն զոր արարեալ էր. և թէ զիարդ խաբեաց զնա. մանաւանդ թէ զա̃ծ. և թէ այսպիսի անարգ կեղծաւորութեամբ որպէս արգել զինքն ընդդէմ կամացն Աստուծոյ. որ ոչ խաբի, այլ արդար է և արդարապէս հատուցանէ փութով ։

56, Ի զուր եղեն այս ամենայն արդարացի բանք Գագկայ, որ ջանայր զանխիղճ կայսրն 'ի խիղճ ածել. որոյ սիրտ քարացեալ էր շահասիրութեամբ. մանաւանդ՝ երբ զմտաւ ածէր զբազմապատիկ ճոխութիւն և զմարդաշատ ընդարձակութիւն մայրաքաղաքին Անւոյ, այլ յայլմէ լինէր, թէ այս որպիսի յաջողութիւն իցէ, որ պատահեցաւ ինքեան։ Մոնոմախոս հազիւ եհաս բազմամեայ փափաքանաց. և զիա՞րդ կարէր խորհիլ զարդարութիւն և երկնչիլ յանիրաւ երդմանցն կամ արձակել զԳագիկ 'ի բանտէն։ Որ 'ի նեղ վայրի տագնապեալ իմանայր զինչ պատահեցաւ նմա հաւատալովն սուտ բարեկամաց. ուստի արիւն նորա եռայր յերակունս, այլ զինչ շահ. զի յամենայն կողմանց պաշարեալ կայր, օգնութիւն խնդրէր յազգէ իւրմէ, այլ գտանէր զմատնութիւն։ Յուսայր թէ գէթ իշխանք իւր երկուցեալ 'ի սոսկալի երդմանցն, զոր արարին առաջի Աստուծոյ, մնալ ունէին հաստատ, և ոչ մատնեն զԱնի մայրաքաղաք։ Սակայն այն երդումն եղեալ էր միայն 'ի կորուսանել զնա, և ոչ պաշտպանել. ջան նոցա էր առ 'ի ձգել զնա յորոգայթ, և ոչ ազատել։ Կարծէր ողբալին, թէ գէթ վասն օգտի իւրեանց ջանահնար լինէին չմատնել անարգութեամբ 'ի ձեռս Յունաց։ Բայց այն երդմնազանց ուխտադրուժք այնպէս կուրացեալ էին չար նախանձու, զի կամէին յաւէտ գերի լինել Յունաց՝ քան ազատութեամբ ունել ընդ թագաւորութիւն։ Ուստի բարւոք ասաց Իգնատիոս Վարդապետ. * Չար է նախանձ. և որք նովաւ վա-
» րակեալ են, չածեն ինչ 'ի պատշաճիցն զմտաւ ||։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՏՆՈՒԹԻՒՆ ԱՆՒՈՅ

57. Իշխանք Անւոյ իբրև լուան զկալանաւորիլ արքային՝ խռովեցան, և ոչ գիտէին, թէ զինչ արասցեն. քանզի որք դաշնադիր էին ընդ կայսեր, ստիպէին զայլս միանալ ընդ նոսա և մատնել զքաղաքն։ Իսկ այլք յիշելով զսարսափելի երդմունսն՝ զոր արարին, բնաւ ոչ հաւանէին նոցա։ Յայսմ մեծի շփոթութեան անօրէնն Սարգիս կեղծուպատիր բանիւք որսաց 'ի կողմն իւր զայլ իշխանսն։ Նոյնպէս և Պետրոս կաթուղիկոս

հաւանեցոյց զամենեսեան տալ կայսեր զԱնի քաղաք, և յանձնել Յունաց զտէրութիւն Հայոց, և մի՛ մնալ այնպէս երերեալ և անգլուխ։ Այսմ փաստակար խորհրդոյ հաւանեցան ամենեքեան և միաբան գրեցին թուղթ առ արևելեան իշխանն Յունաց, խոստանալով թէ մեք պատրաստ եմք տալ կայսեր զԱնի. միայն թէ պաշտպանեսցէ զմեզ 'ի թշնամեաց։ Զկնի այսորիկ ապա Սարգիս ընդ իւր համախոհից առաքեաց առ կայսրն զբանալիս Անւոյ և թագաւորական պալատին, գաղտ 'ի կաթուղիկոսէ և 'ի բարեպաշտ Նախարարաց։ Նաև գրեաց թուղթ, թէ այսուհետև ձեր է Անի և բոլոր Հայաստան։ Եւ այսպէս յետ մատնելոյ զայն պանծալի քաղաք և տէրութիւն՝ գնացին իւրաքանչիւր 'ի տեղիս իւրեանց։ Այսպէս է ահա գործ տիրանենգութեան. այսպէս նախանձ և ատելութիւն. որ այնպէս կուրացուցանեն զմարդ, զի զտուն և զտէրութիւն իւր կամակար կորուսեալ ինքնամատն գերի լինի օտարաց, և ոչ իմանայ զկորուստ իւր։ Եղկելի արքայն 'ի մէջ բանտին կաշկանդեալ ոչ ինչ վերջանայ մաքառել ընդ թշնամեաց գէթ բանիւք. որպէս զի ազգն մի լիցի գերի Յունաց, և մի կործանեսցի տէրութիւնն։ Իսկ անպիտան իշխանք գուն գործեն կործանել և զազգն և զաշխարհն յազատութեան իւրեանց։

58. Արդ՝ կայսրն Մոնոմախոս իբրև ետես զբանալիս Անւոյ, ուրախացաւ ուրախութիւն մեծ. զի բազում աշխատանաց պէտս ունէր առ 'ի տիրել այնր մեծի մայրաքաղաքին։ Իսկ առ 'ի կործանել զտէրութիւն այնպիսի զօրեղ ազգի և քաջ թագաւորի՝ զբիւրաւոր զօրս և զբազում գանձս ունէր վատնել։ Իսկ ահա ինքեանք առաքեն զբանալիս, և զիարդ ոչ ունէր նա և իւրքն իրաւունս խրախանալոյ ընդ անակնկալ դիպուածն ընդ այն։ Ուստի կայսրն ընդ առնուլն զբանալիս Անւոյ՝ ետ բերել առաջի իւր զարքայն Գագիկ, և ցուցեալ նմա զայնս՝ ասաց. Այժմ զինչ ինչ ունիս ասել. ահա նախարարք ետուն ինձ զԱնի ընդ բոլոր Հայաստանեայց։ Գագիկ իբրև ետես զայն, յոգւոց եհան ասելով. աստուածային ահեղ դատաստանին թողում զիմ մատնիչ դաւաճանօղս. թող արդար դատաւորն տեսցէ զիմ դատաստան։

59. Ապա դարձեալ առ կայսրն ասաց, դիցուք թէ

նոքա տուեալ իցեն. մի թէ դու կարես արդարութեամբ տիրել: Ասէ կայսրն. նոքա ետուն, հարկ է զի և ես առից: Պատասխանի ետ Գագիկ. նոքա ոչ Անւոյ տէր են, և ոչ Հայաստանեայց. ես միայն եմ տէր հանդերձ իշխանօքս. երբ ես ոչ տամ հանդերձ նոքօք, և ոչ տայց բնաւ, դուք ոչ կարէք իրաւամբք առնուլ: Եւ ոչ զայն, զի շատք 'ի նախարարաց չեն միաբան ընդ նոսա, այլ ընդ իս են. ապա զիա՞րդ կարէք ժառանգել զտէրութիւնս և զքաղաքս այլոց. և ուր է ձեր արդարութիւն: Ասաց կայսրն. բաւական է, զի այնչափ նախարարք միաբանեալ՝ ետուն հանդերձ նամակաւ Յովհաննու արքային, որ տէր էր Անւոյ, և յօժարակամ ետ մեզ: Ետ պատասխանի Գագիկ. այդոքիկ նախարարք առանց հաւանութեան թագաւորին չեն կարող տալ զթագաւորական քաղաքն, և ոչ իսկ թագաւորն կարող է տալ առանց հաւանութեան նախարարաց: Քանզի թէպէտ քաղաքն առի թագաւորին, այլ զճշմարիտն խօսելով՝ բոլորն է ազգին: Եթէ Յովհաննէս թագաւորն ետ զայն, և եթէ նախարարք, միշտ անիրաւ է՝ երբ չէք հաւանութիւն յերկուց կողմանց. յայնժամ նախարարք չունէին հաւանութիւն, և այժմ թէ և նոքա ետուն զբանալիս, այլ թագաւորն չունի հաւանութիւն, որ ես եմ: Յայնժամ սկսաւ կայսրն սաստիկ իմն նեղել և ստիպել զարքայն հաւանիլ. իսկ նա կրկնեաց քաջութեամբ: Արդար իրաւամբք ես եմ ժառանգ թագաւորութեան Հայոց. և մեք արեամբ մերով առեալ եմք զայն 'ի թշնամեաց. ես չեմ իսկ փառասէր կայսերութեան ձերում. նաև ամենևին չունիմ կամս և ոչ հաւանութիւն՝ տալ ձեզ զայն: Ապա ուրեմն ընդդէմ հաւանութեանս չէք կարող արդարութեամբ յափշտակել զիմ թագաւորութիւն յինէն:

60. Այլ քանզի կայսրն Ջանահնար լինէր առնուլ զհաւանութիւն յարքայէն Հայոց, որպէս զի իրաւամբք տիրող լիցի թագաւորութեանն, նմին իրի յերկարէր խօսակցութեանց՝ ասէ կայսրն. թէպէտ և դու էիր ժառանգ թագաւորութեան Հայոց, սակայն հօրեղբայր քո զրկեաց զքեզ 'ի ժառանգութենէ՝ տալով մեզ զԱնի: Ետ պատասխանի Գագիկ. հօրեղբայր իմ չունէր բնաւ իրաւունս զրկելոյ զիս. ապա և ոչ

դու ունիս իրաւունս ժառանգելոյ զիմ թագաւորու-
թիւն։ Եթէ դու լինէիր 'ի տեղի իմ, եւ նախորդն քո
Միխայէլ կայսր խոստանայր տալ այլում զկայսերա-
նիստ քաղաքդ առանց հաւանութեան իշխանաց եւ ազ-
գին, այժմ կարէ՞ր առանց հաւանութեան քո տիրել
այսմ քաղաքի, եւ ժառանգել զայն արդարութեա՛մբ։ Ասէ
կայսրն, թէ ոչ երբէք կարէր առնուլ։ Ասէ Գագիկ,
ապա դու որպէս կարես պահանջել եւ առնուլ զԱնի
առանց իմոյ հաւանութեան. որոյ նոյնպէս ժառանգ
եւ թագաւոր ես եմ։ Իսկ եթէ կամիս բռնութեամբ
յափշտակել, կարօղ ես. եւ ոչ ոք ունի ասել ինչ. ո-
րովհետեւ իշխանք իմ նենգեցին ինձ, եւ դու խաբէա-
կան երդմամբք կոչեցեր զիս աստ. սակայն եթէ քա-
ջութեամբ կամիցիս առնուլ, ահա պատրաստ եմ։

61. Գագիկ թագաւոր այսպիսի քաջութեամբ խօ-
սելով ել արտաքս վշտալի եւ անհնարին բարկութեամբ։
Բայց զինչ շահ, զի 'ի նենգ անկեալ էր, եւ 'ի ձեռս ա-
րանց անիրաւաց մատնեալ կայր. արդարութիւն խնդ-
րէր ուր ոչ գոյր արդարութիւն, նորին աղագաւ եւ ոչ
իսկ լսելի եղեն արդարացի բանք եւ բողոք նորա. զի
նոքա ոչ զարդարութիւն, այլ զթագաւորութիւն նո-
րա խնդրէին։ Յաղագս որոյ այլ ոչ կարաց տանել
վշտատես արքայն. ել արտաքս յերեսաց անիրաւ կայ-
սեր։ Գիտաց թէ այնուհետեւ չիք հնար, այլ միայն
լսել եւ ապաւինիլ յարդարադատն Աստուած։

Այո՛ բազում ինչ խորհեցաւ լայնախորհուրդ քաջն
այն. այլ ոչ կարաց ելս հնարս գտանել՝ ոչ զանձն ա-
զատելոյ եւ ոչ զթագաւորութիւնն 'ի ձեռաց թշնա-
մեաց։ Ապա այնուհետեւ սկսաւ յուսահատուր լինել,
մանաւանդ երբ զմտաւ ածէր, թէ մատնութեամբ իշ-
խանաց իւրոց յայն դառնութիւն անկեալ կայր։ Ուս-
տի կամայ ակամայ հաւանեցաւ տալ կայսեր զարքայա-
նիստ քաղաքն Անի։ Իսկ կայսրն թուղթ առեալ 'ի
նմանէ՝ ետ փոխարէն քանի մի վայրս 'ի կողմն Կապա-
դովկիոյ. նաեւ մեծ պալատ մի 'ի մէջ Կոստանդնու-
պօլսոյ։

62. Այլ քանզի ծանր եւ դժուարին է քաջ տանու-
տերանց թողուլ զտէրութիւն իւրեանց՝ անկանիլ ընդ
տէրութեամբ այլոց, եւ 'ի սահմանս թշնամեաց դան-
դաղել։ Արդարեւ ծանր եղեւ եւ դառն Գագկայ արքայ-

էին երբ եւս զինքն զրկեալ 'ի թագաւորութենէ, պանդուխտ տատանեալ 'ի մէջ Յունաց, ուր ոչ ուրեք կարէր լինել գոհ և հանգիստ ։ Նա կարի իսկ քաջ․ քանզի որ յընդարձակութեան աշխարհին Հայոց իբրև զառիւծ գոչէր և զաշխարհ դողացուցանէր, այժմ իբրև անզօր եղկելի աստանդական տատանի, որով և զիւր գեղածաղիկ հասակ քսանևերկամեայ հաշէր և մաշէր ողբալով ։ Նա զի քաջ գիտէր, թէ այլ ոչ եւս ունի յինքն դառնալ թագաւորութիւն իւր, և ոչ ազգն ազատանալ 'ի գերութենէ անտի ։ Մանաւանդ մեծապէս մորմոքէր 'ի վերայ սիրելւոյն իւրոյ գեղեցկաշէն Անւոյ, որ այնպէս չարաչար մատնեցաւ․ բայց սակայն 'ի զուր վշտանայր․ զի մատնիչք էին բուն իշխանք իւր, և յափշտակօղն էր կայսր ։

ԱՌԱՋԻՆ ԱՌՈՒՄՆ ԱՆԻՈՅ

63. Յամի Տեառն 1046. Մոնոմախոս յետ առնլոյ հաւանութիւն 'ի Գագկայ՝ առաքեաց զՄիկողայոս զօրապետ իւր 'ի Հայաստան բազում զօրօք և նամակաւ Գագիկ արքային, որպէս զի տիրեսցէ Անւոյ. նաև մեծամեծ պարգևս առաքեաց Պետրոսի կաթողիկոսի ։ Զայն իբրև լուաւ Վահրամ իշխան, որ վերակացու էր քաղաքին, բնաւ ոչ հաւանեցաւ տալ. և ասէր ցՅոյնս, թող եկեսցէ տէր քաղաքին և տացէ ում և կամիցի. մեք մինչև ոչ տեսցուք զնա, ոչ տամք զքաղաք նորա ։ Զայս բան լուեալ Յունաց՝ չարաչար կատաղեցան, և պաշարեալ զքաղաքն՝ սկսան պատերազմիլ ։ Իսկ Հայոց տեսեալ զանիրաւ բռնութիւնս Յունաց, սկսան աղաղակել, և ձայն տուեալ միմեանց անհնարին բարկութեամբ ելին արտաքս 'ի քաղաքէն, հարին չարաչար և խորտակեցին զբանակս նոցա, և հալածեալ վանեցին 'ի սահմանաց իւրեանց ։

64. Այսպէս է հաւատարիմ միաբանութիւն, և գովելի ջանք ազատութեան հայրենեաց. զի թէ և անձինք սակաւ իցեն, այլ միաբանութիւնն պաշտպան լինի և տանի զյաղթութիւն 'ի ձեռն աստուածային նախախնամութեան ։ Սակայն ուր չիք միաբանութիւն և հաւատարիմ ծառայութիւն, տեղի տայ աստուածայ-

ին յաջողութիւնն, և լքեալ խորտակի սիրտ քաջաց. որպէս դիպաւ հայրենասէր Անեցւոց։ Որք թէպէտ անպարտելի քաջութեամբ հալածեցին զթշնամիս, բայց իբրև տեսին, թէ իշխանք և նախարարք իւրեանց մատնիչ լինին թագաւորութեան, և թագաւորն գերեալ կայ յանգստանալի օտարութեան, յայնժամ ապա ինքեանք ևս լքեալ լուծեալ՝ ողբս 'ի բերան երթային գունդ գունդ 'ի վերայ գերեզմանաց Բագրատունի թագաւորաց, և անկեալ գոչէին, լային, և ցաւագին անիծանէին զնոսա, որք պատճառ եղեն այնչափ աղէտից, և մեծի կործանման ազգին, և թագաւորութեան Բագրատունեաց։

Ապա այնուհետև ուժաթափ եղեալ՝ գիտացին թէ հեռացեալ է 'ի նոցանէ ոգի միաբանութեան զոյգ ընդ աստուածային յաջողութեան. ուստի հոգային զի գէթ մի կործանեսցի մեծագործ մայրաքաղաքն Անի դառն պատերազմաւ. գրեցին առ Ասիտ յոյն իշխան, որ եկն էառ խաղաղութեամբ զԱնի, սէր բազում ցուցեալ Հայոց։

65. Սակայն աստուածային բարկութիւնն անդէն և անդ եհաս. որովհետև մարդիկ չկամեցան վրէժխնդիր լինել անիրաւաց և պաշտպանել զհայրենիս, տարերք եղեն վրէժխնդիր։ Ուստի 'ի նոյն աւուրս այնպիսի ահագին երկրաշարժութիւն եղև անդ, մինչև անկան կործանեցան մեծաշէն պալատք և եկեղեցիք. երկիրն եբաց զբերան և եկուլ զբազում մարդիկ, որք 'ի ներքուստ անտի ողորմելի աղաղակէին. իսկ այլք սասանեալ կային։ Արդ՝ Մոնոմախոս կայսր և տէրութիւն Յունաց հանգեան 'ի հոգալ. և խրախութեամբ զուարճանային 'ի վերայ անիրաւ յափշտակութեանն։ Իւ այնուհետև տիրեցին բոլոր կողմանցն այնոցիկ, եւս և ազգոյն Հայաստանեայց. բայց և այնպէս թողին զեղկելի ազգն Հայոց անտէր և անօգնական։ Որոց պարտ էր զմտաւ ածել, թէ անիրաւ վաստակ գիտէ կորուսանել և զարդար վաստակս, և անիրաւ ուրախութիւն փութով փոխի 'ի տրտմութիւն. որպէս պատահեցաւ նոցա։ Քանզի յետ ոչ բազմաց Յոյնք կորուսին ոչ միայն զոր առին 'ի Հայոց, այլև զիւրեանց իսկ սեպհական քաղաքս։

66. Իբր զի՝ կայսրն զկնի տիրելոյ Անւոյ առաքեաց

զօրս 'ի վերայ Արտաւազդայ Պարսիկ իշխանին Պոնտայ, որպէս զի սատակեսցէ զնա դարձուցանել առ Յոյնս որչափ ինչ տեղիս առեալ էր 'ի Հայոց, իբր մասն այնր տէրութեան։ Բայց Յոյնք այնպէս չարաչար խորտակեցան յերեսաց Պարսից, զի սակաւ ոմանք զերծան։ Ապա Նա անդէն առաքեաց զօրս, նոքա ևս խորտակեցան 'ի Պարսից։ Մինչ զի Աղուանք միացեալք ընդ Պարսից դիմեցին 'ի սահմանս Յունաց, և անհնարին վիշտս հասուցին քրիստոնէից. քանդեցին զեկեղեցիս և զերևելի պալատս. ուր և բազումք նահատակեցան. յորոց մի էր և ծերունին Վահրամ Պալհաւունի. որ ունենամեայ գոլով մեծաւ քաջութեամբ կատարեցաւ. զորմէ այսպէս գրէ Արիստակէս Վարդապետ * Վահրամ այր հզօր և անուանի. և բարեպաշ-
„ տութեամբ յոյժ վեհ, որպէս թէ ոչ ոք հաւասար
„ նմա, Պալհաւ... մեծ տուն հաստոյ Հայոց»։

67. Յորչափ կենդանի էր մեծն Վահրամ, Յոյնք ակնածեալ 'ի նմանէ՝ ոչ այնչափ հարստահարէին ըզՀայս. այլ զկնի մահուան նորա սկսան անարգանօք նեղել զնոսա։ Եւ որպէս Ջանահնար եղեն բառնալ յԱնւոյ զԹագաւորութիւնն, նոյնպէս Ջանային բառնալ զկաթուղիկոսութիւնն Հայոց. ուստի զկնի Սարգսայ իբրև նստաւ Կամենաս վերակացու յԱնի՝ սկսաւ նախատանօք վարիլ ընդ Պետրոսի կաթուղիկոսին, և ապա գրեաց ամբաստանութիւն զնմանէ առ կայսրն, որպէս թէ կամի ապստամբեցուցանել զՀայս։ Յետոյ հրամայեաց նմա երթալ նստիլ 'ի Կարին, անտի ևս վարեալ եդին 'ի բերդն Խաղտոյ իբրև բանտարգեալ։ Բայց կայսրն ետ տանիլ զնա 'ի Կոստանդինուպօլիս, և պատուիրեաց նստիլ պատուով յառանձնութեան. զի ըստ Լաստիվերտցւոյն * Կասկածէր, թէ գուցէ
„ երթեալ ապստամբեցուցանէ զԱնի»։ Ապա միջնորդութեամբ Գագիկ արքային հրաման ետ նմա նըստիլ 'ի Սեբաստիա մինչև մահու անդ։

68. Ընդութ կայսրն հազիւ հրաման ետ Գագկայ ելանել 'ի Կոստանդինուպօլսոյ և նստիլ 'ի Պիզա քաղաք, զոր ետուն նմա փոխանակ Անւոյ։ Անդ կառոյց վանս և յաճախ երթայր և լայր 'ի վերայ ազգին Հայոց, որոյ եղեն և երկու որդիք Յովհաննէս և Դաւիթ։ Ահա այսչափ է ժանտ զօրութիւն անմիաբանութեան,

որ աներկայթ կայլէ զծաւուծանման քաջս, և խաղաղալիկ առնէ անպիտան ազգաց ըստ նմանութեան Սամփսոնի . որոց ամրակուռ ոսկերք մաշեալք յընդունայնութեան՝ անկան 'ի քաղաքս Յունաց :

ՄԱՀ ԳԱԳԻԿ ԹԱԳԱՒՈՐԻՆ

69 . Մոնոմախոս կայսր և ամենայն իշխանք նորա յետ զրկելոյ զՀայս յամենայն իշխանութենէ՝ սկսան այնուհետև աւելի իմն չարանալ ընդդէմ Հայոց . մինչև ջանային ջնջել և զամենայն իշխանս նոցա : Ուր ուրեք տեսանէին զերևելի Հայ իշխան, զհետ պնդէին 'ի ձեռս բերել խաբէական երդմամբք և մեծամեծ խոստմամբք . զորս և զրաւէին 'ի կենաց : Տեսեալ Գագկայ զայսպիսի աղէտս՝ ջանայր թողուլ զՅունաստան և անցանել առ Պարսիկս, որպէս զի կարասցէ տիրել Հայաստանու : Բայց իշխանք Հայոց կուրացեալք նախանձու՝ ամենևին ոչ կամեցան ձեռնտու լինել նմա (84) :

70 . Մարկոս Մետրապօլիտ Կեսարիոյ այնչափ ատելութիւն ունէր ընդդէմ Հայոց, մինչև զիւր մեծ շուն անուանէր Արմէն, որում չհանդուրժեալ Գագկայ՝ չոգաւ 'ի Կեսարիա առ Մետրապօլիտն հանդերձ ծառայիւք, որ և պատուեալ զնոսա առ երեսս ընկալաւ . իբրև խրախացան 'ի խնճոյս, Գագիկ ետ բերել զշունն և եհարց թէ սա Արմէն կոչի . ասէ Մարկոս յանդգնութեամբ, թէ դեռ տղայ է վասն այնորիկ Արմէն կոչեմք : Յայնժամ բարկացեալ արքային հրամայեաց ծառայից իւրոց դնել զշունն և զՄարկոս 'ի պարկի, որ խեղդամահ եղև 'ի գազանէ անտի : Զայն լուեալ Յունաց՝ այնչափ կատաղեցան, մինչև յամենայն վայրս եդին դարանակալս սպանանել զԳագիկ :

71 . Իսկ նա թէպէտ զգուշութեամբ շրջէր 'ի մէջ Յունաց, սակայն յաւուր միում եթող զարս իւր յայլ ուրեք, և ինքն երիւք ևեթ չոգաւ մերձ առ բերդն Կազիստրայի : Տեարք բերդին երեք եղբարք որդիք Մանտալէի իբրև գիտացին թէ Գագիկ անդ է, եդին 50 արս 'ի դարանի . և ինքեանք յառաջ մատուցեալք երկիր պագին արքային, և խօսելով ընդ նմա՝ բերին

ուր էին Թագուցեալ դարանակալք, որք յանկարծ ելեալ կալան զԳագիկ, և կախեալ եդին ՚ի բերդի անդ։ Մնացեալ հայ իշխանք ժողովեցան անդ և պատերազմեցան, զի կարասցեն առնուլ զԹագաւորն. սակայն անօրէնք սպանին զնա չարաչար տանջանօք, և կախեցին զմարմին նորա ընդ պարիսպն. և այսպէս Թաղեցին արտաքոյ բերդին. զոր ապա անեցի Հայ մի գողացեալ անտի Թաղեաց ՚ի Պիզա։

72. Նա այսպէս Թշուառաբար վերջացաւ Թագաւորութիւն Բագրատունեաց յամի 1079. և յայնժամ Գագիկ էր 55 ամաց, որ զերիս ամս եւեթ Թագաւորեալ էր, և 35 ամս Թափառական կայր ՚ի Յունաստան։ Արդ՝ մեր դարձ արարեալ ՚ի Հայաստան տեսցուք թէ յինչ վիճակ հասեալ կան անտէր և անգլուխ Հայք. քանզի Յոյնք կարծէին թէ բառնալով զգլուխ Հայոց՝ ինքեանք զօրաւոր լինին, և ոչ գիտէին թէ այն անպարտելի քաջք էին եւեթ պատուարան ընդդէմ Թշնամեաց։ Իբրև նոքա տեղի ետուն, այլազգիք զօրացան, և յամենայն կողմանց դիմեալ ՚ի Հայաստան՝ առնակոխ արարին, և հալածեալ զՅոյնս գերի վարեցին զբնակիչս. յորոց վերայ այսպէս ողբայ Արիստակէս վարդապետ։

* Այսպէս մատնեալ եղաք ՚ի ձեռս արանց չարաց
„ և անօրինաց, և ոչ եղև մեզ այցելութիւն ՚ի Տեառնէ...
„ Աշխարհ ամենայն ՚ի խաղաղութեան բնակէ, և մեք՝
„ գերիք և կալանաւորք, սրախողխողք, տնաւերք և
„ յինչից կողոպտեալք... Մարգարէքն քանի սպառ-
„ նական բանս մարգարէանային, որ յետ ժամանակաց
„ լինելոց էր. ժողովուրդն ընդ այն դժկամակ լինէին։
„ Իսկ ես ոչ թէ սպառնալեաց եմ քարոզ, այլ դէ-
„ պեալ և զ՚ի գլուխ ելեալ իրս պատմեմ. որպէս զի
„ ամենեցուն՝ որք լսիցեն, շարժեսցին արտասուս, թէ
„ որքան դառն ժամանակի հանդիպեցաք»։

73. Յամի Տեառն 1046. երբ տիրեցին Յոյնք Անւոյ, գտին զայն լի ամենայն ճոխութեամբ և բարեշինութեամբ. որք թէպէտ ոչ կործանեցին զքաղաքն և ոչ քանդեցին զշինութիւնս, բայց հեռացուցեալ անտի զօրաւոր իշխանս Հայոց՝ տկարացուցին, և 'ի տեղի նոցա Յոյնք մտին. որպէս զի ապահով լիցին։ Այլ զայն ոչ զմտաւ ածին, թէ 'ի պակասել զօրաւորաց՝ անզօր մնայ քաղաքն և զօրանան թշնամիք. որով և անիրաւութիւն իւրեանց պատուհասի յԱրարչէն. որպէս և եղեն իսկ։

74. Ռանգի յամի Տեառն 1064. Թագաւորն Պարսից Ալփասլան, որ առ նոսա գրի Ալպարսլան, այսինքն Հզօր առիւծ, բազմութեամբ զօրաց դիմեալ յաշխարհ Արարատեան՝ ներկեաց զերկիրն արեամբ բնակչաց. և նովին բռնութեամբ եկն եհաս 'ի Շիրակ գաւառ, և եդ զբանակն հանդէպ Անւոյ. որոյ իշխան 'ի կողմանէ Յունաց էր Բագրատ դուքս հայ ազգաւ, և երկրորդ նորա էր Գրիգոր վրացի։ Ալփասլան տեսեալ զահեղ բարձրութիւն քաղաքին և զարմանալի ամուր շինուածս և բուրգս, զոր կանգնեալ էր Սմբատ տիեզերակալ, շուարեցաւ 'ի միտս. զոր և պաշարեալ աւուրս ինչ՝ ետես թէ չիք հնար բռնութեամբ և պատերազմաւ առնուլ, յառաջ մատոյց զմնիչս զմնել, թէ ընդ որ կողմն կարեն արդեօք պատերազմիլ։ Տեսեալ նոցա թէ յամենայն կողմանց անառիկ էր, և միայն 'ի միջէ կողմանէ կարէին մարտնչիլ, և այն յոյժ դժուարաւ, հրամայեաց, զի ընդ այն կողմն ուղղեսցեն զպարսպամարտ գործին բաբան, որ ահագին էր մեծաւք։ Իսկ քաղաքացիք իբրև տեսին զայնչափ անթիւ բազմութիւն թշնամեաց շուրջ զքաղաքաւն՝ զահի հարան. զի չէր նոցա տեսեալ զայնպիսի ինչ, և ոչ իսկ ունէին պատրաստութիւն պատերազմի. և չէին 'ի միջի քաջ պատերազմականք։ Թէպէտ քաղաքն էր անառիկ. բայց զինչ օգուտ անտի երբ չիք զօրութիւն։ Նմին իրի յերկիւղ մահու ըմբռնեցան Անեցիք. մանաւանդ երբ տեսին զայն մեծ մեքենայ կանգնեալ հանդէպ քաղաքին։ Առաւել ևս զարհուրեցան, երբ սկսան Պար-

տիկք այնու բաժանեալ ձգել զմեծամեծ քարինս 'ի պարիսպն քաղաքին . և առ ահին առ Աստուած աղաղակէին : Իսկ Բագրատ դուքս ժողովեալ զզօրաւորս քաղաքին՝ պատերազմէր քաջութեամբ 'ի ներքուստ անտի սատակելով զբազումս 'ի թշնամեաց : Սակայն բաբանն յաճախ ձգեալ զքարինս վտանգեաց զայն կողմն պարսպին . և Բագրատ արձանացեալ անդ պատերազմէր , և դիմադրէր քաջութեանց նոցա :

75 . Ընդ առաւօտն յառաջ քան զծագումն արեւու դարձեալ սկսան Պարսիկք հարկանել բաբանաւ զնոյն կողմն , մինչև անկաւ մասն պարսպին : Պարսիկք աղաղակէին առ հասարակ ցնծութեամբ . զի կարծէին դիւրութեամբ մուտ ունել 'ի քաղաք անդր : Իսկ քաղաքացիք երկնչէին , մի գուցէ և այլ կողմանք պարսպին նոյն օրինակ անկցին : Յայնժամ Ալփասլան սրտապնդեաց զզօրս իւր . ամենեքեան անդ դիմեցին , և ջանային 'ի ներքս անկանել՝ բայց պատառուածն գոլով նեղ և դժուարակոխ՝ անկարանային : Իսկ քաղաքացիք տեսեալ՝ թէ կարեն վանել զնոսա , ամենայն զօրութեամբ մարտ եդեալ՝ զբազումս դիաթաւալ առնէին : Ալփասլան գիտաց , թէ անհնարին է առնուլ զայն քաղաք ոչ 'ի պատառեալ կողմանէ , և ոչ յայլուստ մարթ է պատերազմել բաբանաւ : Ուստի հրամայեաց զօրաց իւրոց դադարել 'ի պատերազմելոյ և դառնալ յետս : Այլ որպէս Պարսիկք , նոյնպէս և տկարամիտ իշխանք Անւոյ յուսահատեալ երկնչէին յառաջ մղել զպատերազմն , և անարի սրտիւ պաշարեալ կային , կարծելով , թէ պարսիկք անդրէն ունին պատերազմիլ :

76 . Ուստի խորհեցան կամ մնանել 'ի ներքնաբերդն ամրանալ , կամ փախչիլ , և կամ տալ խաղաղութեամբ զքաղաքն 'ի ձեռս Պարսից . որոց տեսեալ զանհեղ զինուածս քաղաքին՝ կարծէին թէ գոյ անդ հոգի հայկազուն քաջաց , և ազգասէր որդիք նախնեաց , որք ելեալ արտաքս 'ի քաղաքէն կոտորեն զնոսա : Այլ ոչ գիտէին թէ չէր մնացեալ այնպիսի ոք . այլ քանի մի անզօր Յոյնք , և յունացեալք ոմանք . որք չէին կարող զայն անառիկ բերդաքաղաք պաշտպանել , որ ինքնին պաշտպանեալ էր մեծագործութեամբ մեծին Սմբատայ : Ով դու քաջ և ամուր քաղաքդ քաջ քա-

ղաքացի և քաջ պատերազմօղ խնդրէ . տուանկ է իմաստնոյ, Թեմեսոյք 'ի գիրկս կարօտեաց խնդրեն 'ի գըրկացն զօրութիւն :

Բայց զարմանալին այն է, զի Յոյնք այնչափ ջանահնար եղեն առնուլ զԱնի, ոչ յաստուածային արդար դատաստանացն երկուցեալ, և ոչ դառն գերութեամբ քրիստոնէից 'ի գութ շարժեալ : Իսկ այժմ այնպիսի դիւրութեամբ որոշեցին տալ զայն 'ի ձեռս Թշնամեաց, որք առդէն սկսեալ էին դառնալ հետս և փախչիլ : Այսպէս անիրաւ վաստակն փութով կորնչի . և անիրաւ շահօղն պարտական մնայ աստուածային արդարութեան յաւիտեան :

77 . Արդ՝ այն տկարամիտ իշխանք Անւոյ այնու վատ խորհրդով մտին 'ի ներքնաքերդն ամրացեալ հանդերձ զօրօք : Իսկ եղկելի քաղաքացիք, որք զայնպիսի անարի պատերազմօղս չէին տեսեալ, իբրև գիտացին զփախուստ իշխանաց 'ի ներքնաքերդն՝ խռովեալ առհասարակ աղաղակէին : Ապա իբրև տեսին, Թէ պարսիկք հեռացան 'ի քաղաքէ անտի, ժամանակ է ասեն փախչելոյ . և այսպէս սկսան 'ի միւս կողմանէ փախչել . և մինչև յիսուն հազար անձինք ելեալ արտաքս ցրուեցան : Իբրև լուան մնացորդք զօրաց Պարսից ըղչփոթ աղաղակի Անեցւոց և զփախուստն՝ զարմացան : Ապա ոմն 'ի նոցանէ մերձեցեալ 'ի քաղաք անդր և իմացեալ եհաս և պատմեաց այլոց . և ոմանք առաջարեալ ծանուցին Ալփասլանին . և այլք 'ի ներքս մտեալք ընդ պատառուածն, և յափշտակեալ զմանկիկ մի 'ի գրկաց մօրն տարեալ ցուցին Ալփասլանին ասելով՝ Թէ քաղաքն մատնեցաւ 'ի ձեռս մեր :

78 . Ալփասլան 'ի սկզբան անդ ոչ հաւատայ . այլ իբրև ետես զողջոյն հաւատաց և ասէ, Թէ * Աստուածն նոցա մատնեաց զնոսա այսօր և զմեծ քաղաքն Անի 'ի ձեռս մեր || : Ապա փութացեալ դարձոյց զզօրս իւր, որք մտին անաշխատ յԱնի նման ահագին հեղեղաց, և սուր 'ի ձեռին սկսան չարաչար կոտորել զքաղաքացիս անհնարին կատաղութեամբք՝ ըստ որում հարուածեալ էին 'ի նոցանէ ինքեանք . և փողոցք քաղաքին լի եղեն արեամբ, և ներկեցաւ ջուր Ախուրեան գետոյ : Ապա այնուհետև սկսան Պարսիկք խորտակել զդրունս մեծամեծ պալատից, և մտեալ 'ի ներքս յափշտակէին

զամենայն ինչս. զազգիկոնս և զմանկունս գերէին, և զայլս կոտորէին անխնայ. իսկ զիշխանս չարաչար տանջանօք չարչարէին և կտրատէին զանդամս, զի ցուցցեն զտեղի գանձուց իւրեանց: Այնպէս զի՛ ամենայն անկիւնք քաղաքին լցան դիակամբք:

79. Ապա սկսան կոտորել և զդրունս եկեղեցեաց, պղծեցին զսուրբ տաճարս, և զքահանայս զոմանս 'ի հուր այրէին, և զայլս անտանելի տանջանօք չարչարէին, զի ցուցցեն զտեղիս գանձուց եկեղեցեաց. զոմանս մորթեզերծ առնէին, և զայլս չարաչար խեղդէին: Մերկացուցեալ կողոպտեցին զամենայն եկեղեցիս և զամենայն պալատս: Ոմն 'ի Պարսից ելեալ ընդ ծածուկ ճանապարհ մեծի եկեղեցւոյն եհաս 'ի մեծ կաթուղիկէ գմբեթին, և բազում աշխատանօք կորզեաց և էարկ 'ի վայր զմեծագին մեծ խաչն արծաթի, որ եդեալ էր 'ի գագաթն. և անտի մտեալ 'ի գմբէթն, հատեալ էարկ 'ի վայր զմեծ ջահն ապակեղէն, զոր Սմբատ արքայ տուեալ էր բերել 'ի շինելն զեկեղեցին. ընդ որ տրտմեցաւ և Ալփասլան:

Եւ այսպէս ոչ միայն անդուլ կոտորէին զբնակիչս Անւոյ, այլև չարաչար քանդէին զգեղեցիկ գեղեցիկ շինուածս. մինչև երկինք ևս սկսաւ սուգ առնուլ, և յանկարծ մթագնեալ սարսափելի որոտմամբ այնպէս տարափեաց, մինչև լի եղև քաղաքն ջրով, և հեղեղեալ տարաւ զմարմինս անկելոց 'ի գետ անդր: Այս դիպուած թէպէտ դադարեցոյց զՊարսիկս 'ի կործանելոյ զքաղաքն, սակայն 'ի հետևեալ աւուրս անդրէն սկսան քանդել, և յամենայն վայրս մտեալ խուզել և յափշտակել զամենայն ինչս:

80. Այնուհետև սկսան պատերազմիլ ընդ ներքնաբերդին, ուր քաղաքապետ իշխանք ամրացեալ էին անարի ոգւով, և յանձնեալ զայն պահապանաց, որք ընդ ծածուկ ճանապարհ փախուցեալ էին. նմին իրի դիւրաւ մտին անդ Պարսիկք, և կալեալ զքաղաքապետս կապեցին, և զամենայն ինչս յափշտակեցին: Ապա հրամայեաց Ալփասլան, զի զմնացեալ հայ իշխանս ընդ այլ բազում գերեաց վարեսցեն 'ի Պարսկաստան, և զոմանս թողցեն անդ առ 'ի շինել զքաղաքն: Նաև յայլևայլ կողմանց ետ բերել զբնակիչս կործանեալ քաղաքին, և եդ զոմն Պարսիկ վերակա-

ցաւ 'ի վերայ նոցա հանդերձ զօրօք, և ինքն մեկնեցաւ անտի ։ Թէպէտ յետ ոչ բազմաց անդէն լցաւ Անի բազմութեամբ բնակչաց, բայց զայն առաջին մեծու-թիւն և զփառս ոչ երբէք եգիտ. մանաւանդ թէ հետ-զհետէ յաւելլի իւրն թշուառ վիճակ անկաւ. մինչև բնակչաց լքեալ սկսան գունդ գունդ փախչիլ յայլ և այլ կողմանս աշխարհի ։

81. Նոյն 'ի սմին ժամանակի յամի տեառն 1062. սկսան Անեցիք թափառականն գնալ դէպ 'ի Լեհաս-տան. որպէս ունիմք պատմել (162)։ Ուր Յովհաննէս յոյն պատմիչ ցաւելով 'ի վերայ Անւոյ ասէ. * Նա
» յայս վիճակ թշուառութեան հասին սահմանք (հայ-
» ոց), որք էին ընդ տէրութեամբ յունաց յառաջ, և
» յամենայն արևելս ։ Այնուհետև Յոյնք քաջ ծա-նեան զքաջութիւն և զխոհեմութիւն հայ թագաւո-րաց, որք այնպիսի գազան թշնամեաց յաղթել գիտէ-ին ։ Իմացան ևս թէ քանի դժուարին է արձանանալ 'ի բերան թշնամեաց և վարել զթագաւորութիւն ։ Բայց զինչ օգուտ, կորեաւ յափշտակեալն, և 'ի կո-րուստ մատնեցաւ ազգ Հայոց յետին թշուառութեան ։ Փոխանակ զի ոչ գիտացին զյարգ իմաստուն և քաջ թագաւորին. մատնեաց զնոսա Աստուած 'ի ձեռս ան-արի իշխանաց, որք յիմարութեամբ փախուցեալ 'ի ներքնաբերդն պատճառ եղեն կործանման քաղաքին, և այնչափ քրիստոնէից Հայոց և Յունաց ։ Որոյն վասն դարձեալ ողբայ Արիստակէս վարդապետ ։

82. * Դառն է ինձ պատմութիւնս, և բազում ող-
» բոց արժանի. աշխարհ՝ որ երբեմն ժամանակաւ իբ-
» րև զդրախտ տնկախիտ առաջի իւր կանաչագեղ տե-
» րևալից պտղաբեր գեղեցկաշուք և երջանիկ անցա-
» ւորացն ցուցանիւր ։ Քանզի իշխանք նստէին յիշ-
» խանական գահոյս զուարթահայեաց դիմօք, և զօ-
» րացն զգարնանաբեր ծաղկանոցաց բերեալ զնմա-
» նութիւն վառ'իվառ գունովք առաջի կացեալ, ու-
» րախական երգոց և բանից միայն լինէին հանդէսք...
» Արդ այժմ թագաւորն անկեալ 'ի պատուոյ իբրև
» զգերի կալանաւորն նստի 'ի հեռաբնակ տեղիս ։ Այս-
» պէս և հայրապետական աթոռն ամայացեալ 'ի բնա-
» կողէն, ցուցանէ տխուր դիմօք իբրև զկին նորահարսն
» մնացեալ յայրիութեան ։ Հեծելազօրն անտերունչ

„ շրջեալ . ոմն 'ի սարս , ոմն 'ի յայրս , և ոմն 'ի վիհս ։
„ Սեպուհ զունդն ազատաց ելեալ 'ի հայրենեաց , ան-
„ կեալ 'ի ճոխութենէ մուրչեն ուր և են . . . Այժմ
„ ողբս փոխեցաւ մեզ ամենայն , և ուրախութեան պաշտա-
„ մուճանն այն յարքնազգեստ խորգ փոխադրեցաւ ։
„ Ո՛ր լսելիք տանիցեն զթշուառութեանս մերոյ զպատ-
„ մութիւն ։ Աւերեցան գաւառք , և գնացին յաւար
„ տանն Պարսից և Յունաց . եղեն շինանիստ աւանք
„ բնակութիւն գազանաց , և անդաստանք նոցա յա-
„ րօտս երէոց ։ Տունք ցանկալիք բարձրաձեղունք և
„ մեծամեծք՝ եղեն բնակութիւնք համբարուաց և ուշ-
„ կապարկաց ... Մտին հեթանոսք 'ի տաճարն սուրբ ,
„ և յաւարի տարան զանգատանս նորա ... և համբա-
„ ձակեցան յանմատանելիսն , և պղծեցին պիղծ զարշա-
„ պարօք զսրբութիւնս նորա . . . հեղին զարիւնս ծա-
„ ռայիցն այ , որպէս ջուր . . . յամենայն տեղիս ողբք
„ և հառաչանք ։ Իսկ մեք չարագանեալք և կործա-
„ նեալք և տեսարան աշխարհի եղեալ , և չար պատ-
„ մութիւն թողեալ զկնի մեր ազգաց յազգս ‖ ։

ԵՐՐՈՐԴ ԱՌՈՒՄՆ ԱՆԻՈՅ

83. Յամի Տեառն 1072. այլազգի իշխանն Փատ-
լուն Ամիրայ լուեալ զշինութիւն Անւոյ՝ փափաքէր
առնուլ և վերստին ծաղկեցուցանել ։ Ուստի ետ զանձ
բազում Ալփասլանայ Պարսից արքային և գնեաց զայն.
և եդ վերակացու անդ զթոռն իւր Մանուչէ մանուկ ։
Սա իբրև եհաս յարբունս՝ նորոգեաց զքանդեալ տե-
ղիս և զպարիսպս , և սկսաւ այնուհետև անդ հաւա-
քել զքրիստոնեայ Հայս ցրուեալս աստ և անդ ։ Որք
իբրև ժողովեցան անդ , սկսան քաղաքական օգնով շա-
հել զկիրեարս , և խաղաղանալ փոքր ինչ ընդ ձեռամբ
այսր իշխանի ։ Այս առաւել Անւոյ բարի եղև Անե-
ցւոց . զի արդարակորով իշխանն թէ և այլազգի , քան
զՅոյնս առաւել գութ էարկ 'ի վերայ Հայոց կողմա-
նելոց 'ի Պարսից , և փոյթ մեծ ունէր շինել զքաղաքն ։
84. Արդ՝ 'ի սմին ժամանակի սպանաւ Ալփասլան ,
և որդի նորա Մելիք շահ նստաւ թագաւոր Պարսից ,
որ գոլով այր խաղաղասէր և քաղցրաբարոյ՝ ողորմ-

ցաւ Հայոց և 'ի խաղաղութեան եթող զՀայաստան : Յայնժամ դեռ կենդանի էր Գագիկ թագաւոր, որ լուեալ զայս ամենայն յաջողութիւնս՝ վառեցաւ սիրով նորա գնալ առ Մելիք շահ, և օգնութեամբ նորա ազատել զազգն 'ի գերութենէ : Որոյ վասն խորհուրդ կալաւ ընդ ոմանց իշխանաց Հայոց, որք ոչ միայն չեղեն նմա ձեռնտու, այլ և յորդոր մատուցին յետս կալ յայսպիսի խորհրդոց. զի մի յայտնեսցի Յունաց և ոտնակոխս արասցեն զազգն Հայոց. ասելով թէ այնուհետև ոչ յաշխարհին Հայոց կարեմք անդորրանալ և ոչ յաշխարհին Յունաց : Եւ այսպիսի վատ խորհրդով նոքա խափանեցին զարքայն 'ի փառաւոր գործոց անտի սակս անձնասիրութեան, որք միայն զդիւրութիւն անձին խնդրէին. ապա թէ ոչ՝ անտարակոյս կանգնէին զթագաւորութիւնն քաջութեամբ և խոհեմութեամբ Գագիկ արքային : Որոյ տեսեալ զայնպիսի ցրտութիւն իշխանաց՝ բեկաւ լքաւ սիրտ նորա և մնաց 'ի Յունաստան երերեալ տատանեալ, մինչև մեռաւ 'ի ձեռն վատ արանց. մեռան և երկու որդիք նորա, և վերջ եղև բագրատունի թագաւորաց (71) :

85. Արդ՝ յամի Տեառն 1080. յաւուրս Մանուչէ իշխանին քաջն Ռուբէն ազգական Գագկայ բռնացաւ 'ի Կիլիկիա. և քաջութեամբ նստաւ անդ ինքնագլուխ իշխան. յորմէ սկիզբն եղև թագաւորութեանն Ռուբինեանց 'ի Կիլիկիա : Անդ էր և Գրիգոր վկայասէրն որդի մեծի իշխանին Գրիգորի Մագիստրոսի, զոր 'ի հետևեալ ամի եդին կաթուղիկոս : Բայց արևելեան Հայք զրկեալ համարելով զինքեանս գրեցին առ նա թուղթ. զի կամ ինքն երթեալ հաստատեսցէ զաթոռ իւր յԱնի, և կամ հրաման տայցէ, զի քեռորդի իւր Բարսեղ եպիսկոպոս հաստատեսցի կաթուղիկոս յաթոռն Անւոյ : Ընդ որ հաճեցաւ վկայասէրն, և ապա յամի Տեառն 1082. հրամանաւ Մանուչէ իշխանին ժողովեցան յԱնի բազում իշխանք և Տէր Ստեփաննոս Կաթուղիկոս Աղուանից եօծ զԲարսեղ կաթուղիկոս՝ նորոգելով զաթոռն կործանեալ :

86. Յամի Տեառն 1086. այնչափ զօրացաւ Մելիք շահ, մինչ զի էառ 'ի ձեռաց Յունաց զամենայն տեղիս Հայաստանեաց, և եհաս մինչև 'ի ծովն Միջերկրական : Ուստի Մանուչէ իշխան ստիպեցաւ տալ նմա

զԱնի, և նստաւ անդրէն իշխան 'ի կողմանէ նորա: Ի նմին ժամանակի Բարսեղ կաթողիկոս չոգաւ 'ի Պարսկաստան, և խնդրեաց 'ի Մելիքշահէ, զի խափանեսցէ զբռնութիւն և զանիրաւութիւն Պարսից, զոր առնէին Հայոց: Շահն կատարեաց զամենայն խնդրուածս նորա. և հրաման ետ, զի յառաջոյ նորա խաչ տարցեն վասն պատուոյ, և բազում մեծարանօք առաքեաց զնա յԱնի. անդ էր և եղբայր նորա քաջն Գրիգոր, որ ձեռնտու եղեալ Մանուչէի յանդորրու պահէին զՀայաստան:

87. Յամի Տեառն 1094. Սկիւթացի Թաթարք թուով 7000. ելին 'ի վերայ Անւոյ, և բազմաջան պատերազմաւ կամէին առնուլ. բայց Գրիգոր իշխան հանդերձ քաջ արամբք ել ընդդէմ նոցա, ցիրուցան արար, և սատակեաց զգլխաւոր նոցա այր զօրաւոր: Ի նմին ժամանակի, յորժամ այլազգիք վնաս մեծ հասուցին 'ի կողմանս Սանահնայ, երևելի ոմն 'ի Հայոց առեալ անտի զխաչն Նունեայ եբեր յԱնի, որ ձեռամբ Շուշանայ դստեր մեծին Վարդանայ փոխադրեալ էր 'ի Վրաստանէ 'ի Հայաստան: Նորին աղագաւ մեծ ուրախութիւն եղև յայնժամ Անեցւոց, ուր եդին տօն խաչի 'ի յաջորդ կիւրակէն Խաչվերացին, որ այժմ խափանեալ է:

88. Իսկ յամի Տեառն 1104. իբրև Խաչակիր Լատինացիք եկեալք յարևմտից տիրեցին Երուսաղեմի և Եդեսիոյ՝ Բարսեղ կաթողիկոս չոգաւ և նստաւ յԵդեսիա: Դուքս քաղաքին ետ նմա բազում կալուածս և գիւղս՝ խնամելով զՀայս մարդասիրութեամբ: Բայց կաթողիկոսն երբեմն երբեմն երթայր յԱնի և խնամէր զհօտ իւր. ուստի յամենայն վայրս անպակաս էր շինութիւն և բարեկարգութիւն: Վասն զի երբ հովիւն է արթուն, ոչխարք անվնաս մնան. իսկ երբ հովիւն անկեալ կայ ընդ քնով, հօտն է 'ի վտանգի:

89. Յետ մահուան Մանուչէ Ամիրային Աբլսուար որդի նորին նստաւ 'ի տեղի նորա, այր տկար և անմարի. նմին իրի անդէն զօրացան Թաթարք և բազում վիշտս հասուցին Անեցւոց. մինչ զի բոլոր Շիրակ գաւառ աւերակ եղև: Իսկ Աբլսուար փոխանակ զօրանալոյ և վանելոյ զԹշնամիս՝ որոշեաց 'ի միտս վաճառել զԱնի ումեմն այլազգ Ամիրայի: Զայն իբրև լուան Հայք, շփոթեցան յոյժ. և զայլ հնարս ոչ գտեալ, եթէ ոչ՝ իմաց արարին Դաւթի արքային Վրաց, որ անդէն և անդ հասեալ պաշարեաց զԱնի: Այլ մատնութեամբ քաղաքացւոց անաշխատ մտին անդ Վիրք յամի Տեառն 1124. յետ մնալոյ 'ի ձեռս Պարսից ամս 60: Դաւիթ արքայ չարար ինչ վնաս ումեք. այլ մանաւանդ զքաղաքն և զեկեղեցիս մաքրեաց 'ի հեթանոսական ապականութեանց, և նորոգեաց զմայր եկեղեցին, զոր մզկիթ արարեալ էին. և մեծաւ հանդիսիւ եդ օրհնել զայն հայ եպիսկոպոսաց, և եդ 'ի վերայ գմբեթին զոսկի խաչն: Ապա յանձն արարեալ զքաղաքն Աբլհեթ վրացի իշխանին, և որդւոյ նորա Իւանէին, ինքն չոգաւ 'ի Վրաստան. տարեալ ընդ իւր զԱբլսուար 'ի Տփխիս:

90. 'Ի նմին ամի մեռաւ Դաւիթ արքայ, և թագաւորեաց որդի նորա Դեմետր. որ 'ի կողմանէ մօր հայ էր: Յայնժամ բազում Հայք, որք ելեալ յԱնւոյ՝ յայլևայլ կողմանս ցրուեալ էին, իբրև լուան թէ այժմ քրիստոնեայք տիրեն անդ, դարձան և բնակեցան յԱնի: Յառաջ քան զառումն Անւոյ՝ եղբայր Շնորհալւոյն Գրիգոր կաթուղիկոս՝ տեսեալ թէ Սելևկիա հեռի է 'ի Հայաստանէ, և ազգն անմխիթար մնացեալ, կամեցաւ երթալ անդրէն հաստատել զաթոռն յԱնի. ուստի գրեաց առ Աբլսուար և խնդրեաց հրաման նստելոյ անդ: Ամիրայն բազում խնդութեամբ հաւանեցաւ. այլ 'ի տիրել Վրացւոց՝ խափանեցաւ այն գործ:

91. Արդ՝ յորժամ առաւ Անի 'ի Վրաց՝ որդի Աբլսուարին Փադլուն գնացեալ էր 'ի Խորասան, որ ընդ լսելն զառումն Անւոյ վարձեաց 'ի Պարսից բազում զօրս. և եկեալ եհաս 'ի Շիրակ գաւառ, և պա

շարեալ զԱնի՝ սկսաւ պատերազմիլ։ Թէպէտ Իւանէ քաջութեամբ պաշտպանէր, սակայն պաշարումն տեւեալ ամբողջ տարի մի՝ սկսաւ սով ՚ի քաղաքի անդ, որով և քաղաքացիքն առ սակաւ սակաւ փախչէին անտի. և անկեալ ՚ի ձեռս Պարսից չարաչար կոտորէին, այնպէս զի * Արեամբ և ոսկերօք ծածկեցաւ երկիր ||. ասէ Սամուէլ անեցի։

Իսկ Պարսիկք այնչափ սաստկացուցին զպատերազմն, մինչև համարձակեցան կատարութեամբ ՚ի վեր ընդ պարիսպն ելանել. ուր կայր կին մի քաջ Այծեմն անուն, որ քաջութեամբ պատերազմեալ ՚ի վերուստ անտի հարուածական ազար զԹշնամիս՝ քարակոծ առնելով զնոսա։ Թէպէտ արտաքուստ վիրաւորէին զնա նետիւք, բայց ոչ ինչ հոգայր, այլ հանեալ զնետս ՚ի մարմնոյ իւրմէ ձգէր առ Թշնամիս։ Նա այսպէս այնչափ վիշտս հասոյց նոցա, մինչև զարմանալ ամենեցուն, Թէ որպիսի՞ է սիրտ կնոջն։

92։ Այլ իբրև երկու կողմանք ևս ձանձրացան յերկար պաշարմանէ, Փաղլուն դեսպան առաքեաց առ Իշխանս քաղաքին՝ տալ ինքեան զքաղաքն խաղաղութեամբ, և ոչ ինչ վնաս առնէ արարից ումեք. այլ միշտ ՚ի խաղաղութեան պահեցից, որպէս հայրենի ժառանգութիւն իմ։ Իսկ քաղաքացիքն ժամադիր եղեն, մինչև ծանուցեն զայն Դեմետր արքային, որ խորհեալ գիտաց, Թէ զայն քաղաք չկարէ այնուհետև պահել ապահով ՚ի Թշնամեաց, հրաման ետ հաշտութիւն խօսել ընդ Փաղլունին այսու պայմանաւ, զի ցորչափ ինքն կենդանի է՝ իւր անուամբ մնասցէ քաղաքն. նոյնպէս և խաչն ՚ի գլուխ եկեղեցւոյն մնասցէ։

93. Փաղլուն հաւանեցաւ ընդ այն, և երդուեալ եմուտ ՚ի քաղաքն խաղաղութեամբ յամի Տն 1126. և ըստ պայմանին չարարար ամենևին վնաս, այլ միշտ ջանահնար եղև պահել զայն ՚ի խաղաղութեան. որ և քաջութեամբ զամենայն շրջակայ ազգս հնազանդեցոյց ինքեան։ Սակայն և այնպէս ազգ մեր միշտ մնաց ՚ի դառն գերութեան, և օր ըստ օրէ աղքատացեալ տնանկացաւ. ըստ որում պատմէ Սամուէլ անեցի.
* ՚Ի սորա իշխանութեան (ասէ) Թէպէտև խաղաղա-
„ նայր երկիրս ՚ի սովորական հինից, այլ յաղագս վե-
„ րոյգրեալ նեղութեանց, և վասն նախնի հարկապա-

„ հանդերձ յափշտակութեանց՝ եկն եհաս 'ի վերայ մեր
„ աղքատութիւն, և տառապանք անհնարին, որ յա-
„ ռաջագոյն ժամանակօք ունէր զաշխարհս հայոց, և
„ տատանօր յաւելաւ յաճախապէս մի ընդ միոյ մինչև
„ յաւուրս յայսոսիկ, յորում եմք .. և պակասեցան
„ յունայնութեան աւուրք մեր ‖ ։

94. Թաւլուն Ամիրայ յետ պահելոյ 'ի խաղաղու-
թեան զԱնի առ ժամանակ մի, իբրև ետես զեկեղե-
ցական հանդէսս և զարդս ծանրագինս՝ սկսաւ նախան-
ձիլ, և կամեցաւ ագահութեամբ յափշտակել զսուրբ
սպասս ։ Յայնժամ մայր եկեղեցւոյ փականաւն էր ա-
ռաքինի երէցն Գրիգոր աշակերտ Սարկաւագ վար-
դապետին, որ կամեցաւ գնալ յուխտ 'ի Լոր վերայն,
իբրև եհաս 'ի Գոմին քաղաք, տեսեալ զգազանութիւն
այլազգեաց՝ երկեաւ. բայց սովոր էր ասել *Օրհնեալ
է Քրիստոս Աստուած որդին Աստուծոյ ‖ ։ Ընկեր իւր
ծաղր արարեալ ասէ. ահա ժամանակ օրհնելոյ զՔրիս-
տոս, որ սովոր էիր ասել. եթէ կարես, ասա աստ հան-
դէպ թշնամեաց. վառեցաւ յայնժամ հոգեւէր քա-
հանայն սիրով Քրիստոսի, և սկսաւ բարձրաձայն ա-
ղաղակել. Օրհնեալ է Քրիստոս Աստուած որդին
Աստուծոյ ։ Զայն իբրև լուան այլազգիքն, կալան զնա
և չարաչար հարին. ապա իբրև լուան, եթէ յԱնւոյ
է, կապեալ շղթայիւք առաքեցին առ Թաւլուն զըր-
պարտելով, որպէս թէ հայհոյեալ իցէ զնոսա ։ Թաւ-
լուն իբրև ետես, ուրախ եղև զի եդ 'ի մտի, թէ 'ի
պատճառս նորա կարէ կողոպտել զեկեղեցիս Անւոյ ։
Ուստի եդ զքահանայն 'ի բանտ խաւարին, և ետ բե-
րել զբանալիս եկեղեցւոյն. և չարչարէր զերէցն, զի
տացէ նմա զամենայն ինչս եկեղեցւոյն. ապա թէ ոչ,
ասէր, դու ոչ երբէք ազատիս 'ի բանտէդ, և ես բռնի
առնում զայնս ։ Իսկ քահանայն առ ոչ ինչ համարեալ
զամենայն սպառնալիս նորա կայր հաստատուն. և դի-
մեալ առ փրկիչն անդադար աղօթէր ։ Եւ ահա 'ի նմին
գիշերի երևեցան յերազի Թաւլունին հրեղէն մար-
դիկ և կամէին վիրաւորել զինքն. որ այնպէս սաստիկ
խռովեցաւ, մինչև անկաւ 'ի ծանր հիւանդութիւն.
և փութանակի ետ հանել զԳրիգոր երէց 'ի բանտէն,
և աղաչեաց զնա աղօթել վասն իւր, և այնպէս հա-
զիւ եգիտ զառողջութիւն ։

95. Հանի Փառլունքն գոլով 'ի Թագաւորական զարմէ Հայոց՝ էր քրիստոնեայ. որ ոչ միայն խրատէր զԹոռն իւր խնամ ունել 'ի վերայ քրիստոնէից, այլ և զկրտսեր եղբայր Փառլունքն մինչ յայնպիսի բարի վարս քրիստոնէութեան, զի 'ի պատանեկութեան լուսաւորեալ աստուածային լուսով՝ բորբոքեցաւ սիրտ նորա սիրովն Քրիստոսի, և Թողեալ զԱնի քաղաք՝ առանձնացաւ 'ի լեառն սեպուհ, ուր ամս 15. առաքինացաւ խստամբեր ճգնութեամբ. իբրև կայր յաղօթս՝ լոյս ծագէր 'ի վերայ ճգնաւորանին. և այնպիսի սրբութեամբ ապա վախճանեցաւ 'ի Կիլիկէ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՌՈՒՄՆ ԱՆԻՈՅ

96. Յամի Տեառն 1131. եղև սաստիկ գետնաշարժութիւն յԱնի՝ այնպէս ահագին, զի կործանեաց զմեծ հոյակապ եկեղեցին Ամենափրկիչ. այլ ոչ վնասեցաւ միւս մեծագործ եկեղեցին Սուրբ Փրկիչ։ Ապա զկնի միոյ ամի մեռաւ Փատլուն յետ տիրելոյ ամս 7. պայազատեաց 'ի տեղի նորա Մահմուտ եղբայրն, ապա որդին Փատլուն։ Իսկ զկնի մահուան Դեմետր արքային Վրաց՝ Նստաւ որդի նորա Գէորգի որ զօրացեալ քաջագործութեամբ՝ դիմեաց 'ի Հայաստան, և էառ զՇիրակ գաւառ և զԱնի։ Զայն իբրև լուաւ Շահարմէն Ամիրայն զկնի 50 աւուրց եկ 'ի վերայ Անւոյ և պաշարեաց 80 հազար զօրօք։ Գէորգէ իմացեալ եհաս անդ արագապէս 7. հազար զօրօք, և մեծաւ քաջութեամբ 'ի նեղ էարկ զայլազգիս. զամենս եառ 'ի բերան սրոյ, և զայլս վարեաց 'ի գերութիւն. իսկ մնացորդք փախստականք ցրուեցան։ * Եւ այսօրինակ ակնատես մեք եղաք. քսան և երեք հազար գրով այն էր՝ զոր գերեաց. Թող զանկեալ դիակունսն՝ որ ծածկէր զանդաստանս մեր»։ Սամուէլ Անեցի։

Գէորգէ եդ վերակացու Անւոյ զիշխանն Սադուն, և ինքն դարձաւ 'ի տեղի իւր։ Այս իշխան կամեցաւ նորոգել զանկեալ պարիսպս Անւոյ. բայց Գէորգէ լուեալ զայն՝ 'ի կարծիս եղև թէ նա զապստամբութիւն խորհի, փոխեաց զնա, և եդ զոմն Հայ իշխան Սարգիս անուն երևելի յոյժ՝ իսկ Սադուն դառնա-

ցեալ ընդ այս գործ՝ չզօրաւ առ Ըլտկուզ ապարատել Պարսից, սակայն Գէորգէ խաղեալ գնա՝ յետս դարձոյց և սպան։

97. Իսկ Ըլտկուզ ունելով սատարիկ թշնամութիւն ընդ Վրացիս՝ չզօրաւ գրգռեաց զարքայն Պարսից ելանել ՚ի վերայ Անւոյ, ուստի հանդերձ բազմութեամբ ներքին և պաշարեցին զԱնի աւուրս 30. այլ ոչինչ կարացին առնել, մինչև խայտառակեալ յետս դարձան։ Յորժամ առեալ իմն կատաղեալ Պարսից՝ անդադար արշաւէին ՚ի սահմանս Վրաց ամս 4, և կողոպտէին. նախն իրի յուսահատեալ Գէորգէ ետ Պարսից զԱնի քաղաք, և հաշտեցաւ ընդ նոսա։ Ահա այսպէս այս հռչակաւոր քաղաք անկեալ ՚ի ձեռս օտարաց եղև խաղալիկ արքայից, որք յափշտակեալ զայն յիրերաց օր քան զօր եղծանէին զվայելչութիւն նորա։ Իսկ զինչ ինչ կրեցին արդեօք բնակիչք, ո՞ կարէ պատմել. որպիսի գերութիւն, և որպիսի աղքատութիւն։

98. Յամի Տեառն 1174. Գէորգէ արքային զօրացեալ ել անդրէն բազում զօրօք ՚ի վերայ Անւոյ, էառ քաջութեամբ զայն, և եդ վերակացու զսպարապետ իւր Իւանէ Օրբելեանց, իսկ զիշխանն Ամիրշահ ձերբակալ արարեալ՝ վարեաց ՚ի Վրաստան. իբրև լուաւ Ըլտկուզ տրտմեալ արշաւեաց ՚ի Շիրակ և պաշարեաց զԱնի. և ոչինչ նեղեաց, զի Իւանէ որոշեաց տալ։ Սակայն հայք զօրացեալք ընդդէմ կացին իշխանին, և վառեալ ոգւով ազգասիրութեան, այնպէս դիմադրեցին թշնամեաց, մինչև Ըլտկուզ յուսահատեալ դարձաւ յետս։

99. ՚Ի նմին ժամանակի երևելի իշխան Անւոյ Ապիրատ եղբայր Բարսեղ եպիսկոպոսին Անւոյ, զօրով նիզակակցաց և սիրելի վրաց արքային, Բարսեղ եւս զօրացաւ յոյժ. մինչ զի իբրև ինքնիշխան կաթողիկոս կառավարէր զազգն իմաստութեամբ։ Սակայն բարձեալ էր յԱնւոյ անդորրութիւն, այլ անդադար պատերազմ և կռիւ յափշտակելով զայն յիրերաց, երբեմն անցանէր առ Պարսիկս, և երբեմն առ Վրացիս։ Ո՛ի այսպէս է անտէր տուն և քաղաք. մին ՚ի միւսմէ յափշտակէ, և բնակիչք սովով և սրով սպանին և ՚ի գերութեան մաշին։ Այլ չեն ինչ զարմանք, զի ծանր անմիաբանութեան զայսպիսի պտուղ բերէ

և խայտառակ կացուցանէ զանիրաւեաց ազգս բիւրա-կերպ Թշուառութեամբք. որպէս եղեն Անեցիք Թէ՛ աշխարհականք և Թէ՛ եկեղեցականք։ Որք ցրուեալ յայլևայլ կողմանս՝ անկան 'ի բազում անկարգու-Թիւնս, Թողեալ զկանոնս հայրապետաց՝ հետևեցան կամաց իւրեանց։ Մինչ զի ոմանք 'ի քահանայից պատ-ճառ առեալ զաղքատութիւնն, սկսան առանց քա-հանայական զգեստուց պատարագել միայն փիլոնիւ, և աբեղայք վեղարիւ ևեթ։ Իսկ ժողովուրդն ոչ մտա-նէր յեկեղեցին. այլ արտաքոյ աղօԹէին. և այլ բա-զում անկարգութեամբք լցեալ էր յայնժամ Հայաս-տան. քանզի ուր չիք ոգի միաբանութեան, անդ տի-րէ ամենայն տեսակ անկարգութեան. նմին իրի բա-րւոք ասաց սուրբ Լուսաւորիչ, * Որ որոշին և մեկ-
„ նին 'ի միաբանութենէ, և զիաղ սիրոյն ոչ ունին, փա-
„ կի նոցա առագաստն յաղագս չիջանելոյ հարսանական
„ Ջահիցն ||։

ՎԵՑԵՐՈՐԴ ԱՌՈՒՄՆ ԱՆԻՈՅ

100. Յամի Տեառն 1185. իշխան ոմն այլազգի Ա-միր Խսարաչայ եկն 'ի Շիրակ գաւառ, և յափշտա-կեաց զՇուաւաքար բերդաքաղաքն. որ էր հայրենի ժառանգութիւն Բարսեղ եպիսկոպոսին Անւոյ։ Այս իշխան մեծ ատելութիւն ունէր ընդդէմ Հայոց, և բազմապատիկ վիշտս հասոյց ամենեցուն. խորտակեաց զսուրբ խաչն, որ կոչէր Գորոզոյ. որոյ վասն այնպէս չարաչար պատուհասեցաւ, մինչ զի մոլեգնեալ անկա-նէր աստ և անդ, ամենևին ոչ կարէր հանդարտել. մինչև անկաւ 'ի ձեռս Թշնամեաց իւրոց, և սատա-կեցաւ։

101. Ապա Խսարչայեան որդի Ապլակուպին տիրեաց Շուաւաքարին. ուր եդ վերակացու զանողորմ Պար-սիկս, որք այնչափ չարիս անցուցին ընդ քրիստոնեայս, մինչև զամենայն ինչս նոցա կողոպտեցին. և որ չունէր ինչ տալ, փակէին 'ի մէջ գերեզմանաց, և անդ սովա-մահ կորուսանէին։ Յայնժամ կալան զեօԹն կրօնա-ւորս և անդէն զառնակոկիծ տանջանօք կատարեցին։ Անեցի հայք իբրև լուան զայս ամենայն, միաբանեալ

ելին 'ի վերայ Զաքարէին, և առեալ քաջութեամբ
կոտորեցին զամենայն Պարսիկս : Իբրև լուաւ Խորզբ-
ւալան կամեցաւ վրէժխնդիր լինել, բայց երկեաւ յիշ-
խանացն Զաքարէէ և Իւանէէ որք օգնական եղեն
Անեցւոց : Զոր և յիշէ Սամուէլ թէ Սեռո Սարգիս.
* Զծառաքար վանքն բերդ արարեալ՝ պարսպեալ
„ հաստահեղոյս բրգամբք. յորում և ընդ սրբոյ խա-
„ ռանարդ տաճարին կանգնելոյ սուրբ Գէորգայ՝ շի-
„ նէ այլ երկու յարակիցս գմբէթաւորս զսուրբ Յով-
„ հաննէս և զսուրբ Սեքենոս» : Իսկ Սարգսան ասէ.
* 'Ի նոյն ամուրս առաւ Զառաքար 'ի գողոց հրամա-
„ նաւ Պարաչա ամիրային Աեչրորոյ՝ որ վաճառեաց
„ զնա Խաղել ասլանայ ընդ բազում ոսկւոյ» : Եւ այ-
լուր գրէ. * 'Ի ՈԼԵ (1186) թուին աւին անեցիք զԶա-
„ ռաքար զհայրենիս տեառն Բարսղի յանխնայ կո-
„ տորելով զորս անդ. բաց 'ի կանանց և 'ի մանկտւոյ» :

102. Յամի Տեառն 1207. Զաքարէ իշխանն ետ
առնել ժողով յԱնի վասն բարեկարգութեան եկեղե-
ցականաց. որով բարձան վերոյգրեալ անկարգութիւնք
(99) : Այնուհետև այս իշխան սկսաւ ելանել 'ի վերայ
Պարսից պատերազմաւ և էառ 'ի նոցանէ զբազում
տեղիս օգնականութեամբ Իւանէ եղբօր իւրոյ : Այլ
յամի Տեառն 1211. մեռաւ Զաքարէ և թաղեցաւ
'ի վանս Սանահնի. բայց որդի նորա Շահնշահ գո-
լով փոքր՝ մնաւ ընդ ձեռամբ հօրեղբօր իւրոյ Իւա-
նէի, մինչև եղև իշխան Անւոյ :

103. Յամի Տեառն 1239. անթիւ բազմութիւն
Թաթարաց արշաւեցին 'ի Հայաստան. քանդեցին
զբազում տեղիս, որոց գլխաւոր իշխան էր Չարմա-
ղան, որ բազմութեամբ Սուղալ թաթարաց ել 'ի վե-
րայ Անւոյ. բայց յառաջ քան զհասանելն անդ դես-
պան առաքեաց քաղաքացեաց տալ զքաղաքն : Նոքա
ետուն պատասխանի, թէ այս քաղաք է Զաքարէի
որդւոյ Շահնշահի, մեք առանց հրամանի նորա ոչ
կարեմք տալ : Իբրև դարձան դեսպանքն՝ անխորհուրդ
Անեցիք ելին 'ի վերայ Ճանապարհին, հարին սպանին
զնոսա. զոր լուեալ Չարմաղան կատաղեցաւ յոյժ, և
նոյնհետայն եկն և պաշարեաց զԱնի : Եւ այնպէս չա-
րաչար պատերազմէր, մինչև մեծապէս նեղեցաւ քա-
ղաքն 'ի սովէ. և չունէին ինչ ուտել : Ուստի առ սաս-

տիկ աւուր բազում իշխանք ելանէին 'ի քաղաքէն և զինքեանս մատնէին 'ի ձեռս Թաթարաց ։ Իսկ Չարմաղան նենգութեամբ հրամայէր կերակրել և պատուել զնոսա. զայն տեսեալ քաղաքացեաց սկսան ելանել 'ի քաղաքէն և դիմել առ Թաթարս ։ Բայց անօրէն Թաթարք բաժանեցին զնոսա 'ի մէջ իւրեանց իբր թէ առ 'ի հոգ տանել նոցա. և ապա զամենեսեան կոտորեցին անխնայ բաց 'ի կանանց և 'ի մանկանց և յարուեստաւորաց. զորս գերի վարեցին ։ Ապա առին զքաղաքն և մտեալ 'ի ներքս կողոպտեցին զամենայն տունս, զկրպակս և զեկեղեցիս, և այնպէս չարաչար տապալեցին և ապականեցին զԱնի, մինչև ոչ ոք կարէր ճանաչել ։ Ըստ սմին օրինակի չարաչար քանդեցին զամենայն տեղիս այնոցիկ կողմանց ուր և կոխեցին, և զամենայն իշխանս սպանին. միայն թողին զարս անպիտանս 'ի մէջ այնց աւերակաց, և ինքեանք ելին հեռացան ։

104. Յայնժամ ապա փախստական Հայք ելեալք 'ի ծորոց, և իջեալք 'ի լերանց եկին տեսին զՀայաստան այնպէս ապականեալ՝ սուգ առին և լացին. մանաւանդ 'ի վերայ Անւոյ, որ բոլորովին քանդեալ էր. ոչ բնակութիւն գոյր և ոչ բնակիչ. եկեղեցիք տապալեալք, պալատք և տունք յափշտակեալք, և բոլոր քաղաքն անկեալ յողբալի վիճակ ։ Ուստի ամենեքեան ողբային և ցաւագինս անիծանէին զանմիաբանութիւն ազգին, որ պատճառ եղև կործանման թագաւորութեան Անւոյ ։ Անիծանէին և զՅոյնս, որք նենգութեամբ առին զայն հրաշակերտ քաղաք. և ոչ պաշտպանեցին ։ Տեսանէին թէ չիք այլ յոյս շինութեան Անւոյ յուսահատեալ ողբային. ըստ որում պատմէ Կիրակոս պատմիչ ականատես ։ * Սուգ զգեցաւ եկե-
„ղեցի և բարձաւ պայծառութիւն գեղեցկութեան
„նորա . . . իբրև խաւարաւ մածեալ էր ամենայն աշ-
„խարհս, և սիրէին մարդիկ առաւել զգիշեր քան
„զտիւ. և երկիր թափուր մնաց 'ի բնակչաց իւրոց, և
„շրջէին 'ի նմա օտարաց որդիք. յափշտակեցան ինչք
„և ստացուածք նոցա և ժլատութիւն բարուց նոցա
„ոչ երբէք յագեցաւ. յուզեցան խուզեցան տունք և
„սենեակք ամենայն. ոչինչ մնաց զոր ոչ առին. շըր-
„ջէին այսր և անդր անդադար արագութեամբ իբրև

„ զայծեմունս. և կեղեքէին պատառէին իբրև զգայլս.
„ երիվարք նոցա ոչ վաստակէին յընթացս. և ոչ ին-
„ քեանք ձանձրանային 'ի ժողովել զաւարս: Եւ այս-
„ պէս առհասարակ դառնութիւն հասուցին բազում
„ ազգաց և լեզուաց. զի բաժակ բարկութեան տեառն
„ էր հեղեալ յերկիր 'ի վրէժխնդրութիւն գործոց մե-
„ րոց չարաց. զի մեղաք առաջի նորա, և զարդար ցա-
„ սումն նորա շարժեցաք. վասն այն եղև դիւրամուտ
„ աշխարհս մեր‖:

105. Որովհետև այս լեռնաբնակ վայրենի ազինք միանգամ կոխեալ 'ի Հայաստան, և տեսեալ զգեղեցկութիւնս, և յափշտակեալ զմեծութիւնս, այնուհետև սովորեալ ոչ կացին յետս. այլ անդադար արշաւէին, և կողոպտէին զաշխարհն: Այն զի՝ չէր ոք, որ ընդդէմ դառնայր, և ոչ այն, որ պաշտպանէր զազգն. նմին իրի համարձակ առնէին զոր կամէին. և ամենայն ինչ 'ի ձեռս թշնամեաց էր, մինչև հասուցին զազգն Հայոց 'ի վերջին թշուառութիւն:

106. Սակաւ եղեն զերծեալքն որք փախեան 'ի հեռաւոր աշխարհս, և հազիւ ճողոպրեցան. որպէս էին Կաֆայեցիք, Տրապիզոնցիք. և այլք: Թող զի՝ 'ի ժամանակս երկրորդ առման Անւոյ բազումք 'ի նոցանէ զերծան 'ի Լեհաստան, և 'ի Թաթարստան. որպէս ունիմք պատմել: Այլ մեծ մասն յերեսաց Զարմաղանին փախեան դէպ 'ի յԱժտէրխան և յԱխսաքայ ըստ որում պատմէ յիշատակարանն հին յայսմաւուրաց: Տես 'ի պատմութեան Կաֆայի (502):

107. Զարմաղան խան Թաթարաց հիւանդացաւ. բերին առ նա զոմն Հրեայ բժիշկ, որ խրատ ետ տալ բերել զխարտեաշ մանկունս և ողջ ողջ բանալ զորովայն նոցա, և զոտս նորա դնել 'ի նոսին. որով միայն առողջանաս՝ ասէր: Իբրև ծառայքն ժողովեալ զմատաղ մանկունս 'ի գրկաց մարց լցին զնոսա առաջի Խանին, եղկելի մարք աղաղակէին և յոգւոց հանէին զկնի նոցա. այլ անողորմ Թաթարք վարէին զնոսա. և զոմանս նետահար սպանանէին: Աղէտալի տեսարան եղև իբրև սկսան բանալ զաղիս մանկանց, աղիողորմ ձայնք լսելի լինէին. իսկ՝ անօրէն իշխանին քարացեալ սիրտ ոչ կակղանայր. մինչև 30 մանկունս ետ պատառել և զոտս իւր եդ 'ի փորս նոցա: Տեսեալ թէ չիք ինչ օ

գուտ, և գիտացեալ թէ այն էր նենգութիւն Հրէին. ետ բերել զնա առաջի իւր և պատառել զփորն. և զմարմին նորա էարկ առաջի շանց. և ինքն նովին ցաւով զրաւեցաւ 'ի կենաց:

ՎԵՐՋԻՆ ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ԱՆԻՈՅ

108. Ի պակասիլ քաջ և զօրաւոր իշխանաց Հայոց, պակասեցաւ և տէրութիւն Յունաց 'ի Հայաստան. մինչև կոր 'ի գլուխ հեռացան անտի. Յայնժամ Թաթարք մուտ գտեալ արշաւեցին յամենայն կողմանս Հայաստանու և կողոպտեալ զքաղաքս գերի վարեցին զբնակիչս: Ի սմին ժամանակի կանգնեալ էր թագաւորութիւն Հայոց 'ի Կիլիկիա. և Օշին նստէր թագաւոր. որ հազիւ կարէր պաշտպանել զիւր տէրութիւն յերեսաց թշնամեաց. որք օրըստօրէ զօրանային. և Յոյնք նանրանային: Եթէ յայնժամ ոչ լինէին իշխանք Հայոց և Թագաւոր 'ի Կիլիկիա, սպառսպուռ ջնջէին նոքա զտէրութիւն Յունաց. որպէս եղև յետ բարձման Հայոց տէրութեան:

Արդ նախանձ և անմիաբանութիւն քրիստոնէից շարժեաց զաստուածային արդար բարկութիւնն, որ ոչ միայն չազգաւ զկծեցուցեալ պատուհասեաց զնոսա, այլև 'ի նմին ժամանակի բազում տեղիք ահագին գետնաշարժութեամբ անդնդասոյզ կործանեցան և բիւրաւոր մարդիկ կորեան:

109. Յամի տեառն 1319. այնպիսի սոսկալի գետնաշարժութիւն եղև յաշխարհին Արարատայ, մինչև բազում քաղաքք գետնասոյզ եղեն. և բազում գիւղօրէք կործանեցան: Նա 'ի սմին ժամանակի և հռչակաւոր մայրաքաղաքն Անի դղրդեալ կործանեցաւ բոլորովին. որ ըստ պատմութեան Վահկեցւոյն՝ պատահեցաւ յաւէտ անիծիւք Յովհաննու քահանային երզնկայւոյ. որպէս և Անեցիք աւանդութեամբ պատմեցին մեզ: Եւ որովհետև մարդիկ ոչ միաբանեցան պահպանել զայն ականաւոր մայրաքաղաք աշխարհի, կիր և քարինք ելեալք 'ի միաբանութենէ անշինելի աւերմամբ կործան անկան այն ամենայն մեծագործութիւնք, որք վայել էին մեծագործ և միաբանասէր ժողովրդեան, և ոչ քայքայեալ բնակչաց անմիաբանու-

Թեամբ ։ Ուստի ողբայ Շնորհալին 'ի խօսիլն ընդ Ուռհայ այսպիսի իմն ցաւակցութեամբ .

* Քանզի և դու երբեմն էիր,
» Վայելչական հարսն 'ի քօղի,
» Մերձաւորաց յոյժ ցանկալի,
» Հեռաւորաց փափաքելի . . .
» Քանզի անցին ըստ երազի,
» Որպէս ծաղիկ ամարային .
» Եւ յորդութիւն յորդ վտակի,
» Գարնանաբեր հեղեղատի .
» Կամ զուռռուցեալ պղպղջակի,
» Որ ընդ շինելըն պատառի .
» Ստուերն անողորմ անօրինի,
» Որ մեր արեանս է 'ի սովի .
» Որ չէ յագեալ և ոչ յագի,
» Մինչև 'ի գալ կատարածի . . .
» Եհեղ զարիւն որբոց յերկրի,
» Հոսեաց նման ջրոյ գետի .
» Արար զդիակն անթուելի,
» Անթաղ մեռեալ դէշ դաշտին .
» Քահանայիցըն Քրիստոսի,
» Արեամբ ներկեաց զեկեղեցի .
» Սարկաւագաց պաշտօնէից,
» Մարմինք անկեալ մէջ փողոցի .
» Եւ այլք բազումք, որ ոչ թուի,
» Եւ է ասելն անկարգելի . . .
» Բայց զի աղէտքըս ցաւելի,
» Ոչ փոքրագոյն դեղով բուժի . . .
» Այլ կարեկից այսր աղէտի,
» Պարտ է կոչել աղերսալի .
» Օ չորեքծագեան կողմ աշխարհի,
» Որ են համօրէն մարդկան սեռի .
» Առ որս գոչեմ ձայնիւ գուժի,
» Լալով խօսիմ զայս ասելի .
» Ո՛վ ազգ ամէն բանաւորի,
» Ժողովեցէք 'ի մի վայրի . . .
» Տղայ մանկունք և երիտասարդք,
» Ծերք և ամէն չափ հասակի ‖ . և այլն ։

Ողբ . Եդես ։

ՄՆԱՑՈՐԴՔ ԱՆԻՈՅ ԵՒ ՇԻՐԱԿ ԳԱՒԱՌԻՆ

110. Անի քաղաք մինչև ցայժմ կայ նոյ խախտաբեալ. սակայն մնացորդք մեծահաչակ պարսպաց և հոյակապ շինուածոց, աւերակք երևելի երևելի եկեղեցեաց և պալատից ցարդ երևեցուցանեն զմեծութիւն քաղաքին: Մեծ մասն պարսպին ամբողջ երևի մեծամեծ վիմօք բրգօք և աշտարակօք հանդերձ: Իսկ ՚ի քաղաքամիջի անդ վէմք և սիւնք մեծագործ շինուածոց լեռնացեալ կան. յորոց երբեմն տանին ՚ի մօտաւոր տեղիս կառուցանել զշինուածս: Բազում պալատք և եկեղեցիք կանգուն կան. որպէս և լայնանձև եկեղեցի ս. Գրիգորի արքային շինեալ ՚ի կճեայ կարմիր քարանց, որ գտանի առ Ախուրեան գետով: Նոյն այսր թագաւորի գրեալ կայ ՚ի վիմի անդ. որպէս գոյ աստ և անդ խաչ և մակագրութիւն. Պահպանն Ըռաձաւորայ:

Ոմանք ՚ի հետաքննին ուղևորաց մտին յԱնի և արաշեցին քառասնիւ չափ զեկեղեցիս միայն գմբեթաշէնս և կճեայս, որք կանգուն կան. թող զմեծամեծ պալատս և զկիսաւեր եկեղեցիս: Բազում դրունք պարսպաց կճեայ բարաւորօք և աշտարակօք երևին աստ և անդ. ՚ի միում աշտարակի գոյ անցք, ընդ որ լինի անցանել ստորերկրեայ ճանապարհաւ ՚ի ներքուստ Ախուրեան գետոյ յայնկոյս, որպէս պատմեցին: (տես և ՚ի ստորագր. Հին Հայաստանի երես. 422:)

111. Արտաքոյ պարսպին գոյ գեղեցկակերտ եկեղեցի, զոր ասեն շինեալ հովուի միոյ գաղտնի մեծատան. որ ՚ի ցոյց մեծասրտութեան իւրոյ կանգնեալ է զայն եկեղեցի իւրով ծախիւք կարգելով զհասոյթս քահանայից: Զայս ամենայն հաստատեն արձանագրութիւնք, զորս անձամբ շրջեալ օրինակեցին կրկին քահանայք բանիբունք Տէր Խաչատուր և Տէր Յովհան Էջմիածնեցիք. զորս գիցուք ստորև (114):

Արդ՝ թէպէտ ՚ի մերձակայ վայրս Անւոյ չիք բնակութիւն և շէն, սակայն փոքր ինչ տարակաց գոն գիւղօրէք, և ՚ի բազում տեղիս երևին եկեղեցիք վայելուչք, և վանորայք մեծաշէնք:

112. Ի նմին վիճակի է Սօղավանքն, զոր Թարգմանչեն զոյգ վանք. որ է ամրաշէն և մեծագործ. եկեղեցին է յանուն Լուսաւորչի, զոր ըստ ոմանց շինեալ է Յովհաննէս Շահնշահ արքայ Հայոց. որպէս և 'ի վերայ սեան գրեալ կայ Թուականն յամի տեառն 1030: Ուրանօր երևի զարմանագործ խորհրդարան մի մեծ քարաշէն քանդակագործ. ունի զերիս կաթուղիկէս. և շինուածն յերիս մասունս բաժանեալ է դէպ 'ի ներքս: Մերձին մասն էր երդման տեղի. զի անդ ժողովէին իշխանք 'ի ժամանակս Բագրատունեաց առ 'ի խորհիլ: Սակաւ ինչ հեռի գոյ բարձր շինուած ինչ իբր զանգակատուն. ուստի լուեալ զձայն զանգակին հաւաքէին անդ խորհրդականք: Ուր երևին նաև օրօրացաձև գերեզմանք Թագաւորաց շինեալք 'ի կարմրագոյն քարանց հանդերձ կամարօք:

113. Իսկ Յօհանավանքն է 'ի Կարբի՝ շինեալ ասի 'ի Լուսաւորչէ և 'ի Տրդատայ. ուր և հանգուցին զնշխարս ինչ սրբոյն Յովհաննու Մկրտչին. անդ յամարայնի ապահովանայրին՝ ասեն:

Եկեղեցին ունի 4 դրունս. առ արևմտեան դրան կանգնեալ կայ Խաչն Լուսաւորչի ձայնեալ՝ ըստ չափու հասակի իւրոյ՝ որպէս աւանդի: Յայս մենաստան գոյր գրեալ " գիրք Թագաւորութեան մնացորդաց " յիշատակարանն գրեալ էր այսպէս " Աստանօր յանկ " ելեալ աւարտեցաւ հրաշապատում տառս աստուածային " մատենից, որ պատմէ զվէպս անցեալ ժամանակաց՝ ընտրեալ յառաջագոյն ազգին Իսրայելի, " զկարգ Թագաւորացն, և զյորովայնէ կոչումն սրբոց " մարգարէիցն, և կոչի Թագաւորութեան գիրք: Առ " սմին եղեալ մնացորդամն և զմնացորդաց մնացորդամն "

Այս մենաստան յաւուրս Բագրատունեաց կարի իմն վայելչացեալ էր. ուր յետոյ Շահանշահ և այլք ապա յականաւոր իշխանաց և հայրապետաց բազում շինութիւնս արարին և ձօխացուցին զայն եկամտիւք որպէս տեսանին յիշատակարանք փորագրեալք յամենայն որմունս:

'Ի գաւթի տաճարին:

ՌԿԵ. ԹՈՒԻՆ

„ Շնորհօք բարերարին Աստուծոյ ես Վահրամ որ-
„ դի Եղբայրկան, և զուգակից իմ Թայիկն 'ի սկիզբն
„ շինութեան եկեղեցւոյս տուաք զամենայն զստա-
„ ցուածս մեր 'ի ծախ սորա և զՂպրավանաց այգին:
„ Եւ առաջնորդք սուրբ ուխտիս սահմանեցին յամե-
„ նայն ամի շրջագայութեան Զ օր ժամ, զնոր եկեղե-
„ ցիքս. զՃրագալոյսն, զԶատիկն, և զգալուստ Հոգ-
„ ւոյն սրբոյ, յանուն մեր պատարագել զՔրիստոս.
„ ա̃ օր ինձ. ա̃ օր Թայիկանն. ա̃ օր բոլոր ազգին մե-
„ րոյ: Կատարիչք գրոյս օրհնին 'ի Քրիստոսէ, և որք
„ խափանեն, ընդ զինն յեկեղեցիսն դատին յԱստու-
„ ծոյ և յամենայն սրբոց նորա. ամէն „

'Ի տաճարին 'ի հիւսիսոյ կողմն:

ՌԿԶ

„ 'Ի ժամանակս շնորհացն Աստուծոյ 'ի հիմնարկել և
„ 'ի լուսաւորել եկեղեցւոյս գաւառիս Արարատու, 'ի
„ ձեռն երկուց եղբարց հարազատաց Զաքարիայի և
„ Իւանէի, և արդարածնունդ զաւակաց նոցա Շա-
„ հանշահի և Աւագի: Ես Վաչէ իշխանաց իշխան...
„ կոչեցայ 'ի վերակացութիւն գաւառիս. միաբանե-
„ ցայ հանդերձ զուգակցաւ իմով Մամախաթունաւ
„ սուրբ ուխտիս վանացս Յովհաննու. բազում տրօք
„ և ընծայիւք օգնական եղաք 'ի շինութեան մեծափառ
„ նորակերտիս: Եւ առաջնորդք սուրբ ուխտիս հաս-
„ տատեցին յամենայն ամի պատարագել զՔրիստոս
„ յանուն իմ զտօն Ղազարու զամենայն եկեղեցիքս՝
„ զհին և զնոր „ և այլն:

Արտաքոյ տաճարին 'ի վերայ դրանն արեւմտեան:

„ Շնորհօք բարերարին Աստուծոյ. Տէր Կոստան-
„ դին Կաթուղիկոս Հայոց 'ի թուին ՌՂԲ: Յիշխա-

„նուԹեան Շահանշահի որդւոյ Զաքարիայի . . .
„միաբանեցայ սուրբ ուխտիս Յօհաննու և Եսու Ան-
„բերդու երկիրս սեպհական վիճակ սուրբ Կարապե-
„տիս, 'ի յԱպարանաց՝ ընդ որ բաժանի գետն Քա-
„սաղ, մինչև յԱշնակ ։ Եւ սպասաւորքս սորա Մկրտիչ
„եպիսկոպոս և եղբարքս խոստացան կատարել զյիշա-
„տակս մեր՝ յետ ելից մեր ըՃ քառասունք, զամենայն
„'ի կարգին. և սուրբ կաԹուղիկէն ընդ խորանաւ.
„յամենայն ամի պատարագել զՔրիստոս 'ի տօնի
„Տեառն ընդ առաջին „ և այլն ։

Արտաքոյ գաւԹին 'ի գլուխ դրանն ։

'Ի ԹՈՒԻՆ · ՉԷ

„'Ի կամս Աստուծոյ հզօրին, այս իմ հրաման և
„արձան սահմանի Շահանշահի, մանաւանդ որ Թագ-
„խուցեսի, որդւոյ Զաքարիայի ամիր սպարսալարի
„Հայոց մեծաց և Վրաց. զոր գրեցի իմ շինած ժա-
„մատունն ։ Տուի զգեղն Շալուաշէն 'ի սուրբ Կարա-
„պետս յիշատակ հոգւոյ իմոյ, և Խոշաքին, և յա-
„ռևշատուԹիւն որդւոց մերոց ։ Եւ կրկին հաստատե-
„ցի զիմ հօրն հրամանքն, գիրն որ գրած են „ և այլն ։

Ուրանօր բաց 'ի բազում արձանագրուԹեանց այնց ժամանակաց փորագրեալ կան և այլևայլ յիշատակարանք բարերարաց առանց Թուականի. որպէս բերէ Զաքարիա պատմիչ. որ և կարգէ զանուանս առաջնորդաց ուխտիս սկսեալ 'ի լուսաւորչէ մինչև ցՍարգիս վարդապետ յիւրում ժամանակի Թուով 40 ։

Սակաւ հեռի յարևելեան կողմն է Պեղ ժէլվա. որ է հինգ եկեղեցի քարաշէն և մեծագործ շինեալ յանցս սեպացեալ լերին ամենևին անառիկ ։ ԿաԹուղիկէն հասանէ մինչև ցծայր լերին. ուր գոյ անյայտ Ճանապարհ առ 'ի փախչիլ 'ի լեառն անելանելի յամենայն կողմանց ։ Աստ էր մեծ վանքն շինեալ յաւերակաց Անւոյ ։ Ըստ այսմ երևին ցարդ յայսոսիկ կողմանս անԹիւ աւերակք մեծամեծ շինուածոց, յորոց վերայ երևին արձանագրուԹիւնք յիշատակարանաց, զորս վերծանեալ օրինակեցին վերոյ ասացեալ քահանայք ։ Եւ ահա դնեմք կարգաւ զայնս ըստ տառից և ըստ կետից ։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ¦ ՀԻՆ ՇԻՆՈՒԱԾՈՑ

114. Պատմեն նոյն քահանայք Տէր Խաչատուր և Տէր Յովհան, թէ 'ի թուին հայոց ումծգ. մայիսի ժէ. 27 ամօք յառաջ մնաք յԱնի քաղաք և շրջեալ տեսաք զեկեղեցի մի, որ յարտաքին կուսէ էր իբր մեծ կաթուղիկէ եդեալ 'ի վերայ երից աստիճանաց 'ի գետնի, որոյ յիւրաքանչիւր խորանս կաթուղիկէին էին արձանագրութիւնք զանազան կերպիւ. յորոց զմին օրինակեալ դնեմք աստ: Իսկ 'ի ներքին կուսէ երկոտասան լուսանցիւք և նոյնաթիւ խորանօք շքեղակերպ էր յօրինեալ.

* Յամս աստուածապատիւ և հոգևոր տեառն Պետ-
» րոսի Հայոց կաթուղիկոսի, և 'ի թագաւորութեան
» Սմբատայ որդւոյ Գագկայ Շահանշահի 'ի ՆՁԵ թուա-
» կանիս (1036), ես Ապլղարիպ մարզպան որդի Գրի-
» գորայ իշխանի և թոռն Ապուղամրի և եղբայր Վահ-
» րամայ և Վասակայ շինեցի զսուրբ Փրկիչս 'ի մայրա-
» քաղաքիս յԱնի, շատ·ջանիւ և մեծածախ գանձիւ,
» և գնեցի 'ի հալալ ընչից իմոց կուղպականի զ. և ձի-
» թահանք և այգի և հողեար և ետու սուրբ Փրկչիս.
» և զարդարեցի ոսկով և արծաթով և ակամբք պա-
» տուականօք. և ետու աւետարան և տօնական, և
» նորոգեցի հին և նոր կտակարանօք ||:

115. Դարձեալ սակաւ ինչ հեռի 'ի թագաւորական պալատէն կառուցեալ կայ մեծ կաթուղիկէ եկեղեցի. որոյ յիշատակարան շինութեան 'ի հարաւային կողմն է, յոյժ բարձր. 'ի տեղիս տեղիս գոն յունական գրուածք, զոր չեղև հնար վերծանել 'ի բռնութենէ հողմոյն. սակայն յարևմտեան ահեակ կողմն դրան գրեալ կայ այս արձանագիր անթուական:

* Կամօք ողորմութեամբ բարերարին Աստուծոյ՝ ես
» Սռօն Մագիստրոս մեծարեալ 'ի մեծափառ թագաւո-
» րութեանցն 'ի գեղ զարդու, և 'ի տիս մանկութեան
» իմոյ եկի յարևելս 'ի գեղեցկաշէն բերդս յԱնի,
» բարձրացուցի բովանդակ զպարիսպ սորին կարկառա-
» կյտ արձանօք և հաստահեղոյս ամրութբ և 'ի յի-
» մոց մեծածախ գանձուց ածի ջանիւ ջուր յորդաբուխ

» 'ի մէջ ամրոցիս յուրախութիւն և 'ի զուարճութիւն ծա-
» րաւեաց՝ բերի ոսկի մատանեաւ գիր ազատութեան
» զիքնակալ ծիրանածին Թագուհւոյն վասն պախտից
» տանից քաղաքիս և Թաստակին զոր տան ամ յամէ
» չափ ութից լտերց. այլև 'ի խնդրոյ իշխանաւորացս
» խափանեցի և զգիւտ երկուց լտերց զոր տայր Մու-
» Թայիրն զայս ամէն ‖ ։

116. Արձանագիր Մարմարշէն եկեղեցւոյն, որ դեռ
կայ 'ի Շիրակ գաւառի 'ի ձորամիջի առ ափն կարուց
գետոյ գրեալ արտաքուստ 'ի հարաւային կուսէ 'ի վեր
քան զդրանդ եկեղեցւոյն այսպէս.

* Շնորհիւն Աստուծոյ ես Վահրամ իշխանաց իշ-
» խան և անթիպատրիկ որդի Գրիգորի իշխանի Հայոց
» մեծաց 'ի ցեղէն պալհաւունի և 'ի զարմից սրբոյն
» Գրիգորի հայոց լուսաւորչի. որ յաղագս 'ի Քրիս-
» տոս յուսոյն հիմնադրեցի զսուրբ և զտիեզերական
» ուխտս մարմարաշէն. սկսեալ 'ի ՆԼԷ թուականին
» Հայոց (988) յաւուրս Սմբատայ որդւոյ Աշոտոյ Հայոց
» Թագաւորի մինչև 'ի ժամանակս Յովհաննիսի որդւոյ
» Գագկայ Հայոց Շահնշահի առն իմաստնոյ շինողի
» և խաղաղարարի. և 'ի Թուականս Հայոց ՆՀԸ. և կա-
» տարեցաք մեծ ջանիւ և բազում ծախիւք ես և մայր
» իմ Շուշիկ Հայոց տիկնաց տիկին. և եղբարք իմ Վա-
» սակ իշխանաց իշխան, որ նահատակեցաւ 'ի Թուր-
» քաց պատերազմի և Ապլղարիպ Հայոց մարզպան և
» մանուկն Համզէ. որք էաք ամենայն տամբ և տոհմիւ
» հաւատարիմք տերանց մերոց. և նահատակեալ 'ի վե-
» րայ տանս Հայոց աշխատութեամբ և արեամբ մերով
» և որդւոց մերոց և գանձուց առատութեամբ և ա-
» մենայն հնարիւք խնդրեաք զխաղաղութիւն աշխար-
» հիս և զհաստատութիւնն եկեղեցեաց. շինեցաք և
» այլ բազում եկեղեցիս և վանորայս. բայց զտեղի
» հանգստեանս մերոյ առաւել պատուով մեծացուցաք
» և լիացուցաք ամենայն գոյիւք լերամբք և դաշտիւք.
» աւանդեցաք 'ի սա գեօղս և ագարակս գանձագինս,
» զԱագորանի գեղ և զագարակն իւր. զԳոդինն և
» զԿորտանեկն, զԱրագէձ և ըզ Օ ազատայ, Օ ամա-
» նէն և զ Օ եզնկայն, 'ի Յօշականի այգիք և երեք ջա-
» ղաց՝ և երկու ջաղաց 'ի Գողսի, աշտարակի այգի՝ 'ի
» Կարբոյ դաշտի այգի, 'ի Մերկելո այգի, 'ի Վժան այ-

» դի, 'ի Արտենի այգիք, 'ի յԱնի տներ և կղզականի. և
» զարդարեցի զսա ամենայն կազմութեամբ 'ի յիշա-
» տակ յաւիտենից մեզ և որդւոց մերոց, և կարգեցաք
» 'ի ձեռն սուրբ հայր Երեմիայ և որ զկնի յաջորդեցաւ
» Մովսէս Նորին որդիացեալ. և փոխարէն հատու-
» ցումն ընկալեալ մեր 'ի ժառանգաւորաց սուրբ ուխ-
» տիս տարին Ղ քառասունք անխափան մինչև 'ի գա-
» լուստն Քրիստոսի: Արդ թէ ոք 'ի մերոց կամ յօտա-
» րաց աւագ որ զմեր տուրս պակասեցնէ. կամ հայր
» որ զմեր ժամս խափանէ, ինքն որոշեալ լիցի 'ի Քրիս-
» տոսէ և դատօղ Նորա սատանայ լիցի և մի՛ տեսցէ նա
» զփառս Աստուծոյ. իսկ որք հաստատուն պահեն զա-
» ւանդս մեր օրհնեալ եղիցին ‖:

117. Իսկ 'ի վերայ Հարաւակողման որմոյ այսր ե-
կեղեցւոյ գոյ նոյնպէս անթուական արձանագիրս այս.

* Շնորհիւն Աստուծոյ ես Մարիամ Աքխաղաց և
» Հայոց թագուհի դուստր մեծին Սենեքերիմայ՝ թոռն
» Գագկայ Հայոց արքայի, որ ետու զտուրս 'ի սուրբ և
» 'ի տիեզերական ուխտս Մարմարաշէն, առաջնորդու-
» թեամբ հօր Մօսթենէսի, վասն Գագկայ իմ պապոյն
» մեղաց թողութեան և կատային իմ հանկանն: Եւ
» հատուցաւմ բարի ընկալայ 'ի սրբոցս. զսեանն եկե-
» ղեցին զսուրբ Պետրոսի Քրիստոս պատարագաւ զտա-
» րին ողջոյն Կատային իմ հանգանն՝ մինչև 'ի գալուստն
» Քրիստոսի: Արդ՝ եթէ ոք 'ի մեծամեծաց և 'ի փա-
» քունց 'ի Հայոց կամ 'ի Վրաց որ այս գրոյս հակա-
» ռակս և զիմ գեօղն զՏարուս 'ի յայս ուխտէս հա-
» նէ՝ ինքն ելցէ 'ի կենացն Աստուծոյ և պարտական լի-
» ցի արեանն Քրիստոսի, և մի՛ տեսցէ զփառս Աստու-
» ծոյ: Իսկ որ հաստատուն պահեն զաւանդս մեր օրհ-
» նեալ եղիցին ‖:

118. Արձանագիր վերանորոգութեան նոյն Մարմա-
րաշէն մեծաշուք եկեղեցւոյն, յարտաքին կուսէ 'ի հիւ-
սիսային որմն:

* 'Ի ժամանակս բարեպաշտից և աստուածասիրաց
» պարոնաց մերոց Աթապակ Իւանէի և Մանդատոր
» Զախուցէիս շահանշահի՝ հրամանաւ սոցին վերստին
» նորոգումն եղև հրաշափառ տաճարի Աստուծոյ մերոյ
» լուսոյ սրբոյ կաթուղիկէիս Մարմարաշինայ՝ 'ի ձեռն
» որդւոց Ապուղամրի Մագիստրոսի՝ տէր Գրիգորոյ ար-

„ Հր եպիսկոպոսի և հարազատի իմոյ Խարբին Թոռանց
„ Վահրամայ իշխանաց իշխանին զարմից և շառաւիղաց
„ սրբոյն Գրիգորի շինողի 'ի հիմանց մեծաւ տենչմամբ
„ և յուսով զսա վասն բազմագումար քահանայից, և
„ պարգևեալ արդիւնս յոլովս գեօղօրայս յայգեստանս
„ կուղպականի և Ջաղացանի՝ որ և ցուցանէ իւր ար-
„ ձանագիրն միջնամիջէ՝ և փարթամացուցեալ ամե-
„ նայն գոյիւք առ 'ի լնուլ և առաւելուլ զպէտս կա-
„ րևորս զիւրեանց և զեկաց, և ունէր ժամանակ իբ-
„ րև ոչ սակաւ՝ զի աւերեալ էր յանօրինաց՝ և ըզ-
„ վանքս գեղ արարեալ և զկաթուղիկէս բերդանման
„ ամրացուցեալ, և կայր 'ի խաւարի և 'ի սգաւորու-
„ թեան, զրկեալ ամենայն գոյից մինչև յաւուրս յայ-
„ սոսիկ: ✠ Իսկ 'ի ՈՀԴ Թուականիս Հայոց՝ (1225)
„ քաջ և արի զօրականն Քրիստոսի սիրելի եղբայրն իմ
„ Խարիփն իմով կամակցութեամբ խորհուրդ բարի 'ի
„ միտ արկեալ ազատել զսա 'ի տրտմութենէ և 'ի զա-
„ զիր մթնազգածութենէ հաստուցանել նախկին փա-
„ ռաւորութեանն՝ հանեալ արտաքս զշինականսն և ե-
„ դև բնակարան սրբոց քահանայից և կրօնաւորաց հա-
„ ճոյացելոց Աստուծոյ: Զարդարեցաք զսա սպասիւք
„ պայծառազգեստիւք՝ և սրբութեամբ ոսկեղէն և ար-
„ ծաթեղէն և հին և նոր կտակարանօք եկեղեցակա-
„ նօք. և ընծայեցաք 'ի սմայ նուէր զմեր հայրենի գեւղն
„ զԱջառայ, ✠ և որ 'ի վանիցս հաղխս վերայ շինեցաք
„ և անուանի Տիրաշէն, և 'ի յայսկոյս գետոյն Ջաղա-
„ ցանի՝ որ կան 'ի կարմնջէն 'ի վայր և 'ի վեր, զխոտ
„ զհող և զոր ինչ 'ի սկզբանէն ունէին, և 'ի քաղաքիս
„ զմեր պապենի հայրենիք եկեղեցին զսուրբ Ստեփան-
„ նոս բոլոր ամենայն ժողովրդեամբն, և երկու այգի
„ 'ի Մարմետի որ նախնեացն մերոց 'ի մեզ էր հասեալ,
„ և միաւորեցաք զվերի վանքն մեծ վանիցս իւր ամե-
„ նաստացուածովք և լցի հրամանաւ միոյ առաջնոր-
„ դի. մինչ այս առ այսչափ կատարեցաւ առ ժամայն գե-
„ ղեցիկ եղբայրն իմ Խարիփ Մագիստրոսն զովեալն
„ ամենայն լեզուաց մարտիրոսացաւ 'ի պատերազմի ան-
„ օրինաց և մի միայն մնացի ես Գրիգոր եղկելի՝ և
„ զրկեալ 'ի նմանէ զմարմին նորա բերեալ թաղեցաք
„ առ դրան սրբոյ կաթուղիկէիս մերձ առ նշխարհս
„ հաւոյն մերոյ Վահրամայ իշխանի և փոխարէն հատու-

,, ցին սպասաւորք սորա ընդ. մերոց արդեանցս զոր ա-
,, ռաքաք զկաթուղիկէիս զաւագ խորանին պատարագին
,, յանուն նահատակին Քրիստոսի Վարդիփին կատա-
,, րել ամենայն աւուր 'ի սկզբանէ տարոյն մինչև ցկատա-
,, րումն տարոյն՝ յայսմհետէ մինչև 'ի ծագումն որդւոյն
,, Աստուծոյ. որ ոք խափանէ կամ շրջել ջանայ յիմ-
,, չից եկեղեցւոյս՝ որոշեսցի 'ի փառացն Աստուծոյ և
,, զրկեսցի 'ի մշտնջենական կենացն, կատարիչք գրե-
,, լոցս յօրհնեսցին յԱստուծոյ և 'ի սրբոց նորա յոգի
,, և 'ի մարմին. ամէն ||:

119. Համառօտ արձանագիր Հաղբատու սուրբ Նշան եկեղեցւոյն, որ փորագրեալ է 'ի հիւսիսային որմն մերձ 'ի տանիս:

* 'Ի Թուին Հայոց ՆԽ (991): Սմբատ և Գուրգէն
,, հայոց Թագաւորք կանգնեն զՀաղբատու սուրբ Նշան
,, եկեղեցին ||:

Նոյնպէս 'ի ձախակողմն մեծակառոյց դաւթի նորին եկեղեցւոյն Հաղբատու կանգնեալ կայ խաչքար. և 'ի վերայ փորագրեալ այսպիսի արձանագիր.

* ՆԾԳ. Թուի (1004) 'ի հայրութեան Սիմէոնին ես
,, Աստոմ վերակացու եկեղեցւոյս կանգնեցի զսուրբ
,, խաչս. ինձ աղօթս արարէք ||:

'Ի մէջ արևելեան դաւթին գոյ գերեզմանագիր այսպէս.

* Ես Հոնաւար որդի Սկանն իշխանաց իշխանի՝ ան-
,, ժամանակ ելի 'ի կենաց և սուգ մեծ թողի ծնողաց
,, իմոց. արդ որք կարդայք զիս յաղօթս յիշեսջիք.
,, Թուին ՆՀԲ ||. (1023):

120. Նոյն Հաղբատու սուրբ Նշանի արևմտեան մեծակառոյց դաւթին շինութեան արձանագիրն գրեալ կայ արտաքուստ 'ի վերայ հիւսիսային որմոյ:

* 'Ի Թուականիս Հայոց ՈԼԴ (1185) ✠ ես Մարիամ
,, դուստր Կորիկէի արքայի մեծ յուսով շինեցի զտունս
,, աղօթից 'ի վերայ հանգստարանացս մեր հօր, քուեր
,, իմոյ Ռուսուքանայ և Մարիամայ Թամարայ և ինձ
,, Մարիամու: Առաջնորդութեան տեառն Բարսղի
,, արհի եպիսկոպոսի. որ և աւարտեցաւ 'ի ձեռն նորա:
,, Արդ՝ որք մտանէք ընդ դրունս սորա և երկրպագէք
,, սրբոյ նշանիս՝ յիշեսջիք աղօթս զմեզ և զնախնի
,, թագաւորս ազգօքս մեր որ հանգուցեալ են աս-

„ դրունս որոյ կաթուղիկէիս 'ի Քրիստոս Յիսուս ॥ :

Դարձեալ անդ յորմն արեւելեան գաւթին փորագրեալ կայ * Քրիստոս որ ողորմի Վաչէի իւրում
„ գալստեանն : Թուական ՈԾ ॥ (1201) :

121. Նոյն Հաղբատու սուրբ Նշանի եօթնախորան զանգակատան, որ յԱրեւելեան կողմն է եկեղեցւոյն, արձանագիրն է այսպէս.

* 'Ի թուին ՈՂԴ (1245) շինեցաւ գեղեցկազարդ-
„ տաճարս Աստուծոյ՝ զարթուցանող փառաբանչաց
„ տեառն եօթն խորանաւ 'ի տէր Համազասպայ, որում
„ ողորմեսցի Քրիստոս . և տացէ 'ի լուսեղէն յարկաց
„ իւրոց ոգւոյ նորա . և Յօհաննիսի քուեր որդւոյ իւ-
„ րոյ և այլ աշխատողացն . զի բազում ջանիւ շինեաց
„ զսա 'ի յետին ժամանակս Թաթարաց ॥ :

122. 'Ի Հիւսիսային կողմն նոյն Հաղբատու սուրբ Նշանին կայ մեծ եկեղեցի հոյակապ Համազասպ անուամբ. 'ի վերայ արեւմտեան վերին սեմոյ գրեալ կայ այսպէս.

* 'Ի թուին Հայոց ՉԶ (1257) 'ի տէրութեան մեծին
„ Շահնշահի և Զաքարիային, շինեցաւ մեծափառ-
„ տաճարս Աստուծոյ՝ 'ի տէր Համազասպայ . որում ա-
„ ղորմեսցի Քրիստոս բարի հոգւոյ նորա ॥ :

Առ երի հիւսիսային դրան նոյն սուրբ Նշանին գոյ խաչքար փորագրեալ 'ի վերայ պատկեր խաչելութեան. և 'ի միւս կողմն գրեալ կայ այսպէս.

* Թուին ՉԻԲ (1273). յիշխանութեան և տէրու-
„ թեան սուրբ ուխտիս Աթապակ մեր սպասալար պա-
„ րոն Սադունին ես տէր Յովանէս կանգնեցի զխաչս ա-
„ մենափրկիչ օգնական պարոն Սադունին և յիշատակ
„ հոգւոյ իմոյ ॥ :

Իսկ յարեւմտեան կողմն Հաղբատու հասարակաց գերեզմանատան կանգնեալ կայ խաչքար 'ի վերայ երկուց աստիճանաց, որ ունի զայսպիսի արձանագիր.

* Շնորհիւն Աստուծոյ ես Յակոբ և մարգարէս.
„ յառաջնորդութեան տեառն Համազասպայ, կանգ-
„ նեցաք զսուրբ Սարգիս բարեխօս մեզ և Մխիթար
„ վարդապետին քորայրեցւոյ՝ և հօր Նարսղի՝ և ննջե-
„ ցելոց մերոց. որք երկրպագէք քրիստոսընկալ սուրբ
„ Նշանիս զմեզ յաղօթս յիշեսջիք 'ի տէր . յիշօղքդ
„ օրհնիք 'ի տեառնէ . 'ի թուի՝ ՉԴ ॥ (1255) :

123. Ի Հիւսիսակողմեան գաւթին յարեւելեան որմն գրեալ կայ այս արձանագիր .

* Ի Թուիս՝ չԻԹ (1280), յիշխանութեան տեղւոյս
» Սադունին . ես Պածած որդի Լիպարտի և ամուսին
» իմ Գուդայ յազգէ մամիկոնենից, միաբանեցաք սուրբ
» նշանիս Հաղբատայ, և զսուրբ Գրիգոր լուսաւորչին
» որ վկայիւք սուրբ նորա Ձկոյթն առ մեզ էր նախ-
» նեօք . զայն 'ի խնդրոյ եպիսկոպոսիս և միաբանացս
» ընծայեցաք 'ի սուրբ կաթուղիկէս՝ և այլ որդւոցս :
» Տէր Յովհաննէս և միաբանքս սահմանեցին տօն սուրբ
» Գրիգորի ծաղկամուտի շաբաթ օրն, և զշաբաթն և ըզ-
» կիւրակէն զամէն եկեղեցիս պատարագն մեզ առնեն :
» և ետուն մեզ տուն և այգի զինչ եւ միաբանի : կա-
» տարիչքն օրհնին յԱստուծոյ || :

124. Ի Հիւսիսակողմն նորին կայ փոքր եկեղեցի . որոյ յիշատակարանն է անթուական այսպէս .

* Կամաւն աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ար-
» դեամբք Խաթունին, որ էր դուստր Հասանայ յազ-
» գէ դեսոմեանց՝ որ բերաւ 'ի Խաչենոյ, յամուսնու-
» թիւն Զաքարիա, որ տէր Գագայ և Տաւուշ՝ Գարդմա-
» նայ և Տէրունականին և այլոց գաւառաց . ընդ ն-
» րում եկեալ եղբարք իւր Սենեքերիմ և Սևադա՝ և
» փոխեալ 'ի Քրիստոս եդան առ դրան կաթուղիկէիս .
» իսկ Խաթունն վասն յիշատակի նոցա և իւր՝ շինեաց
» զսա, և ետ 'ի սա զսուրբ նշանն ոսկի, որ ունի մա-
» սունս և զաւետարանն մեծածախ և սկիհ արծաթիք,
» և այգի մի 'ի Խաթունաշինի : Եւ ես տէր Յոհաննէս
» և միաբանքս հաղբատայ տուաք սոցա քառասունք մի
» պատարագ 'ի տարւոջն, ով խափանէ դատէ զնա Աս-
» տուած և կատարիչքդ օրհնեսցէ քրիստոս Աստուած
» ամէն || :

125. Ի ձորն հաղբատու յարեւելեան կողմն միով ժամաւ հեռի 'ի գետափն անկեալ կայ խաչքար մի, 'ի մի կողմն գրեալ կայ այս արձանագիր .

* ՇԼԵ Թուին (1086). ես տէր Սարգիս առաջնորդ
» սուրբ ուխտիս Հաղբատայ՝ շինեցի զՋաղացս և արա-
» րի աղատաղաց, արկի և զայգիս՝ տնկեցի և զգրախտս
» զանազան մրգաբերօք 'ի փառս սուրբ նշանին և 'ի
» վայելումն տանս Հաղբատայ : Արդ եթէ ոք զսա 'ի
» Հաղբատայ հանէ կամ աւերման պատճառ լինի 'ի

„ սարակ ժողովուրդք՝ վառեալք զինու պատերազմե-
„ լով ընդ Թաթարացն ձեռնեալ գան 'ի Պալիմ և
„ բնակին 'ի Փեօդօսիայ ||, և այլն. Տես 'ի Ռ.ԷՓԷ
„ (502):

132. Իսկ 'ի վերջին կործանման Անւոյ մի մասն բնակչաց չոգաւ 'ի Սատաւրական աշխարհ, անտի 'ի Պարսկաստան, և անտի յՈւնգերիան. և մի մասն դէպ 'ի Խաղտիս, 'ի Համշէն, և 'ի Տրապիզոն. ուր Յոյն Թագաւորն Սկիր Ալեքսիոս ետ նոցա բնակութիւն և տեղի եկեղեցեաց և վանաց: Տես 'ի Պատմու 127. 144:

Աւրամոր փոխուցեալ կային յառաջադոյն և բազմութիւնք Հայոց, որոց բազմացեալ ունէին Եպիսկոպոս: Յամի տեառն 1342. Անտոնիոս եպիսկոպոս Տրապիզոնի չոգաւ 'ի ժողովն Սսոյ: Իսկ որք մնացին 'ի Համշէն կէս մի աղքատութեամբ տուայտեալ անցին 'ի Տրապիզոն առ առաջին Անեցիս եղեալս անդ. և սփռեցան 'ի գիւղօրէս. կէս մի չոգան 'ի Սիւրմէնէ և 'ի Խուրշունլի, և մնացեալքն դարձան յայլադաւանութիւն: Տեսաք զանազան շինուածս Անեցւոց յերկիրն Պոնտոսի երբ Սքարական իշխանութեամբ, և Առաքելական պաշտօնիւ յայց ելեալ շրջեցաք յախոռիկ կողմանս յամի 1817. ըստ բարձր հրամանաց սրբազան ժողովոյն:

133. Իսկ մեծ մասն Անեցւոց հաւաքեցաւ 'ի Լեհաստան. զի անդադար յամենայն կողմանց անցանէին ընդ ծով 'ի Մոլդաւիա և 'ի Պրուսիա, և անտի 'ի Կալիցիա, 'ի Պոտօլաքի և յայլ Ուքրանիա Լեհաց: Ուր զի ոչ միայն երկիրն է խաղաղ և ըստ իւրոց բարեբեր նման Հայաստանի. այլ և բարք բնակչացն չէ օտար 'ի բարուց նոցա. զորս գտաք օտարասէրս, աստուածասէրս, և բարեբարոյս:

134. Յամի տեառն 1060. Գրեգորիոս դուքս Սալմոր Ռուսաց ինքնագլուխ տիրէր 'ի Կալիցիա. որդի սորա Թէոդոր իբրև լուաւ զքաջութիւն Հայոց ընդդէմ Յունաց և Պարսից, կամեցաւ ունել զնոսա իւրեանց նիզակակից, և տալ բերել զնոսա յերկիր իւր, և օգնութեամբ նոցա պատերազմել ընդ Թագաւորին Լեհաց: Աւասիկ 'ի 1062. առաքեաց առ նոսա հրովարտակ և հրաւիրեաց զնոսա երթալ ընդ նմա 'ի պատե-

րաղմ խառնամաղով նոցա քաղաքն ազատութիւնս ։ Ահա բան հրովարտակին թարգմանեալ ՚ի նախնի ժամանակի ՚ի ռուսէ ՚ի հայ.

* Ահա մեծի դքսի Թէոդորի որդւոյ Դեմետրեայ առ
„ Նաշոխաչեան Հայս. որք աստ կամին գալ ։ Տնկեցից
„ յաջողութիւն ինձ ։ Եւ ես տաց ձեզ ազատութիւն
„ ընդ ամս երիս ։ Եւ յորժամ լինիցիք տախս, ուր և
„ հաձեսցի որ եղիցէ ազատորէն ։ Յամի 1062 Ա ։

135. Զայս հրովարտակ հաստատեաց է. Վլատիս-լաւոս արքայն Լեհաց ընդարձակ հրովարտակաւ իւրով. զոր ետ Լըվովցի Հայոց յամի տեառն 1641 ։ Յորմէ յայտ է թէ Հայք անցին ՚ի Լեհաստան նախ յամի տեառն 1062 յորդորմամբ դքսին Դեմետրեայ և բնակեցան ՚ի Կիով. զի անդ էր յայնժամ աթոռ դքսին. ուրանօր գոյ և քարաշէն եկեղեցի Հայոց, այլ չէք անդ Հայ ։

Ապա այնուհետև որչափ առաւել թշուառացաւ Հայաստան և Շիրակ գաւառ, այնչափ առաւել դիմեցին Հայք ՚ի Լեհաստան. որք էին 40 հազար տունք ըստ Ջահկեցւոյն ։ Որք ստուգութեամբ պատմեցին մեզ, թէ Անեցիք այնչափ զօրացան ՚ի Լեհաստան, մինչև Լեհցիք երկուցեալ ՚ի նոցանէ կարևուսին զազօւմս խաբէութեամբ ՚ի պատերազմի անդ, զի մի բանացեալ տիրեսցեն քաղաքաց նոցա ։

136. Ըստ՝ նախաժողման Անեցիք չոգան ՚ի պատերազմ ընդ Դեմետր դքսին. և մեծաւ քաջութեամբ կատարեալ զպատերազմն պատուեցան ՚ի նմանէ. և ոչ իսկ այնուհետև դարձան ՚ի Հայաստան. այլ բազումք մնացին ՚ի զինուորութեան. և քաջութեամբ իւրեանց եղեն ազնուականք, և առացան զմեծամեծ կալուածս. զորս մինչև ցայժմ ժառանգեն յաջորդք իւրեանց. մանաւանդ ՚ի մէջ Լիդուանիոյ, որք այժմ Լեհացեալ են, միայն պահեն զանուն տոհմի իւրեանց. զօրօրինակ Դորիգորովիչ, Մալխասովսքի, Լուրիձանք, և այլն ։ Իշխան ոմն Մալխասովսքի այնչափ փառաւորեցաւ, մինչև եղև երկրորդ՝ արքային Լեհաց ։

137. Իսկ մեծ մասն այսր ժողովրդեան անձնատուր եղեն վաճառականութեան, և ըստ յարմարութեան բնութեան իւրեանց ՚ի յոլով քաղաքս ծաղկեցուցին զվաճառականութիւն, և յամենայն տեղիս եղեն պատ

ճառ մեծի շնորհութեանն ; որում և ճոխացան բազմապա-տիկ մատենագրութիք Թագաւորաց , որպէս տեսանք ։ Այլ ևս առաւել զօրացեալ գրաւեցին զանոր վա-ճառականութեան Լեհաց . և այնչափ փարթամացան . զի երբ Է Վլադիսլաւոս խնդրեաց փոխ հարիւր հա-զար դահեկան 'ի Բեռնարդոսէ հայ վաճառականէ . նա եհարց , թէ զի՞նչ տեսակ դրամոց խնդրես , ոսկի՞ , արծա՞թ , եթէ պղինձ ։ Թագաւորն առ 'ի փորձել զնա ասաց յերից տեսակաց ես ։ Եւ նա անդէն առաքեաց յերից տեսակաց ևս ։ Ընդ որ զարմացեալ յոյժ ար-քային այնուհետև 'ի մեծագոյն համարի ունէր զազգն մեր . որ այնչափ շահաբեր էր տէրութեան ։

Առ Լվովցիս , որպէս և առ Տրապիզոնցիս զատ ազգաբանութիւն գրեալ յԱնի , որպէս պատմեցին ծերք ։ Ստանիսլաւացի ծեր ոմն պատմեաց թէ տունն Թորոսովիչի ունէր թուղթ գրեալ յԱնի . զոր էառ փեսայն իւր Յատուրովիչ . զայս թուղթ 'ի բազում քաղաքս Լեհաստանի որոնեցաք , այլ ոչ կարացաք գտանել ։

138. Յամի տեառն 1183. Անեցիք զօրավ տիրեալք 'ի Լեհաստան՝ շինեցին զայլևայլ եկեղեցիս յԼւով 'ի Լիդուանիա , 'ի Կամենից , 'ի Լուցկա , և յայլ տե-ղիս . նաև առին հրովարտակօք զայլևայլ ազատու-թիւնս և արտօնութիւնս . կառուցին դատարանս , ե-դին զազգապետ Վոյթ անուամբ . և 12 դատաւորս դա-տել ինքնագլուխ զազգն Հայոց . ևս և 40 հոգաբար-ձու երեցս . այսպէս ազատ կային յամենայն քաղաքս , որպէս ունիմք պատմել (189) ։

Այս իրաւունք հաստատեցաւ 'ի Կամենից յամի տեառն 1344. և յԼւով 'ի 1356. հրովարտակաւ Կա-զիմիրի արքային , որպէս տեսաք ։ Որք և 'ի բազում ժամանակս վարէին զօրէնս Յովհաննու Բագրատունի Թագաւորին , զոր յետոյ թարգմանեցին 'ի լատին . և կայ մինչև ցայժմ ։

139. Այս Անեցիք այսպէս զօրացան 'ի Լեհաստան և փարթամացան յոյժ . որ և այնչափ մեծ պատիւ ու-նէին առաջի տէրութեան Լեհաց , մինչև համարէին ազնուական ազգ նախապատիւ ։ Նորին աղագաւ մնա-ցորդք Հայոց 'ի Թաթարստան նեղեալք 'ի Թաթա-րաց՝ գունդ կազմեցին ելին բազմութեամբ անտի դի-

մեզքն 'ի Լեհաստան և բնակեցան նախ՝ յընդարձակ դաշտին՝ որ մինչև ցայժմ կոչի Օրմեանէ ։ Այս փոխադրութիւն նոցա եղեալ է զկնի Թուականին 1500. որպէս տեսանի 'ի գրուածս նոցա. որոց լեզու յայնժամ գլխովին փոխեալ էր 'ի լեզու Թաթարաց ։ Եւ որովհետև բազմութիւն 'ի միասին չոքեալ անդ, և զայլ լեզու ոչ գիտէին, նմին իրի և Հայք Լեհաստանու հետևելով նոցա սկսան խօսիլ և գրել Թաթարերէն ։ Մինչ զի՝ այն եղև հասարակ լեզու Անեցւոց. զոր վարէին ոչ միայն 'ի դատաստանական գրուածս, այլ և յեկեղեցականս. քանզի բնական է ազգիս զիւրն արհամարհել և զօտարն ընդգրկել ։ Որոց պարտ էր հետևիլ քաղաքավարութեան, իմաստութեան, ազգասիրութեան և բարեպաշտութեան այլոց ազգաց, և ոչ լեզուին և սովորութեան ։

140. Գտաք զյիշատակագիրս դատարանաց՝ բոլորգրով գրեալս սկսեալ 'ի Թուականէն Հայոց ՋԺԲ (1463). Փետրվարի ԻԶ այսպէս ։

* Մենք տանուտէրքն առաջ պ̄ր Մոյթ Խաչատուր.
„ պ̄ր Սիկօլ, երեսփոխան պ̄ր Յոհաննէս, Թաւդին պ̄ր
„ Մուսէս. պ̄ր Գրիգոր շայ Մարդեքին որդի. պ̄ր Փոխ-
„ նոյ, պ̄ր Անտոնիկն. պ̄ր Խաչիկն Ավանեսին. պ̄ր Օլու-
„ խոճայ, երէկ մեր առջևս պ̄ր Մոյթ Ավանէս, դուստր
„ Եղիսաբէթն, պ̄ր Յակոբին կողակիցն Է որդով. մեծ որ-
„ դուն անուն Եւաշբ. երկուս Ստեցքօ. Է ունն Թու-
„ ման. խրեր տվլին իրենց յաւժար կամաւն ինչ որ մնա-
„ ցեալ էր մեր հաւրէն պ̄ր Յակոբէն, հեմ մեր մօրն
„ Աղտկամ Կումաշ... Է տղլին ու մօրս ռ̄ քարհէտուն.
„ ռ̄ քարհէխանուն... Է բաժին անենք ռ̄ բաժին տանք
„ մեր մօրն, ու ռ̄ ռ̄ բաժին մենք առնունք ‖. և այլն ։

141. Այս յիշատակագիրք հայերէն ժամանէ մինչև 'ի Թուական ՋԿ Մարտի ԺԲ. այնուհետև սկսանի Թաթարերէն. զօրօրինակ.

* 'Ի Թվին ՋԿ Աւգոստի ԻԲ (1521) ։

„ Ի Պոլուբէտի եօլտայ վինայտան քելկանտայ քի
„ քօստայ լազար մ̈լքոյկայ, եամման տօղլարայ դիբետի
„ խաչան քելտիլար քերմանկայ եիղտի լազար քեդ-
„ քոյէտյլարնի տայ կիւլեյ էդի քօսղայնիյ ուստունայ ‖
և այլն ։ Եւ այսպէս վերջանայ այս գիրք Թաթարերէն մինչև ցԹուական ՌԺԳ (1564) ։ Իսկ դատաստանագիրք

և հաշուեպքը Կամենիցի յառաջ երթան Թաթարե-րէն (247)։ Նշմարի յիշատակարանն սկսանի Թաթա-րերէն յամի տեառն 1630, և հասանէ մինչև ցամն 1642. այնուհետև խառնին բազում բառք լատինացւոց և Լեհաց. զորօրինակ.

* Anno 1642 — Անայ 20 Novebri.

» Պէրմին օսբրամիրդամ պօլկան բըրբօտաննեա Պնեա-
» զամէնոզա հօ Սուրեատկա Ժօլքվատա ճն Նուեոկըպէ
» Երէցփոխան Պէրնաթովիցնինէ ‖ և այլն։

142. Ահա այսպէս լեզու Անեցւոց առ սակաւ սա-կաւ փոփոխելով եկն այժմ հասարակ լեզու նոցա Լե-հերէն. մինչ զի սակաւ ոմանք իմանան զազգային լեզու իւրեանց. Թէպէտ եկեղեցականք հայերէն վերծանեն և կատարեն զխորհուրդս առանց քաջ իմանալոյ զմիտս բանին։

Տեսաք զԹարգմանեալ ժամագիրս և զսաղմոս Թա-Թարերէն գրեալ 270 ամօք յառաջ. ևս և Նարեկ. Թուղթս Պօղոսի. որ ունի զայսպիսի իմն յիշատակարան.

* Պուրկայլըանտի պօղոս առաքելընըն պիտիրտէ Թարգ-
» մանել պօլկան էրմէնի դիլինտան խըբչախ դիլինայ.
» խօլուպլայ եազըխլըյ տայարսանեսիզ միքայէլ քահա-
» նայնընկ գօսդայ օղլունունկ խօլչխայմնտան. բան
» իւաշքոնունկ. բան միքլաշ օղլունունկ խայնիքի պու-
» նի եազդըըրտըյ... Եազըլտըյ իլով շահարինայ. գօլէ-
» կսյանա սուրբ Աստուածածիննինկ. կԹպլուխունայ
» տէր սղեփաննոսունկ ախբաշլըխընայ. տէր Գրիգոր ար-
» հիախբաշնինկ խանլըյ երեսփոխնինայ պր̄ Օհաս. ա-
» դապէյ օղլու տայ պր̄ Հրիհոր բան աւհան օղլունուն.
» կ. Թվ. ուժա ‖ (1562)։

143. Տեսաք նաև զաղօթագիրս և քրիստոնէական վարդապետութիւն Թաթարերէն. ուր գրեալ կայր և Թուղթ դաւանութեան Շնորհալւոյն, տասնաբանեայ պատուիրանք, հաւատամք, և այլն։ Այսպէս սկսանի Հայրմերն * Աթամըզ պիզիմ քի գօգտա սէն. Արի
» պօլսուն ադընկ սէնինկ. քէլսին խանլըխընկ սէնինկ.
» պօլսուն էրքինկ սէնինկ ‖. և այլն։ Այսպէս և Հաւա-տամքն * Ինանըր պիզ պիր Թէնկրիկայ. Աթակայ
» պարչանը դուդուչիկայ. եառաթուչիսինայ՝ գօգ-
» նունկ տա էրնինկ, գօրունկանլարնէ, տա գօրունմա-
» կանլարնը ‖. և այլն։ Իսկ Նորաստեղծեալն. * Իան

„ կի՛մ եառադդըմ սօզու Թէնկրինինկ Տիրլիքդան . աւալ
„ դօղմուշ դօղմուշնունկ . ասա դօդդրակի՛ չէրուվլարնըմ Թէնկ-
„ սիզ անիկլօվուչի՛ Փրիշդալարնըմ . ասա ուչմախդ՛ էլէմին
„ դալարնըմ . անէօրդաուն խաբչիլըխդամ պօլկան աէր-
„ լարդըր՝ խայախլարըմ միլմ սայման հայաթլանըըը՝
„ երրորդութիւն այդովուզ ‖ ։

144. Նահա այսպէս էր վիճակ Նոեցւոց յառաջ քան զերկու կամ զերիս դարս . որոց լեզու Թէ և փոխեալ էր, այլ ևս էին ճոխութեամբ . ունէին զայլևայլ պարգևագիրս սակս վաճառաշահութեան . զոր ծաղկեցուցին յամենայն քաղաքս Լեհաց . որպէս տեսցի 'ի կարգին ։ Յետ ժամանակաց բազումք 'ի մնացորդաց Նոեցւոց 'ի Պարսկաստանէ և յայլ տեղեաց հեռահեռաէ անցին 'ի Լեհաստան . և միացեալ ընդ համազգեաց անդրէն սկսան խօսիլ հայերէն . և մինչև ցայժմ 'ի բազում տեղիս պահեցին զիւրեանց լեզու . որպէս տեսաք 'ի Ստանիսլաւ, 'ի Պոխամինց, 'ի Սնեադին, 'ի Գուդեր, 'ի Հօրոտենքա, 'ի Սուչօվ, 'ի Մոհլով, և այլն ։

145. Նոյնպէս Կեռլացի, Պաշպալավցի, և Դոռաճովցի Նոեցիք մաքուր խօսին հայերէն . և 'ի մէջ Մաճառստանու ունին առանձին դատաստան և դատաւորս հանդերձ պարգևագրով . ուրանօր 'ի համարի են առաջին ամենայն ազգաց, և անպակաս իշխանաւոր անձինք, և վաճառականք ։ Արտաբերութիւն սոցա և եղանակ խօսից ոչ շատ տարբերին յարտաբերութենէ Տրապիզոնցւոց, որք են մնացորդք նոցա (324) ։ Բայց սաստիկ է հնչումն՝ և Թանձր լեզու Մաճառստանցւոց ։

146. Գրեթէ յամենայն երևելի քաղաքս Լեհաց դատաւորին արքունի խորհրդականք յՆոեցւոց անտի . նոյնպէս և եկեղեցականք մեծամեծք են և նախանձելի . սակայն բազումք փոխեալ զծէսս լեհացեալ են ։ Եթէ ոչ լինէր աԹոռ Հայոց Արքեպիսկոպոսութեան Լվովայ, ցարդ բոլորովին փոխեալ էին Նոեցիք . իսկ զի՝ ուր ուրեք նստի հայ ժողովրդապետ, անդ պահի ծէս և յաջորդութիւն Հայոց . և Լեհ քահանայք չեն կարող հովուել զՀայս ։

147. Արքեպիսկոպոսութիւն Հայոց յԼվով՝ յառաջագոյն ընդարձակ էր յոյժ, և հասանէր մինչև ցՄաճառստան, ցՄոլդավիա, և մինչև ցԹաթարստան .

որպէս յայտնի է 'ի մագաղաթեայ կոնդակէ Յովհաննու Արքեպիսկոպոսին . Այլ այժմ միայն հովուէ զժողովուրդ Լեհաստանու 'ի քաղաքին գերմանացւոց . և բաժանի 'ի 16 ժողովրդապետութիւնս : Ուր ամենայն ժողովրդապետք ընտրին յԼվով յԱրքեպիսկոպոսէն , և ըստ կարգադրութեան նորա կառավարեն զվիճակս իւրեանց :

148. Յամի տեառն 1606 . յորժամ Շահաբաս արքայն Պարսից վարեաց 'ի Պարսկաստան զժողովուրդ Հայաստանեայց , բազմութիւնք Հայոց փախեան 'ի Թաթարաստան և 'ի Լեհաստան , և միացեալ ընդ առաջնոյ զօրացան . շինեցին զերևելի եկեղեցիս և զա-կանաւոր շինուածս . որպէս տեսցի 'ի մօտոյ :

149. Բայց որովհետև 'ի սկզբան անդ անմիաբանութեամբ զրկեցան 'ի գեղեցիկ հայրենեաց իւրեանց . Թէպէտ ջան եդին զօրանալ յօտար աշխարհս և յազգս ժողովուրդս . սակայն անհնար էր նոցա հաստատ մնալ և վայելել յազատութեան իւրեանց , զոր ընկալեալ էին յարքայից Լեհաց :

Ուստի յամի տեառն 1795 . երբ անկաւ թագաւորութիւն Լեհաց , Մնացիք ևս կորուսին զազատութիւնս իւրեանց յամենայն տեղիս . այնուհետև սկսան նուաղել , և շատք աղքատացան : Սմին իրի գրէ Մառ-քել պատմագիր ողբալով . * Սոքին վտարանդեալք և „ տարամերժեալք յերկիր օտար և յազգս այլասեռս և „ այլալեզուս . . . և անդէն օր աւուր առ սակաւ սակաւ „ նուաղին մահուամբ և կորստեամբ ‖ :

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՈՐ Է

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՈՒՂԵԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՄԵՐՈՑ

150. Սանն բոլորելոյ զպատմութիւն ուղեգնացութեան մերոյ հարկաւորեցաք դնել նախ զհարկաւոր գիտելիս 'ի վերայ Անւոյ և Անեցւոց. այսուհետև ժամ է մեզ բուռն հարկանել զստորագրութենէ երևելի քաղաքաց՝ ընդ որս դէպ եղև մեզ անցանել։ Այլ մանաւանդ գիտէ պատմութիւնս ստորագրել զայն քաղաքս, յորս բնակին ազգայինք մեր՝ ծագմամբ Անեցիք. որոց ցրուեալ գոլով յայլևայլ աշխարհս՝ 'ի ձեռն դիպաւ մեզ կրկին անգամ յայց ելանել. նախ՝ անցանելով 'ի 1808. ընդ Մաճառստան, ընդ Մոլտավիա, և ընդ Պուլղարիա. երկրորդ՝ 'ի 1820. ընդ Գերմանիա, ընդ Լեհաստան, և ընդ փոքր Թաթարստան, կամ ընդ Նոր Ռուսիա. զայս կրկին ուղեգնացութիւնս 'ի մի լծակցեալ ստորագրեմք ըստ կարգի։ Սակայն ուր ուրեք ոչ գտանեմք զհաստատուն բնակութիւնս Հայոց, հարևանցի անցանեմք. և ուր տեսանեմք զՀայս զորս համարիմք սերունդս Անեցւոց. զնոյն առեալ մատչիմք 'ի քննութիւն պատմութեանց և հին շինուածոց։ Այլ քանզի Անեցիք փախուցեալք ոչ միայն 'ի Լեհաստան, այլ և 'ի Նոր Ռուսիա, կամ 'ի Խրիմ բազում շինութիւնս արարին. սորին վասն անձամբ խուզեալ զամենայն տեղիս այսր Թերակղզւոյ՝ ստորագրեմք աշխարհագրական տեղեկութեամբք (384)

151. Յամի տեառն 1820. Մայիսի 13. ելեալ 'ի Չնաշխարհիկ մայրաքաղաքէն Վենետկոյ, 'ի մեծահռչակ

վանաց սրբոյն Ղազարու ուղղեցաք զընթացս մեր 'ի Մեստրա աւան բարեշէնք և գեղազուարճ : Անտի անցեալ ընդ գաւառն Տրեվիզոյ տեսաք զանուանի Հին մայրաքաղաքն Տրեվիզոյ բազմամարդ և լի երևելի շինուածովք եկեղեցեաց մենաստանից և դպրոցաց : Անտի անցեալ ընդ զանազան քաղաքս և աւանս բարեշէնս նահանգին Փռիուլի հասաք 'ի Լուպլիանայ մայրաքաղաք Կառնիոլայ նահանգին, որ և կոչի Լայպախ. քաղաք գեղեցիկ յոյժ և շինանիստ : Ուղևորեալ անտի հասաք 'ի Կրաց մայրաքաղաք Շտեիրիոյ նահանգին Գերմանիոյ, բազմամարդ, մեծ և բազմավաճառ առ Մուր գետովն, յորոյ վերայ է մեծ կամուրջն կրպակաւոր վաճառատեղի : Ուրանոր տեսաք բերդ հզօր 'ի վերայ բարձրաւանդակ սարի. բազում են 'ի նմա երևելի եկեղեցիք, մենաստանք, պալատք մեծամեծաց, և գործարանք զանազան արուեստից : Ելեալ անտի յառաջին ուղեգնացութեան մերում չուեցաք 'ի Մաճառաստան ընդ գետս Մուր, Տրավա, Սավա, և Դանուբ, և շրջեալ ընդ զանազան նահանգս Մաճառաստանու, Սլաւոնիոյ, և Կուրվաթիոյ գաղթարեցաք 'ի Կոստանդինուպօլիս : Այս 'ի 1820. ապրիլ 26. անդրէն հանգիպեալ 'ի նոյն քաղաք Կրաց, ուղղեցաք զընթացս մեր 'ի Վիեննա, և հեռացեալ 'ի Կրացէ 104 մղոնաւ հասաք 'ի նոյն մեծ և ճոխ մայրաքաղաք բոլոր Գերմանիոյ :

152. Կայսերանիստ քաղաքն Վիեննա բաժանի 'ի 4 թաղս, որք են Շոտըն Քիրթէլ. Վիտմէր Քիրթէլ. Շտուպըն Քիրթէլ. Քէրնթնէր Քիրթէլ. և ունի զբոսնս 10. արտաքսաւորքն են՝ Լէոփոլտշտատ. Պաւմկարթըն. Յոզէֆշտատ. Շոտընֆէլտ. Շտրոզէնկրունտ. Ալզէրփօրշթատ. ունի նաև փողոցս 80, և հրապարակս 20. գլխաւորքն են՝ Կրապէն. Հօֆ. ուր գոն երկու վիմածաղ շատրուանք և 'ի մէջն պղնձի սիւն. 'ի գլուխն արձան Երրորդութեան պղնձաձոյլ. Ֆրայունգ. ուր են ապարանք. Նոյմարկ, ուր գոյ շատրուան. Կրապէն, ուր կայ սիւն և մահարձան Երրորդութեան. Հօֆէն մարկ. ուր գոն կրկին շատրուանք և արձան Երրորդութեան և սրբոյն Յովսեփայ. Փրայունկ. Լոպքովից: Որ թէ յամենայն հրապարակս անդ պակաս են երևելի շինուածք, եկեղեցիք, արձանք, և շատրուանք : Մեծագործ և ականաւոր է ե-

կեղեցին սրբոյն Ստեփաննոսի արքեպիսկոպոսանիստ արքայաշէն և հոյակապ. բովանդակ 'ի կոփածոյ վէմաց, և զարդարեալ պէսպէս դրուագօք նկարուց և արտաքոյ. ունի խորանս 37 մարմարիոնեայս. թաղեալ են 'ի նմա երևելի դամբարանք կայսերաշէնք. զանգակատունն է 'ի կոփածոյ քարանց՝ վերուստ 'ի վայր գեղեցիկ դրուագեալ սեամբք և բրգօք. բարձր 460 ոտնաչափ։

Երևելի է և մեծամեծն ժողովրդապետական եկեղեցի սրբոյն Պետրոսի. յորում են մեծագործ դամբարանք կայսերաց և դքսից։ Փառաւոր են և արքունիք ուր գոյ մեծ գրատուն բազմամատենեան, և հանդիսարանք բնական պատմութեան, և բնաբանութեան։ Նշանաւոր են համալսարանք քաղաքիս ուսումնականութեան փիլիսոփայութեան և այլ գիտութեանց. Ճեմարանք ազատական արուեստից, դպրոցք 'ի ծնել խլից և համրից, մեծաշէն պանդոկք, անկելանոցք, և պալատք մեծամեծաց, այլովքն հանդերձ։

153. Շուրջանակի ունի մեծամեծ արուարձանս 23. թուով. գլխաւորքն կոչին Լէօփօլդշդադ. մեծ քան զբուն քաղաքն, յորում անցանէ 'ի ձեռն Դանուբայ գետոյ. յորոյ վերայ է փառաւոր կամուրջ, զոր նորոգ կառուցին յաւուրս մեր։ Նոյն է մեծ պարտէզն արքունի Աւկարդէն կոչեցեալ գեղեցկատեսիլ և զուարճալի. Ռօսաու, ուր է գործարան յախճապակեայ ամանոց. Վափնէր-չաուզէն. Ալդէրշդադ. Յօզէֆշդադ. Մարիահիլֆ. Վիէդէն, ուր է փառաւոր եկեղեցի սրբոյն Կարոլոսի. Ռէնըվէգ. ուր է պարտէզն Պէլվէտէրէ. Լանդշդրասէ. Էրտպէրգ։

Նշանաւոր է գեղեցկաշէն եկեղեցին և վանք [illegible] միաբանից յՅօզէֆշդադ արուարձանի, զոր շնորհեաց Կայսր Ֆրանչիսկոս միաբանից Հայոց եկաւորելոց 'ի Տրիեստէ յամին 1810. ուր գոյ դպրոց Հայ վանականաց, գրատուն, և տպարան այլովքն հանդերձ։ Արտաքոյ քաղաքին են գեղապատուարժան ամարանոց և ապարանք Կայսեր կառուցեալք 'ի Շէօնպրունն անուանի պարտիզին. ուր տեսանք գեղեցիկ ջրագարձս, մայրիս ծառախիտս, լաբիւրինթոս, շատրուանս, ծովակս շրջապատեալս 'ի կոփածոյ քարանց, վանդակս ուսեալս կենդանեաց Ափրիկոյ և Ամերիկոյ այլովքն հանդերձ։

154. Յետ աւուրց ինչ եկեալ 'ի Վիեննայէ հասաք 'ի նահանգն Մօռավիա, և անդի 'ի գեղեցիկ և 'ի բազմամարդ քաղաքն Պռին. յոր տեսաք զերևելի եկեղեցիս և մենաստանս։ Յեկեղեցին Օգոստինեանց գոյ հրաշագործ պատկեր Տիրամօրն նկարեալ՝ ասեն 'ի ձեռացն Ղուկայ. անդ է աթոռ գաւառապետ իշխանին և խորհրդարան ժողովոյն։ Ապա հասաք 'ի մեծ բերդաքաղաքն Օլմից, որ է առաջին Թագաւորական քաղաք Մօռավիոյ և ամուր բերդ, անառիկ շրջապատեալ 'ի Մօռավիայ գետոյն. ուր նստի Արքեպիսկոպոս. և է այժմ Ռոտոլֆօս կարդինալ եղբայր կայսեր Ֆրանչիսկոսի։ Այս հոյակապ և բազմամարդ քաղաք բաց 'ի մայր եկեղեցւոյն ունի 12 եկեղեցիս քաղաքին, և 5 մենաստանս, բազում անկելանոցս, փառաւոր համալսարան ուսումնականաց՝ Ընծայից կոչեցելոց, և զերևելի դպրոցս, և ապարանս։

155. Յետ անցանել ընդ գեղեցիկ դաշտս և ընդ զանազան քաղաքս նահանգաց՝ հուսկ յետոյ հասաք 'ի Լէհաստան և 'ի Կալիցիա, որ կոչի Կարմիր ռուսիա, և ունէր յառաջագոյն ինքնագլուխ դուքս. այլ 'ի 1340. միացաւ ընդ Լեհաստանու յաղթողէն Գազիմիրայ։

ՀԱՅԿԱԶՈՒՆՔ ԼԵՀԱՍՏԱՆՈՒ, ՈՐՔ ԵՆ ՍԵՐՈՒՆԴՔ ՀԻՆ ԱՆԵՑՈՑ

156. Որք՝ ունին յայս աշխարհ Լեհաստանու գիւտս զԱնեցիս, մեք 'ի սկզբան անդ դիմեցին աստ և հետզհետէ բազմացան և ծաւալեցան 'ի մայրաքաղաք նահանգիս Լվով, ուրանոր շինեցին զականաւոր շինուածս, և հաստատեցին զաթոռ եպիսկոպոսութեան աթոռոյն ինքեանց ունելով քաղաք փոխանակ Անւոյ։

Առաջին առաջադրեալ կամք եղև մեզ նախ և յառաջ յայս քաղաք գիտել հետազօտել զանցս հայկազանց սերելոց 'ի յԱնեցւոց, և ապա ակնարկ առնել պատմութեան և ապա անցանել յայլևայլ քաղաքս Կալիցիոյ, Լեհաստանու, և Պուքովինայի, և ապա դառնալ 'ի կարգն զարմապատմութեան անեցւոց Մոլտաւիտանու, Մոլտաւիոյ, և Արդ ուսեալ ընդ Թաթարաստանու, և ընդ Ռուսաստանու։

157. Այս հռչակաւոր մայրաքաղաք համօրէն Գալի-ցիոյ Լեօպօլ կոչեցեալ, կամ Լով գերմ. Լեմբերգ, շինեալ եղև 'ի Լեօ կամ 'ի Լևոն դքսէ յորդւոյ Դա-նիէլի դքսին։ Որով և կոչեցաւ քաղաք Լեօնի. քա-ղաքս գրեալ կայ 'ի միջի լեռնաբերձին, որ զատու. ըստ հաշուով 60 ամաց յառաջ, զայս օրինակ * Դուքսն Լևոն » Հիմունս եարկ իմն, և յետնորդք ետուն անուն Լեօ-» պօլիս »։ Ընդունելութիւն սորա յառաջ համարի քան զզննալըն անոր Հայոց, բայց ծաղկեցաւ 'ի նմին ժամա-նակի. վասն զի որպէս գուշակեցաք 'ի հին շինուածոց և յարձանագրաց անտի, դուքսն Լևոնար որդի Դի-մետրեայ հրաւիրեաց զՀայս ոչ միայն օգնական լինել նմա 'ի պատերազմի, այլ և 'ի շինել և ծաղկեցուցանել զքաղաքս. սորին վասն ետ նոցա զախչափ ազատու-թիւնս և զգեղեցիկ վայրս քաղաքին։ Ոքք 'ի 1183 շի-նեցին զեկեղեցի մի փայտաշէն վասն իւրեանց, որպէս ա-ռուամ ցուցանէ յիշատակարանն. բայց թէպէտ թէ և յա-ռաջ ունէին զայլ եկեղեցի։

158. Այս քաղաք է գեղեցիկ և զարդարուն, մեծ և փառաւոր աթոռանիստ մեծի կուսակալութեան գերմանացւոց. առ որով անցանէ Պէլտէվ գետակ. և բաժանէ զքաղաքն յարուարձանէն։ Այր զան պայծառ եկեղեցիք, հռչակաւոր համալսարանք և դպրոցք, ու-սումնարանք ազատական արուեստից, երեք արքեպիս-կոպոսարանք և զանազան շինուածք և ապարանք։

Բայց 'ի Լուսակալ մեծ իշխանէն նորին անուն երեք Արքեպիսկոպոսք Լատին, Հայ, և Ռութէն, անկախք յիրերաց։ Առանձնակ է իշխանութիւն Լատին Ար-քեպիսկոպոսին. իսկ Ռութէն Արքեպիսկոպոսն Ռու-սաց նստի 'ի ծայր արուարձանին 'ի վերայ գեղեցիկ բլրոյ յեկեղեցի վանաց սրբոյն Գէորգայ, որոյ եկեղեցին է փառաւոր և զմրմաթաշար։ Արքունար աւագ դպրոց կամ ուսումնարան, յորում ուսուցանեն զեկեղեցիկոս իւրեանց կամ զկրօնաւորս ըստ ծիսի Ռուսաց։

159. Աչքաւոր է մեծութեամբ և հնութեամբ մայր եկեղեցին Լատինացւոց կամ Լեհաց առ երի մեծի

ունէին զերիս եկեղեցիս, և վանատունս, որպէս յիշատակի 'ի կոնդակին Փիլիպպոսի կաթուղիկոսին. այժմ մի միայն մնացեալ է, և հազիւ գտանին անդ 100 տունք Հայոց, յորոց մեծամեծք 'ի գիւղօրէս իւրեանց բնակին:

Վանք Հայոց:

164. Մեծահռչակ և բարեշէն է վանատուն Հայոց ընդ բոլոր Լեհաստան սակս բարեկարգութեան և ուսումնական անձանց. որ յառաջ կոչէր Հաճկատար Ածածին, կառուցեալ 'ի քաղաքամիջի անդ մերձ 'ի մեծ հրապարակն. և Թաղն կոչի Օրմեանսկի ուլիցա, այսինքն Հայոց փողոց: Այժմեան բնակիչք վանատանս են քահանայք և կանոնիկոսք Արքեպիսկոպոսին, որք անուանի են յոյժ և 'ի պատուի սակս գիտնականութեան իւրեանց. մինչ զի լատին Արքեպիսկոպոսք մեծամեծ պարգևօք առնուն զոմանս 'ի նոցանէ, և կացուցանեն ժողովրդապետ 'ի վերայ Լեհաց. որպէս եղեն յաւուրս մեր իմաստուն կանոնիկոսք Զախարևիչ, Մարքամօրուշ և այլք (201). որք էին դասատուք համալսարանին:

Այս վանք շինեալ 'ի միջոցի երկուց մեծամեծ փողոցաց, ունի առանձին դուռն և փողոց հասարակաց. ընդ որ ժողովուրդք քաղաքին անցանեն փողոցէ 'ի փողոց. որ և բաժանի 'ի չորս մասունս. ա̄ Եպիսկոպոսարան. բ̄ Կանոնիկոսարան. գ̄ Կուսաստան. դ̄ Եկեղեցի:

Եպիսկոպոսարան.

165. Արդ՝ եպիսկոպոսարանն կառուցեալ է յարևելեան կողմն 'ի վերայ վերին փողոցի, բարձր և գեղեցիկ 'ի զանազան սենեակս բաժանեալ. ունի զառանձին մատուռն և փոքրիկ գրատուն հանդերձ գեղեցիկ և զարդարուն սրահիւն՝ ուր տեսաք գեղեցիկ նկարս և զկենդանագիրս Արքեպիսկոպոսաց Հայոց: Առաջի եպիսկոպոսարանին 'ի սալայատակ բակի անդ կանգնեալ կայ քարեայ սիւն ըստ բարձրութեան շինուածոյն, և 'ի վերայ սեանն կանգնեալ մեծ քարեայ արձան

Քրիստափորի վկային բարձեալ զմանուկն յուս իւր·
՚Ի վերայ ներքնախարսխին գոյ արձանագիր լատիներէն·
* ՚Ի փառս սրբոյ Երրորդութեան զայս եկեղեցի և
„ վանս նորոգեաց պատուելի Պարոն Խաչիկն Ս․ կռուա
„ տօնօվլիչ կառավար և մեծաւոր Հայաստանցի ՚ի 1716·
„ յաւուր սրբոյ Խաչին ||։ ՚Ի յատակ տեղւոյս երևին
մեծամեծ վէմք գերեզմանաց փորագրեալք լատին և
հայ գրով․ բայց ոչ գտաք հնութիւն։

166․ Առ երբ այսր սեան գոյր ՚ի հնումն Լուսաղ-
բիւր շինեալ ընդ եկեղեցւոյն, որպէս աւանդութիւն է
ազգիս (Պետրոս 127)․ այլ զկնի ժամանակաց կործա-
նեցաւ․ և զսեւագոյն վէմս գտաք եդեալ ՚ի մէջ որմոյ
զանգակատան․ բազում դժուարութեամբ ընթերցաք
զյիշատակարան երկաթագիր այսպէս․ * ՚Ի Թվ̃ութե
„ Վլադիմիր Վռուլի շինեցին հայ աղբարքն զաղբիւր
„ մի Թվ․ ՉԺԳ || (1264)։

՚Ի ներքոյ եպիսկոպոսարանին դէպ ՚ի վերին փողոցն
էր դատարան Հայոց, որ յառաջ էր յառանձին Թա-
ղի և կոչէր Սոպոռչ․ այլ ՚ի վերջին ժամանակս աստ
վճարէին զամենայն դատս։ Իսկ ՚ի բառնալ տէրու-
թեան Լեհաց բարձաւ և դատաւորութիւն Հայոց․
սակայն տակաւին իշխանք աստ ՚ի խորհուրդ մտանէին
կարգելով զայն ինքեանց խորհրդարան, և այժմ է
տպարան գրոց Լեհաց և գերմանացւոց։

167․ Իսկ Հայոց տպարանն հաստատեցաւ յԼվով
՚ի վաղուց վասն տպագրելոյ զգրեանս Հայոց։ Յամի
Տեառն 1616․ շինեցին ՚ի մի կողմն վանից տպարան, և
տպագրեցին զբժշկական և զաղթարական գիրս․ յա-
ռաջ քան զայնս տպագրեցին զՍաղմոս, որոյ յիշատա-
կարան այսպէս պատմէ․

* Ամենակարող զօրութն Ա․Յ կազմեցաւ նոր տպա-
„ գիրս երկիրն Իլախաց քաղաքս Լէվ կոչեցեալ, ընդ
„ հովանեաւ նշման սուրբ Ածածնին ձեռամբ յոքնա-
„ մեղ քարմատանեէնց Յովանէս երիցուս, զոր հօգս
„ արեալ մեծաւ աշխատութբ և բազում ծախիւք տա-
„ րի մի բոլոր արուեստաւորաց հետ դատեցայ մինչև
„ գիրն ՚ի գլուխ հանի և նոր կաղմարան սահմանեցի․
„ և վասն փորձի նախ զերգսն Դաւթի մարգարէին
„ տպագրեցի ՚ի յօգուտ և ՚ի շահ ա̃ծասէր աղօթողաց
„ մեր ասեն ազանց․․․ Արդ՝ եղև զրաւ սորին Թվա-

„ կանութեան Հայոց ՌԿԵ ամին . յամսեանն Դեկտեմ-
„ բերի ԺԵ և 'ի Տեառն 1616 ամի . . . 'ի Թագաւորու-
„ թեանն Քրիստոնէից Լեհ ազգին բարեպաշտ ար-
„ քային երրորդ Զիկմունտին ‖ . և այլն : Իսկ 'ի 1705 տպագրեցին Սաղմոս մի Թաթարերէն :

Կանոնիկոսարան .

168 . Կանոնիկոսարանն է բնակարան Նախապատուի քահանայից, պարսպապատ բարձր և քարաշէն, բաժանեալ յերկուս շինուածս . ստորին մասն եռայարկ կառուցեալ է 'ի վերայ ստորին փողոցի :

Աստ է գրատունն բազում գրչագիր և տպագրեալ մատենից Հայոց և այլոց ազգաց . ուրանօր յանձնեցաւ մեզ ամսօրեայ ժամանակաւ խուզել զգրչագիր մատեանս, յորս գտաք զերիս անգիւտ մատեանս, և ընկալաք 'ի պարգեւ մասին 'ի յաւերժական յիշատակ ուխտիս սրբոյն Ղազարու 'ի Վենետիկ . Ա Ճառք Փիլոնի իմաստասիրի գրեալ 'ի վերայ մագաղաթի սակս Բ Հեթմոյ Թագաւորին Հայոց . զայս գործ թարգմանեալ 'ի լատին ըստ մասնեայ տպագրեցաք Հյ . Լտ . յամի 1822 . և զառաւելագոյն մասն 'ի 1826 : Բ Հին Թարգմանութիւն Դիոնեսիոսի արիսպագացւոյն ընտիր և անթերի : Գ Մեկնութիւն Կաթուղիկեայց Սարգսի Շնորհալւոյն մեծադիր և անսխալ . թող զայլս : Աստ է և գանձատունն քարաշէն ամրափակեալ կրկին դրամբք, որոյ վերակացու է մի 'ի Նախապատուի կանոնիկոսաց, ուր գոյր յառաջն գլուխ դրամոց 30 հազար ոսկի, այլ այժմ հազիւ լինի 3 հազար՝ որ բերէ զշահ սակս ողորմութեան պատարագի : Աստ ըստ օրինաց տեղւոյն ամ ըստ ամէ լինի աճուրդ . իբր զի՝ երբ փոխառուք 'ի պայմանեալ ժամանակին չկարեն վճարել, հրատարակեն 'ի քաղաքի, և ամենեքեան անդ հաւաքեալ գնեն զաւանդս պարտապանաց և վճարին պարտք . իսկ եթէ առաւելուցու քան զփոխն, դարձուցանեն առ տէրն :

Կուսաստան.

169. Կուսաստանն է առանձին մենաստան հայ կուսանաց որոշեալ պարսպօք, քարաշէն և կրկնայարկ, այլ ոչ այնչափ ընդարձակ, թէպէտ ունի բաւական սենեակս. մի կողմն մենաստանիս է 'ի վերայ միւս փողոցի, և միւս կողմն հայի դէպ յեկեղեցին: Ունի և առանձին մատուռն կամ վերնատուն, ուր հաւաքեալ կուսանք ընդ մայրապետին իւրեանց կատարեն ձայնիւ զժամերգութիւնս հայերէն, երգելով զերգս շարականաց և ժամագրոց: Ներքին մասն հասանէ ցվերնատուն եկեղեցւոյն. ուստի կուսանք տեսանեն զպատարագ, և 'ի հանդիսաւոր տօնս երգեն:

Մտեալ մեր յայս մենաստան տեսաք զօրինակս կուսանաց զարդարեալս պատկերօք սրբոց և հոգևոր զարդուք. ամենեքեան պարտին լինել Հայ, և գիտեն քաջ ընթեռնուլ հայերէն. այլ ոմանք ոչ իմանան զլեզուն Հայոց: Սոքա են միանձնուհիք 'ի կարգէ սրբոյն Բենեդիկտոսի. զգուշաւոր են յոյժ 'ի պահպանութիւն կանոնաց, զգենուն մազեղէնս ըստ տարազու նոցա: Կրթութիւն նոցա այնչափ անուանի է ընդ բոլոր Լեհաստան, մանաւանդ առաջի տէրութեան. մինչ զի սոքա տան կանոն այլոց միանձնուհեաց: Ամենեքեան հպատակեալ կան ընդ միով Աբբաստուհեաւ, որ ունի խորհրդականս և պաշտօնաւոր միանձնուհիս, որոց խնամակալն է Արքեպիսկոպոսն Հայոց, որ պաշտպանէ և զկալուածս կուսաստանին:

170. Ընտանի է դպրատուն սոցա, և գլուխ համարի այլոց դպրոցաց. ուր վարժին 400 աղջկունք, և երբեմն աւելի, որք ուսանին զգրագրութիւն, զթուաբանութիւն և զայլ պատշաճ ուսմունս. ևս և զձեռագործս ինչ պիտանիս ինքեանց:

Այլ 'ի վեր քան զամենայն կրթին 'ի բարի վարս պարկեշտութեան ընդ վերակացութեամբ կուսանաց, որք սքանչելի արթնութեամբ մարզեն զնոսա. որով ձգեն 'ի հեռաւոր վայրաց զաղջկունս յուսումն իւրեանց. մինչ զի Կայսրն անձամբ չոգաւ առ նոսա, և բազում խնամս եցոյց: Ունին չափաւոր ապրուստ,

զոր բերէ երկիր իւրեանց մնացեալ 'ի նախնի Անեցւոց անտի:

Այս մենաստան այրեցաւ 'ի 1781. զոր յետոյ նորոգ կանգնեցին. բայց աստի 'ի հնումն գոյր այլ վանք, զոր շինեցին յանուն սրբոյ Խաչին հանդէպ քաղաքին. և կոչէին Հաձկափար, ուր կային աբեղայք և էր ուխտատեղի հաւատացելոց: Սա ձեռնադրեցաւ Ակնոյ եպիսկոպոս 'ի Մելքիսեդիկ կաթուղիկոսէ. ուր և ժողով եղև յաւուրս Խաչատուր Արքեպիսկոպոսին, ըստ որում յիշէ 'ի Կոնդակին (180): Այս հին վանք այժմ է զինուորանոց, ուր երևին հին գերեզմանք Հայոց:

Եկեղեցի Հայոց

171. Եկեղեցի Հայոց է արքեպիսկոպոսանիստ և հռչակաւոր ուխտատեղի ամենայն Քրիստոնէից. կառուցեալ յանուն Նշման Ածամօրն, չափաւոր մեծ քարաշէն և գմբեթաւոր 'ի ձև քառակուսի, և ունէր գաւիթ ըստ սովորութեան ազգիս, այլ զկնի ժամանակաց միացուցին ընդ բուն տաճարին, որով փոքր ինչ երկայնաձև եղև և բազմախորշ. ունի 13. խորանս և 3. դրունս: Բարձր է բեմն. յերկոսին կողմունս դասին են նստարանք քահանայից, և աթոռ եպիսկոպոսին. ուր անխափան յամենայն օր անթերի կատարի ժամերգութիւն ըստ արարողութեան Հայոց: Հին պատկեր վերափոխման Տիրամօրն եդեալ կայ յաւագ խորանի. տեսաք յորմն 'ի վերայ մարմարիոնի արձանագիր անվերծանելի:

172. Իսկ Լուսաւորչի հրաշագործ պատկերն է յառանձին խորանի առ երի մեծի դրան 'ի կողմն հարաւոյ. ուր յաճախեն յոլով ուխտաւորք յամենայն ազգաց յամենայն աւուր հինգշաբաթի, զոր բանան 'ի ջերմ պաշտօնասիրութիւն ժողովրդեան: Այս պատկեր է ըստ մեծութեան խորանին բոլորովին արծաթապատ ոսկեզօծ. 'ի վերայ դաստառակին գրեալ կայ յիշատակագիր սքանչելեացն, որ եղև 'ի հնումն 'ի տան այրի կնոջ օրինակ զայս.

* Ած' որ էնն յաւիտենից շնորհեաց անբաւ զօրու-
„ թեամբ դարձեալ լոյս աշխարհի. այսինքն պատկեր

» մեծին Լուսաւորչի սրբոյն Գրիգորի ամենազօր ա-
» ջով. ոչ 'ի կեր եւառ Թաքչել ընդ գրուանաւ. այլ եդ
» 'ի վերայ աշտանակի զի լուսաւորեսցէ զամենեսեան.
» մանաւանդ զազգն Հայոց ։ Սակայն յայտնութիւն
» սրբոյ պատկերի եղև յոյժ սքանչելի և 'ի վեր քան
» զհրաշս ։ Նշխար աւագ երկուշաբթի, որ է սկիզբն
» չարչարանաց Տն մերոյ Յսի Քսի, սրբութք սկիզբն
» եւառ հոգալ և տխրել ընդ նոյն տն. և քրտունք հո-
» սէին 'ի նմանէ ոլոռնաձև երկոտասան ժամ անդա-
» դար ամենեցուն ակներև 'ի տան միում բարեպաշտ
» այրի կնոջ Կատարինէի, որ կոչի բանի Կրեսքովա
» տէր Մաշքոէնց 'ի Թվ ՌԾԷ (1608). Ապրիլի ամսոյ
» Է. 'ի հայրապետութեան տն Յակովբայ, և արհի եպսկպ
» մերոյ տն Նիկողայի. զոր նոյն սրբանեալ այր վկայ-
» ութք հաստատեաց. որք ընդունին տմ փարատումն ։
» Այս 'ի տօնի աւետեաց Ածածնի մեծաւ հանդիսութք
» օրհնեաց և ետ աւագ եղբարց. զոր նոքա ընկալան
» յօժարութք և մեծաւ պատուով զարդարեցին ար-
» դեամբք իւրեանց ։ Նա է բարեխօս վասն տմ հօտի
» իւրոյ, զոր գնեաց արեամբ իւրով սրբով ։

Ի յատակ այսր եկեղեցւոյ շարեալ կան մեծամեծ վէմք գերեզմանաց հայ և լատին գրով ։ Առաջի խորանի սուրբ Լուսաւորչին եդեալ կայ վէմ մի այսպիսի արձանագրով. * Այս է տապան պր Օվանեսին
» որդոյ տօլվադաւոր խօջա Նաւասարդին 'ի Ստապատ
» քաղաքէ հանգեաւ 'ի Տէր. Թվ. ՌՃԼԵ (1686). և
» փետրվարի ամսի հինգերորդի ։ Նոյնպէս առաջի հանդիպակաց խորանի Ածածնին գոյ հնագոյն գերեզման. Թվ ՋԼԲ (1483) ։

173. Ընդ հիւսիսային դուռն եկեղեցւոյն մտեալ լինի 'ի սալայատակ աւանդատունն ընդարձակ, որ ունի առանձին մուտն քարաշէն շինեալ ընդ վերնատան ըստ որում դնի 'ի յիշատակարանի եկեղեցւոյն ։ Ի վերայ մտրան է պահարանն եկեղեցւոյ, ուր տեսաք գեղեցկագիր հին աւետարան զարդարուն և արծաթապատ. զոր հանեն 'ի հանդիսաւոր աւուրս տօնից, նաև զհին ծանր զգեստս պատարագի այլովքն հանդերձ ։ Արտաքոյ աւանդատանս է բակ և պարտէզ կուսանաց ։

Իսկ ընդ հարաւային դուռն եկեղեցւոյն մտեալ լինի 'ի Խաչքակն՝ որ է քառանկիւն գերեզմանատուն.

և ունի մեծ դուռն, որ հանէ 'ի վերին փողոց, և է բուն արտաքին դուռն եկեղեցւոյն ։ Յարևմտեան կողմն է մեծ արձանն խաչելութեան կանգնեալ իբր 'ի մատրան, ուրանօր փառաւոր հանդէս լինի 'ի տօնախմբութեան մարմնոյ և արեան Տն ։ Աստ հաւաքին ամենայն մեծամեծք և արուեստապետք քաղաքին, որք զարդարեալք գոյնզգոյն զգեստուք հանդերձ դրօշակօք իւրեանց հետևին Թափօրի սրբազնութեան ։ 'Ի չորս կողմանս տեղւոյն շինեալ կան չորս փառաւոր խորանք, ուր տայ օրհնութիւն Եպիսկոպոսն ։ 'Ի յատակ տեղւոյս շարեալ կան մեծամեծ վէմք գերեզմանաց հայ և լատին գրով, այլ ոչ տեսաք հնագիր վէմս. զուցէ եդեալ եղեն 'ի հիմունս շինուածոց ։

174. Յիշատակարան այսր եկեղեցւոյ այսպէս գրեալ կայ. * Աթոռանիստ եկեղեցին Հայոց Լւովայ շինե-
„ ցաւ յամի Տն 1183 փայտաշէն. իսկ 'ի 1363 շինեցին
„ քարաշէն. հիմնադիրն էր պն Յակոբ Շահնշահ կա-
„ Փացի. և պն Ստեփան Փանոսեան Աբրահամենց 'ի
„ Սայսուրի քաղաքէ ։ 'Ի 1509 նորոգեաց զգմբէթն
„ յորդելն Ասվատուր Բօփուլէն ։ 'Ի 1562 կանգնեաց
„ զանգակատունն պն Անդրէասն կաՓացի. 'ի 1723
„ շինեաց զվերնատունն կուսանաց և բարձրացոյց զգա-
„ ւիթն պն Խաչիկ Ակուստոնովիչ ազնուական իշխանն
„ և դատաւորն դատաստանին. յորոյ յիշատակ կանգ-
„ նեցին զսիւնն արտաքին || ։

Այս փառաւոր իշխանք հիմնադիրք եկեղեցւոյս գրեցին հաստատ կտակ, զի մի ազգականք իւրեանց ունիցին զիրաւունս 'ի վերայ եկեղեցւոյն. զոր տեսաք 'ի վերայ մագաղաթի այսպէս ։

* Յն Բն ։

„ Այս մեր կամաց և հաւատոյ գիր է Յակոբիս որ-
„ դւոյ Շահրնշահին բնական կաՓացի, և Փանոսի որդւոյ
„ Ավրանի՝ բնական ղազղալցի, որ տուաք զայս հաւատոյ
„ գիրս՝ որ ուխտեցաք վասն Տր. Ածածնին. և շինեցաք
„ 'ի Լով քաղաքս. հայադաւանս Տր Լուսաւորչին աւրի-
„ նաւքն. հնազանդ կաթուղիկէին, և հայ եպկսի, և
„ հայ տանուտրանցն. որ յայսմ հետէ ոչ մեր որդի,

» ոչ դուստր, ոչ եղբայր, ոչ ազգ, ոչ թոռն, զորդ զո-
» ղորմութիւն որ առնեն, այլ իշխանութիւն չառնեն 'ի
» վերա եկեղեցւոյն կամ քահնի կամ տանուտրաց կամ
» 'ի վերա եկեղեցոյ ընչից, ով որ յանդգնի կամ լըր-
» բութիւն առնէ, նա սուտ է յամ դատաստան, և պատ-
» ժի յայս և 'ի նոր եկեղեցոյ և 'ի նոր ծածանէն և 'ի նոր
» առաքելոցն վկութիւն այս և տանուտրաց : Գրեցաւ
» գիրս 'ի թվ Հայոց ՊԺԲ (1363) . յաւգաւստոսի
» Է աւրն : * Նա Աբրահամ ավագերեցս վկ : Նա
» Առըստագէս կրանաւորս վկ : Նա Յոհաննէս աբե-
» ղաս վկ : Նա Բնատուր քահանայս վկ : Նա որ Խզա-
» տենի որդի Սարայս վկ : Նա որ Խաչատուրի որդի
» Յովանէս վկ : Նա որ Թօլաքդէ մուրի որդի Տայ-
» չուս վկ : Նա որ Զոպանի որդի Մելիքշաս . վկ : Նա
» որ Աւագի որդի Խոսրովս վկ : Նա որ Անդրէասի
» որդի Նուրատինս վկ : Նա որ Ածատուրի որդի
» Մսերս վկ : Նա որ Յովանեսի որդի ամիր Սարգիս
» վկ : Նա որ Յովանեսի որդի Ամիր պեկս վկ : Նա
» որ Սահակի որդի Յակոբս վկ : Նա որ Յակոբի որ-
» դի Նասրադինս վկ : Նա որ Թադվորի որդի Ածա-
» տուրս վկ : Նա որ . Թադվորի որդի Սուլզպէկս վկ || :

175. Զանգակատունն եկեղեցւոյս մեծ է և բարձր կառուցեալ յարևելեան կողմն 'ի վերայ դրան եպիսկոպոսարանին : Յիշատակարանն եդեալ կայ 'ի վերայ դրան դատարանին, որ անկանի ընդ զանգակատամբ, գրեալ 'ի վերայ սևաւ մարմարիոնի ոսկեգիր այսպէս .

* ՌԻ հՃց թվին եւ յամսեանն յենվրն, խն Անդ-
» րէասն կմփցն շինել ետուր զտուն զանկակին վն իւր
» հգո եւ իւր ծնողն Խաչերեսն եւ Մառային եւ եղբօրն
» Աւտքն եւ ամ զրմիցն Յին || (1571) :

Անկելանոցն Հայոց չէ հեռի աստի շինեալ 'ի վերայ միւս փողոցին, ուր բնակին հայ աղքատք . յառաջագոյն ունէր հոգաբարձու և եկամուտ, որպէս ցուցանէ օրագրութիւնն գրեալ թաթարերէն, որ սկսանի

* Թվ ՌՀԳ (1624) մարտ̃նըն̃կ իր̃ : Պու դէֆդար է
» դիլտի . վանք շաիդալլըն անէսաքօլ վէ քալայ քէլլըրնէ-
» չէք վըտագօք մուննա եազըլըր . հէսէբ քօրմախօ-
» չուն || :

» Թվ. ՌՀԳ. Միդ 30 . շաիդալըն̃կ քանդանաքդան
» չըխդը ախչա պայրամտան սօնկրա նօկարլըքըն̃ Փ : Ձ

» Հռ. 13 ։ Նորին. 6. Պուկաւնքի քուննու ուշմախլը
» Ճանըը իվաղքօ եեզուիղա աքսէնդօվիչ բօղըեպինա
» պետրախլար ։ Հռ. 16. 11 ։

Արքեպիսկոպոսութեան Լվովի.

176. Հայոց արքեպիսկոպոսութիւն յԼվով հաս-
տատեցաւ յամի Տն 1364. որպէս ցուցանէ յիշատա-
կարանն ։ Իսկ առաջին եղև Գրիգոր արքեպիսկոպոս,
որ ձեռնադրեցաւ 'ի Մեսրոպ կաթուղիկոսէ. որպէս
յայտ է 'ի կոնդակէ նորին, զոր գրեաց առ Լվովցիս
վասն հաստատութեան ։ Զսա հաստատեաց և յաջորդ
նորա Կոստանդին կաթուղիկոս. որ ապա մերժեալ
զԳրիգոր ձեռնադրեաց արքեպիսկոպոս Լվովի զՅով-
հաննէս որդի Նասրատինի ։ Այսորիկ աղագաւ 'ի յի-
շատակարանին Լվովի Ա եպիսկոպոս դնի Յովհան-
նէս ։ Յետ Յովհաննու նստաւ յԼվով Աւետիք ար-
քեպիսկոպոս, ապա Խաչատուր. ապա Ստեփաննոս.
ապա Գալուստ. ապա Բ Խաչատուր. ապա Գրիգոր.
ապա Պարսամ. ապա Նիկողայոս կամ Նիկօլ. ապա
Բ Յովհաննէս Կարմատանենց. ապա Վարդան Յու-
նանեան. ապա Գ Յովհաննէս Տօպիա Աւգուստոնովիչ.
ապա Յակոբ Աւգուստոնովիչ. ապա Բ Յակոբ Թումա-
նովիչ. ապա Դ Յովհաննէս Սիմոնովիչ. և ապա Կայե-
թան Վարդերեսեւիչ, որ ընտրեցաւ յաւուրս մեր ար-
ժանաժառանգ յայն աթոռ արքեպիսկոպոսական. և
ցարդ կառավարէ զվիճակ իւր խոհեմութեամբ և յա-
ջողութեամբ, որ և բազում մարդասիրութեամբ պա-
տուասիրեաց զմեզ ։

177. Փոքր ինչ տարբերութիւն գտաք 'ի յիշատակա-
րանի անդ Լվովի, որ դնէ այսու կարգաւ և այսու
բանիւ ։

Ա. Յովհաննէս արքեպիսկոպոս Լվովի և Վալա-
քիայի, որ էր 'ի Թագաւորական զարմէ Հայոց՝ նստաւ
յամի Տն 1365. առ Վլատիսլաւոս արքայիւ Լեհաց,
բայց փութով վախճանեցաւ ։

Բ. Գրիգոր մեծ նստաւ արքեպիսկոպոս յԼվով առ
Գաղիմիր արքայիւ ։

Գ. Գաբրիէլ (կամ Աւետիք) նստաւ արքեպիսկո-
պոս յԼվով ։

Դ. Քրիստափորոս (Խոյաչատուր) նստաւ յամի Տն 1467 առ Ռուպերթ արքայիւ:

Ե. Քրիլիանոս (Գուալուա) նստաւ յամի Տն 1516 առ Ա Սիգիզմունդոս արքայիւ, զորմէ գրէ և Անդրէաս Լուսինեցի:

Զ. Ստեփաննոս նստաւ արքեպիսկոպոս, որոյ նամակ գոյ յարքունի դիւանին, որով ծանուցանէ արքային զորպիսութիւն Հայոց. Գոյ նաև իւր կնիք, յորում յիշէ թէ Սրբազան հայրապետն Հռոմայ առաքեալ է զինքն առ Ֆերտինանտոս կայսր գերմանացւոց, առ որում եկաց ամիս Դ: Եւ վասն այսորիկ Պապն ընծայեալ է նմա իբրև օրհնելոյ՝ ծանրագին խաչ, մուշտակ, և հանդերձս սպիտակ և կարմիր, շապիկ, և թագ եպիսկոպոսական. որ և յերկար պարեցաւ:

Է. Գրիգոր նստաւ առ Սիգիզմունդոս Օգոստոս արքայիւ, այլ չհանդուրժեալ անկարգութեանց ժողովրդեան փախեաւ յԼվովէ:

Ը. Պարսամ նստաւ արքեպիսկոպոս, այլ չժուժեալ անիրաւութեանց նորինպէս փախեաւ. առաւել կամք եղեն նմա հրաժարիլ յաթոռոյ, քան հետևիլ անիրաւութեանց:

Թ. Կարապետ անուանեցաւ արքեպիսկոպոս Լվովի. որ 'ի Կամենիցէ գրեալ թուղթ առ Լվովցիս անուանէ զինքն եպիսկոպոս Լվովի և Վալաքիայի:

Ժ. Մեսրոպ նստաւ արքեպիսկոպոս, որ այսպէս օծանէ զկոնդակ իւր. * Մեսրոպ ողորմութեամբ Այ „ արքեպս Լվովցոց „: Յետ մահուան սորա յերկար ժամանակ աթոռն մնաց առանց եպիսկոպոսի, մինչև եկն յԼվով Մելքիսեդեկ կաթողիկոս և ձեռնադրեաց արքեպիսկոպոս զՆիկոլ կամ Նիկողայոս աբեղայն:

ԺԱ. Նիկոլ Թորոսովիչ նստաւ արքեպիսկոպոս յամի Տն 1630. առ թագաւորութեամբ Գ Սիգիզմունդոսի. և եղև առաջին, որ միացոյց զեկեղեցի իւր ընդ սրբոյ եկեղեցւոյն Հռոմայ, յամի Տն 1666 յաւուրս Ուրբանոսի Ը. հայրապետին և Վլադիսլաւոսի արքային:

ԺԲ. Վարդան Յունանեան կեսարացի աշակերտ փռօփականտայի նախ եղև օգնիչ կամ յաջորդ Նիկ-

կօղ արքեպիսկոպոսին. որ և չոքաւ յԷջմիածին առ 'ի միաբանել զնոսա ընդ Հռովմայ։ Սակայն միաբանք և դպիր զնա 'ի բանտի, մինչև արքայն Լեհաց նամակ գրեալ վասն նորա առ արքայն Պարսից ազատեաց զնա։ Նա եկն յԻլվով և նստաւ արքեպիսկոպոս յամի Տն 1686. հոկ. 29. և հաստատեցաւ 'ի Հռովմայ։

Նա յեպիսկոպոս 'ի ծերութեան իւրում արար իւքեան օգնիչ զԱծատուր Ներսեսեան ադրիանուպօլսեցին, որ փոխանեցաւ յառաջ քան զՎարդան։ 'Ի նմին ժամանակի Վարդան եպիսկոպոս գոլով 'ի Կամենից՝ Տօպիա Աւկուստանովից աւագերէց ամփոփեաց զմարմին նորա առ ոտս բեմին։

Իսկ Վարդան խնդրեաց օգնիչ զՍտեփաննոս Ստեփաննովից աւագերէցն Կամենիցի. բայց քահանայք և ժողովուրդք ոչ ընկալան. զի կամէր հաստատել զնա առանց ընտրութեան նոցա գրելով միայն 'ի Հռովմ. ուստի ընտրեցին միաբան զՏօպիա Աւկուստանովիցն։

ԺԳ. Յովհաննէս Տօպիա Աւկուստանովից նստաւ յետ Վարդանայ յամի Տն 1715. որ իբրև ծերացաւ ընտրեաց օգնիչ զՏէր Յակոբ Աւկուստանովից։

ԺԴ. Յակոբ Աւկուստանովից նստաւ յամի Տն 1737. որ 'ի ծերութեան իւրում ընտրեաց օգնիչ զՅակոբ Թումանովից։

ԺԵ. Յակոբ Թումանովից նստաւ յամի Տն 1782. որ յանկարծ վախճանեալ ոչ կարաց ընտրել յաջորդ։

ԺԶ. Յովհաննէս Սիմոնովից նստաւ յամի Տն 1799. որ գոլով այր զօրաւոր և գիտնական գրեաց Թուղթ առ կայսրն վասն կանոնիկոսաց իւրոց և ետ բերել ոսկի նշան կայսերական հանդերձ Թոշակաւ, զոր արկանեն նոքա զպարանոցաւ ըստ նմանութեան Լեհ կանոնիկոսաց. սա եկաց յաթոռ իւր ամս 17. և չունէր յաջորդ։

ԺԷ. Կայեթան Վարդերեսեվից բարեբարոյ կանոնիկոս ընտրեցաւ արքեպիսկոպոս յամի Տն 1816. այլ յերկարեալ հաստատութեան՝ ձեռնադրեցաւ զկնի չորից ամաց 'ի 1820. յուլիսի 16, այր արժանաւոր այնմ բարձր աստիճանի։

178. Արքեպիսկոպոսութիւն Իլվովի մեծայարգ է ընդ բոլոր Եւրոպիա, և մեծ պատիւ ունի առաջի Տէրութեանց։ Նա յաթոռ բաց 'ի պաշտօնատար կա-

նոնիկոսաց ունի զընդհանուր փոխանորդ Օքիւլիւ ա-նուամբ. եւ ի ժողովրդապետս ամենայն եկեղեցեաց իւրոց, յորոց ընտրելին սովորաբար խոստովանահայրք մեծամեծաց ։

Իսկ ընտրութիւն եպիսկոպոսին նախ եւ յառաջ լի-նէր ՚ի կանոնիկոսաց հանդերձ հաւանութեամբ ժողո-վրդեան, որում հաւանեալ կայսեր հաստատէ. այս հաստատէ եւ Սրբազան Հայրապետն Հռովմայ առա-քելով առ նա Վերարկու կամ Պալլիոն Մետրապօլտի գործեալ ՚ի սպիտակ ասուոյ խաչազարդ, զոր կրէն ՚ի վերայ սուրբ հանդերձից ՚ի նշան կատարեալ իրաւա-սութեան ։

179. Ոչ միայն վերոյ գրեալ եպիսկոպոսունք, այլ եւ բազումք ՚ի բնակչաց Անւոյ դաւանէին զսուրբ ժո-ղովն Քաղկեդոնի. որպէս յայտ է ՚ի գործոց Պետրոսի կաթուղիկոսին, Յովհաննու արքային, Գրիգորի Մա-գիստրոսին, եւ որդւոյ նորա Գրիգորի վկայասիրին, Ռարսղի եպիսկոպոսին, եւ այլոց երեւելի անձանց ։ Սա-կայն ատելութի Յունաց այնպէս խրտեցոյց զԱնեցիս, որք ՚ի պատճառս նոցա այնչափ դժբաղդութեց պատա-հեցան, ուստի օտար երեւէին եւ հեռի ՚ի նոցանէ. այլ բազումք ծանօթ էին Սրբազան Հայրապետացն Հռով-մայ, որպէս Ստեփաննոս արքեպիսկոպոս եւ այլք ։ Նոյն եւ այնպէս ՚ի կաթուղիկոսէն ձեռնադրեալն եւ հեղինա-կութը նորին իշխէին յԼվով ՚ի Վալաքիա եւ այլուր ։ Այլ իբրեւ միաբանեցան ընդ նմա աթոռոյն իշխանութե ե-պիսկոպոսաց ձգէր մինչեւ ցՂրիմ, եւ ցԱժտէրխան. իսկ իբրեւ բաժանեցաւ տէրութիւն Լեհաց ամփոփեցաւ այս իշխանութիւն միայն ՚ի Լեհաստան գերմանաց-ւոց. զի մասն Ռուսաց անկաւ ընդ իշխանութեամբ Լատին Արքեպիսկոպոսին Ռուսաստանու, մինչեւ ձեռ-նադրեցաւ եպիսկոպոս վասն Անեցւոց Յովսէփ Քրիս-տոֆօրովիչ, որ նստէր ՚ի Մոյլով (250) ։

180. Նախնի եպիսկոպոսունք իբրեւ գային յԷջ-միածնէ գիր դաշնադրութեան տային Լվովցոց, որ սկսաւ ՚ի Խաչատուր եպիսկոպոսէ, որպէս ցուցանէ նամակ իւր գրեալ բոլորգիր ՚ի վերայ մագաղաթի այսպէս .

* ՕՐԻՆ. ԳՐՈՅ ծառայ Խոջաստուր Մորեսլինոյս :
» Ի թուականութեանս ՋԺԶ (1467).

» Ի ժամանակս երից երանեալ հայրապետի հա-
» նուրց հայաստանեայց Տն Յովհաննէս կթղկսի. և
» պատրիարքի Վաղարշապատու տր. յաթոռն Էջ-
» միածնի նուաստս 'ի քահանայութեանց Խոջաստուր եպիսկոպոս
» ձեռնադրեցայ եպիսկոպոս Խլաթի աթոռոյն և իւր վճա-
» կացն, և աղօթմունքն մեր եկեալ հասաք 'ի մեր հաւատս
» որ մեր և 'ի մեր հայրապետէն անձնեցաւ մեզ. Իսկ 'ի
» այն աւուրս շնորհաւք փրկչին եկեալ հասեալ կային
» տր. և պարծանաց պարծանք նախարակքն մեր Մնանիաս-
» արքի եպիսկոպոսն և մեր Թումա եպիսկոպոսն 'ի տածայէն և տը-
» րախնամ քաղաքս Խլաթս. և հանդէսիւ ժողովեցան
» միաբանութիւն ամենայն աւրհնութեց արժանաւոր երէցա-
» նիկ և ուղղափառ ժողովուրդ քաղաքիս 'ի գաւիթս
» մեծայիքն լուսոյ մաւրս 'ի մենաստանիս. որ է ընդ-
» դէմ քաղաքիս, խնդրեք աբարին զայսքան բանս.
» Իսկ ես նուաստ եպիսկոպոս Խոջատր խոստացայ կատարել
» առաջի մեր. Նախ եկեղեցեաց և ընչիցն հրաման չայ-
» նենք. առանց տանուտերաց հրամանին: Բ. որ քահնից
» մնոցն ձեռնամուխ չի լինիք. և ոչ նոքա իմ մուտեց.
» մեր առաջի հայրապետորն ժամն եր: Գ. որ զայս տե-
» ղացս իրիցանուն զդատն ու զդատաստանն 'ի տեղս
» այնենք հետ տանուտրացն և այլ տեղ չի ձենենք: Դ.
» որ զքահանայ կամ զարկաւորդ առանց տանուտրաց
» հրամանին չի այնենք: Իսկ որ անհաւատ կ խնամութե
» կամ այլ անհաս բան կաշառաւք չի այնենք: Այլ
» թէ մահու թէ կենաց ինչ որ իւրեանց կեարեացն հա-
» գոյ բաժին հանեն, կամ տան զայն առնունք. և այլ
» աւելի չի պահանջենք: Այլ և եկեղեցապան և հայր-
» պետ գնելոյ հրամանք չանենք առանց տանուտրացն
» հրամանին. Իսկ այլ ինչ բան որ լինայ կամ դատա-
» տան հոգևոր կամ մարմնաւոր առանց տանուտրացն
» չայնենք: Իսկ այլ թէ կաթկսն մեր Յոհաննէս
» վերստին հրաման այնէ և զԽլաթ քաղաքս մերունս այ-
» նէ գրով ես պատասխան տամ կաթղիկոսին Մ.Ջ||:
Յայսմանէ յայտ է թէ Մնեցիք սեղմեալ էին զիշ-

խանութիւն եպիսկոպոսաց Իլվովի, և անհնարին ինչ հրամանաւ պատուորաց լինէր: Նմին եւս յաջորդ նորա Գալուստ եպիսկոպոս դժուարացաւ յոյժ ընդ այս. և 'ի նամակի իւրում, զոր գրեաց առ Իլվովցիս յամի 1516. մեղադիր լինի Խաչատուր եպիսկոպոսին, որ տուեալ էր զայն գիր:

Միաբանութիւն Իլվովցւոց:

181. Յամի տն 1624. Մելքիսեդ կաթուղիկոս փախուցեալ 'ի ձեռաց Շահաբաս արքային Պարսից զերծաւ յԻլվով. ժողովուրդն մեծաւ պատուով ընկալաւ զնա, որք էին յայնժամ հազար տունք: Եւ որովհետև եպիսկոպոս նոցա վախճանեալ էր 'ի նմին ժամանակի, խորհեցան տալ ձեռնադրել զոմն յարժանաւոր աբեղայից: Բայց Նիկոլ աբեղայն բազում ընծայիւք հաւանեցոյց զկաթուղիկոսն կոչել զինքն յեպիսկոպոսութիւն. այլ ոչ ոք 'ի քահանայից և 'ի ժողովրրդոց հաւանեցաւ ընդ այս. և ամենեքեան ընդդիմացան և ջանացին խափանել, բայց չեղև հնար. քանզի կաթուղիկոսն տարեալ զՆիկոլ 'ի Հաճկատար վանս սրբոյ Խաչին ձեռնադրեաց զնա գաղտ: Զայն լուեալ ժողովրդեան ոչ ընկալան զնա. ուստի Նիկոլ կամեցաւ գնալ ընդ կաթուղիկոսին 'ի Կամենից. այլ նա յետս դարձոյց զնա 'ի ճանապարհէն, գրելով կոնդակ առ Իլվովցիս, թէ որ ոք ոչ ընկալցի զՆիկոլ նզովեալ եղիցի, որով լռեաց ժողովուրդն ակամայ կամօք: Սակայն և այնպէս սիրտ նոցա ոչ երբէք միացաւ ընդ նմա, յորմէ ծագեցան անհնարին խռովութիւնք:

182. Իբր զի ժողովուրդն միաբանայր ընդ վարդապետաց, որք գային յարտաքուստ. իսկ Նիկոլ գոլով քաղաքացի վարէր զնոսա 'ի ձեռն քաղաքապետաց: Մինչ զի չհանդուրժեալ հայ դատաւորաց փակեցին զդրունս մայր եկեղեցւոյն և առին զբանալիս. ապա կամեցան դատել զՆիկոլ. այլ նա ճարտարմտութեամբ իւրով շրջեաց զդատն 'ի վերայ նոցա և պարտաւորեաց զժողովուրդն: 'Ի վերայ այսր ամենայնի ջանահնար եղև Նիկոլ հաշտիլ ընդ ժողովրդեան. բայց իբրև ետես, թէ նոքա յամառեալ կան, դիմեաց ապա առ Յիսուեան

կրօնաւորս, և միացեալ ընդ նոսա եւս գիր երդման մնալ հնազանդ սրբոյ աթոռոյն Հռովմայ հանդերձ ժողովրդեամբ :

Յայնժամ Վատրին եպիսկոպոսն առաքեաց զՆիկող առ քաղաքապետն. որ անդէն և անդ պարտաւորեաց զժողովուրդն կամ գնալ յառեան նորա և խօսիլ, և կամ բանալ զեկեղեցին: Նայն նոքա անխոհեմութեամբ իմն ոչ չոքան առ նա, և ոչ բացին զեկեղեցին. ուստի Յուեանք և Նիկող առեալ զօրս 'ի քաղաքապետէ չոքան 'ի դուռն եկեղեցւոյն, և կոչեցին զՀայ իշխանս զի կամ ինքեանք եկեալ բացցեն, և կամ առաքեսցեն զբանալիս: Նայն նոքա խստիւ ետուն պատասխանի ասելով, թէ մեք եմք շինօղք եկեղեցւոյն և ամենայն ինչ մեր է, և ոչ իսկ ճանաչեմք զՆիկող. ապա որո՞վ իրաւամբք պահանջէք զբանալիս: Նոքա առեալ զայսպիսի պատասխանի իսկոյն խորտակեցին զդրունս եկեղեցւոյն, և յանձնեցին զամենայն 'ի ձեռս Նիկող եպիսկոպոսին :

183. Այսուհետև զօրացաւ և փարթամացաւ Նիկող եպիսկոպոս, զի տիրեաց և այլոց եկեղեցեաց Հայոց. եառ զամենայն գանձս, զոսկեղէն և արծաթեղէն անօթս՝ որք անբաւ էին, թող զծանրագին զգեստս և բազմաթիւ գրչագիր մատեանս: Իսկ ժողովուրդն մնաց առանց եկեղեցւոյ. և յանհնարս մտեալ միաբան ամենեքեան բողոքեցին առ Մովսէս կաթուղիկոս յամի տեառն 1631. և նա գրեաց խոնարհական նամակս առ Սրբազան Պապն և առ Թագաւոր Լեհաց, և առ Վատրին եպիսկոպոսն Լվովի աղաչելով ողորմիլ անմխիթար ժողովրդեան Հայոց, և չթողուլ զնոսա առանց եկեղեցւոյ: Յօժարեցան նոքա, և Վլատիսլաւ արքայն հանդիպեալ յԼվով կամեցաւ առնուլ զեկեղեցին և տալ նոցա, բայց Նիկող զգեցեալ զգեստ պատարագի և առեալ 'ի ձեռին զսրբութիւնն ել ընդ առաջ արքային ահագինս սպառնալով նմա. իսկ նորա զարհուրեալ յետս դարձաւ :

184. Լվովցիք ապա դիմեցին առ Փիլիպպոս կաթուղիկոս, որպէս զի 'ի ձեռն արքային Պարսից օգնեսցէ նոցա, որ և պատասխանի տայ նոցա այսպէս :

* Յն ՏՆ ծառայ Փիլիպպոս կաթուղիկոս ամենայն „Հայոց 'ի վիճակէ սրբազան առաքելոյն Բարդուղիմէո-

„ սի, աջորդ սրբոյ առաքելոյն Թադէոսի . . . Յորմէ
„ ժամանեալ հասցէ գիր աւրհնութե . . . քննախնամ քա-
„ ղաքացդ Իլօվա, Կամենիցու, Եազլովցաւոց, Զա-
„ մօսցեայոց, և Լուցկաւոց . . : Յայտ լիցի Սիրե-
„ լեացդ . . . զի յորժամ նամակն ձեր եկն եհաս առ
„ մեզ . . . այնքան առաւելաւ տրտմութիւս . . . յարու-
„ ցեալ գնացաք 'ի դուռն արքայի . . . սպասէաք վասն
„ համբաւոյ բարւոյ այդր իրաց, եթէ թերևս անդոր-
„ րութիւն ինչ եղեալ իցէ. լուաք երեք անգամ թէ տու-
„ եալ են զեկեղեցիսն . . . և յետոյ լուաք թէ զայլ և
„ կեղեցիս տուեալ են, բայց զաւագ եկեղեցին ոչ են
„ տուեալ. և վասն այնորիկ մարդ են առաքեալ առ
„ Պապն, և մինչ յայսմ տարակուսի էաք, որպէս ար-
„ դեօք եղեալ իցէ, լուաք զգալուստ դեսպանին, և
„ մնացաք գալստեան նորա. և յորժամ եկն, նա ևս
„ զայն ասաց : . . Նա և ոչ սակաւ յուսադրութիւն ետ
„ մեզ ասելով, եթէ յորժամ հասանիցեմ առ թագա-
„ ւորն, դիւրին է այդ. և մեք այնմ դեսպանին, որ 'ի
„ պարսից արքայէն առ ձեր արքայն առաքիւր, թուխտ
„ տուաք մի առ թագաւորն և մի առ ձեզ . . և դուք
„ պատրաստ կացջիք, որ զկնի առնլոյ զձեր նամակն ը
„ դեսպանին 'ի միասին մատուցանիցէք զթուղթ թա-
„ գաւորին առ թագաւորն : . . Ազատեսցէ զձեզ յայդմ
„ դառնագոյն վշտաց և փոխանակ այդմ նեղութե մխի-
„ թարեսցէ զձեզ հոգւովն սրբով աստ և 'ի հանդեր-
„ ձեալն. և ինքն աւրհնեալ եղիցի յաւիտեանս յաւի-
„ տենից Ամէն ‖ :

Զօրինակ այսր կոնդակի գտաք 'ի դատաստանագիրս Իլվովի, ուր այսպէս դնի. * 1639. Յունիս 25 ինա.
„ եանկի քլն. կաթողիկոստան քելկան մհնէնք պիդի-
„ քի տն տր Փիլիպոսդան Իլօվ աղալարընա. բօտա-
„ նըյ պօլտու պու սէնեդա. Հէմ պարչա Ռօսբօլիդոյ-
„ կա : Հասցէ Թուխդս 'ի Ոձապահ քաղաքն Իլով 'ի
„ ձեռն երկոտասան դատաւորացն անմիաս հասուցողն
„ աւրհնեալ լիցի : Գրեցաւ թվին հայոց ՌՁԷ (1638).
„ Հոկտեմբերի ԺԸ. և յաւելեալ ԻԸ. կարի ըշտապով
„ գրեցաւ նամակս, զի երեք օր էր, յորմէ եկեալ էաք
„ 'ի արքայանիստ քաղաքէն յԱսպահանայ ‖ :

185. Այն այս Փիլիպպոս կաթուղիկոս երկրորդ կոնդակ գրէ առ Իլովցիս առաւել ընդարձակ 'ի թվ.

ՌՁԲ, և ծանուցանէ, թէ նոյն դեսպանն սպանաւ 'ի Ճանապարհի, և մեր նամակք յետս դարձան. ուստի խորհուրդ տայ նոցա առաքել առ ինքն քանի մի քահանայս անձինս խորհրդակցիլ ընդ նմա: Սակայն բուռն զօրութիւն Յեսուանց ունայնացոյց զամենայն խորհուրդս և զջանս ամենեցուն. մինչև յուսահատեալ ժողովուրդն դիմեաց առ նոյն Նիկօլ եպիսկոպոս, զի գթասցի 'ի նոսա գէթ տացէ մկրտել զմանկունս: Նա և նորա խըստացուցեալ զբանս պնդէր, զի կատարեսցեն զամենայն կամս նորա. ուստի բազումք սրտաբեկեալ ժողովեցին զկարասիս իւրեանց ելին անտի և ցրուեցան յայլ և այլ տեղիս: Յայնժամ նուազեցաւ ժողովուրդն կիսով չափ, տկարացաւ այժ նոցա, և խանգարեցան ամենայն բարեկարգութիւնք:

186. Զայսու ժամանակաւ 'ի Կոստանդինուպօլիս յեկեղեցւոջ սրբոյ Լուսաւորչին քարոզէր Պօղոս անուամբ Լատին կրօնաւոր դոմինիկեան, փիտակ լեզուին Հայոց: Հրաման արար սմա Ուրբանոս Ը. Պապն՝ զի գնացեալ յՍմիւռն խաղաղացուսցէ զժողովուրդն. որոյ հասեալ յՍմիւռն հաւաքեաց զժողովուրդն յեկեղեցին Հայոց և բազմապատիկ յորդորանօք հանդարտեցոյց զնոսա. այլ չև ևս կատարեալ հաշտութիւն: Պօղոս կրօնաւոր խօսեցաւ վասն այսր ընդ արքային Լեհաց, և պապա գրեալ զդաւանութիւն ժողովրդեան՝ առաքեաց. զորմէ այսպէս գրեալ տեսաք Թաթարերէն յօրագրութեան Սմիւռնի:

* 1639 Յուլիս 2 եանկի լըն:

» Ռադր Ռուէլ Տօմինիքեան մոնիսթիրլը դաւանութիւն
» վէչինտան քէնտինա բօքաղադ էդդիխ. խայսի դա-
» ւանութի ումուզունա. Պիյ անըը. տա բօտբիսադ-
» ջա տա պօլտու չէզնադէդիբ քի եախշի քաթօլիքլար-
» տըր. տա եազտի փատշահկա տա. Ռ. Պ. ինա.
» Հէմլէկ ադքատա անկլադըը. քի պիզիմ անիծաց
» Նիկօլ աւեաշ պիզնի եամանտա նէյցնօդլրվէյ անկ-
» լադըլ էտի. քի պիզ հէռեկդիքլար պօլկայ պիզ. օլ
» վէչդան քի պիզնի քօղտան չխարկայ ||. Իա:

187. Ապա նոյն քահանայ չոքաւ 'ի Հռոմ և միջնորդ եղև վասն ժողովրդեան առ Ուրբանոս Հայրապետն. սակայն Նիկօլ հասեալ անդ 'ի դերև եհան զամենայն՝ զօրութեամբ Յեսուանց: Նա և իբրև դարձաւ

Նիկոլ յԼւով, տեսեալ զի մեծ մասն ժողովրդեան ցրուեալ էր, սկսաւ խոնարհիլ: Նոյն լուեալ Թէ Փիլիպպոս կաթուղիկոս չոքաւ 'ի Կոստանդինուպոլիս դիմեաց առ նա. բայց իշխանք յառաջագոյն հասուցեալ էին առ նա զԽոջաչիօ գաստաւորն ծանուցանել նմա զամենայն: Իսկ նա բաղում խոհեմութեամբ և քաղցրութեամբ շահեցաւ զերկոսին կողմանս. և առաքեաց առ նոսա զիւր խոհեմ աշակերտն Յովհաննէս Վարդապետ Ագուլեցի, որոյ հասեալ յԼւով յամի ՏՃ 1652. էած յորդորանօք զժողովուրդն 'ի դուռն եկեղեցւոյն. և անդ աղօթելով օրհնեաց զժողովուրդն 'ի կողմանէ կաթուղիկոսին. ապա համբուրեաց զձեռս Նիկոլ եպիսկոպոսին տալով նմա զբանալի տաճարին բանալիս եկեղեցւոյն, զոր պահեալ էին գաստաւորք. և նորա բացեալ զդուռն ընկալաւ զամենեսեան 'ի ներքս: Իսկ ժողովուրդն՝ որ կարօտ կրէր եկեղեցւոյն ամս 23. իբրև մտին 'ի ներքս սկսան լալ առ հառաչանս 'ի սոսկս այնչափ տօնակալի խաղաղութեանց: Յետ յերկար լալոյ հազիւ դադարեցան. յայնժամ Յովհաննէս վարդապետ ել 'ի բեմն, և սկսաւ քաղցր բանիւ մխիթարել զժողովուրդն. և յետ օրհնելոյ զնոսա, խնդրեաց՝ զի և Նիկոլ օրհնեսցէ. և նա օրհնեաց զամենեսեան խաչիւ և աւետարանաւ:

188. Նոյնպէս մեծ եղև ուրախութիւն ամենեցուն. մինչ զի բոլոր քաղաքացիք Լեհ և Հրէայք յուրախակցութիւն երթային նոցա: 'Ի նմին ժամանակի Պադիմիր արքայն գալով յԼւով, իբրև լուաւ զայս բան՝ հիացաւ ընդ խոհականութիւն Յովհաննու վարդապետին. զոր և կոչեալ 'ի սենեակ իւր շնորհակալ եղև նմա, և մեծամեծ պարգևօք մեծարեաց զնա:

Նիկոլ արքեպիսկոպոս այնուհետև այնպէս հանդարտութեամբ վարէր զիշխանութիւն իւր, մինչև ամենեցուն սիրելի լինել. ապա զկնի քանի մի ամաց գրեաց 'ի Հռոմ և խնդրեաց յԱղեքսանդրէ Հայրապետէն հիմնել յԼւով դպրոց մի վասն հայ մանկանց: Հաւանեցաւ ընդ այն Հայրապետն և ետ շինել դպրոց մի սակս 12 ուսանողաց ծախիւք առաքելական գահին յամի 1662. և առաքեաց զԿղեմէս Գալանոս Թէատինեան կրօնաւոր դաստատու լինել մանկանց: Իսկ Նիկոլ զկնի վայելելոյ զիշխանութիւն իւր ամս 55. վախճանեցաւ յամի 1681:

Պատմագրութիւն Լւովցւոց։

189. Թագաւորք Լեհաց տեսեալ զհաւատարմութիւն և զճարտարութիւն Անեցւոց ետուն նոցա զանազան արտօնութիւնս, որպէս զի մնասցեն անդ և ծաղկեցուսցեն զքաղաքս նոցա շինութեամբ և վաճառականութեամբ։ Սուտի մեծն Կազիմիր ետ պարգևագիր Հայոց Կամենիցի յամի 1344. և ապա Լւովցոց յամի 1356. տալով նոցա զիշխանութիւն և զիրաւունս վարելոյ առանձին դատաստան. որք ընտրեցին իշխանապետ Վոյթ անուամբ, և 12 դատաւորս առ 'ի վճռել զամենայն դատս ազգին անկախ ամենևին։ Զայս իշխանութիւն վերջին Թագաւորք հետզհետէ հաստատեցին։ Իսկ 'ի 1516. ա Սիգիսմունդոս հրաման եհան Լւովցոց, զի 'ի նախապատիւ Թաղի կառուսցեն Ատենադէ կամ Դատարան, ուր հաստատեցին բազում պիտանի կանոնս, զորս առին 'ի Լեհաց։

190. Այսքիկ դատաւորք կոչէին Տանուտեարք, և ամենայն ինչ թէ աշխարհական, և թէ եկեղեցական՝ նոցին վճռաւ որոշեալ լինէր։ Տեսաք զհետևեալ կտակագիրս 'ի վերայ մագաղաթի գրեալ այսպէս։

* Այս իմ կամաց և հաւատոյ գիր է Դաւթիս, որ „ եհաս ինձ տկարութիւն. ևես յիշեցի զբանն առաքելոյն, թէ կտակ յետ մահուն հաստատ է. և մինչ„ դեռ իմաստութիւնս կատարեալ էր, կոչեցի ինձ քա„ հանայք, և այր տանուտրայք, և արարի ինձ տխա„ թիք, որ է կտակ. և զոր ունիմ այս է. Ղ կամեն ջիր„ վից. Ժ կամեն պղպեղ. և Ի սոմի քթան. այս ինչացս „ ա ձի ա Փուֆերի որ Ածածնիս. ա ձի հաճկատա„ րին. ա սոմ ինկկին. ա սոմ խոստովանահայրս. կէս „ սոմ աւագերիցուն. ա ա չարեկ քէհից և վանաւո„ րացն... և այլ պաղ ունիմ հոգոյս Հոգէբարձ իմ „ տանս իմ խաթունիս իմ կողակիցս Սաշայ խա„ թուն և այլ մարդ յետ նարայ հայուչէ չունենայ ոչ „ հեռաւոր, ոչ մերձաւոր... եթէ ոք յանդգնի սուտ „ լինայ ամ դատաստանի հոգևոր և մարմնաւոր. և „ առնու անէծքն Տր հայրապետաց. և տայ տուգանք „ դատաւորաց։ Ի թվիս Հայոց ՊՂԹ (1450) աւգոստոսի Դ։ վկ. Տէր Նիկաւլ․ ևն։

191. Այս կտակագիր կնքեալ էր մեծ կնքով դատաստանին և հաստատեալ՝ ի դատաւորաց։ Նոյն գիրս հարսանեաց Պորզէնի կոչեցեալ՝ հաստատեցին այսպէս։

* Ի Թվին ՋԽ և ՚ի մին (1492).

„Կամաւն ամենակալին ... եղև այս շնորհաւոր
„հարսանիքս ՚ի յամծապահ քաղաքս Լըով Է հովա-
„նեաւ Տր Ս. Ծածնին. ՚ի հայրապետական տան Տր Սարգ-
„սին. և ՚ի արքեպիսկոպոսական տան Խաչատուրին, և
„՚ի Թագաւորական Պաշիմիրին։ Որդ. զոր եկն առաջի
„օրինացն Տէր քհնցն, և Տնտերցն ... Նա և Խլաշ-
„քոս կուտամ իմ զաւակին Նախ զՏէր աւրհնութի,
„և զքհնյից, և զՏնտերցն։ Նա իմ մարմնօար աք-
„դեանցս, զոր Տր Սծ պատրաստեաց ոսկեղէն և մար-
„գարտեղէն այս է. Ձինպտ Թ մԹխլ. մզկպ Թ մԹխլ.
„ու կէս. եկտանա ժԲ մԹխլ. ձագեր Ի մԹխլ. ոսկի
„ծածկոց Գ մԹխլ. աւղեր Ե մԹխլ. վզնոց Գ մՁր.
„Փըրվ. խաԹափնաւխողանին Է մԹխ. Ժբ մԹխլ Ա
„ապրձան. Բ մարգարտէ փողպատ. Գ մԹխլ ոսկի
„ծաղիկներով դեղեբերանք. Բ մատանի. Է մԹխլ,
„ու Բ սոմք արծԹէ գօտի ... Նա տվօ Տր փեսին Նշա-
„նի մատանի. Ե մԹխլ. և այլ տվօ պարգևք Ա սոմ-
„քար արծաԹէ գօտԹ ու Ա դգալմ. և իր անծին լաթն
„Ա ջօխօլմ մերէժով ... վկ այսմ պատահեալ արժանա-
„հօատ ծառայք Աստուծոյ և քհնաներ տնտըքս‖. ևն։

192. Մոյթն միշտ Նախագահ էր և ընդ դատաւո-րացն որոշէր զդատն համառօտիւ, ըստ որում քննե-ցաք զօրագիրս նոցա, յորում դնի այսպէս։

* Թվին ՋԺԳ աւգաւստոսի Է (1464).

„Նա Մեմոն առի Խ սմ. ոՏք իմ աներձագերուն բա-
„ժինէն որ սորկին շահ չի լինայ, ոչ տանն վարձ լի-
„նայ, ոչ խանուԹին վարձ լինայ ու զինն Բ տղան պա-
„հեմ հանցոնց որ հիմիկ կուպահեմ. Նոցայ հալաւ
„շինեմ, ու զնաքայ կերակրեմ. ինչ ատեն տղայք յա-
„ռաջ գան, ու իրենց խելքն ժողվեն ու զան Խ սմ ոՏք
„խոմէ բնտրեն. ես կուզեմ զան Խ սմ ոՏք Նացայ տամ.
„այս բանիս վկ Տր Մոյթ Խաչատուր ... Այս Տր
„տանուտրաց առՋև ունեցայ. վկայուԲ առի‖. ևն։

Այս օրագիր ժամանէ հայերէն մինչև ՚ի ՋԿ. մար-տի ԺԲ. այնուհետև սկսանի Թաթարերէն այսպէս։

* Ի Թվին ՋԿ. հոկտեմբեր ԺԲ (1521)։

„ 'Ի Վրէժատ բան Մատթէոսի քերթողաբանականի. այ
„ կիլիկեցի պերճաբանից ուսուցանող ‖ . ևն ։
* „ Պօլսոյ Լուսաւոր տուխտեր Թորոսա Լւով
„ Ջերմոյ Սրմենիկորոնեան նեմից քաղենաամբերս քո-
„ րս . 18 . յունվ . 1631 ‖ .
Տեսաք գրօբինս կամ զգիրս հարուածեաց կնքեալ
կնքով Նիկոլ տպրեկաիխակապոսին, և Համառօտեալ յե-
կեղեցականաց և 'ի պատուարաց, յորում յիշին օծեալք
հարսին և ընծայք փեսային. որ է սովորութիւն հայոց
եղելոց անդ, և 'ի խրեխմ այսու բանիւ ։
* „ Ուրախութեան բանիւ Համանանցն ուշիմակուլ Խաչըլ
„ Ողին Փիլիպպոսից վասըօ խղճնօրնի առ Ողին Լմաշրօթից
„ բան կրեաքնունիկ . Պօլսոյ Լւովոս . 22 . sep. (սեպտ)
„ 1629 . ունաա նեմից քաղենտարըևս քօրս բառաշահըը-
„ խնդրոս ուշունչի Ծ եկմունդնունիկ պեղբիմ միլաւդիմը
„ պկյիմըզկա . սուպերեցլխնոա որ Ծ պքարքանըսի .
„ երեսփոխանըմնա . Ողին Ծ առոնի օղլու Պերնաթաւից
„ բան Յովսոսունի . առ Ողին Մախնովից բան Սպեգուպ-
„ նունի ‖ . ևն ։

Աշխատութիւնք Լեհաց .

193 . Հայկազունք Լեհաստանու, մանաւանդ Լը-
վովցիք բազում ազատութիւնս առին 'ի տէրութենէն
Լեհաց հանդերձ պարգևագրովք, որով այնչափ հա-
զարաւորք յազգէս Հայոց ինքնայօժար դիմեցին 'ի Լե-
հաստան և ծաղկեցուցին այնչափ քաղաքս ։ Առաջին
պարգևագիրն շնորհեցաւ 'ի մեծէ դքսէն Յուրեգորէ,
որով կոչեաց զՀայս յօգնութիւն իւր յամի տեառն
1062 ։ Զայս հրովարտակ բառ առ բառ օրինակեալ
յիւր ընդարձակ հրովարտակին հաստատեաց Է Սիգիս-
մունդոս Թագաւոր Լեհաց . հանդերձ այլ և այլ
ազատութեամբք և պարգևեաց Լըվովցւոց յամի 1641
(157) ։ Որքեթէ ամենայն Թագաւորք հետզհետէ այս-
պիսի պարգևագրովք բազմապատիկ ազատութիւնս
ետուն հայկազանց, որպէս տեսաք յԼըվով զբազում
հին գրով գրեալս 'ի վերայ մագաղաթի հանդերձ Թա-
գաւորական կնքով ։ Որով զամենայն վաճառականու-
թիւնս գրաւեալ էին Հայք ։

Տեսաք զընդարձակ հրովարտակ Սահփաննոյի ար-քային գրեալ 'ի վերայ մագաղաթի լատիներէն հան-դերձ մեծ կնքով, յորոյ վերայ հայերէն բոլորգիր գրեալ է այսպէս.

* Ջւշռանէ յունիս ԻԸ. Պաւթոռի Շդեֆան Թգր. „ Ած զիւր Թգրուհ պհէ և զինքն ընդ երկայն աւուրս „ պահէ անսասան կենաւք Ամէն ։ Ի յայս ամի եկաւ „ 'ի քաղաքս Լւով, և կրկին հաստատեց առաջին Թա-„ գաւորաց զտուեալ նոմոսն. զի ազատք լինիցին սպա-„ սաւորք եկեղեցւոյ ամ հարկապահանջութէ, եթէ „ Թգրական, և եթէ քաղաքական իցէ, և թէ այլ „ նոր սահմանած զինչ և իցէ ‖ ։ (1578)։

194. Տեսաք նաև զպարգևագիր Կազիմիրի ար-քային գրեալ 'ի վերայ մագաղաթի հին գրով. յո-րոյ վերայ այսպէս գրեալ կայ հայերէն. * Կազիմիր „ Թագաւորին չաղաչքի է Թվ. Քի ծննդենէ ռՆԽԹ „ ումն է ‖ ։ (1449)։ Աւրանօր գոյ այլ պարգևագիր այսր Թագաւորի, որով տայ ազատութիւն հայ իշխա-նապետին։ Այսպէս յամենայն քաղաքս Լեհաստանու այնօրինակ ազատութեամբք և պարգևագրովք փա-ռաւորեալ էին հայկազունք ցորչափ կանգուն կայր այն տէրութիւն։ Բայց իբրև անկաւ տէրութիւնն Լե-հաց, բարձան և այս ամենայն ազատութիւնք, ուստի զարդիս զայն ոսկեզօծ հրովարտակս տեսաք 'ի փոշի համակեալ և 'ի բոյն որդանց կարգեալ։

Ահա այսու ճշմարտի բանն՝ չկարծել մարդոյ ժա-ռանգել զօտարինն և վայելել զօգուտ նորա, երբ ան-ձանաչողութեամբ կորուսանէ զիւրն։ Վասն զի Բազ-մավիշտ Լեհեցիք յետ կորուսանելոյ զինաշխարհիկ հայ-րենիս իւրեանց, ապաստանեալ 'ի Լեհաստան, սկսան անդ մեծաւ եռանդեամբ զարդարել և ծաղկեցուցա-նել զօտար քաղաքս՝ կարծելով լինել ինքեանց սեպհա-կան ժառանգութիւն։

ՍՏԱՆԻՍԼԱՒ

195. Պատմութիւն ուղեգնացութեանս հարկեցոյց զմեզ շրջել անձամբ յայլևայլ քաղաքս Հայոց 'ի Լե-հաստան, և քննել զգործս և զշինութիւնս հայկազանց

Հռոմանոսէ Արքեպիսկոպոսին։ Ուստի յամի տն 1820. յունիսի 4, ելեալ մեր յԱկլօվէ ուղղեցաք զընթացս մեր 'ի Ստանիսլաւ քաղաք. և հանդիպեցաք Տնես-տեր գետոյ, որ ելանէ 'ի մերձակայ լեռնէ անտի առ-երի Սամբոր գեղջ 13. մղոնաւ հեռի աստի. ուր ջուրն է նուազ, ընդ որ առանց դժուարութեան անցաք 'ի միւս կողմն 'ի Հալիչ գլխաւոր քաղաք լեհաց, որ յառաջագոյն էր աթոռանիստ և անուանի վաճառատեղի. այլ այժմ նուազեալ է և ըստ մեծի մասին բնակութիւն եղեալ Հրէից։ Արդ՝ յետ անցանելոյ ընդ այլ և այլ շէնս Լեհաց հասաք ապա 'ի Ստանիսլաւ գեղեցիկ և բարեկարգ մայրաքաղաք Պոքուցիա գաւառին շինեալ յընդարձակ դաշտի անդ, հեռի յԱկլօվէ իբր 15. մղոնաւ։ Ուրանօր բնակեցան Անեցիք յորժամ Անդրէաս փօթոցքի լեհ իշխան հիմնեաց զայս քաղաք յամի տեառն 1670։ 'Ի նմին ժամանակի հրաւիրեաց զՀայս անեցիս 'ի Մոլտավիոյ և 'ի Մաճառըստանէ երթալ անդ և ծաղկեցուցանել զքաղաքն վաճառականութեամբ. ուստի կառոյց վասն նոցա զեկեղեցի փայտաշէն ծախիւք իւրովք. և նոքա լցին զքաղաքն բազում շինուածովք և պանծալի արարին վաճառաշահութեամբ։ Այս քաղաք շինեցաւ յանուն որդւոյ Ստանիսլաւոսին, այնր իշխանի որ մեռաւ 'ի պատերազմին ընդդէմ Այլազգեաց։ 'Ի սկզբան անդ պարսպապատ էր քաղաքս և զարդարեալ մարմարիոնաշէն մահարձանօք և գեղեցիկ դրամբք, զորս բարձին 'ի ժամանակս մեր առ ահի Դաղղիացւոց և միացուցին ընդ արուարձանեայս։ Լի է քաղաքս գեղեցիկ և քարաշէն շինուածովք, ունի 5. եկեղեցիս քարաշէնս, զորս կառուցեալ է Յովսէփ Փօթոցքի երկրորդ որդի մեծի իշխանին. նմին իբր յերկուսին ծայրս քաղաքին կանգնեալ են կրկին սիւնք և 'ի վերայ արձանագիր անուան Յովսեփայ դքսին։ 'Ի վերայ արևմտեան սեան տեսաք կանգնեալ մեծ արձան անարատ յղութեան Աստուածածնին. իսկ 'ի վերայ արևելեան սեան արձան սրբոյն Յովսեփայ։ Գեղեցիկ է հրապարակ քաղաքիս զարդարեալ քարաշէն կրպակօք։ Երևելի է խորհրդարանն և դիտարանն, ևս և պալատք մեծամեծաց և բարձր տունք, որք են քարաշէն և կրկնայարկ առ հասարակ։

196. Հայկազունք այսր քաղաքի են 70. տունք որ բնակին յառանձին արուարձանի Հայոց Բաղ կոչեցելոյ. ունին ընդարձակ պարտէզս. բազումք են վաճառականք. են և արքունի պաշտօնատարք, թող զմեծամեծս՝ որ բնակին 'ի գիւղօրէս: Եկեղեցին Հայոց է գեղեցկաշէն և մեծագործ կառուցեալ 'ի վայելուչ տեղւոջ 'ի քաղաքամիջի անդ համեմատ ըստ ճարտարապետական արուեստի. համակ քարաշէն օրինազարդ և պայծառ. ոչինչ ընդհատ 'ի մեծաշէն եկեղեցեաց Իդալիոյ, հիմնեալ յամի տեառն 1741. 'ի պատիւ անարատ յղութեան Աստուածածնին, ունի կրկին Գեղեցկաշէն զանգակատունս դէմ ընդդէմ միմեանց կանգնեալք 'ի վերայ դրան եկեղեցւոյն: 'Ի մի կողմն աւագ խորանին է աւանդատուն, և 'ի միւս կողմն փոքրիկ դպրատուն լատին, հայ և լեհ գրոց, ուր տեսաք և թաթարերէն գրեանս: Յետկոյս խորանին է գանձատունն քարաշէն, յորոյ վերայ գոն քարուկիր սենեակք, ուր յառաջագոյն գոյր գլուխ դրամոց սակս ողորմութեան պատարագաց:

Այս եկեղեցի ունի զանազան խորանս քարաշէնս և համեմատս. արտաքոյ ունի ընդարձակ բակս շուրջանակի, և բնակարանս քարաշէնս վասն աւագերիցուն՝ և այլ քահանայից: Ժողովրդապետ տեղւոյս է փոխանորդ արքեպիսկոպոսին Լվովի, և քահանայքն են անուանի, ընդ որս եղէ և մեզ կենակցիլ աւուրս ինչ: Հռչակեալ էր այս եկեղեցի սակս բազում հանդիսից որք լինէին, ուր գոյր եղբայրութիւն Անարատ յղութեան, և մեծահանդէս կատարէին զտօնախմբութիւնս Աստուածածնին՝ որպէս ցուցանէ յիշատակարանն եղբայրութեան, ուր տեսաք զբազում անուանս եղբարց: Այլ այժմ նուազեալ են և բազումք մոռացեալ զհայ լեզու: Յիշատակարան եկեղեցւոյն ցուցանէ թէ առաջին ժողովրդապետ եղև աստ Պալասամովիչ. երկրորդն Օախնովիչ. ապա Խաչատուր. Տէր Օլախպան. Միկոլ Մանկըրնակ. Տէր Գրիգոր. Յոհան աճամ, եւն:

197. 'Ի մէջ եկեղեցւոյն թաղեալ կայ Ստանիսլաւցի սրբակրօն քահանայ տէր Յակոբ վարդերեսևիչ, որ բազում աշխատեցաւ 'ի շինել զայս եկեղեցի, և վախճանեցաւ յամի տեառն 1751: Սքանչելի է վարք սո-

րա գրեալ յախճապակեաց, ուր պատմի անուանելի ճգնութիւն սորա. զարհուրելի են մազեղէն շապիկն և երկաթի գօտին, զոր զգենայր 'ի վերայ մերկ մարմնոյն, որովք չարաչար վիրաւորեալ էր մարմինն: Սակայն առողջ էր մարմնով և պայծառ դիմօք՝ որպէս ցուցանէ կենդանագիրն, որ և կարգեալ էր 'ի Հռովմայ ընդհանուր խոստովանահայր, և 'ի հոգևոր հարկաւորութեան հասանէր յօգնութիւն ամենեցուն: 'Ի ցուցակի ննջեցելոց Պութերի այսպէս դնի (204):

* Յամի տն 1717. օգոս. ժա բան Նովլատուր Սօլ-
,, պէյենց նախ սեչովցի, այժմ գուլթեցի 'ի հաղորդու-
,, թեան ըք մօր եկեղեցւոյ զհոգին առ ած աւանդեց.
,, որոյ մարմինն ժբ ամսոյս թաղեցաւ 'ի գերեզմանա-
,, տուն ըաւուզաց գուլթերու. զի դեռ ոչ գոյր եկեղե-
,, ցին հայոց: Ընկալեալ զնք խորհուրդս խոստովանութե,
,, հաղորդութե, և վերջին օծման 'ի ձեռն պատ. տր
,, Յակոբայ Մարգերեսենց խոստովանահօր Սղանխա-
,, լաւովցաւ Ս:

Յերկոսին կողմանս դրան եկեղեցւոյն 'ի ներքոյ եդեալ կան յորմն կրկին մարմարիոնեայ վէմք մին. յաջակողմն, և միւս 'ի ձախակողմն գրեալք լատիներէն տակէգրով 'ի յիշատակ շինութեան եկեղեցւոյն օրինակ զայս:

ԱՋԱԿՈՂՄԵԱՆՆ

D. T. O. M.

Templum hoc sub titulo immaculatae
Conceptionis Deiparae Virginis Mariae.
Sola providentia Divina erectum.
Rectoratu Jacobi Manngievicz
Praepositi ejusdem Templi
Protonotarii Apostolici et Officialis
Armenorum S. Theol. Licent.
Illus.mae e Excellentissimae D.nae
Catharinae Deauro Polok.
Kossakowska Castellanae. Kaminskae.
Ope et inpensis consecravit.

ՁԱԽԱԿՈՂՄԵԱՆՆ

Ill.mus Excel.mus et Rev.mus
D.nus Jacobus Augustinovicz.
Dei et Ap.licae Sedis Gratia
Archip.pus Leopoliensis Armenorum
Cum uno Altari majori
Cui imposuit Reliquias S. Martiris felicissim.
Anno D.ni MDCCXXIII Die 22 Mensis Augusti
Anniversarium quoque Diem Dominicam
Ante 22.dum ejusdem, totis
Indulgentiis designavit stante etc. etc.

ԼԻՍՑԱ կամ ԼԸՇԿՕ

198. Ի գիւղաքաղաք շինեալ 'ի դաշտավայրի միում ժամու հեռի 'ի Սամբոլայ է, ուր ամենայն շինուածք են փայտակերտ. իսկ բնակիչք ընդ ամենայն երկու հազար, յորս 60. տունք են Հայոց, որք ունին եկեղեցի փայտաշէն ընդարձակ 7. խորանօք կառուցեալ յանուն վերափոխման Աստուածածնին: Տեսաք յաւագ խորանի զհին պատկեր Տիրամօրն հրաշագործ և բարորվին արծաթապատ, որում երթան յուխտ ամենայն քրիստոնեայք ջերմեռանդեամբ վասն հրաշագործութեանցն զոր առնէ, և զոր պարար կանխաւ. երբ ժանտախտն ճարակեալ էր յայն ամենայն կողմանս՝ միայն Լիսցա քաղաքն ազատ գտաւ անտի բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին: Սմանի ուրուրեք հարկանէին 'ի ժանտախտէ՝ անդր դիմէին յուխտ և անդէն ազատէին. Նմին իրի հռչակաւոր է յոյժ այս պատկեր հրաշագործութեամբ:

Յամի տեառն 1782. այրեցաւ այս քաղաք. եւ և եկեղեցիք Հայոց և Լեհաց: Հայք վերստին շինեցին, այլ ոչ և Լեհք. ուստի նոքա եւս կատարեն յեկեղեցին Հայոց զաստուածային պաշտամունս: Ժողովրդապետ Հայոց է մի 'ի կանոնիկոսաց Լվովի, որ բնակի 'ի տունս եկեղեցւոյն և ունի ընդարձակ պարտէզ յետկոյս եկեղեցւոյն. 'ի քաղաքի աստ ոչ տեսաք զերևելի ինչ:

ՊԷՐԷԺԱՆ

199. Ի փոքրիկ և բարեշէն քաղաք ոչինչ կարի հեռի 'ի Ստանիսլաւէ, ունի զօրաւոր Դղեակ և չափաւոր բնակիչս Լեհս, Ռուսս, Հայս, և Հրէայս։ Յառաջագոյն բազում էին անդ Հայք իբր 200. տունք, բայց այժմ 60. տունք մնացեալ են, զորս հովուէ ժողովրդապետն առաքեալ յԻլվովէ։ Եկեղեցին Հայոց է յանուն սրբոյ Աստուածածնին։

ԴԻՍՄԻՆԻՑ

200. Այս քաղաք երկք ժամու հեռի է 'ի Ստանիսլաւէ 'ի հարաւակողմն. շինուածք նորա անշուք գետնայարկ և փայտակերտ։ Բնակիչքն են երեք հազար և աւելի յորս բազումք Հրէայ են, իսկ Հայք են 50. տունք, որք վաճառական են անասնոց. գոն և երևելի վաճառականք։ Աստ երևելի ինչ ոչ տեսաք բաց 'ի քարաշէն և վայելուչ եկեղեցւոյն Հայոց, բարձրաշէն՝ կառուցեալ 'ի վերայ հրապարակին յանուն սուրբ Աստուածածնի, հինգ խորանօք. որ յառաջ փայտակերտ էր. այլ զկնի հրդեհին շինեցաւ փառաւոր յամի տեառն 1750։ Յաւագ խորանին եդեալ կայ հրաշագործ պատկեր սուրբ Գայեդանոսի, յորոյ անուն կոչի սովորաբար եկեղեցի Գայեդանոսի։

Տեսաք անդ Յայսմաւուր սրբագրեալ. 'ի յիշատակարանի գտնի. * Ստացողի գրոյս Եղվարթեցի խօջայ » Լուսայուն և կողակցուն նորա Մարիամին, և հօրն » նորա տէր Ռաքելին ... ողորմիս ասացէք »։

Իսկ 'ի մկրտատետրին այսպէս գտնի. * Յամի տն 1713. » յունիսի ամսուն ժդ ես տէր Գրիգոր ամիրեան հո- » գաբարձու եկեղեցւոյս Ածածնի Դիսմինիցու քա- » ղաքիս մկրտեցի և դրոշմեցի յաւուր Յունիսի ինուն » ծնեալն ... որում անուն եդաւ յոհաննէս ». եւն։ 'Ի մի կողմն եկեղեցւոյն է բնակարան աւագերիցուն, որ գայ յԻլվովէ։ Ժողովուրդ տեղւոյս առաւել յըստակ խօսին հայերէն. զի սոքա 'ի յետին ժամանակս եկին աստ, որպէս պատմեցին մեզ, թէ 170. ամօք յա-

ուղ 42. տունք Հայոց եկին 'ի Կամենիցէ և բնակեցան աստ ։

ՍՆԵԱՏԻՆ

201. Ի ընդարձակ գիւղաքաղաք միով աւուրբ հեռի 'ի Կոլոմնիցէ շինեալ 'ի վերայ դարի գեղեցկադիր, այլ անշուք և փայտակերտ են տունք և բնակարանք, իսկ բնակիչք ըստ մեծի մասին են Հրեայք ։ Արկին եկեղեցիք գոն աստ Հայոց և Լեհաց, Լեհաց եկեղեցին է փայտաշէն, ունի ընդարձակ բակ և վայելչադիր ժամատուն, ուր բնակեցաք ընդ Նախապատիւ հայ կանոնիկոսին տէր Նիկոլի Մարամորուշ (164,) որ նորոգ շինեաց գեղեցիկ զայս վանատուն, առ որով անցանէ ընդ արևելս Պրութ գետ, յոր անկանի Չէրէմուշ գետ և կորուսանէ զանուն իւր ։

Հայկազունք 'ի քաղաքիս են 70. տունք, յորոց բազումք վաճառականք են, և մեծամեծք 'ի գիւղօրէս բնակին. բնակքն յստակ խօսին հայերէն, և՛ չստ ծերք զայլ լեզու ոչ գիտեն ։ Եկեղեցին Հայոց է քարաշէն և վայելուչ կառուցեալ յանուն վերափոխման Աստուածածնին. յաւագ խորանի եդեալ կայ հին հրաշագործ պատկեր նորա տախտականկար բերեալ 'ի Հայաստանէ, որպէս ասեն ։ Պատմեցին ծերք, թէ 'ի ժամանակս ժանտախտին երբեմն զայս պատկեր թափօրիւ հանին արտաքս, և առհասարակ աղօթեցին՝ իսկոյն բարձաւ հիւանդութիւնն ։

Եկեղեցին ունի վանատուն բնակարան ժողովրդապետին, ընդարձակ պարտէզ և բակ, ուր տեսաք դամբարանս հայ դրօշ ։ Ծերք պատմեցին մեզ թէ 300. ամօք յառաջ կային աստ Հայք և ունէին փայտակերտ եկեղեցի ։ Տեսաք յայսմ եկեղեցւոջ հին աւետարան բոլորգիր գրեալ 'ի Եաշ, ուր 'ի վերջին գրի.
* Աւարտեցաւ այս Սբ. Աւետարան 'ի լաւ և յընտիր
„ աւրինակէ 'ի թվականութեան հայոց ռՂԲ (1643). 'ի
„ թագաւորութեան Լեհաց աշխարհին չրդ. Վլադիս-
„ լաւին և իշխանացն մերոց... և վօյթութեան թան Ահա-
„ նին և երկասասան գաւառորացն ||. են ։

Իսկ 'ի մկրտատետրին Գութերու եկեղեցւոյս գրի.
* 1720. մարտի ժա. Պատուելի Տէր Յակոբ Բաղ-

„ ատարբերեց Սնեատինու հոգաբարձն մկրտեաց և դրոշ-
„ մեց զտղայն ||. ևն։

ՀՕՌՈՑԵՆՔԱ

202. Է քաղաք Պոքուչէն իբր 3. մղոնաւ հեռի 'ի Սնեադինէ՝ շինեալ 'ի մէջ բլրոց, ուր բնակին իբր 3000. ժողովուրդք 'ի զանազան ազգաց. երեք մեծաշէն եկեղեցիք են 'ի նմա, զորս շինեաց Նիկողայոս Փոթոցքի տէր քաղաքին։ Մին 'ի նոցանէ է Լեհաց յոյժ փառաւոր. երկրորդն է Ռուսաց, որոյ գմբեթն է ոսկեձապատ. և երրորդն է Հայոց՝ յանուն սուրբ Աստուածածնին, առ որում կայ և ժամատուն, որ է բնակարան հայ ժողովրդապետին, որ գայ յԼւովէ։ Բայց տանիք այսր եկեղեցւոյ դոլավ փայտաշէն այրեցաւ։ Յառաջագոյն կային աստ 100. տունք Հայոց, այլ 'ի պատճառս ժանտախտին նուազեցան յոյժ. այժմ գան 40. տունք՝ յորս շատք աղքատք են։

'Ի մկրտատետրի եկեղեցւոյն Պուլթերու գնի *Յա-
„ մի տն 1735. ես տէր Ստեփաննոս Հօրոտէնքայի
„ քհնյ մկրտեցի և դրոշմեցի զորդի տղայն ծնեալն 'ի
„ բան Խոյաչատուրէն Տօմինիկովիչէն և 'ի Նշաղութենէն
„ օրինաւոր ամուսնացեալ այսր բարօխանէ ||։

ԶԱՄՈՍՑԱ

203. Սոյն քաղաք ունի ամուր բերդ, զոր շինեաց Յովհաննէս Զամոյչէ մեծ ատենադպիրն Լեհաց. ունի համալսարան և մեծաշէն եկեղեցի Լեհաց։ Նականաւոր է և քարաշէն եկեղեցին Հայոց, զոր շինեաց Ճուղայեցի իշխան մին յանուն սուրբ Աստուածածնին. և ունի վանատուն, ուր դրեցաւ Յակոբի տաղմոսարանն, որպէս գնի 'ի յիշատակարանին. * Գրեցաւ 'ի
„ ռձէ (1628) ամի 'ի քաղաքս Զամոսցա ՟Է հովա-
„ նեաւ տր. Աստուածածնին. յանցեալ ամի վաղճանեցաւ տր
„ Մելքիսեդեկ կաթղիկոսն 'ի Կամենից։ Բայց առաջ-
„ նորդ Լեհաց էր տր Նիկողայոս արքեպս ||։

Յառաջագոյն բազում էին աստ Հայք երևելիք վա-

ճառականք, որք ունէին պարգևագիրս յարքայէն Լե-հաց և զազատութիւնս սակս վաճառաց. որպէս բերէ ժգերորդ գլուխն պարգևագրին Սաշքովայ զայս օրի-նակ. * Ինչպէս Զամօսցեայ քաղաքին հայերն ունին
„ բրավան, որ բովանդակ Լեհաց փողին վրա գնալով
„ ապրանքով զփրայականս և զրժէչբօսբօլիդային մի-
„ թան հիչ չիտան, այսպէս Ս. Եւն :

Սակայն այժմ չիք անդ Հայ. նաև իւր տէրութիւնն գրաւեաց զեկեղեցին Հայոց, և զձեռագիր մատեանս նոցա փոխադրեաց 'ի Վիեննա և եդ 'ի կայսերական գրատան :

Նոյնպէս յառաջ կային Հայք 'ի Լուպլին քաղաք, և ունէին եկեղեցի, զոր այժմ ժառանգեցին Լեհք, առ 'ի չգոյէ անդ Հայոց :

ԳՈՒԹԵՐ

204. Անցեալ մեր կառօք ընդ սահմանաջուր գետն Պրուտ և ընդ գեղազուարճ դաշտս և հովիտս հասաք 'ի Գութեր փոքրիկ քաղաք վայելչադիր և զուարճա-ցի կառուցեալ 'ի մերձին ծայր Կալիցիոյ : Առ որով անցանէ Չերեմուշ գետ, որ բաժանէ զԼեհաստան 'ի Պուքովինայէ. իսկ լեռնակողմն քաղաքին ժամանէ մին-չև ցսահմանս Մաճառաց : Ուստի այս տեղի իբրև ան-կիւն ձևացեալ կոչի 'ի լեզու Լեհաց Պոքուտիէ. այսինքն անկիւն :

Այս երկիր յառաջագոյն անտառաւոր էր. այլ 20. տունք Հայոց եկին անդ հրաւիրմամբ Ը Օգոստոսի Թագաւորին Լեհաց, որ ետ նոցա պարգևագիր ար-տօնութեանց 'ի 1715. յուլ. 18. զոր և տեսաք : Որով սկսան Հայք շինել զայս քաղաք. և առաջին հիմնարկողն եղև Տասպէյ հայ վաճառականն, որ եկն 'ի Մոլտավիոյ : Բայց նախ ետ հատանել զմեծ զան-տառն զայն և ապա այլք հետզհետէ բազմանալով շի-նեցին զայն քաղաք և ծաղկեցուցին վաճառականու-թեամբ : Այժմեան բնակիչք են 3000. 'ի զանազան ազգաց. բայց Հայք անուանի են, մանաւանդ մեծա-մեծք որք 'ի Գիւղօրէս բնակին, և շատք են Խրադա-խորդք. ուր ընտիր լինի կաշին : Տունք Հայոց են 175. որք առ տէրութեամբ Լեհաց ունէին քաղաքամ աղա-

տութիւնս առանձին դատաւորան, և դատաւորս: Հին եկեղեցին էր փայտակերտ, ապա շինեցին քարաշէն և գեղեցիկ յանուն անարատ յղութեան Աստուածածնին. բայց որովհետև Լեհք և Գերմանացիք չունին առանձին եկեղեցի, նմին իրի այն անբաւական է այնչափ բազմութեան. և հայ ժողովրդապետն հովուէ զնոսա, որ է Կանոնիկոս Նախագահ կամ փոխանորդ արքեպիսկոպոսին Լվովի:

Ոչ միայն շինուած այսոր եկեղեցւոյ է վայելուչ, այլև դիրքն է գեղազուարճ և բարձր. զի 'ի մի կողմն է մեծ փողոց քաղաքին, և 'ի միւս կողմն են պարտէզք գեղեցիկք մինչև ցգետն: Անդ է քարաշէն և պայծառ վանատունն, զոր նորոգ կառոյց Նախապատիւ Կանոնիկոսն տէր Սամուէլ Մոշորով. ընդ որում մեծահանդէս կատարեցաք զտօնախմբութիւն սրբոյն Անտոնի Պատուացւոյն հանդերձ բազմախուռն թափօրիւ: Տեսաք 'ի սկիզբն մկրտատեղւոյն գրեալ. *Յամի
„ տն 1717. և հայոց ռճկզ. դեկ. իա. Ես տէր Գրիգոր
„ Սարդամենոյ Ռութերու եկեղեցւոյս հոգաբարձու
„ մկրտեցի և դրոշմեցի զէգ տղայն ծնեալն 'ի դեկ. ի.
„ 'ի բան Խաչումեն Շապուէյենց և Մարենայէն օրի-
„ նաւոր ամուսնեայց այսր բարօխուն. որում անունն
„ եդաւ Կուլ խաթուն: Կնքահայրն եղաւ. բ. Պա-
„ րիպ Սարդանն: Յամի տն 1738. յամսոյն մարտի
„ ին. ես տէր Ստեփաննոս Նիկողայանց 'ի զարմէ Խոս-
„ րովի Թագաւորին Հ. եղբայր վերոյգրեալ տն տէր
„ Սքւէնտի Ռութերու եկե. անցեալ հոգաբարձի
„ մկրտեցի և դրոշմեցի զարու տղայն Ս. ևն:

Այս քաղաք շրջապատեալ է 'ի զուարճալի բլրոց, և 'ի դաշտօրէից, որք զարդարեալ են զանազան ծառովք. կայ աստ Դընչէնա ծառն, որոյ փայտ արկեալ 'ի ջուր՝ լինի դեղթափ վասն վիրաւորելոց 'ի կատաղի շանց. որք իբրև ըմպեն զայն ջուր՝ փութով ազատին:

205. Յետ շրջելոյ մեր յայսոսիկ կողմանս ըստ բաւականին, ապա անցեալ լաստիւ ընդ ահաւոր գետն Չէրէմուշ գնացաք 'ի Սիժնիցա գիւղաքաղաք հանդէպ Գութերու, ուր թէպէտ չիք եկեղեցի Հայոց, բայց գոն հայ գիւղապետ իշխանք: Աստի սկսանի ծայր աշխարհին Պուքօվենայի, զոր ստորագրեսցուք զկնի անցանելոյ ընդ միւս մասն Լեհաստանու: Ժամ է

մեզ արդ անցանել դարձեալ ընդ գետն Տնեստեր և գնալ յՈւսիա, անտի 'ի ծայր Կալիցիայի յՕդօք գիւղաքաղաք. ուր գոյ արգելանոց կառուցեալ 'ի ժամանակին, երբ առին այլազգիք զՕւանչա (209)։

ՀԱՅԿԱԶՈՒՆՔ ԼԵՀԱՍՏԱՆԻ

'Ի ԲԱԺՆԻՆ ՌՈՒՍԱՑ

206. 'Ի բաժանել թագաւորութեանն Լեհաց՝ մեծ մասն անկաւ ընդ հզօր տէրութեամբ Ռուսաց. որով մի մասն հայկազանց և քաղաքաց նոցա մնաց 'ի Կալիցիա կամ 'ի Գերմանական Լեհաստան, և միւս մասն բաժանեալ 'ի նոցանէ եանց առ Ռուսս։ Վասն որոյ անցեալ մեր ընդ մի մասնն Լեհաստանու, սկսանիմք այժուհետև շրջիլ ընդ միւս մասն և գրել զանցս և զպատմութիւնս հայկազանց այնր մասին՝ սերելոց յՄենեցոց և ապա անդրէն դառնալ յաշխարհն Պուքովինայի՝ որ ընդ տէրութեամբ Գերմանացւոց հանդէպ Կալիցիոյ։ Որովհետև այն չէ Լեհաստան, այլ երկիր Մոլտավիոյ՝ սահմանակից Մաճառաց աշխարհին, նմին իրի 'ի դէպ է անտի անցանել 'ի պատմութիւն Հայոց Մաճառաստանու, Մոլտավիոյ և Վալաքիոյ այլովքն հանդերձ։

ԽԱՉԼՈՎՑԱ

207. Ի հին քաղաք Վոլինիայ գաւառին Լեհաց. երբեմն հռչակեալ յոյժ սակս բնակելոյ 'ի նմա բազում ազգաց, ուրանօր Հայք այնչափ զօրացան՝ մինչև առնուլ նոցա բազում ազատութիւնս յարքայէն Լեհաց, ունելով առանձին դատարան, Վոյթ, և դատաւորս, նաև եպիսկոպոս։ 'Ի ժամանակին յայնմիկ նախապատիւքն 'ի քաղաքին էին Հայք, որք և շինեցին բերդ, կառուցին յոլով շինուածս հրաշակերտս և աղբիւրս՝ հայ արձանագրութեամբ։

Եկեղեցին Հայոց մեծագործ է և գեղեցիկ՝ կառու-

ցեալ 'ի վերայ վայելչագիր բլրոյ քարաշէն յանուն Աստուածածնին. առ որով անցանէ ջուր։ Այժմ չիք անդ Հայ. զի կէս մի 'ի Նոյանէ անցին յԻլվով, և կէս մի 'ի Կամենից և 'ի Անեատին։ Ուերբ պատմեցին մեզ աւանդութեամբ, թէ Վրէֆեցի Հայք յՈւմեանի դաշտէն (510) աստ եկեալ բնակեցան. յետոյ Յովհաննէս վարդապետն անեծ զքաղաքն և զԻլախ պարոնն, որ անդէն և անդ մեռաւ հանդերձ որդւով իւրով, և քաղաքն ոչ մնաց յառաջին բարեկարգութեան. յորմէ ցրուեցան Հայք։

Հայ ժողովրդապետն յառաջագոյն երթայր յԻլվովէ, և ապա 'ի Մոյլովէ (250)։ 'Ի յիշատակարանի սաղմոսարանին այսպէս գնի. * Գրեցաւ սա 'ի մայրա-
» քաղաքն Իազլովցա, ընդ հովանեաւ հաճկատար սբ
» Աստուածածնին, 'ի թուականութեանս հայոց ռՂԴ
» (1645) 'ի հայրապետութեան տն տր Փիլիպոսի . . . Ի
» յառաջնորդութեան տր Անդրէաս արքեպին 'ի Իազ-
» լովցա քաղաքին. և թագաւորութեն լեհաց Յին չորրդ
» Վլատիսլաւին . . ընդ հովանեաւ նորաշէն հաճկատար
» սբ Ծածնին և սբ Լուսաւորչին . . և փոյթութե
» բան Գաղտասարին և Երկոտասան դատաւորացն ‖ ։

Իսկ 'ի յիշատակարանի Ճաշոցին Անեադինի այսպէս գնի. * Առացան զսա անջինջ յիշատակ հալալ յընչից
» և վաստակոց իւրեանց, և եդին 'ի դուռն սբ Ծա-
» ծնայ . . . ով ոք չունի իշխանութի հանել զսա 'ի սբ Ծա-
» ծնայ դրանէս 'ի մայրաքաղաքն Իազլովցայու, նորա
» չէն հաճկատար սբ Ծածնայ. ‖ են ։

ԼՈՒՑԿԱ

208. Ի գլխաւոր քաղաք Վոլինիայ գաւառին՝ բարեշէն և բազմամարդ մերձ 'ի գետն Ստիր։ Ունի բերդ և երկու եպիսկոպոսարանս Լեհաց և Ռուսաց։ Յամի տեառն 1429. մեծ ժողով եղե աստ իշխանաց և թագաւորաց. անդ էր և Սիկիսմունտոս կայսր։

Յառաջագոյն բազում էին անդ յազգէս Հայոց, և ունէին եպիսկոպոս. որպէս յայտ է 'ի հրովարտակէն Սուիտրիկալ դքսին Լիտվանիոյ, որ ետ եպիսկոպոսին 'ի մշտնջենաւոր պարգև զգիւղն Զէփէռով. զոր և հաս

տուեաց վերջին Թագաւորն Լեհաց Ստանիսլաւոս Օգոստոս յամի տեառն 1785. որով և հայ ժողովրդապետն մինչև ցայժմ ժառանգէ զայն գիւղ. Թէպէտ չունի հայազգի ժողովուրդ, այլ հովուէ զԼեհս: Օւրանոր ժողովրդապետ եղև Սիմոնովիչ գիտնական Կամենիկոս, որ ապա ընտրեցաւ Արքեպիսկոպոս Լըվովի: Եկեղեցին Հայոց է քարաշէն, բայց հնացեալ. ուր այժմ երթայ ժողովրդապետ յաթոռոյն Մոյլավայ (250):

Յամի տեառն 1639. Փիլիպպոս կաթուղիկոս գրեաց կոնդակ առ հայկազունս Լուցկայի՝ յորդորելով զնոսա միաբան մնալ ընդ Լվովցոյ: Բազում էին 'ի հնումն երևելի վաճառականք ոչ միայն 'ի Լուցկա, այլև 'ի Վարսովիա մայրաքաղաքն Լեհաց, և 'ի Լիթվանիա. այլ այժմ յայսմիկ կողմանս միայն անուն Հայոց մնացեալ է:

ԶՈՒԱՆՉԱ

209. Ըստ բերման կարգի ուղևորութեանս՝ երբ պէտք եղեն անցանել 'ի Բոտոլիա նահանգ Լեհաստանու, հասաք 'ի ծայր Կալիցիոյ յՕգօբ (205): Ըստ իւրև 'ի լեզու վերջանայ այս աշխարհ. քանզի յաջակողմանէ անցեալ Տնեսդեր գետ՝ բաժանէ զԿալիցիա 'ի Պեսարապիոյ (309), և 'ի ձախմէ անցեալ վտակն Օպուռչ՝ բաժանէ զայն 'ի Բոտոլիոյ. ուստի և է սահմանագլուխ: Նորին ազգաւ զկամուրջ այսր վտակի ըստ կիսոյն ներկեալ տեսաք գունով Գերմանական տէրութեան, և ըստ միւս կիսոյն գունով Ռուսաց տէրութեան: Ընդ որ անցեալ մեր 'ի կողմն Ռուսիոյ՝ ոչ սակաւ ընդունելութիւնս տեսաք յիշխանաց տեղւոյն, որ կոչի Սաքովից՝ վայելչադիր գիւղաքաղաք, սահմանագլուխ տէրութեան Ռուսաց. ուստի յետ միոյ ժամու հասաք 'ի Օուանչա:

210. Այս քաղաք յառաջագոյն բարեշէն էր և բազմավաճառ. ուր կային բազում երևելի վաճառականք յազգէս մերմէ, որք ունէին գեղեցիկ տունս, պարտէզս և վաճառանոցս: Դիրք քաղաքիս բարձրահայեաց է և զուարճալի. առ որով անցեալ Տնեսդերայ, բաժանէ զայն 'ի հանդիպակաց բերդէն Խօթունի:

Բերդ Օսմանչայի փոքր է, այլ վայելչադիր․ առ որով անցանէ գետակն Օսմանչիա․ որ պար առեալ զմիւս կողմամբ քաղաքին՝ երթայ թափի 'ի Տնեսդէր։ Զտեսաք ինչ յիշատակաց արժանի 'ի բերդիս և ոչ առարութիւն մնացեալ 'ի նախնեաց անտի․ ուր պատուասիրեաց զմեզ բերդակալ իշխանն Լեհ։ Հրապարակ քաղաքիս ընդարձակ է, այլ անշուք՝ յետ անցանելոյ վաճառանոցին 'ի ձեռս Հրէից, որք գրաւեալ զտունս և զտեղիս Հայոց լցեալ են զքաղաքն․ քանզի չիք անդ այժմ Հայ։ Իսկ Լեհ ժողովրդապետն նստեալ յեկեղեցին և 'ի վանատան Հայոց հովուէ զազգ իւր։ Յառաջն կային 'ի քաղաքիս 100. տունք Հայոց, որք յայլ և այլ կողմանց հաւաքեալ անդ ձևացան հասարակութիւն գեղեցիկ, և վառեալ միաբանական սիրով ձեռն արկին շինել նախ զփայտաշէն եկեղեցին, և ապա զայժմեան քարաշէն եկեղեցին, առաջնորդութեամբ տէր Գրիգորին Հանգեվիչ, որոյ գերեզման կայ 'ի մէջ եկեղեցւոյն։ Այս գեղեցիկ ժողով Հայոց 'ի չնչին պատճառէ իմեքէ չարաչար խանգարեցաւ զոյգ ընդ բարեկարգութեան քաղաքին․ քանզի յամի տեառն 1766. խօթունցի այլազգիք եկեալ յեզերս Տնեսդերի՝ սկսան հակառակիլ ընդ Լեհ զօրականին, որ իբրև վանեաց զնոսա անտի, նոքա բարկացեալ գունդ կազմեցին, և կատաղաբար արշաւեցին 'ի Օսմանչա, սկսան այրել և կողոպտել զքաղաքն․ հազիւ ճողոպրեցան քաղաքացիք և զերծան 'ի բերդն և յեկեղեցին Հայոց, որք այնուհետև սկսան ցրուիլ աստ և անդ, մանաւանդ զկնի պատերազմին 'ի 1768. և մեծ մասն ժողովրդեան բնակեցաւ 'ի Կամենից։

211. Եկեղեցին Հայոց է գեղեցիկ և չափաւոր մեծ և բարձր՝ կառուցեալ 'ի ձև յոնիական, ունի 6 խորանս․ աւագ խորանն, որպէս և եկեղեցին նուիրեալ է անարատ յղութեան Աստուածածնին․ 'ի մի կողմն է խորան սուրբ Լուսաւորչին և Խաչելութեան․ և 'ի միւս կողմն է պատկեր Գայեթանոսի, որում երևի Տիրամայրն․ զոր զարդարեալ են ոսկի զարդուք և պատուական ակամբք։ Յորմն տեսաք հին պատկեր Պետրոսի առաքելոյն՝ հանդերձ այսպիսի գրուածով․

* Մ՟ պէտ․ մռ․ Յիշատակ է աղբամցի մահտեսի Մարո Գիսի որդի ծառա Սահակին ||։

'Ի նոյն կողմն է խորան սրբոյն Անանի, և առաքելոցն Թադէոսի և Բարթուղիմէոսի. յորում Թադէոս զգաստառակ Քրիստոսի ցուցանէ Բարթուղիմէոսի: Իսկ 'ի միւս կողմն է դաշանց պատկեր, իբր զի՝ սուրբ Լուսաւորիչն կալեալ զձեռանէ սրբոյն Սեղբեստրոսի՝ դնէ ուխտ, և 'ի թիկանց նորա կացեալ երկուց սարկաւագաց՝ մին ունի զսկիհն, և միւսն թաթախէ զգրիչն յարիւն փրկչին և տայ Լուսաւորչին 'ի գրել զթուղթն դաշանց: Առ երի խորանի Լուսաւորչին գոյ տապան այսու տառանաւորաւ.

* Այս շիրիմս հանգստարանին,
» Խարիպ Շահեայ ազգատոհմին.
» Արստացի պարոն Յակոբին,
» Որդուն անուանեալ Նազարին,
» Որ փոխեցաւ 'ի կեանս թվլին.
» Հազար երկու հարիւր հինգին.
» [illegible] քսան ներեգին.
» Հանդիպօղք յիշէք սորա հոգին Ա:

Այսպէս 'ի բոլոր յատակ եկեղեցւոյն կան մեծամեծ տապանք, այլ շատք անվերծանելի են: Յայսմ եկեղեցւոջ բազում հանդիսաւոր տօնախմբութիւնք կատարէին 'ի պատիւ անարատ յղութեան Աստուածածնին. գոյր և եղբայրութիւն: Տեսաք 'ի տարեգրի ննջեցեալ եղբարց 32 անուանս:

212. 'Ի վերայ գրան եկեղեցւոյն գոյ վէմ, փորագրեալ 'ի վերայ Գառան աստուծոյ. և 'ի վեր անդր զարդ ինչ. 'ի միջոցին գլուխ առիւծու քանդակեալ, և 'ի բերանոյ նորա հուր ելանէ: 'Ի Ճակատի անդ յերկոսին կողմանս կառուցեալ կան երկու քարուկիր զանգակատունք. և 'ի միջի անդ քարաշէն մեծ պատուանդան շինեալ վասն մեծի արձանին, զոր եդուն ձուլել 'ի Տանձքա 'ի պատիւ Անարատ յղութեան Տիրամօրն: Այս մեծագործ արձան պղնձաձոյլ և ոսկեզօծ՝ գեղեցիկ է յոյժ՝ կացեալ 'ի վերայ պղնձաձոյլ աշխարհի, և ընդ ոտիւք օձ 'ի բերանի խնձոր. երկայն է 10 թզաչափ, համեմատ չափակցեալ և ճարտարագործ. զոր տեսաք 'ի Կամենից 'ի [illegible]որան սրբոյն Ստեփաննոսի յարկեղ անդ. թուի թէ փոխադրեալ իցեն անդ 'ի ժամանակս խպատերազմին: Տեսաք յաւանդատան զանազան զգեստս և անօթս մնացեալս

'ի Հայոց անուանի. միայն արծաթի սկիհք են 12. գտան նաև քանի մի գրչագիր մատեանք, և Ճաշոց մի գրեալ 'ի Սկենէաորիկ 'ի Թուին Հայոց ռճկը. իսկ զայլ գրեանս տարեալ են 'ի Կամենից, որպէս տեսաք (218):

Շուրջ զեկեղեցեաւ է ընդարձակ բակ պարսպապատ. 'ի մի կողմն է ժամատունն՝ հանդերձ քանի մի սենեկօք և պարտիզաւ, ուր բնակի լեհ ժողովրդապետ. յաւուրս մեր նորոգեցաւ այս ժամատուն: Աւրանօք պատուաւորաց զմեզ ժողովրդապետն այն բազում մարդասիրութեամբ:

ԿԱՄԵՆԻՑ

213. Է գլխաւոր և գեղեցիկ քաղաքաբերդ Պօդոլիա նահանգին կառուցեալ 'ի վերայ բոլորանիստ ապառաժ բլրի. որպէս և անունն լեհերէն նշանակէ Քարուտ: Նոյն քաղաք յամենայն կողմանց ամրացեալ է դրամբք և աշտարակօք. զորով պատի Սմոտրիչ գետակ, որ ունի ամրաշէն կամուրջս առ 'ի մտանել 'ի քաղաքն: Շինուածք քաղաքիս ըստ մեծի մասին են կրկնայարկ և քարաշէն. վայելուչ է հրապարակն և վաճառատեղին. մեծագործ և փառաւոր են եկեղեցիք, մանաւանդ՝ Պաուա մայր եկեղեցին աթոռանիստ չքնաղ և ընդարձակ, լի գեղեցիկ քանդակօք, ազնիւ մարմարիոնեայ արձանօք և բազում խորանօք. զոր յառման քաղաքին 'ի մզկիթ փոխեալ էին այլազգիք, կառուցեալ արտաքոյ մեծի դրան բարձր քարաշէն Մինարէ ամբակուռ. յորոյ վերայ այժմ կանգնեալ կայ գեղեցիկ և փառաւոր մեծ արձան պղնձաձոյլ ոսկեզօծ անարատ յղութեան Աստուածածնին: Երեւելի և փառաւոր շինուածք քաղաքիս են՝ եպիսկոպոսարանն և պալատք իշխանաւորաց 'ի վերայ հրապարակին: Գեղեցիկ է եկեղեցի Դոմինիկեանց, զոր այլազգիք 'ի մզկիթ փոխեալ էին. յորում տեսաք զտեղի Սայիզի կամ զբեմ ընթերցման Կուրանին, հանդերձ քարաշէն վանդակաւ և սանդուխովք. ուր ընթերցաք և գծագրուածս ինչ Արաբացւոց: Թողում յիշել զայլ եկեղեցիս և զվանորայս միանձանց գեղեցկաշէնս, որոց ոմանք փոխեալ են այժմ յեկեղեցի Ռուսաց:

Այս գեղեցկատեսիլ բերդաքաղաք շրջապատեալ է 'ի զուարճալի բլրոց, յորոց և բաժանի 'ի ձեռն գետակին և խրամոց. Ունի զերիս դրունս. ա կոչի Ռուսաջի դրան, այսինքն դուռն Ռուսաց. զի ատոր մտին Ռուսք: 'Ի պատերազմին՝ որ ընդ այլազգիս, զայս դուռն Հայք պահպանէին, որում ոչ կարացին տիրել թշնամիք՝ մինչև առաւ քաղաքն: բ Օաձոճկի դրան. այսինքն դուռն բերդի: գ Աօլջէ դրան. այսինքն դուռն Լեհաց. զի ատոր ելին Լեհք: Առ երի ամուր դրան 'ի ներքուստ են հին աշտարակք 'ի պաշտպանութիւն այսր դրան: Յամի տեառն 1651. Խազախք պաշարեցին զայս քաղաք, բայց ոչ կարացին առնուլ. ապա 'ի 1672 պաշարեցին Օսմանեանք. մինչև բռնադատեալ քաղաքացւոց ետուն, և մնաց 'ի ձեռս նոցա ամս 27. ապա 'ի 1699. անդրէն առին Լեհք, և այժմ է 'ի ձեռս Ռուսաց: Ուր այժմ բնակին զանազան ազգք. այլ Հրէայք առաւել են. որոց բնակարան 'ի հնումն էր արտաքոյ բերդին մերձ 'ի գետակն. և չունէին հրաման գիշերել 'ի քաղաքին. եթէ 'ի ցերեկի հարկ լինէր նոցա երթալ 'ի քաղաք, տային 15, ստակ 'ի դրան անդ, և այնպէս մտեալ և փութով կատարեալ զգործս՝ ելանէին. այլ այժմ զգեղեցիկ վաճառանոցն և զերևելի տունս Հայոց նոքա գրաւեալ են:

ԱՆԵՑԻՔ ԿԱՄԵՆԻՑԻ

214. Յամի տեառն 1062. Թէոդոր դուքս հրաւիրեաց զԱնեցիս բնակիլ յաշխարհ Ռոսալիոյ 'ի մայրաքաղաքն Կամենից. ուրանօր զօրացեալ և բազմացեալ՝ եղեն գլխաւոր ժողովուրդ քաղաքին: Ունէին առանձին եպիսկոպոս, եպիսկոպոսարան, դատարան, դպրոց և քանի մի եկեղեցիս, զորոց զկնի: Տեսաք զհրովարտակս այլ և այլ թագաւորութեանց, զոր ընկալան յարքայից Լեհաց: Տեղի դատարանին կայ մինչև ցայժմ մերձ 'ի հրապարակն: Այնչափ էին 'ի սմա երևելի վաճառականք և փառաւոր իշխանք, զի գրեթէ բոլոր քաղաքն էր 'ի ձեռս Հայոց. և որպէս ծերք պատմեն, կային աստ 900. տունք Հայոց. այժմ հազիւ գտանին 70 տունք. ոմանք վաճառականք են, և

ոմանք տանին կալուածս, և 'ի գիւղօրէս բնակին ։ Հայոց թաղն է 'ի հարաւակողմն քաղաքին, ուր են եկեղեցիք, վանատուն և հիւանդանոց ։

Սուրբ Նիկողայոս ։

215. Եկեղեցի սրբոյն Նիկողայոսի է մի յերևելի շինուածոց քաղաքիս. և միանգամայն է հռչակաւոր ուխտատեղի քրիստոնէից 'ի պատճառս հրաշագործ պատկերի Աստուածածնին ։ Այս եկեղեցի է քառաշէն, սիւնազարդ, մեծադիր, բարձր և վայելուչ. ունի 6 խորանս. յաւագ խորանն մեծաշէն և փառաւոր՝ դոյ պատկեր սրբոյն Նիկողայոսի 'ի վեր անդր. իսկ հրաշագործ պատկեր Տիրամօրն է 'ի միջավայրի նոյն խորանին ամրափակեալ 'ի պղնձի պատուհանի, զոր բանան յամենայն շաբաթ աւուրս ։ Ուր յաճախեն եռանդեամբք պաշտօնասէր ուխտաւորք և ախտաժէտք. տեսաք զբազումս՝ որ առաջի խորանին անկեալ յօրոայսեալ 'ի վերայ երեսաց իւրեանց բազկատարած աղօթէին հարուստ մի ժամանակ, յորոց ոմանք թեթևացեալ 'ի ցաւոց՝ դառնային խնդութեամբ ։

Ձև հրաշագործ պատկերիս է քառակուսի, իբր կանգնաչափ բարձր, պայծառ և գեղեցկատիպ. զոր ասեն յաւետարանչէն Ղուկայ նկարեալ 'ի վերայ տախտակի հանդերձ աստուածորդւոյն ըստ ձևոյ պատկերին Տրապիզոնի (Պտկր. 129) զոր բերեալ են Հայք յԱնւոյ կամ 'ի Հայաստանէ ։ Բոլորովին արծաթապատ է, բաց 'ի փառահեղ ճառագայթարձակ դիմացն. և 'ի ճառագայթի անդ գլխոյն շուրջանակի ոսկեգիր տառք գրեալ կան, զոր մինչև ցայժմ ոչ ոք կարողացաւ ընթեռնուլ. ոմանք նմանեցուցանեն զայն եբրայական գրոց, և կէսք այլոց ։ Սակայն մեր անձամբ ելեալ 'ի վեր անդր օրինակեցաք ըստ ձևոցն, զոր գտաք յաւէտ մերձաւոր հին գրոցն Հայոց, բայց ձև սոցա ցուցանեն թէ այլ իմն արուեստիւ են գրեալ ։ Ոմանք հաստատեն թէ 'ի Հայաստան 'ի վաղեմի գրչագիր մատեանս տեսանին այսու ձևով գրուածք. որպէս և այն՝ որ գրեալ էր և 'ի վերայ դրան եկեղեցւոյն Բէֆէի, զոր բերեալ ասեն յԱնւոյ (412) ։ Այլ որովհետև 'ի վերայ ճառագայթի պատկերին եդեալ կայ ոսկեզօծ

պատկ՝ նմին իբր միայն զվէրին տողն մարթացաք ընդ-օրինակել, որ է այս.



216. Յորժամ այլազգիք առին զԿամենից, բազումք 'ի Հայոց գերի վարեցան մինչև ցԱքքիրման՝ տարեալ ընդ իւրեանս և զայս պատկեր : Բայց զկնի հաշտութեան իբրև դառնային նաւու ընդ գետն Դանուբ, պատահեցան անհնարին ալէկոծութեան. ամենեքեան անկեալ առաջի պատկերին լային. և ահա յայտնի տեսին զսքանչելիսն, և անվնաս զերծեալք հասին 'ի Կամենից, և եդին զպատկերն յեկեղեցին Աւետման:

Պատմեցին մեզ թէ 'ի տեղի այսր եկեղեցւոյ յառաջագոյն դոյր փոքրիկ եկեղեցի Աստուածածնի, սակայն գտաք 'ի հին յիշատակարանի յայսմաւուրաց զանուանս երից եկեղեցեաց ևս այսպէս. * Ընդ հովա-„նեաւ որբուհւոյ ամենաւհնեալ Աստուածածնին, և „Ս. Նիկողայոս սքանչելագործ հայրապետին, և Ս. „Աւետման Ածածնին ‖ : Այս եկեղեցի նորոգեցաւ յամի տեառն 1756. յունիսի 28. այլ հազիւ աւարտեցաւ 'ի 1767. յուլիսի 26 : Իսկ 'ի 1767. օգոս. 22. զպատկեր Աստուածածնին հանեալ յԱւետման եկեղեցւոյն հանդիսաւոր թափօրիւ եդին յայս եկեղեցի : 'Ի վերայ պատկերին ոսկեգիր փորագրեալ է * Ապա-„ւէն մեղաւորաց ‖ :

217. Աւանդատունն է յետկոյս աւագ խորանին, յորոյ վերայ է բարձր պահարան կամ զգեստատուն. և 'ի ներքս անդ փոքրիկ գրատուն, ուր տեսաք զգրչագիր եկեղեցական մատեանս Հայոց, և զայլ և այլ մատեանս այլոց ազգաց : Տեսաք անդանօր ծանրագին զգեստս և անօթս եկեղեցւոյ : Պատմի 'ի հին յիշատակարանի, թէ տր Յովսէփ ոմն նկարել վասն հինգ խորանաց 'ի վերայ սեաւ կտաւոյ զչարչարանս Յիսուսի ատկս մեծի պահոց : Եկեղեցին ունի երիս դրունս, և իւրաքանչիւրն ունի առաջի գաւիթս քարայատակս. Ճակատ մեծի դրանն է սիւնազարդ և փառաւոր, բայց վերնախարիսխք սեանց դեռ անկատար կան, որպէս և պատուանդանք են առանց արձանաց. աստ կամէին դնել զոսկեզօծ մեծ արձանն Անարատ յղութեան, զոր բերին 'ի Ֆրանչայէ (212), Աւերի հարաւային

դրան յորմն տեսաք մարմարիոնեայ տապան, ծաղկազարդ քանդակեալ, այսու արձանագրութեամբ.

* Շիրիմս այս էր պահարան,
» Մարմնոյս . . . մահվան.
» Օր ի սա էր մեծ վաճառական.
» Ովանէս այս ազնուական.
» Սա էր երկրէն Փարսիական,
» Երեւանու մերձ գիւղական.
» Քանաքեռու անուանական,
» Տանէ որդի Նարաղամեան.
» Սա էր եղեալ երեսնամեան,
» Յորժամ եհաս կենին վախճան.
» Հայոց մեծաց էր Թվ. ռճկզ ին ‖ Են :

218. Իսկ զանգակատունն է հանդէպ հիւսիսային դրանն՝ բարձր և ստուար. առ որով է մատուռն սրբոյն Ստեփաննոսի, որ է քարաշէն հին և հաստատ յոյժ: Պատմեն թէ ոմն ծեր մեծատուն՝ ետ շինել զայս հանդէպ տան իւրոյ 'ի կողմանէ փողոցին առ 'ի լսել անտի զժամասացութիւն և զպատարագ: Ի սա տեսաք զոսկեզօծ արձանն Օուանչայի և քանի մի գրչագիր մատեանս. այլ ոչ տեսաք անդ խորան կամ սեղան, թուի թէ կործանեալ իցէ առ հնութեանն: Ի հանգիպակաց որմն 'ի ներքուստ տեսաք ոսկեգիր յիշատակարան 'ի վերայ մեծի սեաւ մարմարիոնի: Ի ճակատ գրուածոյն փորագրեալ կայ պատկեր խաչելութեան. և յերկոսին կողմանս երկու արք արեւելեան զգեստուք 'ի ծունր իջեալ աղօթեն՝ եդեալ զգլխարկս առաջի իւրեանց. թուի թէ են պատկերք հիմնադրաց եկեղեցւոյն: Յառաջագոյն այս վէմ եդեալ կայր 'ի վերայ դրանն. այլ յառման քաղաքին նկատմամբ իմն հանեալ անտի և 'ի տեղիս տեղիս խանգարեալ զգիրն եդին յորմն, որպէս տեսանի.

* Յն Որդի Հօր միածին,
» Որ բարձրացար վերայ խաչին.
» Սն Ադամայ նախաստեղծին,
» Եւ ամենայն զարմից նորին.
» Մարմնովդ եդար գերեզմանին,
» Հոգւովդ իջեր դժոխք ներքին,
» Օ աւարն աւեր ըզգերողին.
» Եւ դարձուցեր առ Հայրենին.

„ Սպառեցեր զՍպասմըն հին,
„ Եւ ընդ նմին ըղձնունդ նորին,
„ Որ էր մեռեալ համանգամայն,
„ Զգեցուցեր զփառս առաջին.
„ Նոյնպէս շնորհեալ և տէր սոցին,
„ Զտաճարս այս շինել տուողին.
„ . . . . իսու փրկչատային.
„ . . . .
„ Որ հարազատ գոլ անուանին,
„ Ողորմեսցի . . . . . ըստ երկր.
„ Այլև կանանց հոգւո սորին,
„ Մարութինային Թուրքմանտային.
„ Եւ ամենայն ծննդոց . . .
„ Զի ի հալալ արդեանց գանձին,
„ Ետուն իւրեանց յղձմամբ սրտին.
„ . . . .
„ Այ . . . .
„ . . . . յս աշտարակին.
„ Ի յօգնութեան այս մեծ ծախին,
„ Ընծայեցին զում . . . . իլին.
„ Վն հոգւոյ իւրոց ծնողին.
„ Զոր տէրն դասէ խորանս վերին.
„ Ակղք . . . .
„ Տնասցէ զտէր ողորմին.
„ Նորա յանցանքն միշտ քաւեսցին,
„ Ի Թվին ՌՃ Հայոց մեծին.
„ Զէ Թիւ աւելին,
„ Յորժամ զսա կանգ . . . . . .
„ . . . .
„ Ի կնութեան տէր Մովսիսին.
„ Աթոռապահ տր. Գրիգորին.
„ Եւ բարեպաշ . . . . որջորջին.
„ Յինէն նորոգ բանս այս լիցին,
„ Պատճառ ընաւի . . . .
„ . . . .
„ . . . լոկ անուամբ երէց կոչիմ ։

219. Ընդարձակ է գաւիթ եկեղեցւոյն և յերից կողմանց հասանէ մինչև ցփողոցս. ունի կրկին տունս սակս բնակութեան քահանայից, այլ այժմ է տեղի պահապանաց եկեղեցւոյն ։ Յառաջագոյն սաս ընա

կեր ժողովրդապետն. բայց այժմ ամենայն հայ կանո-նիկոսք բնակեն 'ի մեծի վանատանն, որ է քարաշէն բարձր և կրկնայարկ մենարան՝ բաժանեալ 'ի զանազան սենեակս, ուր եղև և մեր բնակութիւն: Աստ նստէր 'ի հնումն առանձին եպիսկոպոս. ապա միացաւ ընդ իշխանութեամբ Լվովի, մինչև եանց Կամենից 'ի Ռուսս: Ապա Յովսէփ Քրիստոֆորովիչ կանոնիկոս Մոյլովի երբ ձեռնադրեցաւ եպիսկոպոս 'ի վերայ հայոց եղելոց 'ի բաժնին Ռուսաց, յայնժամ և Կամենից անկաւ ընդ իշխանութեամբ աթոռոյն Մոյլովի: Իսկ յետ Յովսէփ եպիսկոպոսի աստ փոխադրեցաւ ընդհանուր կառավարութիւն աթոռոյն ընդ իշխանութեամբ տեղապահ կանոնիկոսին Անտոն Սարգերեսևիչի, որ և բազում մեծարանօք պատուասիրեաց զմեզ մինչև ցմահ իւր:

'Ի մկրտատետրի անդ այսպէս գրեալ կայ. * Յամի
„ տն 1713. յունիս ամսոյ Ժ. Ես տէր Յակոբ Սար-
„ դերեսենց Ռապաշչ Կամենիցու բարոխական եկե-
„ ղեցւոյս Ս. Նիկողայոսի հայրապետին՝ մկրտեցի և
„ դրոշմեցի զտղայն յաւուր Է ներկայիս ծնեալ 'ի Յա-
„ կոբայ որդւոյ Զախարիաշին Մաքսիւդին և 'ի Ռօ-
„ զալիայէն ... որոյ անունն եդաւ Անգնոսէնդ ||:

Իսկ 'ի յիշատակարանի հին յայսմաւուրաց այսպէս գրի. * Արդ գրեցաւ սուրբ գիրքս հայոց թվին ռկթ
„ (1620.) 'ի հայրապետութե տն տր Մելքիսեդեկ
„ կթղիկոսին: Եւ 'ի թագաւորութենն այս Լեհաց աշխար-
„ հին երրորդումն Զիկմունդին, 'ի քաղաքս որ կոչի
„ Կամենից, Է հովանեաւ սրբուհւոյ ամենաւրհնեալ
„ Աստածնին և սբ. Նիկողայոս սքանչելագործ հայրա-
„ պետին, և սբ. աւետման Աստածնին, և այլ սրբոցս.
„ ձեռամբ ... Յակոբ քահանայի որդւոյ տր Գրիգոր
„ աւագերիցու. 'ի խնդրոյ պատուական և պայազատ-
„ բան Նուրբգոյին ||. ևն: Գնի ապա թաթարերէն.
* Մէն եազըխալը ||. ևն:

Յիշատակարան սուրբ Նիկողայոսի:

220. Գտաք բոլորգիր հին յիշատակարան եկեղեցւոյ սրբոյն Նիկողայոսի, որ սկսանի այսպէս. * Այս
„ է սկիզբն յիշատակարանիս սբ. Նիկաւղա եկեղեցւոյ:

» ըստ չափոյ կարողութե իւրոյ. 'ի պայծառութի այս սբ տա-
» ճարիս, ասա կամ կարգաւ գրեալ։ Եւ ոչ թէ միայն
» ասա է գրեալ. այլ անուանք նց գրեալ են 'ի դպրութ
» կենաց. մանաւանդ որք առնեն ողորմութ յաւժար
» սրտիւ և առատ կամաւք. Նոյն այ 'ի սբ Նիկաւղա
» տաճարիս։
» Օրհնեալ է ամենասբ Երրորդութիւն... Որան
» զի շնորհքն ածային հանապազ... խորհել տայ, զի
» առնիցեն ողորմութ 'ի այս սբ եկեղեցիս... Յանկա-
» ցողք եղեալ ածային յիշատակիս. այր ածասէր և
» բարեպաշտ որ կոչի Պարոն Սինան... սկսաւ շինել
» այս սբ տաճարս 'ի յանուն սրբոյն Նիկողայոսի սքան-
» չելագործ սբ հայրապետին... Որ և յիշատակն
» ածհնեալ եղիցի, ասա և 'ի հանդերձեալն աշխարհին
» իւրայովքն, ամէն։
» Ած ողորմի ծն Պ բըմ պէյին, հոգոյն որ զգումբ
» պետն բարձրացոյց, և ոսկեզարդ խաչն կանգնեցոյց
» 'ի գլուխն սբ եկեղեցոյ։ Որ լուսաւորէ զին Խաչիկին
» զհոգին, զժամատունն մեծացոյց և կամարակապ
» արար. զոր ած հատուսցէ նմ ամէն։ Նախ և առա-
» ջին այս է տուրք հաւատացեալ քրիստոնէից... Ած
» ողորմի ծր Խաչատուր եպիսկոպոսին հոգոյն. ետուր
» յշնկ սբ տաճարիս ա արծաթէ բուրվառ։ Որ լուսա-
» ւորէ ծր Տիրատուր աւագ իրիցուն, և մօրն իւրոյ
» պհոգին. ետուն յիշատակ ա խաչվարմ և բ խաչն։
» Ած ողորմի հոգոցն Տանային, Նախիլ մելքին, և
» Նշմինպէյին, ետուն յիշատակ այս սբ տաճարիս ա
» շուրջառ և ա մեծ խաչ արծաթէ։ Որ լուսաւորէ
» զհոգին Նիկօլ աղային և իւր կողակցին. տուին ա
» կարմիր խատուֆայ շուրջառ, ոսկի մարգրելխաչով...
» Ած ողորմի հոգւոյն Թաւթուլին և ծնողաց իւրոց.
» եդիր յշնկ ա կարմիր գամխա շուրջառ, և 'ի վե
» խաչ. ըթ ոսկեծաղիկ վարդ մարգրտով շարած, և
» ա մեծ խաչ արծաթէ՝ ակներով, և ոսկեխաւուն...
» Որ խօսս լուսաւորէ հոգւոյն ծն Սօլպէյին...
» ունի յիշատակ.... մէկ արծաթէ սկիհ մաղզմանով.
» և բ խաչ... Պարձեալ վն հոգւոյ իւրոյ շինել ե-
» տուր ա մեծ խուցմ փայտաշէն.... Ստուած ած
» արարածոց իւր ամենակարող շնորհիւն ածհնէ զՏէր
» Տօնական երեսփոխանն, ետուր յշնկ սբ Նիկօլա

» Որչափ կամ թէ մի զմինչ իշխեաղէ իւրաքանչիւր.
» տաճարիս աւագ խորանին ն մեծ և հրաշալի գեղեց-
» կանկար տիրամայր որ ածածնին պատկերքն. և
» գլուխն որ Ածածնին, նոյնպէս և Փրկչին գլուխն,
» արծաթէ գեղեցկաշէն թագերն ոսկեզօծ, ակներով,
» և մարգարտով զարդարած ... Ած ողորմի հոգոյն որ
» Ը միջոյն կրկին ունի յիշատակ՝ ի մէջ խաչին Է ոսկի
» տղայ ‖:

221. Այս յիշատակարան 40 անուանս յիշելով բերէ բազում ոսկեղէն, արծաթեղէն և հանդերձեղէն յիշատակս. յետոյ սկսանի պատմել զշինութիւն զանգակատանն. *Ածային օրհնութեբ և յաջողութեբ ա-
» մենակալ Այն: Սյթութեն որ Հօնաւշին. և երեց-
» փոխանութեն որ Բումանոսին ժողովեցան միաբան որ
» տանուտէրք և խորհուրդ արարին զի այս որ տաճարիս
» ն քարուկիր զանգակատան կանգնեցնեն: Եւ ժողո-
» վեցան միատեղ՝ համօրէն ժողովուրդ մեծ և փոքր, և
» սկսան շինել յուսալով այ օգնութեն, որ էր սահկով,
» որ իւր անձամբ, որն ձիաներով, որն եզներով, որ
» իւր յուժով. և կատարեցին ...

» Զի լուսաւորէ զհոգին որ Խաչատուր եպիսկո-
» պոսին. ետուր յշտկ այս որ տաճարիս ն մեծ և փա-
» ռաւոր զանգակն ... Զի լուսաւորէ զհոգին Սա-
» տատ խաթունին. ետուր յշտկ ն արծաթէ խաչմ ոս-
» կեզօծ. Բ սակքար. և Ա գոգնոց սիրմակար. որ է
» գին Փ թ. սպիկ ... Ած ողորմի հոգոյն որ. Միքուլզայ-
» վոյթին. և զիւր ննջեցեալսն ընդ արդարոն հանգուա-
» ցէ. կանգնեցաւ իւր անձամբն, և սեանդատունն
» կամարակապ շինել երէա որ Նիկաւլայ տաճարիս ‖:

222. Այսու կարգաւ յիշէ 22 անուանս, և բազում արծաթի և կերպասեղէն զարդս. յետոյ սկսանի այսպէս. *Հայոց թվին ՊՀԶ (1427). Ամենանն Աւգոստոսի
» ժէ. Պարոնութեն Լանցգորենցքէյին, և Պռաստա-
» ւորութեն սր Ներսեսին. ժողովեցան միաբան տա-
» նուտէրքն որ Նիկօլայ եկեղեցւոյ, և նորեցին ըզ-
» գետան: Եւ գտան իր շուրջնա. և ժը մեծ խաչ և
» Է փոքր, և Դ սկիհս. և Ե մաղզման ...

» Զի լուսաւորէ զհոգին որ Հուրհորին զննջեցեալսն
» շինել, ետուր եկեղեցւոյ մէջ ն երևելի գլուխ, և ոս-
» կէզարդ խաչ կանգնեց վրան: Եւ այլ ունի յիշա-

„ տակ ս̃ հրաշալի արծաթէ վարշամակ ոսկեջրած . . . .
„ Վ̃ր լուսաւորէ զհոգին Հարպխտին գոսդային , ունի
„ յշ̃ռկ ս̃ Ձուփդ բազման քուփդ կարած , ոսկի վար-
„ դերով Ծի . և մարգրտով շարած . . . Ա̃ծ ողորմի հո-
„ գոյն պոթչանցի հայր Յովսեփին . եւ սուր յշ̃ռկ նը
„ Նիկօլայ եկեղեցւոյ ս̃ հրաշալի խաչ պատուանդա-
„ նով արծաթէ ոսկեջրած . . . Ա̃ծ ողորմի հոգւոյն տ̃ր
„ Գրիգորին և իւր ննջեցելոցն ըստ արդարոն հան-
„ գուցէ . եդիր յշ̃ռկ նը Նիկօղա տաճարիս ս̃ մեծ
„ փառաւոր և հրաշալի և քաղցրաձայն զանգակ , զոր
„ տ̃ր հաստուեցէ նմա : Պարձեալ ա̃ծ ողորմի տ̃ր Գրի-
„ գորին հոգւուն զզանկակատունն բարձրացոյց և վ̃ր
„ խարձեց իւր հալալ արդեանց կ̃ Փլի . . . Ա̃ծ ողորմի
„ հոգւոյն սէչովցի տ̃ր Ղուկին . ունի յիշ̃ռկ այս նը
„ տաճարիս ս̃ սքանչելի և̃ փառաւոր նը աւետարան ,
„ որ է պատկերանկար և է մագաղաթ || : Ի նմին յի-
շատակարանի դնին 28 անուանք՝ հանդերձ մեծագին
յիշատակօք . և ապա պատմէ այսպէս .

223 . * Հայոց թվին , աբեթական տօմարին ո̃ւ ամին
„ և ժե̃ աւելին (1566) : Ամսեանն սեպտեմբերի օրն
„ առաջին . Թագաւորութե̃ Զիկմունդ Օգոստոսին .
„ Իշխանութե̃ քաղաքիս բան Մըլոտքո մացէյին . Կա-
„ թողիկոսութե̃ տն տ̃ր Ստեփաննոսի . Եպիսկոպո-
„ սութե̃ Հայոց նահանգիս տ̃ր Գրիգոր վարագեցոյ :
„ Այր ոմն ազնուական տ̃ր Գրիգոր անուն որդի
„ Զատկի՝ յոյժ քնասէր և բարեմիտ , և յետ օրինացն
„ եկրող , մեծաւ յուսով փափաքեցաւ , և 'ի նախանձ
„ բարութե̃ բորբոքեցաւ . . . սկիզբն արարեալ վորբոյ
„ կաթողկէ եկեղեցոյս , զոր անուն սրբոյն Նիկօլայոսի
„ սքանչելագործ հրաշտի շինեալ է 'ի քաջ և հաւատա-
„ րիմ արանցն , զոր վերագոյն գրեալ է 'ի այս գիրս
„ զանուանս նց̃ . այսինքն է տ̃ր Սինան և Խութլու-
„ պէյն : Իւ վ̃ս զի փոքրագոյն է եկեղեցիս այս . քանզ
„ զի միշտ տեսանելով եթէ ոչ գոյր տեղի բաւական
„ ժողովրդեանս 'ի միջի սորա , եդ հիմունս սորա , այլ
„ մեծագոյն . մանաւանդ խրատեալ 'ի քաջ և իմաստուն
„ արանց . . . յորդորեցին զնա . . . Արդ զայս ամե-
„ նայն և որ 'ն կարգին է 'ի միտ առնելով ինքն տ̃ր
„ Գրիգորն , և տիկինն իւր Խանի Ազիզքո իւրեց սեպ-
„ հական ընչիւք և արդեամբք և քրտնաջան վաստա-

» կոչ սաղմոսերգութեան սոյ, հրաշափառագոյն մեծացու-
» ցին և պայծառացուցին և գեղեցկապէս զարդարե-
» ցին և յանգ ելեալ կատարեցին 'ի փառս և 'ի գովեստ
» անհաս աստուածութեան, և 'ի պայծառութիւն մանկանցն
» նոր սիոնի, և ստացան իւրեանց անջնջելի յիշատակ
» և արժան յաւիտենական ։ . .
» Արդ ողորմի հօգոյն Օգսէնդ յիրիցկնոջն. ունի
» յշտկ աւագ խորանի պատկերքի վն 'ի տիրամօրն
» գլուխ, իւր գստերն Ղուտլիկինին զգանիցան ոսկե-
» վարդերովն և մարգրտովն շարած ։ Նոյնպէս և միա-
» ծնին գլուխն, որ է փրկիչ ։ . . Տր լուսաւորէ զհոգին,
» կաֆացոյ տրն Անտրէասին, իւր բարեկամաւն, և
» յօժար սրտէ ետուր ի եկեղեցւոյ ալէֆ փլի ։ Օր
» տանուտէրքն այն մոմկով գնեցին զՍողրիկլին տունն,
» և գրեցին յշտկ ի եկեղեցոյ ‖ ։
'Ի կարգիս դնէ յիշատակարանն 23 անուանս հան-
դերձ մարգարտաշար և ոսկեզարդ զգեստուք և զար-
դուք, ապա պատմէ զերրորդ շինութիւն տաճարին
օրինակ զայս ։
224. * Հայոց թվին Ռ ամին և ԻԶ աւելին (1577)։
» կաթողիկոսութեան տն տր Դաթէոսին, թագաւո-
» րութեան Ստեփաննոսին, իշխանութեան քաղա-
» քիս Միքօլայ պրիպքլին. անուամբ տն շինեցաւ տա-
» ճարս երրորդումն նուագին հանդերձ սրահիւքն ար-
» տաքին. և ժամատնովն 'ի միասին. թելադրութեամբ
» տր Միխնոյ երեսփոխանին, որ է որդի Տօնուշին. և
» սեպհական արդեամբք նորին. նոյնպէս և կաֆա-
» ցոյ խոճա Անտրէասին՝ 'ի փառս ածային ։ . . Իւ-
» զաշխատողսն և զերախտաւորսն հանգուսցէ 'ի յար-
» դարոց դասին . . . Հանդերձ արեան մերձաւորօք
» նոցին. ընդ նոսին լիցի և մեզ մասն բարի. 'ի յարարչէն
» համայնիցն ամէն. այսքան առ այս ։ Տր լուսաւորէ
» զհոգին վարագեցոյ տր Գրիգոր վարդապետին. ե-
» տուր ԺԶ դէր այսմ եկեղեցւոյ շինուածոյս օգնու-
» թեան ։ . . Տր լուսաւորէ զհոգին տր Թորոսին, որ է
» թոռն Միքուլքայ վոյթին. ունի յշտկ ի եկեղեցոյս՝
» քարուկիր տն խանութմ ‖ . . .
225. Յիշէին 'ի կարգի յիշատակարանիս 19 անուանք
նպաստաւորաց, և զանազան ծանրագին յիշատակք,
ապա գրի ։ * Թվ. ՌԼԱ (1582) ։ Արդ տհնէ զտր Միխ-

„ Նոյ երեսփոխանն. և զիւր տիկինն զբանի Կուլաֆն...
„ եդին յիշատակ եպսկի միթրն, որ է թագ, ոսկով կազ-
„ մած և մարգրտով շարած, և ակամբ զարդարած:
„ Դարձեալ նոյն տէր Միխնոյ երեսփոխանն ըզզան-
„ կակատունն յեկեղեցւոյս սպ̃կեցոյց և զկապանս նո-
„ րոյ կապել ետուր, և զվերին ծածկեց, և ՚ի վ̃ր ոս-
„ կեջրած խաչ եդիր. զորս փոխարէն հատուցումն
„ առնուցու ՚ի յարարչէն ամենեցուն... Ո̃ր լուսա-
„ ւորէ զհոգին Նորինին. եդիր յիշատակ աւագ խորանին
„ պատկերքին վ̃ր ա̃ ոսկի ապրշան. ժ̃ը կարմիր ֆլրի
„ է... Ո̃ր լուսաւորէ զհոգին կաֆացի տ̃ր Մնորեա-
„ սին, Տիրատուրին որդոյ, ետուր յիշատակ այս ս̃բ տա-
„ ճարիս ա̃ հրաշալի ոսկեգործ շուրջառ և ՚ի վ̃ր խաչ
„ ծ̃է կտոր արծաթ ոսկեջրած. դարձեալ ուրար և
„ բազմաններ ոսկով և մարգրտով շարած, և ա̃ փոքր
„ գոգնոց ոսկեգործ... Ո̃ծ ողորմի հոգոյն Խլեաշին և
„ իւր կողակցին Ոլուխնային վ̃ս նշ̃ հոգոյ համար տ̃րն
„ Միխնոյ երեսփոխանն շինել ետուր և եդիր յիշատակ
„ ս̃բ տաճարիս ա̃ մեծ և երևելի արծաթէ խաչմ պա-
„ տուանդանով ոսկեջրած ||...

226. ՚Ի կարգի յիշատակարանիս դնին 38. անուանք և զանազան ոսկեղէն, արծաթեղէն և զգեստեղէն յիշատակք. ապա սկսանի. * Հայոց Թվին ՌԽԷ (1598):
„ Անունն ա̃յ ամենակալի. տ̃րն Միխնոյ երեսփոխան,
„ որ է եկեղեցւոյս շինօղն, միախոհ եղեն և միաբան
„ ընդ կողակցոյ իւրոյ Կուլաֆ խաթունին. և իւ̃րեց
„ բարի կամաւ և յաւժար սրտիւ շնորհեցին և գրե-
„ ցին զիւ̃րեց տունն քարուկիր. բոլորովին գեղեցիկ և
„ վայելուչ և ամրագոյն շինուածովք. ա̃. եկեղեցւոյ:
„ զի լիցի իւ̃րեց յիշատակ... ուստի զայս բարի և ընդու-
„ նելի խորհուրդ խորհեցան. վ̃ս զի անորդի էին...
„ Այլ է տունս այս հանդէպ ս̃բ Նիկօլայ եկեղեցւոյ...
„ Այլ այլ ետուն զիւ̃րեց սեպհական քարուկիր զխանութ.
„ յիշատակ ա̃. եկեղեցւոյ: Դարձեալ տ̃ր Միխնոյ երես-
„ փոխանն ետուր յիշատակ այս ս̃բ տաճարիս Է̃ աշտանակ.
„ այսինքն է ճրագկալք զուտ և մաքուր արծաթէ գոր-
„ ծաց... Ո̃ր լուսաւորէ ս̃բ Նիկաւլայ եկեղեցւոյ
„ զմ̃եր տանուտէրացն հոգոց. ետուն շինել շուրջանա-
„ կի բոլոր տաճարիս զդասեր. Այլ ոչ թէ վ̃ս հանգիստ
„ կանգնելոյ, և կամ նստելոյ, այլ վ̃ս առաւել պայծա-
„ ռուն ս̃բ տաճարիս ||...

Պանին 'ի կարգիս 20, անուանք անդերձ զանազան յիշատակօք. տես յարի.

227. * Հայոց Թվին ՌԾ. Ի թագաւորութե երրորդ
» Օսմանդին։ Վողորմեցան տէր տանուտէրքն և խոր-
» հուրդ արարին. մինչ զի մինչ տեսանելով եթէ Սբ Նի-
» կողայ եկեղեցոյ յարութի յոյժ նեղ և փոքրագոյն
» էր, զոր և այս պատճառի տէր տանուտէրքն գնեցին
» այր Մարգանին տունն ՃԾ փլր, և փոխեցին եկեղեցո
» յարուն։ Դարձեալ այլ ևս տէր տանուտէրքն գնե-
» ցին յաջ դին հէն. երկրորդունն տունն տէր Միքայելին
» ՃԾ փլր. և զնա փոխեցին եկեղեցւոյ յարուն։ Նոյն-
» պէս տէր տանուտէրքն գնեցին երրորդունն քարուկիր
» տունն պըլերով. զոր ծախեցին հոգաբարձք... զոր
» աժէր զայն տներն աւելի քան զՃԾ փլր. զոր և Խաչ-
» քաւորդ եաուր զՃԾ փլր. և զմնացեալն իւր բարի
» կամաւ շնորհեաց... Նու զայն տունն փոխեցին եկե-
» ղեցոյ յարուն։ Որդ այժմ Սբ Նիկաւղայ եկեղեցոյ
» յարութի եղև մեծ, լայն, և ընդարձակ. զորև տէր
» տանուտէրքն զայն տներս գնեցին համօրէն ժողովր-
» դեան սպկէն. զոր տէր հատուսցէ նց փոխարէն 'ի յա-
» րութե արդարոց, ամէն ‖։

228. * Թվին ՌԾԱ (1602)։ Պարոն Միրզոյ երես-
» փոխանն որդի տէր Տօնուշի շարժեալ 'ի սէրն Աստուծոյն
» ապաւինելով անուանն այ. Սբ Նիկաւղայ եկեղեցւոյ
» յարութի շինել եաուր շուրջանակի քարուկիր պա-
» տուար, բարձր և գեղեցիկ, և վերևս ծածկել ե-
» տուր խեցով և շուրջ զբոլոր պատուարս սպիտակա-
» ցոյց, և վայելչապէս պայծառացոյց զյարութի Սբ
» տաճարիս։ Որ այսչափ շինուածոյս էր խարճեց
» իւր հալալ և արդար վաստակոց ՌՃԾ փլր. զոր տէր
» Այն վարձս հատուսցէ նմա ‖ ԱՆ։

229. * Հայոց Թվին ՌԾԲ. Սմսեանն փետրուարի.
» Է. Թագաւորութե Դ Օսմանին... Սղախին ամս...
» բանի Պաթրուշայ յոյժ աճասէր... յետ այրման
» քաղաքին ետես զի եկեղեցիք մեր աւանց զանկակի
» մնացին. Նու ժողովուրդն ժամի առեն ոչ գիտէին
» ոչ սաղմոսին և ոչ առաւօտուն ոչ պատարագին, և
» ոչ երեկոյին ժամուն... նախանձեցաւ այ սէրն, և
» եաուր ՃԻԵ փլր. և ուղարկեց Խլով զի անդ գնես-
» ցեն. այն սպկի ա զանգակ, և եղև այնպէս, զոր և

» գնեցին և առաքեցին 'ի Կամենից քաղաքէ մեծ և
» հրաշալի զանգակմ 'ի փառս տն հեղյոն...» 'Ի կարգիս
յիշին Կ. անուանք, և պատմի շինութիւն մեծի զան-
գակին, որ այրեցաւ 'ի հրդեհի անդ (248)։

230. * Թվին ՌԾԲ. Ընծային աւրհնութի և ողորմութի
» հանապազ եղիցի վն տր Միխնոյ երեսփոխանին...։
» Սե Նիկոլա եկեղեցւոյ վն զճակատն շինել ետուր
» տն փառաւոր երևելի և գեղեցկաշէն գչիդ, և 'ի վն
» ոսկեզարդ խաչ կանգնեց ... Դարձեալ սե Նիկողա
» տաճարի վն կայր մի մեծ և բարձրադիտակ քումպէթ,
» և առաւել ծանր էր եկեղեցւոյ կամարի վն, զոր տե-
» սեալ զայն տր Միխնոյ երեսփոխանն հրամայեաց
» իջուցանել զայն քումպէթն. Նաև դարձեալ երրոր-
» դումն շինել ետուր այլ փոքրագոյն և գեղեցիկ շի-
» նուածով, և բոլորովին պատուհաներ և կամարակապ
» արար. և վերև ծածկեց սանով և նկարել ետ ոսկով
» և 'ի վր ոսկեզարդ խաչ կանգնեց։ ... Նոյնպէս սե
» եկեղեցին, և դքօշքն ալ բոլոր վեր եւս ծածկել ե-
» տուր. զոր հրակիզ ժամանակին այրեալ էր։ Օ այս
» չափ շինուածոյս վն խարճեց... ժողովրդեան սպկէն
» գշղ Փլն»։

231. Դնին 'ի կարգի անդ Կ անուանք զանազան յի-
շատակօք. այպս պատմէ՝ թէ յամի ՌԾՁ. ապր. ին.
միաբան մանկունք ետուն շինել մեծ և քաղցրահնչիւն
զանգակ մի։ Այս յիշէ 25 անուանս հանդերձ փառա-
ւոր յիշատակօք. և ապա յարէ. * Հայոց թվ ՌԿԵ
» (1616). Որ լուսաւորէ Միոլի Խարթբրին հոգոյ. ունի
» յշտկ այս որ տաճարիս տն կանթեղ աթլաս շուրջառ
» և բազպաններ ոսկով և մարգարտով շարած. զոր ա-
» ղաներ ետուն խազնայէն. Ի վարդ ոսկի և մարգա-
» րիտ ... Որ լուսաւորէ զհոգին տր Խաչատուր ա-
» ւագերիցուն ... ունի յշտկ այս որ Նիկոլա տաճա-
» րիս տծարան գրեանք ժն հատ ... Ա. Ընծաշունչ
» մագաղաթի մէջ կարած։ Բ. Նեմիչի տծաշունչ, որ
» կոչի Պիպլիա։ Գ. Իսողաբաշխութե գիրք մագա-
» ղաթի մէջ կարած։ Դ. Տօմար գիրք. մագաղաթէ
» մէջ։ Ե. Ճամ գիրք. մագա"։ Զ. Որաղուածոյ գիրք
» մագա"։ Է. Տօնացոյց գիրք մագ"։ Ը. Սաղմոսարան
» կազմած. պասմա։ Թ. Ցն որդի գիրք։ Ժ. Հարցմանց
» մանց գիրք հին։ ԺԱ. տն Փոքրիկ ալլելում գիրք. մագ"»

Աստ դնին 'ի կարգիս 11. անուանք հանդերձ զանա-
զան յիշատակօք, ապա դնին ծանրագին յիշատակք
Թորոս կրօնաւորին և Տ՟ր Գրիգորշային, և այլոց։
Նաև ժամատան արծաթ կանթեղն, զոր ետուն Տ՟ծա-
ւէր կանայք. յետ այնորիկ դնին բազում յիշատակք։
Պատմէ յիշատակարանն թէ յամի ՌՀԲ (1623). Իւ-
վովցի Տ՟ր Սէքն ետ շինել զաջակողմեան փոքր խորանն
և զարդարեաց ոսկւով. իսկ բան Մխիթքոն նորոգեաց
զձախակողմեան փոքր խորանն Տ՟ր Ա՟ծածնին և զարդա-
րեաց ոսկւով։ Աստանօր պակասին թերթք ինչ յիշա-
տակարանիս։

Ահեկոյ Աստուածածնին։

232. Երկին եկեղեցիք կային 'ի Կամենից յանուն
Տ՟ր Ա՟ծածնին, մին Աւետման, և միւսն ըստ ոմանց շի-
նեալ էր 'ի տեղւոջ Տ՟ր Նիկողայոսի. այլ քննեալ մեր
անձամբ տեսաք զընդարձակ տեղի աւերակաց 'ի կողմն
եկեղեցւոյն Լուսաւորչի, ուր էր եպիսկոպոսարանն։
Գտաք և զՀին յիշատակարան բոլորդիր, որ որոշակի
բերէ զանուանս երկին տաճարաց Ա՟ծածնի, ունելով
այսպէս. * Այս է յիշատակարան. զոր յետոյ այրման
» քաղաքին տվել են։ Ո յիշատակօղս և զյշ՟ոս եր-
» կու եկեղեցին. ոմ՟պ Տ՟ր Ա՟ծածնին. նոյնպէս Տ՟ր Աւետ-
» ման Ա՟ծածնին. սկսաք մի տեղ յիշատակել. քանզի
» եկեղեցիք մ՟յ ոչ են հակառակ միմեանց ||։

Այս յիշատակարան 5 ամօք յառաջ սկսեալ է քան
զշինութիւն Տ՟ր Նիկողայոսի ուր ընդարձակ դնի պատ-
մութիւն շինութեան, և անուանք բարերարաց հան-
դերձ ծանրագին յիշատակօք այսպէս.

233. * Այս է սկիզբն յիշատակարանիս Տ՟ր Ա՟ծածնայ
» եկեղեցւոյ։ Որչափ կամ թէ ով զինչ յիշատակ դրել
» է իւրաքանչիւր ըստ չափոյ կարողութեան իւրոյ 'ի
» պայծառութի այս Տ՟ր տաճարիս՝ աստ կայ կարգա-
» գրեալ... Օրհնեալ է ամենայն Երրորդութի...
» Ո որ սկսաք շինել զտաճարս մ՟յ, որ յանուն Տ՟ր Ա՟ծա-
» ծնին շինեցաւ... Քանզի մտախորհ եղեալ բոլորա-
» քեցան 'ի սէրն Տ՟ր Ա՟ծածնին. զի ոմանք զինչս ե-
» տուն. և ոմանք աշխատելն, և ոմանք զորդորելն...

„ Թվ. ՋՀԱ. Ք͞ի 1522. Նախ և առաջին քննասէր ...
„ Պ͞րն Նաւլպէյն որ է որդի պ͞ն Մ՝իրզքօրին, որ կանգ-
„ նեցաւ իւր անձամբն, և իւր ընչիւք՝ շինեաց այս Ս͞բ
„ զեկեղեցի՝ անուն Ս͞բ Ա͞ծածնին և սկիզբն եղև բա-
„ րեաց. զոր ա͞ծային ա͞հութ͞ն կատարեաց 'ի փառս
„ ա͞հելոյն ... Ա͞ծ ողորմի պ͞րն Յովանուսին հօգին. և
„ նա ետուր այս Ս͞բ տաճարիս շինուածոյս աւգնութ͞ն
„ եՃ փլր ... Ա͞ծ ողորմի Մեծքօրին հօգին, երետ ա͞
„ ոսկի ապրձան ... Ա͞ծ ողորմի Պետրոսի հօգին զդ͞
„ ապիկկի դարաճայնէր շինել երետ եկեղեցոյս և գոշկն
„ աւլ ... Ա͞ծ ողորմի Խ ընկերտաց հօգուն ժողովեցին
„ իւրենց մէջքն Խ սոմ և տվին այս Ս͞բ տաճարիս շի-
„ նուածոյս ... Ա͞ծ ողորմի Խասաւփին հօգուն ունի
„ յշ͞տկ այս Ս͞բ եկեղեցիս Ս͞բ մարտիրոսաց մասներ ...
„ Ա͞ծ ողորմի պ͞ն Սարգիսին. ետուր յշ͞տկ ա͞ ոսկով շուր-
„ ջառ ... Պարձեալ ա͞ծ ողորմի պ͞րն Յանուսին ...
„ եդիր յշ͞տկ Ս͞բ Ա͞ծածնայ եկեղեցւոյ ա͞ մեծ պատ-
„ կերքն և պատկերացն գլխոյն մայրն յիշատակ եդիր
„ արծԹէ ոսկէջրած դագ ակներով և մարգարտով շա-
„ րած ... Ա͞ծ ողորմի բանի Օլուխնային հօգուն,
„ ունի յշ͞տկ ա͞ պատուական Թագմ եպկսին ոսկով և
„ մարգրտով շարած ... Տ͞րն ա͞հէ զմիաբան կորիճ-
„ ներն. նկարել ետուն զկ͞ս եկեղեցին համդերձ բոլո-
„ րովին պատկերքներով ... Տ͞րն լուսաւորէ պ͞ն Պօղ-
„ րիկին կ͞ղ͞ցն զննջեցեալսն. ա͞ խորան շինեց ժամատուն
„ և ա͞ պատկերքմ եդիր Ս͞բ Ա͞ծածնին և ա͞ արծԹէ
„ ոսկէջրած Թագ ակներով ... Ա͞ծ ողորմի Օլուխ-
„ նային հօգուն, էառ զիւր գլխէն զմեծ ձիրամպիտն.
„ և եպիսի Թագին վերայ կարեց զոր ինքն էր կազմել
„ ոսկով և մարգրտով զարդարեց ... Տ͞րն լուսաւորէ
„ զպ͞րն Յօլուփքօ երեսփոխանին հօգուն եկեղեցւոյ շի-
„ նողին եդին յշ͞տկ վասն հոգւոյ նորա ա͞ մեծ խաչմ
„ ոսկէջրած ։ Պարձեալ վասն նոյն ... հոգուն եկե-
„ ղեցւոյ յարութ͞ն քարուկիր սքլեփ շինեցին վերնա-
„ տնով ... Ա͞ծ ողորմի Խոյաչքօ չաքլրչին հօգուն, և իւր
„ կնոջն Սամաւշին ... շինել ետուն ժամատանն աջա-
„ կողմն խորան մի ։ Նա այլ ունի բազմաններ. 'ի վր-
„ րանն ժԹ ական ոսկի վարդեր մարգրտով շարած ...
„ Տ͞րն լուսաւորէ քաֆացի Ա͞նտրէասին զննջեցեալսն.
„ ունի յշ͞տկ ը͞ եկեղեցին ռՃԽ փլր ։ Զոր այսչափ

„ սնկով տանուտէրքն 'գնեցին զՊօպրիկին տունն և
„ դրեցին ի եկեղեցւոյ ‖:

234. Յիշատակարանս թուէ աւելի քան զհարիւր ա-
նուանս հանդերձ մեծագին յիշատակօք, և այսպ յարէ.
* Հայոց թվ. ՌԺԹ (1570). Յառաջաւորութեան Զիկ-
„ մունդ Ագուստոսին.. Պրինսութեն բան Սլօտքօ Սա-
„ ցեյին: Պրն Սիմոնոյ երեսփոխանն որդի Տրն Տօ-
„ նաւշի մեծաւ սիրով և փափաքանաւք և ողորմութեան
„ ԱՅ շինել ետուր 'ի սբ Ածածնին եկեղեցւոյ. քօշք
„ մի քարուկիր, և կամարակապ գեղեցիկ և վայելուչ
„ շինուածով, և նկարեալ պատկերովք, և խորան մի
„ 'ի մէջ քօշքին ետ շինել... Նոյ այլ շինել ետուր ե-
„ կեղեցւոյ յարութին պատուար մի ամրագոյն փայտե-
„ ղէն շուրջանակի... Ած ողորմի Պատրիմ իրիցոյ հա-
„ դուն ունի յշտկ տ̃ կարմիր խատուֆայ գողնոց և տ̃
„ Ճուֆդ բազմանն մարգարտով շարած... Ած ողորմի
„ Խանքայլին հօգուն, ունի յշտկ տ̃ լուանին... Ած
„ լուսաւորէ կաֆայօ՝ Տրր Անդրէասին հոգին... ու-
„ նի յշտկ սբ Ածածնայ եկեղեցւոյ տ̃ ազնիւ շուրջառմ
„ ոսկով գործած ‖:

235. 'Ի կարգիս գնին 30 ամուանք, որք տուեալ են
եկեղեցւոյս մեծագին յիշատակս, և այսպ գրի.* Հայոց
„ թվ ՌԼԴ (1585). Յառաջաւորութեն Ստեփաննոսին.
„ Տէր Սիմնոյ երեսփոխանն., սբ Ածածնին եկեղեցւոյ
„ զզանկակատունն բարձրացոյց և զկապանան նորա շի-
„ նեաց, և զվերին ծածկեց: Նոյ յեկեղեցւոյ յարուն
„ շինել ետուր շուրջանակի քարուկիր պատուար. և 'ի
„ վերայ այսչափ շինուածոյն խարճեց 'ի իւր սեպհական
„ և հալալ վաստակոցն եճ, լէ Սաճրի Փլի յշտկ իւր
„ հօգոյ և ծնողացն... Ած ողորմի կրաւնաւոր Պա-
„ զարին հօգուն. ետուր Հ. Սաճրի Փլի զանկակատանն իս
„ օգնութեն ‖. Ետ: Աստանօր յիշին 10 ամուանք նպաս-
տաւորաց շինութեն զանգակատան. և այսպ յարէ յի-
շատակարանս այսպէս.

236. * Հայոց թվ ռխ (1591). 'Ի թագաւորութե
„ Զիկմունդին երրորդունի: Նոյ 'ի կթղկսութե Տն
„ տէր Պաւլին: Փառաց տաճարս այս՝ զոր շինեալ
„ կա, 'ի յանուննն ամենահեալ սրբուհւոյ Ածածնին 'ի
„ քաղ և հաւատարիմ գլուխ տանուտեառնէն, որ կո-
„ չի Տէր Ջօլուփքն երեսփոխան: Ասւոի յայս առաջա-

» սացեալ եկեղեցւոյ ժամատանն կամարն պատուեալ
» էր. ՚ի կողման որմն հանդերձ: Զայս տեսեալ տէր
» Սիմոնոյ երեսփոխանն ՚ի նախանձ բարի շարժեալ. և
» ՚ի սէր ածային բորբոքեցաւ. և զկիրքն և զաշխա-
» տանքն ՚ի յանձն էառ, և խլեաց զհին կամարն, զոր
» էր պատուեալ. և կրկին նորոյ կամար եդ կապել.
» նոյնպէս և զերկու որմնն եդ շինել, ընդ նմին և զեր-
» կու դրունսն: Նաև ՚ի վերայ այսչափ շինուածոյս ե-
» տուր իւր սեպհական յընչիցն զձի մաձրի Փլի...
» Պարծեալ եսուր յշտիկ տէր Սիմոնոյ երեսփոխանն և
» իւր կողակից բանի Կուլափն այս նը. տաճարիս ա՟
» հրաշալի և փառաւոր միթրն, որ կոչի Թագ, և է
» կազմեալ ոսկով և մարգրտով և վայելուչ ականք զար-
» դարած... Ա՟Ծ ողորմի տէր Սիմոնոյ երեսփոխանին
» հոգւոյն... այս նը. եկեղեցւոյ յառաջին սալարակայ
» արար. և գեղեցկացոյց, և զաստիճանս նորոգեց...
» Պարծեալ նոյն տէր Սիմոնոյ երեսփոխանն կրկին ան-
» գամ շինել երետ զեպիսկոպոսարանն, որ առաջա-
» գոյն շինեալ է ՚ի տէր Յօլաւփքաէն, որ իւր քվէր որ-
» դիքն տէր Զատիկ, և տէր Գրիգոր շինել էին: Զոր
» այժմ... նորոգեց և մեծացոյց և զորահն որ էր
» փայտաշէն. զնա քարուկիր շինել երետ ՚ի ներքոյ և
» արտաքոյ զարդարեց և գեղեցկացոյց իւր հալալ ար-
» դեանցն... Ա՟Ծ ողորմի իւլվոլցի Խաչատուրին և իւր
» կենացն Մարեանէին հոգւոյն. եկին այս Կամենից քա-
» ղաք, և դրին յշտիկ նը. տաճարիս ա՟ Ճուֆա ոսկի
» ապրձան, որ կոչի մանեկլա ||:

՚Ի կարգիս յիշատակին 18 անուանք հանդերձ ծան-
րագին յիշատակօք. այլ պարտին յիշատակք տէրն
Սիմոնային և այլոց, արծաթեղէն և ոսկեղէն զարդք.
նաև շինութիւն դասուց եկեղեցւոյ Ա՟ծածնին ՚ի Թվ.
ՌԽԳ: Նաև այսպէս այս յիշատակարան եղերի ՚ի Թվ.
ՌԽԸ. և այլ դնի յիշատակարան Աւետման եկե-
ղեցւոյն:

Եկեղեցի Աւետման:

237. Այս եկեղեցի կառուցեալ է յարևելեան
կողմն սրբոյն Նիկողայոսի. և է փոքրիկ, այլ վայե-
լուչ և քարաշէն. ունի զերիս խորանս և վերնատուն

մի ։ Նա եւս աջակողմեան խորանին յորմն փորագրեալ կայ պատկեր Մելքիսեդեկ կաթուղիկոսի եպիսկոպոսական զգեստուք, ուր է և գերեզման նորա (181)։ Շուրջ զեկեղեցեաւ կայ պարտէզ գեղեցիկ, առ որով տեսաք զաւերակս և զտեղիս սենեկաց, ուր 'ի հնումն բնակէին կուսանք բենեդիկտեան կարգին. որպէս գոյ յԻբլով (169). որք ցրուեցան 'ի ժամանակս առման քաղաքին ։ 'Ի մէջ պարտիզին կան մեծամեծ տապանք գերեզմանաց հայ գրով, մին գրեալ էր կարի խոշոր գրով 'ի Թվ. ՌԱ (1552)։ Թուի թէ 'ի դիմել աստ Հայոց նախ շինեցին զայս եկեղեցի փայտակերտ. ապա 'ի 1597. քարաշէն կանգնեցին, ըստ որում պատմէ թաղորդիր յիշատակարանն հին.

238. * Այս է յիշատակարանն որ աւետման տաճա-
„ րին ։ Նուիրեալ է անուամբ Երրորդութեն, Հօր և
„ Որդւոյ և որ Հոգւոյն ։ Եւ անհեալ է որ Ածածնին . . .
„ այժմ ժողովեցան միաբան ժողովուրդ քաղաքիս, դա-
„ տաւորք և առ հասարակ ժողովուրդք, 'ի փոքուէ մին-
„ չև ցմեծամեծս վասն սրբոյ եկեղեցոյս։ Զոր շինեալ
„ էր յանուն աւետման սրբուհոյ Ածածնին ։ Եւ էր
„ եկեղեցիս այս փայտաշէն, վաղուց և հին ժամանա-
„ կիս. և էր յոյժ բլբլակ. մինչ զի մերձ էր բլել։ Ուր
„ և ընտրեցան 'ի մէջ ժողովրդեան այս Գ արքս. որ կո-
„ չին անուամբ Սուլու խոճայ որդի Տօնուշի, և Սար-
„ դերեան որդի Յովհաննէս աւագ իրիցու, և Նշա-
„ գուլն որդի Պասքարին Սուլու խոճային որդւոյ ։
„ Մտախոհ եղեն, բարի և լաւ խհդ խորհեցան 'ի միա-
„ սին, և ապաւինեցան 'ի յապենիազն Ած ։ Մանա-
„ ւանդ յուսացան 'ի բարեխաւսութիւն սրբուհոյ Ածած-
„ նին. զի փոխանակ փայտաշէն եկեղեցոյս այս. քա-
„ րուկիր շինեսցեն, ուր և շինեցին Այ կարող զաւ-
„ րութբ ։ Եւ բարեխօսութբ որ Ածածնին 'ի նոյն հի-
„ ման վերայ. և նոյն չափով, որպէս էր հինն, ոչ յա-
„ ւելի և ոչ նուազ ։

„ Եւ 'ի վերայ այս բանիցս զաշխատանք, և զկիրք
„ 'ի յանձն առին վասն սիրոյ որ եկեղեցոյս, և շրջե-
„ ցան 'ի դրունս հաւատացեալ քրիստոնէից, և խնդ-
„ րեցին զտուրս ողորմութե 'ի մեծամեծաց և 'ի փո-
„ քունց 'ի յանուն որ Ածածնին. և եկեղեցւոյ իւրոյ
„ սրբոյ ։ Եւ ամենեքեան ետուն զիւրեանց ողորմութին

„ յաւժար կամով և առատ սրտիւ ։ Ոմն շատ և ոմն սա-
„ կաւ ըստ չափու կարողութե իւրեանց․ այլև ոմանքն աշ-
„ խատեցան անձամբ իւրեանց, և ոմանքն ձիաներով և
„ այլիւ քարինս, և կիրս, և աւազս կրելով․ զոր անկ
„ ելեալ կատարեցին 'ի փառս անհաս մծութե, և 'ի
„ վայելչութիւն մանկանց Նոր Սիոնի ‖ . . .

239. * Հայոց Թվ․ ՌԽԶ (1597)․ Ամսեանն ապրիլի,
„ աւուրն առաջին ։ Ի թագաւորութե երրորդ Մեհ-
„ մունդին․ կթղկոսութե տր Դաւթին, իշխանութե
„ քաղաքիս Յան Ռոթոցքեյին․ Արքեփոխանութե
„ տր Մինոյին և տն Սարգիսին․ Պատաւորութե
„ Հոլուպին ։ Շնորհօք և ողորմութբն այ․ այս է
„ տուրք և երախտիք․ զոր ետուն հաւատացեալք
„ քրիստոնեայք այս նր եկեղեցոյ ։ Նախ և առաջին
„ Նծ ողորմի տէր Յովհաննէս Ֆուագերիցոյ ննջեցե-
„ լոյ . . . ռ ոսկեզարդ խաչ կանգնեցոյց 'ի վերայ նր
„ եկեղեցոյս . . . Նծ ողորմի տր Խոչատուրին․ ետուր Ն
„ մթխալ ոսկի ։ Վն լուսաւորէ սոսամպօլցի տր Նծա-
„ րին հոգոյն, ետուր Ժ կարմիր ֆլր ‖ . . .

240. Յիշատակարանս թուէ 150 անուանս հանդերձ
առատ տրովք, որք կանգնեցին զեկեղեցին ։ Նյա
սկսանի պատմել զհրդեհն, որ եղև յամի 1602․ յետոյ
յարէ զնորոգութիւն եկեղեցեաց այսպէս․ * Հայոց
„ Թվին ՌԾԱ․ Թագա"․․․ (1602)։ Այս է տուրք զոր
„ ետուն հաւատացեալք . . . այս սուրբ եկեղեցեացս․
„ Նախ և առաջին տրն Միխնոյ երեսփոխանն . . . ե-
„ տես . . . թէ որպիսի այրումն և աւերումն եղև յոյժ
„ տրտմեցաւ ։ Նայց շարժեալ 'ի սէրն մծային . . .
„ յանձն էառ զաշխատանքն և զկիրսն 'ի յանուն սրբ
„ Նծածնին, և ետուր ծածկել վեր Աս սրբ Նծածնայ ե-
„ կեղեցոյ․ և այսպէս վեր Աս ծածկել ետուր սրբ աւետ-
„ ման Նծածնայ եկեղեցոյ ։ Նոյնպէս և քարուկիր ե-
„ պիսկոպոսարանին վեր Աս ծածկել ետուր . . . Այս
„ է զոր յառաջագոյն շինել էր յեկեղեցոյ յարութեն
„ շուրջանակի քարուկիր պատուար ։ Այժմ ամի երկ-
„ րորդումն բարձրացոյց շուրջանակի և սպիտակացոյց ։
„ Նա վեր Աս ծածկեց խեցով ‖ . Եւն ։

Նսատանօր պատմէ թէ յայրիլն եկեղեցեաց հալեցան
ամենայն զանգակք․ և 'ի հալեալ նիւթոյ անտի ետուն
անողքեն ձուլել 'ի թվին ՌԾԳ ։ Նյա յիշէ թէ 'ի Թվ․

ՌԾԶ ամի Նաղաշաւան կառուց զԽորհրդանոց եկեղեցւոյն և զարդարեաց։ Իսկ 'ի ՌԿԴ ամին Նաւրըզան հիմն եդ խորանին Հրեշտակապետաց, ուր պատարագ մատչէր վասն նորա յամենայն երկուշաբաթի։ Հուսկ յետոյ թուէ զառեալ յիշատակս բարերարաց, որով զամենայն ինչ նորոգ կազմեցին զկնի հրդեհին։ Այլ 'ի թուականին 1627. եղերի այս յիշատակարան։

Ընծայից տուրք Աստուածոցն։

241. Այս եկեղեցի անկանի 'ի հարաւակողմն սբ Նիկողայոսի եկեղեցւոյն, և էր քարաշէն. թէպէտ անկեալ կան որմունք. միայն կանգուն կայ որմն խորանին, առ որով է ներքնատուն քարաշէն։ 'Ի վերջին ժամանակս զայս եկեղեցի արարին շտեմարան գինւոյ. որով առ սակաւ սակաւ քանդեալ աւերեցաւ։ Ոչ գտաք զյիշատակարան սորա. թուի թէ մերձ էր առ եպիսկոպոսարանն, զի տեղին է ընդարձակ։ Սա զամս երիս քարոզեաց Սրգսէնա վարդապետ 'ի թվ. ՌՀԱ. որպէս պատմէ նա ինքն (252)։ Անապատուն տաճարիս էր յարևմտեան կողմն. տեսաք զդուռն ամբողջ, զարդարեալ շրջանակն մարմարիոն քարամբք և դրուագօք։ 'Ի միջոցի անդ փորագրեալ կայ փակագիր. զոր ընթերցաք այսպէս. * Օրհնութիւն իմ եւ օգնութիւն » իմ Տր. եւ եղեւ ինձ 'ի փրկութիւն . . . ամ Յովան- » նէս շինել տուր զի կեր . . . թվ. ՌԿԹ (1620)։

'Ի ստորև անդ տեսաք և զդուռն քահանայից քարաշէն. 'ի ճակատ անդ 'ի վերայ քանդակեալ կայ անուն շինողին Սծատուր որդի Տր Պետրոսի. թվ. ՌԼ (1581)։

242. Սա էր բուն թաղն Հայոց, ուր 'ի մերձակայ տան տեսաք յառաստաղի անդ մեծ գերան փորագրեալ 'ի վերայ երկաթագիր տառք 'ի թվ. ՌՀԴ։ Տեսաք և զայլ տուն վաղեմի. պատմեցին մեզ թէ շինեալ է յամի Տն 1310. և 'ի ժամանակի նորոգման գրեալ են յիշատակարան 'ի վերայ մեծի գերանին առաստաղի երկաթագիր այսպէս. * Ձգնականութբ Հօր ա- » մենակալի. եւ թելադրութբ Որդոյն միածնին ատա- » ցու զատուցս զայս տ. Ըստաուցեն որդի Խոջերեսին 'ի » վայելումն անձին իւրոյ և զաւակաց իւրոց ամ քա-

» բով վայելել տացէ ամէն . Թվ. Հայոց ՌՀԴ. մարտի
» ամսո ԺԷ ‖ (1625) ։

Նոյնպէս 'ի վերայ դրան միոյ գրեալ կայ այսպէս .
* Նուաստս ամենայն 'ի վայելումն տէր Մելքոնին ‖ ։ Այս
ընդարձակ տուն էր երևելի հայ իշխանին Մելքոնի .
որ տուեալ էր բազում յիշատակս եկեղեցեաց Իւղվլի
ընդ բարեպաշտ տիկնոջ իւրոյ բանի Գուհարայ ։ Նոյն
'ի վերայ մեծի գերանին առաստաղի առաջին սենեկի
տեսաք երկաթագիր փորագրեալ այսպիսի իմն օրհնա-
կաւ ։ * Երանեալ է այր որ երկնչի 'ի տնէ եւ գնայ 'ի
» ճանապարհս նորա . զվաստակս ձեռաց քոց կերիցես .
» երանի է քեզ եւ բարի եղիցի . կին քո որպէս այգի
» վայելուչ յանկիւնս տան քո որդիք քո

» Նուէն տէր շինեցաւ տունս
» 'Ի վայելումն տէր Կիւրեղին .

» որպէս նորատունկ ձիթենւոյ շուրջ զսեղանով քով .
» այսպէս աւրհնեսցի ամենայն մարդ որ երկնչի 'ի տնէ
» տեսցես դու զորդիս որդւոց քոց խաղաղութի 'ի վե-
» րայ Իղի ‖ ։

243 . Իսկ հիւանդանոցն Հայոց էր 'ի նոյն հարա-
ւային կողմն քաղաքին , բայց այժմ է 'ի ձեռս Ռու-
սաց ։ Նոյն էր նաև դպրատունն , որ այրեցաւ 'ի հրդե-
հին . զոր անդրէն շինեցին , որպէս պատմէ յիշատա-
կարանն . * Այր ոմն ազնուական , որ կոչի տէր Միխ-
» նայ երեցփոխանն . որդւոյ տէր Տօնուշի յոյժ քնասէր ,
» և տէր օրհնացն սիրող ։ Նա սկսաւ ասել . Ով եղբարք
» իմ առաւել ես ապաշխարեմ և հիանամ վասն այս
» բանի . զի անուանիմք քրիստոնեայ , և ոչ կատարիմք
» զկարգ քրիստոնէից . և ոչ ողորմեցարուք դուք ձե-
» զի . . . զի ահա է ամ է քանի այրեցաւ քաղաքն մեր .
» և դուք ոչ խորհիք . զի տէ դպրատունն շինել տայք որ
» զձեր տղայքն ժողովեալ 'ի մի տեղ և ուսանին 'ի գիրս
» սբ . այլ թողել էք իւրոց կամացն երթալ . . . գիտա-
» ջիք եղբարք զի ոչ վայելէ քրիստոնէից այսպէս մոռա-
» ցանել զտղայքն ։ Այլ պարտ է հայրն զի որդին իւր
» ուսուցանէ ահիւ և երկիւղիւ այ , և 'ի սբ ուսմունս .
» որ չդատապարտի առաջի այ անաչառ դատաստանին ։
» Ես անորդի եմ խնձ չէ պիտոյ . բայց զձեզ խնայելով
» ասեմ , դուք խնքնին գիտէք ։ Բայց յորժամ իմացան
» տէր առանուտէրք և ժողովուրդն ասացեալն տէր Միխ-

» նայ երեցփոխանին, յոյժ հաճոյ թուեցաւ իւրեանց։
» Այլ սկսան աղաչել զՏէր տանուտէրք և ամ ժողովուրդ
» զՏէր Սիմոն երեցփոխանն, զի ինքն կացցէ այս բա֊
» նի վերակացու։ Օր տեսեալ զՏէր Սիմոնայ ... զխընդ֊
» րուածս ... ոչ եղև նոցա դիմադարձ. այլ իւր անձն
» էառ աշխատանքն վասն ուսոյ մեր արքայութե ... ա֊
» պաւինելով Ս. Յ արկ զձեռն իւր 'ի գործ։ Այլ եւ տուր
» շինել զ տունս հանդէպ միմեանց փայտաշէն, մեծա֊
» մեծ վայելուչ և գեղեցիկ շինուածով. այսինքն է
» զպատուհաններն ազնիւ ապիկի. որ կոչի Վենետիկի,
» նկարած ծածկայթներով. նոյնպէս չինի բուռն կըրկ֊
» նեց։ Այլ առակս ազիւսով շարեց. և գեղեցիկ դուռ֊
» ներ շինել ետ. յոյժ գեղեցկազարդ շինուածով վայել֊
» չացոյց, և ամրացոյց 'ի ներքոյ և արտաքոյ։ Կատա֊
» րեցաւ 'ի փառս ամհելյն զ դպրատունս և սրահինս
» նոյեմ. ը. ՌԾԳ (1604). զոր այսչափ շինուածոյս վե֊
» րայ խարձել է զՏէր Սիմոն երեցփոխանն համօրէն
» ժողովրդեան սպկէն գՃ. Հ. ՓԼՐ || Ա.։

Դատարան.

244. Դատարանն Հայոց էր 'ի վերայ մեծի փողո֊
ցին մերձ 'ի հրապարակն՝ քարաշէն և գեղեցկադիր,
ուր վճարէին դատաւորք զամենայն դատս ազգին՝ ան֊
կախ ամենևին՝ նախագահութեամբ Մոյթին։ Որք և
ունէին 40. խորհրդականս, յորոց ընտրէին դատա֊
ւորք. սոքա կոչէին Քառասուն եղբարք։ Տեսաք եր֊
դարան մի. 'ի յիշատակարանին դնի. * Յիշատակ է
» զՏէր Խաչատուրին որդւոյ զՏէր Գրիգորին Կամենիցոյ
» տոլվաթաւոր Քառասուն եղբարցն մէկ. Թվ. ՌՂԳ ||
(1644)։

Այս դատաւորութիւն տուեալ եղև Հայոց 'ի հնումն
պարգևագրով. և հաստատեցաւ զանազան հրովարտա֊
կօք լեհ թագաւորաց, որով ունէին մեծ ազատութի.
որպէս տեսաք գրեալ 'ի վերայ մագաղաթի հին գրով
համդերձ թագաւորական կնքով։

245. Հրովարտակ Վլատիսլաւոս արքային տայ զա֊
զատութիւն ամենայն տուրևառութեանց՝ գրեալ յամի
Տն 1408։ Նոյնպէս և Կազիմիր եւս մեծամեծ արտօ֊

նութիւնս վաճառականաց յամի տն 1448 . առանձին Հրովարտակաւ ։

Հրովարտակ Սիկիսմունտոսի առեալ եղև սակս վաճառականութեան յամի 1468 ։ Տեսաք զառաջին հրովարտակ Սիկիսմունտոսի Օգոստոսի . յորոյ վերայ գրեալ կայ հայերէն յամի տն 1550 . * Այս է թուղթ
„ Զիկմունտակուստոս թագաւորին . զոր տուեալ է
„ Հայոց ազգին իշխանութիւն դատաստանին . զի թէ
„ այնպէս բան հանդիպի մարդ կորմնել նա ուղիղ դա-
„ տաստանն իշխանութե չունիցէ խօսք խօսիլ ‖ ։

Սոյն այս թագաւոր շնորհեաց դարձեալ ազատութի Հայոց յամի 1559 ։ Իսկ 'ի վերայ հրովարտակին , զոր ետ Կազիմիր արքայ յամի տն 1460 . գրեալ կայ թա-թարերէն . * Կազիմիր վասն վտովտարչունէ համար ։
„ Պուբրիվիլիա Սոյթ դանկլամախ ուչուն տա քի պիր
„ ուրեայ մնիքի փատշահնընկ պիզնի սուսիդ եդմադըը-
„ քօ վօթումուզ պիզիմ 1460 ‖ ։

Դարձեալ ետ հրովարտակ զմնազան արտօնութեց սակս վաճառաց Ստեփաննոս արքայ յամի տն 1577 ։

Այս փառաւոր դատարան անցեալ է այժմ 'ի ձեռս Ռուսաց , որ թէպէտ յայրել քաղաքին այրեցաւ . այլ անդրէն նորոգ շինեցաւ , որպէս պատմէ յիշատակարան եկեղեցւոյն . * Հայոց թվին ՌԾԳ ամսեանն մայի-
„ սի ժէ . թագաւորութե երրորդ Զիկմունդին , կա-
„ թողիկոսութե տն տէր . . . Կաղաքապետութե բան
„ Լյան Ռոթոցքիին . երեցփոխանութե պրն Մինոյին .
„ եւ դատաւորութե պն Լուկային ։ Ժողովեցան միա-
„ բան պր տանուտէրք . նոյնպէս և ես ընկերոպք ժո-
„ ղովեալ էին յաղագս դատաստանի . քանզի յետ այր-
„ ման քաղաքին բազում և ազգի ազգի դատաստան
„ կայր 'ի միջի ժողովրդեան , և աւարտեցաւ բան դա-
„ տաստանին ‖ ։

'Ի սմին ժողովի իշխանն պրն Մինոյ խօսեցաւ սակս շինութե դպրատան . զոր և հաստատեաց (243)։

246 . Տեսաք 'ի հին դատարանի մեծ պատուհան մի մեծահասակ մատենիւք հայ դատաւորաց . գրեալ էին բնաւք թաթարերէն հայ գրով , որ սկսանի այսպէս . * Ընուն Ա.Յ . Պաշլանտր պու տիֆտար Լորմէնի թվ.
„ ՌԻԸ ընա . Յուլիս այընընկ իա ընա . Հաւլուփ Գրի-
„ գոր օղլունունկ վոյթլուխունտա օլ զամանն պօլկան ,

» Լորմենի Թորաշխլարներնկ · նա խմէ · ՚ի երեսփոխանա-
» նըընկ , Մ՚իխնոյներնկ , տա Մերհիյներնկ ։ Տեմուշներնկ ։
» Խորանըընկ ։ Օ անուներնկ · Մ՚եւլքըներնկ ։ Լծադաւպ
» դաւկալակէյներնկ · Խօչըքներնկ ։ Խօչերեաներնկ ։ Մ ար-
» դանըներնկ , Ս՚ըվձատուրներնկ , Ահանըներնկ ։ տա նախթէն-
» չաւ պօլկան Հաւլաւփ եաղուչխներնկ · Տէր Յոհան-
» նէս օղլուներնկ ։ Հօլուպտան սընկրա · մէն Գրիգոր
» Տէր Յովանէս օղլու պաշլատըմ եաղուչխըլըխ էդմա-
» կա · Թվ · ՌԻԸ · Լոյսեմբերներնկ Ղ այնադուն" ։ (1579)

» Լ էմդայէս գէլիր Բորակա ·
» Պօլտու Թվ ՌԻԸ · Յուլիս իԹ խանդուն ։ Հօլուպ
» Մ ոյթ՝ անդիչքան Թորաշխլար պիլմ · Պու գունկա
» բըխբատադ էդքան սբրաւալարնըյ · պարըն խայսիքի
» վըլըժօնըյ Թորակա · բօտլէհնուդ էդիպ էտիր · օտ-
» լըժիդ էդդիլար գէլիր Թորակա ։

Numero 260 ։ 1578 ։

---

247 · Մ եցերորդ դատաստանագիրքն այսպէս սկսա-
» նի · * Լ՚նուն տյ · Պաշլանտըյ պու տփֆդար էրմէնի
» Թվ ՌԼԴ սունայ յուլիսնինկ ժԷ սինայ · այնաքուն ·
» Մ ցթըլուխունտայ Հօլուպնունկ Գրիգոր . . . Տայ
» ալայժէ օլ զաման պօլկան՝ Գրիգոր եաղուչխնէնկ ·
» Տէր Յովանէս · Տէր Ս՚ւագերեց օղլունունկ ։ Տայ
» ալայժէ Մարկաւարգներնկ . . .

» ՚Ի Հնադներնէ օխօնմուանեւ Լծագուպ ·
» Պօլտու Թվ · ՌԼԴ Յուլիսնինկ ԺԷ այնաքուն · Հօ-
» լուպ վոյթաւըներնայ գէլտի Խհնաթ օստրօ ձինցատան
» բօստանըներէ · բանի Խօցերմեստանըներնկ տայ բէլնօ-
» վադ էտտիյ ռօքուն ՚ի հաֆտաներնկ իչքիյ Թորա ըղ-
» քաղատ էտիբ էտէր · Լծադաւպկայ Խորոմունկ պոր-
» չուն տօպրօսունտան Թօլամակայ իչքի՝ պուկուն ՚ի
» հաֆտասըյ չըխտըյ տա քէնսինա Թօլօվ պօլմասըյ ·
» անընկուչուն օբօվլիտադայ պօլտու զախվադ էտիբ
» քարարըն · ըվմօցըյ քէլիր խանքունկայ եաղուպ պի-
» լա էդմակայ աղալար անըյնայ ։ Լէտան ուդրու խօյ-
» տու Թորակայ բամէնդնիյ ։ Տայ պէրիբ եաղըըրտըյ
» օբօվլիտանեաին ։ Լեմիտի Թորա բըինեադ էդդիյ ‖ ։

Յայս օձ գրեալ կան ամենայն դատաստանական գրեանք ։ Ի՚նակքն պատմեցին, թէ կային աւտ 500 ամաց գրեանք, բայց մեք ոչ տեսաք · Թուի թէ ՚ի Հրդե-

Հի անդ այրեցան և անհետ եղեն բազում հնութիւնք
Հայոց. որովհետև բոլոր քաղաքն 'ի մոխիր լուծաւ,
որպէս բերէ յիշատակարան եկեղեցւոյն սբ Աստուա-
ծածնին օրինակ զայս.

248. * Հայոց թվին ՌՃԱ ամին. Ամենանն օգնու-
„ տուի ժէ. Ընծման սբ Աստուածածնին. բշէ: Փառք
„ քեզ անճառելի Աստուած. փառք քեզ... Հրա-
„ մանն ամենազօր Թագաւորին, որ եղև 'ի վերայ մեր
„ և քաղաքիս մերոյ, արժան է մեզ զայսպիսի եղեալ
„ իրս գրով պատմել... զի յառաջա եկեալքն ըն-
„ թեռնելով զայս՝ երկիւղն Աստուծոյ 'ի միտ առցեն և
„ գոհութիւք տայցեն Աստուծոյ: Ո՜հ թէ հրամանաւն
„ Աստուծոյ մեծ պատուհաս եկն 'ի վերայ մեր... և-
„ զև այսմ ամի 'ի Կամենից ողորմելի քաղաքիս, մեծ
„ և անողորմ ցասումն և պատուհաս 'ի հրոյ, զոր բո-
„ վանդակ ամ քաղաքն հրակէզ այրեցաւ, 'ի փոքր և
„ սակաւ ժամանակի: Ամենայն բարութիւն զոր ունէին
„ քաղաքացիք հրակէզ եղև, եթէ տաներ, եթէ խա-
„ նութներ. ոչ թէ միայն փայտեղէն չէնք, այլև քա-
„ րուկիր շինուածք, թէ տներ մեծագոյնք, և թէ
„ աքլէքներ ոչ կարացին դէմն ունել՝ այնպիսի սաստիկ
„ բարկութեան Աստուծոյ. որչափ ինչ ոք ունէր՝ բովան-
„ դակ այրեցաւ: Ո՛ր այնչափ մեծ և ահագին էր
„ ցասումն, զի բնաւ ոչ կարացին մարդիկ դէմ կալով
„ շիջուցանել զհուրն, քանզի իբրև կայծակունս հրոյ
„ բորբոքելով այրէր և տոչորէր զքարինս և զփայտս.
„ ուր և հասանէր. զոր և մարդիկք փոքր 'ի շատէ այ-
„ րեցան: Բայց որն ամի... եցոյց մեզ՝ իւր առատ
„ մարդասիրութիւն, որ գիշերով ոչ եղև այսպիսի պա-
„ տուհասն. այլ եղև երեկոյին ժամուն, մինչև նսեմա-
„ ցաւ. ամ քաղաքն փոշի և մոխիր դարձաւ, զի 'ի
„ միւսում աւուր մարդիկ ոչ կարէին ճանաչել զիւր-
„ եանց տանուտեղն: Բայց այլ ևս էր մեծ պատու-
„ հաս, այս է. զի վասն առաւել չար գործոց և անօ-
„ րէնութեանց մերոց ոչ խնայեաց Տր, իւր սբ զեկեղե-
„ ցիս, և միապէս խորտակեաց. Ոի եկեղեցիք մեր
„ Հայոց վեր ևս այրեցան, նոյնպէս և զանկակատներն
„ և զանկակներ հալեցան 'ի մէջ զանկակատանին...
„ Նոյնպէս Լախ, և Ռուզ ազգի եկեղեցիք զանկակ-
„ ներով: Այլև Բ դրունքն քաղաքին այրեցան, որ կա-

„ չի Խրապանինե ։ Նորոգեա և 'ի դաշտս Խլաթի զամ-
„ բարանոց այլրեցաւ թէ աներ, թէ ցանկ, թէ ծառք
„ պտղաբերք. ամենին հրակեզ եղև ։ Օ՜ որ և այս ա՛մ
„ եղև վասն չարաչար և ազգի ազգի անօրէնութեանս մե-
„ րում. . . զի ոչ գտանէ 'ի միջի մերում սէր և միա-
„ բանութի՛ և ոչ հնազանդութի՛ ։ Օ՜ որ այսպիսի ա՛մ
„ եղեալ իբրս պահեսցուք 'ի միտս մերում. այսպիսի
„ սաստիկ բարկութի՛ն Աստուծոյ ։ Այլ դարձցուք առ
„ Աստուած ա՛մ սրտիւք մերովք, և արասցուք զկամս
„ պատուիրանի նորա. որպէս և գրեալ է. դարձարուք
„ առ իս, և ես դարձայց առ ձեզ || Զաք ։

Այս հրդեհ թէպէտ սոսկալի էր, սակայն յաջողութիւնք ժամանակին և ջանք բնակչաց անդէն և անդ կանգնեցին զքաղաքն և մեծագործ շինուածովք զարդարեցին, որպէս տեսաք և ստորագրեցաք զայն գեղեցիկ քաղաք. այնուհետև մնայ մեզ անցանել յայլ քաղաքս Հայոց ։

ՄՈՅԼՈՎ

249. Այս քաղաք բարեդիր շինեալ ընդ երկայն 'ի վերայ Տնեսդեր գետոյ՝ 15. ժամաւ հեռի 'ի Կամենիցէ ։ Յառաջագոյն էր երևելի վաճառատեղի՝ երբ Օսմանեանք տիրէին 'ի Պեսարապիա. այլ յետ այնորիկ նուազեցաւ յոյժ ։ 'Ի հանդիպակաց կողմն գետոյն գոյ գիւղաքաղաք նոյնանուն, որ այժմ է 'ի ձեռս Ռուսաց ։ Այս քաղաք չէ այնչափ հին, և ոչ տեսաք 'ի սմա վաղեմի ինչ նշանաւոր. զի յառաջագոյն էր պատսպարան Խազախ աւազակաց՝ որոց գլխաւոր կոչէր Մոյլ, յորմէ եկեալ է անունս Մոյլով ։ Այս աւազակապետ վաճառեաց զայս քաղաք Փօթոցքի լեհ իշխանին, որ հրաւիրեալ զՀայս բնակեցոյց աստ բազում ազատութեամբք, որք անդէն և անդ սկսան ծաղկեցուցանել զքաղաքն վաճառականութեամբ՝ զարդարելով զայն բազում շինուածովք, որք այժմ անցեալ են 'ի ձեռս Հրէից ։

250. Թաղն Հայոց և եկեղեցին է առ երի Տնեսդերայ մերձ 'ի շուկայն. ուր են իբր 60. տունք Հայոց կաթոլիկաց. յորոց բնակք աղքատ են ։ Եկեղեցին է-

քարաշէն և պայծառ, չափաւոր մեծ՝ կառուցեալ՚ի մէջ ջավայրի անդ ժամատան յանուն անարատ յղութեան Ծածննին. ունի 5 խորանս. յաջակողմն աւագ խորանին եդեալ կայ հրաշագործ պատկեր Տիրամօրն, որ յառաջագոյն էր ՚ի տան Ռուս ունեւոր կնոջ, և բազում սքանչելիս յայտնէր, մինչ զի յայտնի տեսին զքիրտն պատկերին կայլակեալ։ Յետ ժամանակաց Հայք ճարտարմտութեամբ իւրեանց բարձեալ անտի զայս պատկեր եդին յայս եկեղեցի, որոյ վասն բազում վէճք եղեն ՚ի մէջ նոցա, մինչև գրեցին առ Թագաւորն Լեհաց և ՚ի Հռովմ։ Հուսկ յետոյ որոշեցաւ, թէ պատկերն մնասցէ յեկեղեցին Հայոց, և Ռուս քահանայ մի պատարագեսցէ անդ. որովհետև միայն Հայք ունին զեկեղեցի ՚ի Մոյլով, և անդ երթան Լեհք և Ռուսնեաթք։

Այս եկեղեցի յառաջագոյն էր փայտաշէն՝ կառուցեալ ՚ի ծայր ընդարձակ բակին ՚ի նոյն ֆօթոցքի իշխանէ։ Այլ իբր 48. ամօք յառաջ շինեցաւ քարաշէն յիշխանէ նոյն ցեղին՝ միջնորդութեամբ Յովսէփայ Քրիստոֆորովիչ նախապատիւ կանոնիկոսին. ունի կրկին զանգակատունս և կրկին աւանդատունս, բայց աւագ խորանն անձև մնացեալ է։ Վերջացեալ անուանի կանոնիկոսն բազում ճարտարութեամբ միջնորդ ունելով զիշխանն ֆօթոցքի՝ ձեռնադրեցաւ յԼւվով պարզ եպիսկոպոս և հաստատեաց զաթոռն Մոյլովի յամի տեառն 1809. իշխելով ՚ի վերայ Հայոց հռոմէական կաթուղիկեայց եղելոց ՚ի մասին Ռուսիոյ՝ սկսեալ ՚ի Կամենիցէ մինչև ցԱժտէրխան, և ցՏիֆլիզ. և ունի 12 ժողովրդապետութիւնս, այլ ժողովուրդ սակաւաթիւ։

251. Երևելի է նորաշէն եկեղեցին Յունաց քարակիր բարձր՝ կառուցեալ ՚ի ծայր քաղաքին. նոյնպէս երևելի է եպիսկոպոսարանն Հայոց քարաշէն և սիւնազարդ՝ բարձր և գեղեցկադիր շինեալ ՚ի նոյն Յովսէփ եպիսկոպոսէ յամի տեառն 1814. յարևմտեան կողմն վանատան ՚ի վերայ Տնեսդեր գետոյ, առ որով են և երկու բնակարանք ժողովրդապետաց յերկոսին կողմանս եկեղեցւոյն։ Եթէ չէր ժամանեալ տարաժամ մահ լայնախորհուրդ եպիսկոպոսին, ոչ միայն զարդարելոց էր զեկեղեցի և զհայրապետանոց իւր, այլ և

զբոլոր վիճակն և զժողովուրդն, ըստ որում տենչայր ազգասէրն այն՝ և յետ սակաւուց ունէր բարձրանալ 'ի վիճակ արքեպիսկոպոսութեան՝ այլ յամի 1816. Թողեալ զանցաւորս՝ էանց յանանց վիճակ. զորոյ դամբարան գեղեցիկ մարմարիոնեայ տեսաք յատս աջակողմեան խորանին:

Յառաջագոյն ունէին Հայք առանձին դատարան համդերձ բազում արտօնութեամբ, այլ այժմ բարձեալ է ամենայն. միայն յետ մահուան Տէր Անտոն Վարդերեսեւիչ Աթոռակալին (219) աստ վերադարձաւ փոխանորդութիւն եպիսկոպոսական կառավարութեան: Եկեղեցին ունի փոքրիկ գիւղ յեկամուտ քահանայից, որպէս պատմէ և Աւգսէնտ վարդապետ 'ի յիշատակարանի իւրում, զոր գտաք 'ի Սաշքօվ քաղաքի: Ուր գիտելի է՝ զի զ100. թիւն թողու առ չափու ոտից ոտանաւորին. ուստի պիտի իմանալ 'ի 1148. Թուականին ծնեալ. և ոչ 'ի 1048. որ ոչ յարմարի ժամանակին:

Ա.

» Ի թվին հազար քառասուն ութին,
» Լեօպօլիս մայրաքաղաքին,
» Ծնեալ եմ յաւուր ս՟բյ զատկին,
» Որ եղև ապրիլի իննին.
» Ի ծնողաց լուսաւորչածնեանց,
» Գրիգորէն Նիկոլեայօսեանց.
» Որ է զարմէն մեծ խոսրովեանց,
» Եւ Մայրամէն ասվատուրեանց.
» Յարութի անունս մկրտութե՟,
» Եւ Աւգսէնտիոս 'ի դրոշմեան.
» Ի Կամենից քաղաքում եմ սնեալ,
» Ուսմանց գրոց աշակերտեալ.
» Վարդան արքեպիսկոպոսին
» Լեօպօլիս առաջնորդին.
» Անդ 'ի դպրատանն ս՟բյ փափին
» Իմաստութեանց ուսայ ամս ինն.
» Թվին հազար եօթանասուն մին
» Պասացայ քահանայ կարգին.
» Ի Յոհաննէս առաջնորդէն
» Ակուստինօվիչեանց զարմէն.
» Եւ յաւուրն պէնտէկոստէի

„ Նորընծայ պատարագեցի.
„ Նախ զամս երիս քարոզեցի
„ Կամեցում դռանն Լուսաւորչի.
„ Ապա Սվանչում ժողովրդեան
„ Ամ մի 'ի Հոգաբարձութեն
„ Պութերում նորաշէն քաղքի,
„ Ութսուն տանուտէր ժողվեցի.
„ Ամս տասներկու անդ հովուեցի,
„ Զնոր եկեղեցին հիմնեցի.
„ Նաև զերիս եղբայրութիւնս
„ Եւ զամէն բարեկարգութիւնս
„ Մայրաքաղաքում Լէօպօլիս
„ Ամս չորս վիքարութիւն արի:
„ Անտի Թվին հազար նսուն մէկի,
„ Մօհիլովայ քաղաքն եկի.
„ Զեկեղեցին նոր տէնկեցի,
„ Զկելուրն երկու քահանայի.
„ Եւ զբրավան հայոց ազգի
„ Ամս հինգ հոգետես տըքնեցի:
„ Հետոյ Մաշքօվն քաղաք գնացի,
„ Ըզփոխեալ հայազգն ժողովեցի.
„ Զբրավան պէկից նոյ բերի,
„ Սահմանս բարեկարգութեց դրի.
„ Զքարաշէն նոր եկեղեցի,
„ Զքահանախուցն զկելուրն տնկեցի,
„ Այդմ աշխատիւքս մինչ տկարացայ,
„ Շնորհաց տն̃ շնահկալ գոհացայ.
„ Տէր, զայդքան ես յայգւոջդ տնկեցի.
„ Դու օրհնեալ ջրեալ, քեզ պտուղն լցի
„ Փառք մշտակայ փառաբանութի,
„ Եւ ժողովրդեանս հոգւոյ փրկութի:
„ Վարձս տուր անարժան քում մշակին,
„ Զներումն և զշնորհսդ հոգուս ելքին.
„ Հանդիպողք այսմ Յիշատակի
„ Յիշէք Աւգսէնտ վարդապետի ‖:

ՌԱՇԿՕՎ

252. Ի փոքրիկ քաղաք շինեալ 'ի վերայ Տնեսդէր գետոյ 'ի վայելուչ դիրս. որ երբեմն ծաղկեալ

եր վաճառականութեամբ, այլ այժմ գլխովին նսեմա-ցեալ : Գրեթէ բոլոր շուկայն է 'ի ձեռս Հրէից, որք բազում են անդ, և ունին դպրոց և սինակոկայ : Յու-ռաջագոյն կային աստ ոչ սակաւ Հայք, որոց Թաղ է 'ի վերայ գեղեցկադիր բլրոյ, ուստի վայելուչ իմն երևի բոլոր քաղաքն և գեղազուարճ բազմապատոյտ ընթացք գետոյն, յորում տեսանեն զանազան կանաչագեղ կղզիս գործեալս 'ի տղմոյ անտի : Ոչ տեսանի երևելի ինչ 'ի քաղաքիս, բաց յեկեղեցւոյն Հայոց, որ է քարաշէն վայելչադիր կառուցեալ 'ի վերայ բլրոյ՝ յանուն անա-րատ յղութեան Ածածնին : Գրեալ տեսանի յորմն, թէ շինեցաւ յամի տեառն 1786. և օծաւ յամի 1791. 'ի Թումանովիչ Արքեպիսկոպոսէն Լվովի. կան եր-կու գեղեցիկ զանգակատունք 'ի ճակատ եկեղեցւոյն, որք 'ի Հեռուստ վայելուչ երևին. իսկ 'ի վերայ աւան-դատան կառուցեալ կայ բարձր քարակերտ պահարան, ուր ելաք ընդ քարեայ սանդուխս : Առ որով է բնա-կարան ժողովրդապետին՝ որ Հովուէ զսակաւաթիւ Լեհ ժողովուրդս, որք չունին եկեղեցի. և ոչ իսկ գոյ աստ Հայ ժողովուրդ, այլ միայն փոքրիկ կալուած յե-կամուտ ժողովրդապետին մնացեալ յառաջնոց անտի : Այս եկեղեցի նորոգեցաւ յաւուրս մեր ձեռամբ Տէր Անդրէի Մինասեան պատուաւոր կանոնիկոսին՝ որ բազում մարդասիրութեամբ պատուեաց զմեզ : Սուր-անօր եղև յերկար ժամանակ ժողովրդապետ Տէր Ա-տոմ Վարդերեսևիչ մեծապատիւ կանոնիկոս :

Տեսաք զմկրտատետր այսր եկեղեցւոյ՝ որ սկսանի այսպէս. *Գիրք մկրտելոց 'ի Նորատունկ եկեղեցւոջ
» Սուչքովայ Հայաժողովրդեան : Յամի տն 1749. և
» 'ի Թվկն ռՃղը. սեպ. ժէ. Ես տր (Օ)գուէնտիոս... մկրտե-
» ցի և դրոշմեցի զէգ տղայն անուամբ Մարիամն
» ծնեալն 'ի յօրինաւոր ծնողացն Լազարէն և Լվտո-
» քեայէն. կնքահայր գոլով բան Անանիայն և կնքա-
» մայրն Մերխուցէն իւր ամուսին ‖ : Ապա գրէ, թէ մկրտեցի այլազգի կին մի, որոյ անուն եդաւ Աննա :

253. Յառաջագոյն Հայք Սուչքովայ ունէին առ-անձին դատարան, դատաւորս, և վոյթ, համդերձ պարգևագրով զոր ետ նոցա Յովսէփ Լիւպոմիրսքի Լեհ իշխան յամի տեառն 1571. մարտի ժթ. յայր սակս ժողովեցան աստ Հայք յայլ և այլ կողմանց,

և ծաղկեցուցին զքաղաքն ։ Հրովարտակ այսր իշխանի թարգմանեցաւ 'ի հայ լեզու 'ի նմին ժամանակի ․ զոր տեսաք գրեալ բոլորագիր, որ գրեթէ փակէ յինքեան զարտօնութիւնս և զսահմանս զանազան հրովարտակաց այլ և այլ քաղաքաց ։ Նորին աղագաւ պատշաճ դատեցաք դնել 'ի կարգիս զայն ըստ բնագրին հանդերձ ամենայն սահմանօքն, որպէս զի՝ այնու խելամուտ արասցուք զբանասէրս բարեկարգութեանց և ազատութեանց Հայոց եղելոց 'ի Լեհաստան ։

* ՅՈՎՍԷՓ ԼԻՒԲՕՄԻՐՍՔԻ ՌԱՃՔՈՎԱՅ ԺԱՌԱՆԳԱՊԷԿ ԵՒ ԱՅԼ ։

254 ․ Յանուն Աստուծոյ ամէն ․ և ի մտ ապագայ յաւիտենական յիշատակի ։ Ամէնյունց ստ․ հասարակ և առանձին գիտութի լիցի ներկայ Բրիվիլեկի իմոյ նամակաւն ։

Որովհետև մեր քաղաքացն պայծառաշքնութիւն լինի, աւելցընելով զբնակիչս նորին, և զժողովս, եւ ալ փափաքելով զշինութիւն և զպայծառութիւն իմ ժառանգաւոր քաղաքիս Սուշքօվայ, աւելնալով ամէն ցեղ ժողովրդովք, և մանաւանդ ազգաւն Հայոց Պազիրկանաց, մի այնորիկ այս հայազգ ժողովրդեան կուտամ զիմ Բրաւան, որնոր իմ Բրաւայովք սիրտ և միտքն իւրեանց հաստատելի գալ 'ի Սուշքօվ, տան շինութի և Պազիրկանութին անեն, տունձ և համարձակ բնակելով ։ Նաև պարտական իմ խօսքով խոստանամ վերոյիշեալ Հայոց ազգիս, թէ զիմ արդիւքաւընուերն և բռնաթաներն ներքոյգրեալ բրաւայիս բռնել և պահել պարտական եմ յիմ ժամ, և յետոյ ։ Նմանապէս և իմ Հետևօղքն Սուշքօվայ ժառանգապէկք պարտական պիլան խօսքս բռնել, և պահել Հայազգիս և իւրեանց հետևողայն յետոյ ։ Բրաւանաւն կապվածքին զօրա ։ և

Բրաւայէն արդիւքաւընուերն և բռնաթաներն են այսոքիկ ։

255 ․ Ա․ Տամ Սուշքօվայ Հայ ազգին իշխանութի որ ունենան զկատարեալ իւրեանց ուրէնան ․ այ Սէյթ տասվերկու աղայովք, և քարսուն աղբարանցմովք, և այլ իմ քաղաքաց երկայովք ։ Նաև այս Հայազգիս իմցնոց միաբան հաւանութեամբք ամէն նոր տարի ընտրե-

ցեայի ընտրած և երդվընցած վօյթին ձեռն կուտամ զօրութիւն իւրիստիկեցլային, զի ժէ Աղանուն. ժբ երդվընցած դատաւորացն հետ միատեղ նստելով, զամ իւրեանց ազգի մէջ բողօջնիյ և քրիմինալնի շարիաթնուն դատաստանն կտրել, և վճռել տէքրէթօվն, և զայսպիսի տէքրէթներն պիգրէ Բիսարն իւրեանց Աքթանուն բրօթօքուլի մէջ:

256. ձ. Սալդ մէկ Աբբէլլացիան իւրեանց Տէքրէդէն պատկանի առ իմ, կամ իմոյ վէգիլին դատաստան: և զայսպիսի Աբբէլլացիանուն տէքրէթներն իմ կամ իմոյ վէգիլին ձեռօքն ստորագրելու, պարտի Հայոց բիսարն գրել իւրեանց Աքթանու մէջ, աքթօրին և բօզվանին հաստատութեն համար:

257. ղ. Իւ այս Սուրէնտին համար նշանեմ պաշխայ դատապաստանատուն Ռաթուշին մէջ, ուրուխ զիւրեանց դատաստան, և զամ երկայն պանիրն:

258. ճ. Այս Հայ ազգս լիցի մասնակից ամ կէլուրից քաղաքին, պարապար Լեհ ազգին հետ. այնու համար պիտի ընտրեն իւրեանց միջէն խելօք վէրակացուամէն նոր տարի երդվընցած, որ զայնպիսի կէլուրն ժողվէ և խարջէ ըստ կամաց իւրեանց Սուրէնտին:

259. մ. Ինչպէս յայլում քաղաքաց կեցող ազգս այս ունի պաշխիշ 'ի թագաւորաց և 'ի ժառանգապէկից իւրեանց, այսպէս ես ալ Ռաշքօվայ Հայ ազգին համար վօյթին և աղանուն խոստանամ 'ի վայելումն նց տալ բաժին մի իմ Պաշտուց գետնին:

260. յ. Զամ առուտուրն և զպազրկանութիւն և ըստ հունարից նց վաստակն անել, մն իւրեանց հարկեօր ապրելեաց ամնից, և իւրաքանչիւրում իբրև Հայոց ազգին վօլնօսց կուտամ:

261. ն. Ամէն ցեղ իշխանի ծախսն վօլնի է Հայոց ազգի. բայց իշխանից հախն պիտան արէնտայիս այնպէս ինչպէս կուտայ Լեհ ազգն:

262. շ. Զինչն Պաւնական պիտայ Հայազգս ամէն տարի. Պազրի միջին տանգլօխ մէկ մաճառ ոսկի, և միւս սօխախնուն տանգլօխ կէս մաճառ ոսկի: Բայց Սլօպօտիայ առաջ թամամվելուն ետև:

263. ո. Ազգս այս Հայոց զայնպիսի Զինչն տալուն հետև տարին մէմը, հէչ ուրիշ տալիք ժառանգապէկին չի պիտան յտնս: և ամ տասանորդաց տալիքէն ա-

զատ կանխիմ զնո, ուխտերից, խօլաննուն, խողերից, ձիաննուն մէզիլից, և տաւրի կոտոշից, բօֆուրնիէն, բավօլօուչիզնայէն, և նմ քօնթրիպուցիայէն. և ինչ-պէս նմ խարճէն զայս Հայկազն ես ազատ կանեմ նեբ-կայ Բերավայոմս, այնպէս և իմ հետևօղքն խօսքս պահել պարտին յունս։

264. Ժ. Բանէհերնուն ժամանակն այլուստ եկեալ Հայանց մէջ հանդիպեալ շարխաթնուն դատաստանն պանէ իմ գրած վէքիլն։ Բայց և հայոց վօյթն պարտ է միատեղ վէքիլիս հետ վճրեն զՏէքրէթն. և երկու-սին ալ ձեռօքն ստորագրըվին. որ իմանան թէ հաս-տատապէս իրենց տուած բրավային խօսքս կու պա-հեմ, և սիրտ ունենան գալ ՚ի բանեհերս և տնաշինու-թն Սաշքօվուն աւելնայ. մն այնորիկ որ ժամանա-կաւոր իմ վէքիլն դիժարանք մի կամ զուլում չանէ Հայազգի պազիրկանաց։

265. ԺԱ. Երբ հանդիպի ժմնկն, որ յայլուստ ե-կած Հայ ազգն յանկարծակի հիւընդնայ, և տուանց կտակի՝ նծ պահէ՝ մեռանի Սաշքօվում փողին, յայն-ժամ պարտին իմ վէգիլըն դիմաց ՚ի դատաստանտան Սաշքօվայ ուրէնտն հայոց, զնմ մեռածին ստակն և մալն գրել, սընտկի մէջ դնել, և ը մոհրով վէքիլիս և ուրէնտին Հայոց փճաթելով պահել ՚ի դատաստանա-տանք մինչև մէկ տարի և վեց շաբաթն։ Նորեւու-թէ չի գտվի ազգն կմ վասին, վէքիլըկամայումն այն մե-ռելուն մալին մօտ, անժում իմ վէքիլն և Հայոց ու-րէնտն զմալն սընդկից կու հանեն, և ը փայ կանեն. մէկ փայն պիտան իմ խազինային, և զմիւս փայն պի խարճին Սաշքօվայ պէտք բանի մը. ինչպէս Հայոց ուրէնտն պի հասկընայ եկեղեցու մը։

266. ԺԲ. Եթէ Սաշքօվայ երլու Հայն կտակ անե-լով անզաւակ մեռանի, յայնժամ առաջ պարտ է կտակէն գօրայ թաղման, ժամին և այլ թամամել. և մնացուրն Սաշքօվայ քաղքին ալ պէտք բանի մը պի խարճեն, իմ վէքիլըն գիտութք, մը եկեղեցույ։

267. ԺԳ. Ինչպէս Լեհ ազգն ամէն ցեղ Սանիաթ-նու մէջ ունի պաշխայ երդուընցած Յեխմիստրն, այն-պէս և Հայ ազգիս մէջ ամէն ցեղ Սանիաթն պիտի ընտրեն իւրեանց գլուխ Յեխմիստրն, և զկելուրն նդ, եկեղեցույ պիտոր տան։

268. ԺԴ. Ինչպէս Օսմանցւոց քաղաքին Հայերն ունին Երավան, որ բովանդակ լեհաց՝ փողին վ̃ր գնալով՝ ապրանքով գիւրայական և զբժէշբօսբօլիդայի միթան հէշ չիտան, այնպէս ես ալ զինոյն Երավան 'ի Թագաւորէն և Բժէշբօսբօլիթայէն հանել խոստանամ Ոսաշքօվայ Հայ ազգին համար ։

269. ԺԵ. Ոսաշքօվայ հայերն ամենեքեան հէշ միթայ չիպի տան այս քաղքի մէջ. և իմ այլ քաղքնուն, կմ̃ գերղրանքնուն, ուրևիցէ փողի վ̃ր գնալէն ապրանքով ։

270. ԺԶ. Աւանդեմ իմ հեռաւորացն, որ իմ մահուան ետև. թէ զՈսաշքօմն 'ի բաժին հանտոպի բաժնելու 'ի Պառնին ։ անժուեմ զհայազգն որ չի բաժնի 'ի Պառնին կէսն ։ այլ ամ̃ Հայազգն մէկ Պառնի ձեռն մնան ։

271. ԺԷ. Գունքի որ մարդուն կամքն զալանկան է 'ի վ̃ր աշխարհիս. ուր կամի բնակի, և ուր կամի երթայ ։ Որեմն թէ Հայազգ Ոսաշքօվցին չի հաւանի բնակիլ Ոսաշքօվում, վօնի պիլայ իրեն զամ̃ իւր ստացուածն այլ մարդու ծախել, և ուր կամի երթալ ։ և չիպի արգիլէ զնա վօյթն կամ իմ վէքիլն ։ Եւայց ստաթին զօրայ պիտայ պաշխիշ Հայոց Ոսրէնտին ։

272. ԺԸ. Ամ̃ այլ քաղաքաց Հայազգն զիւրեանց Երավան ամրացուցած ունի թղթերց և Բժէշբօսբօլիթային մոհրովն. այնպէս և ես խոստանամ Ոսաշքօվայ Հայոց ինծանէ ներկայիւքս տուեալ Երավան ամրացուցանել ։

273. ԺԹ. Այս և իմ հեռաւորքս. Պառնական և յետնական խօսքովն կու կապվիմք զներկայ Երավան, և վերոգրեալ բրիվիլէյն թամամ բռնել, և յետն պահել խօսքս. և մ̃ հաստատուն բանիս խոստանամ և կամիմ զներկայ Երավան կրօտէլ Նքեթանուն մէջ ամրացուցանել ։

274. Ի. Եւ զի այս Երավան Չշմարտապէս հաստատուն և յետնական զօրութի ունենայ, իմ յատուկ ձեռօքս ստորագրիմ, և իմ մոհրովն կնքեցի ։

Եղև 'ի Լապուն քղքիս. յամի ամ̃ 1751. Մարտի ամսոյն ԺԹ աւուր ։

Յուսէփ Լխալոմիրսքի ։

Եստապօլի Լիթէվսքի, Զէնէրալ Մայօր ։։



Թարգմանիչ պարգեւագրիս սկսանի այսուհետեւ մեկնել և բացատրել զզօրութիւն բանից. յետոյ դնէ զդատաստանական սահմանս և զայլ ամենայն կանոնս այսպէս.

*Նոր տարագրեին նորա խրատն մեծ վայելման և օրինաւոր վարժման վերոյ Եարգմանեալ Երավայեին.

Նախ գլուխն է:

275. Զունքի որ Նորավայրին մէջ հրամայեցաւ, թէ Սուրէնոս Նաշքօվայ հայոց այնպէս պիտի կառավարուի, ինչպէս կառավարուի մեր հայազգն յալում Լեհաստանի քաղաքում: Նոյնու համար պարտ է՝ և Նաշքօվայ ժողովրդեան գիտել զամ սովորական քաղաքավարութեանց տաւթն:

Ի՞նչ է Սուրէնոս:

276. Իշխանութիւն է և զօրութիւն Պեկկից Նորավայրին (այս պարգեւագրոյն) տուեալ վօյթին և ժողովրդեան դատաւորաց ձեռն՝ զամ դատաստանն և կառավարութիւն անել հայազգի մէջ բնակելոցն 'ի Նաշքօվում:

Ի՞նչ է Լուժեայն:

277. Ամէն տարի կարընտեն օրովամ տուած Վօյթն հրապարակ կուտայ ժողովրդեան. և այս յաւուրն նորատարոյն վօյթն, ապաներն, և քառասուն աղաւարքն ժողովին յեկեղեցին, կուտան ժամուց իւրեանց քշնուեր Նորօպօշչին, և ետքն լսեն զՊատրզն վօթիվայն. և յարձակման ոչ Պատարագին առնելով զօրհնէնք երթան 'ի դատաստանատունն, պիզարի թղթի մը նոր վօյթին գրած անընուն. և զայնպիսի թղթի մը վօգուենէրն կու դնին սեղանի մը. և որին ալ շատ անընուն գտուին վօգուեներն, նայ այն կամօքն Վօյթ կընտրուի ժողովոյ աղանուն միջէն. և նոր ընտրած վօյթն պարտ է երդում տալ այսպիսի Յօթայի մը.

278. Այս ես ես անուն՝ երդուենամ Նորա ամենակարողին հօր և Որդւոյ, և Սգւոյն ոգւոյ, Նորօամօրն Մարիամայ միշտ կուսին, հօրն իմ ոչ Գրիգոր լուսաւորչին, և ամ ոգւոյն այն. հնազանդիլ իմ ժողովրդոյն

Գերապայծառ Իլօվայ Առաջնորդին, և հրամայե-լուն պէս վերապատուելի մեր Տր Պրօպօշշին : Եր-դուենամ Սաշքօվայ Պեկկին հաւատարիմ լինիլ, և զժողովուրդն քաղաքիս շահել և ավելցնել : Երդուե-նամ զքաղաքին Պրաւլան պահել, և զիմ շարիաթ-նուն ստոյգ ինքվիզիցիայոմն, շիտակ և արդար Տեք-րեդոմն վճռել հոգուս վրայ, և այ համար քրիստոնեից օրինաց իրաւամբ, չէ կաշառօք, երեսպաշտութ, կմ նախանձու : Իսկ թէ այս իմ երդումիս խօսքերս թա-մամ չի բռնիմ, պատուհասեսցէ զիս այ արդար դա-տաստանն, և անմեղ վրէժխնդիր քի չարչարանք, ա-դէնի և անտէնի կեանքիս․ եղիցի եղիցի, ամէն : Այս-պէս կերդուենան և նորընտրեալ աղաներն : Որոնք չեն փոխվիլ, քանի որ զայս երդումն բռնեն թամամ :

279․ Ապայ ելէքցիային մէջ կընտրեն աղանու մէ-ջէն մէկ Սուպտելեկաթն, որն որ վօյթին տեղն կը-նըստի, երբ վօյթն տանը չի գտնվի կմ հիւանդ լինի, կմ ուրիշ մարդու հետ շարիաթն մտանէ :

Անդ ևս կընտրեն իրեք Ածասէր և ժամասէր Տօլ-վաթաւոր Պրօվիզօրս : Աւագ գանձապետն, եկեղեց-նայ գանձապետն, և Աղքատաց Տէնտեսն : չորսում խելօք Պէյենդն : երկու ամծավախ Սալխայգրօղն, դրագէտ Պիսարն․ և Սուրէնտի Ինսդիկաթօրն, և մէկ Մէյսքէի Սլուկան խըսմէթ անօղն դատաստանատանն :

Աւագ գանձապետն պարտ է հոգալ զիմ կելուրն թէ յեկեղեցու մէջ, և թէ 'ի չարշուվու մէջ․ տան և տուկեան գլօխ փարայ ժողովելով ամէն կիրակմուտ-քին․ և այլ հայոց աւանդութեն պէս և զայն տալ իւ-րեանց վրիպտուլի Տր Պրօպօշշին ձեռն :

280․ Եկեղեցնայ գանձապետն պարտ է հոգալ զժա-մին շինուն, պայծառուն, և զիմ պէտսն, և զկելուրն․ Տր ժողովելով զհայոց Սուրէնտի Տէքրէթնուն ձուրում-ներն․ Ջրօրհնեաց խաչհանելիս, ծաղկազարդին դռնաբացանքից․ Զատկին լուսաբերից․ Պասկնուն, Թաղմանից, Պսանահերից, Սալեամըթից, և այլ չար-շուվուս, և ժամու մէջ գանձանակ ման ածելով, և զայս-պիսի կելուրն գանձապետն Աւագ գանձապետին հետ միատեղ կը դնէին ժամին գանձանակի սնտուկի մէջ առաջի վրիպտուլի Տր Պրօպօշշին․ որ զիմ կու գրէ Պէյեագրի մէջ․ և առանց Ս․ Տր Պրօպօշշին գիտուն,

ոչ կու բանան զայն սնտուկն, ոչ մէջէն մի խարձին հէչ:

281. Աղքատաց տընտեսն պի հոգայ զպէտսն փա-խիրնուն, անճարակնուն, հիւանդաց և հիւրից խարիպ խօնախնեկից, և սա պիտի ունենայ զանձանակ մի ժա-մին դուռնը, և խուց մի սքիթալ ժամին աղագ. ուր ժողովին և բնակեն անճարակ և հիւանդ, և հիւր ե-կած հայազգն: Սա կու ժողվէ զողորմութի կամաւոր ժամին դրանը, և 'ի չարչուվում բանեհերնուն, թաղ-մանը, մատղընուն, և այլ տեղն, ըստ ատաթին Հայ-ոց: Այլ թէ անճարակն հիւընդանայ, կոչէ զքահա-նայն որ խոստովանցնու, հաղորդէ, և թաղէ:

282. Ռէյենդն: Ռուսուն ազգարանց մէջ Սդարեա-դայ է. պարտ է զքաղաքին քաղաքավարութիւն, և զամ երկայն վարժել. զչինչերն և զսալիան ժողովել, և վօյթին հասցնել: Թափուրնուն պայրախտին կառա-վարել. զքաղքին կելուրն և զխարճն իմանալ. վօյ-թին հրամայելունս:

Սալիայ գրողքն երդուեննան, որ ամ. համար Ռէյէն-թին դիմաց գրեն Սալիայ տալեց. թէ պէտք լցէ և զտէֆթէրն կուտանին վօյթին մօտ:

283. Երիսարն պարտ է գիտնալ զՕրէնս ամ, զկա-նոնս եկեղեցւոյ, և զիրաւունս քրիստոնեաց դատաստա-նին. և կերդուենայ թէ շիտակ և ճշմարտապէս պի գրէ զՇարիաթնուն Անքվիզիցիան, և զՏէքրէթն, Եքթանուն Երօդօքուլի մէջ. և զդատաստանին Սէք-րէթն դուս չի հանէ:

284. Ադվոդիկաթօրն պարտ է դատաստանին դի-մաց լաւ հասկըցնել զտավին և զճույեապն Ադրօնա-նուն, կմ որբովարնուն, որբերուն և աղքատնուն հա-մար զուըրուցելու որ չի զըրկվին. կմ երբ անպատեհ բանի մը չի գայ տավիճի, խօքն պիտի զայնպիսին չա-րագործն բօզիվաթ անէ, տավին քշէ և 'ի վերջն ածէ, որ անպատեհ բանն Հայազգի մէջ չի մնայ:

Մեսքի Սլուկան պիտի վօյթից բօզօմն տանէ բօզվա-նին մօտ, որ փալան սահթենը կաննի 'ի դատաստանա-տանը ճույեապ տալու Եքթօրին. և շարիաթին ատեն զԱդրօնաներ դատաստանի մօտ բերել. կմ նայ ուս-դօմը դուրս հանել. կմ Տէքրէթին գօրայ զտունչըլուն փակել, թակել, զճուրումներն պահանջել, զդատաս-

տանատունն պահել. և զնոյն խնամքն ուրէնօրին ա-նել վկաթեան հրամայելունն ։

Ինչպէս լինի Դատաստան ։

285. ա. Դիտելի է թէ հէչ չէն անել դատաստան հոգևոր պատճառին վրայ, քահանայի կամ եկեղեցականի, կամ եկեղեցու բանի վրայ. կամ ժամի բակին և քահանու բակին մէջ եղեալ բանի վրայ. կամ երբ շարիաթն է դէմ այս օրինաց, և մեր խորհրդոց, կամ դէմ եկեղեցւոյ կանոնաց. մի հաւատ ուրացողաց, պատակերաց, հայհոյիչներուն, և տօն չիբերնօղաց, մի հարսնախօսութե, նշանտուքնուն, փսակաց, և 'ի մէջ ամուսնեայց հարամութե կամ տնավերութե, և այլ ։ զայսպիսի շարիաթն պիտի խրկեն վրճշտլի Տր Պրօպօշչին մօտ, որոյ խրատին խապուլ չի կեցողաց դատաստանն Նոլօվայ հայ Առաջնորդին ձեռն է, 'ի կապելն և 'ի արձակելն ։ Այլ քահանայի զարնօղն և հոգևոր դատաստանի խառնվօղն ան սահմէն բանադրեալ լինի ։

286. բ. Հէչ չիլալ շարիաթ կիրակի, և տօն օրն. ոչ մէթանը, ոչ մէհանուամ, ոչ իչգուրին աղագն, ոչ երբ դատաւորն կամ Ադրօնան հարբած, խելագար, և թերահաս խելաց կամ տարեց չլինի, և ոչ առանց վկաթեան կամ սուպտէլէկաթին, և ոչ առանց մէկ քանի աղանուն ։

287. գ. Աշոյթն և Ազան չի պիտի մարդ անարգէ, զարնէ, փակէ, կամ ճուրումէ, առանց տեսած շարիաթին և տէքրէթին ։

288. դ. Դատէնցիան և ժամադրութի դատաստան անելոյ, միայն իրեք օրն նշանեն, երկուշաբթի, չորեքշաբթի, և շաբաթ օրն ։

289. ե. Այս հայոց Մուրէնոտն զօրութի ունի ամ դատաստան տեսնել սալդ հաշքօվայ հայ բնակչաց մէջն, կամ երբ այլազգն զՄաշքօվցի հայն տավի կանէ ։ այլ երբ հաշքօվցի հայն տավի կանէ զայլազգն, կամ զայլուստ եկած հայն, անժուամ դատաստան կանէ Կուպէրնաթօրն ։ Իսկ թէ Կուպէրնաթօրն խրկէ նշանովմը իրեն ձեռագրով հայ ուրէնոտին մօտ դատաստան կըտրել անպէսնուն. անժուամ զտէքրէթն իւրեանց պիտի բերեն կուպէրնաթօրին մօտ, և թէ խապուլ

խլայ պիտի ստորագրվի կուպէրնաթօրն այն տէքրէթին ներքեւն, և բիսարն գրէ հայոց աքթանու մէջ ։

290. Է. Երբ բանէհէրնուն ժամանակ այլուստ Հային շարիաթ ունի թէ հային հետ, և թէ այլազգին հետ, վըյթն պիտի անէ ինչպէս Պաունին Բրավայի մէջ կու հրամայէ ։

291. Ը. Արդ 'ի Պռատէնցիային դատաստանին լընելոյ ժամադիր աւուրն, Վըյթն կմ Մուպտէլէկաթն Աղանուն և Բիսարին հետ նստին 'ի դատաստանատանը ։ Առաջ չօգման կոչեն զոք Մգին, զի տայցէ նշ գլխաւորն պշարիաթին պատճառներն, և զարդար տէքրէթն ․ ապա հնչեցնուն պիղտի զանկըլին ձայնովն որ լսեն շարիաթ մտնողքն և մտանեն 'ի ներսն ։ և Յանուն նոյ դէնեն սեղանի վը քի խաչելութին, և զԱքթանուն Բրօթօքուլն կազմած գիրքն ։

Իսկ յատեան դատաստանին առջեւն ստուտ և նմ հարկիքովն կայնէ Աքթօրն և Բոզվանին ։ 'առաջ կուլըսեն զնմ տավան Աքթօրին, և ապա զճույեապն Բոզվանին ։ Այլ բիսարն կու գրէ խօսքէ խօսք զերկուսին ալ պատճարսն Աքթանու մէջ և հնչելով զանկակին, ադրօնաներն դուս ելանեն նա Մուսդօմբ, և առաջ աղաներն ալպահչի ճօթեն կասեն զիւրեանց հասգըլցածին պէս Տէքրէթին սէնդէնցիան ։ այլ Վըյթն լավ քննելով պշարիաթին պատճառներն, և զաղանուն դատած սէնդէնցիաներն, կու վէճռէ զարդար տէքրէթն, և գրել հրամայէ Բիսարին ․ ապա հնչելովն զանկըլին, և մտանելով 'ի ներս Մդրօնանուն ․ Բիսարն կու խօսեցնու զտէքրէթն ։ Իսկ սունչլուն անկից դուրս չելել, մինչև տէքրէթին գօրայ բաւական անէ, զնախըլատն, և զճուրումն վիճարէ ․ կամ փակ նստի, մինչև քէֆիլ չիտայ, և այլ ։ Այլ դատաւորք չօգման գօհանան զնոյ, և գնան ։

292. Թ. Երբ Մդրօնանուն պատճառնուն շիտակ ճշմարտութին չի իմանվալ, անժուժ առաջ ինքվիգլիցիա լինի քննուքն վկայուքն կմ երդմամբ ․ բայց երդումն չի հասնիլ ծուռ, սուտ, և ոչինչ բանի մը, կմ անպէտք տեղ ․ այլ միայն երդուենալ կուտան շիտակ, ճշմարիտ, և մեծ բանի մը ․ և այնպէս 'ի հարկէ պէտք տեղ որ առանց երդումի հէչ չի իմանվալ ուրիշ արտաքրեալ պատճառովն ։

293. ԺԹ. Աքթաներն կու գրեն այսպէս Օրինակայոմն:
Աքթում եղև 'ի Մոսքօվայ քաղաքում. Յամի տն 1751. մարտի ամսոյն Թ աւուրն: Առաջի ազնուոյ ա̄. ա̄. Ու բրժիվիլօվանի Հայոց Նրավայի դուռերին և Սօյթին. և առաջի մեծարելի ա̄. ա̄. ա̄. ա̄. ա̄. ա̄. ա̄. ա̄. նոյնոյ իւրխատէքցիայիս դուռերաց և աղայից:

'Ի մէջ ա̄ ա̄. Աքթօրին միոյն, և բօղվանին ա̄ ա̄. միւս կողմանէ. Աքթօրն յատենանն ժամադիր դատաստանիս առաջադրեաց զտավան բօղվանին վերայ այսպէս և այնպէս. և բօղվանին պատասխանեաց այսպէս և այնպէս: Իսկ ներկայ դատաստանն իմացեալ զառաջադրեալ յերկոցունց կողմանէ քօնդրօվէրսիան: Արտաքհեաւ այսպէս և այնպէս. կամ 'ի լիակատար ինքվիզիցիայէն ստուգեցաւ այսպէս և այլ. կամ կոչելով զի՞նչ անուն երդուաւ այսպէս և այլ այսօրվան Տէցիզիայոմն զայսպիսի Տէքրէթն վճռեաց. զի սունցլուն ա̄ ա̄. այսպէս. Ճուրում տացէ Պատնին այսչափ. և եկեղեցւոյ այսչափ. կամ նստի փակ զընտանի մէջ այսչափ. կամ զհալալ արդրօնան հաշտեցնու, այսպէս և այլ, զօրութ ներկայ Տէքրէթիս:

294. Ի. Երբ հանդիպի որ մէկ Ագրօնան խապուլ չի կենայ Հայոց տէքրէթին, անժում կու բողոքէ բերթին դատաստանին մօտ ասելով դատաստանի մէջ աբբէլլէյէ. և խնդրէ որ տան իրեն ձեռն զօրինակ տէքրէթին, բէր էքստրաքթում. և այն տէքրէթին էքստրաքթօմն կերթայ կուպէրնաթօրին մօտ կամ Պէկին մօտ, կամ Ռօմիսարին մօտ. և խորդած տէքրէթն կենէ կու բերէ Սօյթին ձեռն, որ տայ բիսարին ինտուքօվատ անել, գրելով Հայոց ապթանու մէջ:

295. ԻԱ. Այս դատաստանին Ճուրումներն և նախլատն եկեղեցու գանձապետին կուտան. որ ժամի գանձանակին մէջ դնէ քահանուն առջևն: Այլ երբ Ճուրումն բերթին լինի, վօյթն կուտայ կուպէրնաթօրին և քվիթ կառնու:

296. ԻԲ. Դատաստանին դիմաց ղավղայ անօղն, կամ դատաւորաց անարգօղն՝ 'ի հոն կու փակվի, և ժամի Ճուրում տայ, և աղաչէ զդատաստանն:

297. ԻԳ. Աքթում շարիաթին գրեցէք, կամ էքս

դրաքթում հանդչէք միմէկ շղատակ բիսարին հախն
է ։ Բոզօվասալչէք ա՛ շղատակ ․ և ոնէքրէնթից բ՛ շղատակ
դատաւորացն է ․ և ա՛ փէշ խլըմաթ անուղին է ․ զայս
խարձն սունչլուն տայ ։ ||

* Ըստ հետևի հրովարտակին առհձանւոյ ․ վն՛ եարբեղաշղատին ․
և դաղատավորատին Օսմանեան նորադրանի Հայոց ազգիս ։

298 ․ Յն ՌՃՂ ձՃյ Օքսենտիոս Խոսրովայնիկօ-
ղեանց Հայոց վրդպտ ։ Յանձնարարական ինձ տուեալ
իշխանութ՛ ի Գերապայծառ Տէր Յակովբայ Աւգու-
ստինօվիչէն մայրաքաղաքի Լեօպօլի, և ընդհանուր
Լեհաստանեայց դիմի Հայոց Արքեպիսկո-
պոսի, և իմոյ Առաջնորդին, յամի տն 1747 մինչ ա-
ռաքեցայ 'ի տես Մոսկովայ ժողովրդեան, գտեալ զնո
սա իբրև առանց հովուի ցրուեալ ոչխարս, կարի աշ-
խատեցայ 'ի վր խեղճութե նոցին, և իսկոյն զպաղա-
տանաց արզահալն մատուցի բարեպաշտի Հռովմայ
իշխանին, Մոսկովայ ժառանգ. Պեկին, Յովսեփայ
Լիւպօմիրսքիյին ․ զի յիշելով 'ի դաշինս Հռովմայեց-
ւոց նախնեաց սէր միաբանութե ը՛ Լուսաւորչայ Սգփս
ուղղափառացն, խնամոեցէ նոյնում ազգին 'ի Մոսկ-
ովայ բնակելոյն, հիմնելով զեկեղեցին, հոգեւոեսուչ
իւրեանց քհնայութե ․ և զԱրիվրլէյական Բրավան
ը՛ շնորհելով ․ վն Միաբանութե, և քաղաքա-
վարութե նոցունց ․ 'ի պահպանութի և 'ի պայծառու-
թի Մոսկովայ քաղաքիս ․ որք և իսկ հաւանեալ բա-
զում պաղատանացս շնորհեաց զամ խնդրուածս իմ ․
եւ զբրավանն 'ի ձեռն իմ, և հրամայեաց իւր խազի-
նային դրամօքն շինել աստ զքարաշէն եկեղեցին համ-
դերձ ամ ներսի և դրսի պէտք հարկաւորօքն ։ Արդ
իբրև չորսամեայ իմ զբաղմամբ և յոյժ կարի աշխա-
տանօքս, զայս Հայոց եկեղեցին յաւիտենական հո-
գւոյ յիշատակն կատարեցի, և զԱրիվրլէյն բրավայէն
Լեհարան տուեալ 'ի Հայ լեզու թարգմանեցի, և պատ-
մեցի 'ի վայելումն Մոսկովայ ժողովրդեանս, որք և
այլ քաղաքաց Հայազգս 'ի լեհաստանի վարժէ ․ փոյթ
եղև հոգեւոեաւուչ պաշտօնի իմում վն բարեկարգի
քաղաքավարութեան ժողովրդեանս ․ բացատրել նը

զածահաճոյ և քրիստոսադիր աւանդութիւն, և զքրիստոնէական կենցաղավարութեան բարեկարգութիւն. որ և իսկ լիակատար 'ի նորին վերայ իշխեալ գերապայծառ առաջնորդիս տուեալ ինձ իշխանութե և զօրութե. և 'ի սովորական արևելեան և յարևմտեան Հայոց լուսաւորչադաւան ազգիս աւանդութէ զհետևեալս ընդ Ածայնով օրհնութեան, անխախտ վայելմամբ պահելիքս յւմնս, կացուցի զայստնիկ սահմանս ||.

Ա. ՍԱՀՄԱՆ

Ս̃ ժամանակութեան և տօնական կիրակէին :

299. *Սրովբէակ նք եկեղեցին մյ տօնին է՝ յարկն սրբութեց. Հրեշտակաց և նբց իջևանն. մարդկան Ածափառաբանութեց և աղօթից ընդունարան, մեղաւորաց որբացական. հոգւոց փրկութի, և մեռելոց հովուանս : Իսկ 'ի նմ քահանայն պատարագօղն և հաշտարարն է. գիշեր և ցորեկ պաշտօն ժամոք օրհնիւք և աղօթիւք բարեխօս է և միջնորդ է վս իւր ծուխին հոգւոյ փրկութե, և ասդենի խաղաղութե, և պահպանութե քաղաքիս և տանց, վաստակոց և ապրանաց : Արձակօղ 'ի մեղաց խոստովանահայրն է, և հիւանդաց սրբութի տալով հոգետեսուչ, և ննջեցելոց արքայութենայ հասցնօղն է :

Պարտ է ուրեմն ժամատէր ժողովուրդն զիւրեանց եկեղեցին չէն և պայծառ պահել անօթիւք, զգեստօք, զարդարանօք, մոմ, և ձէթով, խնկով, և բաժկացով. խաչն աւետարանով, և այլ ներսի և դրսի պիտոյիւքն լաւ հոգալ :

Զանկակի ձայնին, իբրև Գաբրիէլ հրեշտակի փողոյն մտնել ամ պատարագին և ժամավաճքին իբրև մյ երեսի ցանկալով գնալ. և զքահանաւ կելուրն չի խափանել. այլ ըստ Հայոց աւանդութե թամամ տեսցեն. 'ի քնադիր սահմանէն (Ղուկ. Ժ. 7 :) զի արժանի է մշակն վարձու իւրոյ. ոչ և Պօղոս առաքեալն (ա կորնթ. Թ. 12.) պահանջեաց, Ոչ գիտէք եթէ որք 'ի տաճարին գործեն, 'ի տաճարէ անտի ուտեն. և որք սեղանոյն պաշտօնեայք են, 'ի սեղանոյ անտի վայելեն : Նոյնպէս և տրն հրաման ետ, որոց զաւետարանն աւե-

տարանին, յաւետարանէ անտի կեալ։ Արդ և Ռաշ-քօվայ ժողովուրդն զիւրեանց քահանու վրդպտելի տր Ուրօպօշչին կելուրն պիտան այսպէս։

ա. Նւագ գանձապետն ման պաճէ զգանձանակն, որպ բրավային մեկնութե մէջ հասկրցուցի։

բ. Պաշխայ եկեղեցնայ գանձապետն, այն ժամն ընտանկէն որ վրպտելի տր Ուրօպօշչին խուցին մէջ կու պահէն, հէչ ուրիշ բանի վր չիպի խարճէ ընդ պատուհասի բարկութե տյ, սոլդ միայն 'ի փառս տյ և եկեղեցու վր։ (Նաաջնորդէն ամէն տարի կաղանդչէք ա մաճառ ոսկի, երբ խօճանայ գանձանակն. և քահանու վրպտելի տր Ուրօպօշչին ամէն տարի 'ի տաղաւարնան ժամուց դրամ երկուսքան խուրուշ։) Արդ հիմիկուցէն պիտան ամէն տաղաւարին կէս խրշ, չորս քվարդալնի պտրգնուն։

գ. Նաւ սովորական կելուրն քահանու այսպէս լինի. ժամուց դրամն կէս խրշ. Վրն ծննդեան և նր զատկութե տանօրհնելչէք 'ի Տօլվաթաւորաց ա խրշ. մէջձեռաց կէս խրշ. 'ի ընչձքերից ա բուլ. 'ի ջուրօրհնելոյ մանկաբերացն ա շոխկ։ Կնունքից, կէս խրշ. ողաբերից քաւսունվէլուն ա շոխկ. Հարսնախօսութե նշան օրհնելչէք կէս խրշ. յերից ժամու մէջ պսակին ծանուցմանց կէս խրշ։ Պսակդրամին 'ի տօլվաթաւորաց, կարողութե գօրայ. 'ի մէջձեռաց ա ոսկի. և 'ի ընչձքերից կէս ոսկի. պսակին ութօրէի երեսջուրօրհնենքէն հարս և փեսին ա դինփ։

Թաղմանչէք պիտան, ով և պսակդրամն և զմոմն, և զայլ խարճն արասցէ մեռելին տէրն։ մէկ գերեզման օրհնելչէք ա շոխկ. մէկ զանկակ քաշելուն ա շոխկ։ Վրնասուն պատարագնուն յիշատակնու գ ոսկի։ 'Ի տարելից եկղեքվիային ա խրշ. ամ մատաղին կէս խրշ։ Նշացին ածանեղին՝ ատաթին գօրայ։ Իսկ անհաղորդ մեռելոյն մարմին արժանի չէ թաղման, և բանադրած կամ նզոված մեռելոյն մարմինն հէչ չի թաղվիլ, մինչև յեպիսկոպոսից դայ արձակումն։

Բ · ՍԱՀՄԱՆՆ

Վասն Հարսնախօսութեան, Նշանտուքի, և Հարսանեաց։

300. Երբ որ նախապէս հարսնախօսութիւն լինի, խնամիքն հրաւիրեն զքահանայն, որ իմանայ թէ կու հաւանի այն հարսնախօսութեան իւրեանց դուստր և որդւոյն մէջ։ և քահանայն իմանալով որ չորսում պարտից դուրս են, և այլ ամէն պատճառաւն կի հաւանի, կու գրէ զքրօլօնկն զինչ որ ծնօղքն խոստանան իւրեանց դստերն ձէհէզ, և ինչ փեսայուն կու խոստանայ երեսջուրն իւր հարսնցուին. և հաւանելով խնամոց, կու հարցընէ քահանայն հարսին և փեսայուն, թէ կամաւորվեցան հարսնախօսութեան և իրուր ամուսնանալոյ։ Այսպատեաղ զնոսա, և հաստատուն գտեալ, լինի նշանտուք ապաթին գօրայ. տալով քահանայու պաշխիշ, և դնեն զժամանակն հարսանեաց։

Այս երկուսում օրն տանեն զնշաներն յեկեղեցին օրհնել պատարագի մէջ, տալով քահանայու ժամուց։ Եւ քահանայն ծանուցումն անելով ժողովրդեան վասն եղած նշանտուքին՝ կանոնաւ զմատանիքն կերթայ հարսին և փեսայուն տունն և դնէ իւրեանց ընահաւոր մատիցը։ Եւ հարսանիքն այսպէս հէռչակեն։

Երեք շաբթով առաջ իմաց տան քահանու. որ 'ի մէջ իրեք կիրակէից հանդիսաւորութեան ծանուցանէ վասն պսակին լինելոյ ժամանակի, 'ի մէջ այս անուն հարս և փեսին, և այլ։

Այս հարսանիքն միայն իրեք օրն հէռչակիլ. Նախ բերեն քահանու մօտ խալաձ, ի̃ հաւ, և խիջօու, և պաշխիշ մահրամայ, և պասկգրամն։ Ապա երբ կորիձնուն պրասողավայ իցէ, կու հաշտեցնուն զպրասողավան. անդ նշանեն զոպընվոր կորիձվորս. և յառաջնում աւուր կորիձվորաց մարշալօքն զաւաղան 'ի ձեռին տանէ զկորիձվորաք հարսին տունը. անդ գանեց կանին մարշալօքին շարելնունպէս ընդ աղջիկանց. և յարկից սուքրայ չէն ձգեր. այլ ո̃ վատրայ քիվայ իրենց կուտան խմել. և զաւազանին մահրամայ. և ցըրեկվան լուսուն ելանեն անտի։

Երկուսում օրն խաչլուններն, և կորիձվորաք կու

թերեւս զհարսն և զփեսայն պատարագին, որ առաւել խոստովանելին. այսպէս ’ի մէջ պատարագին հաղորդելին, և քահանայն պսակէ զնոսա : Իսկ պսակին հետեւ ամ ժողովրդոցն հրաւիրելեացն զնոյն փեսային տունն ’ի հարկին. և պէրնայ տալուն հետ ղանեց կանեին, և ցորեկով ելանեն քահանայքն, և հրաւիրեալքն :

Երեքում օրն քահանայն, խաչկալքն, և տօրնովորայքն զնոյն հարկին, և քահանայն կորհնէ զառագաստն, և ապա ելանեն, և մնան միայն նորապսակեալքն ’ի յառագաստին.

Գ. ՍԱՀՄԱՆ

Սահ կարգ մեռելոց և թաղմանցն :

301. Երբ մարդ մը յոյժ հիւանդանայ՝ քահանայն կոչէ զերկու զանձնապետսն, և զՍրբէնտին Մփարն. և դնել տայ խորհրդեան առջև զհիւանդին ընդունելի ա-ւանդ կամքն. այսպէս արքենակայով.

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ամէն. Ես անուանեալ ա. ա. հաւատով քրիստոնեայ. խոստովանօ-քովն ’ի մեղաց զղջացեալ. փրկական Սրբութեանն հաղորդեալ. և վերջին օծման խորհրդովն զօրացեալ յիմում հիւանդութեան վտանգի. շնորհօքն այ Ճամբորդեմ զիս ելանել յանցաւոր այս աշխարհէս, և երթալ ’ի կեանս առ Աստուածն իմ և ըստ գործոց հատուցողն իմ : Որդ զի ’ի հոգւոյս ելքին. զՃամբոռս չի կրորէ բարով միայ տալն, ’ի յիմ վէ ինձ տուած անցաւոր վայելչածս, և այժմ մնացական տունս, կինս, տղաքս, և բարիքս : Նաւքն իմ բարեաց պար-գեւօղին այ, առաջին հոգեւորական խոստովանահօրս, և առաջինկայ վկայիցս, գրել կուտամ իմ լման խելքովս, և ողջ բերանէս զներկայ կտակն յետի կամաց իմոց օ-րինաւոր և անխափանելի Դիէտղամէնդն :

Նախ՝ զհոգիս յանձնեմ ’ի ձեռն մարդասէր և ողոր-մած Աստուծոյս, Փրկողիս, և Հաստուցանողիս այ ի-մոյ. և զմարմինս իբրև զհողն՝ կուտամ հողին Սրբա-քօվայ եկեղեցւոյն թաղմանը. և թաղմանցեաց մարմնոյս նշանեմ անունս ա. ա. և այլ : Կինս սպարտական լինի տալ այսչափ. և զիմ խարձն թաղմանս վճարէ իմ

մնացած բարիքս. և քառասուն պատարագնուն հոգւոյ համար այսչափ. և մնացեալն. և 'ի տարելիցին, և այլ Ամանան յշտկ, այսպէս. և Փունասուշ յաւիտենական պատարագնեան՝ այսչափ: Նուաճօրդին այսչափ. Տալիք ունիմ այսպէս. Առնելիք ունիմ այսքան. գրաւիքս միջնարել պարտական է կինս իմ ռ. ռ բարիէն: (Դրհեցին կնոջս Թամամ հանմի. նմանապէս և յինձանէ խոստացեալ նմա երեսջուրն. և այսպէս գրել ապատակ ոքեռլացած). և խոստացք բարիքս, և ապրանքս. տունն և տանանեղս վայելեսցէ կինս իբրև տիկին, և մայրն տղոցս, զորս շահելով և բարեկարելով, հոգւոյ բարի յշտկ լիցին և մնան ոյ և իմ օրհնենքէն ածվախ և բարեկիք: Եթէ վասն զի տղայքս բարեօք մեծանան, և յաւմքէ զրկանք չունեմնան, կամ զի զմնացած իւրեանց բարիքս չի փուճացնուն, և խելաւորվին, պարտին հնազանդիլ, և խօսքն բէանել Քալին մայրոն ռ. ռ. զի գնա տնտես և օգնօքուն նոցա, այս կտակովս Թուղում. և պարտաւորցանեմ ոյ համար: Այլ չերեւնողն, կամ քանտողն զայս իմ դեսդամէնդն ձուլեալ տացէ ինձ յահեղ դատաստանին ոյ: Նաև վասն աւաւել վալէօր և զօրութիւն ունելոյ այս ինծանէ կամաւոր կտակած դեսդամէնդին. իմ մօհրովս կամ մատովս, կամ նշանով ոք խաչին փձայթեցի, ամրացուցի և յատուկ ձեռամբս ստորագրեցայ ռ. ռ. և զաւաշիկայ վկայքս ստորագրիլ արի.

'Ի Աստրխանայ ածապահ քաղաքում. Թվին ռ. ամսոյ ռ. աւուրն:

Դ. ՍԱՀՄԱՆ

Վասն Փոխանորդութեան :

302. Փունտուշն մարդու հոգէբաժին յիշատակն է, զորն որ կուտայ 'ի ձեռն իւրեան վրմտուլի ոբր Նրօպօշչին; և զամնծապետացն գրելով և տալով որպէս և կամի, վասն յաւիտենական պատարագնուն այս եկեղեցու մէջ կատարելեաց՝ վասն իւր հոգւուն, կամ վասն իւր ծնողաց հոգւուն, կամ վասն այլ ննջեցելեաց հոգուն :

Այսպէս յանձնեկն պատարագնուն նայել տալ կու-

տան . ով կամի որ ամէն տարոց տարի մէկ պատարագմի կատարուի՝ պիտոյ նաղտ վեց սաղ թուրքի խուրուշ : Երկու պատարագնուն, պիտոյ երեք մաճառ ոսկի . և չորս քվարդալնի պատարագնու պիտոյ վեց մաճառ ոսկի : ԺԲ ամսագլօխ պատարագնու ԺԲ մաճառ ոսկի . Ծ ամէն շաբթայ պատարագնուն ՀԵ մաճառ ոսկի :

Մեք չունքի որ այսպէս յաւիտենական յիշատակն 'ի Մոշքօվրում վասն յամէնուստ թշնամեաց և պատահմանց կողմանէ ահօւն՝ պահել և շահել յՃՆա միշտ 'ի վտանգի գօլով անհնարին է զայսպիսի հիմնել ֆունտուշնուն սուման պի խրկեն 'ի մայրաքաղաքն Մոսկովայ, Գերապայծառ Նոդեշխ Մուաշնորդին ձեռն . որ տայ Լուսաւորչայ հիմ գանձանակին Նոռովիզորնուն ձեռն . և անկից պիտի առնուն ձեռնագիր ատեքսուրացիան, թէ ինչպէս սուման հասաւ իրենց ձեռն . և ինչպէս պարտական մնացին զայն շահեցնել . և յՃՆա պահելով ամէն տարոց տարի ֆունտուշին կօրայ հախն խրկելու Մոշքօվայ ՏԷր Նոռօպօշչին, և զայնպիսի ատեքսուրացիան պիպահեն Մոշքօվայ եկեղեցու գանձանակի մէջ, նախ Մաքթանուն մէջ, Սուրենտին, և յայսմ գրքի մէջ ինտուգօվաթ անելով, մի յՃՆին յիշատակին գիտենալոյ հետևողացն քհնյից և ժողովրդեան :

Ե . ՍԱՀՄԱՆ

Սահման շահու փողոյն զգանձանականին տալոյն :

303. Ով կամենայ զգանձանակին դրամն շահեցնելով աւելցնել, պարտ է տալ գանձապետաց ձեռն թամասուկ և վկայ, և ընհշին դնել ոսկեղէն կամ արծաթեղէն, կամ մարգրիտ և քլէնօթից, և ստօրաձեռնագիրն այնպէս լցի, թէ մինչև Ա տարի, որ ոչ կարնայ հանելու զընհշինն . որն որ երկու տակ գնոյին աժենայ արած ստըկին կօրայ . նայ վօլնի իլայ գանձապետնուն զայն ընհշինն ուրէնտին դիմաց գին կտրել, և ծախել, և թամասուկին գօրայ զգանձանակին սուման և զշահն առնելով գանձանակի մէջ դնել . այլ զաւելի խուսուրն պիտան ընհշինին տիրոջը . իսկ թէ գանձանակի մէջ պակասութիւն իմանայ, գանձապետացն հիսապ տալով ամէն նոր տարում առաջի Ս . Տէր Նոռօպօշչին

իւրեանց քսակէն պարտին լման վճարել զնոյն պակասութիւն և զարարն. այլ զչորն կամ զլաթն հէչ ընչին չպիտի դնեն 'ի սահմանաց զօրութենէն.

Զ. ՍԱՀՄԱՆ

Ս. Պրոտէստանտ, և Ք. Սանսկրիտեան Յէխմօդրեան:

304. Ամ բաշաքարներ պիտի ունենան իւրեանց մէջ Յէխմն և Պրաւօդավայ անընով իւրեանց պահապան մէկ սուրբին Ա.Յ, Աստուածամօր, կամ Լուսաւորչուն կամ այլ ոքց:

Պրաւօդավան քիւրքչոց և Թերզընաւն, և որոնք սամխով կը բանին, որքոյն Գայեթանին պահպանութեան անընով լինի:

Պրաւօդավան սուրուկճոց, կօշկարաց, մազմանողաց, և խասապչոց, և այլոց ընդ պահպանութեամբ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:

Պրաւօդավան ամենայն կօրիճազպերուն, ընդ պահպանութեամբ Աստուածածնին միշտ կուսի Մարիամայ:

Այս ամն պրաւօդավաններն պիտի ունենան պաշխայ իրենց գանձանակայ սընտուկներն, և մէջը պիտի պահեն զիրենց Նորավայրին քօրայ արդիւքուլներն, ընկերադրներն, աքթաններն, կելիւրի և խարճի Տափթարներն, նաղտ ստակն, և զժողոված ճուրումներուն, կամ ընհիրններն երբ կուտան շահու ստակն: Նաև այն սընտուկէն չպիտի խարճեն ուրիշ տեղ, սալդ եկեղեցու վրա, Աւագնորդին, քահանաւն, և աղքըտնուն, իւրեանց պաշխայ արդիւքուլնուն քօրայ. ինչպէս այլ քաղաքներուն մէջ Հայազգն ունի յառաջնորդից իշխանութեան սահմանած. անոր համար:

Ամէն պրաւօդավայ ամէն տարոց տարի եկեղեցիայով իւրեանց միջէն կընտրեն գլուխ մը Սդարեսդայ Յէխմիօդըներ, և քիսարն, որ գրէ զնոյն պէտք եղեալն: Ընտրուկն լինի մեծ Յէխմիօդըրին մօտ, կամ քահանու խուցն. մէկ գոցին քալինքն պիլայ պիզտի Յէխմիօդըրին ձեռն. և միւս քալինքն աւագ աղքօրը ձեռն. և այլ:

Աղա կօրիճվորաք իւրեանց եկեղեցիայով պի ընտրեն իրենց երկու խելօք տանուտէր Փունտաթօռ, և ամէն

տարի պի ընտրեն իրենց միջէն չորս գլխաւոր վաթահս. ա. սդարըստայ. բ. գանձապետ. գ. մարշալօքն. դ. բի-տարն։ Այլ պի կառավարվին զիւրեանց պրասդավայ արդիւքուլնուն գօրայ Առաջնորդին. և այլ։

Ով որ ուզենայ պրասդավայի մէջ գրվելու, պի խօս-տովանվի, պի հաղորդվի, և ուխտ պի խոստանայ եկե-ղեցւու մէջ քհնուն դիմաց. որ զանաւն պրասդավայ մտնողին կու դրէ իւրանց սրբի բեմին առջեւն, մոմ ձե-ռին բռնելով, և չոգման. և վախմնէկօ պիտայ սընտկին ա դինք։ Ամէն տարոց տարի պրասդավին մարդն պի-տայ րօշիգնի ա րուպ։

Որ եղբայրն արդիւքուլնուն բռնքթայ չի բերնէ, կի ձուրուսին զնա, և կի դատեն պիթիւն պրասդավայով նստած սընտկի մօտ սեսիային ժամանակ։ Պրասդավա-ներն ամենով ամէն տարի կու վիճարեն իրենց սընտկից քհնու չորս քվարդալնի պատարագնուն մէկ ոսկի մա-ճառի։

Ամ պրասդավայի աղքատքն իւրեանց ձեռի կերօնոշն պիտի գտվի ամ թափօրնուն մէջ. և չի կեցօղն ձու-րում պիտայ սընտկի ա լիտրայ մոմ. և կերակէից կմ մեծաւուր սրբոյ պատարագի չի լօօղն պիտայ ձուրում ա լիտրայ մոմ. մինչև իրեք հետ. ապա ժամին դռա-նը երկաթում կու փակեն։

Է. ՍԱՀՄԱՆ

Առ հաստաքան ամենեցունց։

305. Այլ եւս ով որ ոք Օտակութե չորս շաբթէ-նը մէջ չի խոստովանվի կամ որբութի չառնու Մաշ-քօվայ քահանու մօտ՝ բանադրանք նորա կի համնի, և ձուրում պիտայ քահանու դատաստանի մօտ, և եր-կաթի մէջ ժամին դրանը ապաշխարանք քաշէ։

Ոք Օտակին ով որ իր տանէն Մասքայ չի բերէ ժամու մէջ օրհնելու, պիտայ ա օխայ մոմ, և յերկա-թի մէջ պի փակվի ժամին դրանը։..

Մեծ օրերուն, Հարմնիքնուն, Խաղմանուն, Տաղա-վարնուն, Մատղընուն, և յայլ նշխեցելոց յիշելոյն, ժողովուրդն խալաճ, և կերակուր, և ըմպելիք իւր-եանց տներուն կու խրկեն քհնու և աղքատացն։

Գրեցի Տէր Օգոստինոս Ս գպիր։

ՊԱԼԴԱ

306. Ի գեղեցիկ քաղաք վաճառականութեն մերձ 'ի Պուկ գետ (380). որ գոլով սահմանագլուխ Լեհաստանու և Ռուսաստանու՝ յարմար է յոյժ առեւտրականութեանց: Յառաջագոյն կային աստ իբր 30 տունք Հայոց, որք և շինեցին քարաշէն եկեղեցի վայելուչ, և ընդարձակարան ժողովրդապետանին, որ մինչև ցայժմ նստի անդ և հովուէ զՀՀ ժողովուրդն, զի չիք անդ հայազգի, բայց եթէ 'ի մօտաւոր գիւղօրէս: Այս եկեղեցի ունի կալուած յեկամուտ ժողովրդապետանն, որ է մի 'ի նախապատուիւ կանոնիկոսաց աթոռոյն Մօհիլովի:

ԳՐԻԳՈՐԻՊՕԼԻՍ

307. Ի նոր քաղաք ոչինչ կարի հեռի 'ի Պալթայէ և 'ի Օչաքօվայ, ուրանօր հաւաք յետ անցանելոյ ընդ զանազան գիւղաքաղաքս Լեհաց: 'Ի ծայր քաղաքին դոյ վտակ որ կոչի Ջօրնա. յորոյ անուն բոլոր երկիրն անուանի Ջօրնա: Սակայն 'ի շինութեան անդ յանուն վերակացու իշխանին կոչեցաւ այս քաղաք Գրիգորիոպօլիս. որ հիմնեցաւ յամի Տն 1792. յուլ. 25. հրամանաւ Կատարինէ Կայսերուհւոյն Ռուսաց: Դիրք քաղաքիս է երկայնանիստ՝ առ եզր Տնեստէր գետոյ, որ անցանէ ընդ աջակողմն. շինուածք տանցն և կրպակաց անշուք է գլխովին, և վաճառականութիւն նուազ յոյժ:
Եկեղեցիք Հայոց են երեք. առաջին և մայր եկեղեցի է տաճար սրբոյն Կատարինեայ փայտաշէն ընդարձակ և անշուք, կառուցեալ 'ի վերայ հրապարակին, որոյ վասն գումար ինչ դրամոց տուաւ յարքունուստ առ 'ի քարաշէն կառուցանել 'ի նմին տեղւոջ: Երկրորդն է յանուն Լուսաւորչին. իսկ երրորդն է յանուն սրբոյ Խաչին, զոր յաւուրս մեր կանգնեցին քարաշէն, բայց անձև, առ եզր առաջնորդարանին, ուր է գերեզմանատուն Հայոց անշուք: Տեսանք 'ի սմա մարմարինեայ տապանս բերեալ յԻսմայիլէ ընդ իւրեանս. որք չեն այնչափ հնագիր. գր. * Այս է տապան հան-
» գուցեալն Սաֆարի որդի Աստուածատուրին, որ հան-
» գեաւ Թվին ՌՃՀ ին. յուլիսի ԺԱ (1721):

Տեսաք յայսմիկ եկեղեցւոյ հին գրչագիր Յայսմա-ւուրս գրեալ 'ի վերայ մագաղաթի, Աւետարան մա-գաղաթեայ ընտիր գրեալ վասն Հեթմոյ Թագաւո-րին. Ճաշոց, եւն: Այնպէս տեսաք յիշատակարան Իւ-վաքի՝ գրեալ Թաթարերէն 'ի 1630. 'ի տան ազնուա-կան իշխանին Պօկոսան Իվանիչի Սադոով. որ բազում մեծարանօք պատուասիրեաց զմեզ զաւուրս ինչ:

Այս քաղաք է Հայոց, եւ մեծ մասն բնակչաց են Հայք եկեալք յԻսմայիլէ, 'ի Ղրիմոյ, 'ի Պաւշանէ, եւ 'ի Մոս-քօվայ. եւ կէս մի յաւելեալ են անդ 'ի Ռուսաց եւ 'ի Մոլտովանից: Յառաջագոյն կային 900 տունք Հայոց, բայց բազումք անտանելի գոլով օդոյն՝ մեռան, եւ ոմանք ցրուեցան. այժմ հազիւ գտանին 350 տունք, որք ու-նին առանձին դատարան եւ 5 դատաւորս, որք որոշեն զամենայն դատս ազգին: Գլխաւոր դատաւորք Պա-նահիւար ձայնին, եւ ունին զերկու Ատենակս. որոց մին նստի 'ի Փօլից, եւ միւսն 'ի դատարանի: Այլ ոչ միայն դատեն զժողովուրդն, այլ եւ հաւաքեն զտուրս քաղա-քին, որոյ քաղաքապետ կայ 'ի կողմանէ տէրութեան: Տեսաք 'ի դատարանի անդ զՀայերէն դատաստանա-գիրս, որոյ կանոնք առեալ են ըստ մեծի մասին յա-տուածաշունչ գրոց. այլ այն գոլով անբաւական, այժմ վարեն զկանոնագիրս Ռուսաց:

308. 'Ի մէջ դատարանին տեսաք զոսկեզօծ նշան կայ-սերական 'ի վ՟ր փառաւոր արկեղ, եւ 'ի նմին կայսերա-կան հրովարտակ կամ պարգեւագիր տուեալ Հայոց 'ի Պօղոս կայսերէ յամի 1799 որով տայ զանազան ա-զատութիւնս եւ 30 հազար տէսէթին երկիր սակս երկ-րագործութեան, ուր մի տէսէթին է 240 քայլ քառա-կուսի. զորոյ ապա զկէսն առեալ ետուն գերմանա-ցւոց: Ահա պատճէն հրովարտակին. * Աստուծոյ ա-
„ րագահաս ողորմութեամբն մեք Պօղոս առաջին կայսր
„ եւ ինքնակալ ամենայն Ռուսաց . . . Հաւատարիմա-
„ գունից Հայոց քրիստոնէական օրինի հասարակութեան
„ քաղաքին Գրիգորիուպօլու ամ՟ կերպի կողմանց ա-
„ մենեցուն ընդհանրապէս եւ ամենեցուն յատուկ մերս
„ կայսերական ողորմածագոյն բան . . . ա. Չպահան-
„ ջել 'ի նոցանէ զդրամս վ՟ր շինութեան տանց եւ խանու-
„ թից, գործեաց եւ վաճառականութեան . . . բ. Ս՟ աղ-
„ քատաց շինութեց 8041 ռուբլի, վ՟ր շինութեան նաւ.

» վանիցն և ուսուց եկեղեցւոյն ... Գ. Տացի 30 հազար
» տէսէթին երկիր վն Հայոց ի Գրակլատին որ ՚ի 1794.
» Հոկ. 12. յաւելուլ յայնմ նաև 30 հազար և 400
» տէսէթին մինչև ցգետն Տաշլիկ ... Դ. Նշան քաղա-
» քին ի նոյն Գրակլաթին պատրաստել ... Ե. ՚Ի 4
» յունվարի և ՚ի 19 ապր. 1799 ամի հրովարտակօք
» մերովք վերահաստատեցեալ զիրաւունս ընդարձակօ-
» րէն վարել Հայոց ՚ի կայսերութե մերում զգաւա-
» նութիս իւրեանց քրիստոնէական օրինի. շինել վա-
» նորայս, եկեղեցիս, զանգակատունս ... կախեալ գո-
» լով մի միայն յիշխանութենէ Հայոց պատրիարգին
» Ղուկասու Էջմիածնի, և ՚ի փոխանորդէ նորին ...
» հաստատելով առ ՚ի դատել զհոգևոր և զմարմնաւոր
» անձինս ՚ի Աստրախան զհայոց հոգևոր Կանցիստորն
» լինել ՚ի նմա նախագահութի ունող Արքիմանդրիդ-
» մի, և երեք դատաւորք յաւագ քահանայից. երկու
» սեկրետարք (այն ատենադպիրք) մինն ՚ի մասին Հայոց՝
» վասն գիտողաց զլեզուն Հայոց. իսկ միւսն ՚ի մասին
» ռուսաց՝ յաղագս այնց Հայոց, որք առաւել տեղեակ
» են լեզուին ռուսաց, քան Հայոց. և չորս գրագիրք
» վն գրագրութե. ենթ կառավարութե սմին Կանցիս-
» տորի եղիցին ամ եկեղեցիք Հայոց և ծուխք նոցա ...
» Զ. Ունիցին սեպհական Հայոց իրաւարան ընտրելով
» զդատաւորս ՚ի ժողովրդենէ իւրեանց. զսեկրետարս,
» և զգրագիրս ... Է. Արձակեմք զնոսա յարքունա-
» կան հարկաց և ՚ի ծառայութեց, որպիսի կողմանց և
» իցէ ... Ը. Ազատ վաճառականութե արդիւնաւո-
» րեսցին ՚ի ծովու և ՚ի ցամաքի ... Թ. Հրամայեմք
» ամ նախարարաց պաշտպանել զայսոսիկ հասարա-
» կութիս ...

Յամի. 1799. և ՚ի 28. Հոկ.

ՊԱՒԷԼ.

Գրաֆ Ռաստափչինն։

ԲԷՍԱՐԱԲԻԱ

309. Այս մասն Մոլտավիոյ կայ ՚ի մէջ Տնես-դեր և Պրուտ գետոց, և է երկիր բարեբեր։ Աստ բնակեցան ՚ի հնումն Անեցիք կամ Հայք, և շինեցին իւրեանց բնակութիս և եկեղեցիս այլովքն հանդերձ.

այլ յետ անկանելոյ ընդ հզօր տէրութեամբ Ռուսաց՝ սկսաւ օրըստօրէ ծաղկիլ և զարգանալ շինութեամբք ։ Գլխաւոր քաղաքն է Քիշնով, ուր նստի Արքեպիսկոպոս Հայոց և հովուէ զփոքրիկ վիճակ իւր ։ Այս երկիր սկսեալ 'ի Խոթունէ ձգի ընդ երկայն մինչև ցԱք-քիրման, որ գոլով ծովահայեաց՝ թողում ստորագրել զկնի Քիլիոյ, և անտի անցանել յՕտէսսա ։

ՔԻՇՆՈՎ

310. Նորոգ ծաղկեալ անուանի քաղաք 6 ժամաւ հեռի 'ի Գրիգորիպօլսոյ և 'ի Տօմպասարէ, ուստի միայն լինի թոյլտուութիւն անցանել ընդ Տնեստեր գետ 'ի Բեսարաբիա . քանզի գեղեցկադիր քաղաքն Տօմպասար է անցք, ուր տեսանք ոչ միայն գեղեցիկ շինուածս, այլ և մեծամեծ լաստափայտս վասն անցանելոյ յայնկոյս գետոյն ; նաև գեղեցիկ պարտէզս՝ այլովքն հանդերձ ։

Արդ՝ Քիշնով զանազան շինուածովք օրըստօրէ վերստանէ 'ի կարգս մայրաքաղաքաց . ունի գեղեցիկ պարտէզս և երևելի շինութիւնս մեծամեծաց ։ Եկեղեցին Հայոց է 'ի քաղաքամիջի անդ կառուցեալ . իսկ եպիսկոպոսարանն է կողմնակի, որ յոյժ անուանի եղև առաջի մեծամեծաց՝ քաղաքավարական հիւրասիրութեամբ մեծանուն Գրիգորի Արքեպիսկոպոսին ։ Հայք են 150 տունք, որոց բազումք են վաճառականք ։ 'Ի քաղաքիս գտանին ազգք զանազանք և ունին եկեղեցիս և դպրոցս . առ որով անցանէ Բըկ գետակն ։

311. Պէնտէր անուանի բերդ՝ ոչինչ կարի հեռի 'ի Քիշնովէ, ուր կային բազում Հայք, և էր տուրևառութեան տեղի . սակայն բազում պատերազմունք և արեանհեղութիւնք 'ի ժամանակս Թաթարաց նուազեցուցին զքրիստոնեայս, մինչև եանց 'ի ձեռս Ռուսաց ։

312. Պուղան փոքրիկ քաղաք յառաջագոյն էր բարեշէն, և կային 'ի նմա 200 տունք Հայոց, և ունէին քարաշէն եկեղեցի գեղեցիկ, զոր քանդեցին այլազգիք . ուստի և ժողովուրդն փոխեցաւ 'ի Գրիգորիպօլիս ։ Այժմ գտանին անդ 10 տունք Հայոց, այլ չունին եկեղեցի ։

313. Հընչեշտ է վայելուչ գիւղ 6 ժամաւ հեռի 'ի

Հրիշնովէ, զոր գնեաց մեծանուն հայ Աբգարեան Մանուկ Պէկ Ռուսջուխցի, և շինեաց անդ եկեղեցի Հայոց և Մոլտովանից: Եթէ չէր ժամանեալ կանխահաս մահ իշխանին, առաւել ծաղկեցուցանէր զտեղին և զազգն (356):

Օրհէյ գիւղաքաղաք նոյնպէս 6 ժամու հեռի 'ի Հրիշնովէ, յորում կան 60 տունք Հայոց և ունին եկեղեցի յանուն Ածածնի. առ որով անցանէ գետակ և լճանայ. իսկ 'ի մերձակայ անտառին երևին աւերակք հին քաղաքի:

'Ի Թէլէնէշտ գիւղաքաղաքի գտանին 10 տունք Հայոց. իսկ 'ի Ֆօլէշտ գիւղ՝ 12. որք պարապին 'ի տուրևառս:

314. Պէլց քաղաք՝ է երևելի վաճառատեղի, ուր յաճախեն վաճառականք 'ի Լեհաստանէ և 'ի Մոլտովիոյ. կան 10 տունք Հայոց: Լէփկան աւան 'ի վեր անդր անկանի, յորում են 10 տունք Հայոց: Իսկ 'ի Պըրըլան գիւղաքաղաք են 15 տունք Հայոց, որք պարապին 'ի տուրևառս:

ԽՕԹՈՒՆ

315. Այս երևելի բերդաքաղաք Պեսարապիոյ՝ կառուցեալ 'ի բարձրաւանդակի, առ որով անցանէ Տնեստր գետ, և հանդիպակաց է Օուանչայի (209): Նախ յառաջագոյն նստէր փաշայ և իշխէր բոլոր նահանգին: Գեղեցիկ երևի 'ի Օուանչայէ. ուստի տեսաք զերևելի շինուածս, և զամրութիւն բերդին: Յառաջագոյն անուանի էր և բազմամարդ, և կային 17 հազար բնակիչք, և ոչ սակաւ Հայք. այլ այժմ հազիւ մնացեալ են 20 տունք, որք ունին եկեղեցի յանուն Սբ Ածածնին. 'ի խորանի անդ է պատկեր Տիրամօրն ըստ ձևոյ պատկերին Կամենիցի (215):

Այս բերդաքաղաք գոլով հանդիպակաց Լեհաստանու՝ է սահմանագլուխ, և սահմանակից Պուքօվինայի. ունի իբր 300 գիւղօրէս բարեբերս և գեղեցիկս:

ՀԱՅԿԱԶՈՒՆՔ ՊՈՒՔՕՎԻՆԱՅԻ

316. Այս երկիր է վերին մասն Մոլտավիոյ, յոր-

մէ բաժանեալ էանց յօսմանեանց առ գերմանացիս յամի 1776 . և բաժանի 'ի Կալիցիոյ 'ի ձեռն Չէրէմուշ գետոյ . իսկ 'ի Պեսարաբիոյ 'ի ձեռն Պրութ գետոյ ։ Անեցիք 'ի վաղ ժամանակաց եկեալ բնակեցան աստ , և այժմ բազումք 'ի նոցանէ անցին 'ի Ռուսաստան . Սակս իրի և մեզ պատշաճ դատեցաւ շրջիլ յայս աշխարհ և ստորագրել , և ապա անցանել 'ի Ռուսաստան ։

ՉԷՌՆՈՒՎԻՑ

317 . Ի մայրաքաղաք Պուքովինայի և սահմանակից Պեսարաբիոյ՝ իբր 9 ժամու հեռի 'ի Խօթինէ . 'ի ձախմէ անցանէ Պրութ գետ առատաջուր , որ անցեալ ընդ Մոլտավիա բաժանէ զայն 'ի Պեսարաբիոյ ։ Աստանօր Տնեսդէր այնչափ մերձենայ առ Պրութ , մինչև երկրին ձևանալ իբրև պարանոց մի ։ Անդ՝ անցեալ մեր ընդ մեծ կամուրջ Պրութի՝ հասաք 'ի Չէռնովից գեղեցիկ քաղաք , որ օրըստօրէ ծաղկի վաճառականութեամբ և մեծանայ վայելչադիր և բարձր շինուածովք ։ Տեսաք 'ի նմա երևելի պալատս , և վայելուչ եկեղեցիս այլովքն հանդերձ ։ Բազում են աստ Գերմանացիք և Լեհք , իսկ Հայք են 30 տունք , գրեթէ ամենեքին վաճառականք , 'ի վերջին ժամանակս գնացեալք անդր 'ի Լեհաստանէ ։ Թէպէտ չունին առանձին եկեղեցի , սակայն աջակողմեան խորան եկեղեցւոյն լատինացւոց է 'ի ձեռս Հայոց , զոր եւս շինել Սիմոնովիչ անուամբ հայ վաճառական յանուն Լուսաւորչին ։

Չեռնովից էր 'ի հնումն երևելի քաղաք Մոլտավիոյ , ուր կային բազում վաճառականք յազգէս մերմէ , և ունէին երկու եկեղեցիս . բայց յայրել քաղաքին անհետ եղեն տեղիք Հայոց և ինքեանք ցրուեցան . վն որոյ այժմ ամենայն ինչ նոր է 'ի քաղաքիս ։

ՍԻՐԱՏ

18 . Ի վայելուչ գիւղաքաղաք և ունի քարաշէն շինուածս , և եկեղեցի մի Լեհաց . անցանէ ընդ քաղաքամէջն Սերետ կամ Սերէդին գետն և երթայ անկանի 'ի Դունա մեծ գետ (370) ։ Ունի մեծ կամուրջ

փայտաշէն՝ ընդ որ անցեալ մտանք 'ի քաղաքն անդր։ Ոչ տեսաք ինչ արժանի յիշատակաց։ Երկերիւր ամօք յառաջ կային 'ի քաղաքիս բազում Հայք, որպէս գուշակի 'ի յիշատակարանէ Կամենիցի. այլ այժմ հազիւ մնացեալ են 10 տունք, զորս հովուէ լատին քահանայն, առ 'ի չգոյէ նոցա առանձին քահանայի և եկեղեցւոյ։

ՍՈՒՉՕՎԱ

319. Ի երեւելի հին քաղաք աթոռանստեղի Պրընծին կամ Պէկին Մոլտավիոյ, որ ինքնագլուխ տիրէր առաջ, տեսաք 'ի սմա հին բերդ 'ի վերայ բլրոյ շինեալ 50 ամօք յառաջ քան զՔ՛Ս, ըստ որում պատմեցին մեզ աւանդութեամբ։ Տեսաք նաև զհին պալատ Պէկին, առ որով անցանէ Սեչավ գետակ, որ բաժանէ զՄոլտավիա 'ի Սուչօվէ և երթայ թափի 'ի Սերաթ գետ։ Ի շրջիլ մեր յայլևայլ վայրս տեսաք զաշտարակս, հին գերեզմանս, և զկործանեալ պարիսպս։ Յառաջագոյն կային աստ 17 հազար բնակիչք, այլ այժմ նուազ են յոյժ. Թէպէտ անպակաս են ամենայն ազգք և տու-բեառութիւնք այլևայլ ազգաց։ Տունք քաղաքիս ըստ մեծի մասին են միայարկ, այլ փառանին աստ և անդ հոյակապ շինուածք և եկեղեցիք։ Երևելի է մեծու-թեամբ և գեղեցկութեամբ նորաշէն դպրոցն արքունի կառուցեալ 'ի վերայ բլրոյ. յորում ուսանին ձրի մանկունք յամենայն ազգաց. ուր մեծ ակնեւակ մի որոշեալ է 'ի տէրութենէ վասն մանկանց ազգիս Հայոց, որք յանցանելս մեր էին թուով 80, պարապեալք յուսումն հայ և գերմանացի լեզուաց։ Մերձ է սմա նորաշէն պայ-ծառ եկեղեցին Լեհաց. առ որով է վանատուն, ուր նստի ժողովրդապետ նոցա։

Մեծագործ է հին եկեղեցին Մոլտովանից շինեալ յամի տն 1500. յանուն սրբոյն Գէորգայ, որպէս ըն-թերցաք զյիշատակարանն 'ի վերայ դրան։ Առաջի խո-րանին տեսաք 'ի մէջ արծաթապատ տապանի զամբողջ մարմին սրբոյն Յովհաննու նահատակին Տրապիզոն-ցւոյ, որ վասն 'ի քն հաւատոց վկայեալ յաղթահարեաց զՀրեայս, մինչև նախանձեալ մատնեցին զարդարն այլազգեաց Ակքիրմանու, որոց կալեալ զնա՝ բազմա-

պատիկ տանջանօք չարչարեցին․ Հուսկ յետոյ կապեալ ընդ ագի ձիոյ յածեցուցին ընդ քարաժայռս, մինչև կատարեցաւ․ ուր երևեցան յայնժամ բազում նշանք չեղիք՝ ըստ որում պատմի․ և յաւանդել զհոգին՝ ձին այլ ոչ ևս շարժեցաւ 'ի տեղւոջէ անտի, մինչև եղև հրաման թաղել զնա անդ։ Լուեալ զայն դքսին Սուչօվայ՝ խնդրեաց զմարմինն 'ի փաշայէ Նգէրմանու, և բերեալ մեծահանդէս թափօրիւ եդին յայս եկեղեցի։ Նա իբրև առին Լեհք զՍուչօվ փոխադրեցին զա-տի զմարմին սրբոյն 'ի Ժուլքվա․ բայց զկնի 50 ամաց ժողովուրդ տեղւոյս խնդրեալ 'ի Յօվսէփ կայսերէ յետս դարձուցին 'ի տեղի իւր, ուր յաճախեն բազում ուխտաւորք։

320․ Յառաջագոյն էին 'ի Սուչօվ 700 տունք յազգէս Հայոց, յորս բազումք անցին 'ի Սաճաւստան․ Վսյ այժմ մնացեալ են 200 տունք Հայոց, որք և ունէին բազում եկեղեցիս և վանորայս, որպէս տեսաք զտեղիս եկեղեցեաց սրբոյ Երրորդութեան, և սրբոյն Նիկողայոսի․ այլ այժմ քանդեալ են, միայն մնացեալ են երկու եկեղեցիք, և երկու վանորայք։

Սուրբ խաչ է հին և աւագ եկեղեցի Հայոց, որ յառաջ փայտաշէն էր և յետոյ քարաշէն կառոյց Հանգոյ իշխանն․ 'ի վերայ նեղքին դրան փորագրեալ կայ այսպէս * Թվին ՋՀ || (1521) Նուագ խորանն նուիրեալ է Տիրամօրն․ իսկ 'ի գաւիթն է խորան սրբոյն Յովհաննու՝ զոր կառոյց Ափրինեց հայ իշխան, յարոյ 'ի տան օթագայեցաւ Յօվսէփ կայսր և շնորհեաց Պարոնութիւն ցեղի նորին։ Նաշի եկեղեցւոյն է ընդարձակ գերեզմանատուն և ժամատուն․ զանգակատունն է քարաշէն, յորում կայ յիշատակարան փորագրեալ 'ի մարմարիոնի այսպէս․ * Յիշատակ է
„ զանգակատունս պարօն Պինեաթային իրիցփոխնի …
„ ՌԿԸ || (1619)։ Տեսաք յայս եկեղեցի հին աւետարան արծաթապատ այսպիսի յիշատակարանաւ․ * Յոր
„ ժամ գրեցաւ սբ աւետարանս էր թիւ հայկազեան
„ տումարի ՌՂԸ (1649) Գրեցաւ յերկիրս Պուղտա-
„ նաց 'ի քաղաքս Սէջով ընդ հովանեաւ սբյն Սիմէօ-
„ նի․ հայրապետուե հայոց տն տր Փիլիպպոսի, և յա-
„ ռաջնորդուեն յասմ նահանգիս տր Մինաս վարդա-
„ պետին ||, եւն․ Յետոյ պատմէ թէ գերի եղև սա ա-

ւետարանս, և ազատեցաք 'ի ձեռաց այլազգեաց ։

321. Սուրբ Սիմոն է քարաշէն և գեղեցիկ եկեղե-
ցի կառուցեալ 'ի ծայր Թաղին Հայոց. ունի ընդար-
ձակ գերեզմանատուն. առաջի դրանն տեսաք հին գե-
րեզման փորագրեալ 'ի վն. * Այս է տապան հանգըս-
„ տեան Խոջային և Սուլթանին. որ է դուստր և որդի
„ տր Անտոնի. հանգեաւ Թվ. ՌԿԷ. օգոստոսի օրն
„ Ե շաբթի ‖ (1618)։

322. Սուրբ Օքսէնտ է վանք գեղեցկադիր 'ի հարա-
ւային ծայր քաղաքին, առ որով անցանէ գետակն.
ունի ընդարձակ բակ պարսպապատ, յորոյ 'ի միջա-
վայրի կառուցեալ կայ եկեղեցին քարաշէն հանդերձ
կաթուղիկէիւ. առ որով է ջրհոր մեծ ։ 'Ի մէջ եկե-
ղեցւոյն դոյ անուն շինողին փորագրեալ 'ի վերայ գե-
րեզմանին այսպէս. * Տէր հանգչի Յակոբշայ շինօղ
„ տաճարիս Թվին Հայոց Ռ ‖ (1551)։ Սուրբ պատմեցին
մեզ, թէ ցեղ սորա անցեալ է 'ի Մէնէտիկ ։ Կայ
արտաքոյ և այլ գերեզման՝ յորոյ վերայ ընթերցաք՝
* Այս է տապան Ավագամայ որդւոյն. Թվ. ՌՁ ‖ (1631)։
Զանգակատունն է յարևմտեան կողմն քարաշէն կա-
մարակապ, ուր ելեալ ընդ քարաշէն սանդուխս՝ տե-
սաք զմատուռն Լուսաւորչի հանդերձ խորանաւ, առ
որով է արևմտեան դուռն վանից ։ Իսկ 'ի վերայ ա-
րևելեան դրան է առաջնորդարանն քարաշէն, ուր
կայ գեղեցիկ մատուռն կամարաշէն՝ հանդերձ խորա-
նաւ. պատկերն է ննջման Ածածնին ։ 'Ի շրջակայս
պարտիզին էին սենեակք կամ խրճիթք աբեղայից,
ա̄ի որում դուշակի յաւերակացն ։

323. Սուրբ Խաչկատար կամ Հաճկատար է վանք Հայ-
ոց փոքր ինչ հեռի 'ի քաղաքէն յարևելեան կողմն
շինեալ 'ի վերայ բլրոյ, որ յառաջագոյն անուանէր
Խնդրակատար սուրբ Ածածին ։ Ունի շուրջանակի սենեակս
աբեղայից և ուխտաւորաց, և արտաքոյ ունի դաշտս.
եկեղեցին է փոքրիկ քարաշէն հանդերձ կաթուղիկէիւ,
ունի դաւիթ և երկու դրունս ։ Տեսաք 'ի վերայ հա-
րաւային դրանն Թուական փորագրեալ յամի Տն 1512.
Թուի թէ իցէ Թուական նորոգութեան, զի շինուածն
երևի վաղեմի ։ Աւագ խորան տաճարիս նուիրեալ է
Ածածնին, և միւս խորանն Ս. Լուսաւորչին, ուր յա-
ճախեն ուխտաւոր Հայք 'ի Մոլտավիոյ, մանաւանդ

'ի Մողդաւիային և 'ի սոյն ազգին Ռոմայի։ Իսկ յիշա-տակարանի եկեղեցւոյ Ս. Ածածնին Կամենիցի գնի. * Ած ողորմի ոգւոյն որոյ Վ. Ռոստուրին հօղուն. ամէն ու յիշատակ ա̄ խաչիմ ։։

ՀԱՅԿԱԶՈՒՆՔ ՍԵՐՈՒՆԴՔ ԱՆԻՈՅ

ԲՆԱԿԵԱԼՔ Ի ՄԱՃԱՌՍՏԱՆ

324. Հայկազունք անեցիք փախուցեալք յերեսաց Թաթարաց՝ զառաջինն անկան 'ի Պոնտոս, և անտի մտեալ 'ի նաւ անցին յԵւրոպիա և մինչև 'ի Մոլդավիա. անտի ևս յետ ժամանակաց փոխադրեցան 'ի Մաճառաստան. 'Ի սկզբան անդ բնակէին խառն ընդ Մաճառաց ցրուեալք 'ի քաղաքս և 'ի գիւղօրէս. ապա առեալ զպատուաւորութիւն և զյարմարութիւն երկրին՝ բարգաւաճք միաբանեցան ազգասիրութեան ոգւով և շինեցին երկու քաղաքս, մին անուանեցաւ Հայոցքաղաք կամ Կէռլա, և միւսն Եղիսաբեթուպօլիս կամ Պաղղալվէ և մի մասն ևս նոցա բնակեցաւ 'ի քաղաքս Մաճառաց 'ի Ճուրճով և 'ի Սիպվիզ. և այլք մնացին 'ի տեղիս խուրեանց յայլ և այլ քաղաքս և 'ի գիւղօրէս՝ ըստ յարմարութեան տուրևառութեան նոցա, որպէս ունիմք պատմել և 'ի կարգիս։

Թիւ Հայոց 'ի Մաճառաստան հասանէ ըստ ոմանց 15 հազար, յորոց բազումք են վաճառականք. ոմանք՝ ազնուականք կամ Սպահի, որք կոչին Նէմէշ. ունին մեծամեծ կալուածս հանդերձ զանազան արտօնութեամբք։ Հայք շինեցին 'ի Մաճառաստան երևելի շինուածս և սքանչելի եկեղեցիս և վանատունս. որոց ժողովրդապետք են կանոնիկոսք։ Որք և կայսերական հրամանատարք ունին ոչ միայն զմասնաւոր ատեանս և ատենակալս, այլև զաւառական ժողովս և ատեանս. զի զամենայն վէճս ազգին և քաղաքաց իւրեանց ինքեանք վճռեն. թէպէտ յառաջնէ նոցին մարթ է բողոքել 'ի գերագոյն ատեան։

ԵՂԻՍԱԲԷԹՈՒՊՕԼԻՍ

325. Այս քաղաք 'ի հնումն անուանէր Էպէշֆօլվ,

յանուն հին գեղջն. որ այժմ մերձ գոլով 'ի քաղաքն անդր՝ համարի արուարձան նորա որ և շինեալ է 'ի մէջ լայն ձորոյ շրջապատելոյ 'ի դալարագեղ բլրոց մշակելոց, ուր գան և այգիք ։ Ընդ երկայնութիւն դաշտին անցանէ Գոռնովա գետ, որ ունի կամուրջ մեծ փայտակերտ բազմակամար և յարկածածուկ. յարևելեան կողմն գետոյն է երկիր Հայոց՝ կէս ժամու հեռի 'ի քաղաքէն ։ Պաշպալով անուանի այժմ այս Թագաւորական ազատ քաղաք՝ փոքրիկ և բարեշէն. փողոցք նորա են ուղղահայեաց և տունք աղիւսակերտ, և ըստ մեծի մասին միայարկք. իւրաքանչիւր տուն ունի պարտէզ արտաքոյ քաղաքին ։

Հայք են բնակիչք և տէարք քաղաքիս, որք են 2300. իսկ տունք նոցա են 450. որա ըստ մեծի մասին են վաճառականք բայց 'ի սակաւ արուեստաւորաց. են և ազնուականք, որք կայսերական պարգևագրով յորդւոց յորդիս ունին զազատութիւնս ։ Եկեղեցիք Հայոց են չորս՝ առաջինն է հին տաճար սուրբ Երրորդութեան անուանեալ, 'ի վերայ դրանն փորագրեալ կայ, թէ շինեալ եղև գործակցութեամբ ամենայն հասարակութեան ժողովրդոց ։ Այս փոքրիկ տաճար անբաւական գոլով նոցա՝ 'ի յետին ժամանակս հիմնեցին 'ի վերայ մեծի հրապարակին նոր եկեղեցի ընդարձակ յանուն սրբուհւոյն Եղիսաբեթի դշխոյին Մաճառաց. Այս եկեղեցի է քարաշէն և միակամար, ունի 'ի ճակատն երկու բարձր զանգակատունս, և յերկոսին կողմանս աւագ խորանին վեց խորանս գեղեցիկս և երկու կրկնայարկ աւանդատունս. ամենակողմեան վերնատունն է ազնուուհեաց, ուստի տեսանեն զպատարագ. իսկ ձախակողմեանն է դրատուն հասարակաց. Ճակատ եկեղեցւոյն է զարդարեալ գեղեցիկ սեամբք և արձանօք. ունի գմբէթ պղնձայարկ. որ և է ժողովրդապետական եկեղեցի քաղաքին ։

326. Երրորդ եկեղեցին է հանդէպ վերնոյն յարևմտեան կողմն հրապարակին՝ կառուցեալ 'ի 1795. 'ի Հարց Մխիթարեան միաբանութեան մերոյ՝ հանգանաւ, պայծառ և գեղեցիկ, ունի երիս խորանս ոսկեզօծս զարդարեալս արձանօք և արուեստաւոր պատկերօք և գեղեցիկ սեամբք ։ Յերկոսին կողմանս աւագ բեմին են երկու աւանդատունք, և 'ի վերայ նոցա

կրկին վերնատունք շրջապատեալք ոսկեզօծ վանդակօք վասն ազնուուհեաց։ Այս եկեղեցի է միակամար, և որմունքն են գեղազարդեալք զանազան դրուագօք. որ և նուիրեալ է գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, որպէս և վանքն կամ վանատունն՝ որ կից է ընդ եկեղեցւոյն. և ունի 'ի բակի անդ դպրատուն, ուր կրթին մանկունք Հայոց ընդ վերակացութեամբ Հարց միաբանութեան մերոյ։

327. Զորրորդ եկեղեցին է սրբոյն Յովհաննու մկրտչի՝ կառուցեալ յերևելի իշխանէ անտի 'ի ցեղէ Թուրքեանց. ունի երիս խորանս, և գեղեցիկ զարդս այլովքն հանդերձ։ Նաց ատտի գոյ և հին մատուռն կառուցեալ 'ի վերայ բարձրաւանդակի, ուր երթան յուխտ ժողովուրդք քաղաքին յաւագ շաբաթու. ընդ որ հետևակ ելանեն արք և կանայք իբրև ընդ լեառն գողգոթայ ամենայն բարեպաշտութեամբ։ Այս մատուռն յառաջ քանդեալ կայր, ապա նորոգապէս կառուցաւ առ կողմամբ լերին 'ի յիշատակ հոգւոյ հայ վաճառականին Վրդնեասայ, խորանն և մեծ արձան խաչելութեան ներկայացուցանեն զգողգոթայ, ուր երթան յուխտ հնդիցս 'ի տարւոջն փառաւոր Թափօրիւ հանդերձ քահանայիւք։

Դարձեալ կայ այլ հին եկեղեցի վասն ուղղափառ Մաճառաց. նոյնպէս այլ հին փայտաշէն եկեղեցի սակս ուղղափառ Սլաւհաց, որք և ունին առանձին ժողովրդապետս յազգէ իւրեանց։

Երևելի են և դպրոցք քաղաքիս, ուր ձրի ուսանին մանկունք հայերէն, լատիներէն, գերմաներէն և մաճառերէն։ Կան և այլ երևելի շինուածք, գործարան ստիտակ մոմոյ, ևն։ Քան զամենայն երևելի է հին բերդն մեծ՝ շինեալ յԱպաֆի բռնակալէ, որոյ անունն հին լատին գրով փորագրեալ կայ 'ի վերայ դրանն. 'ի միջավայրի անդ 'ի տեղիս տեղիս երևին խոշորագործ նկարք։ 'Ի մի կողմն բերդին շինեցին պայծառ դատարան, և 'ի միւս կողմն խորհին շինել Թէատրոն. 'ի ստորև է դիւան և բանտ հասարակաց՝ հանդերձ բնակարանօք դպրապետին և բանտապետին։

328. Կառավարութիւն քաղաքիս է ծերակուտական, և Հայք իշխեն և կառավարեն զհասարակութիւն իւրեանց և զայլ ազգս, որք իբր ծառայք համարին իւ-

քեանց ։ Ունին հռովմէական կայսերական՝ հանդերձ բաղում ազատութեամբք. ուր ոչ մտանեն զօրք, և ոչ ընդունին զօտարազգիս ։ Թէ քաղաքն և թէ ամենայն տեղիք քաղաքին են սեպհականեալ Հայոց. ամենայն տանուտեարք 'ի միում աւուր տան հնձել զարտորայս իւրեանց, և 'ի միում աւուր սկսանին կթել զայգիս իւրեանց. այսպէս ամենայն գործողութիւնք 'ի քաղաքիս են կարգաւորեալ ։ Ի կիւրակէս պատարագ մատչի նախ յաւագ եկեղեցին, ապա 'ի վանս հարց Մխիթարեանց, և ապա 'ի Յովհաննէս Մկրտիչ, որ ունի մասնաւոր աւագերէց ։ Զայնոււոր պատարագքն ևս մատչին ըստ վերոյասացեալ կարգին ։ Երկին անգամ 'ի տարւոջ ժողովուրդն Թափոր կազմեալ երթայ հանդիսիւ յուխտ սրբոյն Անտոնի 'ի Սէնտեաշ քաղաք՝ երեք ժամու հեռի անտի. ևս և 'ի Շէնկիշվար քաղաք՝ յուխտ սրբոյն Փրանչիսկոսի ։ Իսկ այնք քաղաքացիք յաւուր Վերափոխման գան յուխտ 'ի Պաշպալով հանդերձ Թափորիւ, որոց ընդ առաջ ելանեն ամենայն եկեղեցականք և հանդիսապէս հիւրընկալեալ զնոսա՝ 'ի հետևեալ աւուր յետ բազում հանդիսութեանց դարձեալ յուղարկեն զնոսա Թափորիւ ։

Պաշպալով ունի բաւական կալուածս և դաշտորայս, յորոց հաւաքեալ զեկամուտս 'ի գանձարան հասարակաց՝ ծախեն 'ի պէտս եկեղեցեաց, քահանայից, դատաւորաց, վարժապետաց և բժշկաց, ևս և մանկաբարձաց, գիշերապահ ծառայից և հովուաց. զի սոքա ամենեքեան պարտապան են ծառայել հասարակաց առանց վարձու ։ Յաւուրս Մարիայ Թէրեզայի գնեցին չորս մեծամեծ գիւղս և հինգ անտառս, յորոց շատ եկամուտ գայ 'ի գանձարանն ։

329. Հայք 'ի քաղաքիս ունին երկու մեծ ատեանս, առաջինն կոչի Մաճիստրատ՝ որ բաղկանայ յ12 դատաւորաց, յորոց ընտրեն զոմն յամենայն երիս ամս և դնեն գլուխ ժողովոյն և ազգին Պէրով անուամբ, այսինքն հրամանատար, որ ունի իշխանութիւն դատելոյ և վճռելոյ յիւրում բնակարանի զմասնաւոր վէճս ժողովրդեան ։ Հրամանատարն երկիցս յեօթնեկի բանան զդատարանն կամ զՄաճիստրատն, ուր վճարէ զամենայն դատս՝ գործակցութեամբ 12 դատաւորաց ։ Նյս ա-

տեսան ունի իշխանութիւն 'ի վերայ դատաստանի արեան, բայց նախ պարտի ծանուցանել զվճիռ իւր դերագոյն ատենին Գրանսիլվանիոյ. ուր Պիրոմն ստորագրէ, և կնքէ կնքով քաղաքին զամենայն որոշմունս Սակխստրագին: Մին 'ի դատաւորաց անտի է մեծ դպրապետ և ունի իւր փոխանորդ զմին յիշխանաց երկրորդ ատենին. պաշտօն երկոցունց ևս է մշտնջենաւոր: Այս դպրապետ պարտական է գրել համառօտիւ զքննութիւն և զորոշմունս ժողովոյն, և վերծանել դարձեալ յատենի անդ, զոր վերստին քննեալ՝ անցուցանեն 'ի մատեան Բրօդօքօլի. և ապա հրատարակեն զվճիռն, որոյ գործադրութիւն է 'ի ձեռս Տիրէքթօրի Բօլիցիային, որ և է մին յիշխանաց Սակխստրագին՝ որ յամենայն երիս ամս ընտրի: Ընդ իշխանութեամբ սորա է բանտապետն, և պարտական է հսկել 'ի վ̅ր խաղաղութեան քաղաքին՝ պատժելով զատահակս և զգողս:

Պիրոմն Թեպէա յատենի անդ դահագլուխ նստի, բայց չունի աւելի իշխանութիւն քան զայլ դատաւորս. որ և զամենայն խնդիրս առաջարկէ ժողովոյն, և պարաւանդեալ է ջան դնել սակս պահպանութ̅ե օրինաց՝ պատժելով զյանցաւորս, և խրատելով զնոսա՝ եդեալ 'ի բանտի իւրում, որ միշտ կայ առաջի դրան իւրոյ:

330. Երկրորդ ատեանն անուանի Մոդա՝ որ բաղկանայ 'ի 40 դատաւորաց, գլխաւորաց ժողովրդեանն, որոց անկ է հոգալ և հաստատուն պահել զշինուածս հասարակաց և զկալուածս՝ նորոգելով զկամուրջս այլովքն հանդերձ: Սոքա ևս ունին գլխապետ Մոդաղ կամ Օրատոր յորջորջեալ, որ յերիս ամս փոխի. ունի իշխանութիւն երևելոյ յառաջին ատենի երբ և կամի, և յամենայն եօթնեկի հրամանաւ իւրով ատեան կազմէ. և պարտական է հսկել 'ի վերայ գործավարաց և պահապանաց շինուածոց քաղաքին, նաև պատուհասել զպիտասաքերս եկամտից: Ունի փոխանորդ ինքեան և այլ գործակիցս, որովք վճարէ զդատս. բայց առանց ստորագրութեան իւրոյ ոչինչ գործ և պարտք վճարին: Կան նաև այլ պաշտօնատարք և իշխանք, որպիսի են՝ Համարակալ, Գանձապետ, Գործակալ, Փաստաբան, Վերակացու աղքատաց, Խնամակալ որբոց, Հարկապահանջ, Եկեղեցպան, ևն.

Այսցիկ կրկին ատենից 52 դատաւորք պարտին լինել յազգէ Հայոց, որոց գլխաւորք են Պիրով, Սուղաշ և Տիրէքզօր Բօլիցիոյ, որք ոչ պարտին լինել ազգականք իրերաց։ Այլ եթէ դատախազքն լինիցին ազգական կամ Դատաւորին, և կամ Պիրովլին, հարկ է նոցա տեղի տալ յատենէ փնտի, և չմնիլ 'ի դատս նոցա։ Ամենայն դատախազք պարտին գրով առաջի առնել զառաջարկութիւնս իւրեանց։ Յորժամ դատն խառն լինի՝ այս երկու ատեանք 'ի մի վայր հաւաքին։ Նոյնպէս լինի երբ փոփոխութիւն պաշտօնատարաց հանդերձեալ իցէ առնել։

331. Իսկ ընտրութիւն դատաւորաց այսպէս լինի. միով եօթնեկաւ յառաջ ծանուցանի ժողովրդեան օրն ընտրութեան. և 'ի նմին աւուր ամենայն քահանայք, մանկունք դպրոցաց և բոլոր ժողովուրդք երթան 'ի մայր եկեղեցին, և առաջի Տր. խորհրդոյն 'ի ծունր իջեալ՝ ասեն զՀ'կ սուրբ հոգի երգն, և ապա ժողովրդապետն մեծահանդէս պատարագէ վասն երջանկութեան քաղաքին և պայծառութեան ազգին։ Իսկ 'ի հետևեալ աւուր ատենակալքն հաւաքին 'ի դատարանի. և նախ վասն ընտրութեան Պիրովլին բաժանեն 52 դատաւորաց կտորակս թղթոց, որք են լայն 3 մատնաչափ՝ յերիս բաժանեալ, մի ծայրն միայն անբաժան, ուրանոր յետ խօսելոյ վասն օգտի հասարակութեան՝ իւրաքանչիւրոք գրէ 'ի վերայ թղթոյ իւրոյ զերիս անուանս, զորս յարմար ճանաչէ Պիրովութեան յ12 դատաւորաց (զի 'ի սոցանէ և եթ մարթ է ընտրել Պիրով). ապա իւրաքանչիւրն ձգէ զգրուած իւր յանօթ վիճակին, զոր երկու երդուեալ իշխանք առեալ երթան յառանձին տեղի և գրեն ցանկ մի անուանց 12 դատաւորաց Մակիտարադին. և քննեալ զկտորակս թղթոյն, որչափ անձինք զմի անուն գրեալ են՝ նշանակեն 'ի ցանկին առընթեր այնր անուան, և ապա տարեալ զայն 'ի ներքս առաջի ատենին ընթեռնուն, և յորոց վերայ բազմաթիւ անուանք գրեալ կան, զայնս առաքեն առ կայսրն Գերմանիոյ ընտրել յերից անտի զորն որոշեսցէ նա. բայց այս պատիւ գրեթէ միշտ բազմաթիւ անուան վիճակի։ Ինքեանք իսկ զայն ընտրեն, և 'ի նմին ժամու առաքեն զծառայն հասարակաց, որ առաջի դրան նորա աւետիս տալով արձակէ հրացանս 'ի նշան ուրախութեան։

Զկնի ընտրութեան Պիրովին լինի ընտրութիւն Սուգաշին նովին օրինակաւ, որ պարտի լինել 'ի հասարակ դատաւորաց անտի : Յետոյ լինի ընտրութիւն Տիրէքգօրի Բօլիցիոյ եւն : Այլ միւրաքանչիւր ընտրութեան ծառայք քաղաքին երթան առաջի դրանց նոցա արձակեն զհրացանս : Ապա զկնի Ճաշուն իշխանք Մակիստրացին երթան շնորհաւորեն զընտրեալ իշխանս . յետոյ երթան հասարակ իշխանք և ապա քահանայք : Այս ընտրութիւն լինի երիւք ամսովք յառաջ . այլ մինչև է եկեալ հրովարտակ կայսեր սակս հաստատութեան Պիրովին՝ ոչ ոք կարէ մտել 'ի պաշտօն իւր : Իսկ ընդ ժամանել հրովարտակին ամենեքեան երթան յեկեղեցին . և առաջի Սրբութեն երգեն Զքեզ Ած գոհաբանեմք, և յետ հանդիսաւոր պատարագին՝ բազում ուրախութեամբ հրատարակի ընտրութիւնն : Իսկ յետոյ դատաւորք և քահանայք կարգ ըստ կարգի վերստին երթան 'ի տունս նոցա և շնորհաւորեն, և այսպէս կատարի հանդէսն :

ԿԵՌԼԱ

332 . Այս թագաւորական ազատ քաղաք կոչի ըստ Մաճ. Սօմուշուվար . և ըստ լտ. Արմենօբօլիս . յն. Հայաքաղաք . զոր շինեցին Հայք յամի տն 1703 , 'ի գեղազուարճ դաշտի մերձ 'ի Սօմուշ գետակ . և 'ի 1711 ընկալան 'ի կայսերէ զանազան ազատութիս : Բնակիչք են իբր 6000 . ամենեքեան Հայք . և տունք հազար, որք ըստ մեծի մասին աղիւսակերտ են և միայարկ: Մեծատունքն են ազատազնեայք որդւոց յորդիս, և այլք են վաճառականք . կարի սակաւ են աստ արուեստաւորք, և նուազ օտարազգիք, որք ոչ կարեն գրել քաղաքացի : Ունին երիս եկեղեցիս . առաջինն և ժողովրդապետական եկեղեցին նորաշէն նուիրեալ և սրբոյ Երրորդութե, մեծ և գեղեցիկ, ունի 5 խորանս քարաշէնս, և առ նմին փոքրիկ մատուռն, որ և է մի 'ի փառաւոր և 'ի մեծագործ եկեղեցեաց Դրանսիլվանիոյ : Երկրորդ եկեղեցին է յանուն Սողոմոնի, ոչ այնչափ մեծ . նոյնպէս և երրորդն, որ է 'ի ձեռս Ֆրանչիսկեան միաբան կրօնաւորաց :

Փողոցք քաղաքիս են լայն և 'ի տեղիս տեղիս քա-

րայատակ, ուր գոյ մեծ գործարան չուխայի, և մեծ բանտ բոլոր Դրանսիլվանիոյ. անդ բանտարկեն զամենայն յանցաւորս այնր նահանգի, զոմանս մինչև ցմահ: Կառավարութիւն քաղաքիս նման է կառավարութեան և օրինաց Պաշպալովի. ունին երկու ատեանս, 12 դատաւորս, և 40 իշխանս՝ որք Սենատս անուանին: Սոքա և ս ունին իրաւունս տուգանելոյ զհպատակս իւրեանց, բայց գործադրութիւն վճռոյն կախեալ է 'ի գերագոյն ատենէ Դրանսիլվանիոյ, որոյ աթոռ է 'ի Կլուժ քաղաք: Ունին նաև քանի մի գիւղօրէս ընդ տէրութեամբ իւրեանց յեկամուտ քաղաքին, որոց գիւղականք են իբր գերիք այսր հասարակութեան:

ՍԷՆՏ ՄԻԳԼՕՇ, կամ ՃՈՒՐՃՕՎ

333. Ի՜ ընդարձակ քաղաք բարեշէն և բազմամարդ՝ իբր 3 մղոն տարածութեամբ երկայնեալ մերձ 'ի գետակն, ուր գոն 140 տունք Հայոց. իսկ բուն բնակիչք են Մաճառ: Հայոց եկեղեցին է գեղեցիկ և պայծառ. 'ի վերայ կողմնական դրան փորագրեալ կայ յիշատակարանս.* Թվին 1733 շինեցաւ տաճարս
» այս դրամբք հասարակի ժողովրդեան Հայոց Ճ'ուրճա-
» վու 'ի ժամանակս Ռլէպան տէր Սիմոնի Թորոսեան,
» և տէր Յոհաննէսին. յեկեղեցպանութեան Թորոսի
» Ոգոնց, և պիրովութեն Ի՟Յ Պաղարի Օհանիսեան.
» և այլոց պատուելի արանց, որոց անուանք գրեալ
» են 'ի կոնդակի եկեղեցոյս. գիր և կարդա, և մեղ
» ողորմիս ասա. Ամէն ||: Գլխաւոր ժողովուրդք քաղաքիս համարին Հայք, յորս գոն ազնուականք, և բազում վաճառականք, որք և ունին սեպհական ատեան, բաղկացեալ յ12 դատաւորաց, յորոց ընտրեն զՄիբով գլխաւոր հրամանատար: Սոքա վճռեն զամենայն դատս ազգին, բաց յարեան պատուհասէ. զոր վճռէ ատեան Մաճառաց. և ոչ իսկ ունին բանտ հասարակաց:

ՍԻԲՎԻՋ

334. Ի՜ գիւղաքաղաք, յորում բաց 'ի Մաճառաց գոն 52 տունք Հայոց, և 220 անձինք. որոց գործ է

տուեալութի։ Այսր եւս ունին սեպհական տաճարն 12 դատաւորաց, բայց կախին յատենէն Ճուրճովի։ Ունին եկեղեցի և վանատուն աղքատ յոյժ. այլ բազում ջանիւք և բարեկարգութեամբ բազմաշխատ Հ. Ալէքսանդրի վարդապետին մերոյ Մխիթարեան ժողովրդապետի նոցա՝ ոչ միայն եկեղեցին շինեցաւ և պայծառացաւ, այլ և ժողովուրդն կրթութեամբ և ուսմամբ՝ քաղաքական և պանծալի եղև առաջի օտար ազգաց։ Գտաք ’ի Գրիգորիպօլիս յեկեղեցւոջ Լուսաւորչին այսպիսի յիշատակարան. * Թվին ՌՃԽԳ ’ի
» (1694) փետ. ԻՆ օրն. Տր. Սարգիսի շաբաթն ’ի եր-
» կիրս մաճառաց, որ կոչի գօղայքաղաքս Սիպվիղ
» տապատակեաց պիղծն թաթար և գերեաց լուսաւոր-
» չադաւան հայկազան ազգն ժողովրդով քահանայով
» ’ի Տր. պատարագ. մատչիլն տապատակեաց հարիւր
» քառասուն ութ հոգի. որ և Տր Ա̃Ծ փրկեսցէ զա̃մ
» հաւատացեալս»։

ՏԻՎԱ

335. Ի ընդարձակ գիւղաքաղաք բարեշէն, ունի բերդ ’ի գլուխ լերին և քարաշէն տունս գեղեցիկս. կան աստ քանի մի տունք Հայոց վաճառականաց, որք ունին փոքրիկ եկեղեցի շինեալ յաղայ Ստեփանէ Պօշնախեան պաշտպանովցւոյ, բայց չունին հայ քահանայ, այլ ’ի Ֆրանչիսկեան քահանայէ հովուին։ Ի սմին քաղաքի չտեսաք ինչ յիշատակաց արժանի՝ բաց ’ի քաղաքավար հիւրասիրութենէ բնակչացն։

ԱՑՆՈՒՏ

336. Ի գլխաւոր քաղաք առ Մօրուշ գետով. ունի բերդ հանդերձ ջրալից խրամով. գտանին ’ի քաղաքիս քանի մի տունք Հայոց, բայց չունին առանձին եկեղեցի։

ԱՊՌՈՒՏ

337. Ի գիւղաքաղաք բարեշէն, ունի ոսկեհանք և արծաթահանք, և քանի մի տունս Հայոց վաճառա-

կանաց։ Կան նոյնպէս Հայք ՚ի Պուրտա քաղաք, և ՚ի Մընէկէն աւան։

ԳԵԶՏԻ ՎԱՍԱՐՀԵԼ

338. Ի գիւղաքաղաք մեծ և բազմամարդ, ուր գտանին քանի մի տունք Հայոց։ Նոյնպէս գոն Հայք ՚ի Պանդա աւան, որ հաղորդի ընդ վերնոյն ՚ի ձեռն մեծի կամրջին։ Սոքա չունին առանձին եկեղեցի և հայ հովիւ, որպէս ունին Հայք մեծի քաղաքին Օտորհէյայ, ուրանօր կայր յառաջն և երևելի դպրոց Յիսուսեանց։

ՄՕՐՕՒՇ ՎԱՍԱՐՀԵԼ

339. Ի մեծ քաղաք բազմամարդ առ Մարոշ գետով. ունի մեծ դպրոց և վանս Ֆրանչիսկեան կրօնաւորաց։ Աստ ունէին Յիսուսեանք անուանի դպրոց։ Գտանին աստ 10 տունք Հայոց, և երևելի վաճառականք. բայց չունին յատուկ եկեղեցի։

ՆԱՅՍՈՅ

340. Ի նորաշէն ազատ քաղաք Թագաւորական հաստատեալ ՚ի հիւսիսակողմն մեծի գետոյն Դունայի հանդէպ անառիկ բերդին Բետրօվարատինու. ուր հասեալ ընդ նոյն գետ լաստափայտիւ՝ յետ շրջելոյ յայլ և այլ քաղաքս Մաճառաստանու և Սլաւոնիոյ։ Այս քաղաք բարեշէն ունի բազում տունս և քաղաքական շինութիւնս և եկեղեցիս։ Յառաջագոյն բազում էին Հայք ՚ի քաղաքիս և երևելի վաճառականք, շատք ՚ի Պելղրատէ փոխադրեալք այսր. այլ այժմ հազ 30 տունք Հայոց մնացեալ, որք ունին փառաւոր եկեղեցի քարաշէն յանուն սրբոյ Լուսաւորչին, և առ նմին քարաշէն բնակարան ժողովրդապետին հանդերձ պարտիզաւ, որ ժամանէ մինչև ցգետն Դունա։ Այս վանատուն և եկեղեցի պայծառացաւ առ հոգաբարձութեամբ բազմարդիւն Տ. Կարապետ վարդապետին մերոյ։ Եկեղեցին ունի և կալուածս, որոյ հոգաբարձու լինի ոմն ՚ի Մխիթարեան միաբանութենէս կայսերական հրամանաւ. ուրանօր կատարեն

զնծայրն պաշտամունս ուղղափառ. Այնչափ յունական ծիսիւ, ոչ ունելով առանձին եկեղեցի.

Յետ աւուրց ինչ անցաք ընդ ահաւոր գետն Դունա 'ի հանդիպակաց քաղաքն կամ հզօր բերդն Պետրօ-վարատին 'ի յարգութիւն եկաւորութեն Պրինչիպէի եղ-բօր կայսեր ընդ եպիսկոպոսին։ Այս քաղաք միա-նայ ընդ վերնոյն 'ի ձեռն մեծի կամրջին ձեւացելոյ 'ի միաշար նաւակաց, ուր տեսաք մեծամեծ նաւս եկեալս 'ի Մէրտինէ եւ 'ի Սեաւ ծովէ։ Զարմանալի է դիրք բերդիս, որ յամենայն կողմանց ամրացեալ է, եւ բարձ-րացեալ յոյժ իբր եռայարկ։ Ստորին ներքնաբերդն այնպիսի բազմարուեստ հնարիւք ձեւացեալ է, մինչեւ մտանել ընդ գետով. զառաջեաւ բերդին կառուցեալ կան անմատչելի մարտկոցք, գաղտագողի ճանապարհք եւ որոգայթք։ Արտաքուստ տեսաք գետնափոր եւ լայն խրամս, եւ 'ի միւս կողմն անմատչելի ապառաժս, այ-լովքն հանդերձ։ Զայս բերդ առին Օսմանեանք յամի տն 1526. որ չեւ էր այսպէս ամրացեալ. այլ 'ի 1687. անդրէն տիրեցին Մաճառք. ապա յետ անցա-նելոյ առ Գերմանացիս՝ զօրացուցին յոյժ. եւ մեծա-հռչակ պանծալի եղեւ 'ի 1716. յորժամ վանեցան ան-տի Թշնամիք եւ բերդականքն հռչակաւոր յաղթանակ կանգնեցին։

ՕՌԱՏԻԱ կամ ՆՕՎ ՎԱՐՕՏ

341. Է բերդաքաղաք մեծ եւ բազմամարդ. ունի մեծաշէն եկեղեցիս եւ այլ շինուածս. կան աստ 10 տունք Հայոց, յորս բազումք են մեծատունք եւ ազ-նուականք, բայց չունին եկեղեցի եւ քահանայ. լատին քահանայք հովուեն զնոսա.

ԴԸՄԸՇՎԱՐ. Է Գն. ԴԵՄԷՆԱ

342. Է զօրաւոր բերդաքաղաք գեղեցիկ յոյժ ամ-րացեալ չորեքկարգեան Թանձր պարսպօք. եւ շուրջա-նակի զինեալ զանազան մարտկոցօք եւ յոլով Թնդանօ-Թօք։ Ամրակուռ դրունք եւ խորին խրամք՝ անմատ-

չելի տանելն զայս բերդ, որոյ շրջապատ համարի եր-կուց ժամուց ճանապարհ, առեալ ընդ նմին և զմարտ-կոցն : Այս պայծառ և բազմամարդ քաղաք բոլորո-վին քարաշէն է և քարայատակ. տեսաք 'ի նմ երևե-լի և գեղեցկանիստ շինուածս, մեծամեծ պալատս և վայելուչ եկեղեցիս :

Մեծագործ և հոյակապ է մայր եկեղեցին. ընդար-ձակ և վայելչագեղ են հրապարակք և գինարանք քա-ղաքիս, և չորս մեծաշէն վանորայք հանդերձ կրօնա-ւորօք : Կան նայև քանի մի տունք Հայոց, այլ չու-նին յատուկ եկեղեցի և քահանայ : Արդ ելեալ 'ի քաղաքէ աստի՝ անցաք ընդ բազում աւանս և քա-ղաքս Մաճառաստանու 'ի բազում տեղիս տեսաք տունս Հայոց և հայ իշխանաւորս, և կառավարիչս 'ի վերայ օտար ազգաց :

ՍԻՊԻՆ. ըստ Գերմ. ՀԷՐՄԱՆՇԴԱՏԴ

343. Ազատ քաղաք Թագաւորական, և գլուխ նահանգին Սաքսոնացւոց, որ յառաջագոյն էր մայրա-քաղաք համօրէն Տրանսիլվանիոյ, ուր էր և ատեան արքունի՝ որ յետոյ փոխադրեցաւ 'ի Կլուժ քաղաք. աստ է աթոռ մեծի սպարապետին զինուորական կառա-վարութեան, և արքունի գանձարան : Այս գեղեցիկ քաղաք՝ մեծ է և բազմամարդ, լի մեծամեծ և բարձր քարաշէն շինուածովք, ամրափակեալ կրկնակի պարս-պօք յընդարձակ դաշտավայրի առ Սիպին գետով : Այլազգափառ բնակիչք քաղաքիս ունին 4. եկեղեցիս. երևելի է ժողովրդապետական եկեղեցին մեծ և գե-ղեցիկ. ունի մարմարեայ խորանս սիւնազարդս. առ որով տեսաք զմեծաշէն բնակարանս ժողովրդապետին, ուր երբեմն էր վանատուն Յիսուսեանց : Կան անդ երկու դպրոցք, և մենաստան մի կուսանաց, որք դաստիա-րակեն զաղջկունս : Երևելի է մեծ հրապարակն, և 'ի միջի շատրուան գեղեցկաշէն. նշանաւոր են և ապա-րանք Պրուղնդալ իշխանին, յորում են վսեմ զարդք, և հաւաքումն նորանշան իրաց և ճարտարագործ նկա-րուց : Գտանին աստ 'ի Հայոց վաճառականք ոմանք կրպակաւորք :

344. Է ազատ Թագաւորական քաղաք առ Մէլլերպախ գետով շինեալ յամի տն 1150. և է աթոռ վիճակին: Բնակիչք են Սաքսոնիացիք, և ոմանք ի Հայոց, որք պարապեն ի տուրևառս, այլ չունին առանձին եկեղեցի:

ՊՐԱՇՈՎ. ըստ Գեր. ԳՐՕՆՇԴԱՏԴ

345. Է երևելի ազատ քաղաք Թագաւորական, բազմամարդ, մեծ և պարսպապատ, շինեալ յամի տն 1203 ի մէջ լերանց՝ առ սահմանօք Վալաքիոյ կամ Ուլահու: Ունի գեղեցիկ շինուածս, և հրապարակս վայելուչս. փողոցք նորա լայն և քարայատակ, յորս հոսեն ջուրք և մաքրեն զամենայն աղտեղութիւնս: Հոյակապ և մեծագործ է եկեղեցին Սաքսոնիացւոց վիմատաշ և բրգազարդ. երկայն 117 քայլ. և լայն 33. ունի 6 դրունս և զանգակատուն բարձր 136 ոտն. մինչև ի տեղի զանգակաց. իսկ բարձրութիւն զանգակին է 3. կանգուն: Գեղեցկաշէն է եկեղեցին ուղղափառաց, ուր պատարագէաք. զի սակաւաթիւ Հայք տեղւոյս չունին եկեղեցի: Այս քաղաք ունի երիս մեծամեծ արուարձանս, յորս բնակին և Ուլահք, որք ունին հին եկեղեցի բրգազարդ Շքէյ կոչեցեալ: Արտաքոյ քաղաքին է բերդն, և վանք Ֆրանչիսկեան կրօնաւորաց:

Արդ՝ յետ կալոյ մեր յայս քաղաք սահմանագլուխ Մաջառստանու՝ ուղղեցաք զընթացս մեր նախ ի Վալաքիա, այսինքն յՈւլահ, և ապա ի Պուլղարիա:

ՀԱՅՔ ՄԵՐՁԱՒՈՐՔ ՅԵՒՐՈՊԻՈՅ

ԲՆԱԿԵԱԼՔ Ի ՎԱԼԱՔԻԱՑ ԵՒ Ի ՄՈԼՏԱՎԻԱՑ:

346. Այս բարեբեր աշխարհ սահմանակից է Մաջառստանու և Դրանսիլվանիոյ, ուր ի հնումն բազում էին Հայք փախուցեալք յԱնւոյ, որք զառաջինն աստ դիմեցին, և ի մեծամեծ քաղաքս կեցեալ չափ նոքա բնակէին: Բայց յետոյ բազումք անցին ի Պու-

քօվլէնայէ 'ի Մաճառստան և 'ի Լեհաստան, որով այժմ կարի նուազ մնացին Հայք յայսմիկ կողմանս, որպէս ձեռնիմք տոմարագրել 'ի կարգին ։

ՊՈՒՔՐԷՇ

347. Ի երևելի մայրաքաղաք Վալաքիոյ կամ Ուլահու, սահմանակից տէրութեան Գերմանացւոց և հռչակաւոր վաճառատեղի ուր նստի Կուսակալ իշխան կամ Պէկ 'ի կողմանէ տէրութեան Օսմանեանց, և ունի բազմարձակ իշխանութիւն, որոյ պալատ է մեծաշէն՝ Բռոբէն անուանեալ ։ Բնակիչք քաղաքիս հաշուին 50 հազար, և բոլոր քաղաքն բաժանի 'ի 67 թաղս. ամենայն տունք ունին գաւիթս, և ըստ մեծի մասին են փայտաշէնք. զի անդ սակաւ է քարն. իսկ փողոցք են գերանապատ սակս տղմոյ ։ Ընդ սովաւ անցանէ գետակն Տումպօվիցա, յորմէ ելանէ ուխի խառն ընդ աւազոյ, և է նկամուտ կարգեալ Տօմպայի կամ Պըքոսուհւոյն ։ Սակայն լուաք 'ի բերանոյ ռամկաց զայս առակ տառանաւոր. * Տըմպօվիցա ապա տուլչէ, Չի նէ պէ՛ նու սէ մայ տուչէ ։ * Տումպօվիցա անոյշ ջուր է, այլ չմեկնի, որ զայն ըմպէ ։ Բայց ոչ ունին աղբիւր, զի բոլոր քաղաքն ըմպէ 'ի գետակէ անտի, որ է բարեջուր ։

Բազում են եկեղեցիք և փարթամ վանորայք Ուլահաց՝ ըստ մեծի մասին քարաշէնք. ըստ ոմանց են 400, 'ի սմին սահմանի ։ Գեղեցիկ է եկեղեցի և վանատուն Լատինացւոց, ուր օթագայեցաք. որ և կառուցաւ յաւուրս մեր առաջնորդութեամբ բաղմարդիւն Հ. Ամբրոսիոսի Պապֆիկեան տրապիզոնցւոյ ։ Յառաջագոյն բազում էին աստ Հայք, և շինեցին եկեղեցիս. յորոց երկուք կան մինչև ցայժմ. մին փոքր է, և միւսն է գեղեցիկ քարաշէն և փառաւոր կառուցեալ յանուն Հրեշտակապետի. ունի երկու գմբէթս և բազում զարդս և անօթս ։ Իսկ տունք Հայոց են 120. յորոց ոմանք վաճառականք են, և այլք արուեստաւորք ։

ՓՕՔՇԱՆ

348. Ի գիւղաքաղաք 24 ժամու հեռի 'ի Պուքրէշէ, առ որով անցանէ Միլքով գետ ։ Բնակիչք ընդ

ամենայն են 7000 տունք. իսկ Հայք յառաջագոյն բազում էին անդ, այլ այժմ են 60 տունք և ունին երկու եկեղեցիս. մին Ս. Գէորգ, և միւսն Ս. Ծածին Հնաշէն, զոր յետոյ նորոգեցին. ուր կայ և հին պատկեր, յոր զնան յուխտ ամենեքեան: Կէս այսր քաղաքի է 'ի սահմանի Յաշին. և կէսն 'ի սահմանի Պուքրեշին. ուստի Ս. Գէորգայ եկեղեցին է 'ի մասին Պուքրեշի, և միւսն 'ի մասին Յաշի:

ԽԱՐ

349. Ի մայրաքաղաք Պուղտանու կամ Մոլտավիոյ առ Պահլու գետակաւ, ուր կային յառաջ զանազան ազգք և երևելի պալատք. այլ այժմ ըստ մեծի մասին անշքացեալ կայ այս քաղաք: Նոյց յեկեղեցեաց չիք այլ ինչ երևելի շինուած. յետ փոխադրելոյ աստ աթոռոյ Պեկին 'ի Սուչօվէ՝ անպականեն երթևեկութիւնք վաճառականաց: Պալատ և պալատականք կամ կառավարութիւն Կուտակալին նման զոլով Պէկին Պուքրեշի, ըստ այնմ բացարձակ տիրէ Պեկն բոլոր սահմանաց, և հանգոյն նմին արքայակերպ ձոխանայ: Նոյժմեան կուսակալք են 'ի Մոլտովան Պօյարաց, և ոչ 'ի Փէնէրցի Յունաց. որպէս և Պեկն Մուլահու նստի 'ի Պօյարաց երկրին:

Հայկազունք շինեցին աստ քանի մի եկեղեցիս. և ունէին առանձին եպիսկոպոս. այլ այժմ հազիւ գտանին աստ 150 տունք Հայոց, և ունին զերկու եկեղեցիս քարաշէնս անուամբ Լուսաւորչի և Աստուածածնին. եկեղեցի Լուսաւորչին շինեալ կամ նորոգեալ է 190 ամօք յառաջ. իսկ եկեղեցին Աստուածածնի դնի 400 ամօք յառաջ. որ գմբէթայարկ է և պայծառ. տեսանք և յիշատակարան, որ ասէ * Կա-
„ տարեցաւ գիրքս տումարագրութեան 'ի թվին ՌԾԶ 'ի
„ Յաշ քաղաքն. որոյ արհիեպիսկոպոսն է Տէր Յովհան-
„ նէս Աքիմլեցի »: Պատմի անդանօր, թէ յամի տն 1551. Ստեփան պէկ Պուղտանու յարոյց մեծ հալածանս 'ի վերայ Հայոց, և չարչարեաց զնոսա յուժ դառնալ 'ի հռոմութիւն, բայց ոչ կարաց 'ի գլուխ տանել, ուստի քանդումն եղէն անտի: Պատմեցին մեզ թէ 'ի ժամանակի նորոգութեան եկեղեցւոյն 'ի կամարի անդ

գտին մէմ մի փորագրեալ 400 ամօք յառաջ ։ Տեսաք ՚ի Սնեադին քաղաքին վաղեմի Ճաշոց , որոյ յիշատակարան այսպէս պատմէ ․ * Աւարտեցաւ քնահիմն և ա-
„ ռաքելախառն մարգարէաշէն հոգիաբուղխ այս տառ-
„ ձեռամբ ոգնամեղ և անարժեան գրչի տէր Սարգիս
„ քհնյի , ՚ի խնդրոյ ածասէր և բարեպաշտօն երկու եղ-
„ բարց խճյ Սահիլին և խճյ Պաւղոսին ․ ՚ի Թուաբե-
„ րութեն հայկազան սեռիս տոմարի ռճէ ին ․ ՚ի հայ-
„ րապետութեն հայոց տէր Փիլիպպոսին և առաջնոր-
„ դութեն տէր Ներսէս արհեպսկին պուղտանաց եր-
„ կրի ։ Եւ Թագաւորութեն Սահլ բարեպաշտ վօյվօ-
„ տային ․ մայրաքաղաքն Եաշ ընդ հովանեաւ տր
„ Ածածնին ․ և տր Լուսաւորչին ․ և քհնյութեն տէր Մով-
„ սեսին , և տէր Մխիթրին ․ տէր Ղուկասին , և գրչիս , և
„ երեցփոխանութեն խճյ Ակսենտին ։

ԴԵԳՈՒՋ.

350 ․ Այս քաղաք Պուղտանու առ Պալատ գետա-կաւ՝ 16 ժամու հեռի ՚ի Եաշէ ․ ուր գոն 1500 տունք Մոլտովանք ունին 4 եկեղեցիս ։ Յառաջագոյն հայք բազում էին աստ , այժմ հազիւ գտանին 200, անձինք և ունին եկեղեցի ։ Սուչօվցիք աստ էին յառաջ , ուր գոյ կամուրջ շինեալ ՚ի Վրփրի իշխանէն (320) ։ Մերձ է աստ Պալատ աւան , ուր գոն քանի մի տունք հայոց , և ամենեքին պարապին ՚ի տուրևառս ։

ՌՕՄԱՆ

351 ․ Այս քաղաք կառուցեալ առ եզր Մոլտավա գետակին , որ Թափի ՚ի Սերէտ գետ հեռի ՚ի Եաշէ 16 ժամու ։ Բնակիչք են 1500 տունք , որոց կէս յառաջ հայք էին ․ այժմ գոն 110 տունք հայոց ։ Եկեղեցին հայոց է յանուն Ածածնին շինեալ 200 ամօք յառաջ , որոյ յիշատակարան գնէ , թէ կատարեցաւ հոգաբարձութբ տէր Խաչատուրին ․ և արդեամբք Յակոբշային ․ ուրանօր գոյ հին աւետարան 600 ամաց ։

ՓՕԴՈՒՇԱՆ

352. Է անուանի քաղաք վաճառականաց իբր 18 ժամու հեռի 'ի Եաշէ՝ հանդէպ Մուշօվայի, ուր գոն 400 տունք Հայոց և ունին երկու եկեղեցիս յանուն Ս. Ածածնին, և սրբոյ Երրորդութե. առաջինն է 480 ամաց, իսկ երկրորդն նորաշէն։ Աստանօր երևին աւերակք հին շինուածոց. գոն նաև անօթք և գրչագիր մատեանք բերեալք յԱնւոյ։ Ի յիշատակարանի եկեղեցւոյն Կամենիցի դնի. * «Ին լուսաւորէ պատ-
» ճանցի հայր Յովսեփին զհոգին, ունի յշենք մէկ շուր-
» ջառմ պատնախաչ և այլ պատարագի զգեստ»։

ՀՕԳՆԱՑ

353. Է քաղաք փոքրիկ՝ 20 ժամու հեռի 'ի Եաշէ, առ որով անցանէ գետակ Բարէջուր. և ունի մեծ աղէհանք։ Գոն աստ 60 տունք Հայոց, և ունին եկեղեցի փայտաշէն յանուն Ս. Ածածնին։ Հերցա քաղաք չէ հեռի աստի, որ սահմանակից է գերմանացւոց. ուր գոն 10 տունք Հայոց եկեալք 'ի Ֆօգշանէ։

ԳԱԼԱԾ կամ ՔԱԼԱՍ

354. Է բարեբեր քաղաք և անուանի նաւահանգիստ Մոլտավիոյ շինեալ յեզերս Դունայի 'ի մէջ Սերատ և Բրութ գետոց, 36 ժամու հեռի 'ի Եաշէ։ Ուր բազում են երթևեկութիւնք նաւուց և վաճառականաց. յորմէ բարձեալ տանին յոլով ցորեան և զանազան տեսակ ուտելեաց։ Աստանօր գոն 30 տունք Հայոց, և ունին եկեղեցի յանուն Ս. Ածածնին։ Յարևելեան կողմն 'ի բերան Սերատ գետոյ գոն աւերակք հին քաղաքի, զոր բնակիչք Կերկինա անուանեն. աստի ելանեն հին դրամք, որք ցուցանեն, թէ 'ի ժամանակս Տրայիանոսի կայսեր շինեալ է։

ՊՈՒԼՂԱՐԻԱ

355. Հայք որ բնակեն յայսմ աշխարհի՝ ոչ երևին եկեալք ուղղակի յԱնւոյ, այլ 'ի Պարսկաստանէ. առ-

ՊՈՒՌՂԱԶ

361. Սա փոքրիկ քաղաք, այլ անուանի վասն վաճառականութեան. զի էր նաւահանգիստ Սլիմնեայի, ուր լինէր յառաջագոյն մեծ տօնավաճառ: 'Ի Պուռղազ գոն 20 տունք Հայոց, և ունին զեկեղեցի յանուն Աստուածածնին: Աստ է մեծ ծոց սեաւ ծովու, ուր շրջեցաք յամի տն 1808: (Տես 'ի Պոնտոս 259):

ՊԱՊԱ ՑԱՂԻ

362. Սա քաղաք անշուք. ունի ծովածոց, ուր թափի գետակն քաղաքին: 'Ի մերձակայ լերինս գտանին մեծամեծ արծիւք. մինչև կարել յափշտակել զոչխարս 'ի հօտաց: Աստ գոն 40 տունք Հայոց, որք ունին հին եկեղեցի քարաշէն յանուն Վարագայ խաչին:

Տեսաք 'ի Գրիգորիպօլիս յեկեղեցւոջ սրբոյն Կատարինէի Յայսմաւուրք բոլորագիր մագաղաթեայ գրեալ 'ի Կոստանդինուպօլիս յեկեղեցւոջ Ածածնին յաւուրս Սուլթան Մահմետին 'ի թուին Հայոց ՌՃԻԴ (1675): Պատմէ թէ այս թագաւոր էառ զԿրիտ և զԿամենից, և զբազում քրիստոնեայս գերի վարեաց. ապա ասէ. * Եւ եղաւ յիշատակս այս այսմաւուր 'ի ,, Պապատաղին. 'ի Վարագայ խաչ կոչեցեալ եկեղե- ,, ցին ... աղաչեմ յիշել ... զգծօղս զՅովհաննէս երէց ||:

ՏԻՄԷԹՕՔԱՑ

363. Սա քաղաք անշուք, ուր բնակին զանազան ազգք. տունք Հայոց են 20. և ունին գեղեցկաշէն եկեղեցի 'ի վերայ լերին յանուն սրբոյն Գէորգայ:

Մերձ է աւանն Փազարճըխ, ուր գոն 30 տունք Հայոց. եկեղեցին է նորաշէն: Աստ լինի տօնավաճառ, և անպակաս է երթևեկութիւն վաճառականաց:

ԴՐՈՒՆՕՎԱ, կամ ԴՐՆՕՎԻ

364. Սա քաղաք բարեշէն և բազմամարդ. ունի հրապարակական շինուածս, իջևանս վաճառականաց,

և մզկիթս ։ Ուր գոն բազում Յոյնք և Պուլղարք և է աթոռ Մետրապօլտին համօրէն Պուլղարաց, որք ունին 18 եկեղեցիս ։ Սակաւ են Հայք. բայց ունին գեղեցկաշէն եկեղեցի ։ Այս անուանի քաղաք ունի բերդ 'ի վերայ ապառաժի 'ի ձև վեցանկիւնի հանդերձ 5 դրամբք. զոր շուրջանակի պատէ բազուկ մի Դունայի, իջեալ 'ի բերդէ անտի. ուր գոն և կրկին աշտարակք ։

ՓԻԼԻՊՊԷ

365. Սաղեմի քաղաք հռչակաւոր՝ կառուցեալ յարքունի Ճանապարհին՝ ըն հին շինուածովք. ունի գեղեցիկ շուկայս, իջևանս, բաղանիս, մզկիթս և եկեղեցիս. երևելի է աթոռանիստ եկեղեցի Մետրապօլտին Թրակիոյ ։ Գտանին անդ յազգէս Հայոց 100 տունք, որք յառաջ աւելի էին. և ունին զեկեղեցի յանուն սրբոյն Ստեփաննոսի ։ Ուր 'ի ծայր լերին գոյ քառակուսի աշտարակ իբրև դղեակ իւր. գլխաւոր բնակիչք տեղւոյս են Պուլղարք ։ Են աստ երկու քարաշէն մատուռնք խաչաձևք. բնակիչք պատմեցին թէ 'ի միում քարոզեալ է սուրբ առաքեալն Պօղոս ։ Արտաքոյ քաղաքին երևին բազում հողակոյտք գերեզմանք նախնի Հռովմայեցւոց անկելոց 'ի պատերազմի ։

ԹԱԹԱՐ ՊԱԶԱՐԻ

366. Այս քաղաք կառուցեալ յարքունի Ճանապարհին առ Մերիճ գետով. ուր լինի ամըստամէ տօնավաճառ, զոր Սարաչ կոչեն ։ Գլխաւոր բնակիչք սորա են այլազգիք և Յոյնք. գոն և 30 տունք Հայոց, որք ունին զեկեղեցի յանուն սրբոյն Ստեփաննոսի ։ Մերձ է աստ կիրճն ապառաժուտ Չէնկէ լերին. ուր երևին մնացորդք հին կամարակապ դրան, զոր ասեն մնացեալ 'ի ժամանակէ Տրայիանոսի կայսեր ։

ԿԻՒՄԻՒԼՃԻՆԷ

367. Այս քաղաք անշուք. ունի մզկիթս, բաղանիս և իջևանս. ուր գոն և 20 տունք Հայոց ։ Իսկ 'ի Չօռ-

լու են 100 տունք Հայոց, և ունին զեկեղեցի յանուն սրբոյն Գէորգայ. ուր գոյ և հրաշագործ պատկեր։ Յառաջագոյն բազում էին Հայք յայսմիկ կողմանս. մանաւանդ 'ի հռչակաւոր քաղաքն Սոֆեա, որ է վաղեմի մայրաքաղաք և երևելի վաճառատեղի. որպէս երևին ցարդ մնացորդք հին շինուածոց. ևս և առողջացուցիչ ջուրք և հանք ոսկւոյ։ Սակայն հայ բնակիչք ցրուեալ կան յայլևայլ կողմանս։

ԷՏԻՐՆԷ

368. Ի վաղեմի մայրաքաղաք հռչակաւոր՝ 'ի հնումն Ադրիանուպօլիս անուանեալ, որոյ շրջապատ է 9 մղոն. յիւրաքանչիւր կողմունս պարսպին կառուցեալ կան 12 աշտարակք 'ի պաշտպանութիւն։ Ուրանօր գոյ այլ բերդ քառակուսի, յորոյ յիւրաքանչիւր անկիւնս շինեալ կան բոլորաձև աշտարակք։ Ի սմին քաղաքի են բազում երևելի շինուածք, վայելուչ փողոցք և շուկայք, մեծաշէն իջևանք, պէզազիստանք, և պալատք։ Արկին են անդ վրքունիք, և 42 մեծագործ մզկիթք. յորոց 10 գոլով առաւել հոյակապ՝ Սելտէին հօյին. ճո արքունականք։ Գլուխ ամենեցուն է մզկիթն Սէլիմէ. շինեալ 'ի Բ. Սուլ. Սելիմէ յամի տռն 1574. ունի ասեն 999 լուսամուտս. գմբէթ նորա կանգնեալ կայ 'ի վերայ 8 կամարաց, զոր մեծ դնեն երկու կանգնաւ քան զԱյա սոֆիայն. ունի 4 մինարէս ուղղաձիգ համեմատս հանդերձ 3 շէրիֆէիւք։ Դրունք քաղաքիս են 10. մերձ 'ի նոր ապարանն արքունի է քարաշէն կամուրջն 10 կամարօք, առ որով անցանէ գետակ. Թող և զայլ երևելի կամուրջս և ջրաբաշխ աշտարակս այլովքն հանդերձ։ Ի սմին քաղաքի բնակին գրեթէ ամենայն ազգաց վաճառականք։ Հայկազունք յաճախեցին աստ և բազմացան, և շինեցին փառաւոր եկեղեցի յանուն սրբոյն Թէոդորոսի, ուր է աթոռ Արքեպիսկոպոսին. այժմ են աստ 1000 տունք Հայոց, այլ 'ի վաղ ժամանակաց սկսեան Հայք բնականալ աստ. քանզի 'ի Թ դարու բնակէր անդ հատուած յԱրշակունի նախարարութենէ, յորոց էր Ա Վասիլ կայսր մակեդոնացի, ըստ որում բերէ Կոստանդին Պերփիրուժէն յասելն. * Ի զաւառէն մակեդոնիոյ ունէր

» զանկիզեն. և վերաբերէր առ հայս արշաւանսն ազ-
» գաւ ||: Նոցա առաջինք, որք եկին 'ի Հայաստանէ՝
էին երկուք, որք 'ի Ե դարու նախ եկին 'ի Կոստանդի-
նուպօլիս. այլ բերեալ նոցա զընտանիս և զզաւակս փո-
խադրեցան 'ի Փիլիպպոս քաղաք Մակեդոնիոյ, և ան-
տուստ յԱդրիանուպօլիս. ուր * Տեսեալ նոցա (ասէ)
» զյարմար և զպատշաճ տեղին, իբր 'ի սեպհական
» ցեղ և 'ի տուն բնակութեան՝ աճեցան բազմութբ.
» և ըստ բաւականին առատ ընչիւք ճոխանալով, ըզ-
» հայրենի աղանդականութիւն և զզարմ անխառն պա-
» հելով ||: Յիշատակի 'ի գիրս թէ 'ի սկիզբն Ժ դա-
րու քաղաքապետ Ադրիանուպօլսոյ էր հայկազուն
Բանդրադուգաս իշխան:

ՎԱՌՆԱ·

369. Ի՛ քաղաք ծովահայեաց և բարեկից վաճա-
ռատեղի. ունի մեծագործ բերդ շինեալ 'ի գլուխ անդր
ծովածոցոյն. առ որով անցանէ գետն Պրանճի առոյ. յա-
րոյ վերայ կառուցեալ կայ մեծ կամուրջ: Յայս քա-
ղաք անպակաս են երթևեկութիւնք վաճառականաց,
և բնակիչք են 'ի զանազան ազգաց: Յառաջագոյն բա-
զում էին աստ Հայք, որք 'ի ժամանակս պատերազ-
մաց ցիրեցան եղեն, այլ յանդորրանալ քաղաքին դար-
ձեալ ժողովեցան. ուստի այժմ գտանին աստ 150
տունք Հայոց. եկեղեցին է յանուն սրբոյն Սարգսի,
և հրաշագործ պատկերն է ուխտատեղի բարեպաշտից:

ԻՊՐԱՅԻԼ

370. Որովհետև բազումք 'ի Հայոց Պուլղարիոյ
ցրուեցան 'ի քաղաքս Ռումնայի. և բազումք յԱնեց-
ւոց նաւաւ մտեալ 'ի Ռումնա եկին 'ի քաղաքս և 'ի նա-
ւահանգիստս մեծի գետոյն. և անտի չոքան 'ի Մոլտա-
վիա, նմին իրի հարկ եղև բանիս անցանել ընդ այսս
և խօսիլ 'ի վերայ մնացեալ Հայոց:
Մօտ՝ Իպրայիլ բարեկից քաղաք անկանի 'ի ձախա-
կողմն Ռումնայի՝ սակաւ ինչ 'ի վեր քան զբերան Սերէ-
թին գետոյ (318). որ ունի բերդ ամուր 5 աշտարա-
կօք: Բնակիչք են 'ի զանազան ազգաց. ուր գոն և 20

տունք հայոց, և ունին զեկեղեցի ։ Նաւահանգիստն է ամբարանոց վաճառուաց, ուրանօր հաւաքին ամենայն տեսակք ուտելեաց, և բարձեալ տանին անտի յայլևայլ տեղիս ։ Դունա գետ աստ բաժանի 'ի զանազան առուս ։

ԻԶՄԱՅԻԼ

371. Է բերդաքաղաք անուանի 'ի հիւսիսակողմն Դունայի, ուր թափի Պրուտ գետ (401) . նաւահանգիստն է բարելից, ուր յաճախեն նաւք, և բարձեալ տանին զամենայն տեսակս ուտելեաց ։ Յառաջագոյն բազում էին աստ հայք, և ունէին քարաշէն եկեղեցի յանուն Ածածնին . սակայն 'ի ժամանակի շինութեան բերդին յափշտակեցաւ յԱյլազգեաց սակս հուպ լինելոյ 'ի պարիսպն . որով ցրուեցան անտի հայք, և շատք անցին 'ի Գրիգորիպօլիս . վն որոյ այժմ հազիւ գտանին անդ 60 տունք հայոց . և եկեղեցի նոցա է 'ի փոքրիկ տան (307) ։ Աստի մինչև ցԱքքիրման բնակէին 'ի դաշտօրայս Պուճաղ Թաթարք, որք աստ փոխադրեցան յՕղու խըլ (571) ։

ՔԻԼԻ

372. Է գիւղաքաղաք շինեալ 'ի վերայ հիւսիսային առաջից Դունայի . ուր գետն ծովամման լայնարձակ է . և ունի 'ի միջի անդ զընդարձակ կղզի, որ թուի լինել հին Աքիլլէոս կղզին . որպէս և Քիլի անունս է համառօտեալն Աքիլլեայ, որ դեգերեցաւ յայսոսիկ կողմանս ։ (Տես 'ի Պոնտոս 243) ; Բերդ սորա է 'ի լեռնակողմն, առ որով անցանէ գետակ ։ Զանազան ազգք բնակեն 'ի Քիլի . յառաջ գոյր անդ բազմութի հայոց, և ունէին զեկեղեցի յանուն Ածածնին, այլ բազումք անցին 'ի Գրիգորիպօլիս ։ Տեսաք 'ի յայսմաւուրս յիշատակարան, որ ասէ գրեալ 'ի Պաղձեսարայ 'ի ՌՃԾԱ . և եդեալ 'ի քաղաքն Քիլի 'ի դրունս սուրբ Ածածնին ։

ԱԳՔԻՐՄԱՆ

373. Է անուանի ծովահայեաց բերդաքաղաք շինեալ 'ի ծայրն Պեսարապիոյ 'ի բերան Տնեստեր գե-

տոյ, ամրաշէն է և գեղեցկածաղկէր. զի 'ի մի կողմն է ա-
հագին խոր խրամ լայն 60 ոտնաչափ. և 'ի միւս կողմն
երկայն ծոց գետոյն, որ հոսի 'ի սեաւ ծով: Սուր էր 'ի
հնումն Ալեքսանդրում քաղաք. որ կայր մինչև ցժաման-
նակս Պեդրոսեանց: Այնպէս առ Տնեսդերաւ գոյր
երևելի Թիրաս քաղաք. ուր է այժմ Սայաք գիւղն:
'Ի վերայ բերդին Ագքիրմանու երևին վէմք հնա-
գիրք. որք բարձեալ եղեն 'ի մօտակայ գերեզմանա-
տանց 'ի ժամանակս նորոգութեան: Զայս բերդ Ագ-
քիրմանու էառ յՕսմանեանց Տիւք Տըռւբշլիե 'ի
վերջին պատերազմի. որ առ սակաւ սակաւ ծաղկի
ընդ տէրութեամբ Ռուսաց. ուր և բնակին զանազան
ազգք: Հայք 'ի վաղուց բնակեն աստ, յորոց այժմ մնա-
ցեալ են 150 տունք, որք ունին հին եկեղեցի քարա-
շէն, բայց կիսով չափ թաղեալ 'ի գետնի. ուր և յի-
շատակին երեք տաճարք 'ի յիշատակարանին, որ ասէ.
* Սերատին նորոգեալ գրեցաւ ցանգ զանձարանիս
„ թվին ՌԾՂԶ. 'ի ծովահայեաց քաղաքն Ակքիրման,
„ 'ի դուռն սուրբ Աստուածածնին, և սուրբ Օգսէն-
„ դին, և սուրբ Յովհաննու աւետարանչին երից սրբոց
„ տաճարաց ||:

ՍՊԱՒՈՐՈՒԹԻՒՆ
ԸՆԴ ՆՈՐ ՌՈՒՍԻԱ.

374. Նոր Ռուսիա կոչի այն մասն աշխարհի, որ
սկսեալ 'ի Տօմպասարէ (310) ձգի մինչև ցՏօնաւիս
գետ, և պարունակէ յինքեան զերիս կուսակալութիւնս
Խերսոնի, Դաւրիդյ և Կատարինոսլաւի. ուր գոն
միլիոն մի և հինգ հարիւր հազար բնակիչք, բազում
քաղաքք, և 101 գիւղօրէք միայն օտար հատուածոց:
Մեծ կուսակալ իշխանն նստի 'ի մայրաքաղաքն
Օտեսսա և իշխէ երից կուսակալութեանց միանգա-
մայն, որոց առաջին հասանէ մինչև ցգետն Տնեբէր, և
իշխանանիստ քաղաքն է Խերսոն. երկրորդն սկսեալ
'ի Տնեբէր գետոյ հասանէ մինչև ցկիրճ Թաամանու,
պարունակեալ ընդ իւր և զմեծ կղզին Ղրիմ. և իշխա-
նանիստ քաղաքն է Ագմէսճիտ. իսկ երրորդն սկսեալ
յՕզու խըռնէ, հասանէ մինչև ցնոր Նախիջևան և

ցԵկատարինասլաւ, որ և է իշխանանիստ քաղաք կա-ռավարչին։

Որդ՝ շրջեալ մեր անձամբ 'ի Նոր Ռուսիա տե-սաք բազում հնութիւնս, տեղիս հին քաղաքաց ծաղ-կելոց 'ի ժամանակս հեթանոսութեան, հին դամբա-րանս և դրամս այլովքն հանդերձ։ Մերձ յԵլիսա-վէթուպօլիս գտան ընդ երկրաւ կրկին թևք թռչնոյ ինչ պատեալ ոսկի թիթղամբ. Նոյնպէս գտաւ և ձուկն մի ոսկիապատ։ Տեսաք զոսկերս մարդկան և զէնս քա-ջաց այնպէս այլափոխեալս, զի ընդ հպելն լուծանէին 'ի փոշի։ 'Ի մէջ Տնեպեր գետոյ և Ազախ ծովու լի են արձանք խոշորաշէնք կանգնեալք 'ի նախնի հեթանո-սաց 'ի վերայ գերեզմանաց, յորոց ելանեն մեծամեծ կմախք (568)։

ՀԱՅԿԱԶՈՒՆՔ ՆՈՐ ՌՈՒՍԻԱՅ

375. Անեցի Հայք զառաջինն փախուցեալք յե-րեսաց Թաթարաց դիմեցին նախ 'ի Ղրիմ, և անտի ծաւալեալք ընդ Նոր Ռուսիա՝ բնակեցան յայլ և այլ քաղաքս մինչև 'ի Եկատարինասլաւ և 'ի Նոր Նախի-ջևան, զորոց զվիճակէ և զքաղաքաց գրեսցուք 'ի կար-գիս աշխարհագրական քննութեանս։

ՕՏԵՍՍԱ

376. Որդ՝ թողեալ մեր զԳրիգորիպօլիս, ուղղե-ցաք զընթացս յՕտեսսա մեծահռչակ մայրաքաղաք ընդարձակ բազմամարդ և բազմավաճառ. որ յառաջ քան զմտանել ընդ տէրութեամբ Ռուսաց էր անշուք վայր, և ունէր մերձ 'ի ծովն, ուր այժմ է արգելա-նոց, անզօր դղեակ Խոջապէյ կոչեցեալ, զոր շինեաց այլազգի իշխանն Խոջա պէկ։

Սակայն 'ի հնումն գոյր յայսոսիկ կողմանս Օտէս-սուս մայրաքաղաք Գրաղղիփիտացւոց, որք էին հա-տուածք եկեղք ըստ Պոմպոնիոսի Մելայէ։ Յամի տն 1794. Գուտովիչ մեծ զօրապետն Ռուսաց էառ զայս դղեակ Խոջապէյ, ուր տէրութիւն Ռուսաց եդ բե-րել 'ի միջերկրական կղզեաց հատուածս ինչ Յունաց՝ շնորհելով նոցա բազում ազատութիւնս. և անուա-

նեաց զտեղին Օդեսսա։ Իսկ ՚ի 1803. յամենայն մարտի մեծ դուքսն գաղղիացի անուանեալ Տիւք Տը Ռըշըլիէօ նստաւ անդ կուսակալ իշխան, և ՚ի հետևեալ ամի սկսաւ նախ շինել զեկեղեցիս. որով ժողովեցան 8000 բնակիչք, և ապա լցաւ քաղաքն մեծամեծ շինուածովք և քաղաքական կարգօք, մինչ զի այժմ եղև մի յերևելի քաղաքաց Եւրոպիոյ՝ ունելով 30 հազար բնակիչս՝ բաց ՚ի զօրաց, որոց զօրագլուխ և մեծ կուսակալ կարգեցաւ յետ Տիւքին մեծ Կոմսն Լանժըրօն մտերիմն մեր գաղղիացի. որ բազում մարդասիրութեամբ հիւրընկալեաց զմեզ յամի 1820։ Իսկ զկնի սորա կարգեցաւ ընդհանուր կուսակալ Կոմսն Մորոնցով. որ նոյնպէս ոչ սակաւ մարդասիրութ̃ ժողովեաց զմեզ ՚ի 1828։ Այս փառաւոր իշխան կառոյց պալատ մեծագործ յարևելեան ծայր քաղաքին ՚ի վերայ ձախակողմեան հրուանդանի կամ բազկի նաւահանգըստին։ Ուր ՚ի 1828 բնակեցաւ Օգոստափառ Կայսրուհին Աղեքսանդրա Փէոտորովնայ որ և ՚ի տօնի աւուր ծննդեան մեծի Կայսեր Ռուսաց Նիկողայոսի ամուսնոյն իւրոյ հաճեցաւ տեսանել զմեզ և խօսակցել. նմին իրի աւուրբ յառաջ ետ գրել թուղթ մեծի Կոմսին Մորոնցովի այսպէս. * Պատիւ է՛ ինձ ծանու-
„ ցանել ձեզ՝ զի մեծափառ Կայսրուհին բարեհաճի
„ հանդիպել տեսութե̃ ձեր ՚ի վաղիւ անդր ՚ի մետասա-
„ ներորդ ժամու ՚ի պալատան անդ։ ‖ Նա ինքն Մեծապանծ Կայսրուհին ՚ի հետևեալ աւուր ՚ի 25 յունիսի, 1828. ընկալեալ զմեզ քաղցրութ̃ խօսակցեցաւ ոչ սակաւ՝ հարցանելով զվիճակէ մերմէ. և ապա սըրտապնդեաց արիանալ ՚ի գործ՝ խոստանալով զպաշտպանութի մեծի Կայսեր՝ այլովքն հանդերձ։ Ընդ ապա մեծ Կոմսն Մորոնցով առաջի մեծամեծացն խօսեցաւ բազում գովութիւս սակս ուսմանց և կրթութեց վարժատան մերոյ։

Արդ աստի սկսանի երկայնաձիգ ծառաստունկ զբօսարան վասն քաղաքացւոց ՚ի բարձր կայի, որ հայի ՚ի վերայ նաւահանգստին, ուր մեծամեծք կարգաւ կառուցին հոյակապ պալատս բարձրադիրս և գեղեցիկս։

՚Ի միջավայրի անդ սոյն զբօսարանի յաւուրս մեր կանգնեցին հսկայ արձան պղնձաձոյլ ՚ի պատիւ մեծի Դուքսին Ռըշըլիէօ. որ և անկանի ՚ի կատարած ընդար-

ձակ պողոտայքն համովեալ ծովուն, որոյ կացեալ 'ի վե-
րայ քարաշէն պատուանդանի և ձգեալ զձեռն՝ մա-
տամբ ցուցանէ զխիրս նաւահանգստին ։

Յարեւմտեան կողմն պատուանդանին փորագրեալ կայ 'ի վերայ մարմարիոնի Աստրէա աստուածուհի արդարութե (Տես. 673) ։ 'Ի հարաւակողմն՝ Հերմէս 'ի ձեռին օձապատ վիրգ (տես 646) . 'Ի Հիւսիսակողմն Դեմետր աստուածուհի՝ 'ի միում ձեռին մանգաղ, և 'ի միւսումն եղջիւր առատութե (տես 641) ։

Իսկ 'ի ծովակողմն արեւելեան՝ 'ի վերայ ոսկէպղինձ տախտակի փորագրեալ կայ ընդ արձանաւ այսպիսի իմն արձանագիր .

Герцогу Еммануилу Деришелье
Управлявшему
съ 1803 по 1814 годъ
Новороссійскимъ краемъ
и
Положившему основаніе благосостоянію
Одессы .

Благодарные къ незабвеннымъ его трудамъ жители всѣхъ сословій сего города и Губерній Екатеринославской, Херсонской и Таврической воздвигли памятникъ сей

въ 1825 годѣ
При Новороссійскомъ Генералѣ—Губернаторѣ
Графѣ Воронцовѣ .

* Իմմանուէլի Դիւքին Տը Ռիշելիէօ Կառավարչի սահմանաց Նոր Ռուսիոյ 'ի 1803 ամէ մինչև ց1814, և հաստողի զօրեղան բարեկարգութե Օտեսայի, Շնորհակալու նորին անմոռանալի վաստակոց բնակիչք համայն ընկերուեց այսր քաղաքի և կուսակալութե Եկատերինասլավի, Խերսոնի և Տաւրիոյ կանգնեցին զայս արձան 'ի 1826 ամի . Առ իշխանութ ընդհանուր Կուսակալի Նոր Ռուսիոյ Կոմսին Վորոնցովի ։

Օտեսա է քաղաք գրեթէ ամենայն ազգաց մանաւանդ եւրոպացւոց . ուր տեսաք վաճառականս ամենայն ազգաց և քաղաքաց, որք ունէին տուրևառութիւնս ընդ մեծամեծ քաղաքաց Եւրոպիոյ ։ Ուստի և նաւք ամենայն տէրութեանց անպակաս յաճախէին

'ի նաւահանգիստն, բերեն զվաճառս Եւրոպիոյ, և տանին զցորեան։ Այս նաւահանգիստ է ընդարձակ ծոց Պոնտոսի. ուր տակս ապահովութեան նաւուց՝ տէրութիւն Ռուսաց կանգնեաց երկայնաձիգ ամբարտակս 'ի մէջ ծովուն յերկուց կողմանց ընդարձակ միջոցաւ։ Այսպէս կրկին բազուկք երկայնեալք 'ի ծով անդր՝ խորտակեն զալիս և յանդորրու պահեն զնաւս։ Յաջակողմեան ամբարտակն մերձենան նաւք նորեկք. իսկ 'ի միւսն մաքրեալքն կամ ապահովացեալ նաւք 'ի հիւանդութենէ։

377. Այս քաղաք ընդարձակ է յոյժ և հարթածաւալ. փողոցքն լայն և ուղղաձիգ. յերկոսին կողմունս ամենայն փողոցաց շինեալ կան քարաշէն խորամք՝ առ 'ի հաւաքել անդ ջուրս, և քարայատակ ճանապարհ մարդկան. իսկ միջոցն է ընդարձակ փողոց վասն սայլից առանց քարի։ Շուկայն և փառաւոր կրպակք շինեալ են 'ի վերայ մեծամեծ փողոցաց։ Ամենայն տունք են քարաշէն և գեղեցկանիստ, շատք են կրկնայարկ և եռայարկ պղնձապատ։ Դիրք քաղաքիս է բարձր և ծովահայեաց. լի են երևելի շինուածք, պայծառ եկեղեցիք, իջևանք, դպրոցք և մեծաշէն պալատք։ Երևելի է մեծ ուսումնարանն մեծի դքսին Տըռըշլիեօ. որոյ ծախիւք և ջանիւք այն կառուցաւ ընդարձակ և բարձր, քարաշէն և գեղեցիկ, բաժանեալ 'ի զանազան օրահս և 'ի կարգս, ուր հարիւրաւոր մանկունք ուսանին զլեզուագիտութիւն և զուսումնականութի։ Անդ և մեզ վիճակեցաւ կրթել զմանկունս Գաղղիացւոց, Իտալացւոց և Գերմանացւոց խոստովանահայրական պաշտօնիւ՝ ցորչափ եղեաք անդ, որպէս ցուցանէ վկայական նոցա։

Գեղեցկաշէն է սիւնազարդ թէատրոն քաղաքիս, ուր անընդհատ ձևացուցանեն զայլ և այլ պատմութիւնս։

Ամենայն քրիստոնեայք ունին աստ եկեղեցիս. որպէս և Հրեայք ունին սինակոկայ և դպրոց քարաշէն։ Սակայն պայծառ և մեծաշէն է յոյժ եկեղեցին Ռուսաց՝ կառուցեալ յանուն սրբոյն Նիկողայոսի 'ի մեծ հրապարակի անդ, 'ի ձև քառակուսի բարձր և լայնանիստ. ունի զերկս դրունս և զերկս միակարգ խորանս ոսկեզօծս և փառաւորս. յատակն է զարդարեալ ընտիր մարմարիոն քարամբք։

Նաւ եկեղեցին լատինացւոց փոքր է, բայց քարա-
շէն և գեղեցիկ. ունի յերկոսին կողմանս զերկու ա-
ւանդատունս և զերիս խորանս. զմնգակատունն քա-
րաշէն կառուցեալ կայ 'ի ճակատ դրանն, և արտաքոյ
ունի զընդարձակ հրապարակ քառակուսի 'ի վերայ
չորից երևելի փողոցաց քաղաքին, և 'ի չորեսին կող-
մունս չորս մեծամեծ դրունս: Վանատունն է քարաշէն
կրկնայարկ կառուցեալ յաջակողմն եկեղեցւոյն 'ի վե-
րայ մեծի փողոցին. ունի բակ և գեղեցիկ պարտէզ:
Այս եղև և մեր բնակութիւն՝ ցորչափ եղեաք յայս
քաղաք կառավարելով զժողովուրդն 'ի խնդրոյ մեծի
Կոմսին և Հոգաբարձուաց, որպէս ցուցանէ հետևեալ
վկայական նոցա գրեալ իտալերէն. * Հաւաստարմա-
» ցուցանի վասն պարզ ճշմարտութեան և վկայութիւն
» ընծայի ամենեցուն, որք տեսանեն զայս, թէ Յար-
» գոյապատիւ Հայր Մինաս Բժշկեան 'ի կարգէ սրբոյն
» Անտոնի Աբբայի Մխիթարեան, առաքելական քա-
» րոզիչ՝ յապաղելն աստ տեսեալ զայս եկեղեցի կա-
» թոլիկաց անխնամ մնացեալ 'ի հոգևոր վերակա-
» ցուաց, անձնատուր եղև ձրի 'ի սէրն Ա՟յ ամենայն
» նախանձու և եռանդեամբք ոչ միայն 'ի ծառայու-
» թիւն այսր եկեղեցւոյ, 'ի հոգաբարձութիւն և 'ի
» փրկութիւն հոգւոց, այլ նաև 'ի ծառայութիւն Ու-
» սումնարանի Գրքսին Տրաբըշլիեօ և 'ի հրապարակա-
» կան Նէկելանոցին: Որոյ վասն երդիւնաւորեցու-
» առնուլ զընդհանուր շնորհակալութիւնս մեր, տալով
» նմա զայս ներկայ վկայական ճշգրտեալ և ստորագ-
» րեալ 'ի վսեմափառ Կոմսէն Լանժրոնէ 'ի զի-
» նուորական ընդհանուր Կուսակալէ Եռ., Եռ., Եռ. նաև
» 'ի հոգաբարձու ժամանակաւոր գործակալաց նոյն
» Կաթոլիկ եկեղեցւոյն, առ 'ի զօրել յամենայն տե-
» ղիս. յորոյ 'ի հաւաստարմութիւն ևն:

Օտեսա. 19 օգոս. 1820.

Le Comte de Langeron. | (L. S.)

378. Եկեղեցին Յունաց է 'ի հարաւակողմն քաղա-
քիս. և է բարձր քարաշէն. ունի ընդարձակ հրապա-
րակ: Յոյնք ունին աստ երևելի դպրոց, ուր ուսանին
բազում մանկունք զհարկաւոր ուսմունս:

Երևելի շինուած է հրապարակական Նէկելանաց

քաղաքին բարձր և քարուկիր նախ յերկուս մասունս բաժանեալ արանց և կանանց և յայլ և այլ սենեակս որոշեալ. ուր գարմանին հիւանդք ամենայն քրիստոնէից. տեսայ 'ի նմին 240 հիւանդս քաղաքին: Հոգաբարձուն գաղղիացի և իտալացի հիւանդաց մեզ յանձնեցաւ հոգևարպաղես ցորչափ եղեաք անդ. որք սակս երախտագիտութեան եասուն զհետևեալ գիր շնորհակալութե 'ի ձեռն բժշկապետի Հիւանդանոցին գրեալ գաղղիարէն:* Ստո-
„ րագրեալս. Տոքթոր բժշկուն, Արքունի խորհրդական
„ և բժշկապետ քաղաքական Անկելանոցին Օտեսսայի
„ վկայեմ և հաստատեմ, թէ Մեծապատիւ Հայր
„ Մինաս բժշկեան Աբաքելական Վարդապետ և Մա-
„ գապետ Ածաբանութեան՝ ցորչափ ժամանակս մնաց
„ յայս քաղաք՝ ակներև եցոյց զքրիստոնէական գութն
„ յաձախելով յԱնկելանոցն, որոյ պաշտօն յանձնեալ
„ է ինձ. մխիթարէր անպակաս և մատակարարէր հո-
„ գևոր նպաստս Կաթոլիկ հիւանդաց, զորս գժբաղ-
„ դութիւնն և հիւանդութիւնն ժողովեալ է յայս տե-
„ ղի գթութեան:

„ Այսքիկ հիւանդք, որոց փոխան պարտաւորե-
„ ցայ լինել շնորհակալու, մատուցանեն ինև զերեանց
„ անկեղծ շնորհակալութիւնս նմին Արժանաւոր և
„ Մեծարոյ վարդապետին. որոյ հեռագնացութիւն 'ի
„ մէնջ՝ պատճառէ մեզ աւելի իմն զգալի մորմոք: Յո-
„ րոյ 'ի հաւատարմութիւն գրեցի զայս ներկայ բանս
„ 'ի վկայութիւն երախտագիտութեան նոցա և իմ:

Օտեսսա. 16 սեպտ. 1820.

Pannecet D.r Med. Cons.-d-Cour. || (L.S.)

379. Գեղեցիկ է հասարակաց պարտէզն 'ի քաղաքամիջի անդ այլ զուրկ 'ի պտղաբեր ծառոց: Սակայն շուրջ զքաղաքաւ անպակաս են ծառաստունկք և պարտէզք ազգի ազգի պտղոց և բուսոց: Թողում ասել զվայելուչ փոքրիկ գիւղօրէս շուրջ զքաղաքաւ, զոր Խուտոր ձայնեն. որք են ամարանոցք մեծամեծաց: Սեր է արքունի պարտէզն ընդարձակ, և վանք Ռուսս կրօնաւորաց:

Հայք բնակեն 'ի հարաւակողմն քաղաքին, որք են իբր 30 տունք և աւելի, փոխադրեալք 'ի Գրիգորի-

պօլսոյ . բայց չունին առանձին եկեղեցի, այլ 'ի տան կատարեն զպաշտօն :

Տեսաք 'ի տան անդ փոքրիկ գրքոյկ բերեալ յԵգիպտոսէ և հանեալ 'ի վաղեմի գերեզմանաց՝ 32 թերթիւք, յօրինելովք 'ի մորթոյ շան և գեղեցկովք բալասանաւ . որպէս և թելքն են յաղեաց, որովք կապեալ, և 'ի կաշեայ տնօթ եդեալ Թաղեալ էին . չափ մեծութեան թերթիցն և անվերծանելի ձևք տառիցն երևին աստ, որ է մի երեսն այնր գրքուկի .

ነበ·ፋ፡ቁር፡ወሴ
ፉኪ።ኢኤበ፡ዘጆ
ከሴ፡ፕ፡ው'ክቀ፡ኍ
ኪሽጀ፡ዘቴኀበቴ፡ጰ
ኮቅኒ፡ክክመ፡ፓ
ሼዉጰጰመክኺ
ቴ ዖዐኑ፡ኸኮ-ኇጢ
ር።ወግቡር።ኔቴ
ጦ-ጏሬ-ኖኀቤ፬K
ኌከሖሮ-ኪጠቕኩ

Հաստատեալք Գերմանացւոց են իբր 15, բնակեալք շուրջանակի 'ի գիւղօրէս և առանձնաբար ունին եկեղեցիս և քահանայս . մեծ մասն է ուղղափառ . որոց գնացաք յայցելութիւն 'ի 1828, անցեալ ընդ երկայնաձիգ ականջս ծովու անջրպետեալ ալս 'ի ձեռն ալեբեր առազակուտին, որք կոչին լիմանս :

'Ի հիւսիսակողմն Օդեսայի հեռի 40 վերստիւ գոյ անուանի գիւղ Սեվերինովկա շինեալ 'ի Կոմսէն Փոթոցքի Սեվերինօ . ուր տեսաք զանազան գործարանս : Պալատ Կոմսին սքանչազարդ է և գեղեցիկ՝ համադերձ ընդարձակ պարտիզիւն : Մերձ է եկեղեցին Ռուսաց քարաշէն յանուն Յովհաննու աւետարանչի . Իսկ 'ի վեր անդր է եկեղեցի Լեհաց նոյնպէս քարաշէն՝ ընծայեալ անուան Ն.Ծածնի . ուր ժողովրդապետն ունի պարտէզ և տուն : Տեսաք 'ի լերին անդ զընդարձակ

այգի մի ազգի ազգի պտղալից ծառովք ։ Ի միւս կողմն անկանի աղեհանն ընդարձակ ։

ՆԻՔՕԼԱՅԻՖ

380. Յամի տն 1820 'ի սեպտ. 29 եկեալ յՕտեսայէ՝ ուղղեցաք զընթացս մեր ընդ ցամաք դէպ 'ի ցամաքակղզին Խրիմու, քննել զհանգամանս հայկազանց։ Ուստի հասեալ 'ի գիւղն Փերէսիբ՝ տեսաք զՏնէփէրեան լիճն, որ ունի հաղորդակցութիւն ընդ սեաւ ծովու։ Ապա հասաք 'ի Ռօլպի, ուր գոյ նոյնպէս լիճ. և ապա 'ի Տէմնէօլ, որ է ընդարձակ լիճ աղի ։ Ապա հասաք 'ի մերձակայ գիւղաքաղաքն Խանչօքրաք, այսինքն աղբիւր Թագաւորի. ընդ որ անցանէ փոքրիկ վտակ և գնայ յՕզու ։ Անտի անցեալ ընդ մեծ դաշտն հասաք 'ի գիւղաքաղաքն Ռուէնիխա՝ շինեալ 'ի բարձրաւանդակի. առ որով անցանէ մեծատարած գետն Պուկ, որ ելեալ 'ի լեհաստանէ՝ Թափի 'ի Լիման Օզուի, ոչինչ կարի հեռի աստի. նմին իրի ջուր գետոյն չէ անոյշ. աստ շրջին համարձակ նաև մեծամեծ նաւք. (Տես 'ի Պոնտոս 234) ։ Այս գետ 'ի հնումն կոչէր Հիպանիս. մերձ 'ի բերանն էր Օլպիօ հին մայրաքաղաք յոյն գաղթականաց, ըստ որում երևին ցարդ բազում հնութիւնք, այսինքն մարմարիոնեայ սիւնք, վէմք և խարիսխք, նաև բազում դրամք ։ Տեսաք 'ի վերայ միոյ դրամոյ կառք քառաձի, և 'ի միւս կողմն կին նստեալ, առ որով գիր լատիներէն այսպէս. pro utilitate publica. այսինքն վասն օգտի հասարակաց. զայս դրամ հատին Հռովմայեցիք երբ տիրեցին այսմ քաղաքի ։

Արդ անցեալ մեր նաւակաւ յայնկոյս գետոյն՝ հասաք 'ի Նիքօլայիֆ նորաշէն քաղաք գեղեցկատեսիլ և վայելչաշէն, որ յերկուց կողմանց պատի 'ի գետոյ անտի. ուր և է անուանի գործարան արքունական նաւուց Ռուսաց, և մեծաշէն պալատ ծովապետին, որ նստի աստ, և ընդ իշխանութեամբ նորա են ոչ միայն ամենայն պատերազմական նաւք սեաւ ծովու, այլև ընդարձակ գործատունն կամ պահարանն կարասեաց պատերազմական նաւուց. որոյ երկայնութիւն է կէս վերստ՝ բաժանեալ 'ի զանազան վայրս ։ Ուր գոյ և

երևելի հանդիսարան անգլիա իրաց բնականաց, արուեստականաց և գիտութեանց. և ու գաղափարք նաւուց, հաւաքումն բնական պատմութեանց, մետաղաց, պատկերաց և աշխարհացուցից ծովու։ Բաց աստի գան 'ի Լիվըրփուլ երևելի պալատք և քարաշէն եկեղեցիք։ Նորաշէն է եկեղեցին լատինացւոց, և ունի վանատուն քարաշէն, ուր օթագայեցաք. Երևելի է բարձրաշէն պալատ Բամիս փաշային կառուցեալ 'ի վերայ բաղկի գետոյն. որոյ տանիք են երկաթապատ. տասովաւ է հասարակաց պարտեզն գեղազարդ։

ՔԵՐՍՈՆ

381. Մեկնեալ 'ի Նիքօլայիֆէ՝ հասանք յերևելի քաղաքն Քերսոն, որ յառաջագոյն էր անշուք քաղաք Օչաքօվքի խաղախաց. ապա իբրև էառ զնա Ռուսս՝ հետզհետէ այնչափ ծաղկեցաւ երևելի շինուածովք և վաճառականութեամբ՝ մինչև լինել 'ի նմա 30 հազար բնակչաց, մանաւանդ յաւուրս Փօթէմքի մեծանուն դքսին. այլ այժմ նուազեալ է յոյժ. և օդն չէ առողջ՝ դրեալ առ եզր մեծի գետոյն Տնեպերայ։ Աստ է աթոռ կուսակալ իշխանին, որ իշխէ մինչև ցԳրիգորիպօլիս կմ ցՏօմպատար, և երևելի պալատք և եկեղեցիք. լատինացւոցն փոքր է, և ունի վանատուն հանդերձ պարտիզաւ։ Փողոցք քաղաքիս լայն են, այլ ոչ այնչափ ձևաւոր։ Իսկ տունք ըստ մեծի մասին են ըստ ձևոյ եւրոպացւոց։ Առաջի քաղաքիս է մեծ նաւահանգիստ Տնեպերայ, ուր յաճախեն մեծ և փոքր նաւք յամենայն կողմանց։ Անուանի է նաւատեղին. ուրանօր շինեն մեծամեծ նաւս պատերազմականս. Թէ աստ և թէ 'ի Նիկօլայիֆ շինեն զօրաշուտ նաւուց և տանեն 'ի Սեւաստօբօլ առ 'ի կազմակերպել և հանդերձել կայմիւք և առագաստիւք (453)։

Տնեպեր գետ շահաւէր է յոյժ և լի բազմատեսակ ձկամբք. ուր լինին մեծամեծ մուկինայք, մերսին են։ Ելանէ 'ի Սուժնոյ անտառէ իբր 8 մղոնաւ հեռի 'ի Սմօլէնսքոյէ, և անցեալ ընդ Լիդուանիա, և ընդ փոքր Ռուսիա՝ ընդդունի զբազում գետս. անցեալ և ընդ Քերսոն՝ թափի 'ի Լիման ծոց Օզուի. ընդ որ բե-

րեն զամենայն տեսակս փայտից և մեծամեծ գերանս :

38ջ. 'Ի մէջ երկուց գետոց Տանաղերայ և Տոներերայ ինքնագլուխ տիրէին Օսմանցիք խաղաղաբ՝ սկսեալ 'ի Կ.երդանէ մինչև ցՍամար, ուր էին այլ աբեղանոր-քուք, զառ. պատերազմողք և ապստամբք . միայն հնազանդէին գլխաւորի իւրեանց, որ ինքնին վճարէր զամենայն վէճս, ստացանէր և կեցուցանէր անկախ ամենեքին : Յեթէ կամէր՝ օգնէր Ռուսաց . այլ Թէ ոչ՝ միաբանէր ընդ Թշնամիս և հարկանէր զՌուսս : Ունէր 80 հազար հեծեալ զօրս . ամենեքեան էին յաղթամարմինք և կորովիք . ոչ ամուսնանային . այլ առէին առշաւեալ 'ի Լեհաստան և յայլ կողմանս՝ կողոպտէին, և գերեալ զմանկունս՝ մեծացուցանէին ըստ սովորութեան իւրեանց : Օինչ և յափշտակէին՝ զկէսն տային եկեղեցւոյ իւրեանց, որ փարթամացեալ էր յոյժ յոյժ : Ամենեքեան փառաւոր զգեստուն ըստ տարազու Մակեդոնացւոց կամ Օսմանեանց . այլ յաճախ մնացեալ 'ի տիղմն և 'ի կպրածխութեան աղտեղէին՝ 'ի ցոյց արհամարհելոյ զզարդս և զհեշտութիւնս մարմնոյ : Սափրէին զգլուխս, այլ 'ի վեր քան զականջսն փոքր ինչ հերս երկայնեալ փաթթութէին ընդ ականջս . զոր և կոչէին Ջօփրոն :

Տեղի սոցա կոչէր Սէջէյա, ուր էին աղքատաշէն ստորերկրեայ տունք շրջապատեալք հողակոյտ պատնըշաւ . ցրիւ բնակէին սոսա և անդ բաժանեալք 'ի 38 Թաղս, զորս նոքա Կուրէնէ կամ Կ.էրսէն կոչէին . ուր իւրաքանչիւր անհատ պարտական էր միանալ ընդ միում 'ի Թաղից սոցա : Իւրաքանչիւր Թաղ ունէր Հեթման կամ Օթաման . այսինքն զօրավար . և սոքա ամենեքեան էին ընդ հպատակութեամբ միոյ զօրագլխի, որ կոչէր Կօշչէվօյ կամ Կօշէյի Հեթման : Սա ունէր իշխանական լախտ (Թօփուզ), որ այնչափ 'ի յարգի էր առ նոսա, զի ամենայն ուղևորք, որք ունէին անցանել ընդ երկիր սէչութեան նոցա նախ երթային առ Կօշօնին, և առեալ զայն լախտաւոր՝ նավաւ հանդերձ երթային մինչև ցսահմանագլուխն . որ ոք տեսանէր զայն լախտ՝ ոչ երբէք մերձենայր առ նոսա . վասնորոյ որոյ չէր հնար անցանել անտի անվնասանաց :

Մայրաքաղաք նոցա կոչէր Կօլօմօնօշէ, ուր սա՛ ըստ ամէ առնէին ժողով : Յեթէ ոք 'ի զօրաց սնանի

կամէր ամուսնանալ՝ պարտ էր Թողուլ զՄէտչէթյն և նստիլ 'ի Սամար քաղաք. բայց եթէ կամէր՝ կարէր Թողուլ զտուն իւր և գալ անդրէն 'ի Մէտչէթյն: Թէպէտ քրիստոնեայ էին, բայց լի աւելորդապաշտութեամբ. 'ի վերայ մեռելոց առնէին հողաբլուր, որպէս գտանին 'ի բազում տեղիս. յորոց ելանեն կմախք: 'Ի միումն գտան մեծամեծ ոսկերք. գանկն էր Թանձր յոյժ. աջ ձեռն էր 'ի վերայ սրոյն. և մերձ 'ի ձախն գոյր ճանկ ինչ: Թշնամի էին Թաթարաց և Ռուսաց. 'ի 1506. Լանծիպառուսքի Խօշօնին արշաւեաց 'ի Խրիմ ընդդէմ Մէնկլի խանին և բազում նախճիրս գործեաց. որպէս և այլք անպակաս ապատակ սփռէին երբեմն 'ի Թաթարստան, երբեմն 'ի Ռուսաստան, և երբեմն 'ի Լեհաստան:

'Ի հնումն Թագաւորք Լեհաց զօրացուցին զնոսա առ 'ի դիմադրել նոքօք Թշնամեաց. բայց իբրև ապըստամբեցան՝ Թշնամի եղեն ամենեցուն, մանաւանդ Ռուսաց: Ուստի 'ի 1770 տէրութիւն Ռուսաց հնարագիտութեամբ իւրն կալաւ զԽօշօնին, և առեալ զքաղաքն՝ եբարձ զիշխանութիւն նոցա. և զմեծ մասն փոխադրեաց յերկիր Թամանու, որք այժմ կոչին Չէռնօմօռսքէ խազախք (582). իսկ այլք ոչ կամելով հնազանդիլ Ռուսաց՝ ցրուեցան. ոմանք 'ի մօրուսաւոր խազախաց, որք կոչին Լնար նողանո Թողին զազգ իւրեանց և չոքան առ Օսմանեանս և բնակեցան 'ի Դունա, և 'ի Չարշամպա (Պետ. 81):

ԱԼԻՇԿԻ

383. Արդ՝ Թողեալ մեր զերկիր Զափօռօժքի խազախաց՝ մտաք 'ի նաւ 'ի Խերսոնէ, անցաք ընդ լայնարձակ գետն Տնեբէր, և մտեալ 'ի բազուկ ինչ երկայնաձիգ՝ նաւեցաք 17 վերստ, մինչև հասաք յԱլէշկի գիւղաքաղաք. ուր ելեալ 'ի ցամաք՝ մտաք յընդարձակ աւազուտն: Աստանօր տեսաք զարմանալի աւազաբլուրս, և ընդարձակ խորափոս, յորս պատսպարին 'ի ձմերան հազարաւոր ոչխարք, և կերակրին 'ի բուսոց անտի: Եթէ ոչ էին այս պատսպարանք՝ 'ի կորուստ գնային ոչխարքն ոչ միայն յերեսաց ցրտոյ, այլև 'ի հողմոց, որք յափշտակեալ երբեմն տանին Թափեն զնոսա

՚ի սեաւ ծով ։ Այս աւազուտ գնայ ընդ երկայնութիւն Տնեբէր գետոյ ՚ի քաղաքն միլոնս . իսկ ըստ լայնութեան հասանէ մինչև յՕագաքու . որ Թուի պատճառեալ ՚ի ջուրց անտի, երբ բարձրացեալ էր Պոնտոս և ծած-կեալ զքաղաքն տեղիս ։ Այս ընդ բանիլ բերանոյ Վոսփորականին՝ ծովն յետո դարձաւ, և մնաց աւազն ։ (Տես ՚ի Պոնտոս 6 ։) Յետ այսորիկ մնաք ՚ի մեծ ա-նապատն Նօղայ Թաթարաց՝ կոչեցեալ Օչու խուրտ . զորմէ գրեմ (566) . և ապա հասաք ՚ի Պռաւրիա ցամաք կղզին Խրիմու, ուր բնակեցան Նոգայք ՚ի ժամանակս Դ՚ենալացւոց՝ յետ հարկանելոյ Ջարմազանին զՆոյ ։ Տես ՚ի Ղրիմ (502) ։

ՏԱՒՐԻԱ

ՈՐ Է

ՑԱՄԱՔՆ ԿՂԶՒՈՅ ԽՐԻՄՈՅ

384. Այս հռչակաւոր Թերակղզի գտանի 'ի մէջ 51°. 9'. և 53°. 44'. ըստ արևելեան երկայնութեան. և 'ի մէջ 44°. 44'. և 45°. 59'. ըստ հիւսիսային լայնութեան, ունի շրջապատ իբր 700. մղոն, միայն նեղ պարանոցաւ Փերեկոպին կամ Օրին կցեալ ընդ Օզու խորուին: 'Ի հիւսիսոյ շրջապատեալ է 'ի Սասրխ և յԱզաւ ծովակաց. յարևելից 'ի նեղուցէն Սոսփորոսի. 'ի հարաւոյ 'ի սեաւ ծովէ. և յարևմտից 'ի մեռեալ ծովակէ: Ըստ Պլինիոսի (Դ. Ժ. 12.) և Ստրաբոնի (գիրք Է.) այս Թերակղզի եղ 'ի ծովէ, և ապա ընկալաւ զանուն 'ի բնակչաց եկելոց 'ի Տաւրոս լերանց Ասիոյ իբր 2000 ամօք յառաջ քան զՔՍ: Սոքա և յաւելուն ասել ընդ Դիոդորի, Թէ 'ի հնումն բնակէին 'ի սմ տաւրիկեցիք և սկիւթացիք 1514 ամօք յառաջ քան զՔՍ. նոյնպէս և Կիմմերցիք կամ Կիմմերացիք էին բնակիչք կղզւոյս. որոց անուանք առեալ են 'ի բառէս Գամէր. յն ապաստանուտ: Սկիւթացիք լեռնաբնակ էին. որք ապա տարածեալ ընդարձակեցին զտէրութիւն իւրեանց:

385. Ըստ այլոց Տաւրիկեցիք էին վայրենի ժողովուրդ լեռնաբնակք. ապա 1700 ամօք յառաջ քան զՔՍ Թագուհին Ամազոնաց եկն զօրօք յայսկոյս Տանայիսի կամ Տօնաւիսի եհաս 'ի Տաւրիա, և օրինադրեաց նոցա պաշտել զԱրէս չաստուած և զԱնահիտ, անուանելով զայն Դից Տաւրոպոլեան. իսկ Կիմմերացիք էին ինքնագլուխ ժողովուրդ ձգեալ 'ի սեաւ ծովէ մինչև ցԲալդիկ: Իսկ ըստ ոմանց հաստատուն եղեն անդ և Սիրմանք եկեալք 'ի Պարսից, որք և պաշտէին զանն Արմէն անուն: Յետ նախնի Սկիւթացիք գալով փա-

խուցեալք 'ի Սինոպէ արքայէն Պոնտոսեանց՝ ստէպ արշաւէին 'ի Դաւրիա . այլ ոչ կարելով հալածական առնել անտի զԿիմմերացիս՝ պատսպարեցան 'ի լերինս, և կոչեցան Դաւրիկեցիք :

386 . Ըստ Հերոդոտոսի նախնի Սկիւթացիք բնակէին 'ի մէջ Տնեստեր և Դանուբ գետոց . ուրեւ պաշտէին զԱրէս չա̃ծ , յորոյ 'ի պատիւ կանգնեցին մեծ սեղան և զոհէին 'ի վերայ նորա հարիւրաւոր գերիս 'ի Թշնամեաց , ըմպէին զազանաբար զարիւնս նախկին զոհելոց , ապա հանեալ զմորթս Թշնամեացն ծածկէին զգլուխս իւրեանց : 'Ի ժամանակս Պղուտարքոսի ոչ գիտէին զերաժշտութիւն , բայց ունէին զպխտանիս . զգեստ նոցա էր մորթ կենդանեաց . գործի նոցա էր աղեղն . վայր նոցա էր անտառ , և բնակարանն սայլ . Թփկնաւէտ էին և քաջաղեղն, հեծեալ 'ի ձի արշաւէին ընդ լերինս . արհամարհէին զոսկի և զականս պատուականս : Կանայք նոցա հաւատարիմ էին . և մեծ եղեռն համարէին զանհաւատարմութիւն ամուսնական : Հնարեալ էին զարուեստս կտաւագործութեան և երկաթագործութեան : Այլ իբրև եհաս անդ հին հատուածն Յունաց՝ փոխեցին զվայրս իւրեանց , և ուսան զքաղաքականութիւն :

387 . Մշակք նախնի Դաւրիկեցւոց ամ ըստ ամէ առնէին տօն խրախութեան մեծամեծաց . ծերք կարգ ըստ կարգի բազմէին . մեծարու անձինք նստէին 'ի սեղան իշխանին , իսկ երիտասարդք պար առեալ զսեղանով կային յոտս : Ընդ տալ ուրուք նշանաւոր ձայնի ամենեքեան միաբանգամայն յոտն ելանէին . իշխանն յայնժամ առեալ բաժակ 'ի ձեռին՝ մերձեցուցանէր 'ի բերան իւր , և Թանայր զշրթունս իւր , ապա տայր կաղգաւ նոցա միայն , որք սպանեալ էին զոք 'ի Թշնամեաց : Ասուի Թէ այս հեղանիւթ Թանեալ էր արեամբ Թշնամեաց , յորում գոյր կաթն՝ հող և մեղր . զի գտանի ցարդ նշան այսպիսի արարողութեան առ Սկիւթացիս : Իսկ հանդէսն կատարէր՝ գովելով 'ի վախճանի զերևելի գործս քաջութեան , զոր արարին 'ի նմին ամի :

Գուշակութիւն յոյժ յարգի էր առ նոսա՝ ըստ աւելորդապաշտութեան , իսկ գուշակք էին կարի սակաւ . յամենայն դժուարինս դիմէին առ գուշակս՝ գնալով յուխտ 'ի վերայ գերեզմանաց նախնեաց իւրեանց : Արդնուին

դնելով զձեռս 'ի վերայ գերեզմանաց նախնի քաջա-զանց այնպիսի երկիւղածութեամբ, զի ոչ ոք համար-ձակէր երդնուլ ստութեամբ: Երկու անձինք այնպի-սի սիրով կապէին ընդ միմեանս, զի մինչև ցմահ մնայէին անբաժան. այլ հազիւ ուրեք երեք անձինք. որոց յա-ջողութիւն և դժբաղդութիւն հասարակաց էր:

Յորժամ երկու պատանեակք կամէին կապիլ ընդ միմեանս սիրով՝ նախ յերկար փորձէին զհաւատարմու-թիւն իրերաց. ապա հաւաքէին զընտանիս իւրեանց առաջի ծերոց և երդնուին մեռանել անվեհեր 'ի վ՟ մի-միանց: Յետոյ գայլախազ քարիւ ծակէին զաջ թևս և հեղուին զարիւնս 'ի մի աման. յոր և մխէին տէգ մի, ապա փոփոխակի ըմպէին՝ կիսով չափ մին, և կի-սով չափ միւսն:

Ունէին և բարոյական սկզբունս ինչ, որով ցարդ-կրթեն զմանկամարդս. ա. Ընթանալ զհետ շաւղաց ծնողաց իւրեանց և մի բնաւ հեռանալ 'ի վարուց նոցին: բ. Ոչ ինչ բնաւ ոհաձիլ ընդ սովորութիւնս նախ-նեաց: գ. Խոհեմութիւն համարիլ զայն որ թուի 'ի սկզբան դժուարին. և սրբազան համարիլ զայնպիսի գործողութիւն օգտակար, որով անուանի եղեն նախ-նիք իւրեանց:

Ազգ Տաւրեաց:

388. Պատմէ Հերոդոտոս՝ թէ ընդ թագաւորու-թեամբ Ալատտեսի որդւոյ Սիկեռի Կիմմերացիք հալա-ծեցան յերեսաց Սկիւթացւոց: Յասոն հանդիպեալ 'ի Տաւրիա, ետես զի զոհէին զմարդիկ 'ի տաճարն Արտեմեայ, ուր Թոաս եղև մեծ զոհագործ: Պատ-միչք Ռուսաց ասեն, թէ 'ի ժամանակս Արգոնաւոր-դաց 1200 ամօք յառաջ քան զՔ՟Ս՟ Տաւրիա ծանօթ էր Յունաց. և այնուհետև բացաւ ծովային ճանա-պարհ և եղև երևելի յոյժ, և բնակիչքն լուսաւորեալ 'ի Յունաց անտի՝ քաղաքական եղեն: Ապա այնու-հետև հիմնարկեցին Յոյնք փոքր Ասիոյ զՊանդիկա-փէոն կամ Կերչ, զԹէոդոսիա, և զԽերսոն իբր 500 ամօք յառաջ քան զՔ՟Ս՟, որք եղեն առանձին հասա-րակապետութիւնք. և առաջինն կոչեցաւ Վոսփորական տէրութիւն. զորմէ գլնի (551):

389. Արդ Քերսոնացիք էին Հասարակապետութիւն 'ի հարաւային կողմն Թերակղզւոյս, որք ծաղկեցուցին զՔերսոնն վաճառականութեամբ և շինութեամբք մինչև ցՄիհրդատ և անդր: Սոքա ըստ Պլինիոսի էին 'ի նախնի Թրակացւոց ազգի, որք զօրացան 'ի Հերակլիա (Պոնտ. 49.), և անտի անցեալ ընդ բերան Սևաստոբօլի՝ շինեցին զայս քաղաք Քերսոնն, և այնչափ անուանի եղեն, մինչև ձգեցին զՅոյնս 'ի քաղաք իւրեանց:

390. Վոսփօրացիք բնակեցեալ էին յարևելեան կողմն Տաւրիոյ 'ի նեղուցն Կերչէ. և շինեցին զերկու երևելի քաղաքս, զՊանդիկապէոն 'ի կողմն Եւրոպիոյ, և զՖանակօրիա 'ի կողմն Ասիոյ (538. 44). որոց առաջին թագաւոր՝ կոչեցաւ Արքէնակտէս իբր առաջին գլուխ. 480 ամօք յառաջ քան զՔ.Ն:

391. Իսկ Միլեսացիք շինեցին զԹէոդոսիա և հետզհետէ այնչափ զօրացան, մինչ զի Սօթիրոս թագաւոր Վոսփորոսի չկարաց յաղթել նոցա: Սակայն ամենեքեան յետոյ անձնատուր եղեն հզօր արքային Պոնտոսի մեծին Միհրդատայ 100 ամօք յառաջ քան զՔ.Ն: Արդ այնուհետև արշաւեցին Գութք 'ի Տաւրիա և բնակեցան Խազարք 'ի լերինս. առ որովք յութերորդ դարու ծագեցաւ լոյս քրիստոնէութեան յայս թերակղզի. իսկ յմետասներորդ դարու կայսերք Յունաց տիրեցին Քերսոնի: Երկոտասաներորդ դարու բաժանեցաւ տէրութիւն Յունաց 'ի փոքր Հասարակապետութիւնս, որք տիրեալ էին ծովեզերեայց Տաւրիոյ: Յետոյ Սարմատացի Թաթարք մտին 'ի Թէոդոսիա: Երեքտասաներորդ դարու վանեալ զնոսա՝ տիրեցին Ճենովացիք Թէոդոսիոյ և այլոց երևելի վայրաց: 'Ի սմին ժամանակի զօրացեալ էր մեծ ինքնակալն Թաթարաց Ճինկիզ խան. ուստի Թաթարք մտին 'ի Խրիմ և տիրեցին հիւսիսային մասին. այլ ոչ կարացին առնուլ զնաւահանգիստս և զբերդաքաղաքս 'ի Ճենովացւոց մինչև ց1454. և այնուհետև Թաթար խանք տիրէին 'ի Խրիմ, զորոց ճշգրիտ պատմութիւն համառօտեսցուք 'ի գլուխ նոցին:

Թաթարք խանք։

392. Մեծ նշանաւորն Թաթարստանու Չինկիզ խան էր Թեմուճին կոչեցեալն. այս անուն թագաւորական գա-րին, որ առ նոսա էր անուն պատուոյ. իսկ զի նախնիք նորա երկաթագործ էին, և հնարեցին առնել զերկրագործութիւն, արդ և ցեղ նորա դարբին կոչեցաւ։ Սորա ի սկիզբն տարւոյ իւրեանց շինէին քուրայս, յոր երթեալ զերկաթ ջերմացուցանէին, և առա հանեալ դնէին ի վերայ սալին, և պար առեալ երգէին և զոհութիւնք հարկանէին զայս հանդիսաւորս։ Նա՝ Չինկիզ ծնաւ յամի տն. 1154. և ի ծնանելն զատու ի ձեռին զունդ արեան, զոր գուշակ մեկնեցին՝ թէ արեամբ ունի յաղթել աշխարհի. Սորա անդրանիկ որդին էր Թուշի խան. որ եհաս զօրու ծանու մինչև ցՏնեբեկեր-զեր, և մեռաւ անդ ի 1226. վեց ամսովք յառաջ քան զհայր իւր։ Թուշի ի բազմաց նորա նշանաւորն է բարե-հիւր. սորա որդին Պաթախան արշաւեաց ի Ռուսաստան, ի Լեհ, ի Մաճառս, և ի Պուլղարիա. հալեալ ի բազում վայրս՝ ապականեաց, և մինչ կամէր երթալ ի Կոստանդնուպօլիս մեռաւ՝ ի 1256. որում յաջորդեաց եղբայր իւր Պերեքէ խան. սա ընդունել զմահմետականութիւն՝ թողեալ զհայրենի կռապաշտութիւն։ Յետ սորա Մանկու Թէմուր խան թոռն Պաթու խանին յաջորդեաց. սորա Թուտայ, Թօխթա, Ուզպէկ, Ջանիպէկ, Պէրտիպէկ և այլք հետզհետէ մինչև ցՀաճի Գէրէյ խան. զորս համարեն 58։

393. Նոյն Հաճի Գէրէյ համարի նախահայր խանաց Խրիմու, զոր ի մանկութենէ իւրում իբրև կամէին թշնամիքն սպանանել՝ գիւղական մի անուն Գէրէյ կամ Կիրայ զերծոյց և պահեաց յանձանօթս։ Նա յետ խաղաղութեան կամեցան իշխանք զնեղ խան ի ցեղէ Չինկիզեան, որ յանյայտ նստեալ էր. յետ բազում քննութեանց գիւղականն յայտնեաց զմանուկն այսու պայմանաւ, զի և անուն իւր ընդ նմին յիշեսցի մինչև ցվախճան ժամանակաց։ Եւ առ այս պատճառաւ խանք Խրիմու իշխելք ի ցեղէ անտի՝ կոչեցան Գէրէյ կամ Կիրայ։

Հաճի Գէրէյ տիրեաց առանձին ի Հիւսիսայնի

կողմն Խրիմու, որոյ որդիքն յետ մահուան նորա յա-րուցին բազում խռովութիւնս. Հուսկ յետոյ վեցերորդ-որդին Մէնկլի Գիրէյ յաջորդեաց հօրն՝ ձեռնտուութեամբ Ճենովացւոց. ընդ այն ոչ հաճեալ Թաթարաց՝ եղին խան զՀաջի Գիրէյ յամի Տն 1448 : Ի սմին ժամանակի միապետական ընդարձակ իշխանութիւն Գիրէյա-ցւոց բաժանեցաւ յերիս խանութիւնս՝ Խրիմու, Ա-ստրախանու, և Խազանու :

394. Սորա որդի Հաջի Գիրէյ խանին փեսայա-ցեալ էր Ծերին մերձաւորին կամ մերձաւորին՝ որ էառն զնա խարդաւանութեամբ 'ի կալանս Ճենովացւոց. ընդ որս ափսացեալ Հայկազեանց, որ էր այր տկար, կոչեաց յօգնութիւն զՍուլթան Մէհէմմէտ. և նա առաքեաց բազում նաւս զծովակալաւ իւր Կեդիկ Ահմէտ փա-շա, որ պաշարեալ էառ զԿաֆֆէ, և հանեալ անտի 20 հազար ոսկիս և 4 Ճենովացիս՝ նա և զՄէնկլի տա-րեալ 'ի Կոստանդնուպօլիս. և յետ 8 աւուրց կո-տորեաց զիշխանս Հայոց եղելոց 'ի Կաֆֆէ (507). ա-պա էառ զԱզաւ, զՊալըքլավա, և զայլ ծովեզե-րեայ քաղաքս. կործանեաց զքաղաքն Մանգուբ և զՄանգուպ, և զԻնկերման : Իսկ Սուլթան Մէհէմմէտ երդմնեցոյց զՄէնկլի Գիրէյ՝ այսուհետև չելանել ըն-դէմ 'ի խորհուրդ տանց հաւանութեան Օսմանեանց. և Մէնկլի Գիրէյ հպատակեալ նմա՝ եկն նստաւ 'ի Խրիմ. որում յաջորդեաց Մահմուտ խան այլ չարաչար՝ 'ի 1515 : Սորա յետ 9 ամաց մեռեալ, և յաջորդեաց կրտսեր որդի նորա Սէհէտ Գիրէյ. ապա Սահագէթ Գիրէյ, ապա Սաֆա Գիրէյ, և ապա Սահիպ Գիրէյ : Սորա 'ի ժամանակս մասնաւոր խռովութեան՝ արքային Օսմանեանց առաքեաց զՍինան բէյն իւր՝ կարգել խան զԴեւլէթ Գիրէյ կրտսեր որ-դի Մէնկլի Գիրէյ խանին. որում յաջորդեաց Մահմուտ Գիրէյ 'ի 1575. զոր սպանեալ եղին զԻսլամ Գիրէյ. ապա Գազի Գիրէյ, որ հրամանաւ արքային Օսմանեանց եւ պատերազմեաց ընդդէմ Ռոտոլֆոս կայսեր. սմա յա-ջորդեաց Սէլամէթ Գիրէյ 'ի 1607 : Սա յաղթեցաւ 'ի Պոկ-տանեայց Հեթմանէն Օսպօլօցի խազախաց, որք 'ի նմին ժամանակի ասպատակաւ զօրացան՝ մինչև անցին յԱ-սիա, և կողոպտեցին զՍինոպ և զՏրապիզոն :

395. Ի 1610. Մահմուտ խան նստաւ 'ի Պաղչէսա-րայ, որ էր 'ի ցեղէ Ճենկիզ խանին. բայց Սուլթան

Մհմէտ հալածական արար զնա. և եդ խան զՃանիպէկ. այս 'ի 1617 զՄահամէտ, որում յաջորդեաց Ինար խան. այս Պահադուր, և այս Մահամէտ որդի Սելամէթ Գիրէյի: 'Ի 1644 նստաւ Իսլամ Գիրէյ եղբայր Սելամէթին, որ համոզեաց զՄշմէնիցի Հեթման Կազակաց ելանել 'ի վերայ Կազիմիր արքային Լեհաց, յորմէ այնչափ վնասեցան Թաթարք՝ մինչև երդուաւ Իսլամ Գիրէյ այլ ոչ ևս պատերազմել ընդ Լեհաց:

'Ի 1665. նստաւ Է Մէհէմէտ Գիրէյ, որոյ ցեղ կաչէր Լռ. սա միացեալ ընդ Տօրօզ Հեթմանին՝ չոգաւ պաշարել զԿամենից. այլ արքային Օսմանեանց փոխեալ՝ եդ զՍելիմ Գիրէյ այր խոհեմ՝ քաջ և հմուտ պատերազմի, որ 'ի 1672 եառ զԿամենից. այս փոխեալ զնա՝ եդին զՄուրատ Գիրէյ խան, որ արշաւեալ 'ի Ռուսաստան՝ աւերեաց զբազում տեղիս. մինչև ստիպեցաւ Փէտօր Յօր Ռուսաց առաքել դեսպան 'ի Կոստանդնուպօլիս առ Սուլթան Մահմէտ՝ խօսիլ 'ի խաղաղութիւն:

396. 'Ի 1681. նստաւ Հաճի Գիրէյ խան, այլ անդէն փոխեալ՝ նորա նստաւ Սելիմ Գիրէյ. զի Սուլ. Մահմէտ պէտս ունէր քաջ զօրապետի՝ առաքել 'ի վերայ Վիէննայի. ուր իբրև յաղթեցան Օսմանեանք՝ Սելիմ անկաւ յիշխանութենէ, և եղև խան Գիէր Գիրէյ: Այլ իբրև ռուս իշխանն Կալիցին զօրօք եհաս յՕռ, Սելիմ դարձեալ հաստատեցաւ յիշխանութեան իւրում և վանեաց զՌուսս: Նոյն իբրև թագաւորեաց Սուլ. Սիւլէյման անկաւ յիշխանութենէ Սելիմ. ուր 'ի միջոցի 2 ամաց նստան 2 խանք. որով ոտնակոխ եղև Ղրիմ. մինչև 'ի միտ առին զզօրութիւն Սելիմին, և անդէն եդին զնա խան 'ի 1692. որ արար բազում ուղղութիւնս և զօրացոյց ոչ միայն զտէրութիւն իւր, այլ և զտէրութիւն Օսմանեանց: Ապա առեալ հրաման՝ չոգաւ 'ի Մէքքէ, և եղաւ նմա մականուն Հաճի և հայր ինքնակալաց: Սա յորժամ էր 'ի Մէքքէ՝ արշաւեաց որդի իւր 'ի Մօլդօվա. իսկ Զափօռօսքի խազախք ելին 'ի վերայ նորա, և հանեալ յՕռ՝ կողոպտեցին զբազում տեղիս:

397. 'Ի 1699. մեծն Պետրոս սկիզբն արար ցուցանել զքաջութիւն իւր 'ի կողմանս Ազախու. յաղթեաց Թաթարաց և զօրաց Սուլ. Մհմէտին: Յետ

պյատրիկ Սէլիմ խնդրեաց 'ի Սուլ. Մուստաֆայէ՝ ելանել յիշխանութենէ, և դնել զՏէվլէթ որդին, որ գոլով այր անընդունակ՝ փութով անկաւ յիշխանութենէ և եղև վերստին Սէլիմ, որ յետ բազում քաջագործութեանց և իմաստուն գործոց և օրինաց մեռաւ մեծանուն. և եդաւ մարմին նորա 'ի կարգս խանից 'ի Պաղչէսէրայ, որ և այնչափ զօրացեալ էր, մինչև կարէր հանել 250 հազար զօրս (433):

398. Յետ մահուան Սէլիմին սկսաւ նուազիլ իշխանութիւն խանից. քանզի Նօղայ Թաթարք, որք տարածեալ էին 'ի Դունայէ մինչև ցՍուպան գետ Չերքեզի՝ 'ի չորս բաժանեցան: Պուճագ Թաթարք մնացին 'ի մէջոցի Դունային և Տնեստրերին. Եէտիսան Թաթարք 'ի մէջ Տնեպերին և Տնեստրերին. Եամպօյլուք Թաթարք 'ի մէջ Ազախու և Տնեպերին:

'Ի 1704. Սուլ. Ահմէտ կացոյց խան զՂազի Կէրէյ այր բարեսէր, որ յետ սակաւուց մեռաւ 'ի ժանտախտէ, և նստաւ անդրէն Տէվլէթ Կէրէյ, զոր փոխեալ եդին զԳաբլան Կէրէյ՝ որ ապա ապստամբեալ յՕսմանեանց՝ ընկեցաւ յիշխանութենէ, և եղև երրորդ անգամ խան Տէվլէթ Կէրէյ: Սակայն յետ բազում պատերազմաց վերստին նստաւ Գաբլան Կէրէյ 'ի 1714. Իսկ յետ երից ամաց նստաւ Սաադէթ Կէրէյ. ապա անդրէն նստաւ Տէվլէթ Կէրէյ, որում յաջորդեաց Մէնկլի Կէրէյ որդի Գաբլանին, որոյ ընդդէմ ելին ազնուականք Թաթարաց՝ և յետ բազում խռովութեանց նորոգ ընտրեցին զԳաբլան Կէրէյ. այլ նորա խոհեմութեամբ հրաժարեալ՝ անդրէն հաստատեցաւ Մէնկլի Կէրէյ.

399. Յամի տն 1725. յունվարի 28 մեռաւ մեծն Պետրոս կայսր Ռուսաց, որ կտակաւ պատուիրեաց առնուլ զՂրիմ 'ի Թաթարաց, որպէս զի ազատեսցի Ռուսաստան 'ի վտանգէ նոցա: Իսկ 'ի 1730. անկաւ յիշխանութենէ Մէնկլի Կէրէյ, և նստաւ երրորդ անգամ Գաբլան Կէրէյ. և զկնի 5 ամաց անդրէն եկաց Մէնկլի Կէրէյ. որ և նորոգեաց զբերդն Օռի, և զբազում տեղիս Ղրիմու ամրացոյց, որք քանդեալ էին յաւուրս Գաբլանին: Ընդ սովաւ Լասսի Մառէշալն Ռուսաց անցեալ ընդ Արապատ՝ արշաւեաց 'ի Ղարասու և բազում քանդմունս գործեաց. և անաի

հասեալ 'ի Զօնղար զօրացն, և անդրէն արշաւեաց մերձ 'ի Կէֆէ (409)։

'Ի 1740. մեռաւ Աննա Թագուհին Ռուսաց. և Մէնկլի Գիրէյ անկեալ յիշխանութենէ՝ եղև խան ը Սելամէթ Գիրէյ. այլ անդէն հալածական եղև յերեաց Թաթարաց և յաջորդեաց ը Գապլան։ Սակայն դար- ձեալ զօրացաւ Սելիմ, որում յաջորդեաց Արսլան Գիրէյ։ 'Ի սմին ժամանակի իշխանութիւն խանից այնպէս լցեալ էր խռովութեամբ, մինչև յամենայն ամի լի- նէր փոփոխութիւն խանից։ Նոյն 'ի 1755. նստաւ Հալիմ Գիրէյ, որոյ մայր՝ գոլով դուստր 'ի դիւզականաց Ռուսաց՝ կոչէր Նազլէ. որ լի էր չարութեամբք, մին- չև իշխէր և որդւոյն։ Յետ սորա նստաւ Սաղըէթ Գիրէյ, որ սակայն զհայրն մերժեալ, որում յաջոր- դեաց մեծ եղբայր իւր այր գազանաբարոյ. և սմա յա- ջորդեաց Գիրիմ Գիրէյ, որ խոհեմութեամբ կառավա- րեաց զտէրութիւն իւր։ Սմա յաջորդեաց Սողոմոն խան այր բանաստեղծ և քաջ խոհական, որ 'ի 1768. տապալեաց զԹաթարս, որք ասպատակեցին զԲալթա քաղաք Լէհաց (306)։ Նոյն մեծամեծ խան տաղեալ 'ի խռովութեանց ժամանակին՝ չոգաւ 'ի Պետրբուրգ, ուր 'ի ձեռն Սիրոպոլոս բժշկին արբուցին նմա թոյն մահու։

400. 'Ի 1769. յաջորդեաց Տէվլէթ Գիրէյ Թոռն Գիրիմի՝ այր ոկար և վատասիրտ. որում յաջոր- դեաց յետ 10 ամսոց Գապլան, ապա Սելիմ։ Յաւուրս սորա Ռուսք անցեալ ընդ Օրքափու՝ մտին 'ի Խրիմ, և առին զԿէֆէ, զԳէօզլէվէ, զԿերչ և զԹաման. ուստի Սելիմ չոգաւ 'ի Կոստանդնուպօլիս։ Յայն- ժամ սկիզբն եղև դժնդակ պատերազմացն 'ի մէջ Ռուս- աց և Օսմանեանց։ Նոյն 'ի 1771. նստաւ Սահիպ Գիրէյ. և անդէն հաշտեցաւ 'ի Կոստանդնուպօ- լիս, թէ Թաթարք ապստամբեցան յՕսմանեանց, և Ռուսք ուղեցին Խրիմու։ Իսկ 'ի 1775 'ի խօսիլն զհաշտութիւն՝ հաստատեցաւ, թէ Թաթար խանք անկախ լիցին յՕսմանեանց և յայլ տէրութեանց. ընդ որ ոչ հաճեալ Թաթարաց և Օսմանեանց՝ առաջ- նորդութեամբ Մուրզայից ընկեցին յիշխանութենէ զՍահիպ Գիրէյ և եդին զՏէվլէթ Գիրէյ. առ որ առաքեաց արքայն Օսմանեանց զաւագորական մուշտակն պատուոյ, զփակեղն և զսուրն։ Ընդ այս դժուարացեալ Ռուսաց

ձեռնատու եղեն Շահին Գիրէյի, որ գունդ կազմեալ 'ի Թաթարաց և 'ի Չէրքէզից՝ զօրութեամբ Ռուսաց բռնադատեաց զՏէվլէթ Գիրէյ հրաժարել յիշխանութենէ. զի արդէն 'ի ձեռս Ռուսաց էին բերդորայք Օռի, Գըլպուռունի, Կէրչի և Ենիքալէի. ուստի անաշխատ տիրեաց Խրիմու: Այլ անդէն և անդ Թաթարք ապստամբեցան ընդդէմ Շահին Գիրէյին 'ի 1777. և բերեալ 'ի Չէրքէզէ զեղբայր նորա զՊահատըր Գիրէյ եդին խան: Իսկ Շահին Գիրէյի բռնադատեալ 'ի խռովութեանց աստի՝ փութով փախեաւ 'ի Գէֆէյէ 'ի Կէռչ նաւաւ. և անտի զերծաւ յԱզախ, ուր զօրացեալ զօրօք Ռուսաց՝ դարձաւ անդրէն 'ի Խրիմ, և նուաճեաց զապստամբսն, կոտորելով զբազումս 'ի նոցանէ: Հուսկ յետոյ Սէլիմ Գիրէյ անուանեցաւ խան 'ի կողմանէ Օսմանեանց, և Շահին Գիրէյ 'ի կողմանէ Ռուսաց, որք պատերազմեալ մերձ 'ի Պալըգլավա՝ Սէլիմ փախեաւ 'ի Սինոպ. և Շահին Գիրէյ մնաց 'ի Խրիմ:

401. Այլ 'ի 1779 ապրիլի 21. Շահին Գիրէյ հանդիսիւ շնորհեաց զտէրութիւն իւր Թագուհւոյն Ռուսաց. ուր ապա Մուրզայք և գլխաւորք Թաթարաց երդուան մնալ հաւատարիմ տէրութեան Ռուսաց: Իսկ 'ի 1784. հաւանեցան նաև Օսմանեանք. որով այս ցամաք կղզի անկաւ ընդ իշխանութեամբ այսր տէրութեան մինչև ցայսօր. և այնուհետև սկսան նստել յԱգմէչիդ քաղաք կուսակալ իշխանք Ռուսաց՝ Կոստէնտինոս անուամբ, որոց իշխանութիւն ձգի 'ի Տնեբէր գետոյ մինչև ցՍոսփորոս (542):

Կարգ Մըրզայից:

402. Ըստ պատմութեան Թաթարաց՝ բնիկ տեարք Խրիմու համարէին Մըրզայք կամ Միրզայք սերունդք հին ազնուական Մողոլաց, որոց խանն տայր ընծայս և 'ի պատուի ունէր, նմին իրի զօրաւոր էին: Սոքա բաժանէին 'ի չորս կարգս. առաջին և ազնուագոյնն կոչէր Շիրին մըրզա. երկրորդն Պարըն մըրզա. երրորդն Սուճաուտ մըրզա և չորրորդն Արղըն մըրզա. որք ցարդ անխառն պահեն զցեղս իւրեանց. իսկ բառս Մըրզա կրճատեալ է 'ի բառից աստի Էմիր զատէ: Պռան յեր-

կրորդ կարգի և ազնուականք Խոճէի Խուլ ձայնեալք . որք արդեամբք ծառայելով խանին և տէրութեան ելանէին 'ի կարգ ազնուականաց ։

Սոքա ամենեքեան էին 'ի պաշտաման Խանին , բայց գլխաւորագոյնք էին երեք , որք կոչէին Խան զատէ . Պալղա Սուլդան էր երկրորդ խանին՝ որ նստէր յԱքմէջիդ և ունէր ընդարձակ իշխանութիւն ։ Օռպէկի Սուլդան նստէր յՕռ և ժողովէր զեկամուտս աղի . Նուրըատին սուլդան նստէր յառաջագոյն մերձ 'ի Խարասու և 'ի Պաղչէսէրայ ։ Մեծ մասն Թաթարաց է յառաջին Մողոլաց անտի , որք այժմ են թուլամորթ և հեղգ 'ի գործ . և մի մասն են 'ի Նօղայ Թաթարաց եկելոց 'ի կողմանց Անափայի , որք աշխատասէր են (567)։ Թող զսերեալս 'ի Չէրքէզից , որք քան զամենեսեան բարեձև են և քաղաքական (534)։

ՀԻՒՍԻՒՍԱՅԻՆ ՑԱՄԱՔԱԿՈՂՄՆ ԽՐԻՄՈՒ

403. Ըստ բերման ընթացից մերոց զառաջինն համդիպեցաք 'ի հիւսիսային ցամաքակողմն Խրիմու , որ 'ի հնումն շրջապատեալ կարծի յամենայն կողմանց 'ի ջրոյ . ապա բուռն հողմունք յափշտակեալ զաւազուտն Տնեբերայ՝ լցին զայս վայր հիւսիսային մասին , և ձևացաւ Պարանոցն ցամաք . ըստ որում յիշէ և Պլինիոս ։ Ըստ սմին օրինակի ձևացաւ ասեն բարակ լեզուն Ճինիչքէի , որ չէ հեռի աստի (560) . ըստ որում ցուցանէ գոյն և որպիսութիւն ներքին և արտաքին աւազակուտից ։ Լայնութիւն այսր պարանոցի է 8 վերստ՝ խրամ բացեալ ծովէ 'ի ծով . և 'ի միջոցի անդ բերդ զօրաւոր Օր-գափի ձայնեալ ։ Այս խրամ լայն և քարաշէն յարևելից կուսէ հասանէր 'ի ծովն Ազախ , և յարևմտից 'ի ծովն Սև . երբեմն ջուր ծովուն բարձրացեալ հասանէր մինչև ցբերդն ։

ՕՌ ԳԱՓՈՒ

404. Ըստ Յունաց կոչի Տափրոս և ըստ Ռուսաց Փէրէքօփ որ խրամ կամ ջրանցք , ուր 'ի հնումն գոյր պարիսպ համդերձ աշտարակօք և պատնէշ զօրա-

ւոր ընդդէմ ակիւնթացւոց , զոր Յոհնք Սէճ - Պէխօս այսինքն Նոր պարիսպ ձայնէին ։ Ապա շինեցին Օսմանցիք փոքրիկ բերդ , այլ զօրաւոր՝ ամրացեալ պարսպօք և խրամով . ուր անցեալ ընդ կամուրջն շարժական՝ մտաք 'ի բերդն ընդ դուռն կամարաւոր . ուրանօր չիք երևելի ինչ բաց 'ի հողաբլրոց յամրութեն բերդին ։ Աստի տեսաք միանգամայն զծովն Մեռեալ և զԱզովու յաջմէ և յահեկէ 'ի ծայրս խրամոց ։ Առ երի բերդին է դուռն երկաթի՝ մի միայն անցք ցամաք կղզւոյն, ունելով յաջ և յահեակ խրամ լայն և խորին, որ այժմ անխնամ մնացեալ կայ . որոյ լայնութիւն է 12 գրկաչափ , և խորութիւն 20 ոտն ։ Որպէս և դուռնն կործանեալ կայ և 'ի տեղին կառուցեալ կամուրջ և վայր պահապանաց . արտաքոյ է գիւղաքաղաք նոյնանուն , ուր յաճախեն անցաւորք ։ Յամի Տն 1698 Ռուսք տիրեցին Փէրէգօբին . այլ անդրէն յետս դարձուցին ։ Աստ նստէր երկրորդ որդի Խանին Օռ պէկի . այլ չունէր իշխանութիւն 'ի վերայ բերդին . քանզի Օսմանեանք իշխէին ամենայն բերդորէից Խրիմու ։

ԱՐՄԵՆՍՔԻ ՊԱԶԱՐ

405 . Ի գիւղաքաղաք միակարգ երկայնաձև , ուր յաճախեն ամենայն անցաւորք . որպէս և մեք օթագայեցաք յետ յառաջ խաղալոյ 5 վէրստ ։ Հայք 'ի քաղաքիս են 60 տունք , որք ըստ մեծի մասին եկեալ են 'ի Նախիջևանէ , և ունին եկեղեցի նորաշէն հանդերձ կաթուղիկէիւ յանուն Նշման Ածածնին , որ ունի բակ և տունս ։ Տեսաք յիշատակարան 'ի վերայ հիւսիսային դրանն այսպէս . * Յիշատակ է որ Նշան
» քասպր կողակցին փաշայ խաթ . զաւակացն Մար-
» տիրոս սարկաւագին ‖ ։ Գլխաւոր բնակիչք քաղաքիս գոլով Հայք՝ կոչեցաւ 'ի Ռուսաց Արմենսքի պազար այսինքն Հայոց տօնավաճառ . զի 'ի չորեքշաբաթի լինի աստ տօնավաճառ սակայն բազում են և Թաթարք . գոն և Հրեայք գարայիմք , որք ունին քարուկիր սինակոկայ կամարաշէն , որպէս և Թաթարք ունին մզկիթս և իջևանս ։ Աստի 4 . վէրստ յառաջ խաղացեալ՝ տեսաք զընդարձակ աղեհանն , որ ունի զընտիր աղս և առաքէ 'ի Ռուսաստան ։ Յաճախ տեսաք յայսմ

ափն կողմանս զանազան աշխարհաց, որք ըստ ամանց ունին հաղորդակցութիւն ընդ Ազախ ծովուն։ Ձախակողմեան երկիրն բարեբեր կոչի Ձենդար. որ հասանէ ցԱզախ. իսկ աջակողմեանն է երկիր Թարխանա. ուր է ականջ մեռեալ ծովու, որ երթայ մինչև ենցկայն սար Կեօզլեւի (449)։ Ուր երբ բարձրանայ ծով, ջուրն ծածկէ զայս երկիր, և երբեմն բազում վնաս գործէ՝ խորտակելով զնաւաշինս։ Նոյն ուղղեալ զընթացս մեր դէպ յՕգմեջիդ՝ հեռի 15 վերստիւ անցաք Է քարաշէն կամուրջ. ուր է ականջ մեռեալ ծովու հարաւային միացեալ 'ի ցամաք անդր։

ՑԱՄԱՔԱՑԵՂԻՔ ԽՐԻՄՈՒ

406. Աւարտելով զննել զառափնեայ զցամաքային վայրս Խրիմու՝ ուղղեցաք զընթացս մեր դէպ ուղիղ ընդ հարաւ, և շրջագայեալ 'ի բարեբեր գիւղօրէս Թաթարաց և 'ի գեղեցիկ դաշտավայրս ծածկեալս անտառովք՝ տեսաք զհիւրասիրութիւն Թաթարաց։ Հուսկ յետոյ հասաք 'ի Խարասու միջավայր քաղաք Խրիմու և 'ի մերձակայ գիւղօրէս, որք էին կալուածք Մուրզայից. ուր իբրև ինքնագլուխ տիրէին նոքա 'ի ժամանակս Խանից։

ԽԱՐԱՍՈՒ, կամ ԽԱՐԱՊԱԶԱՐ

407. Այս քաղաք բազմամարդ և անուանի վաճառականօք ամենայն ազգաց կառուցեալ 'ի միջավայրի Թերակղզւոյն, ուր դիմեն Թաթարք և քրիստոնեայք յամենայն կողմանց՝ վաճառել և գնել զպիտոյս. մանաւանդ յաւուրս երկուշաբաթի, յորում լինի Պազար կամ տօնավաճառ 'ի հրապարակին ծայր քաղաքին յընդարձակ հրապարակի, որ կոչի Տօղաղար։ Իսկ քաղաքն է ցածագոյն՝ շրջապատեալ 'ի լերանց, որով յամարան տիրէ ջերմութիւն, այլ օդն չէ վնասակար. նոյնպէս և 'ի ձմերան թխրաթեք փողոցք տղմալից առնեն զքաղաքն։ Տունք հասարակ ժողովրդեան են անշուք. այլ տունք մեծամեծաց՝ բարեշէնք։

Նշանելի է շուկայն որ բազում կրպակօք վաճառականաց և արուեստաւորաց. են 'ի նմա մեծամեծ իջևանք սակս օտարականաց. Թող զվաճառականացն ու-

տնեաց և պտղոց, յորս գտանին ամենայն կարևորք քաղաքականաց և գիւղականաց։ Կան 'ի սմա բազում գործարանք խաղախորդաց, օճառագործաց և մոմեգինաց։ Չորս են եկեղեցիք 'ի քաղաքիս. Կաթողիկաց, Ռուսաց, Հայոց, և Յունաց. 23 մզկիթք Թաթարաց. կրկին սինակոկայք, և գպրոց Հրէից, որպէս և գպրոց Թաթարաց. 7 ջրաղացք և 1300 բնակարանք. իսկ բնակիչք են աւելի քան զտասն հազար։ Բազում են Թաթարք՝ գլխաւոր բնակիչք քաղաքիս. որք 'ի ժամանակէ անտի Ճինկիզ խանին մնացեալ են նախ 'ի կողմանս Ռուսն. և ապա բազումք աստ ժողովեալ՝ զառաջինն հիմնեցին անտակս յերկուսին կողմանս Կարասու գետոյն, և գիւղաքաղաք ձևացուցեալ՝ անուանեցին Կարասպազար, ըստ որում ցարդ անուանեն։ Պատմեն ես թէ Թաթարք զառաջինն հիմնեցին գիւղաքաղաք յարևելեան ծայր քաղաքին, առերի մեծի ապառաժին, որ կոչի Աքքայա, և ապա աստ փոխադրեցան (420)։

408. Այս քաղաք գրեթէ յերից գետոց շրջապատի. Կարասու գետ ելեալ 'ի հարաւային լերանց գայ յերկուս բաժանէ զքաղաքն, և շրջան առեալ գնայ ընդ արևելս կոյս 'ի Սալղիր. Բիւռ գետակ գայ նոյնպէս 'ի հարաւային լերանց, և 'ի ծայր քաղաքին խառնի 'ի Կարասու. Սուրլու անցեալ ընդ հիւսիսային կողմն քաղաքին՝ Թափի նոյնպէս 'ի Կարասու արտաքոյ քաղաքին։ 'Ի հարաւային ծայր քաղաքին երկու վտակք բաժանին 'ի Կարասու գետոյ. մին մտանէ 'ի մի մասն քաղաքին և միւսն 'ի միւս մասն. և պարառեալ անցանեն ընդ քաղաքամէջն, և ոռոգեալ զգեղեցիկ պարտէզս տանց՝ երթան Թափին 'ի գետ անդր։ Արևելեան մասն քաղաքին է բարձրահայեաց և վայելչատիպ, այլ ոչ այնչափ բարեշէն՝ սակս աղքատաշէն բնակարանաց։ Սուր է բարձրադիտակ մեծ մզկիթն Կյանձամի քարաշէն և ընդարձակ, այլ 'ի ներքս անշուք. ունի բարձր մինարէ կրկին շէրիֆէիւք, զոր կառուցեալ է Մէնկլի Կէրէյ խան, որպէս ընթերցաք զյիշատակարանն 'ի վերայ վիմի եդելոյ 'ի ճակատ արտաքին դրանն այսպէս.

بیورمشدر رسول الله بو دنیا مومنه محنة. نصیب اولسون بو مقامیك
معمرلرینه جنة . . .

صاحب الخيرات والحسنات منكلى كراى خان دام ذكره فى محرم فى سنة ١١٤٠

قد وقع تعمير الجامع فى سنة الف ومأتان وخمسة وعشرون فى رجب

* Պու ճամիուշէրիֆլէրը ամէլիմալըլլահ պատը տուպնէա տա՛իմ ճէն-նէթ . Նասըպ օլսուն պու մաղամըն մուամիրլէրինէ ճէննէթ . . .
Սահիպիւլ խայրաթ վէլ խասէնաթ Մէնկլի Կիրայ խան տամ զիքրիհու շէրէֆ մուհարրէմ ֆի սէնէթի 1140 .
Գատ վագա'ա թա'միրիւլ ճամիի ֆի սէնէթի էլֆ վէ միէթան վէ խամսէթէն վէ ըշրուն ֆի րէճէպ (1225) .

Աստանօր է բնակարան Շէյխին և Մօֆթուից՝ որք յաւուրս ուրբաթու ժողովեալ 'ի մզկիթն՝ հարուստ մի երգեն պարառեալ շուրջ զՇէյխիւ ձայնելով Հու . և անընդհատ շարժեալ գլխով՝ այնչափ գոչեն, մինչև ոմանք թալկանան փրփրեալ բերանով . ռամիկք զայն փրփուր առեալ 'ի բերանոյ նոցա՝ օծանեն այնու : Աստի սկսանի ընդարձակ դաշտն գեղեցկագիր և հասանէ մինչև ցգերեզմանատուն Հայոց, ուր կայ աղբիւր ինքնաբուղխ և վտակ . առ որով անցանէ գետակն Պինար և անկանի 'ի գետն Խարասու : 'Ի վերին ծայր դաշտին 'ի բարձր կայի շինեցաւ հրամանաւ Կատարինէ թագուհւոյն ընդարձակ զինուորանոց, ուրանօր գունդ մի զօրաց կարգեալ 'ի պահպանութիւն քաղաքին և բոլոր Խրիմու անպակաս առնեն կրթութիւն . և յամարան անդ վրանաբնակ լինին :

'Ի ձախակողմն մզկիթին յառաջագոյն էր թաղ Հայոց Խրիմաղած կոչեցեալ, ուր այժմ սկսան նորոգ հիմնել բնակութիւն : Առ տեղեաւս 'ի հարաւային ծայր քաղաքին է զուարճալի պարտէզ Պիւլպիւլլի պահճէ, յորոյ 'ի միոյ կողմանէ անցանէ վերոյասացեալ վտակն Աղխ, և 'ի միւս կողմանէ Խարասու գետ :

Նաև 'ի ձախակողմն մզկիթին գոյ այլ թաղ կոչեցեալ Աճէմ մահալլէսի, ուր յառաջագոյն բնակէին Պարսկահայք : Աստի 'ի վեր է թաղն Չէօմլէկճի, ուր բնակէին բրուտք, և Յոյնք ունէին եկեղեցի : Առ տեղեաւս 'ի բլրի անդ կառուցեալ կայ քարաշէն մեծ կամուրջ Սէյտէր քէօփրիւսի յաւէտ 'ի դիւրութիւն անցաւորաց առ Թիկամէջ քաղաքին :

Այս Թաղ Հաղորդի ընդ բուն քաղաքին 'ի ձեռն Հին կամրջի կոչեցելոյ Զինճիլլի քէօփրիւ, զի 'ի հնումն յերկուց կողմանց շղթայ կապեալ՝ յայնկոյս անցանէին ընդ տախտակամածն, այլ յետ ժամանակաց կանգնեցին քարաշէն սոսս, և 'ի վերայ հաստատուն տախտակամած. առ որով անցանել Կյարասու գետ։ 'Ի վերայ միոյ 'ի միջին սեւից տեսաք փորագրեալ յիշատակարան այսպէս. ١١٤٣ تاريخ محرم ماه ٩٧ سنه Սէնէ 67 մահէ մուհարրէմ. Թարիխ 1143։ Որ առաջինն է 175 ամաց. իսկ երկրորդն՝ որ Թուի լինել նորոգութեան, 99 ամաց։ Զայս կամուրջ յաւուրս մեր վայելուչ նորոգեաց Ապտուլլահ Չելէպի հանդերձ քարաշէն սանդխովք, եդեալ 'ի միջավայրի յիշատակագիր նորոգութեանն օրինակ զայս.

دولة دنيايه قانع اولميوب عبد الله اغا عزتي دارينه رغبة ايليوب
ايتدى سخا

همه قبول ايده اثاری خيراتنی شها حشرايده كنديني و اولادينى تحت
اللوى

جاندلدن بورهمی بر دعا قلدی اگا كنديننك واولادينك يرلرى
اوجاق اوله

* Տէվլէթի տիւնեայէ գանիյ օլմայըպ ապտուլլահ աղա.
Իզզէթի տարէյնէ րաղպէթ էյլէյըպ էյթտի սախա.
Հէմ գապուլ էտէ ասարը խայրաթընը շահա,
Հաշրիտէ կէնտինի վէ էվլատընը թահթըլլիվա.
Ճանտան տիւրլիւն պու րահիմ պիր տուա գըլտը անըա.
Կէնտինինը վէ էվլատընըն եէրլէրի օճագ օլա ||։

409. Յայսմ մասին 'ի հարաւակողմն առ եզր Կյարասու գետոյն է եկեղեցի Հայոց՝ կառուցեալ յանուն սրբոյն Օգսենտիոսի, որ այրեցաւ 'ի 1735. յաւուրս Մէնկլի Կէրէյ խանին, երբ Ռուսք անցեալ ընդ Արապատ՝ հասին 'ի Կյարասու և այրեցին զքաղաքն։ Կային յայնժամ 'ի քաղաքին 6000 տունք. 38 մզկիթք. 2 եկեղեցիք Հայոց և Յունաց. նաև 50 ջրաղացք. Թող զայլ շինութիւնս (399)։ Սակայն Ռուանի հայ իշխան փողերանոցի հրամանաւ առեալ 'ի Խանէն՝ ետ վերստին

շինել։ Բայց յետ ժամանակաց իբրև ելին աստի Հայք՝ յափշտակեալ Թաթարաց զայս եկեղեցի փոխեցին 'ի մզկիթ մինչև ցդարձ Հայոց 'ի Աստարխանաւանէ. յայնժամ ապա սեպհականեալ նորոգեցին հանդերձ կաթուղիկէիւ։ Ներքին կողմն է անշուք և անձուկ, բայց ունի երիս փոքրիկ խորանս, և այժմ կոչի Աստուածածին։ Յիշատակարանն փորագրեալ կայ 'ի վերայ դրան յամի տեառն 1735. օրինակ զայս. * Մերա-
„ տին նորոգեցաւ սուրբ Օգնեա եկեղեցի. զի յա-
„ ռաջ հնացեալ էր. յետոյ վասն մեղաց մերոց այրե-
„ ցաւ. իսկ ծ̃ծայրին հրամանաւն և սիրոյ սուրբ եկե-
„ ղեցւոյս. վասն որոյ իսկ սեպհեպ եղև Աւետանի աղան
„ սորայ. բազում աշխատանս կրեաց մինչև աւար-
„ տումն նորա տանս ծ̃մ կողմանէ. իշխնի շերով թագա-
„ ւորի հրամանաւ շինեալ կատարեցաւ. յիշատակն
„ օրհնութեամբ եղիցի իւրեան որդւոյն և զաւակացն
„ և ծ̃մ զարմից կամ եօթնպորտին. եւս առաւել բա-
„ րի ծնողացն հոգւոյն ամէն. կամ Պ աբասուի եղեալ
„ ժողովուրդքս այր և կին ամենքեան օգնութիւն ա-
„ րարին մինչ 'ի աւարտումն սբ եկեղեցւոյս. ողորմի
„ իւրեանց ծնողացն. շատ և քիչ աշխատանք կրողացն
„ ամէն։ Սոյս սբ եկեղեցիս Փեթիհէն մնացեալ էր.
„ այս եղև թվին ՌՃՁԴՆ ։ Հանդէպ այսր դրան 'ի մէջ բակին տեսաք զգերեզման նահատակի՝ ուխտատեղի առաւօտեաց. 'ի վերայ տապանին փորագրեալ կայ պատկեր նորա և գիր.

* Սոյս շիրիմս է հանգստի.
„ 'Ի յերկրէն արևելցի.
„ 'Ի գիւղէն շրջըվանցի,
„ Նու է որդի Սգիզ պէկի.
„ Իւր անուննն է Ֆռանկուլի,
„ Քսան ամաց նահատակի.
„ Կախիւ մահուամբըն կատարի,
„ Վասն հաւատոյ սբ Ճշմարտի.
„ ՌՃՁ Թուականի,
„ Յունիսի ամսոյ մէկի ։

Վանատուն և դպրատուն կանգնեալ են 'ի բակի անդ եկեղեցւոյն. գտաք հին յիշատակարան, որ պատմէ թէ 'ի ժամանակս Նիկոլինեայ ձեռնեցին Հայք բնա-

կուԹիւն, եկեղեցի և վանս 'ի Պատրապազարն և 'ի լեռ-րինս (505)։ Նման ինչ Հայոց բնակին 'ի միւս կողմն գետոյն. և ընդ ամենայն լինին 200 տունք, յորոց բազումք են 'ի Հին քէֆեցոց անտի։

410. Յայնկոյս գետոյն է բուն քաղաքն Կարասու-Բազարու շինուԹեամբք տանց, իջևանաց և շուկայից, յորս երևելի է մեծ իջևանն բերդանման անուանեալ Տաշխան, որ 'ի միջավայրի մեծի շուկային 'ի բերանս քառեակ փողոցաց կառուցեալ կայ 'ի նախնի Թաթար մեծաւորէ՝ ամրաշէն պարսպապատ. 'ի վերայ պարսպին երևին մարտկոցք և ծակտիք պատերազմելոյ ընդ արտաքին Թշնամեաց։ Իսկ 'ի Ճակատս կրկին դրանց գոյ յիշատակագիր անուան շինողին, որ էր իշխան և միանգամայն Վէզիր Խրիմին, ըստ որում ցուցանէ առաջին տող ոտանաւորին. իսկ վերջին բառն Պինայի աղա է ԹուականՆ օսմանեան 1040 որ է շինուած 177 ամաց, այսպէս.

اصف دوری سفر غازی اغای داتا

ایلدی هندسه عقلیله خاني بنا

کوروب اتمامنی جلی عمارت کاهك

دیدی فتحی اوله تاریخی بنای اغا

* Ասֆը տէվրի սէֆէր ղազի աղայի տանա.
Էյլէտի հէնտէսէ ագլիլէ խանի պինա.
Կէօրիւպ իթմամինի ճալի իմարէթինէհին.
Տէտի Ֆէթհի օլա Թարիխի պինայի աղա ||։

Անուանի են կրկին շուկայք, Աղըն չարշի և Տէմիր չարշի, որք սկսեալ 'ի մեծ իջևանէ անտի ուղիղ հասանեն մինչև ցՀիւսիսային ծայր քաղաքին, յորս գտանին ամենայն տեսակք վաճառաց Անատօլուոյ և Ռուսիոյ։ Երևելի է արքունի դեղանոցն բարեկարգեալ 'ի պէտս զօրաց և ժողովրդեան բոլոր Խրիմու, որ յառաջ էր յԵնի գալէ (550). այլ յամի 1796 աստ փոխադրեալ զայն հաստատեցին յընդարձակ պալատի Ռօզէնպէրկ զօրապետին մինչև ցայսօր. ունի վայելուչ և մեծ պարտէզ, որ հասանէ յարևելեան ծայր քաղաքին, առ որով անցանէ Կարասու գետ։ Հանդէպ այսր պարտի-

զի է միւս գեղեցիկ պարտէզ մեծապատիւ Տէր Խոջա-չատուր Կանոնիկոսին Տուհայեան Կեսարացւոյ , թո-ղեալ յեկամուտ հոգաբարձու քահանայից մերոց ։

՚Ի վերին ծայր նոր շուկային է թաղն Աւուսաց և նորաշէն եկեղեցի նոցա քարաշէն և վայելչագիր յա-նուն սրբոյն Եղիայի կառուցեալ , առ որով գոյ բնա-կարան ինչ քահանայի ։ Իսկ եկեղեցի Յունաց է ՚ի քա-ղաքամիջի անդ նուիրեալ անուան սրբոյն՝ Նիկողայոսի , որ յառաջագոյն էր բաղանիք . ունի բարձր զանգակա-տուն նորաշէն և ընդարձակ բակ և ժամատուն , նաև դպրոց ։ Մերձ է մեծ հրապարակ քաղաքին , ուր է բնակարան պահապան զօրաց՝ Աղաղխոր ձայնեալ . առ որով է դատաստանատուն Հայկազն Կաթոլիկաց , և տուն քաղաքական կառավարութեան Փօլից անուամբ ։ Նոյն հրապարակ անջրպետ ՚ի մէջ անկեալ է միւս փո-քրիկ շուկային Նորոգ ձայնելոյ , ուր են կօշկակարք ։ Նա տեղեաւս է Մինակոկայ Հրէից և դպրոց և ընդար-ձակ թաղ նոցա ։ Ուր գոն իջևանք , մեծ մզկիթ Մու-թարաց , և բաղանիք . ևս և վերոյասացեալ դեղանոցն ։

Նորոյ հայկազն Կաթուղիկեայց Խսարաստու ։

411 . Յամի տն 1777 . յօգոստ . 20 . իբրև վարեցան ՚ի Խրիմէ Հայք , որք էին 3000 տունք , մեծ մասն նո-ցա չոգաւ յերկիրն Նղախու . և անդ շինեցին զնոր քա-ղաքն Նախիջևան (575) ։ Իսկ մի մասն իբր 80 տունք Հայկազն Կաթոլիկաց մնացին մերձ ՚ի Սամար առ Տնե-բեր գետով . և անդ շինեցին նոր քաղաք Կատարինոսլաւ-անուն , և բնակեցան առ ժամանակ մի . ուր և կառու-ցին եկեղեցի փայտաշէն յանուն Լուսաւորչին ՚ի 1781 . մայիսի 1 . և կատարեցաւ ՚ի 1782 . ըստ որում ընթեր-ցաք զյիշատակարանն լատիներէն . զոր ՚ի 1784 . օգոս . 13 . եօծ վեհափառ լատին Արքեպիսկոպոսն Ստանիս-լաւոս Սեստրէնցեւից Պօղոս ։ Նոյն ժողովրդեան շնորհեցան ձեռամբ սրբակաց Կանոնիկոսին Տէր Յա-կովբայ Մարդերեանց՝ զանազան ազատութիւնք պար-գևագրով ՚ի Կատարինեայ կայսերուհւոյն Ռուսաց , ո-րով ունէին առանձին դատարան անկախ դատելոյ զիւր-եանց ժողովուրդ , Մագիստ , իմ դատաւոր և Գօլօվա , որ է գլխապետ ։ ՚Ի 1790 . սոքա արքունի հրամանաւ դար-

ձան 'ի Խրիմ և բնակեցան 'ի Խարասու իբրև յապահովի, որոց անդրէն շնորհեցաւ նոյն ազատութիւն զոր ունէին 'ի Կատարինաւլաւ: 'Ի 1793. շինեցին եկեղեցի փայտաշէն հանդերձ վանատամբ. այլ զայս վայր անյարմար դատելով գնեցին զբարձրահայեաց վայրն գեղեցկադիր, ուր որով անցանէ Խարասու գետ: Ուրանօր 'ի 1810. մայ. 1. հիմնարկեցաւ նոր եկեղեցի քարաշէն բարձր և մեծագործ՝ առաջնորդութեամբ բազմարդիւն Տէր Խաչատուր Կանոնիկոսին, որ 'ի նմին ժամանակի վախճանեցաւ. այլ 'ի 1813 աւարտեցաւ հին եկեղեցին հանդերձ ամենայն զարդուք:

Եկեղեցի սուրբ Լուսաւորչին:

412. Սորա՝ 'ի 1823. փետ. 2. կատարեցաւ նորաշէն եկեղեցի Լուսաւորչին և մատուցաւ 'ի նմին աւուր առաջին հանդիսաւոր պատարագ. իսկ 'ի 1815. օգոս. 15. հանդիսապէս օծաւ ձեռամբ մեծանուն եպիսկոպոսին Յովսեփայ Քրիստոֆորովիչ (250): Այս եկեղեցի թէպէտ ծախիւք համօրէն ժողովրդեան կատարեցաւ, բայց յառաջացուցիչք էին Պապի Աղայ, Մուրատշայ Աղայ, Ծատուր Աղայ, Պետրոս Աղայ, և Պարոն Մերկեան Մըրզայեան վերակացու շինուածոյն:

Այս հաստահիմն եկեղեցի է կամարակապ կանգնեալ 'ի վերայ 6 մեծամեծ սեանց բարձր 33 ոտնաչափ. լայն 50 և երկայն 80. ունի միակարգ զերիս խորանս սիւնազարդս և քանդակագործս. զոր յամի 1829 տուաք ոսկեզօծ գեղազարդել և չքնաղ նկարել ըստ ամենայն հանգամանաց: Աւագ խորանն ընծայեալ է ամենասուրբ Երրորդութեան. ուրանօր վայելչացաւ պանծալի պատկեր նկարեալ 'ի Վենետիկ: 'Ի վերին կողմն պատկերին պսակի Ամենամայրն Թագիւ 'ի սրբոյ Երրորդութենէ. ուր որով կան 'ի մաղթանս սուրբ Լուսաւորիչ, սուրբ Ստեփաննոս, սուրբ Մինաս աթենացի և սրբուհին Գայիանէ կոյս: Իսկ 'ի ստորև դոյ յիշատակարան այսպիսի. „ Արդեամբք Գայիանեայ բարե„ պաշտ տիկնոջ Տիւկիւձեան 'ի յիշատակ ամուսնոյ „ իւրոյ մեծանուն աղայ Ստեփանի Ամպարեան 'ի „ թվին Հայոց ՌՄՀԸ „: Այս խորան բարձր է և լայ-

Նարձակ, յերկուսին կողմունս 'ի վերայ դրանս եդան քառեակ Ճարտարագործ պատկերք մարդաչափ մե-ծութեամբ. Աւետման Ածածնին, Գաբրիէլ, Մի-քայէլ, և Ռափայէլ. զոր ընդ վերնոյն տուաք նկա-րել 'ի Վենետիկ ականաւոր պատկերահանին: Աջա-կողմեան խորանն է Ածածնի. իսկ ձախակողմեանն է Լուսաւորչի. յորս վայելչացեալ կան և պատկերքն:

Այլ և առաջի քառեակ մեծամեծ սեանց տաճարին կանգնեցաք և քառեակ խորանս՝ յանուն սրբոյն Մի-նասայ զօրավարին, սրբոյն Նշանի պատուացւոյն, սրբոյն Յովհաննու Մկրտչին և սրբոյն Նշանի Ճգնա-ւորին:

Աստի և անտի են կրկին աւանդատունք. դուռն ձա-խակողմեան աւանդատանն է երկփեղկեայ ընկուզենի հին քանդակեալ խաչազարդ և ծաղկազարդ վերուստ 'ի վայր. և 'ի վերայ երկուց փեղկիցն դոյ յիշատակա-րան 314. ամաց, կէս մի փորագրեալ, և կէս մի գծա-գրեալ, որ էր դուռն տաճարին Րէֆէի, ըստ որում ցուցանէ տառնաւորն.

* Աստուածաբնակ սուրբ տաճարիս,
» Դուռն մտից կենաց յարկիս,
» Կանգնեալ յանուն սուրբ Աստուածածնիս,
» Ի յիշ. համաւրէն ժողովրդեանս. Թվ. ՋԿԱ‖(1512):

Այս դուռն տարեալ 'ի Կատարինասլաւ՝ եդաւ 'ի տա-ճար անդր. և անտի աստ փոխադրեցին. Եկեղեցի Լուսաւորչին ունի մեծ կաթուղիկէ երկաթապատ և շուրջանակի 8 մեծամեծ լուսամուտս: Ըստ նմին օրինակի յերիս կողմանս ունի զերիս կաթուղիկէս, և կրկին կարգս լուսամտից: Իսկ զանգակատունն է 'ի վերայ մեծի դրանն՝ սիւնազարդ ըստ ձեւոյ Ռու-սաց, ուր արտաքուստ ելանեն ընդ քարաշէն սան-դուխս: 'Ի վերայ նոյն մեծի դրան 'ի ներքուստ կառու-ցեալ կան կրկին վերնատունք մի ընդ միով ըստ լայնու-թեան եկեղեցւոյն՝ վասն կանանց: Ունի երիս դրունս հանդերձ քարաշէն սանդխովք, յորս են սիւնք և զըմ-բէթք կաթուղիկեայց: Իսկ բուն Ճակատ եկեղեցւոյն է կամարակապ մեծաշէն հանդերձ չորս մեծամեծ սեամբք: Աստ 'ի վերայ մեծի դրան դնի այս արձա-նագիր.

* Մեծապանծ տաճար քաւութեան տեղի,
„ Նուիրեալ անուան սրբոյն Գրիգորի.
„ 'Ի յաջորդութեան տէր Խաչատուրի,
„ Այլև հիմնարկեալ 'ի սոյն նոր տեղւոջ.
„ Հազար ութհարիւր 'ի տասըն ամի,
„ Ջանիւք և տրովք կաթոլիկ հօտի,
„ Յետ երից ամաց 'ի կատար յանգի,
„ Այլ յետ երկ ամսոյ փառօք օծանի.
„ Պահպանողական աջըն տէրունի,
„ Հաստատ պահեսցէ զմեզ յայսմ յարկի ։

'Ի 1826. ապր. 24. յանձն եղև մեզ 'ի Մեծաւորաց յայս եկեղեցի կատարել փառաւորապէս զհանդէս Պապական օրհնութեանց և Յոբելեան ներողութեանց զաւուրս 15 վասն բոլոր Ղրիմու ։

Առաջնորդարանն է վայելչագոյն և բարձրահայեաց կառուցեալ 'ի հարաւակողմն եկեղեցւոյն, և բաժանեալ 'ի զանազան սենեակս և 'ի սրահս բարեձևս ։ Ուրանոր վիճակեցաւ մեզ բնակիլ յամի 1820. հոկ. 12 ։ Այլ յետ բազում կարգադրութեանց ապա 'ի 1822. փետ. 25. հաւատացաւ մեզ բոլոր վիճակն և ժողովըրդապետական եկեղեցին վիքարական պաշտօնատարութեամբ 'ի ձեռն կոնդակին առաքելոյ յԱթոռոյ անտի, որ սկսանի անուամբ մեծի Կայսեր լատիներէն այսպէս. In Imperio suæ serenissimæ Majestatis Alexandri I.mi Imperatoris et Authocratoris Totius Russiæ. ect. ect. ect. Domini Nostri Clementissimi Religioso Admodum R.do Patri Minæ Medicis Vicario ect.

Յետ այսորիկ 'ի 1828. փետ. 15. առաքեցաւ առիս 'ի նոյն աթոռոյ այլ կոնդակ Առաջնորդութե. և 'ի հետևեալ ամի հաստատեալ Վիզիթաթօռ Առաքելու 'ի վերայ ամենայն եկեղեցեաց մերոց 'ի Թաւրիա ։

Առ տեղեաւս է պարտէզ գեղեցիկ լի պտղաւէտ ծառովք, զոր ոռոգանէ վտակ քաղաքին՝ անցեալ ընդ մէջ պարտիզին. Իսկ գետն Խյարասու անցանէ արտաքոյ պարտիզին. աստ է մեծ կամուրջն, ուր 30 ամօք յառաջ այս գետ կայր իմն յորդեալ եանց ընդ կամուրջն.

413. Ուսումնարանն գեղեցկաշէն կառուցեալ եղև 'ի մօտոյ յարևելեան կողմն մեծի բակին յարևմտեան եզր գետոյն Խյարասուի. զորոյ հիմն օրհնեցաք հան-

դիտապէս յառաջին․ օր մայիսի 1823. Նուիրեալ զայն անուան սրբոյ հօրն մերոյ Լուսաւորչին. և մասն ինչ 'ի պատուական նշխարաց նորա հանդերձ գրուածով ինչ եդաւ 'ի մեծի հիման։ Ունի երիս դրունս և արտաքին սրահ երկայնաձև սիւնազարդ, ընդ որով անցանէ վըտակն. Ներքին մեծ սրահն է քառակուսի, բարձր և գեղեցիկ զարդարեալ զանազան աշխարհացոյց և ուսումնական պատկերօք։ Անդ 'ի ճակատն եդաք զճարտարանկար պատկեր Լուսաւորչին բերեալ 'ի Վենետկոյ։ Յառաջին սենեկի անդ հաստատեցաք զգրատուն օգտակար մատենից այլևայլ ազգաց. որում նուիրեցաք և զմեր մատեանս։ Յայս ուսումնարան ուսանին մանկունք ոչ միայն գրագրութիւն և ուսումնականութիւն հայերէն, այլև ռուսերէն, գաղղիերէն, արաբերէն, ևլն, բաժանեալք 'ի զանազան կարգս։ 'Ի վերայ մեծի դրան դնի այսպիսի արձանագիր.

* Ճեմարան պայծառ վարժելեաց տեղի.
„ Վայր իմաստութեան բազմաց ցանկալի.
„ Կանգնեալ 'ի պատիւ սրբոյն Գրիգորի.
„ Տրովք մեր եղբարց ուղղափառ հօտի.
„ Առաջնորդութեամբ Բժշկեան պետի.
„ Հայր Մինաս վիքար մեր վարդապետի.
„ Աջով բարձրելոյն 'ի կատար բերի.
„ Լոյն վառ պահեսցէ ուսմամբք պանծալի ||։ 1823.

Մենարան։

414. 'Ի հարաւակողմն քաղաքին առ երի կամրջին գտանի վայելչադիր պարտէզ լի պտղալից ծառովք. որ սկսեալ 'ի Կարասու գետոյ հասանէ մինչև ցվերին փողոց։ 'Ի վերին կողմն պարտիզին կառուցաք կրկնայարկ մենարան սակս միաբանից մերոց Մխիթարեանց՝ հանդերձ քարաշէն և սիւնազարդ տաճարաւ. զոր և ընծայեցաք անուան սրբոյ Ածածնին պաշտպանին մերում։ Այս տաճար ունի զերիս խորանս վայելուչս հանդերձ գեղեցկանկար պատկերօք Վենետկոյ։ Աւագ խորանն է Ածամօրն, և այլք սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի։

Իսկ վանատունն կառուցեալ 'ի վերայ փողոցին ու-

նի զանազան սենեակս, և առաջի նորա՛ հ վայելչագիր, նաև գրատուն գրեանց զանազան լեզուաց, ևս և համա- դիսարանս ակաւագիւտ իրաց և հնուեց, ունելով առա- ջի ծաղկոց և աղբիւր բարեհամ ջրոյ ։

Պարգեւագիր Խարքասուէ ։

415 . Արդ՝ այս մեր ժողովուրդ հեռագնեալ անձեալ և բազմացեալ՝ լինին յաւուրս մեր 150 տունք . գրե- թէ ամենքեան 'ի տուրեւառութիւնս պարապին բնա- կան արթնութեամբ, և ոմանք յաճախեն 'ի տօնավա- ճառս և յերեւելի քաղաքս Ռուսիոյ և Լեհի ։ Պար- գեւագիր նոցա հաստատեցաւ և 'ի Պօղոս կայսերէ . ուստի ազատ են 'ի բազում հարկապահանջութեանց և ազատութեամբ վարեն զիւրեանց դատաստան Ռուսէ- ազի Մաբուլէն անուամբ ։ Նախագահ դատաւորն կոչի Փոլիցմէյստէր . որ նստի յառաջին տեղւոջ յատենի անդ, ունելով առընթեր զերկու դատօղակիցս . ևս և ատե- նագպիր և գրագիրս . որ բաց 'ի դատէ արեան՝ վճռէ զամենայն օրինօք Ռուսաց . ունի եդեալ կայ առաջի դատաւորաց ոսկէզօծ նշանն կայսերական ։ Յայսմ դա- տարանի եթէ ոք ծառայեսցէ զամս ինչ գրագրութեք, ելանէ յաստիճան ազնուականութեան, մինչև լինի Գուբեռնիան ։

Գօլօվայն է իշխանապետ, որ հոգայ զորքս և զայլս՝ պահպանելով զամենայն ինչս և զեկամուտս նոցա ամե- նայն զգուշութեամբ, մինչև ցարքունս հասակի . որ և պարտական է ամ ըստ ամէ տալ տեղութեան զհամար ծախուց և եկամտից որբոց ։ Սա ինքն հոգայ զամե- նայն պահանջմունս քաղաքականս և զհարկաւորու- թիւնս ժողովրդեան . ժողովէ զհարկս և ծախսէ 'ի պէտս ժողովրդեան կամ քաղաքին . և զայլ այսպիսիս ինքն հոգայ ։

Յամենայն երիս ամս լինի ընտրութիւն Գօլօվային և դատաւորաց . այս ընտրութիւն կախի 'ի հասարա- կութենէ այսր ժողովրդեան . որք հաւաքեալ 'ի դա- տարանն՝ զկնի հասուն խորհրդածութեան արկանեն քուէս . յորոյ անուն շատ ելանէ թիւն, ընտրի . բայց պիտի երդնուլ զերդումն հաւատարմութեան առաջի քաղաքապետին, և ուղղափառ քահանայի 'ի խաչ և

յաւետարան. և զկնի այսորիկ ծանուցեալ Տէրութէ զընտրեալ անձինս լինի հաստատութի 'ի Տէրութենէ։

416. Օ այս ամենայն արարողութիւնս առնեն զօրութեամբ այնր ոսկեգիր պարգևագրին, զոր պահեմք 'ի փառաւոր արկեղ. գրեալ կայ 'ի ձև մեծի մատենի 'ի միում էջի ռուսերէն, և 'ի միւսում հայերէն. որ յետ գրելոյ ոսկեգիր զամենայն պատուանուանս իշխանութեանց մեծի կայսերութեան, դարձուցանէ զբանն առ ժողովրդապետն և առ հասարակ ժողովուրդն այսպէս. *Հաւատարիմ մերոյ Յակոբ պատրուն և ամե-
„նեցն հասարակութե խորհրդոյ քրիստոնէից հռոմէական
„կաթողիկեայ կրօնիցն. ամենեցն կողմանց առ հասա-
„րակ և յատուկ անձանց մեր կայսերական ողորմա-
„ծագունեղ բանն.

„ Առ հասարակ կամեցողութեամբ առաջադրութի
„ձեր յանձողեցէ այն Նարձրելոյն. մեք վերահաստա-
„տեալք հասարակութեան և յօժարական հիմնաւո-
„րեալ խնդրոյն՝ սակս ազատութեան ձեր ամենեցուն
„'ի սպառնալի լծոյ և տառապանացն ընդունմամբ 'ի
„յաւիտենական բնակութիւն 'ի կայսերութեանս մն
„Ռուսաց. հրամայեմք մեք ոչ միայն ընկալեալ զձեզ
„ամմն ենթ ողորմածագունեղի հովանաւորութեան
„մերոյ. և որպէս սիրելագունեղ զաւակք հանդուցա-
„նել 'ի ներքոյ նորին արտադրել զկեանս. այնքան բա-
„րեկենցաղս, որքան ցանկութիւն մնհկանացուաց և
„անդադար ջանացողութիւն մեր առ նոյնն հասուցա-
„նել կարէ։

„ Հետևեալ սորին շնորհեմք ձեզ արդիւնաւորել 'ի
„տէրութեան մերում ոչ միայն այնոքիւք ամենիւք ի-
„րաւամբք և առաւելութեք, որպիսեօք մն ժողո-
„վուրդք մեր 'ի մէջ և 'ի նախնեաց մերոց 'ի վաղըն-
„ջուց ժամանակաց վայելէն, այլև բաց յայնցանէ
„հրամայեմք Մեք Նախ. Առ 'ի ներկայական անդբա-
„բնակութեան ձերոյ 'ի քաղաքն ազգիդ՝ մերիւք ծա-
„խիւք բերել 'ի խորհրդ զայն մն իւրս ձեր. զոր միայն
„բերելն կարելի իցէ. որ և կարգաւորեալ 'ի մէջ.
„դրամոցն արդէն կատարումն եղեալ է։ Երկրորդ.
„Մն յարմարագոյն բնակութե ձերոյ բարեկօժար կա-
„մօք ձերովք ընտրեալ տեղիսն տալ ձեզ սակս շինու-
„մն առ քաղաքն եկեղեցիոցն. ուր խառամձա-

» րակուն գետնիւն արդիւնաւորիցէք դուք հասարա-
» կապէս ընդ բնակչացն նոյնոյ քաղաքին Թարց նմի պա-
» հանջման զհարկս 'ի գանձարանս մեր ։
» Երրորդ. Յետ յատկացուցանելոյ զանազանու-
» Թիւն ժողովրդական կացութեց ամենողորմածաբար
» տամք ազատութի անոնց հարկաց և պաշտաւորու-
» Թեց որպիսի անուամբ և իցեն մինչ 'ի տասն տարի.
» այլ յանցանել նոյնոյ ժամանակի պարտաւորին վճա-
» րել միրոյս գանձարանին իւրաքանչիւր տարւոջ վա-
» ճառականքն յընչից իւրեանց հարիւրին մին, արհես-
» տաւորք և մշակնիք իւրաքանչիւր տանց երկու ռու-
» բլի ։ Իսկ եթէ այսուհետև պատահիցի. զի եկեսցեն
» առ ձեզ հողագործք 'ի ձերոց կրօնիցն՝ յայնժամ և
» նիցին նոքա համահաւասար դրութե և զօրութե ընդ
» եկամտողացն 'ի խրիմէ քրիստոնէից հայոց դաւանու-
» Թեն. և որք չքաւորք իցեն մի շինելոյ տանց նոցին
» փայտ և այլ նիւթք տացի 'ի գանձարանէ Թարց պա-
» հանջելոյ զգինս նոցին ։ Հարուստք 'ի նոցանէ կա-
» րողք են շինել զտունս խանութս ամբարանոցս Փա-
» պրիքս, և այլ ինչ, որ ինչ ինքեանց հարկաւոր իցէ.
» և եղիցին նմա արդիւնաւորեցեալք հասարակօրէն
» միշտ ազատք յամենից փօստօեանց՝ բաց յայնցանէ
» պատահմանց մինչ պատերազմական զինուորք առ
» բնակութե ձերով անցանիցեն. յաւիտենական եղի-
» ցին ազատք 'ի տալոյ զպատերազմական զինուորս,
» բայց եթէ ոք ընդ ինքեան ծառայել յօժարիցէ ։
» Չորրորդ. Ամենողորմածաբար յանձնեմք պատրի
» Յակոբին մինչև ցմահ նորին զհովուութի ամենից
» այսց եկամտողացն ընդ նմ 'ի խրիմէ հռոմէական կաթո-
» լիկայ կրօնիւք հայոց, և շնորհեմք նոցա շինել զեկե-
» ղեցիս և զանկարկատունս. և ընդ ծիսի և օրինաց նո-
» ցին ազատօրէն գործածել զամ եկեղեցական պաշ-
» տօնս և հոգևորական արարողութիս, և որպէս յի-
» շեալ պատրին՝ նոյնպէս և այլ հռոմէական կաթոլի-
» կաց կրօնիցն հոգևոր առաջնորդք եղիցին միայն
» ընդ իշխանութե Ռեզօրուաքի Պրիսկոպին ։
» Հինգերորդ. Ոկնի բնակութէ ձերոյ հաստատել
» ռատդուշ. որոյ է անուանել կաթոլիկական իրաւա-
» րան և ընդ վարել դատաստանս և իրաւունս ընդ ձե-
» րոց օրինաց և սովորութեց ընտրելով 'ի ձէնջ դա-

„ տուարս վիճականգութեան. որք և արդիւնաւորեցեալ
„ լիցին ստուգանօք և վարձիւք ընդ կարգադրութեան Ա-
„ զովոյ գաւառին. և եղիցին ենթ իշխանութեան նա
„ մեստնիքական կառավարութեան:

„ Պարգեւալ. յետ ընտրելոյ և մտանելոյ իւրաքան-
„ չիւրոց որ ինքեանց զորպիսի և իցէ ցեղ կացութեան
„ 'ի տէրութեան այսպիսեաց Թոյլատրեմք արդիւնաւո-
„ րիլ 'ի յաւիտեան յետագայումն իւրեանց այնոքիւք
„ ամենիւք, զորս ընդ հասարակ կանոնադրութեան մերոյ
„ իւրաքանչիւր ցեղ բնակչաց տէրութեանս արդիւնաւո-
„ րին որպիսիք են ազատօրէն գործածումն առևտրոյ
„ և վաճառաց. որպէս արտաքոյ նոյնպէս և 'ի մէջ
„ տէրութեանս. և որ առաւել շահաւէտութեան 'ի նոյնս
„ հրամայեմք ձեզ ձերով ծախիւք շինել զծովային նաւս
„ վաճառականականս. յօրինել զպիտանի և արդիւ-
„ նաւոր Ֆապրիկս, զաւոտքս, մրգային այգիս, որ ընդ
„ աճիլն նոյնոյ ընդ կերպ գինի 'ի խաղողոյ շինել նեւ
„ բնակութեան ձերոյ մանր մանր չափիւք, և այլ ուրեք
„ 'ի մէջ երկրին ռուսաց տանել և բօչքով վաճառելն
„ կարէք:

„ Փռանսուզի արախ շինեսցէ իւրաքանչիւրոք միայն
„ որ ինքեանց գործածելոյ միով բանիւ զամ արհեստս
„ բազմացուցանել զայն ամ ընդ յօժարութեան և կարո-
„ ղութեան իւրաքանչիւրոց, և վայելել ամենիւք նոքօք
„ ենթ ամենողորմածագունեղի մերոյ հովանաւորութեան
„ և պահպանութեան օրինաց արդիւնաւորիլ:

„ Զայս ամ առաւելութիւս մեք շնորհելով հանդի-
„ սորէն ամ հասարակութեան և յետագայիցն 'ի յաւի-
„ տեանս ժամանակաց որ առաւել հաստատութեան ստո-
„ րագրեցաք ձեռօք մերովք և թագաւորական կնքով
„ ամրացուցանել հրամայեցաք: Տուեալ եղև 'ի քա-
„ ղաքոջ մերում Սանդ Պետերպուրգ. յամի ծննդեան
„ քնի հազար եօթնհարիւր եօթանասուն ինն. նոյեմ-
„ բերի 14. և թագաւորութեան մերոյ տասնութ ամի:

„ Աւ ստորագրեալ է նո-
„ րին կայսերական մեծու-
„ թեան ձեռօք այսպէս.
„ Եկատարինայ:

„ Այսն Պրիվէլէկին ստո-
„ րագրեալ է Պավէլ հաւ-
„ տատեմ. 1800 ամին. 18
„ ապրիլի ամսոյ ||:

Զայս հրովարտակ հաստատեաց ընդ Աղէքսանդր

կայսր Ռուսաց առանձին հրովարտակաւ յամի տն 1804. յունվարի 30. ձեռամբ Աղայ Մարտիրոսի Լեհցիով։

Մատուռն սրբոյն Անտոնի ։

417. 'Ի հիւսիսային ծայր քաղաքին են կալուածք մեծանուն Զօրապետի Անտոն տէ Ռէից գերմանացւոյ. որ 'ի բարեդիր վայրի կառոյց զընդարձակ պալատ իւր. առ որով են գեղեցիկ պարտէզք ծառալիցք և հովիտք ջրարբիք. ընդ որ անցանէ Կարասու գետ, և գնայ դէպուղիղ 'ի Սալըխ (561). յոր խառնի գետակն Սարըսու 'ի ծայրն պարտիզաց։ Առ երի պալատան գոն քանի մի բնակարանք և պանդոկք, ջրաղաց մեծ, և կամուրջ. ընդ որ անցանեն ամենայն ուղևորք գնալ 'ի Քէֆէ 'ի Կերչ և 'ի գիւղօրէս.

Յաջակողմն մեծի պալատին կառուցեալ է մատուռն քարաշէն յանուն սրբոյն Անտոնի պատուացւոյ. առ որով գոյ պահարան. յորս պահին մարմինք մեծի Զօրապետին և կնոջն։ Իսկ շուրջանակի զմատրամբ գոն գերեզմանք, և արտաքոյ ընդարձակ դաշտ, շուրջ զորով տուաք գործել խրամ։

Յամի տն 1817. դեկ. 8. կին քաջ Զօրապետին Մարիա Աննա Զօրապետուհի օրինաւոր կտակաւ եթող Հռովմէական հայոց Կարասուի զայս ամենայն կալուածս, զպալատն, զմատուռն և զամենայն ինչս իւր այսու պայմանաւ. զի շէն պահեսցին այն ամենայն տեղիք, տացի աղքատաց կերակուր, և 'ի մատրան պատարագեսցի այլովքն հանդերձ, որոյ հոգացողութիւն մեզ յանձնեցաւ բարձր հրամանաւ Մեծաւորաց։ Ամին իրի անպակաս լինին անդանօր հանդէսք. մանաւանդ 'ի տօնի սրբոյն Անտոնի պատուացւոյ տալով կերակուր աղքատաց քառիցս 'ի տարւոջն, և 'ի կիւրակէս պատարագելով։

'Ի հարաւային կողմն արտաքոյ քաղաքին փոքր ինչ հեռի կառուցեալ եղև մեծ պալատն արքունի 'ի վերայ Կարասուի 'ի Պեզպօռօտքի մեծ զօրապետէ. յորժամ եկն 'ի Կարասու Կատարինէ կայսրուհին ընդ Յովսէփ կայսեր։ Հաճեալ Թագուհւոյն ընդ այս պալատ ընծայեաց նմա զամենայն շրջակայ դաշտս, բլուրս

և պարտէզս ըստ աւանդութեան ասաց, զոր ասպս եասուն Սամպսօ Բաշխնի յոյն իշխանին, որ քանդեալ զայն պալատ շինեաց ՚ի նոյն ծայր քաղաքին ՚ի մերձակայ բարձրադիտակ վայելուչ բլրի․ առ որով անցանէ ՚ի միոյ կողմանէ գետն Խոյրասու, և ՚ի միւս կողմանէ Պնաղ։ Մեր մերձ է գեղազուարճ տեղին ծառալից Մեհմէտէ ձայնեալ․ ըստ հինգ ծառ․ ուրանօր գոյ ինքնաբուղխ ջուր և աւազան ախտատեղի ռամկաց, յոր լուացեալ լինին ախտաժէտք։ ՚Ի ժամանակս Փաթարաց երբեմն աստ նստէր խանորդին Նուրբատին Մուղդան․ որպէս պատմեն ծերք։

Խոյրասու պաշէ։

418․ Ի գեղեցիկ վայր զբօսանաց ՚ի նոյն կողմն 7 վերստ հեռի ՚ի քաղաքէն, ուր եղերին յերկուց կողմանց բլուրք ձորոյն ՚ի մեծ ապառաժ ինչ միակտուր, որ է իբր դուռն կամ կապան ձորոյն, զոր մարթ է կոչել շատրուանն ջուրց․ զի ՚ի ներքուստ դատարկ գոլով ՚ի տեղիս տեղիս երևին բերանք ապառաժին և խոռոչք պատճառեալք ՚ի բանութենէ ջուրց։ Ահա աստ է ակն կամ գլուխ Խոյրասու գետոյն, որ հանապազ բղխի ՚ի ներքուստ անտի․ երբ յորդ է ջուրն հոսի և ՚ի խոռոչաց ժայռին, որ երևի ահագնատեսիլ իմն։ Սակայն ջուրն զտեալ ՚ի շատրուանէ անդ ականակիտ է և բարեհամ․ այլ առաւել անցեալ ընդ տղմուտ և ընդ հանքային վայրս փոխի փոքր ինչ ճաշակոյն․ զի տեսաք առ տեղեաւն աղբերակունս հանքախառն ջուրց։ Օծեալ ՚ի վերայ ժայռին գտաք բնական պատառուածս․ յոր արկեալ զքարինս յետ հարուստ մի գնալոյ անկեալ ՚ի խորս ժայռին արձակեաց զձայն ՚ի ջուր անդ։

Յաջակողմեան մասնէ ապառաժին յորդագոյնս բղխի ջուրն ՚ի ներքուստ անտի և միանայ ընդ միւս թևոյն։ Այս ջուր գայ երկու ժամու հեռի ՚ի հովտէ անտի, որ ՚ի Թաթարաց կոչի Խոյրասու Ճաղաղ, ուր լճանայ ջուրն և անցեալ ընդ ստորերկրեայ անցս դայ հոսի աստ։

Յերկոսին կողմանս գետոյն աստի և անտի են գեղեցիկ պարտէզք մրգաբերք մինչև ցքաղաք անդր․

յորմէ ելանէ համեղամաշակ ձուկն խայտախայտիւ Ա-լապալըղլը կամ Ղոսպար կոչեցեալ. և այլ տեսակ ձկանց:

ԳԻՒՂՈՐԷՔ ԽԱՐԱՍՈՒԻ

419. Նազում են գիւղորէք շուրջ զքաղաքաւ, յորոց գան գիւղականք և բերեալ զամենայն պիտանիս սփռեն ընդ քաղաքն ողջոյն և գնեն զհարկաւորս, որք են աշխատասէրք և արթունք: 'Ի կարգիս յիշեսցուք միայն զգիւղորէս 'ի մէջ Խարասուի և Լսակի խրիմի. յորս բնակէին Հայք. և ունէին վանորայս և եկեղեցիս, որպէս պատմէ յիշատակարանն յայսմաւուրաց յասելն. * 'Ի Պարապազարէն սկսեալ մինչև 'ի Սուր-խաթ և 'ի Փէօզօսիա 'ի լերինս և 'ի դաշտս լի ա-ս բարին վանորէիւք և եկեղեցեօք||: 'Ի սոցանէ այժմ քանի մի և եթ ամբողջ կան յայլևայլ գիւղորէս, յո-րոց հայազգի գիւղականք վարեցան 'ի Նախիջևան, և անդ շինեցին զնոյնանուն գիւղորէս և Ճոխացան (578): Այժմ յայտնիկ գիւղորէս, որք անուանին Խոյայլի, Պահձելի, Օրթալանկ, Թօփտի, Սալա և Խամըշլը՝ բնակին օտարազգիք: Շրջակայ լերինք Խարասուի լի են գայլախազ քարամբք 'ի գոյն թուխ և դեղին:

Խոյա կամ Խոյալը:

420. Ի մերձաւորագոյն գիւղ փոքրիկ 'ի հիւսի-սային կողմն Խարասուի յեզերս ջուրց հանդէպ մեծի պարտիզի Շէյխ զօրապետին, ուր էին 20 տունք Հայոց յառաջ քան զերուիլն: Այս գիւղ յայն սակս այս-պէս կոչի, զի է յոտս բերդանման բարձր լերին, որ կոչի Աքխայա, որ 'ի հեռաւոստ երևի իբր դղեակ. 'ի զա-ռիվերն տեսաք մեծամեծ այրս և փապարս. ուստի ե-լանէ տեսակ ինչ հողոյ, որ 'ի Թաթարաց կոչի Քիլլը-ղան. որով սպիտակացուցանեն զմուշտակս:

'Ի վերայ լերին գոյ հողաբլուր Օղա կոչեցեալ, զոր բացեալ գտին 'ի ներքս կամարաշէն գերեզման և ոս-կերս մարդոյ մնացեալս 'ի վաղ ժամանակաց: Արև-մտեան կողմն լեռնակիս երևի սեպացեալ սպիտակա-փառ 'ի վերուստ 'ի վայր մինչև ցգետն. թուեցաւ մեզ թէ 'ի հնումն այն մասն ծածկեալ էր ջուրբ Պոնտոսի

յառաջ քան զգացումն Սօսորոսի . յորում տեսանք զգաղրում ոստրէս և ժժմակս ծովու քարացեալս և կրացեալս . 'ի մի կողմն երևի ծոց իմն ձևացեալ և նաւահանգի . ըստ որում և աւանդութիւնն պատմէ : (Տես 'ի Պնդ. 6):

Սուրբ Փրկիչ:

421. Ի հին վանք կառուցեալ 'ի Պահձէլը գիւղ յարևելեան կողմն քաղաքին հեռի 15 վէրստիւ . առ որով անցանէ գետակն փոքր Խյարասու ելեալ 'ի մերձակայ լեռնէ անտի : Տարածութիւն վանացս փոքր է . բայց պարիսպն բարձր , որպէս և դիրքն . դուռն է յարևմտեան կողմն . որոյ հանդէպ քարընկէց մի հեռի տեսանք լուսաղբիւր քարաշէն և բարեջուր : Յայս կողմն պարսպին շինեցան յաւուրս մեր վերնատունք սակս ուխտաւորաց . դոն և գետնափոր սենեակք , ուր յաճախեն ուխտաւորք 'ի վարդավառին ըստ հին սովորութեան իւրեանց . իսկ խոհակերանոցն է 'ի հարաւակողմն : Եկեղեցին է 'ի միջավայրի քարաշէն և կամարակապ հաստատուն յոյժ . ունի մի միայն խորան , ուր դոյ պատկեր Ածամօրն . յաջակողմն խորանին դոյ հին պատկեր յարութեան փորագրեալ 'ի քարի . և 'ի ձախակողմն նոյնպէս փորագրեալ պատկեր խաչելութեան : Առ որով դոյր յառաջ պատուանդան . որ էր սևագոյն վէմ Փրկչատուր ձայնեալ . և 'ի վերայ փորագրեալ խաչ 'ի մէջ բոլորակի , զոր բնակքն բարձեալ տարի տարան ընդ իւրեանս 'ի Նախիջևան , զոր ասեն բերեալ յԱնւոյ և օծեալ յառաքելոյն Թադէոսէ : 'Ի ներքոյ բեմին տեսանք չորս փոքրիկ կամարս և 'ի միջոցի քանդակ ինչ կենդանեաց . յորմէ գուշակի թէ յառաջագոյն յատակ եկեղեցւոյն 'ի խոր իջանէր : Տեսանք յորմն զգաղրում խաչքարինս եդեալս 'ի ժամանակս նորոգութեան . 'ի միումն գրեալ կայ * Յիշատակ է խաչս կաս Փացի տաշձի Կիրակոսէ ||:

'Ի Թիկանց խորանին ընդ պատուհանի ճանապարհ ելաք 'ի տանիս եկեղեցւոյն , որ ըստ բոլորին ծածկեալ է յղկեալ տափարակ քարամբք համեմատ ձևով . իսկ յեզերս տանեաց լայն քարամբք շրջանակ ձևացեալ : Երկայնութիւն տաճարին է 20 . քայլ . իսկ լայնութիւնն

10 ։ 'ի վերայ առաստաղին և խորանին փորագրեալ կայ գառն այ ։ Ունի երիս դրունս կամարաշէնս արտաքուստ հանգերձ դրուագօք ։ 'Ի մի կողմն կամարին արևմտեան դրան փորագրեալ կայ այս բան ։ բայց թուականն եղծեալ է ։ * Սերտին նորոգեցաւ եկե-
» ղեցիս փրկչին ...» ։ Իսկ 'ի վերայ հարաւային դրան յիշատակարան վերջին շինութեան փորագրեալ կայ անյարդ շարադրութեամբ ։

* Ահա այս է դուռն էին ,
» Սանկս անուանի որ նր Փրկչին ։
» Արդեամբ ծախիւք հայոց ազգին ,
» Որք խարասու իսկ բնակին ։
» Նորոգեցին վերստին ... թու ։
» 1810 ։ յունվարի 6 ին » ։

Որմունք տաճարիս ամրացուցեալ են քարաշէն յենարանօք վերուստ 'ի վայր ։ 'ի հարաւային կողմն է փոքրիկ լուսաղբիւր մշտահոս ։ 'ի տեղի հին յիշատակարանին եդեալ են զնոր յամի 1811 ։

Մերձակայ լեառն վանացս կոչի Մանաստըր տաղ ։ պատմեն թէ նախ կամեցեալ են անդ կառուցանել զվանս ։ այլ սքանչելեօք իմն աստ նշանակեալ է տեղի վանացս ։ Սակայն մեզ թուի թէ 'ի սկզբան անդ շինեալ էին 'ի լեառն մատուռն կամ խաչքանկ առ 'ի պատարագել նախ քան զշինութիւն վանացս , որպէս սովորութիւն է արևելեայց ։ (Պոնտ ։ 128 ։)

Օրդալիւխ ։

422 ։ Այս քարեշէն գիւղ մօտ ժամու հեռի է 'ի Պաշչէլիէ յարևելեան կողմն ։ ուր յառաջ բնակէին Հայք , և այժմ Յոյնք ։ Եկեղեցին Հայոց է 'ի ծայր ընդարձակ դաշտին ։ և շուրջ զնովաւ գերեզմանատուն Հայոց ։ Տաճարն է 'ի ձև քառակուսի հաստատ քարաշէն Գոթիկեան ձևով կառուցեալ քառեակ կամարօք իբր յերիս մասունս բաժանեալ ։ Միջին մասն է օրօրոցաձև ։ խորանն է կիսաբոլոր ։ և յերկուս կողմունս ունի զերկուս դրունս և փոքրիկ զգեստատունս ։ Յորմունս երևին խաչքարինք ։ 'ի վերայ աջակողմեան մեծի խաչքարին գրեալ կայ ։ * Տր ած յս քս » ։

Յատակն լցեալ է հողով. նմին իսկ օրինակ կիսովն չափ թաղեալ կան. երկայնութիւնն է 17 քայլ, և լայնութիւնն 13։ Դուռն միայն է կործանեալ. յորոյ վերայ տեսաք քառակուսի սպիտակ քար, և 'ի վերայ յիշատակարան նորոգութեան. բայց քարն է խորտակեալ և գիրն խանգարեալ. որ * Ի ձեռն միջնորդեցի է այս նորոգ
„ պէտ մխիթար բարձուամն սորին. եւ մի
„ սեկին. Ճանիրին ցն մարգարտին
„ զարմիցն Թվ. ՌՃԽԹ. յուլ || (1700)։

Այս եկեղեցի կառուցեալ է յանուն Համբարձման. և 'ի նմին աւուր բազմութիւն յոյժ Հայոց յամենայն կողմանց հաւաքեալ ատ առնէին կերակուր աղքատաց։ Սակաւ ինչ 'ի վայր է Յունաց եկեղեցին շինեալ 'ի Հայոց անուն յանուն սրբոյն Նշխայի։ Փոքր ինչ տարակաց աստի 'ի կողմն Կեօկդաշլին գոյր այլ եկեղեցի Հայոց, զոր քանդեցին Թաթարք։

Թոպալ։

423. Ի գիւղ Դուտարճալը մօտ ժամու հեռի 'ի նախընթացէն 'ի կողմն Նակի խորհուն. ուր այժմ բնակին ասիացի Յոյնք։ Տեսաք 'ի գիւղամիջի անդ առ փոքրիկ վտակաւ զհին եկեղեցին Հայոց քարաշէն հաստատ յանուն սրբոյն Սարգսի. դուռն է 'ի հարաւակողմն կամարաձև. իսկ քառակուսի լուսամուտն 'ի կողմն արևմտեան։ Տեղի խորանին է կիսաբոլոր իբր 10 ոտնաչափ. յերկուսին կողմանս պատուհանք։ Ի տեղիս տեղիս յորմն են խաչքարինք և մնացորդք հին նկարուց։ Դուռն 'ի ձախակողմն հին խաչքար 443 ամաց. 'ի ստորև այսպէս գրեալ կայ. * Ես Յ իւրոյ. 'ի Թվ. ՊԼԶ || (1387)։

Այս տաճար 5 կամարօք կապեալ է օրօրոցաձև հանդերձ շրջանակօք. թուի թէ յառաջ յատակն խորին էր։ Արտաքոյ դրան տեսաք փոքրիկ և խոնարհ մատուռն իբր պահարան ամուր կամարաձև. յառաստաղն երևին մնացորդք հին նկարուց և ձևոց։

Սուրբ Սարգիս։

424. Ի բարձրահայեաց եկեղեցի կառուցեալ յա-

նուն Պարասքեւեայ կուսին 'ի վերայ վայելչագիր բլրոյ 'ի միւս կողմն վտակին, իբր քարընկեց մի հեռի 'ի գեղջէ անտի, որ յամենայն կողմանց երեւի ։ Սուր ելաք ընդ 80 քարեայ աստիճանս. շուրջանակի է գերեզմանատուն. եւ առ ստս բլրոյն գեղազուարճ պարտէզք եւ հովիտք ջրարբիք ։ Օ երկայնութիւն տաճարին չափեցաք 18 քայլ. իսկ զլայնութիւնն 9 խորան նորա արտաքուստ կիսով չափ թաղեալ է ընդ հողով. այլ տաճարն է հաստատ. տեղի խորանին է ամբողջ կիսաբոլոր, որոյ տրամագիծ է 10 ոտն ։ Շինութիւն տաճարիս է համեմատ հնդակամար օրօրոցաձեւ. յորմն 'ի տեղիս տեղիս են խաչքարինք օծութեան, եւ մնացորդք պատկերաց ինչ ։ Յաջակողմն է աւագանն որձաքար միակտուր խաչաձեւ միատնաչափ մեծութեամբ ։ Իսկ դուռն է յարեւմտեան կողմն քանդակեալ 'ի վերուստ կամարաձեւ. ուր նկարեալ կայ տիրամայրն հանդերձ որդւով ։ 'Ի նոյն արեւմտեան կողմն է լուսամուտ մեծ. առ որով արտաքուստ զետեղեալ կայ քառակուսի քարասեւագոյն, եւ 'ի վերայ արձանագիր վերաշինութեան տաճարիս այսպէս.

* Փառաւոր տճրս ածային,
„ Որ է պատկերք հյց ազգին.
„ Կերտօրին կառուցաւ հիմանց,
„ Տրօք ողորմութ ղըրմայ երկրին.
„ Յանուն սրբոյ ուրբաթու կուսին,
„ Ւառաջնորդութ Յակոբա քաջ հրաբունեալի.
„ Իւ վերակացութ մհտսի Յօհաննեսի,
„ Իւ մհտսի Նայիսի քաֆայեցւոյ.
„ Ձեռամբք քարագործ Գրիգորին եւ տօնակյանի.
„ Կայելումն տէր Մարդան քհնի.
„ Սարգիս տիրացուին. Թվն ՌՃԾԱ ին || (1702) ։

Սալա եւ Խամշլու ։

425. Այն գիւղօրէք Հայոց մերձ 'ի Թոքատի 'ի կողմն Սեւաստի. յառաջինն բնակին այժմ Սուաք եւ ունին զեկեղեցին Հայոց. որ է քարաշէն նուիրեալ անուան Ածածնի ։ Իսկ 'ի Խամշլու այժմ բնակին Թուրք, ուր գոյ մեծ աղբիւր քարաշէն կառուցեալ 'ի

Հայոց․ գրեալ 'ի վերայ յիշատակագիր Խաչատրոյ ։ Որպէս մերձ 'ի Սալա գոյ և կամուրջ քարաշէն համանդերձ արձանագրաւ անուամն նոյն Խաչատրոյ ։

ՊԱՌՈՒՁԱՑ

426․ Կամելով մեր գնալ յԱգմէջիդ քաղաք կուսակալութեան Թերակղզւոյս՝ դարձուցաք զընթացս մեր ընդ արեւմուտս, և անցեալ ընդ քարաշէն կամուրջն Սարըսու գետակին, որ է յարեւմտեան ծայր Խարասուի, հասաք յետ միոյ ժամու յականակիտ գետակն Պօռուչայ․ ուստի սկսանի անուանի գիւղ և գլուխ Խարախաշ պասանի․ որոյ մի ծայրն իբրև զկտոյց արծուոյ ձգի դէպ 'ի Խարասու ։ Արդ այս բարեջուր գետակ կոչի Պօռուչայ․ զի ամէն Թաթարք թէ յընթացս գալարեալ կարի իմն պտոյտքի և թափ անցանելով ընդ երկիր՝ անդրէն հոսի․ նորին ազգաւ այսպէս կոչեցաւ ։ Որոյ ջուր է մի 'ի պատուական ջուրց Խրիմի, որ հոսի դէպ 'ի Սալըխ ծովակ․ առ եզերբք են բազում գիւղօրէք ։ Ընդ 'ի ստորև է համանուն գեղ Պօռուչայ․ իսկ 'ի վերոյ է անուանի գեղն Ռօզինտալ գերմանացի հատուածոց․ որք ունին առանձին եկեղեցի․ երբեմն էին առանց քահանայի, մեք հովուէաք զնոսա առ ժամանակ մի, որպէս և այժմ՝ յորժամ մնան առանց քահանայի ։

Աստի ուղեւորեալ զընթացս մեր դէպ 'ի գլուխ Պօռուչայի՝ յետ գնալոյ ընդ հարաւ 7 վերստ՝ հասաք 'ի կիրճն Խայնավուտ փակեալ 'ի մէջ կրկին լերանց ընդ երկայն վերստ և կէս․ ուր գոյ գիւղ Թաթարաց և մեծ քարանձաւ 'ի պաշտպանութիւն յոլով խաշանց ։

ԶԻՒՅԷ

427․ Աստի յառաջ անցեալ հասաք 'ի միւս բարեշէն գեղն Զուխուրչա նոյնպէս գերմանացի հատուածոց լուտերականաց, ուր տեսաք զանազան գեղեցիկ պարտէզս եւրոպեան բանջարեղինաց ։ Աստի հասաք յարքունի գիւղն Զույէ․ ուր օթագայեցաւ տ̅ Աղէքսանդր կայսր Ռուսաց 'ի 1812․ և ետ նմա Ճաշ Կաթողիկ Հասարակութիւն մեր Խարասուի ։

Աստի խոտորեալ 'ի ձախակողմն կոյս հասանէ 'ի Փռու-ռուգէլ գիւղ մեծապատիւ գաղղիացի քահանային Լա-պէ Լօրէնցօ Մինլիօթ, ուր կառուցեալ է նա ինքն քարաշէն մատուռն յանուն Վլառայ կուսին ։ Աստի յետ միոյ ժամու հասանէ 'ի գիւղն Պեշիւրէլ․ ուստի ան-ցանէ համանուն գետակ և ընդ գետակին Զօհեյէի եր-թայ Թափի 'ի Սալղըր ։

ՍԱԼՂԸՐ

Սա անուանի գետ Ղրիմի, որ 4 ժամու հեռի յԱգ-մէջիդէ ելանէ 'ի կողմանց Չատըրտաղին 'ի տեղւոջէ, որ կոչի Այան․ ուր գոյր եկեղեցի յանուն սրբոյն Յով-հաննու ։ Աղբերակն է գուբ ինչ յապառաժի․ ուստի բղխեալ խոխոջմամբ հոսի ընդ հիւսիս, և անցեալ յա-ռաջոյ Ագմէջիդի ընդունի զբազում վտակս․ և գնա-ցեալ դէպ 'ի Սասըխ ծով՝ անկանի 'ի Ղարասու գետ, և կորուսանէ զանունն (563) ։

ԱԳՄԷՋԻԴ կամ ԱԳՄԷՍՋԻԴ

428․ Սա անուանի և ընդարձակ քաղաք կուսակա-լութեան Տաւրիոյ հեռի 'ի Ղարասուէ 42 վերստ․ 'ի հն․ կոչէր 'ի Յունաց Սիմֆէռօփօլ, որպէս կոչեն զարդիս և Ռուսք․ և էր բարեշէն քաղաք, որպէս գուշակի 'ի դրիցն․ այլ բոլորովին քանդեցաւ 'ի Թա-թարաց ։ Ապա առ սակաւ սակաւ բնակեցան գիւղա-կան Թաթարք և շինեցին փոքրիկ Մէսճիդ․ որոյ սպի-տակափառ որմունք նշմարեալք 'ի հեռուստ պատ-ճառս ետուն անցաւորաց կոչել զայն Ագ-մէսճիտ այսինքն Սպի-տակ տաճար․ մինչ զի տեղին ևս յայս անուն յորա-նուանեցաւ․ զոր ինքեանք կոչէին Աքմա ջէօյ ։ Ապա Խանք Թաթարաց տեսեալ զվայելչութիւն տեղւոյն՝ շինեցին քաղաք, և կառուցեալ զմեծ մզկիթն կոչեցին Ագ-մէսճիտ ։ Աստ նստէր անդրանիկ որդի Խանին Գալ-ղա Սուլթան իբր երկրորդ Խանին և իշխէր մինչև ցԽա-րասու և անդր ընդարձակ իշխանութեամբ, և ապա յա-ջորդէր Խանին ։ Վերջինն եղև Մախսուտ քէրէյ Գալ-ղա Սուլթան․ զաւերակս ընդարձակ պալատին նորա տե-սաք մերձ 'ի Սալղըր․ զոր քանդեցին Ռուսք ։

Այս քաղաք յետ անցանելոյ առ Ռուսս եղև աթոռանիստ Կուսակալ իշխանին Գուրիոյ. որոյ իշխանութիւն ձգի մինչև ցՍափոր և յՕզուխուր (566): Սա և այժմ բաժանի 'ի Հին և 'ի Նոր Թաղ. Հին Թաղն է բուն քաղաք, ուր բնակեն ամենայն ազինք. անդ է շուկայն. 'ի մի ծայրն ընդ երկայնութիւն Սալըզըրին բնակին մեծամեծք 'ի բարձրագիր և 'ի զուարճալի վայրի:

Անդ 'ի վերին ծայրն կառուցեալ է մեծ պալատ առաջին զօրապետի. յորում օթագայեցաւ Օգոստափառ Կայսրն Ռուսաց Ա̃ Աղեքսանդր 'ի 24. Հոկ. 1825: Անդանօր կոչեաց զմեզ առ ինքն՝ խօսակցեալ առանձին ամենայն քաղցրութեամբ և սիրով. խրախ եղև ընդ անդաւալ աշխատասիրութիւն մեր խոստանալով ձեռնտու լինել յամենայնի: Զնոյն կրկնեաց յետ մեկնելոյն անտի գրելով առ իս թուղթ 'ի ձեռն Կուսակալին յայտնեալ զՀաճութիւն իւր գիտել թէ զինչ ինչ կամք իցեն մեզ խնդրել 'ի Վեհութենէ նորա:

Անդ են դատարանք, պաշտօնատեղիք, եկեղեցի Ռուսաց քարաշէն կառուցեալ յանուն Պետրոսի և Պօղոսի, եկեղեցիք և բնակարանք Հայոց և Յունաց. ևս և Մզկիթք և Թաղ Կաթոլիկաց և այլոց:

Իսկ Նորն է աջակողմեան մասն քաղաքին յընդարձակ և 'ի վայելչագեղ դաշտի կառուցեալ մեծամեծ շինուածովք ըստ եւրոպական ձևոյ՝ անջրպետ 'ի մէջ ունելով զարքունական պողոտայն, յորոյ 'ի վերին ծայրն լինի մեծ տօնավաճառ յամենայն շաբաթու: Ուր է մեծ ուսումնարան արքունի զանազան լեզուաց և գիտութեանց վասն ամենայն ազգաց: Անդ յաւուրս մեր առընթեր Սալըզըրի կառուցաւ կամարաշէն մեծ եկեղեցի արքունական յանուն սրբոյն Աղեքսանդրի Նևսկի 'ի պատիւ անուան մեծի Կայսեր Ա̃ Աղեքսանդրի: Ունի բարձր կաթուղիկէ շրջապատեալ 'ի քառեակ փոքունց. յերիս կողմանս կանգնեալ կան վեց վեց մեծամեծ սիւնք առաջի երից կամարայարկ փառաւոր դրանց:

Այս Նոր քաղաք կառուցեալ 'ի բարձրադիր և ընդարձակ դաշտի՝ օրըստօրէ վայելչանայ կանոնաւոր շինուածովք և ուղղաձիգ լայն հրապարակօք, նաև կրկնայարկ քարուկիր պալատանօք մեծամեծաց: Հայոց եկեղեցին է քարաշէն և վայելուչ նորոգ կառուցեալ

առ. երի հնոյն հանդերձ կաթուղիկէիւ ։ Սուր առ. ըն-
միւ տեսաք Խաչքար բերեալ յայլուստ 229 ամաց. 'ի
վերին կողմն փորագրեալ է Թուականն ՌԿ. և 'ի
ներքոյ. * Յիշատակ է 'սբ. խաչս պարոն Յակոբին ‖ ։
Ուրանօր տեսաք հին Յայսմաւուրք գրեալ 'ի Պաղչէ-
սէրայ 'ի քարաշէն եկեղեցին (436). և աւետարան
նուիրեալ եկեղեցւոյն Պալըզլավայի (469) ։ Այս ե-
կեղեցի Հայոց նուիրեալ է անուամբ սրբոյ Ա՟ծածնին.
իսկ ժողովուրդքն են 40 տունք ։

Բարձրահայեաց մզկիթն Ազմէօզլիգ բոլորովին քա-
րաշէն՝ է նոյնպէս կառուցեալ 'ի հին ժամուց քաղաքին.
որ ունի Մինարէ և Մէտրէսէ, ուր ուսանին մանկունք
Թաթարաց. զոր շինեալ է Մենկլի քերէյ Խան. ըն-
թերցաք զյիշատակարանն 332 ամաց 'ի վերայ ներքին
դրան այսպէս.

سلطان منكلى كرى خان ابن عبد الرّحمن . . . سنه ٩١٤

* Սուլթան Մէնկլի Գիրէյ Խան որդի Աբդուռահմանի . . .
Սէնէ 914 ‖ ։

Տեսաք զայլ արձանագիր այսպէս.

ماخصود اغا ابن حسين اغا . . سنه ١١٥٣

* Մախսուտ աղայ որդի Հիւսէյին աղայ . . . Սէնէ 1153 ‖ ։

ԻՍԿԻ ՍԵՐԱՅ

429. Արդ մեկնեալ մեր յԱզմէօզլիգէ ուղևորեցաք
դէպ 'ի հարաւ, և յետ 2 ժամուց հասաք յԻսկի սէ-
րայ. որ է ամրոց մնացեալ 'ի վաղ ժամանակաց. որոյ
պարիսպք ըստ մեծի մասին ամբողջ կան. առ որով գոյ
և հին եկեղեցի լքեալ, ես և վայելուչ գիւղօրէք մե-
ծամեծաց տանն և անուն Սալղըրին ։

Յետ այսորիկ անցեալ յաջակս ընդ ափն գետոյ հասաք
'ի մի վտակն Սալղըրի՝ անուանեալ Բուրուլչա սու. որ
գայ 'ի Խայրաւայի մարգէ ։ Զկնի սորա հասաք յայլ
վտակ Սալղըրի 'ի անդրին Նանի տալս և տալս Ակզամ
ալան ։ Բայց ժամ մի 'ի վեր է ակն Սալղըրի, որ ե-
լանէ յանդնդատակ խոռոչէ անտի սպառամածին. առ որով
գոյր 'ի հնումն եկեղեցի Յունաց Այան Յի սուրբ Յով-
հաննէս առ կողմամբ մեծի լերինն Չատըր տաղի. որ-

դէս տեսցաւ։ Ապա հասաք 'ի գիւղն Ջավզա. ուր գոյ աղբիւրն Թղթատար. աստի սկսանի մեծ լեռանն Ան-դար, որ հասանէ մինչև ցԱլուշդա ցժամս կ։

Արդ թողեալ մեր զՍալղըր յաջակողմն՝ անցաք ընդ լեռանն. զորոյ անկոխելի ուղին ետ հարթել տէրութիւն Ռուսաց մինչև ցԱլուշդա։ Յեջս մեծի լերին տեսաք զաղբիւր քարաշէն պատուական ջրոյ. որոյ հանդէպ անկանի Տեմիրճի գիւղ. առ որով է և գիւղն Գու-մա. որ սակս շշնջանաց ջուրցն այսպէս կոչեցաւ։ Ապա հասաք 'ի ծովեզերեայ գիւղն Ալուշդա բարեշէն և գե-ղեցկադիր. ունի վայելուչ պարտէզս և այգիս։ Յա-ւուրս մեր աստանօր շինեցաւ պալատ արքունի երկ-կարգեան սիւնազարդ 'ի վերայ նաւահանգստին, որ է անպատսպար. ընդ աջակողմն գեղջ անցանէ գետակ և ոռոգանէ զպարտէզս։ Անդ 'ի գիւղամիջի տեսաք հին բերդ, որոյ մասն պարսպի հանդերձ քառեակ աշտա-րակօք կանգուն կայ. զերկայնութիւն միոյ կողման չա-փեցաք 125 քայլ։

Այնուհետև անցեալ ընդ գետակն ուղղեցաք զըն-թացս մեր ընդ արևմուտս. և յետ միոյ ժամու հասաք յապառաժն բարձր ձայնեալ 'ի նոցանէ Ղարաքէլ. զ-ամրոց. որոյ ծայր երևի որպէս դղեակ. ուր ասեն ամրանային երբեմն Ջենովիզք առ 'ի չտալ անցս թըշ-նամեաց։ Ուրանօր տեսաք և մեծամեծ վէմս առ Ճա-նապարհին, որ կոչի դուռն կապանի. 'ի ծայրն դոյ լե-զու երկայնեալ 'ի ծովն։ Աստի յետ միոյ ժամու հա-սաք 'ի Գիւչիւք լամպատ. որ է գիւղ բարձրահայեաց. ունի գեղեցիկ նաւահանգիստ կիսաբոլոր ընդարձակ, այլ ոչ ապահով 'ի հարաւային հողմոյ։ Աստ շինեաց զերևելի պալատ Ռուս զօրապետն Պօրազդին։ 'Ի վեր անդր է միւս գիւղ Պիւյիւք Լամպատ. 'ի հն. Փօռթուլիմն. ուր գոյր ամրոց շինեալ 'ի ձ̅ Յուստինիանոսէ։

Ապա անցեալ յառաջ ժամ մի և կէս՝ հասաք 'ի Պա-թին կամ Պառթէնիթ. ուր տեսաք 'ի վերայ աջակող-մեան լերին վաղեմի դղեակ և ապառաժ բարձր Ղա-տէլ անուամբ. յորոյ վերայ եկեղեցի Ս. Կոստանդէին և Հելենա. մի որմն կանգուն կայ վեցտանաչափ. և ա-նմին մարմարիոնեայ սիւն։ Իսկ 'ի հանդիպակաց լերին 'ի կողմն Լամպատի երևի մնացորդ վանաց ինչ անուամբ Ղալաֆօն։

Օ՛կնի միոյ ժամու հասանք 'ի գիւղն Արթէք. 'ի հն. Καρδιατρικων. ուր 'ի վերայ աջակողմեան լերին է գիւղն Խզըլղաշ. առ որում տեսաք ապառաժ կարմրագոյն և 'ի վերայ փոքրիկ ամրոց վաղեմի։ Օ գիւղն Արթէք գնեալ Լեհցի Կոմսին Օլիգարի կառոյց շինուածս բնակութեան. տնկեաց գեղեցիկ պարտէզս և ծառաստունկս. որ և բազում մարդասիրութբ ժողովեաց զմեզ։ Այս գեղ անկանի առ Այու տաղիւ, որ 'ի հն. կոչէր [illegible]. սա երևի 'ի հեռուստ 'ի ձև արջու երկայնեալ զքիթն 'ի ծով անդր։ Այն որք համարին թէ այս է անուանեալն 'ի նախնեաց Կրիու-մետոպոն. այլք ասեն լինել լեառն Այա։

Յետ այսորիկ հասանք 'ի գիւղն Կուռզուֆ. 'ի հն. Gorzabita. որ 'ի լեզու Սկլաւեանց նշանակէ ասեն լեառն փայլեալ։ Օ այս վայր թ̃ Յուստինիանոս զօրացոյց. տեսաք 'ի մօտոս գեղջ 'ի վերայ ապառաժին զմնացորդս հին պարսպաց։ Արևելեան ապառաժք փոքր ինչ պատսպարեն զնաւահանգիստն վայելչագիր. Ի բերան նաւահանգստին տեսաք գեղեցիկ պարտէզս ազգի ազգի մրգաբեր ծառոց և զընդարձակ այգի մեծի Կոմսին Վորոնցովի. որ և կառոյց 'ի միջոցի անդ ծովափանց զմեծագործ պալատ փառաւոր. անդ իջևանեցաւ թ̃ Աղեքսանդր Կայսր։ Ապա անցեալ ընդ սարսափելի լերինս հասաք 'ի լայնանիստ գլուխ արքունի գեղջ Լիքիթայի. ուր տեսաք զարքունական պարտէզ և բուրաստան լի բազմապիսի պտղաբեր ծառովք և ծաղկօք։ Աւր գոյ և հին եկեղեցի Այան. առ որով Այազմա և վաղեմի դղեակ։ Հասաք ապա 'ի Մաղարաշ. որ յառաջնմէ էր գիւղ Յունաց և այժմ անմարդաբնակ. ուրանօր գոյ նոյնպէս հին եկեղեցի Այան և Այազմա։ Յետ այնր հասաք 'ի Մարսանտա գիւղ Յունաց. ապա յԱյվասիլ, և ապա Տէրէքէօյ. յորս Յոյնք յաճախեն տնկել զծխախոտս։ Յետ այսորիկ հասաք յանուանի գիւղ Յունաց Եալթա նաւահանգիստ. 'ի վերայ արևելեան սարին տեսաք հին եկեղեցի, որ փոքր ինչ պատսպարէ զընդարձակ ծովափն, ուր Թափի գետակ յետ ոռոգանելոյ զբարեբեր պարտէզս։

Ապա սկսանի արքունական պողոտայն նորոգ կոփեալ յապառաժի յաւուրս մեր. որ ունի եզերիւ ան-

հնարին աշխատանօք 'ի Պալատար օվա։ Զկնի ապա ելեալ մեր ընդ ջուր 'ի վեր հասաք յՄավութքա գեղ Յունաց և Թաթարաց․ ապա 'ի Կրասպի կամ Կա-ղրա․ հուսկ յետոյ 'ի Կուրբելիզ։ Աստանօր յաւուրս մեր մեծանուն Կրքուհին Կալբեցին կառոյց փառաւոր պալատ յընդարձակ և 'ի վայելչագիր պարտիզի իւրում․ ուր և ժողովեալ զմեզ պատուասիրեաց մեծարանօք։ Նա եւս պալատան գոյր յառաջ Խանի․ առատով փորեալ գտան ոսկերք մարդոյ․ ուր 'ի հնումն էր եկեղեցի․ զոր և նա փոխեաց դարձեալ յեկեղեցի Ռուսաց․ ընդ որ հոսի վտակ սառնատական ջուրց 'ի պէտս ծաղկոցաց և պարտիզաց պալատան և Թափի 'ի ծով անդր։ Զկնի այսորիկ Թողեալ զպալատեան գնալ յառաջ՝ ուղղեցաք զընթացս մեր ընդ սարափելի զառիւանդն այսր գեղջ․ ուր ելեալ ընդ ջուր 'ի վեր մտաք յանտառն մայր ծառոց․ և ապա յորքանի անտառն մեծ․ և յետ երկուց ժամուց հասաք 'ի գլուխ լերին 'ի մարգագետին ընդարձակ․ տեսաք անդ յամարայնի զառանն։ Ընդ որ անցեալ հասաք 'ի գլուխ հիւսիսային ջուր 'ի վայրի ձայնելոյ 'ի Թաթարաց Լոռէ։

Իսկ և անդր կոչի ՏԵՂԻԼ․ Յ արտաքին երկիր․ ապա հասաք 'ի Ռամփոփոլ, ուր գոյ Խաքնաբուղխ պառուստական ջուր․ ապա հասաք 'ի սոսկալի պողոտս զառ 'ի վայրին, որ կոչի Պառամալար։ Հուսկ յետոյ իջեալ 'ի վայր հասաք 'ի բարեբեր գիւղ Թաթարաց Արխուչիւք Եօզէն պաշ․ Յ փոքր ակն գետոյ․ քանզի 'ի գիւղամիջի անդ տեսաք խառոչ աղաւաժից․ յորմէ բղխի ականակիտ ջուր և միացեալ Է վտակաց ձևացուցանէ զգետն Պելպէք։ Զկնի կէս ժամու հասաք 'ի Պէօյիւք Եօզէն պաշ հարուստ գեղ․ ուրանօր գոն 300 տունք Թաթարաց, 3 Ջամիք և ոչ սակաւ բարեբեր պարտէզք։ Բնակիչքն պարտալին ոչ միայն 'ի մշակել զերկիր, այլև 'ի շինութի անուոյ սայլից․ յորմէ և շահին յոյժ։ Անդանօր յաջակողմեան լերին տեսաք ապառաժուտ․ յորմէ բղխի վտակ և խառնեալ ընդ վերնոյն գնայ ընդ հարաւ՝ անցեալ ընդ գիւղօրեան Թաթար օսմանի, Պավրի, Փօզատա, Ալպատ, Սիվրէն, Տուվան քէօյ մերձ 'ի Պելպէք գիւղ․ յորմէ առեալ զանունն գնայ ընդ Զալաղա․ ապա ընդ Կապարթա, և Զամրուխ․ հուսկ յետոյ Թափի 'ի ծով մերձ 'ի բե-

րան Սեւաստաբօլի ։ Յառաջագոյն կային 'ի Կա-պարթա Զերբէզք․ որպէս և 'ի մօտոս ադխաղս լե-րանց․ ուր գոյ վաղեմի դղեակ 'ի վերայ բարձր լերին Զերտէլ տէրման ձայնեալ ։ Տունք այսր գեղջ փակեալ են 'ի մէջ կրկին լերանց յայսս և 'ի փապարս ըստ երկայ-նութիւն երկուց կողմանց ։ Սմին կարի հեռի է սակաւ միւս դղեակ հին Խնէֆէ տէրման ձայնեալ՝ 'ի վերայ բարձր լերին ։

Իսկ ապա ելեալ մեր 'ի Պէօյիւք Եօղէն պաշէ ու-ղևորեցաք դէպ 'ի Պաղչէսէրայ անցեալ միանգամայն ընդ Եփուձի քէօյ, Ալուշտա, Շիւրի և ընդ Սաֆ-լըմ ։ 'Ի լերանց աստի բղխեալ վտակաց առատանան և ձևացուցանեն զգետն Քաչի սու․ որ ունի յեր-կոսին կողմանս գեղեցիկ գիւղօրէս, պարտէզս և այ-գիս բարեբերս ։ Զոր և թողեալ 'ի ձախակողմն հասեալ ընդ գիւղն Մամաշա և ապա 'ի ծով անդր, մեք շրջե-ցաք ընդ սպիտակ լերինս, և հուսկ ուրեմն ընդ զառ 'ի վայր Պաղչէսէրայեն հասաք 'ի քաղաք անդր ։

ՍՕԳԼԱՑ

430․ Ի անուանի գիւղ հեռի յԱգմէջիդէ 10 վերստ 'ի ձախակողմն կոյս յատս մեծի լերին Զատըր տաղի․ զոր պանծալի հանդիսացոյց Կուսակալ իշխանն Պա-րագտին կառուցանելով 'ի նմա զանազան գործարանս չուխայի, ֆէսի, եւն, որպէս տեսաք ։ Արար 'ի նմա ծա-ռատունկս գեղեցիկ պարտէզս և ծաղկոցս զարմանա-լիս․ նաև ձմերանոցս բուսոց բերելով 'ի հեռուստ զայլևայլ բոյսս և զծաղկունս ։ Յորս տեսաք զբոյսս և զծաղիկս հեռաւոր աշխարհաց․ զորս հասուցանեն նաև 'ի ձմեռնամիջի ըստ եւրոպեան կարգի․ մինչև ձգել զանցաւորս 'ի տեսութիւն տեղւոյն ։

ՉԱՏԸՐ ՏԱՂԻ

431․ Ի մեծ և բարձրագոյն լեռանն Խրիմու հեռի յԱգմէջիդէ 20 վերստ 'ի կողմն Ալուշտայի․ յորմէ և ելանեն զանազան գետք Կս և Սալղըր և Ալմա․ զոր յետ Ստրաբոնի նախնիք անուանեցին Թռապէզուս ըստ Յունաց ։ Արդարև սեղանաձև է բայց երկայնանիստ

է սկսիմ քերէկ խան յետ դարձին 'ի Մեքքայէ. ընթեր-ցաք զարձանագիրն այսպէս.

الحاج سليم كرى خان سنه ١١٤٦

Ալհաճ Սէլիմ Կէրէյ խան սէնէ 1146.

Նաև մտաք 'ի պայծառ հանդիսարանն նկարէն ոսկե-զօծ, որ յերեց կողմանց հայի 'ի ծաղկոցն վայելուչ յատակ անդուոյս յօրինեալ է մեծամեծ մարմարիոն քարամբք, և 'ի միջավայրի մեծագործ շատրուան բազ-մացայտ։ Ընդ կողմնական դուռն մտաք 'ի ծաղկոց անդր զարդարեալ գոյնազգոյն ծաղկօք, և շուրջանակի Ճեմարան գեղեցիկ հանդերձ զանազան քուսովք։ Ընդ 'ի վայրադաշտութիւն զոն աղբերակունք մարմարիոնեայք յորս ձևացեալք. յորոց հոսի կարկաջահոս ջուր ընդ 15 ակունս, և ընդ մարմարիոնեայ անցս գնայ նախ յա-ւազանն մեծ, և ապա յամենայն վայրս պալատին. ձայն հոսմանցն գեղեցիկ իմն լսի. և ձկունք պարարեալ կայտառ։ Ընդ ասաք նստարան շուրջ զաւազանաւ. ուր բազմեալ խանն զբօսնոյր։ Նաև ապա մտաք 'ի մեծ խորհրդարանն փառաւոր. որ ունի վերնատուն վանդակաւոր, ուր նստեալ խանն լսէր զխորհուրդ խորհրդականաց՝ առանց երևելոյ։

Նաև ելեալ ընդ մեծ սանդուխս 'ի վերին դահլիճն՝ մտաք 'ի մեծ արահ խանին բարձր ընդարձակ և նկա-րէն. ունի 25 լուսամուտս մեծամեծս. տեսաք զի դայս մնան պատկերքն նորոգելոյն յարքունուստ։ 'Ի մի կողմն գոյ փոքրիկ դուռն. անտի դայլն աղաչաւոր կանայք խնդրել ինչ 'ի խանէն առանց երևելոյ. ուր են երկու-ներքին սենեակք։ Նա է առաւել պայծառ խորհրդա-րան խանին ընդարձակ յոյժ 'ի ձև քառակուսի. ունի 5 դրունս և բազում պատուհանս։ Նա 'ի մեծի հար-կաւորութեան հաւաքեալ խորհրդականաց՝ խորհէին ընդ նմա։ Նաև մտաք յասկեզօծ և 'ի գեղազարդ սենեակ խանին խանձք օթոց ձայնեալ. զի աստ նստեալ նորա ընդ տիկնաց ըմպէր խահվէ։ Նաև անցաք յայլ դահլիճ և 'ի մեծ հանդիսարան, որ ասի տիվանխանէ. ուր օթագայեցաւ Կատարինէ Թագուհին յամի 1787. մայր. 19. որ զներքին սենեակն լուացարան պատ-րեալ էր վասն իւր։

'Ի մեծ դահլիճն աստի անցանք 'ի ներքնատունն վան-դակապատ, որ հայի 'ի վերայ առաջին մեծի գաւթի. յոր նստէր խանն տեսանել զելեւմուտս պալատականաց առանց երեւելոյ: Մերձ է աստ բարձրագոյն վերնա-տունն աշտարակաձեւ, որ հայի 'ի վերայ մեծի հրապա-րակին. ուրանօր ելեալ խանն ընդ տիկնաց զբօսնոյր 'ի տեսանել զխաղս ըմբշամարտից: Այց էր աստ բոյն բազէից. խանն կերակրելով զնոսա զբաղէր. առ որով է բուն ներքին բնակարան կանանց անշուք՝ փակեալ յանձուկ վայրի. զոր քանդեալ նորոգեցին:

435. Հանդէպ պալատան է մզկիթն մեծագործ բարձր և համեմատ կրկին մինարէիւք. յոր երթայր խանն յաւ-ուրս ուրբաթու, և ելեալ 'ի վերնատունն ապակափեղկ բարձր աղօթէր, որ է 'ի ձախակողմն մզկիթին: Երկ-կայնութիւն մզկիթին է 40 քայլ. յերկուց կողմանց կամարաշէն ըստ ձեւոյ գթաց, կառուցեալ 'ի վերայ մե-ծամեծ սեանց. շուրջանակի վերնատուն և լուսամուտք: Մի դուռն բացեալ է 'ի պալատ անդր. և մեծ դուռն հասարակաց է 'ի վերայ վտակին Չուրուք սուի: Որ 'ի վերայ ոսկեզօծ դրան ընթերցաք զարձանագիր շի-նութեան այսպէս. 1104 سلامت كراى خان سنه Սելամէթ կէրայ խան ջէնէ 1159:

'Ի փողոցէ աստի մտեալ ընդ քարաշէն դուռն մէտ-րէսէին տեսաք անդ մեծ շատրուան բազմահոս, և բնա-կարանս ուսանողաց: Նստի զնան 'ի գերեզմանատուն խանից, յորում երեւին երկու մեծամեծ դամբարանք գմբէթայարկք բարձրագոյնք և մեծագործք: Ի միում են 17 գերեզմանք ցեղին Կերէի. յորում է գերեզման Մէնկլի կէրէյ խանին և Հաճիքէրէյ խանին. միայն չորք են քարաշէնք: այլք փայտաշէնք քանդակագործք ծած-կեալք կանաչ կերպասիւք: Իսկ յերկրորդումն են մահ-արձանք թագուհեաց և սուլդանից. առ երի դրանն է բարձր մահարձան կնոջ քէրիմ քէրէյ խանին:

Նայլ մեր 'ի մեծ գաւթէ անտի մտեալ ընդ փոքրիկ դուռն՝ զառաջինն հանդիպեցաք մարմարիոնեայ մահ-արձանին, յորոյ վերայ ընթերցաք ١١٨٣ قديم كراى خان Գափլան կէրայ խան: Մերձ առ նմին են վերայատացեալ դամբարանք: Որ մտեալ 'ի մեծ դամբարանն տեսաք առ դրան զգերեզման մեծի խանին Սելիմի ծածկեալ

կանաչ կերպարանք և գրեալ ՚ի վերայ . الحاج سليم كراى
خان Ելհաճ Սելիմ գիրէյ խան : Այլ յաջակողմն մարմարիո-
նեայ գերեզմանն սուլտանին գրեալ ՚ի վերայ عظامت
كراى سلطان ١١٠٢ Ազամէթ գիրէյ սուլթան : Ադիլ , بـ عادل
صاحب كراى خان Սահիպ գիրէյ խան : Սա հանգչի հի-
մնադիր Ջամիին և դամբարանացն . զորս յետոյ այլք
՚ի կատար հասուցին : Յետ նորա سعادت كراى خان Սա-
ատէթ գիրէյ խան : Ապա قره دولت كراى خان Գարա տէվ-
լէթ գիրէյ խան : اسلام كراى خان Իսլամ գիրէյ խան : بهدر
دولت كراى خان Պահատըր տէվլէթ գիրէյ խան : سعادت كراى
خان Սաատէթ գիրէյ խան : محمود كراى سلطان Մահմուտ
գիրէյ սուլթան : ١٠٤١ دولت كراى سلطان Տէվլէթ գիրէյ սուլ-
տան : محمد كراى خان Մուհամմէտ գիրէյ խան : Սա անուանի
է վասն պատերազմին , զոր արար մերձ ՚ի Մոսկով :
١٠٤٠ حسام كراى خان Հիւսամ գիրէյ խան : مكلى كراى خان
١٠٢٧ Մէնկլի գիրէյ խան : عظامت كراى خان Ազամէթ գիրէյ խան :
حسام كراى سلطان Հիւսամ գիրէյ սուլթան . և արտաքս مكلى
كراى خان سنه ١١٠١ Մէնկլի գիրէյ խան :

Անտի գնայ ՚ի պարտէզն ծառալից և ընդարձակ . ուր կայ այլ դամբարան նոյնպէս գմբէթաշէն և մեծագործ , յոր հայի լուսամուտ խանին . որպէս զի տեսեալ նորա զգերեզմանս նախնեաց իւրոց՝ յիշեսցէ զմահ իւր :

436 . Գլխաւոր բնակիչք քաղաքիս են Թաթարք իբր 5000 . և 240 մօլլայք . բազումք են փարթամք , որպէս և Հրեայք , որք բնակին ՚ի բերդն , և յամենայն օր գան ՚ի քաղաքս անդր ՚ի կրպակս իւրեանց : Յոյնք ունին եկեղեցի , որպէս և Հայք . որոց նորաշէն եկեղեցի է յանուն սրբոյ Ածածնին կանգնեալ ՚ի վերայ 4 սեանց ՚ի ձև քառակուսի հանդերձ գմբեթիւ . իսկ Հայք են 20 տունք : Տեսաք զՀին Թաղն Հայոց ՚ի հիւսիսակողմեան ձորամիջի ՚ի միջոցի կրկին ժայռաւոր լերանց . յորս կոփեալ են աստի և անտի յապառաժի անդ ներքնատունս և շտեմարանս . ուր տեսաք զաւե-

րակս բաղում տանց։ Նոյն 'ի միջավայրի կառուցեալ էր հին եկեղեցին Ս. Ծամօրն, զոր ոմանք Լուսաւորչի ձայնեն, Թերեւս վասն խորանին եղելոյ անդ։ Ընդարձակութիւն եկեղեցւոյս էր իբր 40 քայլ 'ի ձև բոլորշի, այլ անշուրկ. որմունք և յատակ ապառաժ էին։ Խորանն զարմանատաքանչ կոփեալ էր բոլորովին յապառաժի անդ. զոր գտաք կործանեալ և անկեալ ժայռն ռա ճանապարհաւ։ Տեսաք 'ի նմա խաչս և պատուհանս կոփեալս։

'Ի ժամանակս Թաթարաց կային աստ 300 տունք Հայոց, որք կատարէին զաստուածային պաշտամունս յայս քարակոփ եկեղեցի, ըստ որում պատմէ յիշատակարան հին յայսմաւուրաց եկեղեցւոյն Ակմէջիտի.
„ *Արդ գրեցաւ 'ի Թուականիս ՌՃԹ ամին. 'ի ծնըն-
„ դեան Տեառն. յաշխարհն հռոմաց 'ի Թագաւորանիստ
„ գիւղաքաղաքիս, որ այժմ աղջասարայ ասի 'ի վիմա-
„ պատ ձորավիճիս ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի, որ է
„ եկեղեցի առանց հիման ։

Նոյն յիշատակարան բոլորգիր ճաշոցին ունէ. * „ Գը-
„ րեցաւ 'ի Թվ. ՌՃԹ ձեռամբ սարգիս երիցու..
„ յաշխարհս հռոմոց որ կոչի ղրիմ 'ի մեծի արքայանիստ
„ քաղաքիս պաղչասարայս և 'ի Թագաւորութեան սէ-
„ լիմ քերէյին. ընդ հովանեաւ Ս. լուսաւորչի և 'ի
„ բազմածողով բարունակեալ և շրջապատեալ այգեաց
„ խորանացն. և 'ի կաթողիկոսութեան տն եղիազարու
„ և առաջնորդութեան այսմ նահանգի տր.. նայ արքի-
„ եպսի. և որդւոյն իւր յակոբ երջանկի. որ այժմ
„ կայ 'ի սուրղաթ 'ի վանսն Ս. նշանի ։

Որպէս գուշակի 'ի վերոյգրեալ բանից, 'ի ժամանակս խանից բազում էին աստ երթևեկութիւնք և տուրևառութիւնք։ Աստ նստէր դեսպան գաղղիացւոց. և հատանէին դրամք. որպէս ընթերցաք 'ի վերայ դրամի միոյ. 'ի մի կողմն գրեալ էր. ضرب فى باغجه
١١٩١ سراى سنه * Զարպ ֆի պաղչէսարայ սէնէ 1191 ։
Իսկ 'ի միւս կողմն خلد شاهين كراى ابن احمد كراى سلطان

* Խլտն շահին կէրայ իպնի ահմէտ կէրայ սուլթան ։

ՄԱՅՐՈՒՄ

437. Ի եկեղեցի վիմափոր 'ի բարձրաբերձ տապառաժ լերին, երեւելի ուխտատեղի ամենայն քրիստոնէից, նուիրեալ սրբոյ Ա̄ծածնին, որպէս և անուանս ծագումն եղեալ է յանուանէս Մարիամ կամ Մէյրէմ: Իջանցեալ մեր ընդ Երկայնաձորա հովիտ պաղջէպէրայն տեսաք յարեւելեան ծայր քաղաքին մրգաբեր պարտէզս և ակնահաճոյս աղբիւրս բարեջուրս. և յետ գնալոյ երկու վերստ հասաք 'ի մեծ ձորն. յերկուց կողմանց բարձրացեալ են ահագին տապառաժ լերինք. ուր էր յառաջ Թաղ Յունաց. որպէս տեսաք զաւերակս տանց, աւերի յոլով այլս և քարանձաւս, իբր նշանատունս: Իսկ եղեալ ընդ զառիվեր՝ հասաք յատ լերին, ուր է եկեղեցին Յունաց Մայրամ. Իսկ վերստնեալ ընդ քարակոփ սանդղուխս 'ի բարձրութիւն 202 աստիճանաց հասաք 'ի կողս լերին. Ընդ տեսաք յահագին լեռնամիջի քանի մի սենեակս կոփեալս և վայելուչ սրահս հանդերձ զառիվեր ձեռնապարհաւ. Է որ եղեալ 'ի վեր անդր մտաք յեկեղեցի Ա̄ծածնին ընդարձակ և պայծառ. յաջակողմն կան 4 սիւնք կափեալք 'ի վիմէ անտի 'ի զարդ յաւէտ. որք 'ի տարբէ հատանեն մինչեւ յառաստաղն տապառաժ: Բարձրութիւն տաճարիս է իբր 3 կանգուն. երկայնութիւնն 30 քայլ չափեցաք. իսկ զանհաւասար լայնութիւնն իբր 13 քայլ: Խորանն է 'ի վերին ծայր եկեղեցւոյն կողմնակի. յորմէ դուշակի թէ այս գործ է վաղեմի յոյժ 'ի ժամանակս հեթանոսութեան եղեալ: Յարեւելեան կողմն 'ի բարձրաւանդակի անդ լերին տեսաք զպատկեր տիրամօրն նկարեալ 'ի վերայ տապառաժին: Պատմեցին մեզ, թէ 'ի հնումն անդ գտին զհրաշագործ հին պատկեր Ա̄ծածնին, որով և այս տեղի 'ի յայտ եկն ազդաչելեօք. և այնուհետեւ սպա հռչակեալ եղեւ այս ուխտատեղի, ուր յամենայն կողմանց հաւաքին ուխտաւորք 'ի վերափոխմանն: Սակայն յելանելն աստի Յունաց՝ զայն հրաշագործ պատկեր տարան 'ի միասին 'ի Մայրամգօլ. անդ եւ այժմ է ուխտատեղի (573):

438. Ի զառիվայրն հիւսիս բերդ կառուցեալ ՚ի վերայ բարձրաբերձ լերին հանդէպ Սալաճուգայ . ուր եւս ընդ դժուարակոխ ուղի առապարաձանապար աւելի քան վերստ մի . հանդէպ յերեսս հայեաց ՚ի տափերն փոքրիկ գաւառն, որ բացեալ է պատուանդանաւանն ահագին ժայռից : Այս բերդ յերկուց կողմանց պարսպեալ է յանհնարաւերին բարձրաբերձ ժայռից, և ՚ի միւսոյն կողմանէ ունի հաստատուն պարիսպ և աշտարակ . ուր է մեծ դուռն և ՚ի վերայ նշան հին Թաթարաց կամ խազարաց . ուրսական գլուխ եղջիւ և երկաժանի փոխադրեալ ՚ի միմի անդ. և սա բու Թաշաւն՝ համարեալ նշան Ճինկիզ խանին : ՚Ի միջավայրի բերդին տեսանք կամար քարաշէն լորը անձրեւս բերդին : Նորաւոր տեսանք կրկին սինակոկոյս Գարայիմ հրէից քարաշէնս . և մին սինագոգն . ուր գոյր տանն անցք ստորերկրեայ, որ հանէր մինչև յաղբիւրն ձորամիջի . ուստի այժմ բերեն զջուր բերդին . զի այն անցք աւերեալ կայ :

Թուի թէ զայս բերդ չինեցին Գութք կամ Ալանք երբ բռնացեալ էին ՚ի ներքին կողմանս Ղրիմու (391): Ըստ պատմագրէին Ձենովացիք և յետ նոցա Թաթարք . որպէս և գերեզմանք նոցա յայտ առնեն . յորս գտանի և գերեզման Թոխթամիշ խանին դստեր Թաղաւհեայ , և Գուրջստանին ագնուականին : Իսկ զի Լէնկթէմուր յետ աւերելոյ Գուրջստանաց եկ ՚ի վերայ Թոխթամիշ Թաթար խանին . որ բնակէր ՚ի Չուֆուտղալէ յամի ՊԽԱ 1392 : յայնժամ խանն եւ ընդ գէմ Լէնկթէմուրայ, որ դնայր ՚ի վերայ Ռուսաց : Նաև քաջ պատանին Գուրջաց սիրելին Լէնկթէմուրայ էառ զՊաղչէսարայ և յարձակեցաւ ՚ի վերայ բերդին . ուր խանին դուստր Թոխթամիշ խանին սիրահարեալ ընդ պատանւոյն կամեցաւ տալ ՚ի ձեռս նորա զբերդն : Այլ յընդդիմանալ բերդակալաց՝ ծագեցաւ շփոթութիւն մեծ . և ՚ի խռովն անդ վիրաւորեալ անկաւ Գուրջաստանն : Զայն տեսեալ աղջկանն բռնադատեցաւ ՚ի կրից, և արշաւեալ անկաւ ՚ի վերայ պատանւոյն, և մեռան երկոքեան ՚ի միասին :

Այժմեան բնակիչք բերդիս են Գարայիմ հրէայք

խճողեալք ՚ի բերդի անդ. աւելի են քան 200 տունք. և 1200 անձինք. որ տուրեւտուութիւնս առնեն ՚ի Պաղջեսէրայ. յորոց բազումք են փարթամք. ունին զլեզու, զսովորութիւն և զձևս Թաթարաց: Մնացեալ են ՚ի հին սաղուկեցւոց անտի. որք մինչև զհինգ գիրս Մովսիսի պաշտեն. խոտեն զԹալմուտն և զաւանդական ուսանողութիւնս ծերոց: Աշխարհն աղքատագոյն տեսանի լինել ՚ի ժամանակէ անտի Սաղմանասարայ՝ երբ վա-րեցան ՚ի գերութիւն. որք պատճառեն հանդերձ ՚ի բա-ւէս Պարսից. Զի բնան. անփոփոխ. որպէս պահեն ին-քեանք. բայց առքա ընդունելին զանմահութիւն հոգւոյ (447):

Այս եղեալ մեր ընդ վերնագունան բերդին՝ գնացաք ՚ի գերեզմանատունն նոցա առ բերդաւն երկայնաձև տարածեալ. ուր տեսաք զկանայս նոցա շուրջ նստեալ զգերեզմանաւ մեռելոյ ուրուք, և արկեալ զհան-դերձս ՚ի վերայ հողոյ նորա կոծէին Թաթարերէն: Յետոյ անցեալ ՚ի ներքս անդր գտաք զհին գերեզմանս Թաղեալս ՚ի գետնի. երկայնութիւն միոյն էր 11 Թզա-չափ: Ի վերայ այլ գերեզմանի գրեալ էր հրէարէն * Այս... յովսէփ որդի խավաթայի... 5204 Ա. Ք յամի Տն 1445: Կայ ՚ի Մուրղաթ գերեզման Ահարոն բժշկին 533 ամաց (488):

ԷՍԿԻ ՇԱՀԻՐ

439. Յետ այսորիկ եկեալ ՚ի ձորէ Պաղջէսէրայէն և յառաջեալ յընթացս 2 մերոտ՝ հասաք ՚ի գեղջն բարեգիր և ջրարբի, որ կոչի Եսկի Եուրթ. Զի հին բնա-կարան: Անդի զառաջինն առն բնակէին Թաթարք, և էր երևելի քաղաք նոցա. որպէս դուշակի ՚ի շի-նուածոց, և ՚ի գերեզմանաց: Տեսաք ՚ի մուտս գեղջն կրկին մզկիթս քայքայեալս. բայց ՚ի գերեզմանատան անդ՝ կանգուն կան 3 երևելի մեծագործ դամբարանք զմէջեթայարկք բարձրաբերձք: Մին է առաւել մեծա-շէն ութանկիւնի. ունի Ծ լուսամուտ հանդերձ մար-մարիոնեայ շրջանակօք. տրամագիծն է 25' քայլ՝ չա-փեալ ՚ի ներքուստ: Տեսաք ՚ի ներքս մնացորդս մար-մարիոնեայ սեանց և վերնախարիսխս այլազգն հան-դերձ:

Բայց ուղևոր յառաջ անցեալ զննեցաք զայլ եւս եկեղն զամփոփարանս ու Թանկիւնիս, այլ ոչ այնչափ մեծածաւալս, որպէս զառաջինն։ Բարձր գետնի իբր 'ի հրապարակի կառուցեալ կայ քարաշէն աղբիւր քառանկիւնի. յառաջ հոսի անդադար պատուական ջուր։ Ընդդէմ ատրուշանին Թաթարաց, որք մշակեն զգեղեցիկ պարտէզս Ջրարբիս, և զծառաստանս մրգաբերս։

ԽԱՉԻՍԱՐԻ ԵՒ ԳԵՂՑԻԿ

440. Դարձեալ մեր անտի և անցեալ ընդ վայելչագոյն զարշաւանսն հասաք 'ի գետն Կաչէ ասն, որ ելանէ 'ի գեղեցիկ հովտէ մերձ յԱնթեղ օղլու, 6 վերստ հեռի 'ի Պաղչէսէրայէ. և անցեալ ասաի գնայ Թափի 'ի Սեաւ ծով մերձ 'ի բերան Բելպեկին 'ի ծոցն Կեօզլէվի։ Անտի հասաք 'ի գետն Պէլպէկ, որ ելեալ յապառաժից Աքէօզ դաղի' անկանի յայլ հովիտ, և ընդունի զանունս Պէլպէկ. ապա գնայ 'ի բերան Սեւաստոպոլի։ Երկոքին կողմունք այսոցիկ երից գետոց որպէս և Կաչայկանաքին լի են այգեստանեօք և պտղաբեր ծառովք. զպտուղ, ուղևացս տանին 'ի Ռուսաստան։ Բայց թէ երբեմն առ եզերբ Պէլպէկի բնակէին Չերքեզք բերեալք 'ի Կապարդայէ. վասն այն այս գետ կոչէր Կապարտա. 'ի մերձակայ վայրս գոյ հին աւատաբակ կոչեցեալ Չերքէզ քերման. առ երի երեսին մնացորդք պարսպաց։ 'Ի մերձակայ գիւղն գոյ ջրհոր յոյժ խորին կափեալ յապառաժի հարիւրաւոր աստիճանօք։

ՄԱՆԳՈՒԲ

441. Սուղզեալ զընթացս մեր դէպ 'ի հարաւ' տեսաք 'ի մէջ Պաղչէսէրայի և Պալբալավայի զաւերակ Մանկգուբայ երևելի հին մայրաքաղաքին հասարակապետութեան Գոթաց, ուր զօրացան նոքա և ամրացուցեալ զպարիսպս կոչեցին Դորոս կամ ըստ յն. Դորոնթոն Դոռնուն։ Դոկանքի ըստ հնախօսից յերեքտասաներորդ դարուն տէրութիւն Յունաց 'ի Խրիմ իբրև բաժանեցաւ 'ի զանազան փոքրիկ իշխանութիւնս, Գոթք և Խազարք բռնացան յայսոսիկ կողմանս և հաստատեցին հասարակապետութիւն. մինչև տիրեցին Ճենովացիք և

աշխատասիրեցան սատ ամփոփեցուցեալ զանդրդն. որպէս ցուցանեն ձեւ բոլորշի աշտարակաց, անկեալ կործանեցելոց, և հիմունք պարսպաց, նաև անդիք ամբարտակաց. Ի յե-տին ժամանակս բնակիչք անդուստ էին Յովնացիք և Հրէայք, որք հետզհետէ ցրուեցան անտի և մնաց քա-ղաքն ամայի. զոր քանդեցին հետզհետէ՝ տանելով զքա-րինս հին շինուածոց այլուր. մինչ զի եղծեալ անուամբ զամենայն վայելչութիւն բերդաքաղաքիս։ Պտուղք տե-ղւոյս այնչափ բարձրացեալ և վայելուչ է շրջապա-տեալ 'ի գեղազուարճ հովտաց, մինչև գեղեցիկ շի-նուածք և աշտարակք երևէին 'ի կէտ զուգահեռ. այլ այժմ հատուածոր է ընդ գետին։ Սա որով է հովիտ և վտակ Մայեանդր կոչեցեալ։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿՈՂՄՆ ԽՐԻՄՈՒ

442. Յետ զննելոյ մեր զգամաքաւանդս 'ի մէջա-վայրս Խրիմու՝ ժամ է այժմ ուղղել զընթացս մեր ընդ արեւմուտս. ուր գնալով ընդ աջակողմն Սիմֆերոպոլի՝ հան-դիպեցաք շրջապատոյս անտի Սալղըրին. Է որ կոչեն անդամ անցեալ հասաք 'ի լուսարձակ գիւղն Թուեկէ չօքրակ։ Անտի ուղեւորեալ ընդ զանազան գիւղօրէս Թաթարաց. ոչինչ ծանօթութիւնս տեսաք ուրեք. մինչև հասաք 'ի մեծ գիւղն Սաքի յետ 6 ժամուց, ուր նստի աղաղակ իշխան 'ի կողմանէ տէրութեան Ռուսաց։

ԴՈՒԶԼԱ

443. Ի երեւելի և ընտիր աղեհան 'ի մէջ Խրիմու ա-ւերի Սաքին. ձգի Է երկայն մերձ 'ի ծով. առաւ է աղն և բարեհամ յոյժ, մանաւանդ հարաւային կողմանն. որ մաքրագոյն յօգոստոսի։ Ուր նախ երևին կարմրա-գոյն որդունք, և ապա կատարեալ լինին իբր սերմն մա-քրագունչ ջրոյն. որով սկսանի քարանալ կամ ապակիա-ցեալ դոյացուցի աղ անկիւնաւոր սպիտակ։ Շրջապատ լճին համարի 18 վերստ. անցեալ մեր ընդ արեւելեան բազուկն տեսաք զհող տեղւոյն աղեփայլ, և ջուրն այն-պէս տաքացեալ, զի ձեռք մեր եռեալ 'ի նմին պա-տեցան աղիւ։ Նոյնպէս տիղմն այսր աղեհանի ապա-քինիչ է յօդացաւութեան. ուր յաճախեն ախտաժէտք

յօգոստոսի, ընկղմանեալք 'ի տղմի անդ. այլ ոչ կարեն ընդ երկար տեւել 'ի նմին առ. սաստիկ ձգողութեն տղմոյն. զոր Արրխանոս կոչէ Ամիդէրա:

Յարեւելեան կողմն աղեհանին մերձ յարքունի Ճանապարհն տեսանք 12 մեծամեծ ջրհորս սակս անասնոց. ուր ջուրն փոքր ինչ աղեհամ է: Իսկ 'ի հարաւակողմն դոյ պարանոց, անջրպետ 'ի մէջ աղեհանին և ծովուն: Ուր դոյ և ուղի գնալոյ 'ի Սեւաստօպօլ անցեալ ընդ գիւղին Խօշշէլ Եաւ. և ընդ բերանս գետոց Պուլկանաքի, Ալմայի, Խաչի, և Պելպեկի. ուրանօր 'ի տեղիս տեղիս երեւին փոքրիկ աղեհանք (450):

ԽԱՐԱ ԹԷՓԷ ԵՒ ՍԱՍԸԽ

444. Յետ միոյ ժամու հասանք 'ի գեղեցկագիր բլուրն Խարա Թէփէ. զի 'ի հեռուստ երեւի ամփոփոյն սակս բարձրութեան դիրից: Սա որոշ է արեւելեան ծայր Սասըխ լճին. որ ձգի ընդ արեւմուտս ժամս 2. նոյնչափ և ընդ հարաւ. 'ի նոյն ծայր է Սանոյ գեղ: Պարանոցն ընդ մէջ լճին և ծովուն Պէլ կոչի, որ է ուաղուտ ձեւացեալ յաւազոյ գետոց Պօնտոսի կուտեալ աստ 'ի բուռն ալեաց ծովուն, որպէս երեւի:

Լայնութիւն պարանոցին չէ միօրինակ յամենայն տեղիս. զի սկիզբն լայն է 3 վերստ. միջավայրն 2. ուր գան պահապան խազախք Դոնացի կոչեցեալք. որք յամենայն եզերս Խրիմու բոլորեալ աստ և անդ պահպանեն: Իսկ արեւմտեան ծայր լճին հազիւ լինի մի վերստ լայն. ուր երբեմն ալիք ծովուն յորդեալ խառնին 'ի լիճն: Սորա տղմախառն ջուր ոչ զօրէ սնուցանել և աճեցուցանել զձկունս. Թէպէտ տիղմն առողջարար համարի յօդացաւութեան. ուստի չիք անդ ձուկն:

ԿԻՕԶԼԷՎ ԿԱՄ ԵՒՊԱՏՈՐԻԱ

445. Է քաղաք ծովեզերեայ անուանի և բարեշէն հիմնեալ 'ի հնումն յարեւմտեան ծայր լճին 'ի մեծէն Միհրդատէ, որպէս ասեն, յիւր անուն կոչելով զայն Եւպատորիա. ըստ այլոց Pompeopolis. Տեսաք և ոսկի դըրամ ըստ մեծութեան Ֆնտըղի 'ի մի կողմն 'ի շըրջանակն դոյր գիր յունարէն ΒΑΣΙΛΕΩΣ ΕΥΠΑΤΟΡΟΣ

Սաւփլեօս Էլէֆտէրօս. 'ի միջոցին գետս մօրուաւաւոր եր-
կայնահեր և թաւ 'ի գլուխ. դէմքն ահեղ. աչքն ա-
հաւոր և ունչքն մեծ. որ թուի լինել մեծին Միհրդա-
տայ. թէպէտ նորա դէմք հասարակօրէն անմօրուս գրի-
նաև ունէր զթիկամբ վերարկու ըստ ձևոյ հռովմայե-
ցւոց։ Իսկ 'ի միւս կողմն դէմք կնոջ մօրուաւոր և
հերապանծ առ, որով կան երեքին տառքս ΣΙΤ. և ա-
նունն ծայր նեաի։ Օ այս տիպոս Յոյնք եաուն Միհր-
դատայ ըստ որում Նշգարիք կամ Տօրամօսի, յետ
մեծամեծ գործոց։

'Ի պատմութեան Խաթարաց աւանդի թէ այս ա-
նուանի քաղաք յանցանել ժամանակաց աւերեալ ան-
հետ եղև. մինչև Ճ'ենովացիք յետ տիրելոյ ծովեզե-
րեայց Իսրիմու՝ շինեցին աստ փոքրիկ դղեակ 'ի ծայր
լեզուին, որ կոչի Լօտօս պուռնի. զոր կործանեցին
Խաթարք և թողին ամայի։ Նոյա սկսան Խաթարք
բնակիլ աստ և անդ յառանձին անձկս. զորս կոչէին
Պէրչէօղ էլի. յորմէ եւ առեն անուն Կէօզլէվ։ Կամ
որպէս այլք ասեն, աղքատին տունք նոցա շինեալ էին
'ի թաղեաց. զոր նոքա կոչեն Կէրէղ. որով և կոչեցաւ
տեղին Կէրէղլէ էլի. կամ Կէօզլէվ. թէպէտ 'ի մէջ հին
անուանց դնի և Կէօլէվէ (565)։

Սակայն թուի թէ Խասասարք կամ Խաթարք կանգ-
նեցին կամ նորոգեցին անգրէն զքերդն Կէօզլէվի
հանդերձ լայն և խոր խրամաւ. որ ձգէր 'ի միոյ ծայրէ
ծովուն մինչև ցմիւսն։ Նոյն յետ անցանելոյ առ
Ռուսս՝ բոլորովին քանդեցին և լցին զխրամն. այժմ
հազիւ որոշին տեղիք 'ի մնացուածոց ինչ բերդին։

Նոյն բերդ ունէր 5 մեծ դրունս. ա՛ Իսքէլէ գափուսի,
որ է 'ի ծովակողմն և մինչև ցայժմ ամբողջ կայ հան-
դերձ մասամբ ինչ պարսպին։ 'Ի ներքին կողմն յեր-
կրորդ կամարի տեսանք փորագրեալ 'ի վիմի գլուխ մար-
դոյ երկայնագագաթն. զոր անուանեն նշան դրան։ բ՛
Նօր գափուսի յարևմտեան կողմն. զոր ապա փակեալ
տակս ձախող դիպուածոց ինչ կոչեցին Խաար գափուսի.
այժմ չիք հետք այսր դրան, որպէս և հետևորդին։

գ՛. Խօփքրա գափուսի. յաջակողմն այսր դրան փորագ-
րեալ կայր 'ի վիմի սանտր իբր նշան բերդին. քանզի
և 'ի վերայ հին գերեզմանաց փորագրեալ տեսան այս
ձև։ Նա երի դրանս գոյր աշտարակ հզօր։

Դ. Մեծ ծուլս գեհեայ. յորոյ նշանն փորագրեալ էր 'ի վիմի պորտ մարդոյ և 'ի վերայ ագուցեալ ապակի։ Նա որով էր փոքրիկ գուռն Տէղնէ կոչեցեալ. որ նշանակէ բացուած. այժմ չիք տեղին. ուր բազում տունք և ընտանութիւնք շինեցան և շինին հետաղհեալէ։

Ե. Օրուան եաւղար գեհեայն. որ կանգուն կայ մինչև ցայժմ 'ի մէջ շուկային. առ որով գոյր աշտարակ և փոքրիկ գուռն Տէղնէ ձախնեալ. յորոյ վերայ փորագրեալ կային կրկին ստինք իբր նշան։

Յարևելեան կողմն մերձ 'ի ծովն գոյր ներքնաբերդ պարսպապատ. և 'ի ծայրն մեծ աշտարակ բոլորշի բարձր և եռայարկ. որ 'ի յետին ժամանակս կոչեցաւ Եսանըլ խուլէ վասն անդ սպանանելոյ զմահապարտս։ Սակաւ հեռի առնի գոյր այլ աշտարակ հզօր. որպէս և 'ի միւս կողմն մերձ 'ի Եսան Ճամի. նաև 'ի հիւսիսակողմն զօրաւոր աշտարակ։ Այս ներքնաբերդ ընդ աշտարակաց թուի լինել գործ Ճենովացւոց, զոր շինեցին յետ առաջնոյն յապահովութիւն նաւահանգստին, որ է 'ի հարաւակողմն բերդին լայնաբաց և անպատսպար 'ի հարաւային հողմոց, որ երբեմն ձգէ զնաւս 'ի ցամաք և վտանգէ։

446. Եսան Ճամի. է մեծագործ շինուած քաղաքիս մերձ 'ի ծովն, բարձր յայժ, զի յամենայն կողմանց երևի, ունի բարձր և լայնանիստ գմբէթ կապարապատ կանգնեալ 'ի վերայ 6 կամարաց և շուրջանակի 12 գմբէթս կապարապատս. 'ի մեծի գմբեթի են 15 լուսամուտք։ Ձև արքունի մզկթիս է քառակուսի բոլորովին քարուկիր. և յերկուց կողմանց կրկնայարկ. երկայն և լայն 40 քայլ։ Դուռն է 'ի հիւսիսակողմն. ունի գաւիթ երկայնաձև գմբէթաւոր, կանգնեալ 'ի վերայ 4 մարմարիոն սեանց. Թէպէտ 2 սիւնք յերկոսին կողմունս ծածկեալ են 'ի մէջ որմոյ։

'Ի ճակատ մեծի միհրապին ընթերցաք զթուական շինութեանն զայս օրինակ. قبول الخير *Գապուլ էլ խէյր ‖։ Ի տառից առնի ելանէ թիւ ۹٧۹ ըստ որոյ շինութիւն լինի 263 ամաց։ Սակաւ ինչ 'ի ստորև ընթերցաք զայլ գրուած այսպէս. كلّما دخل عليها زكريّا المحراب *Քիւլ-լէմա տախալէ ալէյհա զէքէրիյէ էլ Միհրապ ‖. Ժը Յարա-

ժամ 'ի մտանելն յաղօթս խոնարհեալց ընդ միհրապին , կամ տաճկի աղօթարանին ։ Առընթեր արտաքին դրան էր մեծ աղբիւրն , որ այժմ է աւերակ ․ Նոյնպէս բաղանիք քարաշէն հանդիպակաց՝ էր վախըֆ այսր մզկթի ․ որ ամբողջ կայ ։ Սա 'ի ծովակողմն է Պուղխան հնաշէն ․ 'ի վերայ դրան գրեալ կայ 'ի վիմի անդ ․ محمد شاه اغاخان اعظيم * Մուհամմէտ շահ աղայ խան ազիմ || ։

Մերձ է Սուլուխան ամրաշէն յոյժ՝ շինեալ 'ի հնումն 'ի հովուէ յեկամուտ 12 աղբերաց իւրոց առ որով էր հին Պէզազիստան ․ այս ամենայն շրջակայ տեղիք վախըֆ էին մեծի մզկթին ․ որպէս և գրեալ կայ 'ի վերայ դրան այսր իշխանի 'ի ժամանակս Ասլան քէրէին ․ صاحب الخيرات والاحسان ارسلان كراى خان بن دولت كراى خان * ١١٤٠ Սահիպ էլ խայրաթ վէլ էհսան արսլան Գէրայ խան պին տէվլէթ կէրայ խան 1165 ։

'Ի քաղաքամիջի անդ տեսաք քառանկիւնաձև քարաշէն Թաղարին ․ ուստի բաշխէր ջուրն յամենայն կողմանս քաղաքին ։ Ոչինչ կարի հեռի է սոտի բարձրաշէն Թէքքէ քառուկիր ութանկիւնի գմբէթայարկ , և 'ի ներքսուստ բոլորշի ․ ուր շուրջանակի յօրմն են 19 քարաշէն խորշք բնակարանք Տէրվիշաց ։ Առ որով է լճակն Խըյալ չէշմէ ․ որոյ յատակ է ապառաժ ․ երբ ցամաքի ջուր լճակիս , յայն ամ ոչ լինի առատութիւն հացի ասեն Թաթարք ։ Անդ է Չումաղա Ճամիւ անուանք և Մէւլէւի Թաթարաց ։

447․ Իսկ 'ի միւս կողմն քաղաքին է Թաղն Պարայիմ Հրէից որք են 800 տունք ․ ունին կրկին երևելի սինակոկայս , զոր նոքա Քընօլս կոչեն , բոլորովին տալայատակք , քարաշէնք և սիւնազարդք առընթեր միմեանց ։ Տեսաք 'ի ներքս քանի մի արծաթապատ հնգամատեան ծծաշունչս , որ են մագաղաթեայ գրչագիրք փաթութեալք և երկայնաձիգք ըստ հին սովորութե ․ զորս երբեմն հանեալ և եդեալ 'ի վերայ կերպասապատ գրակալին վերծանեն 'ի լուր ժողովրդեան ․ մերձ է անդ դպրոց նոցա ։ Նոցա օրէնսդիր եղև Ահարոն բժիշկ 550 ամօք յառաջ ուսուցանելով նոցա զանմահութիւն հոգւոյ զհանդերձեալ կեանս ևն (488) ։

Եկեղեցին Յունաց և Հայոց է յարևելեան ծայր քաղաքին. որ է բարձրաշէն և խաչաձև հանգերձ կաթուղիկէիւ. ունի շուրջանակի հրապարակ. ուր է դպրոց նոցա :

Արտաքոյ բերդին էր Թաղ Հայոց. որք ունէին 'ի հնումն եկեղեցի յանուն սրբոյն Նիկողայոսի. զոր այրեցին Թաթարք : Ապա մերձ 'ի տեղւոջն կանգնեցին զայլ եկեղեցի փայտաշէն. իսկ 'ի 1817. յունիսի 13. հիմնեցին յառաջին տեղւոջ զայժմեան քարաշէն եկեղեցին նովին անուամբ. վայելուչ կառուցեալ 'ի վերայ երկուց լայնանիստ կամարաց. ունի 3 դրունս և սիւնազարդ բակս : Սակայն տակաւին անյարկ գոլով 'ի ժամատան կատարեն զծայլին պաշտամունս : Հայք 'ի սմին քաղաքի են 90 տունք. որք պարապին 'ի տուրևառութի : 'Ի բազում տունս քաղաքիս տեսաք ստորերկրեայ անցս. և 'ի մէջ ջրհորոց պահարանս. յորս մտեալ պատսպարէին 'ի հնումն յարշաւել Թաթարաց :

Յարևմտեան ծայր քաղաքին է արգելանոցն հիմնեալ 'ի վերայ բլրակին Խոտոս պուանի. որ պատսպարէ զնաւահանգստեան յարևմտեան հողմոց, որպէս 'ի միւս կողմանէ պատսպարէ յարևելեան հողմոց գլուխն Նգեառի. մինչ անպատսպար է 'ի հարաւային հողմոց : Ճենովացիք աստ էին կառուցեալ զդղեակն, որպէս 'ի միւս ծայր քաղաքին գոյր այլ դղեակ 'ի պաշտպանութիւն նաւահանգստին. ուր տեսաք հանեալ 'ի հողոյ մեծամեծ քարինս : Յաւուրս մեր գտին աստ ընդ հողով երկու վիմատաշ արձանս. մին առն որ գծեցեալ էր ըստ ձևոյ հին Յունաց և 'ի գլուխն սաղաւարտ. իսկ միւսն էր կնոջ. որոյ զգեստ էր ըստ տարազու հռովմայեցւոց :

Աստանօր մերձ 'ի ծով տեսաք ջրհոր բարեհամ ջրոյ. ընդ որ անցեալ ջուրն գնայ 'ի ծով. 'ի յատակն գոյ մեծ քար, զոր երբեմն հանեալ` գտին զջուրն աղեհամ : Սակաւ հեռի աստի դէպ յարևմուտս են 5 մեծամեծ ջրհորք Օմար խոճայի ձայնեալք. որք մատակարարեն զջուր քաղաքին. ջուրն է առողջ և քաղցր` երբ հողմն շնչէ 'ի ցամաքէ. և երբ 'ի ծովէ` լինի փոքր ինչ աղեհամ : Աստ առ տեղեաւս է զինուորանոցն բովանդակեալ յերկուս շինուածս. մին վասն հասարակ զինուորաց, և միւսն վասն զօրապետաց :

Աստի ուղղեալ զընթացս մեր ընդ արևմուտս և ան-

ցեալ ընդ զանազան գիւղօրէս Խամթարայ՝ Հասանէ 'ի միւս լեզու ծոցոյն անուանեալ Պօյնոս պուռնու . ուր առ-ասք աղ ընծթեր ծովու աղէհան . այլ չէ ընտիր աղ նո-րա : Այս երկիր կոչի Պօյնոս . որ ձգի ընդ արեւմուտս ժամս երիս մինչեւ 'ի լիճն Տժուղալա :

ՑՕՆՂՈՒԶԼԱՒ

448. Այ երեւելի լիճ Իպօլիմու եաւսնկիւնաձեւ երկայ-նեալ դէպ 'ի հիւսիս, որ թուի լինել բազում ծովուն . յորում որոշեալ է 'ի ձեռն նեղ աւազուտին Պէկ ձայնե-լոյ : Այս պարանոց ըստ մեր դիտողութեան պատճա-ռեալ է յաւազոց բերելոց 'ի բուռն ալեաց ծովու . որ-պէս ասացաք առեւ Սաբրի լճին (444) : Երկայնութ պարանոցին ձգի ժամս 2 . իսկ լայնութիւնն 'ի տեղիս ինչ է 100 քայլ . մինչ զի երբեմն ջուր ծովու խառնի ընդ լճին . որոյ շրջապատ դնի կէսօրեայ ճանապարհ . ուր չիք ձուկն :

Այս լիճ երբեմն յորդացեալ զալիս և բռնութբ հիւսիսային հողմոյ զեղու զջուրն 'ի պարանոցն . Սւ-րանօր համադիպեալ մեր մեծի ալէկոծութեան տեսաք մերձեալ մեզ զջուր լճին 'ի միջավայրի անդ : 'Ի հիւ-սիսային ծայր լճին թաղի գետակ . ուր գոյ և Խ.էքքէ . երբեմն հաւաքին Տերմիշք և պարառեալ գոչեն , որք կոչին Սօֆու (408) :

Այսր և անուր երկիրն կոչի Խ.ուրլաս . յարեւմտեան ծայր լճին օթագայեցաք 'ի գիւղն Զէկէրհամէ : Ընդ 'ի մերձակայ գիւղն տեսաք հին Խ.էքքէ և մզկիթ քա-րաշէն : Այսր սկսանի արեւելեան ծոց Ֆօռօղ սարին, որ կոչի Պէլին . առատ են աստ պատուական ձկունքն խաճղաճս, իլարիչ, և այլն . զոր ազխտեալ առաքեն յայլեւայլ կողմանս :

ԷՍԿԻ ՖՕՌՕՃ

449. Ի մեծ լեզու կամ սար ձգեալ ուղղակի ընդ արեւմուտս յերկայն 6 ժամ . տեսաք յերկրային կող-մանս լեզուին ժայռս և վտանգաւոր ապառաժս 'ի ծո-վի . որով չեն ապահով երկոքին ծոցք Ֆօռօղին : Այն իրի Սուաք կանգնեցին 'ի ծայր անոյր աշտարակ քա-

բաշխեն բարձր 60 կանգուն. յոր 'ի գիշերի վառեն լապտերս յապահովութիւն նաւուց ։

Լայնութիւն լեզուին ծովէ 'ի ծով լինի 10 մղոն. ուր տեսանք զբազում գիւղօրէս. զի երկիրն է բարի. Խօսի թէ 'ի հնումն գոյր աստ լապտեր. զի այս լեզու կոչի 'ի յունաց Պոգէնօ Փանարի ։

Հիւսիսային ծոցն կոչի Տէղ Ճարլախ. ըստ հն. Tamirake, ուր է հին քաղաք Թաթարաց Խալլեան ակ-ձիէր. որ ունի գեղեցիկ նաւահանգիստ ապահով ձըգեալ 'ի ներքս ։ Սակայն երբեմն ալիք ընդհարեալք մրրկաց բերանոյն, անհանգիստ առնեն զնաւս 'ի նաւահանգստի ։ Առոր յաճախեին նաւք 'ի ժամանակս Թաթարաց. այլ այժմ մնացեալ են քանի մի տունք և եթ Թաթարաց և մզկիթ ։ Մերձ է աստ Օլմէէր. ուր գոյր Թէքքէ և քաղաքն Տերվիշք ։

Ասոր սկսանի մեռեալ ծոցն երկայնիւ 'ի ծոց անդր մինչեւ ցՕռգապու (404) ։ Առըր ղօլար է գիւղ 'ի մէջ Թարխանու և Օտլին, որ ունի երկայն լեզու ձգեալ 'ի մեռեալ ծոցն ։ Այս ծովեզերեայ երկիր կոչի Ամղըր. 'ի հն. կոչէր ծոց կարկինիդեան. ուր գոյր Կարկինէ քաղաք և հին բերդ Նեկրոպիլա ։

Հանդիպակողմն մեռեալ ծովու է Արաւըլղած կղզին խոստակէս, ուր Ճարակեն անասունք ։ Ասոր մինչեւ ցաւր քիթն Պերեկոպու՝ կոչի ընթացք Աքիլլեայ. ըստ յն. Տրոմոս աքիլլէոս. եւ զի քաջն Աքիլլէս աստ առնէր զփորձութիւն իւր ։ Գտանք զպղնձի դրամս. 'ի մի կողմն կայ ահեղատեսիլ մեծական կերպարան մեծրուսատր. և 'ի միւս կողմն մեծ տուր և 'ի վերայ տառքս ΝΙΚΗ, Նիկէ, և 'ի ներքոյ ΑΧΙΛΛΕΥΣ ΤΡΑ Աքիլլէոս. Թրա ։

Ընդ երկայնութի մեռեալ ծովու հանդէպ Պերեկոպու-ունի ձգի երկայնաձև կղզին խոստակէս Թենիբէ ասու-ոյ ։ Տես 'ի Պլինոս. 230 ։

ԱՅԼ ՄԱՍՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ

450. Յետ շրջելոյ մեր յարեւմտեան ծովեզերեայ վայրս սկսեալ 'ի մեռեալ ծովէ մինչեւ ցծոցն Կեօզլէվէ, աստ դարձ արարեալ անտի ընդ պարանոցս Սաուրս Լճակին և Աղէհանին (443) հասաք 'ի զլուխն Կղզ-

ղշխօ․ ուստի սկսանին ծավալեալք ժայռք մինչև ցբերան Սգեռոյն: Ասեաւ հասարակ 'ի բերանս գետոց Պուլկանոսի, Սլամյի, Խոպի և Պէլուէկի, տեսանք զգեղեցիկ պարտէզս և այգիս մինչև հասարակ 'ի բերան Սգեռոյն:

ԱԳԵԱՌ

451․ Մեծ ծով և բազմապատիկ նաւահանգիստս անմնացական․ զոր մարթ է կոչել պանծալի ուսուրան բնութեան, որ բաժանեալ գոլով յայլեայլ ծովս 'ի մէջ ծովոյ՝ հիացուցանէ զմիտս, և զարմանալի զեղեղութիւն ընծայէ մեծամեծ նաւուց թէ 'ի ձմերել և թէ 'ի հանգչել կարաւանօք: Նմին եւս աւուրք նաւուց պատերազմականաց յօրինեալ 'ի Նիկոլայեֆ և 'ի Խերսոն ուր հանգստեանն 'ի կատարելութիւն անմնացեալ կարաւանօք և զինուք (380):

Երկայնութիւն մեծի ծովուն հաշուի 7 մղոնս․ զոր Թաթարք կոչեն Գարա Տէնիզ․ բառ հէն․ նաւահանգիստս Ք․Թեկնոսի․ և միջակայն լայնութիւն 600 գրկաչափ գնի․ 'ի լայն տեղիս 800․ և յանձուկ տեղիս 300․ իսկ խորութիւնն է 12, 10, և մինչև 3 գրկաչափ․ յաբում չիք ընաւ ժայռ․ այլ միջավայրն տղմուտ է․ և եզերքն քարուտ: Ջուրք ծովուն լայն է 750 գրկաչափ պատապարեալ ամբարտակն պատանշօք և զինուք․ 'Ի ամառ աւուրսն և զովացուցանեն հակառակ հողմոյք․ զի հողմն խիստ երբ շնչէ 'ի ծովէ 'ի ներքս 'ի ցերեկի, փոխի յերեկոյին կամ 'ի գիշերին յընդհակառակն և շնչէ 'ի ցամաքէ դէպ 'ի ծով 'ի դիւրութիւն ելից և մտից նաւուց և 'ի մաքրութիւն օդոյ․ որպէս փորձեցաք․ քանզի օթագայեալ մեր յարքունական նաւի 'ի մէջ մեծի ծովուն տեսաք զի 'ի գիշերի փոխեալ հողմն շնչէր 'ի ցամաքէ:

Արևմտեան կողմն մեծի ծովուն է սպիտակափառ՝ ընքարաժայռ և սպիտակահող լեռնակք․ որով այս վայր կոչեցաւ 'ի Թաթարաց Աքթա, որ Սպիտակ լեառն: Աստ էր հին գիւղաքաղաքն Թաթարաց նոյնանուն, որ հեռի էր 'ի բերանոյ անտի 5 վերստիւ․ ուր այժմ տաճկին փոսյասուշեն կարասիս և զայլ սպասս արդուն նաւուց․ Պրերեալ մեր զկողմանս մեծամեծ լերանց

որեւմտեան կողմն ծոցոյն՝ մերձ 'ի բարձրաւան-դակի. զերկու աշտարակս լապտերաց 'ի հանդիմանա-դիրս տեսութեան, սակս ցուցանելոյ նաւուց զմուտ նաւահանգստին 'ի մթան:

452. Սեւէրնայ կամ Սեւերնայա. այսինքն Հիւսիսայինն, է աւան 'ի Հիւսիսային կողմն ծոցոյն 'ի միջավայրի անդ, որ 'ի Թաթարաց կոչի Թափալուրա խոհնեպոլ. առ զնս աստ և անդ մեծամեծ տունք և եկեղեցիք, եւս և մարտկոցք ընդ-նեանց 'ի պաշտպանութիւն ծոցոյն: Նաւք մինչեւ ցյե-րանն մեծ՝ զտանին բազումք խոյ և փոքրիկ ծոցք. այլ չեն բաւական պատսպարել զնաւս: Իսկ 'ի բերան ծո-ցոյն գոյ երկեւլի մարտկոց Կոստանդնեան կոչեցեալ, որ ոտնկանի հանդէպ Պաւլովսկի (462). գոյ ապաստան 'ի ծայր անդ և աղէհան փոքրիկ 'ի ցամաքի:

'Ի Սեւէրնի են բազում պատրաստական նաւակք, որք փոխադրեն զանցաւորս 'ի միւս կողմն մեծի ծոցոյն յանուանի քաղաքն Սեւաստոպօլ:

ՍԵՒԱՍՏՕՊՕԼ

453. Նստեալ մեր նաւակս 'ի հանդիպակաց կողմն 'ի գեղեցկահայեաց և 'ի բարեշէն քաղաք արքունի Սեւաս-տոպօլ շինեալ 'ի վերայ մեծի լերին, որ սկսեալ 'ի ծո-ցոյ անտի և 'ի մեծ բարձրէն հասանէ մինչև ցգլուխ լե-րին յերկայն 2 վերստ և աւելի. ուր մեծամեծ շինուա-ծովք և արքունի գործատունք այլովքն հանդերձ: Փողոցք նորա են ուղիղ. և ըստ մեծի մասին զուգա-հեռական. աստ է մեծ բազուկն Կատերինեան պողոտա. ընդ երկայնութիւն բազկին շինեալ է քաղաքն. որ է գլխաւոր նաւահանգիստ: Յորոյ 'ի բերան յօրինեալ կայ քարաշէն մեծ սանդուխք քաղաքին, ընդ որ ելեալ մեր 'ի հրապարակ անդր, տեսաք զարքունի մեծ տուն շինեալ 'ի 1787 վասն բնակութեան Բ Կատարինէ կայ-սերուհւոյն: Նաև սկսանին յերկուց կողմանց մեծա-մեծ պալատք պատերազմական նաւապետաց և ազ-նուականաց. ուր որոշ է շուկայ քաղաքին և սակա-ւաթիւ վաճառատեղիք. իսկ զի մեծ մասն բնակչաց են նաւաստիք:

Ընդ 'ի հարաւակողմն մեծի փողոցին մերձ զքարաշէն գեղատեսիլ և ոսկեզօծ եկեղեցին Պօղոսայ, բարձր

պայծառ և սիւնազարդ ։ Բարձրահայեաց է կաթու-ղիկէն . 'ի մէջն հանդէպ երևալ կայ մեծ պատկեր Յսի և Տիրամօրն բոլորովին արծաթապատ ։ Նոյնպէս 'ի վերայ քան զխորանն յաջակողմն կանգնեալ կան երկու մարդաչափ պատկերք արծաթապատք . մին Տիրամօրն և միւսն Պետրոսի և Պօղոսի ։ Նոյն 'ի ձախակողմն նոյնա-չափ կրկին պատկերք արծաթապատք յարութեան, և սրբոյն Նիկողայոսի . յորոյ անուն շինեալ է այս եկե-ղեցի . որ ունի փոքրիկ գաւիթ և զանգակատուն բարձր և սիւնազարդ ։ Նաւաշէն խորանին առաջ կայ պատ-կեր Յսի գեղեցկագործ արծաթապատ ոսկեզօծ ։

Շուրջ զեկեղեցեաւս գոյ չափաւոր հրապարակ . ու-ուր սկսանի մեծ գործատունն կարասեաց նաւուց , և հա-ւանէ մինչև ցծովն՝ բաժանեալ 'ի զանազան վայրս մե-ծամեծս . յորս յօրինին ամենակերպ կարասիք երկա-թեղէնք և պղնձեղէնք 'ի պէտս նաւուց ։

Սոյն է զինարանն և նաւարանն , ուր յօրինին նաւք ոչ այնչափ մեծք , զի մեծամեծ նաւք այլուստ գան աստ և զարդարին (381) ։

Եկեղեցին Յովնայ է 'ի վեր անդր բարձրահայեաց՝ խաչաձև կառուցեալ 'ի վերայ կ մեծամեծ սեանց . ունի և փոքրիկ դպրատուն առ. սակս յոյն մանկանց ։ Նա-երի արտաքին գրան յորմն առաջ ամփոփ մարմարիա-նեայ վէմ երկայն 3 ոտն . և լայն՝ մի և կէս . յորոյ վե-րայ փորագրեալ կան պատկերք այր և կին . ան-դրանիք է յունարէն արձանագիր անուանց նոցա .* Նշա-նաւոր Խրիսթիօնոս և կին նորա Ուալպիանա երջա-նիկ 'ի տիս 75 և 52 ընկերեալ ‖ ։

ΘΕΑΓΕΝΗΣ ΧΡΙΣΤΙΩΝΟΣ ΚΑΙ
ΗΓΥΝΗ ΑΥΤΟΥ ΟΥΑΠΙΑΝΑ
ΜΑΚΑΡΙΑ ΕΤΩΝ ΖΕ ΚΑΙ ΝΒ ϗ ΚΑΙΡΕ

Յետ այն երկու բառք են 'ի տեղի Թուականի ամաց նոցա . առաջինն է ամն 75 , և երկրորդն կնոջն 52 ։ Այսպէս էին արդիւնաւոր անձինք աշխատակիցք Քրիս-տոնի Հասարակապետութեան . յորոց 'ի պատիւ զայս վէմ փորագրեալ եդին 'ի տեղւոջ ուրեք . զոր հանեալ յաւերակաց Քրիստոնի եդեալ են աստ ։ Տեսաք այլևս գոյլ վէմ նման նմին , և 'ի վերայ կին մի . և առ նմին

մանուկ՝ հանդերձ եղծեալ յոյն գրով։ Ընդանօր տե-սաք զանձն տախտակ զերթ պաղլեղ, և 'ի վերայ փորագ-րեալ գրովն Անկիրայոյ գեղեցիկ յոյժ։ Նոյնպէս տե-սաք զայլևայլ դրամս Ներոնայ · յորոց քանի մի նշանակեսցուք (464)։

454. Յետ այսորիկ ելաք 'ի զնին այլևայլ բաղկաց կամ նաւահանգստից Սևաստօբօլի · յորս մանաւանդ ծայր քաղաքին տեսաք 'ի ծոցամիջի անդ գետոյն և զբաղուկ ծոցոյն երկայնեալ 'ի ցամաք անդր՝ ընդ 300 գրկա-չափ, որ է ապահով նաւահանգիստ · այլ անդաստական մեծամեծ նաւուց սակս ծանծաղուտին։ Նոյն բաղուկ կոչի Արթիլլէրեյսքայա պուխթա · ուր գոյ և մարտկոց 'ի պաշտպանութիւն մեծի ծոցոյն · վասն այն կոչեցու-հրազինեալ ծոց։ Նորի ընդ 700 գրկաչափ միջոց 'ի ներքս խաղացեալ տեսաք զայլ բերան 'ի նոյն կողմն · ուստի սկսանի մեծ բաղուկն կոչեցեալ Յուժնայա պուխ-թա · այ̃ հարաւային ծոցիկ · որ ձգի ընդ երկայն 'ի ցա-մաք 2 վերստ և կէս, և լայն 200 գրկաչափ · ունի զօ-րաւոր մարտկոց 'ի բերան անդ ձայնեալ Նիկոլայեւ-ֆսքայա պաթարեա։ Նոյն նաւահանգիստ շրջապատեալ 'ի բլրոց ոչ միայն է ապահով, այլ և պիտանի յոյժ վասն մեծամեծ նաւուց, որք լի են աստ՝ մերձեալք 'ի ցամաք անդր՝ պատրաստին 'ի կազմութիւն և 'ի նորոգութիւն ամենայն դիւրութեամբք · քանզի խոր է յոյժ ջուրն և միջոցն ընդարձակ · միայն վերջին ծայրն անձկանայ · այնպէս զի տեսաք զանգս շինեալ 'ի քարանց առ 'ի գնալ հետիոտս յայնկոյս բաղկին։ Աստ գոն մեծամեծ բնակարանք և զինուորանոցք նաւաստեաց, շտեմա-րանք կարասեաց և այլն, որով իբրև արուարձան ձևացեալ է այն մասն։ Իսկ 'ի միւս կողմն անցիցն գոյ այլ նեղ ծոց իբր լիճ · շուրջ զորով բաղում պալատք կառուցեալ կան վայելուչ առընթեր ծովու։

Մերձ 'ի բերան այսր մեծի բաղկին երկայնի այլ բա-ղուկ դէպ 'ի միւս կողմն ցամաքին ընդ արևելս 900 գրկաչափ երկայնութեամբ, որ կոչի Կորապելնայա պուխթա այ̃ նաւային ծոց · որ այնչափ խոր է, զի համար-ձակ մտանեն և ձմերեն մեծամեծ նաւք։ Աստ տեսաք զերեքկայարգեան մեծագոյն նաւ պատերազմի Փարիժ անուն · մին յարքունի վերակացուաց սորա գալով յառ-աջ մեզ զափիթան Լազար Մաքսուիչ շրջեցոյց

զմեղ 'ի նմին. ուստի զարմանալի հանդերձանս և զկազմ սորին, մեծամեծ թմբուկս, զանազան սրահս, սենեակս, և բաղանիս, նաև հրապարակ մեծ պալատին հանդերձ ։

455. Առ ձմերէ մեծ նաւահանգիստ Սուաքին. յորում են իբր 700 նաւք մեծ և փոքր, որոց հրամայէ մեծ հազարապետն Նիզօլայիֆի (380) ։ Ի մայիսի ելեալ 'ի բաղկաց սասրի նաւք մեան առաքս լինի 'ի մեծի ծովին. և անտի ելեալ 'ի սեաւ ծով շրջին ասա և անդ մինչև ցնեղանեմեր ։

Անկողմանն ցամաք Բարապեղնի պտղաբերային լեզու իւր ձևացեալ է լայն 100 քայլ. որոյ ծայր ևերանայն կոչի Փատալաս. ընդ որ անցեալ 'ի ծովամիջի անդ յանդորդէ այլ փոքրիկ բազուկ որ կոչի Բնելիմաղաքիա պտղաբեր խոր՝ բաւական պատսպարել զնաւս. ծայր ցամաքին կոչի Մուսա ։ Առ ի ուղղեալ զընթացս մեր ընդ երկայնութիւն մեծի ծովուն 'ի ներքս անդր տեսաք ժայռ ինչ 'ի ծովի և ջուրն ծանծաղ յոյժ ։ Արգանօք 'ի միջավայրին տեսաք զաւերան Զօնա գետոյն, որ 'ի Խաթարաց կոչի Պեօյնա Եօղէն. ընդ որ գնացեալ մի վերստ տեսաք զեղեգնուտս յերկուսին կողմանս գետակին մինչև հասաք 'ի ցամաքն կոչեցեալ Մոկիրման. որ է ծայր մեծի բաղկին կամ ծոցոյն ։ Ի մերձակայ վայրն դայր 'ի հնումն բերդաքաղաքն Նէապօլիս ։ Իսկ այժմ 'ի կողմն Կեօլլէմի դոյ գիւղ Վօրօնատալ գերմանացի հաստատեալ. յորս 25 տունք են ուղղափառք և ունին եկեղեցի ։

ԻՆՔԻՐՄԱՆ

456. Առ որ՝ ելեալ մեր 'ի ցամաք անդր գեղեցիկ հովտի, տեսաք՝ զի լերինք երկուց կողմանց մեծի ծոցոյն գան աւարտին առ 'ի ծայր հովտին ։ Իսկ առհա յայս երկուս ծայրս լերանց փորեալ են քարանձաւք. նախ դիմեցաք յաջակողմն հովտին տեսաք առ լերամբ քանի մի փոքրիկ այրս քարակոփս և առ նմին պատուական ջուր վիմաբուղխ ։

Ի վերջին ծայր հովտին 'ի բարձրաւանդակի դոյ վաղեմի բերդ շինեալ 'ի հին Յունաց քերսոնացւոց, որպէս կարծի. որ 'ի Թաթարանէ կոչի Ինքիրման ։ Աւ

րոտ հին պատմութեան գոյր մեծ պարիսպ. որոյ մի ծայր գոլով 'ի Պալըգլավա՝ միացուցանէր զերկոսին քաղաքս : Զայս բերդ որպէս թուի յետոյ ամրացուցին Ճենովացիք 'ի ձեռն մարտկոցաց. և որով են վաղեմի քարանձաւք կափեալք յապառաժս զարմանալի մեծագործութեամբ 'ի Քերսոնացւոց անտի վասն զօրաց իւրեանց. յորս պատսպարէին յերեսաց լեռնականաց :

Այլք համարին թէ 'ի ժամանակս քրիստոնէութեան հաւատացեալք վասն ազատելոյ 'ի ձեռաց հեթանոսաց անդ ամրացեալ լինէին : Աստանօր աքսորեցաւ ասեն սուրբն Կղեմէս Գ. հայրապետ Հռովմայ. այս սուրբն Մարտինոս մին 'ի թոռանց Դոմետիանոսի, և ոմանք 'ի պալատականաց աստ աքսորեցան : Քանզի զայնու ժամանակաւ աստ էր տեղի աքսորանաց նոցա յետ Քորսիքայի. ուր աքսորեալքն փորէին յապառաժի անդ սենեակս վասն մարմնոց իւրեանց, յորս և թաղէին, որով և կոչի Քարանձաւաքաղաք :

Յերեքտասաներորդ դարու իբրև բաժանեցաւ տէրութիւն Յունաց 'ի զանազան փոքրիկ իշխանութիւնս, Ինքերման եղև ինքնագլուխ քաղաք երևելի Հասարակապետութեան իւրեանց. ապա էանց առ Ճենովացիս և առ Թաթարս, որք բոլորովին կործանեցին. մինչև չմնալ այլ ինչ բաց 'ի քարանձաւաց. յորս շըրջեալ անձամբ զննեցաք զամենայն մեծագործութիւնս, զոր տեսաք և պատմեմք 'ի կարգիս. ապա անցանեմք 'ի Քերսոն :

ՔԱՐԱՆՁԱՒԱՔԱՂԱՔ

457. Արդ՝ յանցանել մեր ընդ գեղեցիկ հովիտն Ինքերմանի շրջապատեալ 'ի լերանց անտի ուղղեցաք զընթացս մեր յարևելեան քարանձաւս, որք յոտս լերին աստ և անդ գտանին յերկոսին կողմանս :

Ապա յառաջեալ 'ի միւս կողմն տեսաք մեծ դուռն և ընդարձակ Ճանապարհ փորեալ յապառաժ լերին և ընդ նմին քարակոփ աստիճան. 'ի վերանալ մեր Է բարձրութիւնն տեսաք 'ի մի կողմն զանազան սենեակս քարակոփս, և 'ի միւս կողմն լուսամուտս քարափորս զարմանալիս և պատշգամբս : Ելեալ 'ի վեր ընդ 40 աստիճանս քարակոփ սանդխոց՝ գտաք զմեծ սենեակ,

և 'ի վերուստ լուսամուտ. ուստի սկսանի նեղ սրահ կամ Ճանապարհ ընդ հարաւ 3 քայլ լայն, և մարդաչափ բարձր։ Յաջակողմն այսր Ճանապարհի տեսաք քառակուսի դուռն ընդարձակ. մտեալ 'ի ներքս գտաք լայնանիստ եկեղեցի կամարաւոր բոլորովին քարակոփ։ Այլ առաջակողմեան կամարքն անկեալ կան 'ի վայր 'ի բարձրութենէ 15 կանգնոց. ուր տեսաք և զերկու դամբարանս։

Յաջակողմն այսր տաճարի գտաք դուռն. ընդ նեղ անցս մտեալ 'ի ներքս տեսաք զփոքրիկ մատուռն քարակոփ երկայն 8 քայլ, և լայն 4։ Խորանատեղին է կիսաբոլոր, և տրամագիծն 4 քայլ. առ նմին և պատուհան։ 'Ի ձախակողմեան որմն 'ի վեր անդր փորագրեալ կայ եռանկիւնաձև գիծ, և 'ի մէջն վաղեմի գիր անվերծանելի. և առ նմին մնացուած խաչ ներկոյ և պատկերաց։ Դուռնն և յարկն, բարձր են. իսկ որմունք բոլոր քարանձաւին այնպէս զարմանալի արուեստիւ կոփեալ կան. զի 'ի բազում տեղիս հազիւ լինի մատնաչափ թանձրութիւն որմոյն։

Իսկ առաջի մեծի տաճարին տեսաք 'ի ստորև զայլ ապառաժ, որ բարձրացեալ հասանէր մինչև ցվեր անդր. և ձևացուցանէր զաւիթ կամ սրահ տաճարին. այլ այժմ կործանեալ կայ։ 'Ի քարակոփ տունս այսր մեծի լերին բնակին այժմ պահապան զինուորք և նաւաստիք, որք դեգերին յայսմիկ կողմանս 'ի զգուշութ.

Իջեալ մեր աստի ընդ նոյն քարակոփ սանդուխս և անցեալ ընդ ձորամէջն, հանդիպեցաք կրկնակամար անձև կամրջոյ, այլ այնպէս բարձր և խոշորաշէն, մինչև կարծիս տայ թէ մնացեալ իցէ 'ի նախնեաց անտի. ընդ որով անցանէ գետակն Պէօյիւք էօղէն։

458. Հասաք ապա 'ի հանդիպակաց լերան մեծ լի մեծամեծ վիմափոր տամբք. առ որով անցանէ փոքրիկ վտակ և խառնի ընդ առաջինն։ Տեսաք 'ի տեղիս տեղիս հատեալ լերան վերուստ 'ի վայր, և անմատչելի գործեալ 'ի թշնամեաց։ Յարևմտեան կողմն տեսաք մեծամեծ այրս և զարմանալի բնակարանս, որք ունէին զառաջեաւ զայլ շինուածս և պատսպարանս, ըստ որում յայտ առնեն անկեալ պարիսպքն, յորս այժմ բնակին զինուորք և գործեն շնչքաբակ 'ի մերձակայ հաղայ անտի։ Ընդ առաջի լերին տեսաք զընդարձակ

որաՀ կոփեալ յապառաժի. նաև 'ի ստորոտս մնացորդ Հին պարսպաց կամ աշտարակաց :

Նոյնպէս յարևելեան կողմն մեծի ապառաժին տեսաք բազում քարանձաւս և սանդուխս 'ի վեր ելանելոյ յերկուց կողմանց անմատչելի լերին. այլ այնպիսի արուեստիւ, ուր այժմ չէք Հնար մատչել: Ասի թէ ստորի 'ի ծայրէ վերին պարսպի շարունակէր վաղեմի մեծ պարիսպն ձգեալ մինչև ցՊալըգլավա անջրպետ տէրութեան Ջենովացւոց :

Իսկ յարևմտեան կողմն ընդարձակ բակի անդ տեսաք Ճանապարհ Հատեալ յապառաժի. վերոտնեալ ընդ սանդխաձև անցս՝ գտաք յարկս բնակութեան և դստիկոնս : Ուր ելեալ ընդ 15 աստիճանս գտաք գանազան սենեակս. ընդ որս և զեկեղեցի բարձր և գեղեցիկ Համայն կոփեալ 'ի ժայռի անդ 'ի փոր լերին. որ ունէր 'ի մի կողմն 4 կամարս և 4 'ի միւսն Հանդերձ շրջանակօք և վերնախարսխօք :

'Ի մեծի կամարի անդ խորանին տեսաք մեծ խաչ փորագրեալ 'ի վիմին. և 'ի վերայ իւրաքանչիւր թևոյ այլ փոքրիկ խաչս : Չափեցաք զորամապիծ խորանին 10, ոտն. զերկայնութի տաճարին 13 քայլ. և բարձրութին 10 ոտն. ցարդ երևին 'ի տեղիս տեղիս մնացուածք ինչ ներկոյ և պատկերաց: Դուռն է ընդարձակ, և 'ի վերայ դրան կիսաբոլորաձև մեծ լուսամուտ. յերկոսին կողմանս աւանդատունք. աջակողմեանն է մատուռն. որ ունի խորան և պատուՀան, և և լուսամուտ յերկոսին կողմունս դրան: Աստի 'ի վեր է զարմանագործ վերնատուն վիմափոր բարձր մարդաչափ, որոյ յատակ է ձեղուն գաւթի մատրան: Արտաքոյ դրան տաճարին գոյ բակ կամ գաւիթ կամարաձև. իսկ աջակողմեան աւանդատունն աւելի ընդարձակ է, և ունի լուսամուտ և խորան :

459. Ցայսմ յարկէ ելեալ 'ի վերին յարկ ընդ 7 աստիճանս վիմափորս, տեսաք զայլ սենեակ՝ որոյ որմունք ապակիացեալ էին: Անդ 'ի սենեկի գտաք բոլորաձև լուսամուտ 'ի վերուստ. ուր ելեալ բազում դըժուարութ՝ գտաք 'ի տանիս զանյարկ Ճանապարհ կոփեալ և ձգեալ ընդ զառ 'ի վեր լերին. միոյ կողման որմն ձևացեալ է յապառաժէ. ընդ որ ելեալ իբր ընդ աստիճանս Հասաք 'ի վերայ բարձր լերին. Ուրանօր կա-

ռուցեալ կայ բերդն վաղեմի (456) որ պարսպեալ է 'ի միջէ կողմանէ և եթ. զի յերից կողմանց է լեռան անմատչելի. միայն հիւսիսակողմն է անպատսպար: Նորին աղագաւ շինեալ են անդ բերդ. երկնապարիսպ ամրացեալ յաշտարակաց Ճենովացւոց:

'Ի մի ծայրն տեսանի կրկին բոլորաձև աշտարակս. իսկ յարտաքին պարիսպ անդր գոյ մեծ և բարձր աշ-տարակ բոլորաձև: Այս պարիսպ ունի խրամ լայն 20 քայլ. որ ըստ մեծի մասին 'ի ժայռի անդ կոփեալ է. անդ 'ի տեղիս տեղիս տեսանի պահարանս և ջրհորս: Ծայր պարսպին եղերի 'ի վեմս ինչ բարձր սարսափե-լի. ուր տեսանի զլեռնակոփ անցս կամ ճանապարհ իջանելոյ 'ի վայր, որ այժմ աւերեալ է. ընդ որ 30. աստիճանս 'ի վայր իջեալ՝ տեսանի ջուր պատուական վիմաբուղխ և աստի շարունակեալ վիմափոր ճանա-պարհ երթայ ասեն մինչև ց'Պալըգլավա. ուր էր սահ-մանն քաղաքիս: Այս խրամ որպէս և քարանձաւք թուեցան մեզ լինել գործ կարի վաղնջական. թէպէտ 'ի ժամանակս քրիստոնէութեան զեկեղեցին շինեալ և զպարիսպն ամրացուցեալ են. որպէս յայտ է: Անցել մեր ընդ պատառուածս պարսպաց՝ յընդարձակու-թիւն միւս մասին մեծի լերին, տեսաք 'ի բարձրաւան-դակի զանազան քարանձաւս. և անտի իջեալ ընդ զառ-'ի վայր լերին նոյնպէս տեսաք զայլ մեծամեծ քարան-ձաւս, որք այժմ կարգեալ են 'ի բնակութիւն նաւա-գործ զօրաց: 'Ի ստորև մեծի լերին սկսանի գեղեցիկ հովիտն. ուր են վայելուչ պարտէզք:

ԱՐԳԵԼԱՆՈՑ ՍԵՒԱՍՏՈՊՈԼԻ

460. Յետ քննելոյ զամենայն քարանձաւս Ինքեր-մանին, և զքաղաքն Սեւաստոպօլ ապա ուղղեցաք զըն-թացս մեր ընդ ցամաք, անցեալ ընդ գեղեցիկ դաշտս և բլուրս հասաք 'ի գերեզմանատուն Սեւաստոպօլի, ուր տեսաք զեկեղեցի Ռուսաց նորաշէն յանուն ամե-նայն սրբոց. և առ նմին զանդակատուն բարձր և մահ-արձան: Անտի հասաք յարգելանոցն կառուցեալ առ-երի ծովուն, որ բաժանեալ է 'ի զանազան վայրս համ-դերձ ընդարձակ հրապարակաւ. ուր տեսաք այլս ինչ: Նա որով է այլ բազուկ մեծի ծոցոյն Սեւաստոպօլի կա-

չեցեալ Բարանիենոսեան դաշտին. որ անցեալ զառաջեաւ գնայ պտուտաձև 'ի ցամաքն կոյս և ձևանայ պատուական նաւահանգիստ լայն 200 գրկաչափ և երկայն մի վերստ. ուր ապահովանան նաւք վաճառականաց ։ Զմի մասն սորա կոչէին Խաւեթարք Զուրչենոյ. և զմիւսն Խոյմսոյ Լիմանի ։ Բայց Ռուսք կոչեցին ծոց արքելանոցի ։

Իսկ ձախակողմեան բազուկն կոչի Սորէնչեցւոց դաշտա, խոր 6. մինչև ցերկու գրկաչափ. իսկ բերանն 10. և 12. որ ունի զօրաւոր մարտկոց 'ի պաշտպանութիւն մեծի ծոցոյն ։ Նոյն դէպ 'ի ծոցն գոյ այլ բազուկ եղեգնուտ 2 վերստ հեռի. որ կոչի Խոյտեչենոյեան դաշտին, խոր 6. գրկաչափ, ունի մարտկոց Տեսոխեանց դաշտաւոյն. ուր գոն 2 լիճք աղի ։ Նոյն և անդր է այլ բազուկ Բօղայեան դաշտին կոչեցեալ. որ ունի նոյնպէս մարտկոց Սէրէչեանց դաշտին. որոյ պահապանքն են խազախք. ուր գոյ և լիճ աղի. որ յառաջ կից էր ընդ ծոցոյն՝ բաժանեալ աղեկոծութեամբ 'ի ձևան աւազուտին երկայն 130. գրկաչափ ։ Նոյն է մեծ աշտարակն լապտերի, որ առ Փէնէս. առ որ ուղղեալ նաւուց զընթացս՝ իբրև տեսանեն ընդ տեսողական գծիւ զկրկին լապտերս 'ի վերջին ծայր ծոցոյն գտանեն անվրէպ զբերան ծոցոյն (451) ։ Բանզի 'ի բերան անդր յերկոսին կողմանս գտանին ապառաժք վտանգաւորք ։ Իսկ հանդէպական սորին կոչի Բախանեոս գայս. անդ և ս գոյ բերդ ։ 'Ի Փէնէսէ մինչև ցՍեւաստօպօլ է 12 վերստ, նոյնչափ է մինչև ցՍուր Գէորգ (466) ։

ՎԱՆՔ ՀԻՆ

461. Առ երի արգելանոցին տեսաք զաւերակ հին մենաստանին 'ի ցամաքն կոյս շինեալ յանուն սրբոյն Կոստանդիանոսի և Հեղինեայ. ուր շրջեալ որոշեցաք զխայրս և զհետս պարսպաց ։ Երևեցցին էր 'ի վերայ փոքրիկ բլրոյ. առ ընթեր տեղւոյն տեսաք մարմարիոնեայ ներքնախարիսխս. միոյն տրամագիծ մի և կէս ոտն ։ Յաջակողմն կոյս խաղալով տեսաք 'ի մի կողմն ներքնատուն ընդ երկրաւ բոլորովին կափեալ յապառաժի. ունի մեծ դուռն. առ նմին սրահ վիմափոր ։ Նոյն մօտեալ յայլ վիմափոր սենեակ տեսաք շուրջանակի ննջարան կամ նստարան կափածոյ ։ Նոյն առկաւ

յաւուր գնացեալ առաւօտ զայլ սենեակ քարակոփ 'ի ձև բոլորչի և շուրջանակի ննջարանք : Տեսաք մերձ յեկեղեցին պատուական ջուր և ջրհոր փորեալ 'ի վիմի . որ ունի զերկու բերանս և ստորերկրեայ ճանապարհ , որ գնայ դէպ 'ի հարաւ : Թերևս այս էր մեծ ջրանցք Քերսոնի . զոր հատեալ ցամաքեցոյց մեծն Վլատիմէր յառնուլն զքաղաքն . այլ այժմ լցեալ է այս անցք (463) : Աստանօր փորեալ գտին գերեզմանս արտաքոյ եկեղեցւոյն . ուր կային մեծամեծ քարինք եդեալք 'ի վերայ միմեանց . և 'ի նմին ոսկերք մեռելոց , և 25 արծաթի դրամք հատեալք 'ի ժամանակս քրիստոնէութեան : Երկին էին դրունք վանաց դէմ ընդդէմ միմեանց ընդ հիւսիս և ընդ հարաւ : Ու-բանօր գտն այժմ քանի մի տունք պահապանաց . և 'ի վեր անդր տուն բժշկին արգելանոցի :

ՔԵՐՍՈՆԷՍ

462 . Էր մեծահռչակ մայրաքաղաք վաղեմի կառուցեալ 'ի Հերակլեացւոց անտի , որք եկին յԱսիոյ , և ընդ առս մեծի ծոցոյն հաձեալ` ատտ իբր 'ի բերանի հիմնեցին զայս քաղաք , և ընդ նմին Հասարակապետութիւն 2426 ամօք յառաջ . նմին իսկ կոչի 'ի Ստրաբոնէ Քերսոնէս կմ Քերսոնէսոս Հերակլեան : Երկիրն որ 'ի մէջ Սեւաստոպօլի և Պալըգլավայի` կոչի 'ի նախնեաց Թրաքէա . և սահմանեալ էր 'ի ձեռն մեծի պարսպին , որ սկսեալ 'ի ծայրէ մեծի ծոցոյն կամ յԻնքերմանէ հատանէր ցՊալըգլավա , որպէս երևին աստ և անդ հետք աւերակաց : Որով այս երկիր ձևանայր թերակղզի , և մայրաքաղաքն մեծատարած էր պարսպեալ 'ի ցամաքէ , և ամրացեալ 'ի ծովէ :

Այս հասարակապետութիւն այնչափ զօրացաւ գեղեցիկ կարգօք և քաղաքականութեամբ , մինչև զհազուամ ժողովուրդս յայլևայլ կողմանց ձգեաց յինքն և ծաղկեցաւ յոյժ , մանաւանդ 500 ամօք յառաջ քան զՔս : Իսկ յետ ժամանակաց իբրև հարստահարեցան 'ի Սկիւթացւոց` խնդրեցին զպաշտպանութիւն մեծին Միհրդատայ . որով դարձեալ զօրացան մեծապէս : Յամի Տն 536 . Հոնկրէզք և Հիւսք պաշարեցին զՔերսոնէս , և մտին 'ի մի կողմն . այլ ոչ կարացին տի-

ընել. զի Խերսոնացիք օգնութիւն առեալ 'ի Յուս-տինիանոսէ՝ վանեցին զնոսա (391).

'Ի 695. Է Յուստինիանոս աքսորեցաւ 'ի Խերսո-նէս և փակեցաւ 'ի մի վանս. այլ յետ դարձին յաթո-ռն իւր չարացեալ ընդդէմ Խերսոնացւոց, ջան եդ յա-փշտակել զտէրութիւն նոցա: Իսկ յայնժամ աքսո-րեալ էր քաջ զօրավարն իւր հայազգի Վարդանէս կամ Մրթանէս, որ և մեծամեծ ծառայութիւնս արարեալ էր կայսեր: Խերսոնացիք հաստատեցին զնա գլուխ և սպարապետ իւրեանց. որ այնպիսի քաջութեամբ խորտակեաց զբանակ Յուստինիանոսի, զի անդէն հա-լածական արար զնոսա մինչև ցԿոստանդինուպօլիս.

463. Նոյն յիններորդ դարուն Թէոփիլոս կայսր կարգեաց զԽերսոնէս նահանգ Հռովմայեցւոց: Իսկ մեծ. դուքսն Ռուսաց Խնեալ Վլատիմիր ցասուցեալ ընդդէմ կայսեր Յունաց եկն զօրու ծանու և պաշա-րեաց զԽերսոնէս յամի Տն 987: Սակայն ոչ կարաց 'ի նեղ արկանել զԽերսոնացիս. որք ունէին զամենայն պիտոյս, զկերակուր, և զջուր այլովքն հանդերձ. իսկ զի ջուր քաղաքին երթայր 'ի ներքս անդր ընդ անյայտ անցս, զոր ոչ կարաց գտանել Վլատիմիր: Գտաւ յայնժամ ոմն 'ի պաշարելոց անուն Անաստաս քահանայ, որ արձակեաց զնետ իւր 'ի բանակ Վլատիմիրայ, կա-պեալ 'ի վերայ զթուղթ գրեալ այսպէս. Եթէ կամիս առնուլ զայս քաղաք, պարտիս խզանել զանցս ջրոյն յայս կէտ տեղւոյ. և նա իբրև արգել զջուրն հոսել 'ի Խերսոնէս, յուսակտուր եղեալ քաղաքացւոց՝ անձնա-տուր եղեն Վլատիմիրայ, որ գոլով կռապաշտ որ-պէս և բոլոր ազգն Ռուսաց, իբրև ետես 'ի սմին քա-ղաքի զքրիստոնէութիւն ծաղկեալ, լուսաւորեցան միտք նորա լուսով սրբոյ աւետարանին: և բարեպաշտ խոր-հրդով ջան եդ լուսաւորել նա և զազգ իւր. Նախ իւր ետ բերել զիմաստունս այլ և այլ ազգաց, և ուսեալ և ընկալեալ զկրօն Յունաց՝ մկրտեցաւ յամի Տն 988. ձեռամբ Միխայէլ Պատրիարգին Յունաց: Նոյն խնդրեալ զքոյրն կամ զթոռն կայսերաց Վասլի և Կոստանդեայ Աննա անուն, ամուսնացաւ ընդ նմա. և ապա առաքեաց 10 անձինս 'ի Կոստանդինուպօլիս ուսանել զբան հաւատոյ առ 'ի ծաղկեցուցանել 'ի Ռուսաստան զքրիստոնէութիւն. որոց լուեալ զերգս

և զեղծանակս Յունաց յեկեղեցիս նոցա և աւերեալ զփառաւոր հանդէսս, յարեցան 'ի Յոյնս. և գրեցին առ Վլատիմիր, թէ ընտրելի է վասն Ռուսաստանեաւ կեան Յունաց: Ռուսն ընկալեալ զկրօն նոցա մկրտեցան ամենայն զօրք Ռուսաց և մեծամեծք, որք եկին ընդ Վլատիմերայ 'ի Խերսոնէս. ապա 'ի շնորհակալութիւն դարձոյց զԽերսոնէս առ կայսրն Յունաց:

Ըստ հնախօսից զառաջինն քարոզեցաւ 'ի Խերսոնէս և 'ի Մաւրորա հաւատոքն Քրիստ զկնի Առաքելոց ի' ձեռն ուղղափառ քարոզչաց աքսորելոց անդր 'ի փառս Քրիստ մանաւանդ 'ի սկիզբն Դ դարուն: Իսկ ապա Ինոֆիլոս 'ի Պ.թայ մետի եղելոց 'ի Պաւղոսի՝ ձեռնադրեալ Եպիսկոպոս 'ի Կոստանդնուպոլիս՝ դարձաւ անդ:

Յամի Տն 1078. Խերսոնացիք ապստամբեցան 'ի Միխայէլ կայսերէ. և ինքնագլուխ կառավարէին մինչև ցժամ Վլատիմերայ: Ապա այնուհետև զօրացան Գենովացիք և տիրեցին հարաւային կողմանց Խրիմու: Այլ 'ի 1296. յորժամ Վենետիկեցիք աւերեցին Խերսոնէի, դեռ գոյր հասարակապետութիւն Խերսոնիսի՝ բայց 'ի թշուառ վիճակի: Ի 1350 Խերսոն ունէր տակաւին մնացորդ ինչ նախնի մեծութեան, թէպէտ անշքացեալ էր յոյժ. քանզի Գէտիմէր դուքսն Լիթուանիոյ, և որդի նորա Օլկորտ խանգարեալ էին զբաղդում տեղիս: Այլ զկնի սակաւուց աւերին Թաթարք. նախ կողոպտեցին զամենայն մեծութիւն և զգանձս քաղաքին, ապա հուր տուեալ այրեցին և հիմնայատակ արարին զգեղեցկաշէն քաղաքն պանծալի: Իսկ ապա սկսան փոխադրել 'ի Կոստանդնուպոլիս զգեղեցիկ գեղեցիկ զարդս, ազնիւ սիւնս և զարձանս վայելուչս. և եղեն յերևելի պալատս մեծամեծաց: Եւ այսպէս 'ի վերջ եհաս այս մեծապանծ տէրութիւն և գերահռչակ քաղաքն Խերսոնի. մինչ զի հազիւ զհետս երևելի շինուածոց որոշեցաք:

464. Մինչև ցառումն Խրիմու 'ի Ռուսաց երևէին մեծագործութիւնք Խերսոնեացւոց. զի կանգուն կայր գեղեցիկ դուռն քաղաքին. մարմարիոնեայ խոյակք և խարիսխք սեանց, այլովքն հանդերձ: Այլ 'ի շինել անդ Ռուսաց զՍեւաստոպօլ՝ անգիտութեամբ իւր զայն ամենայն մնացորդս մեծագործութեան եդին 'ի հիմունս մեծամեծ շինուածոց: Մին 'ի մերձաւորքս վեհանց փո-

րագրեալ յայն դրամ, որ պատմէր զհաստատութիւն քաղա-
քին առ Թագաւորութեամբ Օ̄գոստոսի կայսեր, եղեալ
կայ 'ի սմա միում։ Որպէս և այն արձան զգեստաւոր
եղեալ յեկեղեցւոջ ունէր 'ի ձեռին գլան և տապա-
նագիր լատիներէն. որ պատմէ զիշխանութիւն Ջ'ենո-
վացւոց կողմանցս այսոցիկ։ Տեսաք 'ի Սեւաստօպօլ
զվէմս և քանի մի արձանագիրս Գ̄երմանացւոց։ Խաղ-
ղայն՝ զի միշտ եկանին յերկիրս կտորանք հին ապա-
կեաց, որք ցոլացուցանեն զգոյնս ծիածանի ևս, և զա-
նազան դրամք ակերութեան նոցա։

Տեսաք 'ի մի կողմն միոյ դրամոյ գլուխ Ա̄պողոնի
պսակազարդ. առաւելի խոր լինել գործի և գիր ΧΕΡΣΟ-
ΝΗΣΟΥ. Իսկ 'ի միւս կողմն Ա̄նահիտ չաստուածուհի
ափոդեալ աղեղամբ զհետ եղին։ 'Ի մի կողմն Է̄ դրամոյ
դրոշմեալ կայ կառք վարեալ 'ի Դ ձիոց. և առ նմին
կառավար և 'ի վերայ գիր Φ. իսկ 'ի միւս կողմն այր
պատերազմող վահան 'ի ձեռին առ որով գիր ΧΕΡ։ 'Ի
մի կողմն Ը̄ դրամոյ եղն, որ հարկանէր զերի եղջերբ.
առ որով գիր ΕΛΕΥΘΕΡΙΑ. իմ̄ ազատութի. իսկ 'ի միւս
կողմն եղն մի հալածեալ 'ի յաւէրժահարսնէ, առ որով
անուն քաղաքին. ΧΕΡΣ։ 'Ի մի կողմն այլ դրամոյ խոյ
և խարիսխ նաւու. իսկ 'ի միւսն խաչաձև նշանակք և
գիր ΝΧ։

ՍԻՆԴՐԱԿ ՔԵՐՍՈՆԵՍԻ

465. Աղէտալի է տեսիլ մեծամեծ բերդաքաղաքիս
ծածկեալ աւերակօք. յորս շրջեալ և գտեալ պատ-
մեցաք 'ի կարգիս։ Արդ՝ դիրք Քերսոնեսի է եր-
կայնանիստ և բարձրահայեաց, շինեալ գոլով 'ի վերայ
տափարակ ըլլոյ 'ի մէջ երկուց բազկաց մեծի ծոցոյն
Սեւաստօպօլի, որով երևի Թերապիկղղի խնն վայելչագիր։
'Ի տեղիս տեղիս կանգուն կան մնացորդք պարսպաց և
աշտարակաց. այլ զկոփածոյ վէմս քարձեալ են անտի։
Աղօշեցաք Ցանկիւնս 'ի պարսպայինս, և մարտկոցս կործա-
նեալս. նաև փոքրս դրանց բերդին ծովու և ցամաքի։
Յաշխակողմն բերդին 'ի բերան փոքր ծոցոյն երևի 'ի
ծովամիջի քարայատակ հրաւանդան. յոր մատչէին
նաւք. ուր տեսաք յարևելեան կողմն մնացուած մեծի
աշտարակին։ Հասեալ մեր 'ի միջավայրն բերդին, գտա-
ցին մեզ 'ի բլրի անդ զանգւածք նկարքնաւորութին. առ որով

եր ծովահայեաց պալատ հիւպատոսաց և խորհրդակա-նաց : Անդ էր Թերևս կառատունն . ուստի ելանէին ազ-նիւ մարմարիոն սիւնք , վէմք , և խոյակք , այլովքն հան-դերձ : Սոր տեսաք տեղի ինչ փորեալ , և 'ի նմին ստորեր-կրեայ մնացեալս 'ի նախնեաց . ևս և կոյտ վիմաց . 'ի միջա-վայրի պարսպին գոյր մեծ վէմ խորանարդ իբր խա-րիսխ սեղանոյ , կամ պատուանդան կռոց ինչ :

Ընդեկալ այս յարևմտեան կողմն բերդին տեսաք մեծ աշտարակ 'ի բերան ծոցոյն , և պարիսպ երկայ-նեալ դէպ 'ի հարաւ լայն և հաստատուն : Ամենայն ամբարշէն են պարիսպք , զի չէք հնար բաժանել զքա-րինս 'ի կրոյ : 'Ի ցամաքն կոյս տեսաք խրամ պարը-պատուոր , և 'ի հարաւակողմն այլ աշտարակ և տեղի դրան . նաև առաջի ճանապարհ քարաշէն յերկուց կող-մանց . որպէս երևէին քարինք ընդ մեծամեծ վիմաց , որք ցուցանէին թէ 'ի հնումն գոյր արտաքոյ բերդին մեծատարած շինութիւն իբր արուարձան :

Զայս օրինակ տեսաք և զարևելեան կողմն . ուր կային մեծամեծ պարտէզք և այգեստանեայք . ուրա-նոր գտաւ և վաղեմի ներքնատուն : Ընդ անոր տեսաք զհիմն աշտարակի 'ի պաշտպանութիւն կարգեալ արև-ելեան դրան . ուստի և անդր եզերբ 'ի ծոց ծովուն պարիսպն մեծ բերդաքաղաքին : Իսկ 'ի հիւսիսային ծայր բերդին տեսաք զայլ մեծ աշտարակ բոլորշի խորա-մաւոր հիմնեալ 'ի վերայ բլրոյ . որ ունի յերկուց կող-մանց բաղուկ պարսպի դէպ 'ի նաւահանգիստն հիւսի-սային : Նոյնպէս և արևելեան պարիսպն ժամանէ 'ի ծայր նաւահանգստին . և անտի գնայ միանայ ընդ ա-րևմտեան ծայրի բերդին . առ որով է արգելանոցն , որ 'ի Ռուսաց կոչի Արտանեկին (460) : Այս տեղի , որ-պէս և Սևաստոպօլ մեծանուն քաղաք շինեցաւ 'ի քա-րանց Քերսոնեսի . սակայն մնացորդք քարանցն կա-րեն շինել և զայլ քաղաք :

Դժուարին է որոշել զտարածութիւն Քերսոնեսի . քանզի արտաքոյ գոյր ընդարձակ բնակութիւն . միայն ներքինն համարի 6080 ոտնաչափ քառակուսի կան-գուն : 'Ի շրջակայս երևէին հետք բազում աշտա-րակաց կարգելոց 'ի պաշտպանութիւն յաւէտ գեղեցիկ գիւղօրէից և պարտիզաց . յորս բնակէին նախնի Քերսոնացիք : 'Ի 150 գրկաչափ տարակայութեան

տեսանի յարեւմտեան հիւսիս հետք ինչ հին շինուածոց, առ որով և քարանձաւք ։ Ի ծովակողմն գոյ քարակոյտ, առ որով և հիմունք պարսպաց. նաև քարաշար փողք, որք թուին լինել վաղեմի գերեզմանք նախնի Խերսոնացւոց ։

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ

466. Անուանի մենաստան վաղեմի շինեալ 'ի վերայ Այասարին 'ի մէջ Պալըգլավայի և Խերսոնի. ուր յառաջագոյն կային բազում կրօնաւորք և եպիսկոպոս Յունաց. որպէս և այժմ գտանին սակաւ ոմանք. այլ ուխտաւորք են անպակաս ։ Մի կողմն սարին կոչի յանուն վանաց Այ Եօրկի ։ Եկեղեցի մենաստանիս է քարաշէն և փոքր, և ունի ինքնաբուղխ ջուր պատուական ։ Աստ ասեն մկրտեցաւ մեծ դուքսն Վլատիմէր ։ Աստ ետ բերել Կախովսքի կոմս զմեծամեծ կոփածոյ քարինս Խերսոնի առ 'ի կանգնել զմատուռն 'ի յիշատակ կնոջն. այլ գործն մնաց անկատար ։

Այս մեծահռչակ սար 'ի հնումն կոչէր Criametopon, զոր Ստրաբոն, զի անդ էր անուանի տաճարն Անահտայ կուոց, թերեւս 'ի տեղի մենաստանիս ։ Ուր երեւին նշանք ինչ հնութեանց. նաև 'ի մերձակայ վայրն գոյ սիւն մի ոտնաչափ տրամագծիւ, մնացորդ այնր տաճարի ։ Յայս տաճար Արտեմեայ հազարաւոր մարդիկ զոհէին. նմին իրի Իփիգենի առեալ զմարմարինեայ ստեղանն խորտակեալ 'ի փոշի դարձոյց, համարելով թէ զեղբայր իւր զոհելոց էին 'ի վերայ այնր ստեղանոյ ։ Ուրանօր եդեալ կայր ոսկի արձան կուոց 'ի վերայ պատուանդանի ։ Սորա տաճարք յամենայն վայրս Խրիմու մեծագործ էին. որպէս և տաճար Օրէստէսեան կուոց էր յայսոսիկ կողմանս անուանի ։

Գտանին 'ի տեղիս տեղիս կոփեալ քարինք մնացորդք Խերսոնիսի. նաև երեւի մնացորդ հին պարսպի թանձր 6 ոտնաչափ. և երկայն 15 գրկաչափ. հեռի 'ի վանաց 2 վերստ ։ Պատմեն հնախօսք, թէ 'ի վերայ հրուանդանին գոյր մեհեան կուսի դիւի, յորմէ և այս լեառն կոչեցաւ Parthenion. ուրանօր եդեալ կայր և արձանն. իսկ զմեհեանն անուանէին Fanum dæmonis Virginis. Սորա տաճար և արձան կանգնեալ կայր և 'ի Խերսոնէս ըստ Ստրաբոնի. Գիրք Է ։

467. Շրջեալ մեր ընդ գեղեցիկ դաշտորայս Պալըգլավայի՝ անցաք առաջ ընդ քարաշէն կամուրջն. ընդ որով անցանէ Չօռնա գետակն Սեւաստոպօլի. և գնալով դէպ 'ի հարաւ սկսանին լերինք յերկուց կողմանց միանալ: Այս անցեալ ընդ հովիտն և ընդ անձուկ պտոյտս լերանց, անդէն և անդ ընդ առաջ եւ գեղեցիկ նաւահանգիստն Պալըգլավայի փակեալ յերից կողմանց 'ի բարձրաբերձ լերանց. որոյ երկայնութիւն է մի վերստ և կէս. լայնութիւնն 200 գրկաչափ. և բազում ձկամբք. ուր անկշիռ վաճառեն զձուկն:

Այս նաւահանգիստ երեւի իբր լիճ իմն երկայնաձեւ. քանզի բերանն պատուարեալ է յայլեւելս 'ի ձեռն ոլորացեալ ժայռից. և այնչափ անձուկ, մինչ զի երկու նաւք դժուարաւ անցանեն միանգամայն անտի: Ընդ 'ի բերանի խորութիւնն է 12 գրկաչափ. այլ գնալով 'ի միջավայրն լինի 17 գրկաչափ. և առաջ առ փոքր փոքր կարուսանէ զխորութիւնն: Ջուրն բնաւ շարժուն. այլ յամենայն ժամանակի միօրինակ խաղաղ և ապահով է յամենայն հողմոց: Ընդ՝ Պալըգլավա 'ի հնումն կոչէր Սիմպօլոն, Եանըլիման, և Պելլաքլավէ. յորմէ եղեալ է անունս Պալըգլավա: Ընդ առ Այս ասրիւ իբր 'ի Թերակղզւոջ շինեաց Սկլորոս դղեակ 'ի պահպանութի Խերսոնի ընդդէմ զօրավարաց Միհրդատայ (552), որպէս բերէ Ստրաբոն. և յաւելու թէ մասն էր այն Խերսոնի. որոյ պարիսպ հասանէր մինչև ցայսվայր. Գիրք է: Յաւելու Ստրաբոն. * 'Ի մէջ Խերսոնի և բարձրաւանդակի գոն երեք նաւահանգիստք. յաջորդէ և վաղնջական Խերսոն կործանեալ. և յետ այնր նաւահանգիստն անձուկ կոչեւ Սիմպօլօն անուանի: Ի նոյ 'ի սոցանէ գոն այլ դղեակք. զորս Սկլորոս և որդիք իւր կանգնեցին ընդդէմ զօրապետաց Միհրդատայ զՊալլաքիոն, Խաբոււն, Նէապօլիս: Այլեւ նաև Եւպաթօրիոն կանգնեալ 'ի Միհրդատանէ Գիրք Զ: Յորմէ հետեւի թէ անունս Պալըգլավա եղեալ է 'ի Պալլաքիոնէ. ուր այլք հանեն 'ի Պելլաքեավէ անուանէն:

Այս դղեակ յետ ժամանակաց եանց 'ի ձեռս Ճենովացւոց. զոր նորոգեցին և զօրացուցին աշտարակօք. ԾԸ որում տեսաք 'ի պարիսպս մնչան նորոգումն

և զհին օրինս բերեալս այլազս ։ Այլ այժմ ըստ մեծի մասին աւերեալ կայ . մինչ զի Թերակղզին ծածկեալ է աւերակօք դղեկիս ։

ԴՂԵԱԿ

468 . Այս դղեակ կամք եղեն մեզ մանր խուզարկել . նախ իբրև անցեալ ընդ ծովափն ելաք 'ի լեառն կամ 'ի Թերակղզին բազում դժուարութեամբ , տեսաք 'ի կողմանէ նաւահանգստին զմարտկոցս և զաշտարակս 'ի պաշտպանութիւն նորին ։ Անդ 'ի միջավայրի բերդին տեսաք քարաշէն սենեակ գմբեթաւոր նման մատրան . և 'ի վերայ նաւահանգստին քառակուսի աւերակ , որ էր եկեղեցի Հայոց ։ Թուեցաւ մեզ թէ Ջենովացիք զայս տեղի պիտանի առեալ էին Հայոց առ 'ի պաշտպանել զնաւահանգիստն , որ մնաց առ նոսա մինչև ցյետին ժամանակս . զորմէ զկնի ։
Անտի դէպուղղիղ գնալով հասաք 'ի ծայր լերին և 'ի բերան նաւահանգստին . ուր բոլորին պատոյտք ժայռից յերկուց կողմանց նաւահանգստին ։ Ուրանօր տեսաք զաշտարակ վառան լապտերաց . զոր յառաջագոյն վառէին գիշերայն ։ Իսկ 'ի հանդիպակաց փոքրիկ ծոցի գոյ պատնէշ դէմընդդէմ բերանոյն յապահովութիւն նաւահանգստին ։ Անտի զննեալ զպատոյտս բերանոյն , տեսաք զի բերանն դարձեալ է 'ի հարաւոյ դէպ յարևելս . և առ ծոց իմն ձևացեալ արտաքուստ դառնայ անդրէն դէպ 'ի հարաւ . որով դժուարին է յոյժ մտանել 'ի հեռաւոր զայս բերան ։ Այն զի արտաքոյ բերանոյն գոյ մեծ ժայռ ծածկեալ 'ի ծովի՝ կոչեցեալ Մոնեօղ Կայա . որ բազում անգամ վտանգէ զնաւս ։ Անդուստ 'ի հարաւային ծայրէ բերդին գնալով 'ի վեր հասաք 'ի քառակուսի աշտարակն անմատոյց և յամենայն կողմանց ամրացեալ . որ տիրէ 'ի վերայ մտից նաւահանգստին , և է կրկնապարիսպ իբր ներքնաբերդ . յոր մտեալ բազում աշխատանօք տեսաք բերան յապառաժ յատակին , և 'ի ներքս խորին շտեմարան կամ գբնդան . որ մեզ թուեցաւ ջրհոր ։ Անտի ձգեալ մեծաշէն պարիսպ ընդ արևելս գնայ մինչև ցհիւսիսային ծայր լերին . և անտի խոնարհեալ ընդ ձորամիջին հասանէ յաշտարակն նաւահանգստին ։

Ընթացեալ մեր առաջ ընդ արեւելս հասանք 'ի վերին ծայր բերդին, ուր է մարտկոց կամ՝ ներքնաբերդ. և բոլորշի աշտարակ բարձր. յոր ելեալ տեսաք 'ի միջավայրին բերան բոլորաձև 2 կանգնաչափ տրամագծիւ, և 'ի ներքուստ շտեմարանեալ չափաւոր խորութեամբ։ Ընդ առ երի դրան տեսաք ղագուգայս, ընդ որս հոսէր ջուրն 'ի շտեմարան անդր, եկեալ 'ի հանդիպակաց բարձրագոյն լեռնէ. ըստ որում տեսաք 'ի լերին անդ զմեծ ջրանցս։ Արդ՝ զշրջապատ այսր աշտարակի չափեալ 'ի 'ի ներքին կողմանէ գտաք 25 քայլս. տեսաք 'ի պարըս-պի անդ և յաշտարակին զփայտեայ դերանս, ուստի հաւաստի՝ լինել գործ Ճենովացւոց. զի նախնի Յոյնք ոչ դնէին փայտ 'ի պարիսպս, որպէս դիտեցաք 'ի բազում տեղիս։

Աստի փոքր ինչ հեռի դէպ յարևելս գոյ այլ մեծ աշտարակ բոլորաձև, որ աւարտի 'ի սուր ծայր յանկիւն արևելեան և հիւսիսային։ Այս աշտարակ ամբողջ կայ, և ունի շրջանակս և զարդս 'ի վեր անդր. առ որով եղեալ կայ 'ի ձախում աշտարակին վէմ մի մեծ փորագրեալ 'ի միջավայրին խաչ. 'ի մի կողմն սանդըխաձև նշան Ճենովացւոց. և 'ի միւս կողմն ձև ինչ եղծեալ։ Նա սոյնպէս տեսաք զայլ վէմ մեծ փորագրեալ 'ի մի ծայրն սբ Գէորգ, 'ի մէջն խաչ, և 'ի միւս ծայրն 3 գիծք զուգահեռականք մի քան զմի կարճ։ Աստի ելեալ արտաքս տեսաք զայլ պարիսպ և դուռն ցամաքակողմեան. ընդ որ իջեալ 'ի ձոր անդր հասաք 'ի ստորին ծայր բերդին, ուրանօր գոյր դուռն մերձ 'ի նաւահանգիստն։ Պարիսպ այսր կողման ամբողջ կայ ըստ մեծի մասին. ուր երևին 5 աշտարակք, որոց իւրաքանչիւր ունի առաջի իւր պատնէշ կիսաբոլոր հաստատուն յոյժ։

469. Աստի սկսանի այժմեան քաղաք Պալըգլավայի ձգեալ ընդ երկայն 'ի ձախակողմն նաւահանգստին. որոյ բնակիչք են Յոյնք մակեդոնացիք իբր 120 տունք. զորս աստ բնակեցոյց Բ Կատարինէ Թագուհին, կարգելով զնոսա առանձին գունդ զինուորաց պահապան այսոցիկ կողմանց։ Մերձ առ պարիսպն է արգելանոց քաղաքին շինեալ 'ի քարանց բերդին. որպէս և եկեղեցին նորաշէն և խաչաձև, որ կառուցեալ է յանուն սրբոյն՝ Նիկողայոսի։ Ուր տեսաք հատուած ինչ սեան

և խարխուլ մահմետականաց ծածկուած հին շինուածոց ։ Նա տեղեաւս է հին եկեղեցին Յոհաննու յանուն սրբոյ Երրորդութեան. և 'ի բարձու անդ է այլ եկեղեցի յանուն սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի ։ 'Ի վերջին ծայր քաղաքին 'ի բարձրադիր գեղեցիկ վայրի և ընդարձակ դաշտաց, կառուցեալ 'ի Աղեքսանդր Ինքնակալէ վասն 120 մանկանց. զորս բաժանեալ յերիս մեծամեծ սենեակս, մարզեն 'ի լեզու Ռուսաց. որք և կերակրին յարքունուստ. ուր գոյ և աղբիւր քաղցջուր, և բնակարանք ուսուցչաց ։

Յառաջ 'ի սմին քաղաքի գոյր և փայտաշէն եկեղեցի Հայոց, որպէս տեսաք և զաւերակ հին մատրան 'ի բերդի անդ (468)։ Տեսաք արծաթի հին խաչ աւետարանի յեկեղեցին Սգմէջիգի, փորագրեալ այսպէս. * Յի-
„շատակ է սբ. աւետարանս կիւմիշ յովաննեսի որդի
„տէրցու մկրտչին 'ի դուռն պալըգլավայ օհ. ոհաննեսի.
„թվին ռքձժգ ‖ ։

Ըստ պատմութեան Ստրաբոնի 'ի պարսպէ անտի բերդին սկսանէր մեծ պարիսպն 8 վերստ երկայն, որ հասանէր ցնաւահանգիստ Խերսոնի հանդերձ աշտարակօք. 'ի քարանց անտի շինեցին զՊալըգլավա և զԻնտի քէօյ ։ Այլ յաւելու ասել թէ նախ քան զշինութիւն Խերսոնէսի գոյր յայսմ կողմանս այլ բերդաքաղաք, որ յաւուրս իւր կործանեալ էր. * 'Ի մէջ քաղաքին (Նոր Խերսոնի) և հրուանդանին՝ գոն երեք նաւահանգիստք. ապա հին Խերսոն, որ այժմ կործանեալ է. յետ այսր նաւահանգիստն նեղ Սիմպօլոն։ Պլին. է ։

Աստանօր, պատմեցին մեզ, դիպուած իմն աղէտալի պատահեալ սակս դժուարութեան մտից նաւահանգըստիս. իբր զի նաւ մի տարապեալ 'ի բռնութենէ հողմոց՝ դիմէ 'ի Պալըգլավա ։ Այլ որդի նաւապետին քաջ ևս քան զհայրն ուղղէ զնաւն 'ի ժայռ անդր ծոցոյն. հայրն ազդէ խոտորիլ՝ բայց հմուտ պատանին արձանացեալ ոչ փոխէ զգիծն. մինչ զի բարձրաբերձ ժայռք ընդառաջ ելեալ՝ թուէին կործանել զնաւն ։ Յայնժամ հայրն առ բռնութեան կրից՝ յառնէ 'ի վերայ պատանւոյն, և վիրաւորէ զնա չարաչար ։ Իսկ քաջ պատանին յոգիս ապաստանեալ՝ ձգէ զնաւն նովին գծիւ 'ի ծոց անդր ընդ ժայռիւ 'ի բերան նաւահանգստին առահովապէս, և ինքն անդէն մեռանի ։

470. [illegible] 13 [illegible] (471). [illegible] 700 [illegible] 16 [illegible] 10. [illegible]

471. Այս մասն Խրիմու կոչի Իչ Էլ. յ̃ի ներքին երկիր. զի գոտիք բարձրաբերձ լերանց աղխաղխեալ որոշեն զայն 'ի դաշտավայրաց Խրիմու Տէշէլ ձայնելոց: Այսպիսի լերինք ամփոփակեալ զայն մասն յերեսաց հիւսիսային հողմոց բարեխառն և բարեբեր սահեն, սկսեալ 'ի Պալըգլավայէ մինչև ցՌէֆէ: Սորա նոր գտանին գրեթէ ամենայն տեսակք պտղոց. չիք անդ ոչ լու և ոչ այլ նեղիչ կենդանի: Բնակիչք տեղւոյն կոչին Թաթ. որք են սերունդք նախնի Յունաց. յորս մինչև յայժմ տեսանին նշանք ինչ և մակա-նուանք Յունաց. թէպէտ այժմ են մահմէտականք:

Սոքա թէ դիմօք, թէ բարուք և թէ սովորութեամբք բերեն զնմանութիւն Յունաց Պոնտոսի. որոց գլխաւոր տեղիք են յետ Պալըգլավայի Մէրտիվէն ոյաղէ, ուր գոյ բերան ապառաժուտ, որ երևի նման սանդխոց. ընդ որս ելեալ մեր ընդ զառ 'ի վեր դարաւանդին հասաք 'ի Պայտար օվա:

Առ դարաւանդիւս գոյ բերան և փոքրիկ ծոց. Լաս և սարն Ֆոռօզ. յետ որոյ երևի յարևմուտս Այա սար երկայնեալ 'ի ծով անդր առ Պալըգլավայի ըստ որում ասացաւ, իբր մեծ հրուանդան ողջունատու հանդիպակաց սարին Սինոբայ Կայլեց (Պոնտ. 75):

472. Իսկ յարևելեան կողմն զկնի Ֆոռօզին յաջորդէ գիւղն Մշաթքա. ապա Միխալաթքա, ապա Կիւչիւք քէօյ. ապա մեծ սարն Կէքէնէիզ. ապա բարձր սարն Կուրթէլէր. և ապա այլ սար և հին պարիսպ անուանեալ Այթօտօր: Յետ որոյ Լիմէն. ապա վայելուչ գեղն Ալուպքա. ուրանօր մեծ կոմսն Վօրօնցով հաստատեաց գեղեցիկ պարտէզ և ամարանոց յիւրում կալուածի: Զկնի ապա յաջորդէ Սիմիզ սար. ապա Միսխօր և ապա Կուրէիզ. զոր տարագրեցաք յուղեգնացութեան մերում անդ յԻնկի սէրայէ է Ալուշդա և է այլ մասն Իչէլի մինչև ցՊաղչէսէրայ. տես անդ (433):

473. Իսկ ապա յԱլուշդայէ անդր գնալով ընդ ծովեզերս յարևելեան կողմն յաջորդէ այլ բերան և գետակ ձայնեալ Տէմիրճի էօղէն. ապա գետակ և բերան Լուրի Էնլէր. ապա Սօթէրա: Այա Խստոտ էօղէն. ապա Ուլու էօղէն և Կուչիւք էօղէն. ապա Թոռօնլու և

տաղս Տրապիզոնի. որք են ծովք և բերանք գետակաց. ուր զան բարեշէն գիւղօրէք Թաթից և պարտէզք: Հուսկ ուրեմն շրջեալ ընդ առապարս հասանք 'ի գիւղն Իւսկիւթ:

ԻՒՍԿԻՒԹ.

474. Իս անուանի գիւղ. յորում են 300 տունք Թաթից և քաղաքաշէն մզկիթ. գրեթէ ամենայն տունք են սառերեկրեայ հողայարկ. այնպէս զի տանիք միոյն է բակ միւսոյ: 'Ի ձախակողմն է ձորն մեծ, և 'ի նմին գետակ. բերան ծովուն փոքր ինչ հեռի է աստի, ուր փառանելին պատուական ձկանք: 'Ի ձորամիջի անդ տե-սանք բազում այգեստանեայս և զուարճալի պարտէզս. որք սկսեալ 'ի լերանց հասանեն մինչև ցծովափն: Ա-նուանի են պարտէզք տեղւոյս. ուր զան գրեթէ ամե-նայն տեսակք պտղոց: Կամելով մեր շրջիլ 'ի լեռնա-կողմն՝ ելաք Ը զաւ 'ի վեր լերանց, որք կոչին Տրապիզոնա-ընդ որս հոսի գետակն Խոսրովայ էօղէն. 'ի վեր անդր է Չամլըպէլ ձորս և լեռան Ասէտ. որոյ հանդէպ անկանի բարձր լեռան Սթէփանոսէկ, նաև Տրապիզոն լեռան Արփաստ: Այս ելեալ բազում դժուարութեամբ ընդ զաւ 'ի վեր մեծի լերին Սուրբ Կիրակէ կոչեցելոյ՝ հա-սաք 'ի կիրճն Տրապիզոնի. որ է անցք և գօտի լերանց. ուր յերկուց կողմանց լերինք մերձենան միմեանց: 'Ի մի կողմն է ծակ ապառաժ Տէլիքլի տաշ ձայնեալ. և 'ի միւս կողմն է բարձր լեռան Տրապիզոնի. ուր 'ի բարձրա-ւանդակի անդ երևի դաւան վաղեմի վիմատաշ եկեղե-ցւոյ, որ կոչէր Այ Եօրկի. ուր յառաջ յաճախէին Յոյնք: Յոտս լերինն բղխի քաղցրահամ ջուր ականա-կիտ: Անցեալ աստ ընդ առահար լերինս հասաք 'ի սահ-մանագլուխ Ջէլիոյ, Պօղազ կոչեցեալ: Սուաղ իջեալ ընդ զաւ 'ի վայր մեծի լերին՝ հասաք 'ի Տրօկոնա. աստ է գլուխ Պէսաղ գետակին Խոսրովայ. ուրանօր գոյ և համանուն գիւղ (408):

ԽԱՓԼՄԽՕՐ.

475. Իս անուանի գիւղ Թաթից փոքր ինչ հեռի 'ի ծովածոցոյ. ունի յաջ և յահեակ կրկին ձորս և բա-

րբեքր այգեստանեայս ։ Առ յառաջակողմն ճեմակին Յոյնք և ունեին զեկեղեցիս. զի տեսաք տաճարի գեղջ բարեձևիր բլրակ և 'ի վերայ աւերակ հին եկեղեցւոյ երկայն 13 քայլ և լայն 6. յոր յաճախեին ուխտաւորք 'ի զատկի ։ Նոյնպէս երևելի ուխտատեղի էր Ս. [?]-ւէս 'ի վեր անդր 'ի կողմն այգեստանեացն, որ այժմ աւերակ է ։

Նա այսմ՝ի ստորև գեղջն տեսաք զայլ աւերակ եկեղեցւոյ 'ի մէջ այգւոյ ։ Նաև հասեալ 'ի բերան անդր ձորոյն տեսաք զարմանալի լերինս և կիրճս, որք կոչին Լուսման դաշ, Մուխսին թէօշէօ, Սարի աղաճըն թէրէօ, և Զօղան գօղէ էօղէնի, որ է ձոր 'ի մէջ ապառաժ լերանց. մերձ 'ի բերանն բղխի բարեհամ ջուր ։

Զարմանալի են գիրք այսորիկ լերանց, զի գունով արեգդէմ՝ 'ի ձգիլ շառաւիղաց արևու փայլի բոլոր լեռանն իբրև զոսկեղէն ։ Իբրև զի յապառաժս գոյացեալ կան սղոցակափայլ ակունք որպէս անդամանդ, որք ունին յատկութիւն ինչ անդամանդի. տոկան հրոյ, և մաշեն զապակի, այլ չեն այնչափ կարծր. ձև նոցա է տարանկիւն. զոր և կոչեն Ճաշկին թէրէճ էլմասի. որովհետև այս խանտայր չինել յայսորիկ ականց այլև այլ զարդս ։

ԶՕՂԱՆ ԳՈՒՂԷ

476. Կայ բոլորաձև աշտարակ մեծ 'ի ծայր լերին 'ի մէջ Խափրխօրի և Իւղքիւթի բարձրադիր. զորոյ ներքին տրամագիծ չափեցաք 12 քայլ. իսկ բուն տրամագիծն 20 կանգուն. և արտաքին շրջապատն 64. բարձրութին է 9 գրկաչափ. ունի պատուհանս և մարտկոցս. իսկ դուռն է 'ի ծովակողմն ։ Տեսաք 'ի մէջ աշտարակին կամարաշէն ներքնատուն, որ թուի լինել ջրշեղջ. յոր գայր տանն ջուրն 'ի լերանց անտի ընդ ստորերկրեայ ճանապարհ ։ Նաև սկսանի պարիսպն լայն և հասանէ մինչև ցարևելեան ծայր լերին յերկայն 240 քայլ ։ 'Ի ծայր անդր գոյր զօրաւոր մարտկոց, և 'ի միւս ծայրն կրկին աշտարակք. որպէս ցուցանեն հիմունք և մնացորդք պարսպաց ։ Նա որով զան հին գերեզմանք յանտառ քարանց եղելոց 'ի վերայ միմեանց, որ է գործ հին Յունաց ։

Ընտանիքն պատուականքն մեր, Թէ 'ի հնումն անհնարին էղև Թշնամեաց առնուլ զայս ընդդէմ պատերազմաւ. այսպէս խորհեցան զասանել զանուն Լերին. Նմին իբր յածեցուցին սուր և անդ զծառոյն ելեալ մի. որոյ յանցանելն 'ի վերայ ագուազայն զգացեալ սպառ զարկը հարկանել. յորմէ խնդացեալ զարին զանուն Լերին, և խըմ-ցեալ՝ առին զեւերգն և քանդեցին. Նոյն անցեալ մեր ընդ բարձրաղաղակ Լերին, որք կոչին Չորրորդ տուրեւոր, սեռագ զայլեայլ անգա, զձորն Փոխոյնո, և զապա-ռաժուտ ծագս։

477. Նշմոյն է լեառն 'ի ձախակողմն Խաղբրախոյի, որում յանձնդէ Մոնտո առյն. այպա Փանանիա որոծայր ապառաժ խանդարհեալ 'ի ծովն, այպա Խրոնեղուր լեառն. այպա Խրոնենչու առյն. ուր զայ հանմանան զիւղ և հովիտ, Նաև այդիք. և ուր Նմին Թէվէն տեղէ, որ է զետակ. այպա Մէզինդ ողբ և Սանտոզ գոյս, ասպի հասանենն զերկանուքարս սակս Լրաղացեց. այպա Սա-պագ լճան. ուր որում երեկի ուերակ վանաց (479). և այպա Սանդաղ, որ ունի զետակ և մեծ ձոր և հովիտ, պաշտելի աւելեալք. ուր 'ի հնումն կային բաղում եկեղեցիք, որպէս երեկին սուր և անդ աւերակք և մնացորդք մատրանց։

ՍԱՒՈՅԱՂ

478. Ի ընդարձակ և գեղեցիկ հովիտ բազմահրաշալի՝ շրջապատեալ յանմատչելի լերանց մինչև ցծովն։ Զամաքային անցք հովտիս Նեղ է իբր զանձապահեալ 'ի բարձր տապարածէ, որ 'ի Թառինթարոց կոչի Թառինդաղ. արտաքնոյ յերկուց կողմանց տապանեաւար երևի այս լեառն իբրև սանար։ Երկայնութիւն հովտիս 'ի Թառաթաղաշէ մինչև ցծովաւեզ ժամն 2. իսկ լայնութիւնն է անհաւասար. զի 'ի միջավայրի ընդարձակի հովիտն և լինի մեծատարած. ցամաքային բերանն կոչի Պաղըրտ դաղն. զի անդր սկսանին ծառայլից և բարեբեր այգիք. գինին անուանի է յոյժ՝ ընտիր և յարգի ընդ ամենայն Սաւոյաստան։

Նոյն հովիտս բաժանի 'ի կրկին մասունս. առաջինն կոչի Թառաթաղաց, որոյ այգիք չեն այնչափ 'ի համարի, որպէս և գինին. իսկ երկրորդ մասն է բուն Սաւոյաղ,

որ ձգեալ երկայնի 'ի մէջ երկուց լերանց մինչև ցծովն իբր ձուաձև․ ուր ձգեալ շատաւորիղք արևու՝ գերազանց զարծեն զգինիս․ համգիպակաց բոլորաձև լեառն կոչի Փէրլէմ գայա ։ 'Ի մէջ հովտիս տեսանք զուարթալի վայրս բարեբերս և ականակիտ աղբիւրս․ անուանի այգիս ծաղկահոտ գինւոյ, և զմեծաշէն պալատս մեծատարաց ։ 'Ի հնումն կոչէր Սելլասիա․ զոր Թաթարք կոչեցին Սուտտաղ․ իբր զի յաջակողմեան մասին նաւահանգստի ոչ այլ ինչ երևի, բայց եթէ մերկ լեառն և ջուր ծովու․ որով սուտ Սու Տաղ ։ Սակայն համանուանն հաւաքեալ 'ի լերանց անտի ոռոգանէ զայգիս․ յոր խառնեալ վտակն Գօարագաչ գնայ 'ի ծով ։

479․ Նաւահանգիստ Սուտաղի Թէպէտ գեղեցկադիր և ընդարձակ է, այլ չէ ապահով յարևելեան և 'ի հարաւային հողմոց․ զի աջակողմեան Թերակղզին պաշտպանէ միայն 'ի հիւսիսային և յարևմտեան հողմոց ։ Փոքր ինչ հեռի գտանի առ յարևմտեան կողմն նաւահանգիստ Քէնովացւոց ամրափակեալ 'ի ժայռից Պուշգայայի և Փէրլէմ գայայի առ Խոճա գայայի վայր ապահով․ ուր յաճախէին նաւք 'ի հնումն․ որ կոչի Սուդակ լիման ։

Թերակղզին է առապար լեառն ընդարձակ ձգեալ ընդ զառիվեր և մտեալ 'ի ծով անդր կիսով չափ․ յորոյ վերայ շինեալ է զօրաւոր բերդ Քէնովացւոց, որ գլխովին ապահով է 'ի կողմանէ ծովուն, և յայլ ամենայն կողմանց ամրացեալ է հզօր աշտարակօք ։ Ներդն է բոլորաձև պարսպապատ․ ամենայն շինուածք են 'ի ձև զօթացի ։ Դուռն է մեծաշէն 'ի հիւսիսակողմն բարձր և ամրացեալ կրկին ներքնադրամբք և երկուք աշտարակօք ։ Սակայն առաջին դուռն հանդերձ պարսպօք քանդեալ է․ արտաքոյ դրան է աղբիւրն հին քարաշէն․ որոյ ճակատ է միակտուր որձաքար վէմ մեծ և 'ի վերայ փորագրեալ պատկեր սրբոյն Գէորգայ․ առոտով վիշապ, և յերկոսին կողմանս անորոշ հին գիր զօթացի․ երկայնութիւն այսր քարի է չորս կանգնաչափ և լայնութիւն 2․ տեսանք յայլ կողմունս աղբեր քանդակս և զարդս ։

Երկրորդ պարիսպն և դուռն նոյնպէս քանդեալ են, բայց կան մնացորդք 'ի տեղիս տեղիս․ իսկ երրորդն է բուն ներքին դուռն բերդին կամարաշէն մեծագործ

հանդերձ կրկին բարձրագոյն աշտարակաւք․ Լայնութիւն դրանն է 7 կանգուն։ Իսկ կամարն ընդ պարսպաւն յեր-կուս բաժանեալ, է և ունի միջոց վերուստ 'ի վայր բա-լայնութեան դրանն՝ վասն իջուցանելոյ 'ի վերուստ սա-տի գգուած արուեստիւ իւն, և ամրանալոյ՝ երբ հարկն պահանջէր։ Եթէ թշնամին վնաս ինչ հատուցանէր դրան, անդէն զայլ դուռն պատրաստական իջուցա-նէին 'ի տեղի նորա կամ առանձինն 'ի միջոյ կրկին պարս-պաց։ 'Ի վերայ աջակողման աշտարակին տեսաք ար-տաքուստ այլատակ վէմ շրջանակաւոր․ բայց քանդակն խանգարեալ է։ Իսկ ներքին կողման վէմն և արձանա-գիրն ամբողջ կայ հին գոթացի գրով․ 'ի ներքոյ նշան Ղենովացւոց, 'ի միջավայրին խաչ․ և յերկոսին կող-մանս զոյգ մի Թիկնոց․ 'ի մի կողմն առիւծ, և 'ի միւս կողմն սանդխաձև նշան։

Ըստ նմին օրինակի 'ի վերայ ձախակողման աշտա-րակին գոյր հին քար խաչազարդ՝ գեղեցիկ շրջանակօք։ Յերկուց կողմանց դրան տեսանին կարգաւ 'ի պարիսպն քառակուսի աշտարակք, թուով 17, ոչինչ կարի հեռի 'ի միմեանց բաժանեալ զեւերդն, որք հասանեն ծովէ 'ի ծով յերկոսին ծոցս Թերակղզւոյն։ 'Ի վերայ հիւսիսակող-մեան մեծի աշտարակին տեսաք տապան մեծ շրջանա-կաւոր՝ փորագրեալ 'ի միջավայրին խաչ 'ի մէջ բոլորակի․ յերկոսին կողմունս առիւծանման և մարդանման նշանք․ 'ի միւսումն սանդխաձև նշան Ղենովացւոց, և գիր անվերծանելի։ Ըստ որում 'ի պարսպի անդ գտաք զայլ վէմ, և 'ի վերայ խաչ և գիր այսպէս․ THPMAΞA-PHAΣM․

Տեսաք 'ի մէջ բերդին զերկու մեծամեծ ջրշիղջս կա-մարաշէնս, ուր հաւաքէին ջուրք անձրևաց 'ի քարա-պատ յատակէ անտի։ Մին է միակամար և խորին․ իսկ միւսն է կրկնակամար յերկուս շտեմարանս բա-ժանեալ, երկայն 13 կանգուն, լայն 11, և բարձր 30։ Եկեղեցի բերդին է յարևելեան կողմն բոլորովին քա-րաշէն․ բայց զկամար գմբեթին և զանգակատան քան-դեալ են Թաթարք։ Տեսաք 'ի հարաւային կողմն վայր Միհրապի․ յորմէ յայտ է թէ Թաթարք 'ի մզկիթ փոխեալ էին․ և այժմ է եկեղեցի Ռուսաց։ Ըստ աջմէ դրան գոյ վաղեմի վէմ, և արձանագիր անվերծանելի․ որ թուի լինել վէմ պարսպին․ 'Ի մերձակայ աշտա-

բանկին տեսաք նոյնպէս արձանագիր և նշան Ջենո-վացւոց :

480. Պըլլաքալէ է մեծագործ ահագին աշտարակ իբր ներքընաբերդ բազմեալ 'ի գլուխ բլրոյն 'ի բարձրա-ւանդակի . որ է իբր մեծ հրուանդան երկայնեալ 'ի ծովն, ուղղաձիգ ձգեալ բարձր վերուստ 'ի վայր : Նոյն անմատչելի աշտարակ ունէր աստն ծածուկ ճանապարհ կտրեալ յապառաժի, որ յանհնարին բարձրութենէ անտի իջանէր մինչև 'ի ծովն առ 'ի փախչիլ 'ի նաւս : 'Ի զառ'իթափի է միջնապարիսպն համօրէն աշտարա-կօք . ուստի սկսանի հարաւային պարիսպն և հասանէ մինչև ցարևելեան մեծ աշտարակն, ուր յառաջ գոյր առանցուկք կամարաշէն, որ հանէր յերկրորդ յարկ նոյն աշտարակին : Աստանօր ելեալ տեսաք 'ի մէջ մեծի պարտէզին զջրանցս, որ հասանէ մինչև ցներքընաբերդն բարձր : Պատմեցին մեզ թէ 'ի հանդիպակաց լեռնէ, որ կոչի Պուշգայս, գայր ջուրն մինչև ցաշտարակն մեծ :

Սուտաղ քաղաք 'ի հնումն էր յարևմտեան կողմն Թերակղզւոյն, ըստ որում տեսաք զհետս շինուածոց, ուր այժմ շինեալ են բնակարանս պահապան զօրաց : Մերձ յաջակողմեան ծոց Թերակղզւոյն տեսաք զաւե-րակս հին պարսպաց, որ սկսեալ 'ի լեռնէ անտի հա-սանէր ցաշտարակն մերձակայ և հատանէր զանցս ծո-ցոյն : Նոյն քառանկիւնի բարձր աշտարակ է արտաքոյ բերդին ամրաշէն և զօրաւոր կառուցեալ 'ի պաշտպա-նութիւն ծոցոյն և միանգամայն բերդին : Մուտն է յարևելեան կողմն 'ի բարձր կայի . ուր մտանէին 'ի պարսպէ անտի, որ պարտի լինել լայն : 'Ի ճակատի անդ է մեծ տապան, գօթացի գրուածով, համօրէն նշանօք Ջենովացւոց :

Նոյն տեղւոյ գոյ փոքրիկ մատուռն կամարաշէն . յոր-մունս տեսաք զպատկերս սրբոց, և 'ի հարաւային կողմն պատկեր աւետման : Փոքր ինչ տարակաց անտի տե-սաք զաւերակ հին բաղանեաց . լերինք և տեղիք այսր կողման գլխովին մերկ են . ուր զննեալ տեսաք զհանքս երկաթոյ : Նստանօր բնակին գերմանացի գիւղականք 'ի լուտերականաց . մերձ 'ի գիւղն գոն երկու հին փոք-րիկ եկեղեցիք լքեալք անխնամ :

481. Ձախակողմեան ծոցն է մեծ նաւահանգիստ Սուտաղի առ բերդիւ ընդարձակ և գեղեցկադիր, այլ

ոչ ապահովել · ուր եղերբ ձորն և մեծ հովիտն ․ առաջի սկսանին այգեստանեայք և ուղղակի հատանեն մինչև ցԹարախաղաշ լեառն : Յարևմտեան կողմն է գլխաւոր բնակութիւն և շուկայ Սուտաղի · ուրանօր յաւուրս մեր սկսան շինել եկեղեցի Յունաց 'ի քարանց առաջի հին եկեղեցւոյն, զոր գտին առ երի ծովուն · յորս առ-նաք հին սիւնս, կամարս, և վերնատախտակս այլովքն հանդերձ, որ պարտ էր լինել երևելի եկեղեցի · յորմէ մակաբերի թէ գոյր բնակութիւն 'ի հին նաւահան-գստան Ճենովացւոց (479) :

Աստի 'ի վեր դէպ 'ի յարևմուտս էր Այաւլա վանք Յունաց, մերձ յաղբիւր քաղցրեջուր, յորոյ անուն մինչև ցայժմ նոյն տեղի այնպէս կոչի · գոյ և հին եկեղեցի սրբոյն Գէորգայ, ուր գնան ուխտաւորք 'ի Յունաց : Մերձ յաղբիւր անդր երևին որմունք հին եկեղեցւոյ · և 'ի վեր քան զԱյաւլա է լեառն Սանձըլ Գայա · առ Փէրչէմ Գայայիւ · որ տիրէ 'ի վերայ Սուտաղ լի-մանի հին նաւահանգստին : 'Ի ծովակողմն գոյ Կէօկ-տաղ բլուր Թուխ, որ ունի յատկութի ինչ մարմարիոնի :

Յայս կողմն Սուտաղի էր 'ի հնումն Թաղն Հայոց, ուր գոն եկեղեցիք Հայոց և վանք սրբոյն Գէորգայ, որոյ կամարք քանդեալ է · իսկ 'ի վերայ դրան գոյ նոր գիր * Յիշատակ է սուրբ խաչս իղձիւքն անդրէասի որդի եղիայինն ‖ : Ուր երևին հետք պարսպաց և անե-կաց : Գոյր անդ գիւղ Հայոց և եկեղեցի Ածածնի · Երկիրն կամ այգին ցարդ է 'ի ձեռս Հայոց Խրիմու, թէպէտ այժմ չիք անդ ժողովուրդ : Տեսաք վէմ յա-ռանձին տան, յորոյ վերայ գրեալ կայր յիշատակարան եկեղեցւոյ սրբոյն Ստեփաննոսի : Յորմէ մակաբերի թէ յետ զօրանալոյ Հայոց 'ի Կէֆէ, հաստատուած մի 'ի նոցանէ առաքեցին Ճենովացիք աստ 'ի պաշտպա-նութիւն տեղւոյս :

Աստի սկսանի տարածումն Փէրչէմ Գայա · և հանդի-պակաց արևելեան լերինք կոչին Ալիօս տաղլարի : 'Ի մէջ լերանց տեսաք զեկեղեցին սրբոյն Գէորգայ · առ որով են արքունի այգեստանեայք վայելչագոյնք, որք կոչին Աշըխար · ուստի յօրինէ վերակացուն զազնիւ գինիս և առաքէ յարքունիս Պէտըրպուրկայ, քանզի ոչ միայն գինի տեղւոյս՝ այլև բոլոր կողմանցս է ծաղ-կահոտ և յարգի ընդ բոլոր Ռուսիա :

482. 'Ի Սասնոյ մինչև 'ի Դ.Եֆէ գան երևելի գիւղօրէք և լերինք. որպիսի են Թոփլու, Խոզ, Օնող, Պարապաղ, եւն։ Բայց յարևելեան ծայր նաւահանգըս– տին Սասնոյ ապառաժն մնեալ 'ի ծով կոչի Ս.ուլտան խոյսով. որում յաջորդէ բերանն Խոփոէլ կէՓ Թոփլու, ուր անապական են այգիք. և ապա Խոզ. որ ունի ձոր և գետակ հովիտ գեղեցիկ բարեխօտ. երկայն 4 մղոն և կէս. որ բաժանի յերկու Թևս։ Օդ տեղւոյս բարի է, և գինին զօրեղ յոյժ։ Ի ծայր արևմտեան Թևին վայելչագիր է այգին տիրող 'ի վերայ ծովու. որ ըստ անուան նախնի ժառանգողին կոչի Պօղոսանձօղլու պաղչէ. ընդ որ անցանէ մտակ հովտին։ Ի հնումն գոյին 'ի Խոզ բնակ Յոյնք և եկեղեցի. այլ այժմ են Թաւթարք և վայելուչ Ճ'աւմի առ նմին և պատուական աղբիւր։ Ի բերան Խոզի 'ի Պօղպուրուն պաշտօնաւն գոյ աւերակ հին եկե– ղեցւոյ Յունաց յանուն սրբոյն Յովհաննու։ Յետ Խոզի յաջորդէ Օնող ադլը, որ ունի ձոր. 'ի մի կողմն գոյ Ք.սկւոր լեռնակ, և 'ի ձախակողմն մեծ լեառն մԹնադոյն Պարապաղ. Ճանապարհն լեռնային է և դժուարակոխ. 'ի լերանց տեսի եղանէ տալիսակա– փայլ ակն, որ բերէ նմանուԹ ինչ անդամանդի (475)։

Թոփլու 5 մղոն հեռի է 'ի Սասնոյ. ունի լե– րինս Պէօյիւք օըբլ, Թոփլու օըբի և Փոստուխ գօլ. իսկ 'ի միջոցի այսր գեղջ և ծովու գոյ բարձրաւանդակ կոչեցեալ Փուլուղ գօլ. առ որում 'ի դիւրի անդ– տեսանի մնացորդ մաղնջական գերեզմանատան. ուր երևին 10 գերեզմանք կարգաւ յարևելից յարևմուտս ըստ երկայնութեան 32 քայլից. որք շրջապատեալ են 'ի քարանց. յորս են չորեքկողմեան քարինք 4 և 5 կանգուն մեծութեամբ. են և տարանկիւնայինք։ Ի հարաւակողմն երևին փոքր ինչ հեռի 3 գերեզմանք զատեալք. 'ի ծայր գերեզմանատան գոյ և մուն։

Մ'ի կատար Փօրսուխ գայայի է Թուխ և ունի յատ– կութիւն ինչ մարմարիոնի. երևի 'ի ծայրն մնացորդ հին պարսպի։ Ըստ Պարատազիւ են բերանք Կէօկ Նէ– ճէ, Խաւմըրչ էօղլն, Խաւչէ և Սալու. Կէօկքէփէ ունի փոքրիկ նաւահանգիստ Չամլու ինէլէրոյ ձգձգեալ, նաև 'ի վեր անդր՝ պատուական ջուր հանքային և ուխտա–

անդէ Թամթարայ Ղուլն անուամբ. ուրանօր երևին հանք կապարի, երկաթոյ, եւն։

Սորա 'ի հն. բնակէին Հայք. ուր երևի մնացուած և վանատեղի. որմունք եկեղեցւոյն կանգուն կան, որպէս և խաչարձն յանուն սրբոյն Ստեփաննոսի. բազմաւոր ուխտ և յիշատակարան 'ի վերայ վիմի, այլ խանձղամբեալ փոքր ինչ։

* Զ առաջին շինող անձրիս առաքեալ վերև պրտադայն. յետ Ի քն 1։ Նա որով այլ գեր.

* Զ վերջ նորոգող անձրս Սահակիա վարդապետ։ Զ քնորդ արեւելեա այր. ընտրելին զարդարու լուսին վասարք. յետ Ի քն։ Թվ. ղծ Ա (1401)։

Զկնի Պատրաստացին յանձորդէ երկայնաձիգ լեռան Կէֆէկ աթլամատի. որ 'ի բերան Քէֆէի (532). յոր եղերին հարաւային ափունս լերինքն Խրիմու ձգեալք 'ի Սեւաստոպոլէ յերկայն 200 մղոն։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿՈՂՄՆ ԽՐԻՄՈՒ

483. Սորա յետ զննելոյ մեր զհիւսիսային զարեւմտեան և զհարաւային կողմանս Խրիմու՝ դարձ առնելուք 'ի Խարասու. և անդուստ ելանեմք 'ի զննել արեւելեան կողմանց գաւառքի և ծովեզերեաց։ Գլխաւոր տեղիքն են Էսկի Խրիմ, Քէֆէ, Կէրչ, և Արապատ. այլովքն հանդերձ։

ԳԵՏՔ

484. Ելեալ մեր 'ի Խարասուէ ուղղեցաք զընթացս ընդ արեւելս, և անցեալ ընդ քարուտ բլուրս յետ կրկին ժամուց հասաք 'ի գետակն փոքր Խարասու, որ եկեալ 'ի կողմանէ վանաց Փրկչին (421) անցանէ ընդ անուանի գիւղն Սուղաթ և յառաջեալ անկանի 'ի մեծ Խարասու գետ (563)։

Այս մեծ գեղ, որ համարի 10 հազար տնէտէրին՝ է բարեբեր յոյժ. ունի աղօրիս և գործատունս ցքւոյ. յորում կառույց մեծանուն կոմսն Կախովսքի զփառաւոր պալատ իւր և զարդարեաց զտեղին ամենայն վայելչութեամբ. որ յետոյ եղանց առ. հայ իշխան։ Զկնի սորա յանձորդէ գիւղն Պ... ուր գոյ առ. Ձա-

նաւապարհին աղբիւր քաղցրջուր․ յետ որոյ. անցանէ գետոն Պուլկանոսք․ զի ջուրն է միշտ կարմրագոյն աղբերացն, որ գայ 'ի մերձակայ լեռնէն անտի։

485․ Յետ Պուլկանոսի հողին Լիպարայ Սալինայ եւն։ Լիպարայ անուանի կղզին գեղեցիկ քաղաք հանդերձ գիւղորէիւք։ Սալինան առն Սալինա Լիպարայ, զի անպտղական է միշտ ջուրն․ որ ելեալ 'ի լերանց Սալինայ և անցեալ ընդ քարերեր գիւղորէս Պուլկարաց Սիկելոյ և Իսոլայ նաւէ 'ի հանմանուն գեղեցիկ գիւղ՝ երթայ 'ի Սալինա։ Ի սոկ երկրորդն, որ յանջորդէ մերձոյն, կոչի Ինտ... բնական սակս նաւագ լինելոյ ջրոյն․ որ յամարան պաշ... մաքի։ Արդ՝ թողեալ մեր զաքեօնի Ճանապարհ։ Ըէ ֆէր՝ խոստարեցաք ընդ հարաւ, և հասեալ 'ի գիւղն Սիկելոյ տեսաք 'ի զառիվեր լերին զմեծ այպաուած, և մտեալ ընդ կոփածոյ դուռն կամարաձև՝ տեսաք 'ի ձա… կատն հետս ինչ չինուածոյ և ծոցորդ կարմիր ներկոյ։ Նորքին վայրն է եկեղեցի միմոփառ ծնցեալ 'ի վաղ ժամանակաց․ ձև տաճարին է բոլորշի, երկայն 15 կանգուն, և լայն 7։ Սեղանն է սիւնաձև կոփեալ 'ի նոյն այպաուածէ, որոյ տրամագիծ է 4 կանգնաչափ։

486․ Սակի շարունակեալ զընթացս հասաք 'ի գե… ղեցկադիր լեառն Շանծռաղս․ ուր տեսաք պալատ և մատուռն սքչն Սատանիսլաւոսի շինեալ 'ի Լեհացի իշխանէն Կոստենվաքի։ Սակի հասաք 'ի մեծանուն լեառն Ալղարճէ․ որ 'ի Սարարացւոց կոչի լեառն Պունճէրեան, զի է մեծատարած քարծրագոյն քան միագծի լերանց Լա… կի խորիմի։ Այս լեառն լի է առողջարար բուսովք և զարմանալի ծաղկօք․ մէջ որոյ մեղր մերձակայ գեղջ՝ որ կոչի Օվանտըրա՝ է ընտիր, զոր տանին 'ի հեռաւոր վայրս։ Իւր գոյ մեծափառ այր մի Ինձիրապան խոշոր ծայ… նեալ 'ի Քնակեթարաց։ Պատանի աստ պիտանի խաղա… խորդայ ծառն Սարք աղած․ որոյ տերև կոչի Սափրան, որով ներկեն և ներկեն զսեկս։

ԻՑԿԻ. ՍԻՐԻՄ

487․ Ի հնումն կոչէր Պռինքիա և Սիկիլիա․ զոր Արաբք կոչեն Սիկիլ 4կմ ՃԾ Հին Իտալիա, է քաղաք հռո… չակեալ 'ի նախնեաց և այժմ անշքացեալ․ որ կառու… ցեալ է 'ի գեղեցիկ դաշտավայրի առ երի աղբեւնի

Յունաստանցին Մ. Եֆեէ: ՚Ի մէջ քաղաքին երևին մեծ աւերակք կրկին մզկթաց, և երկու աւերակք մեծ եկեղեցեաց Հայոց. որք թուին լինել մեծագործ ուղղանկիւնի եկեղեցիք գմբեթաւորք. ունէին նախադրունս և գաւիթս ըստ հին հայկական ճարտարութեան: Հայք բազմութեամբ աստ բնակէին, և ծաղկեցուցին զքաղաքն մեծամեծ շինուածովք, որպէս պատմեն յեշատակարանք. թէպէտ այժմ և ոչ իսկ քարինք և հետք մեծագործութեանց նոցա երևին. զի մեծատունք քանդեալ փոխադրեցին այլուր և եդին ՚ի նոր շինուածս:

Արդ՝ մնեալ մեր ՚ի քաղաքամէջն՝ գտաք զայն գեղեցկագիր և քարեջուր. առաջի իւր ունի ընդարձակ դաշտ, ընդ որ անցանէ Աէբէն գետակ. և բնակիչք են Հայք, որք ունին առանձին պարգևագիր հանդերձ արտօնութեամբք, զոր ետ Պօղոս կայսր յամի 1799. հոկ. 28. որ ասանի. * Հաւատարմագունից մեր քրիստոնէական օրէնի հասարակութեան քաղաքին եալկի ղախիա, որք ՚ի դաւրի բնակեցեալք, ... կերպի կողմանց ընդհանրապէս, և ամենեցուն յատուկ մերս կայսերական ողորմածագոյն բան || Սն. որով ընկալան 12 հազար դեսեաթին երկիր. բայց Պուլղար գիւղականք առին զմասն ինչ ՚ի նոցանէ և բնակիչ եղեն միոյ կողման (488):

Այս հրովարտակ պահի ՚ի դատարանի անդ Հայոց, ուր որով է և դպրոց մանկանց: Աւրանօր է շուկայ քաղաքին և առընթեր մեծ աղբիւր քարաշէն և բարեջուր, շինեալ ՚ի մեծ| զօրապետէն Տէշէյ (417): Այժմեան եկեղեցի է հնաշէն և անշուք կառուցեալ քարընկէց մի հեռի ՚ի դաշտին յանուն սուրբ Ծնանի: ՚Ի գերեզմանատան տեսաք տապան գրեալ. * Այս է տապան հանգստեան, որ է անուն Աքիկողայասին, և քրոջն սիրմայ խաթունին... թվ. ՌՀԲ ին || (1623): Նորնթեր տարին տեսաք հին գերեզման օրօրոցաձև՝ հին երկաթագրով. զորմէ ասեն լինել տապան նահատակի:

Տեսաք ՚ի միւս դաշտի երկու աւերակս եկեղեցեաց. վերջինն է յանուն սրբոյ Կարապետին և առաջինն՝ սրբոյն Ստեփաննոսի, որոց միայն որմունք կանգուն կան զուրկ յամենայն վայելչութեանց: Այս

դաշտ թուի լինել տեղի եկեղեցեաց և ժամատանց․ ուր այժմ բաց 'ի յաւերակաց և 'ի գերեզմանաց ոչ-ինչ երևի ։ Ուրանօր պարտին լինել և պալատք մե-ծամեծաց ըստ վայելչութեան տեղւոյն․ այլ ոչ նշմա-րեցաք հետս կամ աւերակս՝ եթէ ոչ միայն եկեղե-ցեաց ։

Առաւել մեծաշէն էր եկեղեցի Լուսաւորչին 'ի ծայր դաշտին մերձ 'ի շուկայն․ երկայնութիւն աւերակին է 23 կանգուն, և լայնութիւնն 10․ ուր տեսաք զմնա-ցորդս սեանց և զխարիսխս․ 'ի միում փորագրեալ էր խաչ և գրուած * Ոէ տուրգիս ‖ ։ Մերձ 'ի խորանն գոյ խաչքար գրեալ * ՎՐՉի խաչ․ մր փոխդ․ յի խաչ մր „ յանձն․․ Խաչ կարապետ ‖ ։

488․ Հին Սուղան քաղաք էր մերձ յաղբիւրն Ճա-նապարհին Ռէֆէի․ ուր տեսաք բազում աւերակս պալատաց, եկեղեցեաց, բաղանեաց և այլոց շինուա-ծոց ։ Աստ էր փողերանոցն, ուր հատանէին զդրամս․ մերձ 'ի կամուրջն տեսաք զաւերակ Զարխափան Ածածնի, ուրանօր է գինարանն ։ Իսկ հին պալատ խանից մերձ էր 'ի Մերէն գետակ հոսեալ 'ի հարաւոյ ։ Աստ բնակէր Արքեպիսկոպոսն Սուաց մինչև ցամ ամն 1800․ ապա փոխադրեցաւ 'ի Կատարինոսլաւ ։ Աստ շինեցին տարտէզս և անկեցին Թթենիս վասն շերամոյ, այլ այժմ խափանեցաւ ։

Յարևելեան կողմն էր բոլորաձև պարիսպն, որպէս ցուցանեն հետք․ 'ի տեղիս տեղիս երևին Ջրանցք մնա-ցեալք 'ի նախնեաց մերոց, որք ծածկեալ էին յայժ․ և այնչափ փարթամք, զի մեծամեծք՝ տանն, առաջի տանց իւրեանց շինեալ զԹանգարան պահէին զգանձս ։

'Ի վաղ ժամանակս բնակեցան աստ և Կարայիմ Հրեայք, որպէս ցուցանեն յիշատակարանք և գերեզ-մանք նոցա․ Թուի թէ 'ի ժամս Ճենովացւոց փարե-ցան 'ի Խաւթարստան, և ապա եկեալ բնակեցան աստ, և 'ի Խամամն․ զի աստ դտաւ գերեզման օրէնսդրի նոցա Ահարոն բժշկի գրեալ 'ի վէ 5054․ որ ցուցանէ լինել 537 ամաց ։ Յաջակողմեան վայելչագեղ դաշտի յոտս լերին Պուլղարք շինեցին գիւղս և հաստատեալ բնակին՝ մշակելով զերկիրն և յափշտակելով զգլխաւոր դաշտս և զկեանս վանաց Սուրբ Խաչին, և օր ըստ օրէ բազմանան ։

489. Նոյ հաւաստեաւոր վանք Հայոց պատրաստագոյն շինեալ 'ի ժամանակս Ղեւոնդեանց յամի ՉՁԷ 1338. յանուանակոչութիւն մեծի Լերինն Նշկի խորհրդոյ. որ յառաջ կոչէր Սուրբ Նշան: Արտաքին դուռն է 'ի հարաւակողմն. յորոյ վերայ տեսանք գիր * Սրբաշխարհ է դուռս մահկանացուաց. Թվ. ՌՃԼԵ (1686): Հրատարակ-ուած են յայտ պարթեւաց և ատենային շինուածք:

Եկեղեցին է գմբեթաւոր կամարաշէն և բարձր, ունի երիս խորանս. գմբեթն է 'ի վերայ դասուն, որ բատ տարածութեան ձեւոյն է բազմանկիւնի. և յիշատակա-չիւր կողմն փորագրեալ կայ մի տող տառանաւոր. որ է յիշատակարան եկեղեցւոյն, որպէս գրեթէ

* Փառաց տաճարս Ածայէն,
» Զերկրի դրախտ կենաց փայտին.
» Որ է պատկեր երկնից վերին,
» Այս եռանձնահանդերձ կայանին.
» 'Ի ծննդեան Տեառն փրկչին,
» Զերեքհարիւր և հարուրին.
» Զամ և յերեսուն ութերորդ ամին,
» Կանգնեցաւ յանուն Սբ. Նշանին.
» Մատարութիւն խաչ ծառայքն,
» Զամհամանքի կրօնաւորքն.
» Այս հարազատ եղբարց Նորին,
» Այս բատ տեառն որոց բնակին:

Ներկայութեան տաճարին 'ի ներքուստ չափեցաք 14 քայլ. և լայնութիւն 12. որ է իբր խաչաձեւ կանգ-նեալ 'ի վերայ չորից կամարաց. Մեծ դուռն է յարև-մտեան կողմն. ուր տեսաք խաչքար փորագրեալ այս-պէս. * Սրբաշխարհ է յամհամենեան, որ 'ի ծովուն ընկղ-մեցաւ: Նա նմին այլ արձանագիր. * Այս անարժանս քէֆեցի, որդի եմ ես տէր պետրոսի, որ տէր յամհան-նես կոչեցայ, օծումն առի 'ի մէջ Սբ Նշանի, ծեռամբ յակոբ վեհափառի. Թվ. ՌՃԾ ի (1701): Սուր գան այլեւայլ խաչքարինք եղծեալ գրովք: Ներքին դուռն է զարդարուն, և 'ի վերայ դառն տէ. նայնպէս է և աւագանն: Պարիսպ տաճարիս է կամարաշէն որաշեալ

պարսպօք. երկայն 17 քայլ, և լայն 14. կանգնեալ 'ի վերայ չորից կամարաց օրօրոցաձև: 'Ի միջնախորշին դան կրկին մարմարիոնեայ գերեզմանք առանց գրոց փորագրեալ մեծին Ձգնաւորականն դաւանգան: Պատմի 'ի յայսմանէ եկեղեցւոյն Սահակայ (609). Թէ որքա երկու եղբարք կրօնաւորք Յովհաննէս և Գէորգ եղեն պատճառ շինութեան վանացս: Իսկ 'ի ձախակողմն է միւս դուռն գաւթին. ուստի ելանեն 'ի զանգակատունն ընդ քարաշէն սանդուխս: 'Ի մէջ գաւթին սեանք զանազան խաչքարինս. որպէս այս. * Յիշատակ է որ խաչս պարոնին Թվ. Ռ (1551) Յակոբ քարի վերայ գրեալ է. * Այս նշանքս բարեխաւս են մեհրիշային Թվ. Ռլզ (1587).

490. Արտաքոյ գաւթին դոյ փոքրիկ բակ. 'ի ձախակողմն է բուռն մենաստան. կամ ընակարան կրօնաւորաց որոշեալ պարսպօք. 'ի վերայ դրան որոյ յիշատակարան շինութեան արարողին. * Աստուծով շինեցաւ պարիսպս պարագայիւքն գեղեցիկ խցերօք վերին և ներքին. հրամանաւ հայրիկ վարդապետն ու[թ]ն ընդ երեքին 'ի փառս եւ 'ի վայելս սրբոյ նշանիս, տէրն դու զյիշատակս և սոսք պաղատանս. յանկոս աղաւաղ պետրոսին Ջահեր հասանոնին, եւ աշխատաւորացն հոգով հանգիստին Ռ (1719):

Իսկ 'ի վերայ դրան որոյ արձանագիր նորոգութեան
* Աստուծով ծնդ վերաստին նորոգեցաւ որ խաչ վանքս
„ գեղեցկայօրինեալ, թէ տաճարն և թէ արտաքին
„ սրահքն պարսպաւն արարողայիւք. որ է անթոռ բա-
„ նոր կղզոյս, լուսաւորչապատուան աղբիւ. այսինքն Նա-
„ Փայտ, Վ արտառայու, Պաղճառարայու, Կեօղլէսու,
„ բոլոր գիւղորէիւքն հանդերձ դաւշանաւն. ընդ նմին
„ ուսումնարանն. որք եղեն ձեռամբ բարեպաշտօրէն
„ ջերմեռանդ սիրով սոքա և կանոնք սորամուռ. 'ի ժա-
„ մանակս առաջնորդութեան Աքսանիկ արքեպիսկոպոսի
„ կղզոյս, որ էր աշակերտ յօհաննու պատրիարքի
„ կոստանդնուպօլսոյ բարեկեցեալ. որ եղև հոգաբար-
„ ձու և պատճառ շինութեան բազմաջանքեան աշխատութեամբ սի
„ իւրոյ հոգւոյն և ծնողացն. և եղև նոր թուակ.
„ փրկչին մերոյ 1751. իսկ ըստ հայոց ռմ. Ռ ճ:

Այս բնակարան կրօնաւորաց և ուխտաւորաց է քարաշէն կրկնայարկ փակեալ յանձուկ վայրի. ունի

15 մենեակս. ուր էր առաջնորդարանն. այլ այժմ չիք եպիսկոպոս, միայն մի վարդապետ բնակի ընդ քանի մի մանկանց աշխատաւորաց. Յաւագին դուռն ընդ հանդէպ տաճարին դէպ քարաշէն սանդուխս սակս ելանելոյ յայլ բնակարան խանդարանաւ. առ որով է սեղանատունն և խոհակերանոց քարուկիր ընդարձակ և կամարակապ. ուր առեալ նոր արձանագիր յորում * Գրիգոր վարդապետի Եւկէկէն. աշխի սարգիսս չորս ,, տարի ’ն. խաչ խղճէթ առի մէ կեսոյց խնոյ թվ. ,, ռՃԺա ||: ’Ի ներքոյ սեղանատանն է համբարաշէն ներքնատունն գինւոյ. իսկ յաջակողմն բակին առեալք հին քարաշէն ջրանցս իբր սառնակերպեաց ձմեռապահ. ընդ որ մարթ է փախչել՝ եթէ անկցի երբ:

491. Հանդէպ դրան վանացս է լուսաւորչի քարաշէն և բարեձեւ. առ որով է այլ լուսաւորչի առաւել մեծաշէն և հին, որ ունի յերկոսին կողմանս որմանս, և խաչքար ’ի ճակատն. առաջի և անուանի կրկին հրեշտակս փորագրեալս: Յաջակողմեան որմն դրոյ արձանագիր. * Աղաջանաբայցի միջայելի Եւդոկիէն. ՌՃՂԸ թվին Ա (1749).

Սակաւ հեռի ’ի վանացս յանտառի անդ առեալք հին եկեղեցւոյն նահատակի. ուր գնան յուխտ. որպէս ’ի տօնի խաչին յաճախեն ուխտաւորք ’ի վանս յամենայն կողմանց Եւդոկիոյ: Յառաջագոյն կային աստ և անդ ’ի մեծի անտառի վանացս խրճիթք միանձանց, որպէս ցուցանէ յիշատակարան մեծագիր աւետարանին եղելոյ ’ի սուրբ Կիւրոյ յեկեղեցւոջ ’Եւդոկիանոս. որ գրեալ է աստ 482 ամօք յառաջ.

* ’Ի թվիս հայոց ՉՂԶ կատարեցաւ ’ս. մատեանս ,, ’ձեռամբ առաւելութեամբ յաշխարհի հռոմոց որ այժմ զըկեալ ,, առի, ’ի մեծ և ’ի հայակոյտ քաղաքս ուրխաթ կոչե- ,, ցեալ, ’ի հովանաւորս վերի առ ամն ’ս. խաչին ’ի ,, հայրապետութեան ’տր մխիթարայ, և յեպիսկոպոսութեան ’տր Սար- ,, գսնատրի ||. ՉՂԶ (1347):

492. Կոտոյց դատաստանոր գամբեան գրեալ ’ի ՌՃԽԳ (1694). որոյ սեղանատունք յօդեն. * Յանուն վարդապետի է կաֆայեցւոյ. որ պատմէ զքինութեան և զճոխութեան վանացս ||.

* Կամաւ որ հոգւոյն ամէն գիտնական,
" Յովհաննէս անուն շնորհիւ պետական.
" Լեալ նա յաշխարհներն մեծ վարդապետական,
" Կանգնեալ հաստատուն զվանքս որ նշան.
" Ոսկեղէն ընդ իւր զփայլուն փրկչական,
" Եկեալ 'ի յաշխարհս փառօք մեծական.
" Ամփոփեալ զմարմին խնամօք տնական,
" Վերակառուցեալ զվանքս որ նշան...
" Բանք ժողովրդոց մեծ և փառական,
" Աշխարհ բարութք ու 'ի քեզ ուխտ գան.
" Հոգւով և մարմնով ցնծան և խնդան,
" Ապաւէն ազգիս աթոռ որ նշան...
" Արարքոյ նորոյ պատուեալ ամենական,
" Սրբասնուց քարոզիւք նո կանխողական.
" Մեծ կաթուղիկէ տան արքայական,
" Ճեմեալ ձնմաւրան ճարտակ որ նշան...
" 'Ի մէջն քում կան հաստատուն բնակարանքն,
" Թէ և կարգաւորք կամ աշխարհական,
" Ցեղ սպասաւորեն միշտ ծառայական,
" Տիրող աննշալի տաճար որ նշան...
" Կարգաւ բոլորիս բազում օթեւան,
" Երթեւեկողաց տեղ ասպնջական.
" Պաւ 'ի ծոց նոցին բազմեալ գովական,
" Հանգիստ հաճելի հաստատուն որ նշան...
" Փարոս ես և ոչ կայ քեզ նմանական,
" Տեսօք և տեղեաւ յոյժ հիացական.
" Ամենայն բարեօք լցեալ լիական,
" Փառօք փառաւոր փարթամ որ նշան:
" Արծաթ և ոսկի անօթ ընտրական,
" Բուրվառ և կանթեղ խունկ անուշական.
" Շուրջառ և վակաս ուրար և բազպան,
" Օ՚անդանան զարդիւք զեղուն որ նշան...
" Երկու աղբերօք ջուր համեղական,
" Աճեալ են մայրոց զքեւ պարտիզական.
" Կայ գու 'ի մէջի որձով սեփական,
" Կաքաւեալ կայթեայ կայեան որ նշան:
" Յանկական փափագելին աղբիւրք ամենայն,
" Մինչև այսաւրուցս աս ամեն քո գան.
" Մնաս և պայծառ համ առլցեան և խան,
" Հիացեալ հայլեն հիմանց որ նշան || Նա:

493. Նոր քարաշէն վանք, մերձ ժամու հեռի 'ի վերնոյն կառուցեալ 'ի գլուխ լերին 'ի մէջ մեծի անտառին, որ ունէր փոքրիկ եկեղեցի կանգնեալ 'ի վերայ չորից կամարաց. այլ այժմ քանդեալ կայ. միայն երեւի վայր խորանին. 'Ի մէջ տաճարին գոյ ջրհոր քառակուսի և խաչքար. իսկ աւերակքն ցուցանեն զհետս պարսպին վանաց. ուր կային 7 սենեակք. ունի պարտէզ և բուրաստանիւր. սակայն ամայի մնացեալ է այս տեղի վանաց. Թուի թէ սա գրեցաւ մեծ Ճաշոցն 469 ամօք յառաջ քան որում գնի 'ի յիշատակարանի,

* Աւարտեցաւ 'ի Թուականիս Հայոց ութհարիւր և
„ հինգերորդի. յամենայն օգնականի, որ օր իբ ամսոյն
„ 'ի հայրապետութեան տեառն Մխիթարայ, յիշխանութեան ար-
„ հիեպիսկոպոսի տէր Ստեփաննոսի. և 'ի Թագաւորեն Կոս-
„ տանդնուպօլսոյ 'ի քաղաքս սուրբ զաւթ լնոյ. հովանեաւ տր.
„ Ստեփաննոսի նախավկային մեծի ||(1356).

ԿԱՋԱՐԱԹ

494. Նոր գիւղաքաղաք Հայոց յատ մեծի լերին սուրբ Խաչի առ Նախիջեւանու գետակաւ, որ 'ի Թաթարաց կոչի Սողուղ եօղլի. Նոյս տեղի այժմ աւերակ է, միայն երեւին հետք հին շինուածոց, որպէս և այն մերձ 'ի Պտղունի գաւառին, ուր երեւին աղբերակունք, ջրանցք, և այլ աւերակք ոչ սակաւ. որպէս և 'ի շրջակայս Նախիջ խորհնոս.

'Ի հնումն աստ նստէր եպիսկոպոսն Հայոց իշխան, և ունէր աթոռ 'ի պաշտպանութեան Ղ'հնաշինացաց, որպէս պատմէ հին յիշատակարանն. * Նոյն էր աթիւ մար-
„ գարէն մեռելոց ոսկի Թորոսի՝ յակոբի՝ դանիէլի՝
„ մուրատի՝ Թեթեւորայ նախարարին, որ բառ հրամանի
„ չորից իշխանին ջենեւիզաց բնակէր զորօք 'ի վե
„ ջրոյն կազմարութի, որ .. կոչեցաւ մնաղաղ յեօղէն 'ի
„ Թաթար լեզուէ. Սա 'ի սեւանէն աշխհնոյն պա-
„ հասնեց և պետութին բարեպաշտութեանց պարգե-
„ ւաց նոյն ազնիւ իշխայ, և զօրավիգն, և պալատ մի
„ 'ի բնակութեան 'ի պարտէզ տանին նորին ||.

ՆԱԽՃԻՎԱՆ

495. Յետ զննելոյ զհնութիւն Լուսկի խրիմու և շրջակայ վայրաց՝ ուղղեցաք զընթացս 'ի Քէֆէ, և մտեալ յարքունի ճանապարհն հասաք յանուանի գիւղն Նախչըվան վայելչադիր, որ ունի աղբիւր բարեջուր, և լճակ սակս անասնոց: Առ երի աղբեր տեսաք մեծ տապան որձաքար երկայն 8 կանգուն, և լայն 2. 'ի մի ծայրն գոյ քառակուսի ծակ. յոր ագուցեալ էր մահարձանն. յորմէ սկսեալ երկայն երիզ փորագրեալ կայ մինչև ցմիւս ծայրն անջրպետեալ զայն յերկուս մասունս. յորս գոյ փորագրեալ հին գիր արաբերէն: Պատմի, թէ Հայք 'ի գալն յԱխտարայէ 'ի Քէֆէ աստ իջևանեցան, և հաճեալ ընդ գեղեցկութիւն տեղւոյս կոչեցին (Նախիջևան): Սաղաղն անկանի 'ի ձախակողմն վերնոյն. որ է անուանի գիւղ մեծատարած. ուրանոր տեսաք զերևելի լիճ երկայն մի վերստ, լի մեծամեծ ձկամբք. ստորին լայնութիւնն է 168 քայլ. իսկ վերին ծայրն է կիսաբոլոր լճակ. յորում երևին հարիւրաւոր ակունք ականակիտ ջուրց. որոց բղխեալ 'ի ներքուստ պղպջան 'ի վեր անդադար սաստ և անդ յերեսս ջուրց. յորմէ ըմպեցեալ ջրոյն՝ ոռոգանէ զմեծամեծ պարտէզս, և զանդս: Երևելի է և պալատն գեղեցկաշէն:

ԽԱՐԱԿԻՕԶ

496. Ի բարեշէն գիւղ, առ որով անցանէ համանուն գետակ հոսեալ ընդ Լուսկի խրիմ. ուր գոյ և պանդոկ սակս անցաւորաց: Ի բարձրահայեաց դաշտավայրի անդ զննեալ տեսաք զծայրն Լուսկի խրիմու, և հանդէպ տեսաք զծոցն Քէֆէի. և միանգամայն զծովակն Սասըխ, նա և զՍըգաշ ծովն Ճէնիչկէին:

Ոչինչ կարի հեռի աստի գոյր աւերակ գերեզմանի, որ էր կամարաշէն դամբարան 'ի ձև գոլթացի. յորոյ վրն գոյր արձանագիր հին Սուլդանի, օրինակ զայս

حمد بن سلطان ابن خان كري طمير ٨٦٨ * Համտըպին սուլ-թան իպն խան Գիրէյ Դէմիր. 868 Թ. Թուի թէ իցէ այն, որ անկաւ 'ի պատերազմին ընդ Ճէնովացւոց յամի Տեառն 1454:

Նոյն յառաջեալ յընթացս՝ հասանք ՚ի գիւղն Խալ-խալջիրան, անուն ՚ի Նշարայն ջեօֆիւր. Ուր ՚ի մէջ աւ-քանի Ճանապարհին կառուցեալ քարաշէն եկեղեցի ունելով ՚ի Սուրբ զօրավարեան ՚ի կալուածի իւրում. Մերձ է Նշանաւոր Նուէին. ուր գոյ աղբիւր և քանի մի անտառք գիւղականաց.

Նոյն ակնանի մեծ լեառն Քէֆէի փոքր Բէյիւլ, որ բարձրացեալ ՚ի Թիկանց կուսէ՝ ամբէ ՚ի վերայ քաղաքին. յորում Սուրբ ձգեալ ուղեկս ՚ի բանակէ Օսմանեանց՝ առին զքաղաքն. ՚Ի հարաւակողմն այսր սարի է լեառն բարձր ընդարձակ և գեղեցկադիր. ուր գան այգի և պարտէզք. նաև աղբիւր բարեջուր. որ և կոչի Փոքր պաղէ. ուր ՚ի հնումն գոյր մենաստան հայոց յանուն սրբոյն Հռիփսիմեայ. Թէպէտ ոչ գտանք զյիշատակարանն, բայց տեսաք զաւերակս հին եկեղեցւոյն. Նոյն ընդ զառիթափն ուղևորեալ անցաք յարևելեան կողմն լերին, և հասաք ՚ի գեղեցիկ ծոցն Սէէն տիլամոյ և ՚ի մերձակայ ծովեզերս (532).

ՔԷՖԷ

497. Ի ծովեզերեայ քաղաք գեղեցկագիր և բարեշէն հեռի ՚ի Խարաբազարէ 17 մերաստիւ. որ ՚ի հնումն կոչէր Թէոդոսիա նաև Ardanda կամ Քաղաք եօթն բագնաց. և էր յախժամ մեծ մայրաքաղաք բազմամարդ և բազմավաճառ. զոր հիմնեցին Միլեսացիք յարևելեան ծոց ցամաքակղզւոյն Խրիմու, և ծաղկեցուցին վաճառականութեամբ և ամենայն օգտաբեր արհեստագործութեամբ՝ հաստատելով ինքնագլուխ հասարակապետութիւն.

՚Ի մի կողմն դրանց նոցա գոյր գլուխ սաղաւարտաւոր, և ՚ի միւսն լախտ և կապարճ. առ որով և անունն քաղաքին ΘΕΩΔ Թէոդո. Ոմանք համարին թէ այս քաղաք շինեցաւ ՚ի Է դարուն. սակայն գտանեմք ՚ի հին պատմութեան Ստրաբոնի, թէ Սօթիրոս արքայն 400 ամօք յառաջ քան զՔս պաշարեաց զԹէոդոսիա, այլ ոչ կարաց առնուլ. ապա որդի նորա Լևկոն էառ զայն. և ապա Միհրդատ.

Յետ ժամանակաց այս հասարակապետութիւն անկաւ ընդ տէրութեամբ կայսերաց հռովմայեցւոց և Յու-

նաց. որպէս ցուցանեն դրամք. յորս տեսանին գիծք կայսերաց: Յաւուրս Թէոդոսի կայսեր նորոգութիւն եղեալ անդ՝ անուանեցաւ Թէոդոսիա ըստ կարծեաց այլոց. սակայն հնութիւնք քաղաքիս հաւանական առնեն թէ 'ի սկզբան անդ այսպէս կոչեցաւ 'ի Միլեսացւոց անտի:

Յամի տն 1244. Սարմատացի Թաթարք արշաւեցին 'ի Կեֆէ, և տիրեցին զամս 22: Ապա Ջենովացւոց հասեալ անդ՝ վանեցին զնոսա անտի և տիրեցին 'ի 1266: Իսկ յետ մահուան մեծին Մլաւոխմերայ՝ է Մլաւոխմէր պատերազմեալ ընդ Ջենովացւոց տիրեաց շրջակայ վայրաց, և կալեալ զզօրապետոն եդ 'ի բանտի, առեալ 'ի նմանէ զոսկի գօտին և զխոյրն ականակապ: Սակայն անդէն զօրացան Ջենովացիք և վանեալ զթշնամին՝ ամրացուցին զքաղաքն շինելով զբերդն առ ափն ծովու առ եւր հին Թէոդոսիայ քաղաքին Յունաց: Սուրանօք բազում շինութիւնս արարեալ ծաղկեցուցին կենցաղօգուտ բարեկարգութեամբ. Ունէին մեծ հիւպատոս իբր կուսակալ. զոր յամենայն երիս ամս փոխէին. յորս երևելի եղև Պօղոս հիւպատոս ընդարձակ իշխանութեամբ. որպէս յայտ է 'ի թղթոյն գրելոյ առ Դ. Սիքստոս հայրապետ Հռովմայ: Այնչափ ծաղկեցաւ Կեֆէ 'ի նմին ժամանակի, մինչև կոչեցաւ շտեմարան բարեաց Պոնտոսի և Ազովու: Զոր յետոյ Թաթարք կոչեցին Կէֆէ կրճատեալ 'ի բառէս Կէֆիր, որ անհաւատ:

498. 'Ի 1296 Մենետիկեցիք տիրեցին Կէֆէի առաջնորդութեամբ Սօրանցօ իշխանին, որ եկեալ 25 նաւուք տիրեաց. Բայց զկնի միոյ ամի եառն անդրէն Ջենովացւոց, որք տիրեցին զամս 200. և անդադար ծաղկեցուցեալ մեծամեծ հանդիսացուցին: Ներքին Ջենովացւոց շինեալ 'ի Թէոդոսիայ. յայլազգեաց կոչեցաւ Ֆրէնկ Հիսար. իսկ վերին բարձրահայեաց մասն կոչեցաւ Յանըշէհր սակս անդ կառուցելոյ ազգային զինամագս Պայլրամից. որ և ամրացեալ էր մեծամեծ վիմօք բազմանկիւնի աշտարակօք և մարտկոցօք: Մեծագոյն աշտարակք այսր բերդի էին 12. և դրունքն 7. երկու դրունք էին 'ի ծովակողմն և հինգն 'ի ցամաքակողմն, ընդ որս մտանէր անցանել 'ի մեծ բերդն. որ յերից կողմանց շրջապատեալ էր

զաւրութիւն Վենետկեցւոց բաց 'ի ծովափանց, ուր մնա-
ցայր ընդ մեծ բերդին։

Այդ սկսաւ 'ի տասներին կողմանէ ծովեզերաց Զ. գաւառն Իսթրիէ գաւառաւ կոչէր. յորոց մերոյ էր մեծ պալատն Վենետկեցւոց. Ա. Տրեւիզ գաւառ. Բ. Թռեւիզէ կամած գաւառաւ. Գ. Փուէնէ հեռար գաւառաւ. Դ. Վերոնէ գաւառ. Ե. Լոմբարդեան գաւառաւ. Զ. Բերգամոյ գաւառ 'ի վերին ծայր ծովափանց. ուր էր նաւաստեղին Վենետկեցւոց, և զայր արտաքին պարիսպ ևս, յորում փակէին զնաւս։ Նաւի սկսանի մեծ հրամանագրաց հին ձգեալ 'ի ծով առնոյր յապահովութիւն նաւաց. որ այժմ քայքայեալ է։ Նաւահանգիստ մի ծայր պարսպին հայոց՝ զայր մնայր ընդ Ֆուէնէկհիոսարին. իսկ միւս ծայրն մնայր մերձ յԻտալերէն գաւառին։

Օ այս քաղաք յաւէտ ձախաղուցին և մեծացուցին Ենկցիք շինութեամբք և բազմամարդութեամբ։ Վասնզի յետ առման Ենուոյ 'ի Զարմանագանէ (103) մեծ հաւատած Ենկցւոց փախուցեալ յԱխաարայէ իբրև լուան զհամբաւ Վենետկեցւոց՝ եկին անդր միաբան, և պատերազմելով ընդ Թաթարաց եկին բնակեցան 'ի Վենետիկ և 'ի շրջակայս վայրս։ Աւրանօր այնչափ բազմացան և զօրացան, մինչև շինեցին 100 հազար տունս և 1001 եկեղեցիս, որպէս ասնէին յԵնի։ Այլ առ մեծի շահեկանութեան վաճառաց, և զօրծոց հաւատարմութեան եղեն սիրելի Վենետկցի հիւպատոսաց. և կարգեցան Նախարար, Պարոն և իշխան յամի 1330։

499. Եւ Թաթար խանք զօրանալով 'ի հիւսիսային կողմն Արիմու, 'ի 1344 արշաւեցին 'ի Սուտաղ. և այնուհետև ամ ամէ առնուին տուրս 'ի Վենետկեցւոց. որք ստիպեցան ամրացուցանել զՍուտաղ ընդդէմ Գորքշաղաց. և առին 'ի ձեռաց նոցա զԿալըրգալախ և զԹեամանն։ Ապա խորհեալ հայոց ընդ հիւպատոսին՝ կամեցան ընդարձակել զբերդն Վենետիկ ծովեզերեանց. որովհետև բազմացեալ էին տունք արտաքոյ բերդին։ Աստի 'ի մէջ առեալ զբերդն Ֆուէնէկհիոսար սկսան 'ի հարաւային կողմանէ ծովածոցին շրջապատել զամուր պարիսպս գերբամբք և հասանել մինչև ցհիւսիսային կողմն ծոցոյն, ուր էր զառն Կոմէ փախ, և հասուցին մինչև ցԻսթրիէ գաւառ։ Այլ առդիւրութեան որոշեցին զայս չափ թուով քարինս ստ-

իւրաքանչիւր իշխան ըստ մեծութեան վիճակին։ Նոյն 'ի սահմանի շինութեան իւրաքանչիւրոց եդեն 'ի պարիսպս գլխաւորականս անուանս իւրեանց։ Զայս սովորութիւն պահէին Ուռֆեցի Հայք մինչև ցյետին ժամանակս. որք 'ի տալն. դասուրս գրէին զայսչափ քարինս 'ի վերայ իւրեանց ըստ կարողութեան։

Նոյն ամրականն բերդ Հայոց շինեցաւ 'ի կափածոյ քարանց և 'ի մեծամեծ վիմաց հանդերձ բազում աշտարակօք 'ի ձև գօթացի. իւրաքանչիւր աշտարակք հեռի էին 'ի միմեանց 20, 40, և 60 կանգնաւ։ 'Ի վերայ պարսպին կային արձանագիրք Հայոց. որպէս և 'ի վերայ պարսպի Փռանկհիսարին կային նշանք Ջենովացւոց. տեսաք 'ի Թանգարանի զարձանագիր Յուստինիանոսի հիւպատոսին. և այլուր զարձան սրբոյն Գէորգայ, որ եդեալ էր 'ի վերայ Ս. Թլը դարունին։

Նորա դրունք մեծի բերդին էին 9. զկնի Իակելէ դարունին՝ ա դրունն կոչէր Պաղչէ կափու. բ Պօյաճի կափու. գ Օքլու կափու. դ Սէրայլի կափու. սոքա էին 'ի ծովակողմն. ստորին ծայրն կոչէր Իճաճա, ուր երևէին ցարդ աշտարակք և պահարանք, այլովքն հանդերձ. ուր էր և կամուրջ 'ի վերայ մեծի խրամին. և ե դուռն կոչէր Գոռուլէ կափու. զ Սաւրադ կափու. է Իւյորա եատաք կափու. ը Սալաճի կափու. թ Թէքրանէ կափու։ Նա սովոր էր Զանկօ թոփելլէր. ուր բերդն միացեալ ընդ Փռանկհիսարին շարունակէր ապա պարիսպ նորա դէպ 'ի յԻակելէ գաթու։ Բաց 'ի սոցանէ կային սոսա և անդ փոքրիկ դրունք կամ անցք հեղեղատացն կոչեցեալք Սէլ կափու։

Յայտ է յասացելոցս թէ քաղաքն Ուռֆէ ունէր երկուս բերդս. առաջինն էր Բերդ Հայոց. և երկրորդն էր Փռանկհիսար։ Մի ծայրն Հայոց բերդին էր Գոռլէ դարու ամրացեալ զանազան ամրաշէն և բարձր աշտարակօք, որպէս երևին մնացորդք. որ և միջնաչափ երկայնութեամբ ձգեալ ընդ լեռան և ընդ ծովեզր՝ հասանէր ցմիւս ծայրն ցվերջին աշտարակ, որ կայ կանգուն հանդերձ պարսպօք 'ի ծայր արգելանոցին (528). Նոյն մեծագործ պարիսպ ունէր նոյնպէս մեծագործ խրամ բոլորովին քարաշէն և լայն 25 քայլ։ Նա թիկամբք մերձ 'ի պարիսպն տեսաք զաւերակս Ս. Յարութեան եկեղեցւոյն. անդ 'ի հին մեծի

պարտէզն անտառ եղեալ ՚ի խորութեան քանի մի մե-
ծահասակ պատուանդանս. յորս ադուցեալ էին մար-
դաչափ խաչքարինք և արձանագիրք. զորս փոխադրե-
ցին ՚ի Պետըրպուրկ : Մերձ է անդ բոլորաձև մեծա-
գոյն աշտարակն քայքայեալ. նոյնպէս և զուգաձև խրա-
րանեսանց գաւառի : Դրսաքոյ այսր դրան անտառ
ղպարխայս մի Մխիթարեան եկեղեցւոյն, և ՚ի ներքոյ դրան
էր եկեղեցի Լուսաւորչին. առ անդրաւս ըմպիչ մի
յօրինեալ է պարտէզ : Դ. սորին բնակիչն Հրեայք,
որք եկեալ են աստ ՚ի ժամանակս Ճենովացւոց, որ-
պէս ասեն. և ունին քարաշէն սինագոգայ՝ հին. որոց
երկու սիւնք են մարմարեղէնք : Սոյնին սինագոգայ և
Կարայիմ Հրեայք, որոց վաղեմի գերեզմանք ցուցա-
նեն թէ ՚ի վաղ ժամանակաց բնակեալ են աստ :

Մերձ կէսոյ Համարի նաւահանգստին՝ շինուած Ճե-
նովացւոց. յորում միայն Օսմանեանք բնակէին. որոյ
մի մասն պարսպեալ գեռ կանգուն կայ. յոր անտառ
զինչան Ճենովացւոց խաչաձև, թո (498) : Նախորդն էր
մասն վերինոյն ամրաշէն և բարձրագլխ. որոյ զարմա-
նագործ անկիւնաւոր աշտարակք գեռ կանգուն կան
՚ի բարձրաւանդակի անդ, որ անկէ ՚ի վերայ նաւա-
հանգստին. ուր այժմ կանգնեալ են քանի մի աշտա-
րակաձև հողմաղացք : Արևելին աստ և անդ ցանուցան
աւերակք մեծագործ շինուածոց : Զթանձրութիւն
լեռնակողմեան դրան չափեցաք 10 քայլ. անտառ յեր-
կուս կողմանս կամարի դրան կրկին պատուհանս,
յորս նկարեալ էին պատկերք սրբոց : Նոյն արտաքոյ
դրան անտառ զՃիւմ հին կոթողին, որ համանէր ցբարձ-
րութիւն մեծի պարսպին. թուի թէ ՚ի հնումն արձան
ինչ եդեալ կայր ՚ի վերայ այսր կոթողի. առ որով դոյր
նաև աղբիւր քարաշէն, որ կոչէր Հնձնօրէն :

500. Զայնու ժամանակաւ մեծանուն հանդիսա-
ցաւ ազգ մեր ոչ միայն ՚ի Խրիմ, այլև ՚ի բազում տե-
ղիս. մինչ զի համբաւ մեծագործութեան նոցա ձգե-
ցաւ ընդ բոլոր Եւրոպիա : Յամի Տն 1318. Կէֆէ-
ցի Հայք միաբանեցան ընդ Լատինացւոց՝ հաստատե-
լով առաջի լատին եպիսկոպոսի, թէ մեք ևս եմք որ-
դիք ընդհանուր սուրբ Եկեղեցւոյ. զոր հաստատեաց
կոնդակաւ սրբազան հայրապետն Հռովմայ Յովհան-
նէս իԲ. որ ասէ. * Ընդունիմք և յորդորեմք ՚ի Տր զՀա-

մօրէն եղբայրութ ձեր՝ զթուղթն մեր մերոյ պաղատանելով պահել զայս աւանդ ||:

Իսկ ապա Եւգինէոս հայրապետ Հռոմայ առաք Հայ եպիսկոպոսին Կաֆէի, զի ունիցի զամենայն պաշտօն եպիսկոպոսութեան. և համարձակ պաշտեսցէ զամենայն եկեղեցական հանդէսս: 'Ի 1437. Սարգիս վարդապետ նստէր 'ի Կաֆէ, և էր փոխանորդ Կոստանդին կաթողիկոսի. որում գրեաց Եւգինէոս առաքել 'ի ժողովն Փլորենտիոյ առ 'ի միաբանիլ ընդ Լատինացւոց ազգովն. իսկ կաթողիկոսն Հռոմայ առաք նմա, զի ինքն երթիցէ ընդ այլոց վարդապետաց. կոնդակն սկսանի այսպէս. * Կոստանդին ծառայ ծառայից Տն մերոյ յիսի քի. ողորմութեամբ այ Կաթողիկոս վաղարշապատու ||. և այլն: Յամի Տն 1403 Յակոբ վարդապետ Խրիմեցի ծաղկեցաւ. որ յօրինեաց զլուծմունս մարդակազմութե. գրեաց զաղգագրութիւն, և և զմեկնութիւն տումարի, և կոտանաւորս ինչ:

501. 'Ի 1399. Անտոնիոս Մաւրինի հիւպատոս Ճենովացւոց՝ գեղեցիկ կառավարէր 'ի Կաֆէ. բայց զօրացան այնուհետև Թաթարք, և ոչ թողուին զնոսա 'ի հանգստեան. մինչ զի առնուին հարկս յամ վայրաց Ճենովացւոց: Իսկ 'ի 1434 զօրացաւ ցեղն Կէրէյի. և նստաւ Հաճի քէրէյ խան 'ի Պաղչէսէրայ: 'Ի 1475. Թաթար խանն միաբանեալ ընդ Օսմանեանց՝ պաշարեցին զԿաֆէ ընդ ծով և ընդ ցամաք: Հուսկ յետոյ առին կողոպտեցին զմեծութիւն նորա. ուր Կէտիկ Ահմէտ փաշայն զամենայն իշխանս և զազնուականս Հայոց 'ի միում աւուր կոտորեաց. որպէս ահա ցուցանեն հետևեալ պատմութիւնս, զոր գտաք 'ի մագաղաթեայ հին յայսմաւուրս գրեալ 'ի Կաֆէ և տարեալ 'ի Նախիջևան. և այժմ է 'ի գիւղն Նեսվեռայ, որ զինի մեկայաբանութեան սրբոյն Սարգսի յարէ.

Պատմութիւն Առնելոյ Կաֆէի:

502. * Դարձեալ և զայս ով բարեմիտ ունկնդիրք
„ 'ի յիշումն ածցուք ինչ ինչ 'ի կարճահասութեանս յորա-
„ կութեց տարաբաղդ և հայրենազուրկ թշուառա-
„ կենցաղ ազգիս Հայոց. զորս 'ի մերոցն նախնեաց և

» զորս 'ի յետնորդացս 'ի մեզ, և ամենակարողն աստուա-
» ծուօք վարդապետելով զկնով յերկինս անկեալ՝ անխըռ-
» դայց կենաց լուցցուք. Թէ և ոչ հաւասարի զանձամբ-
» Թար սուրբ մեր՝ ըստ տանջանացն բազմաչարչար և
» կենցաղավարութեն նահատակացն մերոց նախնեաց, որք
» 'ի Կաֆայ կատարեցան 'ի ձեռն անօրէն Կեսարին Մո-
» մէտ փաշային. հեղին զարիւնս իւրեանց վասն ա-
» նուանն Քրիստոսի և վասն սուրբ եկեղեցւոյ իւրեա-
» զվտանգս գերոյ: Նայց ոչ պատահէ գոլոյն զգանձնա-
» ռուԹի պատճառք գրեմս մեր և նախնեաց մերոց
» 'ի բնիկ հայրենեաց և պանդխտութե մերում. և մա-
» նաւանդ ոչ յուսակէ գոլն յիշատակարան վասն
» անցից մերոց պատմագրեալ, հարկեցաք նաև իւրա-
» քանչիւր ամենայն յիշատակօրէն պատմաբանել, զորս
» 'ի կենդանութեան նախնեաց մերոց՝ և զորս յայժմ
» 'ի մեզ, համդերձ մարտիրոսական կատարմանցն ոչ
» անյիշատակ մնալ, և ոչ զկայս ըստ գիտութեան
» մերում առ 'ի յօրինել, Թէ որոց էր. և է զմեր
» նորոգեալ բնակ մեծ կղզիս զայս զախմ. կամ Թէ ձոր
» կամ յորում գաւառի, կամ տան, կամ զահոյ էր՝
» զնեպուհ բնակութիւն մեր. որ եմք ով աստուածա-
» սէր հաւատացեալք և Քրիստոսի արեամբ գնեալք,
» և 'ի գանձ նորին հաստատեալք, ուշադիր լերուք
» առ այս, զհարկս հասարակաց յիշատակօղիս խընդ-
» րոյ. զի մեծ կղզիս զայս զախմ յորում բնակեմք, էր
» 'ի յառաջին ժամանակս բնակութիւն յունաց. որ
» յետ համբարձման Քրիստոսի փրկչին մերոյ՝ եկն
» միոյն 'ի յեօԹանասնից քարոզեաց զնոսա, որ և դարձ
» ձայց 'ի հաւատս քրիստոնէական, որք էին պաշտա-
» պօղք այցեաց և նաւավարութեց. և բնակութիւն
» նոցա կենիւր 'ի ծովեզերս, 'ի քարանձաւս, գզեակս,
» որք կան այսպէս նաև մինչև ցայսօր: Այլ յետ ժա-
» մանակաց ՌԽԲ (1042) ամին, եւ 'ի պարսկական
» զնդէն ղըշախ կոչեցեալ ազգ մի՝ այլալեզու՝ մահ-
» մէտական կրօնիւք, զայս տիրեն զքաղաքս ղախմ: Իսկ
» յետ սակաւուց ժամանակաց՝ լատինք եկեալ ցան-
» կան տեղւոյն Կաֆայու. որ և ասի Թէոդոսիա: Այլ
» սիրով ուխտ եդեալ խնդրեն 'ի ղըշախեն., և տայ
» նոցա հրաման, և շինեն զՖամանկհասար 'ի ծովա-
» հայեաց տեղւոյն, 'ի աստրատ լերին, աւանս բերդին ա-

» կոնք քաղցրահամ ջրոցն զանազան ազգերց. այս-
» քան վասն նեխեալ [illegible] քաւեցայք :
» 503. Այլ զարմացուք առ այնմ որ 'ի վերա [illegible]
» ցայք, թէ ո՞ր կամ յորմէ փառաւորեալ էր զանազանութեան-
» կութիւն մեր. զի մեք եւս սերմանեալք պաշտամանց,
» 'ի մեծ Թագաւորութեան քաղաքէն յԱնւոյ. որ է զա-
» ւառաւորն [illegible], տաճկն շարադրեան, զանձրնյն քաղ-
» քատաշնեանց. զի մեծ Թագաւորութեան քաղաքն մեր
» Անի իշխանաց և ազնուականաց էր բնակութիւն. և
» զի ոչ կարէին նոքա [illegible] ապականելով պատմել
» զանազանութեան և զանձրուն հարստութեանց յիշխանաց
» ազնուականաց մինչև ցբարեշխելս. և բայց 'ի զանա-
» զան [illegible]
» 'ի նոյն հայոց և մեր եկեղեցին. բայց միաբանեալ
» զհոգի և զմարմին մեր, ոչ արդարութեամբ զառանեցաւ
» 'ի մեզ, և ոչ դղրդութեամբ 'ի զերծուցանել զզօրութեան
» հոգի և զմարմին մեր, բարեկարգու [illegible] 'ի վերայ
» մեր : Այլ յետ ամենայն ժամանակաց՝ չարաչարան
» խռովութեան [illegible] 'ի քաղաքն
» յանկի. զի [illegible]
» զի [illegible]
» [illegible]
» և զայն [illegible] 'ի բարեկարգութեան
» [illegible]
» [illegible]
» [illegible]
» զեալ : [illegible]
» [illegible]
» [illegible] :
» Ո՞նց էր [illegible] և
» [illegible] 'ի [illegible] և [illegible] 'ի
» վերայ [illegible]
» [illegible]
» [illegible]
» [illegible] 'ի [illegible]
» [illegible]
» [illegible]
» [illegible] 'ի [illegible], որ է 'ի մէջ [illegible]
» [illegible] 'ի [illegible], ո-
» մանք 'ի վանս. և այլք 'ի [illegible] :

„ 504. Իբր որք յառաջագոյն եկին, Հրամանաւ առեալ
„ 'ի Թիմաթար խանէն բնակեցան անդ ոչ բազում
„ ժամանակս, որ էր զայս չԽԸ (1299) թուին։ Վասն
„ զի մինչ նեղեալ եղեն 'ի Թաթարացն գիւղական յազին
„ 'ի Պ ապիս ստ. իշխանին Ջինկեզեանց. որ բնակեր 'ի
„ մէջ Փռանկստանէն Ֆեռաքուէա. ուստի գնեն ընդ
„ իշխանութեամբ Ֆեռաքուէա. ելեալ 'ի յասպարէզն իշ-
„ խանք և ազնիւք և հասարակ ժողովուրդք վաճառք
„ զինու պատերազմեցեալ ընդ Թաթարացն մերժեալ
„ զսա 'ի Պ ապիս. և բնակեցին 'ի Ֆեռաքուէա, 'ի կալա-
„ քին, և 'ի սուլթանութ և 'ի կողմանս այսր. այս է
„ ըստ չԿԹ (1330) թուին։

505. „ Յայնժամ զօրագլուխք մեր և բազմութիւնք՝ և
„ Հնդկաց զինուոր և զդաստակ իշխանք և ազնուա-
„ կանք 'ի զօրապատերազմութեան կոչեցեալ մինչև 'ի սուլթանութ
„ և 'ի Ֆեռաքուէա, 'ի Լոմբարդիա և 'ի Դալմատիա մինչև 'ի [illegible]
„ [illegible] և եկեղեցիք մինչև 'ի սուլթանութ։ Այլ
„ Հնդկաց տանին հարկս հազար, և զեկեղեցիս հա-
„ պա. և 'ի ասէ հնազանդեալ պատերազմեցին 'ի քաղաքն
„ Ֆեռաքուէա։ Իսկ ռՄ (1391) թուին զայս մեծ խանն
„ Թամերլան պատերազմեալ Հալածեաց զԴեւլաթ տարագրէ.
„ և ապրեց զքաղաքն Պ ապիս 'ի ձեռաց նորա. բայց ոչ զա-
„ մենայն առնուլ զՖեռաքուէա՝ [illegible] բարեկամաց
„ [illegible] անձանց ընդ իշխանին Ջինկ-
„ եզեանց. զի յայտ արարեալ էին ոսկետիք և պայմանք
„ մինչև ջԺԷ (1468) թուին. ապա խանն եկեալ ընդ-
„ դիմացուն չերքէզ իշխանին 'ի կռուեցին [illegible].
„ և յետ խռովութեանցն Հռոմայեցւոց չերքէզ իշխանն ընդ-
„ դիմացն իւր 'ի յերկրէն. բայց [illegible].
„ Հուրիդ [illegible] առաջին [illegible]
„ խանն առեալ թէ չերքէզ զօրոքն քաղ [illegible] 'ի խոր-
„ [illegible]՝ հալածելով զնոսա, [illegible] յաղթութիւն [illegible].
„ և առ չերքէզ թէ եկեալ է [illegible], զի
„ զնոսա հալածեաց [illegible]. և այլ բազում [illegible].
„ մինչ զի պատերազմ [illegible] Հռոմայեցւոց ընդդէմ
„ զօրացն իւր [illegible] 'ի պատերազմ [illegible] իշխանին։

506. „ Իսկ որոց [illegible]
„ [illegible] Թաթարաց [illegible] 'ի յօգնութիւն [illegible]
„ [illegible]
„ և [illegible]

„ վամ և հնդի ընդ ցանկալի աշխարհացն զՓետզոսեա.
„ յայնժամ ընդդիմացան իշխանքն և ազնուականքն
„ մեր և ոչ կամէին զկերպն : Այս Թաւրէզն ուխտ ե-
„ դեալ ընդ Հայոց չմեկնեցել եթէ հնազանդեսցեն,
„ այլ ազատութիւն տալ : Ցեսեալ իշխանաց մերոց և
„ ազնուականաց զխաղաղութի իշխանին Ջինիկեզաց և
„ զզօրացն նոցին . մնամտանոր թէ իշխանն փոխուստ
„ եաւ, անձամբ մնացեալ 'ի տեղւոջ, ածին զեղգուժն և
„ զզաւղալքն եսասն Թաւրզզաց . զայս եղև ՋԻԴ (1475)
„ Թուին .
„ Իսկ Թաւրզզն զինի ասուղ իւր ժամանակաց սաե-
„ ցին երգմանց և պայմանին իւրեանց՝ հանապազ հար-
„ կապրէին իշխանաց մերոց և ազնուականաց՝ զաս-
„ նալ 'ի կրօնս մահմէտականս . զի զիւրաս նուաճել
„ զինացեալ զաւեշիկս : Բազում Կեսարի Մահմէտ զա-
„ խառան փաշայն բռնադատէր և բազմիցս 'ի ձայն և
„ 'ի ընթերս հրաւիրեալ զզօրապետսն խնդրէր զաս-
„ նալ 'ի հաւատոյ . և իշխանքն մեր պատասխանեին՝
„ թէ եթէ բռնութբ և կամ աղաւ կատարես զմեզ,
„ մեք յօժար եմք փոխել զկենցաղս զայս ընդ յաւի-
„ տենականն, քան թէ զքրիստոնէական կրօնն ընդ
„ մահմէտականն . զի մեք չեմք վաճառօղ կամ փոխօղ
„ հաւատ ընդ հաւատոյ . այլ սէր ընդ բարեկամի, և
„ բարեկամ ընդ սիրոյ : Այլ յետ բազում հարցմանց
„ և պատասխանատուութեց կրկին կեղծեալ բարե-
„ կամնացան . բազմիցս կոչէր զնոսա ցուցանէր իշխանաց
„ և ազնուականաց մերոց, և տեսեր պատահեաւ ոչ է
„ պատեհ ձեզ զաւր ընդ մեզ կալեալ առ իս զալ 'ի
„ ձայն, կամ ընթերս . այլ առանց սրոյ, և այլ բա-
„ զում բանիւք :
507 . „ Յաւուր միում հաւաստացեալ իշխանաց մե-
„ րոց՝ բանսերցն փաշային և մահատուանող անձամբ մնա-
„ ցեալ՝ բայց հրամանի նորին գնացին առանց սրոյ 'ի
„ ձայն առ փաշայն . զի եր բնակալութիւն նորա խոնկլէ
„ զապարանն 'ի վերայ չորրորդ դրանն պալատին .
„ յետ ձաշերոյ նոցին 'ի յեկեղեցին 'ի ծիգ ծիգ առանձ-
„ ձանն պալատին՝ զաւհրձքն բառ հրամանի փաշային՝
„ մի մի կատարեալ արկին 'ի ծով : Այսպէս իշխան-
„ զունք մեր և ազնիւք կատարեցան 'ի Ափխազս . ա-
„ ռաջ հրամանեաց Թաւրզաց և Թաթարաց կատարել

„ զնոյն ազգս Հայոց, որք ՚ի նմին աւուր բազմանայինք
„ քաղաքին Ֆէոդոսիա սակաւաւորանաւ առաւելն. զի ըզ-
„ ծերս և զտղայս, զկանս և զծառայս որոց ձեռաց ե-
„ տուն և զարհամարհանօք յերկիր հեղեալ իբրև զխաւարս
„ զերտոց ընթանայք ՚ի փողոցն. անթիւ ազինք և
„ մանկունք և մատաղ տղայք գերեալ առաքեցին ՚ի
„ Պօլիս առ սուլթանն. զայլս առաքեն ՚ի կալպաթ
„ և ՚ի սուրխաթ. Նոյնպէս բազում յիշխանաց և ազ-
„ նուականաց և հասարակ ժողովրդոց մեր՝ յանձինս
„ առ ինձ կատարեցան և յանձնս գերի վարեցան ի՛ն
„ Հաւատոյն և վասն անուան Յիսուսի Քրիստոսի.

„ Բայց անօրէն խանն զուխտն և զծառայութիւն
„ և ծառայութիւն անտեղ արարեալ, և պատճառաւն կապա-
„ մամբ ազգին մերոյ, իբրև եւ մեզ անթաւլի, որ ոչ
„ միայն ոչ եւ զարհուրան փոշայն զորդիս խանին ըստ
„ պայմանին. այլ տարաւ ՚ի Պօլիս առ սուլթանն,
„ և նա Հրամայեաց դատապարտեցուցանել խաղաւն զմանուկն զա-
„ մանս ամբարտաւան նորմիլք, առաքել ՚ի Կաֆա, զՀայրն
„ սպանանել նուաճեցանել յաթոռ խանութեան։ Այսպէս
„ մինչև ցայսօր խանն Թաթարին նստի ըստ հրամանի
„ սուլթանին Թուրքաց. և մնացեալ զաղզս Հայոց մին-
„ չև ցայսօր բնակիլք ՚ի ձեռս Թաթար խանին, հար-
„ կատուագախտն պայմանիւ։

508. „ Բայց նախ քան զայսոսիկ ՚ի ժամանակս
„ պաշարմանն Ֆէոդոսիայ, կայր անդ Սաղաքիա
„ անուն աւագ երէց մի՝ որ ընդ պապայս եղբօր Թոռոսին
„ իւրոյ պետարութի շինեցին զեկեղեցին ՚ի չափ ՆՃ կարգի.
„ որոյ զանուանս մինչև ցայսօր գրեալ կայ ՚ի վերայ
„ սեղանոյ զարդուոյն, յետ կոչեայս սուրբ Լուսաւորչաց եկեղե-
„ ցւոյն։ Նաև յետ կատարման պաշարմանն՝ նոյ
„ մանդաղիրոյն ընդ պապայս եղբօր Թոռոսին պետարութ
„ եկեալ ՚ի գաւառին զմայլին ՚ի յաղթանակերդ առ յո-
„ Հաննէս վարդապետն, որ էր պապայս եղբօրորդի նոր
„ Սաղաքիայի. և եղբայր Պետրոսի Հօրն նոյա-
„ նեայցն. որք եկին որդիք իշխանաց ՚ի տաճկին պատերա-
„ զմանանաց. ՚ի գաւառէն ոստանայ, ՚ի քաղաքէն վա-
„ նանդաու. զի արարեալ այս ծնաւ ՚ի նախիջևանու քա-
„ ղաքի ղրաւիթ. դաւիթ զեղրորդ. սեղրորդ զմար-
„ գար. միաբար զաւագի. սագի զաբրահամ. որ այս
„ աբրահամն ածաւ Թուքն ՚ի յաւերեալն Քելասքն զեր-

„ կիրն պարսից, բազումք 'ի յազգէ մերմէ չուեալ
„ անտի գան 'ի Պուրմ, 'ի Ֆէօդօսիա, 'ի ղարապա-
„ զար, 'ի պաղչասարայ և 'ի կէօզլեւ. և այլք գերի
„ վարեցան. յորոց մինչ այս ատրուհանն միայն ընդ քե-
„ ռորդւոյն Պետրոսին բագրատունւոյ 'ի գերի վարելն
„ սպանեալ զչորեսին սահարանսն 'ի գերեվարացն 'ի
„ նոքեանս նոցին : և փախեալ եկին 'ի Պուրմ 'ի Ֆէօ
„ դօսիա քաղաք : և անդ էր ազնիւ մարզարն մուղա-
„ ղեաց (որդի Թորոսի, Ակոբի Պանիկեցի Մուրատի
„ Խուլէոլթորայ նախարարին. որ ըստ հրամանի Շահ իբրև
„ իշխանին Ջինկիզղայ բնակէր զօրօք 'ի վերայ Ձորոյն
„ կաղաքաթի, որ զգեան այն կոչեցաւ մուղալյեօզէն
„ 'ի Թաթար լեզուէ.) առ 'ի տեսանելն ատրուհանին
„ պալհաւունեաց և պետրոսին բագրատունեաց պար-
„ գևեաց նոցա բազում խնչս և զատուցուածս, և պա-
„ հեաց զնա 'ի բնակութի, 'ի պատիւ առնելն նոցին. բայց
„ պետրոսն բագրատունեաց յետ ոչ բազում ժամա-
„ նակաց առ ամ փոխեցաւ ռկէ (1618) Թուին:

509. „ Իսկ ատրուհանն պալհաւունեաց փղորմութեան
„ այ և օգնականութեն ազնիւ մարզարին մուղալեաց
„ և ուրոց պարոն մուրատին զարեզմանեաց որդւոցն
„ Մաթէի, Ավետի, Սամուէլի, Սարգսի, Յովսէ-
„ փու, առաջին նախարարին (Ֆէօդօսիա), և ազ-
„ նիւ Խաթէին աղամալեաց (որդւոյն ներսէսին, յա-
„ րութիւնին, Բարթողին, Մինասին, Մեսրոպին,
„ չորրորդ զեղապետին Ֆէօդօսիա) և այլոց մուղա-
„ լեանց եկեալ զարդացաւ և հաստատեցաւ, և եառ
„ զդուստրն ազնիւ Պետրոսին մուղալեանց. և եղև 'ի
„ նմանէ դդուստր մի Սնա և զորդի մի զդղաս. և
„ այս դուստրն Սնա և դրդաս որդին Սաբրահամին
„ շինեցին 'ի Ֆէօդօսիա քաղաքին, 'ի վերայ բարձր
„ լեռան միոյ եկեղեցի մի սուրբ Նիկողայոս, և պա-
„ նուանս իւրեանց և ծնողացն իւրոց գրեցին 'ի վերայ
„ տապանակին գրան եկեղեցւոյ, և զայս մնկնութիս մեր
„ անցից յազգիս մեր եառն գծագրել 'ի յայսմ աւու-
„ րս, և զծառս աղքատհամարութեան իւրաքանչիւրոց
„ յետակայս օրհնեցին, և պատուարեցին յետնորդացն
„ յետ մահուան իւրաքանչիւրոց հարց՝ անձեղուցանել
„ ղարախան ձիւղս իւրեանց 'ի վերայ ծառայն. առ 'ի
„ յիշատակ առհմին իւրեանց. և վասն միոյ յիշեալ.

„ յիշխանաց՝ պետաց՝ և ազնուականաց և նոցին
„ յառաջորդացն. նաև պատուաւորեցին իւրաքանչիւր
„ ամի վասն որ նուիրատուեանցն մերոց առնել 'ի սոյն ե-
„ կեղեցւոջ զաւանախմբութիւն, և յիշել 'ի սուրբ աղօթս
„ ձեր և յիշատակօք սուրբն զորդանաւն և զօրացն Ան-
„ նայ դշխոյին, և զհանգուցեալ հայրն զԱբրահամ, և
„ զմայրն Թագուհի դշխոյն, զհանգուցեալ պետրոսն
„ բագրատոնեց. դարձեալ զկենդանի ասաց պատուն.
„ Մուրատան դարբինեանեց՝ զմարգար՝ զՄկրտ մուշա-
„ ղեանց և զԹաթէ աղամալեանց. և զայլ յիշել
„ ընքերս ումեք տերեկին քեզ:

510. Յայտ է 'ի վերոյ գրելոյ պատմութենէս Վրէ-
Փեցոյ, թէ բոլոր ցամաք կղզին Կիպրոսի առնլու ընդ
իշխանութեամբ Թուրքաց. բայց Վրէժէ միշտ մնաց
'ի ձեռս Օսմանեանց, որպէս և այլ բերդորայք. որով
և Թուրքաց խանն եղև ընդ պաշտպանութեամբ նոցա.
որ եղև նորգաւիւկեց պատրաստական էր զնալ 'ի պատե-
րազմ և օգնել Օսմանեանց. Նախաշէնեալ դարձեալ
մնացանեցանն Նորեցիք 'ի ձեռս զերշաց իւրեանց. մինչ
զի բազումք զանձ կազմեալ փախչէին և ապաւէին 'ի
Լեհաստան երկրայ յՊողով, 'ի Կամենից 'ի Յլվով-
ւանցս: Իսկ մնացեալքն որ բազ օրէ հարստահարեալ
նուազեցան. այնպէս զի յաւուրս Ոսկան մտին 'ի Վրէ-
ժէ՝ հազիւ մնացեալ էին 'ի կերպ 3000 տունք հայոց:
Յամի տեառն 1567. Լոյս պարտ պատրաստեալ կառուցեցաւ
վանս 'ի Վրէժ հաւատացն, և ծաղկեցաւ գերեզմանն նո-
րա պանծացեալ, զոր տեսաք 'ի ձեռնակագիծ տաճարին
սրբոյն Նշանայ: Օժանդակութեամբ սորա զատաք 'ի Հին
յայտնութեամբ Պաղձեաղերայց և Օրին, որ այսպէս գնէ:

Պատմութիւն պարոն յայս նոր նախարարինն:

511. * Ի ժամանակս Թագաւորութեան սուլթանն
„ ովնեցիին... բայց մեծապէս մի եղեւեցաւ պատերազմ ընդ
„ անուն յաշխարհին հայոց 'ի քաղաքն Կաֆայ... 'ի
„ ձեռն նոցաս ժամանակին անօրէնաց վարդ երեւե-
„ ցաւ 'ի մէջ աշխարհին. վասն եղեւ որպէս հայր 'ի մեջին
„ Վրէժ. 'ի Թուականութեան հայոց ռԺԶ ամի. 'ի Հինգ
„ յամենայն յառաջ Զրադադացն յայտնութեան մեծ մե-
„ ծոյ Յոհն Վրէժ. Յանկարծակի շնչասպառեցին զնա.

„ անօրէնութիւնն և ընդունեցին զնա նահատակին պատրանս լոյս
„ որ էր ամենայն մեղաց մեծամեծ ախտք, առաջնորդէ զեկեղեցին
„ հաւատացեալ մոլորեալս. ընդդէմ Քրիստոսի, ամենայնիւ
„ շնորհօքն զարդարեալ. ’ի մէջ ատենին զնա պղծութիւն
„ և ասացին թէ զա ’ի Կիւրղէսի տանջիցեսցեալ ես . . .
„ յայնժամ մեր պատրանս լոյս լուաւ հոգւովն սրբով, հա-
„ ւանոյց եհան և հաւատացեալ հայեցաւ ’ի վեր յերկինս
„ և յիշեաց ’ի սրտի իւրում զԱստուած կենդանի. և ա-
„ պաւինեցաւ յաղօթս մեր հօրն մերոյ գրիգորի լուսա-
„ ւորչին, այնմա և սերտ հաւատով պատասխանի ետ
„ նոցա և ասաց. ես հաւատով քրիստոնեայ եմ. և
„ հաւատամ զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին. և զՔս ած
„ հաւատամ. ես ոչ տաճիկ եղեալ եմ և ոչ կուրա-
„ նամ: Յայնժամ զբազ առեալ անօրինացն ժողովե-
„ ցան ’ի միասին և առեալ տարան զնա առաջի դա-
„ տաւորին ... Յայնժամ պայծառացաւ երեսն մեր նա-
„ հատակին և մեր հոգւովն զօրացեալ եբաց զբերան
„ իւր ’ի մէջ ատենին. պատասխանի ետ դատաւորին
„ և ամենեցուն որ կային յատենին, թէ ես քրիստո-
„ նեայ եմ, Քրիստոսի ծառայ և քրիստոնէից ծնողաց զա-
„ ւակ. ես չեմ ուրանալ զՔրիստոս հաւատն և չեմ հա-
„ ւատալ ձեր օրինացն. ինչպէս կամիք այնպէս ա-
„ րարէք. եթէ տանջանօք և եթէ կրակով այրէք ես
„ զՔս ած չեմ ուրանալ . . . Յորժամ ոչ կարացին
„ յաղթել նմա և դարձուցանել ’ի սիրոյն Քրիստոսի ... այ-
„ րեցին զնա .. ’ի յունուարի ամսոյ չորեքշաբթի մինչև ’ի մայիս
„ ամի 15 հանդարտ նեղեցին զնա և չարչարեցին բանտիւ
„ և կապանօք և պէսպէս կտտանօք. և ոչ կարացին հա-
„ ւանեցուցանել: Այլ մեր մանուկն պատրանս լոյս ետ քաջ
„ զեւ զօրութեամբ մեր հոգւովն և համբերութեան կայր ’ի
„ սէրն Քրիստոսի. Այլ ’ի տանջելեան երեւեցաւ նմա մեր հայրն
„ մեր Գրիգոր լուսաւորիչն և քաջալերեաց միսիթա-
„ րեաց զնա . . . Յայնժամ առեալ իշխանն եթէ ոչ
„ դառնայ, հրամայեցին գլխատել զնա ... Այլ Է տեղի
„ փոխեցին մի թէ երկիցէ, և ոչ երկեաւ. և դարձեալ
„ առեալ զաղօթս Է տեղւոյ և ասէ. ահա գլխատեմք
„ զքեզ եթէ ոչ դառնաս. և նա ասէ. բազում անգամ
„ զամ ասացի ձեզ թէ ես քրիստոնեայ եմ, և ձեր օ-
„ րէնքն ոչ ընդունիմ. և ապա գլխատեցին զերանելի
„ մանուկն: Յայնժամ աւանդեաց զհոգին իւր երանելին

» ըզ որ նաւահանգստին 'ի ձեռս էր, և հրամ անձամբ բռնութեամբ
» 'ի որ մնացեալն ... և 'ի մէջ ընկերաց լցեալ աղաղակաւ ծա-
» ղկեաց 'ի վերայ որ նշխարացն ... և աւետեալ տարան 'ի
» վանիցն որ յաւանդեալսն և անձանցն և ամենեքեան հանգու-
» ցին զառաջնա ծերութեանն ... Այս անուանք Մխիթարեան
» որդւոցն վարդապետաց ... անկանելոյ եղէ ... և ան-
» մարմինք բաղձանս գրեցի և եդի 'ի տապանին ... և
» գրեցի զպատմութիւն ։

ՆԱԲ ԳԼՈՒԽ

512. Յետ մահուանն Սիմէոնի 'ի ՔՐԻՍՏ յամի 1779. յունիսի 29. և յետ վախճանելոյ նորա 1200 աւուր Հայոց 'ի Մաստանեան ըզխոհմին առաջնորդութեան քա-ղաքին. մինչև 'ի գիրս գալ բանիցս կոչեալ զայն Նոր ՆԻՆ-ՖԻ. ուր ոչ մնաց քար 'ի քարի վերայ, որ ոչ քակտե-ցաւ ։ Իսկ զի՛ ոչ միայն մեծամեծազան պատերազմ մե-ծի բերդքն Հայոց ընդ Պարսկաստանիցն և ընդ Նաբը-նաւորեալքն Հռոմայեցւոց եղեն, այլ նաև զինեալ ամե-նայն տանք, խաղաղ եղբ և եկեղեցիք ընդ վանորէից կերպարանս եղեն ։

Հայք 'ի նմին ժամանակի ունէին 24 եկեղեցիս. գլխաւորքն էին Սբ Սարգիս, Հրեշտակապետն, Ծնունդն, Սբ Յարութիւն, Լուսաւորիչ, Սբ Գրիգոր, Սբ Աստուածածին, Սբ Յովհաննէս, Սբ Մինաս, Սբ Յակոբ, ևն ։ Առաջնորդարանն էր արտաքոյ բերդին վանք յանուն որ Սրբոյն. ուր կարգաւ կառուցեալ էին շուրջ զպարսպաւ որ Սիոնի, որ Հայաստանեայ, որ Վարդան, որ Գէորգ, ևն ։

Իսկ ամենայն պատմութիւնս Ռուսաստանն ունէին զբոլոր եկեղեցիս՝ երբ մեծանային տարի. քաղաքա-քանդեցին Թաթարք, զմանս 'ի մեծին փոխեցին, և զայլս Թողին 'ի ձեռս Հայոց ։ Յետ կոտորածի պէտերբուրգ 'ի Սինէոն պատրիարք ընդ եկեղեցի լուսաւորչաց յանուն սրբոյն Մինասի. յորոյ անուն և եկեղեցի այս-պէս կոչեցաւ. ուր զայլ և եկեղեցի Յովհաննու Մ...
անուն, զի որ Յովհաննէս. յայս անուն եկեղեցի կոչեցաւ Մ...ն ...ն Թոռ զայն Հռոմայեցւոց կայսերքն եկեղեցին ծի-նուանն եղբայրութեան ... և Բեկլեմեան՝ այլ ևս հան-գեալ ։

519. Ի.ՃԼ մղոն ղաբ՝ անտառաց շարժեալ Զօրաշէնս և Հնաշէնս սոսորատաբնակաց 'ի կարգիս. Ի.յնչևան քաղաք է գեղեցկանիստ և բարեաւոյլ շինեալ յեզերս ծովու ափամբ 'ի Պոնտէ պարսպաւ մինչև ցեզերն ծովը. բայց լեռնակողմն բոլորովին աւերակ է: Փողոցք քաղաքիս են բաւ մեծի մասին զուգաշինաւորեալք. և երեւելի պարսպաց բարձրաշէնք կառուցեալ կան սաւ և անդ, որպէս և 'ի ծովեզերս մերձաւոր 'ի վայր պահել աւերակօք քաղաքիս շինեալ են իջևանք և շուկայք երկայնաձիգ: Ի սորին ծայր քաղաքին դէտ կանգուն կայ մի մասն մեծի աշտարակին, որ կոչի Պոռոյէ Գաֆա: Առջանիօր Ֆէնչ երեւելի զօրապետ կառուցյց զմեղարձակ բնակարան զօրաց. անդ է և երեւելի պալատ քաղաքական պաշտօնէութեանց: Զապաշէտ առ ծովեզերբ շինեցին յաւուրս մեր ապարանք պարտէզ երկայնաձիգ և բարձրաշէնք 'ի զբօսանս քաղաքացեաց: Ի մերձի ծայրն է բաւ մեծ նաւահանգիստ, ուր մերձեցան նաւակք. զոր յերկուց կողմանց վայելուչ զարդարեաց մեծամեծ շինուածովք բարձրաձայնեաց իջեւանօք և բազում քարաւոր շտեմարանօք բազմամբդիւն և անսպառ վաճառականին սառմին կարգէ՝ Մաղայ Սանկիւան Մահմուտեան Տրապիզոնցի.

Միանգամ զլխաւոր շինուածոց քաղաքիս են 'ի ձեւ եւրոպեան. եթէ այսր ձեռն շինեցին անձանցն տեղիս, լինի մի 'ի գեղեցիկ քաղաքաց եւրոպիոյ. Նոյնպէս մինէր երեւելի վաճառատեղի սակս զի ցեց գեղեցիկ նաւահանգստին՝ եթէ չէր նաւալեալ վաճառականութի քաղաքիս. որով անշքացեալ կայ բաւ ամենայնի.

Տեսանք 'ի Հրապարակի անդ զմեծ մզկիթն բազբեղ երկայն 17 կանգուն, և լայն 14. զարմանալի են զմբեթն շրջապատեալ 'ի 11 փոքրագմբեթց, զոր երկայնաձիգ միջնաբերդ արկեալ 'ի վայր քանդեցին, և 'ի մերայ Հրաման կաղմն երկին զանազանութեանս, այլ մեաց անփոփոխ: Նոյնպէս քանդեցին զմեծաքարծ զմեծեթն վասն որ 'ի յետոյ կանթողքին բաւ ձեռս Սուլտան և ամենայն տաղանդին եկեղեցի. անկայն կայ ցայսօր անզարծ է անցաւոր: Այս մզկիթ եր աւանն մայր եկեղեցի Դեմետրեայ: Այրենթեր յորին և մեծագործ զարդանիք, որ առի լինել ուսումնարան Դեմետրեայ. ուր տեսաք յարեւմտեան մերին կողմն փորագրեալ զաւն

'ի վերն այլ արձան, և 'ի միւս կողմն մանկայք փորա-գրեալք :

516. Արձանաքար տաճարին Հիւպատոսի Պրէֆէքին, որ կոչէր Պանթեոնն Կոստանդնուպոլսի :

Ի.Ա. միջնադարեան լատիներէն գրեալ յամի MCCCXXI. (1321) :

Մէմ փորագրեալ 'ի վերայ երկաթ արծիւ մարդկանային և խաչ :

Մարմարիոնեայ սիւն, որ կանգնեալ էր 'ի վերայ գերեզմանի ուրուրն կուսի յայն արձանագրութեամբս. ENΘΑΔΕ ΚΑΤΟΙΗΤΕ Η ΔΟΤΛΗ ΤΟΤ ΘΕΟΤ ΕΛΕΝΗ. Այս է Լատինական տառերով այս կերպիւ :

517. Երկայնաձև անօթ, որ կոչի Մաղ Սոտոմոս, ընծայեալ դեց առ Միհրդատայ. զոր գտեալ 'ի Կերչ քաղաքին առա :

Մեծ ոսկր ազդեր Մօսոսաս կենդանւոյ, զոր անգէտք կարծեն լինել մարդոյ :

Մէմ մարմարիոնեայ՝ փորագրեալ 'ի վերայ երկին սրտաձև նշանք հանդերձ 3 պսակօք :

Զանազան վէմք Ճենովացւոց հանդերձ սրտաձև նշանօք և 'ի մէջն խաչ :

518. Երկայնաձև փոքրիկ անօթք արտասուաց, զորս հեթանոսք հաւաքէին յայսպիսի անօթս և դնէին առ դիակունս մեռելոց իբր 'ի պատիւ :

Դրամք Հռոմուլոսի, Մեծին Միհրդատայ, Փի-լիպպոսի Մակեդոնացւոյ և այլոց : Տեսաք այլուր ըն-դրամ Մեծին Սողոմոնի տպեալ 'ի մի կողմն Մուհիւր սիւլէյմանի և դէր հրէարէն * [illegible] || և Սողոմոն որդի Դաւթի Թագաւոր Իս-րայէլի : Իսկ 'ի միւս կողմն * [illegible] ||. և Սողոմոն իմաստուն իւնչ ընդունայն է, և եւ Թըր-ւառագրու յերթուածեմ :

Իսկ վէմք արձանագրութեանց Հայոց, զորս երեւեալ էին 'ի պարիսպս բերդին առ. երի 'ի Յարութիւն ե-կեղեցւոյն և այլուր՝ փոխադրեցան 'ի Պետրպուրկ, և կամ ցարք յարքունական պարտիզի անդ (499) .

Դրան 'ի սմին քաղաքի եկեղեցիք Ռուսաց և Յու-նաց նորաշէնք. նոյնպէս և մզկիթ յառաջնմին Թաղէ Խաթարաց :

ԵԿԵՂԵՑԻՔ ՀԱՅՈՑ

519. Հայոց եկեղեցիք են վաղեմի շինուածք ՚ի նախնեաց անտի. յորոց կարի սակաւք կանգնուն կան լու-սաւորին շինութեանց. յորս կատարին ժամերգք պաշ-տամունք. իսկ շատք քայքայեալ կան, և են որք իս-պառ անհետ եղեալ են:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

520. Սոյն եկեղեցի կառնապաշտին կառուցեալ ՚ի վերայ քան զմեծ Հրապարակ քաղաքին. որ ունի կրկին դաւիթս: Մուտն ներքին տաճարին է քառակուսի և փոքրագիր. ունի երիս խորանս. կողմնակի խորանքն են որոց աւանդեն Պետրոսի և Պօղոսի: Իսկ ա-ռաջի մեծի խորանին որ ըստ Սարգսի զան եզերն ազգ-ճաճանչ աշտանակք. նաև ունի երիս դրունս: Արևմտ-եան դուռն է երկփեղկեայ ընկուզի փորագրեալ խաչազարդ: Ի միում փեղկի փորագրեալ կայ. * Այս դուռս է նոր տաճարի. որ է յանուն նոր սուրբ Սար-գսի || և ՚ի միւսումն * Ողջ. աղաչեմ զԹո-րոսիս. յիշատակ իւր. և իւր զաւակի. ՚ի Թվին ՋԿԹ || (1530): Այլ կողմնակի փորագրեալ է մանրագիր յի-շատակարան. ՚ի միումն * նոր մամլկանեանց ՚ի Թվին ՊԺԵ (1366) մասնի ին || : Իսկ դրր. միւս փեղ-կին եղծեալ է. հազիւ ընթեռնլի այսչափ. * Մահե-սա անձս մեղաւոր ||. Հիւսիսային տաճարին դուռն է նորաշէն. սակայն զՀին դուռն փո-խադրեալ յեկեղեցի Հրեշտակապետացն: Իսկ երկրորդ դուռն է նոյնպէս խաչազարդ քանդակեալ հանդերձ յիշատակագրաւս. * Սրբեցաք կոր ալեքսան յիշա-տակ իւր եւ ծնողաց իւրոց ||: Ի վերայ միւս փեղ-կին գրեալ է. * Սա դրան սրբոյ աստուծոյ զաւրա-վարին եղեւ ||:

Արևմտեան դաւիթն է ընդարձակ քարաշէն. ունի վերնատուն վասն կանանց, և երկու խորանս: Այդ-նոր տեսաք զանազան խաչքարեր. զոյ յորմն խաչ-քար փորագրեալ. * Ողջ. Թամթամին . . . . Թվ. ՌԼ ին || (1581):

Նորաքին գաւառ այսր գաւթի է փառաւոր կա-
մուրջն և սիւնազարդ՝ առ որով տեսաք խաչքար այսպէս փորագրեալ. * Այս նշանս բարեխաւս է Թա-
» դէոսին և կողակցին Թագին Թվին ՊՂԸ Ա (1449). Այլ ևս այլ խաչքար այսպէս գրեալ. * Այս նշանս Զէհանշին
» խաչ ... և ծնողացն Թվ. ՋԽԵ Ա (1496).

Շուրջ զեկեղեցեաւս է բաժանեալ գաւառ. փառաւոր վանատունն, և դպրոց մանկանց հանդերձ կելին դըպանիւք: Հարաւային գաւառն նորոգեցաւ 'ի յետին ժամանակս. և ունի 'ի ճակատն արձանագիր. * Հրամանաւ Թագաւորին եւ վերակացութե Մահմուտ մեղկեան խոճայէն վերջանոյն նորոգեցաւ որ ... գաւառ. Թվ. ՌՃ Ա.

Անտառանն է ... եկեղեցւոյն ...
շեն. Թուի թէ 'ի հնումն ... բնակարան
... որ մնացին ... կոյսին: Տեսաք գաւե-
տարան ... ձեռագիր. Ծածկեալ. որ
ունի. * Գրեցաւ որ աւետարանս ... 'ի թվականու-
» Թեանս ... ՌՀԸ (1629). յաշխարհին հայոց. և 'ի
» յերկիրս ... 'ի հայրենեաց և 'ի հայաստանեայց ...
» ... որ կոչի Կարմիր խաչ. ձեռամբ հովանաւորութե ...
» ... զաւրանալեացն Ա.

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ

521. Ի հին եկեղեցի փառաւոր և կամարաշէն հանդերձ բարձր կաթողիկէիւ. ունի երիս խորանս. սուրբ Հրեշտակապետ, սուրբ Կարապետ, և սուրբ Աստուածածին. Նաև արտաքոյ դրանն գերեզմանոց փորեալ խորանս. Զի ... է համեմատ ... երկայն և լայն 17 քայլ: Այս տեսաք խաչքար սուրբ Յարութեան եկեղեցւոյն հանդերձ յիշատակագրաւ * Բարեխաւս է որ նշանս Զերման խաչիկ ... և ծնողաց ... և ԶԿԶ Ա. Թվականին է 'ի վերոյ. Թվ. ՋԿ (1511): Այլ 'ի վերայ ... կամարին ... փոքր խաչքար նորա յիշատակագրաւ * Այս նշանս բարեխաւս է Թաւանշին, ... ապ-
» քերին, եւ ... Թվ. ՋԻԷ Ա (1478).

Նոյնպէս 'ի վերայ ... կամարին այլ ... յիշատակագիր. * Յիշատակ է որ խաչս ... բուսոյն

[illegible] ։

[illegible] * [illegible] Թվին [illegible] (1488) ։

[illegible] 9 [illegible] 3 , [illegible] * [illegible] (1371) [illegible] * [illegible] ։

[illegible] * [illegible] Թվին [illegible] (1599) ։ [illegible] * [illegible] Թվ. [illegible] (1728) ։

[illegible]

522 . [illegible] ։

Մեծ խաչքար եղեալ կայ 'ի [illegible] փորագրեալ 'ի Թվ. [illegible] (1686) ։

'Ի հիւսիսակողմն [illegible] 'ի վերայ [illegible] փորագրեալ կայ 'ի վերայ [illegible] մեծ խաչ եւ գիր՝ * [illegible]

[illegible] (1442) : [illegible] 3 [illegible] * [illegible] (1479) : [illegible] (1499) :

[illegible] * [illegible] (1771) :

[illegible] * [illegible] (1587) [illegible]

[illegible]

523. [illegible] 15 [illegible] 8. [illegible] * [illegible] (1459) :

[illegible]

[illegible] * [illegible] (1551) :

[illegible] * [illegible] (1458) :

Սորատանին :

524. Ս Հին եկեղեցի կամարակապ կիսաւերակ ՚ի հարաւային ծայր լերին . ունի ընդարձակ գաւիթ , որ տաւուել հաստատուն է ։ ՚Ի վերայ աջակողմեան կամարին փորագրեալ կայ յիշատակագիր նորոգութեան եղծեալ ՚ի տեղիս տեղիս . * Սերատին հիմնարկեցաւ ժամատունս վերա այլն մեծի յովանէ . Եւ զաւառիս յուԹն տէ միհա առաջնորդութեանր ||:

՚Ի Թիկունս խորանին տեսաք ՚ի պարիսպն խաչքար գրեալ . * Բարեխաւսք է որ նշանաս ... Թվ. պկբ || (1413): Ս՟ա որով զոյ այլ խաչքար . * Բարեխաւսք „ է որ նշ . որ զորդին վարդերին երանուհէ ոսկեհա„ տին մնաստ Թվ. ջիա || (1472):

Հանդէպ այսր եկեղեցւոյ էր մեծաշէն տաճարն Երրորդութեան բարձր և պայծառ մնացեալ ՚ի Ճենովացւոց անտի . ուր արգելեալ էր Հայոց գնալ ՚ի յետին ժամանակս : Իսկ զի երբեմն յանցանելն անտի փաշային՝ լսէ զձայն ժամասացութեան Հայոց, անդէն հրամայէ ՚ի մզկիԹ փոխարկել . այլ յանկանելն փաԹով յերիվարէն արդարահաս պատուհասիւ , այնուհետև մնայ այնպէս խափանեալ :

Զար խոջան :

525. Ս՟ր եկեղեցի Ճենովացւոց արտաքոյ բերդին շինեալ յանուն Ս՟ծածնի . որոյ որմունք քայքայեալք զոն տակաւին : Տեսաք խաչ ՚ի վերայ աւետարանի ՚ի մի կողմն գրեալ . * Յիշատակ է որ խաչս այտերինին հա„ գւոյն և իւր ծնաւղացն ՚ի դուռն չարխափան որ„ ս՟ծածնի Թվին ուղզ և մայիսի ա || : ՚Ի միւս կողմն * Յիշատակ է որ խաչս փիլիպպոսին ... Թվին ուհէ || (1628) : Տեսաք նաև զաւետարան այսր եկեղեցւոյ . գնի ՚ի յիշատակարանին . * Սրգ եա գրել զս փիլիպ„ պոսն և եղ յիշատակ ՚ի դրունս չարխափան ս՟„ ս՟ծածնին ||:

Այլինչ կարի հեռի էր անտի եկեղեցին Ճենովացւոց Ճանկեծ . զի որ Ս՟ատան . իսկ Ան Բէտրօ մերձ որ Յարութիւն եկեղեցւոյն էր ՚ի ձեռս Տօմինիկեան կրօ-

բաւարաց, ուր երեւելին և վաղեմի տաճարն Հայ դրօմ: Ճ'ենավանքն ունելին և զայլ եկեղեցի 'ի Ֆալէնկ Հի-տարի անուն Փիլիպպոսի առաքելոյ. Բայց թէ չմնացաւ են դեռ 'ի ժամանակս շինութեան բերդին.

Սանթ Լօ.

526. Է՛ր վաղեմի եկեղեցի կամարակապ եկեղեց-ւոյն անկանաւ, ըստ որում ցուցանէ ամենայն. յեր-կուց կողմանց յարմանս երեւին 6 կամարք գամագոյնք, որք թուին ընդէլ անկիւն արտաքիրաց. ուր թաղեցաւ Լայս պարոն նախահայրն. նախին իւր ցարդ յանձնեալն անձն ամբարտաւանք 'իւրմէ պէսպէս Ս'ենսայի պատարա-գելով, թէպէտ անյայտ և քայքայեալ է: Ս'իրաւցն եկեղեցւոյն տեսակ զարդարանս և զհիմունս պարսպաց զաւթին այլովքն համեմատ (511):

Ս'էնթ Բրիէօք.

527. Ս'էնդ 'ի զլուխ լերինն յառաջ մեր պհեղեալ զանձն տապակերպեալ ճանապարհ, կամ Լիանկս, ուստի եղեն կերկին ամօթք. մին էր փողոցար յորում տեսանք ցոլեան և զայլ, նետ, ամէն, և կասուց թուչնոյ. որք են նշանք պատրաստութեան և երկրագործութե: Ս'ա տա-րաւոր լերին կառուցեալ էջոյ մեծ աղբիւր կամարա-չէն բարեձևոյր և մշտահոս. 'ի Ճակատն ընթերցաք զարձանագիրս 'ի մերայ մարմարեղինի, որ ասէ, *Աստ

„ է աղբիւրս իմ ծառայութեն եւ իւր կազմեցին ազգա-

„ կայքն եւ իւր զաւակացն մայրամ խաղաղութեն ուրա-

„ պիտոյքն եւ իւր ծնողացն պիտանեացն եւ մայրաց

„ խաղաղութեն եւ իւր պատրաստ քրիստոնէիցն իւր վարդա-

„ պետն ամենայնի. Թուին ՌԼէ (1588): Ս'յս աղբիւր

կոչի Ս'էնթինէն Լէնէօր: Ս'ա որով էր այլ անուանի աղ-բիւր Սլասէն Լէնէօր բարեձևոյր, շինեալ 'ի Սկաւոնկ իշխա-նեին Հայոց. զոր քանդեալ այժմ փակեցին զաւեղին, և ատորև կառուցին:

Ռշտունիք :

528. Ի ընդարձակ ծովս փոքր փակեալ 'ի մէջ երկուց հին ապարանաց քաղաքին, որ բաժանի յայլևայլ մասունս հանդերձ երևելի շինուածովք. զորս կառուցին Սուրբ 'ի սպասաւորութիւն քաղաքին 'ի ժամանակին : Ներսեհի քաղ 'ի մեծամեծ շինուածոց սակս աշխարհաց և փառաւորելեաց՝ տեսանք նաև զհին եկեղեցիս աւերաշինս, այլ ընդարձակ :

529. Սուրբ Յովհաննէս Աւետիք է քարաշէն բարձր եկեղեցի բոլորաձև գեղեցիկ՝ հանդերձ հնաշէն կաթուղիկէիւ. որ յառաջագոյն ունէր և վանատուն. որպէս ցուցանեն յիշատակարանքս. * Ծրդ գրեցաւ սա յամի „ Թուականութեան հայկազեան սեաւի ՌՂ (1641) ուղղա„ տոս անուամբ ... նախ զծագրութիւն մատենագիր „ յիշատակարանիս 'ի մեծ և 'ի հոյակապ մայրաքա„ ղաքս 'ի կափայ ընդ հովանեաւ սրբոյն յովանէս „ մկրտչին Ս ՌՃ. * Ո հարուստ աւձարերս այս երկ„ նանոսանս յամբողջութիւն յովհաննու մկրտիչ անուն „ ղեկանձին մերոյն սրբոյ զպարսն աստղագիտացոյն յիշատակէ. „ որ բնա յաջեմեայս շինարութեան հայկեան հա„ րիւր տասանեակ Ս ՌՃ (1661) :

530. Սուրբ Ստեփաննոս է այլ եկեղեցի բարձրադիր կամարաշէն. առ որով գոյ աղբիւր բարեհամբոյր. 'ի ճակատն ընթերցաք 'ի վերայ մարմարիոնի զայս արձանագիր. * Յիշատակ է աղբիւրս վարդապետին և կողակ„ ցին նոյր մելքերին. Թվին ՋԽ Ս (1491) : 'Ի սոսորև այլ յիշատակարանս նորոգութեան. * Վ եպսրին նորոգեաց տանուտէր մելքիսէթ յականս Թվին ՌՂԲ Ի Ս (1643) : Ն որով գոյ փորագրեալ զանձ ... Սուրբ Յովհաննէս անապատնեկ է նոյնպէս քարաշէն եկեղեցի կամարակապ. այլ կայ աւերեալ, և յայլ ակէտս կարգեալ. որպէս և Սուրբ Սարգիս. ուր յառաջագոյն Յոյնք պատարագէին :

'Ի սեաւն ներքին գրեան արդեւանոցին տեսաք սաղաւն բնա մնացին անկեալ ընդ որմով. ուր այսպէս կայ վերծանի. * Նորոգեաւն խաչ. հայր անուան երկաթականեն. Թվ. ՌԼԵ Ս (1586) :

53₁. Ի գեղեցիկ դաշտ Քէֆէի ի պտղալից ծառաստանս յօրինեալ ըստ եւրոպական ձեւոյ 'ի բլուր անդ հանդէպ ծովածոցին մերձ 'ի ծով սակաւ հեռի 'ի քաղաքէն։ Աւրանոր Շահին քերէյ խանն կառուցեալ էր մեծ պալատ, և առ նովին փողերանոց։ Անդ նստեալ նորա առ ժամանակ մի եհատ դրամս. զոր Ասուբ հիմնայատակ տապալեն։ Նաւաշի դրան պալատիցն կանգնեալ կան երկու մեծամեծ կճեայ սափորք. զոր կանգնեալ էին Սլէյմանկերէյ 'ի ծովեզերս Թամանու. այլ 'ի վերջոյ աստ փոխադրեցան (544)։

Նախանօր նշխարք նաւահանգստին Քէֆէի. նոյն իսկ զննեալ տեսաք, զի բաղում տեղիք ծանծաղ են։ Աւր անդունդն են ձկունք և օսորէք. յորս գտանին բաղում անդամ և մարգարիտք անողորկք և մանրահատք. 'ի միում գտանի երբեմն 20 և մինչև 30։

53₂. Մերձ 'ի բերան նաւահանգստին յաջակողմեան ծովեզերս գոյ փոքրիկ կղզի, որ երբեմն սար պատուարէր զնաւահանգիստն. և կոչի Կէէկ ադլամաւ։ Իսկ զի եղանիկ մի ասեն փախուցեալ յարատրդոց՝ դահավէժ անկեալ է 'ի լեռնէ անտի յայս կղզի։ 'Ի հանդիպակողմն նաւահանգստին գոյ այլ սար Չէտէմէս պուռնի կոչեցեալ, որ է արեւելեան քիթ նաւահանգստին Քէֆէի։ Աստի մինչև ցԿէէկ ադլամաւ հաշուեն 36 մղոն սամ. նոյնչափ դնեն մինչև ցՊերատեղն (53₁)։

Օթեալ տեսաք 'ի բարձրագոյն լեռնէ անտի զծոց և զգաւառն Կէէկ ադլամաւ սարին, որ երբեմն երկայնաձիգ հրուանդան խոնարհի ընդ արեւելս, և զծոցն տապահոյլ առնէ 'ի հարաւային և յարեւմտեան հողմոց։ Ասեն թէ այն կղզի էր ծայր նոյն իսկ սարին, և ապա բաժանեալ անտի երկրաշարժութեամբ։ Ամա յաջորդէ միւս սարն փոքրիկ Սանդանս պուռնի. 'ի վերայ լերին տեսաք զեկեղեցին Յունաց Տաճար, նորոգեալ յետոյ։ Իսկ սմա յաջորդէ այլ փոքրիկ քիթ Յայն պուռնի մերձ յարգելանոցն 'ի ծոցամիջի անդ (51₂)։ Տեսաք 'ի լեռնէ անտի մթնագոյն մեծ լեառն Կարատաղ. որ երկայնեալ ձգի 'ի ծով անդր մերձ 'ի Խոզ։ (48₂)։

ԱՅԼ ՄԱՍՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

533. Մնայ մեզ այսուհետեւ շրջիլ եւ տեղագրել զայլ մասն արեւելեան, որ սկսեալ 'ի Դնեփերյէ հասանէ մինչեւ ցՍաորըխ ծովակ եւ ցՏանա գետս. որում ընդ լըրի ցամաքն կղզին Խրիմու ։

ԿԵՐՃ, կամ ԿԵՐՉ

534. Այսու անուամբ կոչի ոչ միայն մասնաւոր թերդաքաղաքն, այլ եւ բոլոր երկիրն որ իբրեւ գլուխ կամ մեծ հրուանդան երկայնեալ է 'ի ծով անդր յարեւելս. զոր կամք եղեն մեզ կոչել Թերակղզի. 'ի հն. Սխոտէրէս ։ Արդ՝ ցամաք Կերճի շրջապատեալ է 'ի հարաւոյ 'ի Սեաւ ծովէ. յարեւելից 'ի նեղուցէն Կիմմերու, եւ 'ի հիւսիսոյ յԱզախ ծովէ ։ Այնի պարանաց, որ սկսեալ 'ի ծոցէն Դնեփերի գնայ դէպ ուղիղ յԱրապատ ցժամս 4. զոր 'ի հնումն կամեցան բանալ. այլ խափանեցեալ 'ի բարձրութենէ Ազախ ծովու յետս կասեցան ։

Երկայնութիւն ցամաքի Կերճին ձգի ժամս 12. 'ի տեղիս տեղիս երբեմն երեւէին հետք հին պարսպին, որ ձգէր ծովէ 'ի ծով, սկսեալ 'ի Շիպան գեղջէ անցանէր ընդ գիւղն Թիւրէկ դէպ 'ի Սարըկէօլ ուր յառաջագոյն երեւէին բոլորշի աւերակք աշտարակաց, եւ հասանէր ապա 'ի ծոցն Դնեփերի. զոր եւ յիշէ Ստրաբոն. որպէս եւ Ասանդր կանգնեալ էր պարիսպ առ ի պաշտպանութեան իւրոյ. Պլին. Է ։

Հարաւային ծովեզերք Կերճի սկսանին 'ի ծոցոյ Դնեփերի 'ի սարէն Դէւէ Բու պուռնի. զոր եւ կոչեն Խըզըլ պուռնի որում յաջորդէ Զաղաղաքէօլ, ապա Խըր խօյեաղ. ապա Զամախոր խօյեաղ. ուր է լիճ եւ ծայր խորամին. որոյ հանդէպ անկանի կղզին Երեշէն խայա. որում հետեւի Էսքի լեառն. առ որով եւ աղբիւր պատուական ջրոյ. յետ որոյ Խըյաղատող. ապա Պասխըլ մեծ սար հարաւային բերանոյ Բոսփորոսի ։

Այժմ աւերակք պարսպին անհետ եղեալ են վասն բառնալոյ անտի զքարինս եւ շինելոյ զայլ տեղիս ։ Տեսանք յայսմ ցամաքի ընդարձակ դաշտս եւ բարեբեր գիւղօրէս Թաթարաց. երկիրն է կաւուտ եւ աղի.

նորին աղաղաւ. ոչ անձինք պինչարի խոտք և ոչ երևին ծառք, սակայն օգտակար է խոտն յոյժ անասնոց, մանաւանդ ուղտուց, որոց ոչ միայն միսն է համեղ, այլև մորթն է փայլուն և գեղեցիկ, մանաւանդ մանուշակագոյնն. որ յաճախ է առ որպէս և 'ի Նէօղլէվ: Թռչունք տեղւոյս չեն նման Պուլբչաղաց. զի սոքա Է մեծի մասին սերեալ են 'ի Ջերքէզաց, որպէս և համեմատ գծագրութիւնք դիմացն յայտ առնեն:

535. 'Ի հնումն տէրութիւն Մամլուքեանց հաստատեր մինչև ցայս վայր. բայց գլխաւոր տիրօղքն էին Թագաւորք Մափրի: Առաջ 30 միլիոն տարեկաց 'ի Եգիպտ քաղաքէ տեսաք զՀին ատհմանն պայազիկ տէրութեանց, որ է երկայն խորամ ձգեալ 'ի Հիւսիսոյ ընդ հարաւ. սկսեալ յԱռաջաւո ծովէ երեթայ յաղէհանն մերձ 'ի բերան ծոցոյն Արեփէի, և վերջանայ հանդէպ Սրէւ քէն գաւառին (548).

Ընդարձակութիւն խորամին չափեցաք 25 քայլ. այլ այժմ լցեալ է փոքր ինչ խորութիւնն. 'ի միջնակայրին ունէր մարտկոց, 100 ոտն տարամաքծիւ իւրև գաւառ: Տեսաք առ Ճանապարհին զմեծամեծ քարինս, ծածկեալս կամ աշտարակին, զոր բերէ Սրասանդրին Պերիկոսականէն, նաև Սորաքան 'ի ցուցանել զզօրութիւն Պրիմկերացւոց: Առաջ քան զգիւղն Ագէլօչ սկսանի երկիրն բարձրանալ Է տարածուի 26 միլիոնից. առաւ այնուհետև զան յերևան բլուրք Եերձի:

536. Տեսաք 'ի տեղիս տեղիս հրաբուղխս մանուանդ մերձ 'ի Եերձ, և 'ի Խօսամու: 'Ի գիւղն Ղ'եավլէթա գոյ բլուր մի բարձր Օղա ձայնեալ 'ի նոցանէ, ունի 'ի գլուխն հրաբուղխ, որ երբեմն հանէ զնիւթ ինչ, և 'ի գիշերի երևեցուցանէ ծուխ և բոց. և յաճախ ձայն լսի 'ի ներքուստ: Տեսաք մերձ 'ի Եերձ բազմաթիւ բլրակս. զոր տեղացիք կոչեն Լյաղ օղա. ընդ որովք են քարաչէն գերեզմանք նախնեաց, որպէս տեսաք զմեծամեծ քարինս: Մերձ յարքունի Ճանապարհն տեսաք զհնանօրինակ բլրակ և 'ի միջնակայրի մուտ. ընդ որ իջեալ տեսաք սենեակ ինչ կամ ներքնատուն երկայն 12 քայլ. բարձր 3 կանգուն, բոլորակին միմնափոր. 'ի մի կողմն մարգակերպ ուրուականն և 'ի միւս կողմն Թռչնանձև ուրուականն. իսկ 'ի տեղիս տեղիս կարմրագոյն ներկեալ զարդք կամ նշանագիրք: Ապա և յա

Հեկէ կամարին փորեալ կան յապառաժի անդ երկու ննջարանք. յորս երևին կմախք և ոսկերք մեռելոց. յորս ընդ մերձիլն 'ի փոշի լուծանին ։ 'Ի մի կողմն ապառաժին գոյ անձուկ մուտ, և 'ի ներքս նոյնօրինակ վիմափոր սենեակ և անդիք ոսկերատեաց ։ Յերս անդ 1830 տարւոյն, մերձ 'ի քաղաք անդր բացաւ բլուր մի մեծ քարաշէն. յորում եդեալ կայր մարմին վաղեմի ինքնակալի ուրուք. ուր գտան Է ոսկերաց զանազան ձևով ոսկի զարդք փոքրիկք մարդաձևք, ծաղկաձևք են. նաև պէսպէս վաղեմի ուրուականք. ևս և օտեաց իսկ. յորոց ամենապայծառք քանի մի օրաց ծանօթութի տուաքեցան յարքունիս 'ի Պետրբուրգ ։

537. Մերձ է Մոլթէկէ բլուրն դեղձանագոյն. յորում բազում ինչ կարծի լինել. որ է տեղի հանքայոյն. առ որով գոյ և ընդարձակ բերան և ստորերկրեայ ճանապարհ, զոր բացեալ են սակս հանքաց ։ Պատմեցեն Թաթարք թէ 'ի Պուղասնէն գիւղն բացեալ եղև բերան, և թորթորեաց գեղեցկանա տղմալից. որպէս և 'ի բազում տեղիս գտանին. այս նիւթ բաղադրեալ է 'ի հողոյ, 'ի բիւրեղէ, և 'ի ծծմբախառն երկաթոյ ։ Մերձ քան զՄիսամիշ պուանի գան քանի մի գուբք հանքայինն իւղոյ. ուր յերևս ջուրց հաւաքի կանաչագոյն ձէթ դիւրավառ և բարկ. զոր հաւաքեալ Թաթարք վառեն 'ի գիշերի, և կոչեն Նէֆթ եաղը ։ Նոյնպէս և 'ի տեղիս ինչ ցամաք կղզւոյս բացեալ եղեն այսպիսի գուբք հանքայինն իւղոյ ։

ԿԵՐՃ ՔԱՂԱՔ կամ ՊԱՆՏԻԿԱՊԷՈՆ

538. Էր հաշտակաւոր Թագաւորանիստ քաղաք կառուցեալ 'ի նախնի Յունաց հանդէպ Թերակղզւոյն Թամանու 'ի ծայր մեծի հրուանդանին որ է 'ի մէջ Սևերձի և Ազովի ծովէի. զորմէ ասէ Ստրաբոն.
* Մեծ իմ ոչ յաղեին 'ի հայրէն յայս քաղաք և 'ի
„ նկատեալն զնաւարանն, զնաւահանգիստն, զնաւս,
„ զձեռագործս, զշուկայս և զծառատունկս ։ Հր.
Է. գլ. ։ Այժմ ամենայն մեծագործութիւնք անտանաւոր քաղաքիս քանդեալ և աւերեալ են. մինչ զի հազիւ նշմարեսցուք զհետս աւերակաց ։ Այսկայն քեղե-

ցին է յոյժ գեղեցիկ և վայելուչ ծոցն յարեւելակողմն քա-ղաքին, ուր գայ 'ի բերանն կայս Սեաւ ծովու առ Ամ-աստրան, որ պատսպարէ զնաւահանգիստն ։ Նոյնպէս 'ի հարաւակողմն բերդին գոյ այլ ծոց կամ նաւահանգիստ խոր 15 կանգուն, ուր մտանեն նաւք ։

Այժմեան բերդն Ամաստրի շինեալ է 'ի մէջ երկուց ծոցից 'ի վերայ փոքրիկ թերակղզւոյ, գեղեցկագիր եղկնապարիսպ. այլ զուրկ յամրութենէ, և 'ի նախնի մեծագործութեանց ։ Ամրանոց ոչ տեսաք այլ ինչ շինութիւն, բայց 'ի հնաշէն և վայելուչ եկեղեցւոյն Յունաց կառուցելոյ առընթեր ծովակողմեան խորամին 'ի վերայ 4 մեծագոյն մարմարեայ սեանց կամարաշէն և բարձրագմբէթ յանուն սրբոյն Յովհաննու. բարձրութիւնն է 30 ոտնաչափ.

Այս եկեղեցի յառաջագոյն փոքր էր. այլ յետոյ ընդարձակեցին. ունէր արձանագիր մարմարիոնեայ, զոր փոխադրեցին 'ի Բեզգրաւուրկ. յորոյ վերայ փո-րագրեալ կայ այսպիսի յիշատակարան. Ο ΑΥΤΟΣ ΘΕΙΟΣ ΝΑΟΣ ΣΟΚΟΛΟ ΜΗΘΘΗΤΕΛΕΙΩΣ ΕΝ ΕΤΕΙ ΣΩΤΗΡΙΩΔΥΣΙ ΤΡΙΑ-ΚΟΣΙΩ ΕΚΤΟΣ ΚΑΜΠΑΝΑΡΙ ΟΥ ΚΑΙ ΜΕΡΟΣ ΤΙ ΕΚΕΙΝΟΥ ΠΟΤΗΔ ΩΚΟΔΩΜΗΘΗ ΚΑΙ ΟΛΟΣ ΕΥΥΡΕΠΕΙΘΕΙ. Այս տաճար շինեցաւ բոլորին յամի փրկութեան երեքհարիւրորդի առանց զանգակատան և մասին շինուածոյ. որոյ այժմ զարդա-րեցաւ ամենայն ։ 'Ի հիւսիսակողմն որմոյն այսր եկեղե-ցւոյ պատուարացու տեսաք մարմարիոն վէմ, և 'ի վերայ գիր ΘΕΩΝΑΤΙΕ ΔΙΟΝΥΣΙΟΝ ΑΜΑΣΤΡΙΑΝΕ ΧΑΙΡΕ. * Թէո-նատէ Դիոնիսիոս Ամաստրիացի խնդա ||. Առընթեր դրանն գոյ այլ մարմարեայ փորագրեալ 'ի վերայ արձան. առ ո-րով և գիր. ΠΟΝΔΙΤΙΕΚΟΣ ΑΧΑΙ ։ Նորա փորագրեալ կայ կին նստեալ յաթոռի. որոյ հանդէպ և զօրական մի եգեալ է զմերկ բազուկ իւր 'ի վերայ յենարանի. առ որով գոյ սեղան, և ընդ նմին երկու մանկունք. իսկ մերձ առ կինն կանգուն կայ աղջիկ մի ։ 'Ի ներքին կողմն այլ վէմ մարմարիոնեայ, և 'ի վերայ հետք ոտից մարդոյ մնացեալ 'ի նախնեաց ։

539. 'Ի մէջ բերդին տեսաք մեծ արձան պատուա-կանագործ յղկափիր մարմարիոնէ անգլուխ. յորոյ զգես-տուց զուշակէ լինել արձան Ասկղեպիոսի (Պտկ. 66) ։ Այս արձան հանեալ են 'ի փոսէ անուանի ծովափանց. առ որով գոյ վերնախարիսխ և պատուանդան մար-

մարմնեայ ։ Այս կուռք ունէր տուն և տաճար . զոր յիշէ Պորաքոն (543) ։

Տեսաք նաև առաջի բերդին 'ի մէջ ծովու զմեծագործ ամբարտակն շինեալ 'ի Նախնի ժողովրդենէ առ կս ապահովութեան նաւուց՝ երկայն 250 քայլ ։ Այժմ ջուրն քայքայեալ է զարտաքին քարինս . ամբողջ կայ յատակն 'ի մէջ ծովուն ։

Հանդէպ բերդին է մշտահոս աղբիւր բարեջուր, և առ նմին պալատ քաղաքապետին ։ Առաւ սկսանի շուկայն և այժմեան քաղաքն Պերճ միակարգ երկայնեալ դէպ 'ի դաշտն մեծ . ուր յերկուց կողմանց շինեալ են տունք և օթևանք . անդ է և եկեղեցին Պռուսոյ ։ Առ բերդին դուր հին շինուած և գեղեցիկ արձան հիւպատոսի տեղւոյն ։ Նազով արձանք խարիսխք և սեղանք մնացորդք Նախնի շինութեանց եդան 'ի հին եկեղեցւոյն Յունաց . որպէս և յայլ շինուածս ։ Գտաւ երբեմն մարմարիոն վէմ երկայն երկու կանգուն և լայն մի . փորագրեալ էր 'ի վերայ յիշատակագիր . ΑΓΑΘΗ ΤΥΧΗ . զոր հանեալ 'ի յատակէ աւազանին հին աղբեր եդեալ էին 'ի միում տան ։

Այս վէմ 7 թզաչափ ցուցանէ տեղան ինչ կոչեցեալ 'ի Նախնեաց Triclinium . որ 'ի հն . էր 'ի որահի՝ ուր կային 3 թիկնաւոր բազմոցք . յորս Նստէին յաւուրս տօնից ։ Գտաւ յայս քաղաք ազնիւ քար մի մեծ, յորոյ վերայ փորագրեալ էր զոհագործութիւն ինչ հեթանոսաց առաջի տաճարի միոյ . որոյ 4 սիւնք երևին, և 'ի ձախակա անդր քանդակեալ կայ գլուխ մարդոյ, և յերկուս կողմանս երկու դլջինք ։

'Ի գաւթի անդ երևի եղն մի պատկազարդ և առաջի նորա սիւն հատեալ և առ նմին 6 զոհարարք զգեստաւորեալք, առաջինն ունի 'ի գլուխն գառնիդեայ պսակ, և յաջոյ ձեռին այլ պսակ . իսկ 'ի ձախն սուր երկաթի ։ Միւս առ նմին պատանի պատկաւոր ունի 'ի ձեռին անօթ հրալիր, ուր դոյ այլ զոհարար՝ լախտ 'ի ձեռին . 'ի միջավայրին կայ քուրմն մօրուաւոր ծեր ծածկեալ զգլուխ . և առաջի իւր այր զօրաւոր՝ լախտ 'ի ձեռին . իսկ զկնի՝ քրմին կայ քրմուհի մատուցանող զոհին ։

540 . 'Ի վերայ աջակողմեան Նաւահանգստին է լեառն գեղեցկագիր . յորոյ վերայ երևին մնացորդք առ.

զօրապետաց ։ Ընդ նմին եղեւ 'ի ծայր լերին ասեալք զա-
պատեալ բոլորաձև բարձրացեալ, և յորկանին կող-
մանս փորագրեալ յապառաժի նաւաստեաց նման զարհի ։
Ըստ անդի թէ մեծն Աղեքսանդր եա կախել զայս զանց
ապառաժեայ, ուր նստեալ հայեր 'ի ծովն ։ Իսկ 'ի միւս
կողմանէ կոփեալ է ապառաժն ատամնաձև, ուստի
եղանէր 'ի վերայ բլրակին դիտել զշրջակայս ․ յորմէ
տեսանք ոչ միայն զամենայն վայրս Ալեքսի, այլև զԹրա-
կան, զՊերբերդաշ և զԱնդար ։ 'Ի վերայ լերինս երևին
աւերակք ինչ բնակութեան ։

Ըստ աւանդութեան հաւատարին թէ աստ է գերեզման Աղեքս-
անդրայ ․ նախքն իբրև փորեալ են յապառաժին անդ,
այլ ոչ գտեալ ինչ ։ Իսկ զի Աղեքսանդր վախճանեալ
եղև յԱսիա երբ արդեն իւր փառանակ մնանելոց զնա
'ի ձեռս Հռովմայեցւոց ․ մինչ զի անձնարացեալ նորա
էառ Թոյն, նախ եա երկուց դստերացն Ալիսայի, որ
խօսեալ էր արքային Կիպրոսի, և Աղեքսանդրի,
որ խօսեցեալ էր արքային Եգիպտոսի ։ Բայց իբրև
տեսեալ եթէ Թոյնն ոչ ինչ ազդէ յինքն՝ անկաւ 'ի վե-
րայ սրոյ իւրոյ և մեռաւ, և զմարմինն ածին յԱմիսոն,
և անտի 'ի Սինոպ 'ի գերեզմանս նախնեաց իւրոց
(Պլուտ. 80) ։ Ամենայն կարծեցին թէ մնացի մարմնոյն
Աղեքսանդրայ իցէ 'ի բլրակին կոչեցեալ Բուֆուն օղու 4
վերստ հեռի ․ Թերևս իցէ ի Աղեքսանդրայ ․ ուր յա-
ռաջ զայր արամ, որ արամամնկինարար եղերէր 'ի մի
կողմն Թերմոդոնէին ։ Աղեքսանդր բազում մեծագոր-
ծութիւնս և քաջութիւնս արար յայսոսիկ կողմանս,
մինչ զի մերձակայ լեառն մինչև ցայժմ նորին անուամբ
կոչի Աղեքսանդր դաղի ։

541 ․ Ընդունելի է Հին մայրաքաղաք որպէս Թուի՝
նուիրեալ անուամբ Ընան լճոյ՝ եղև կառուցեալ 'ի գիւղի
4 վերստ հեռի յԱդենդքագլէն ․ ըստ որում երևին
հետք ինչ շինուածոց ։ 'Ի բազում տեղեաց եղանեն 'ի
հողոյ մնացորդք հնութեանց ․ տեսաք հին անօթս աղ-
նուանիւթս զանազան ձևով, որք ընծայեալ էին կաւոյ ։
Ընդ որս կայլին նեղափող անօթք արտաստուաց, զորս
ընծայեցին մեռելոց և եղեալ կաւոյ (518) ։

Հեռի 'ի Ալեքսէ 3 վերստ 'ի կողմն Այէնի գաւէի յա-
ռաջս մեր շինեցաւ ընդարձակ արգելանոց քաղաքին
բանտարկեալ 'ի զանազան վայրս և 'ի անձնեակս, ուր յա-

Ճանանն նաւք 'ի ծաղկեցուցանել զվաճառականութիւն տեղւոյս ։

Յամի Տն 1820 արտաքոյ քաղաքին փորելով գեղջուկ մի՝ գտին տապան միակտուր, որ էր դուռն գերեզմանի, յոր մտեալ տեսին անօթ դատարկ և նմջարան յանփուտ փայտէ, պատեալ 'ի տեղիս տեղիս ոսկի թիթեղամբ, և 'ի վերայ 4 խարսխաց 4 ոսկի արձանք մանունք. իսկ 'ի մէջ նմջարանին ոսկի պսակ օձապատ կրկին շրջանակօք. այս էր գերեզմանն հին Թագաւորաց Սոփորի ։ Դարձեալ գտաւ յայլ բլրի ոսկի խաչ և ոսկի շղթայ, զորս տարեալ 'ի Պետրպուրկ եդին յարքունի գանձատան ։ Թողում յիշել զայլ հնութիւնս, որք անպատկառ ելանեն 'ի հողոյ. և զորս տեսաք 'ի Պրէֆէ (515) ։

ՎԱՍՓԱՐՈՍ ԳԻՄՄԷՐԵԱՆ

542. Է անուանի նեղուց 'ի մէջ Ազովայ և Եւրոպիոյ, կամ 'ի մէջ Կերչի և Թամանու. որոյ հարաւային բերան 'ի կողմն Սեւ ծովու բացեալ լինի առաջի Պողլրչաշին, և անձկացեալ առաջի Ենիքալէին երթայ ցհիւսիսային բերանն յԱզովու ծով ։ Սուրանօր տեսանք 'ի տեղիս տեղիս աւազուտ պատճառեալս 'ի տղմոց Կուպանին, մանաւանդ 'ի կողմն ասիական, ուր ծանծաղ է յոյժ ծովն և վտանգաւոր նաւուց ։ Երկայնութիւն նեղուցիս 'ի հարաւոյ 'ի հիւսիս գրեթէ 40 վերստ. իսկ լայնութիւնն է անհաւասար. 'ի Կերչէ մինչև ցԹամանն է 28 վերստ ։ Մեծ ծոց նորա տարածի դէպ 'ի Թեմրուք իբր 40 վերստ. բայց առաջի Ենիքալէին 7. և երբեմն 4 մինչև ցասիական ցամաք լեզուն, որ ասի Ակլէանայա քօսա ։ Այս երկայնաձիգ ցամաքք են պատճառեալք 'ի գետոց անտի (Պլին. 8 ։) Հոսումն այսր նեղուցի միշտ է երևելի 'ի մակերևոյթն, և գնալով դէպ 'ի բերանն անձուկ՝ ձևանայ երիզ ինչ յերես ջուրց. ուր հանդիպի դեղնորակ ջուր Ազովու՝ երկնագոյն աղի ջուրց նեղուցին ։ Առաւել խորքն տեղին է 17 ոտն, 'ի հեռաւորութեան միոյ վերստի 'ի բերդէն. ուստի անցեալ 'ի ծովն Ազովու պակասի մինչև ց14 ոտն ։ Սոր յանձանս են պատուական մեծամեծ ձկունք. մանաւանդ Սուրինա

կամ Խուլուխոս կարի մեծ ձուկն. զոր հանեալ 'ի մաս-տի գործեն Զէլէմ, և տանին յամենայն աշխարհ : Բանկի այս ձուկն ձմերէ 'ի խոր տեղիս 'ի ծովու Ա-պաղայի, և 'ի գարնան խմբովին գնայ յԱզախ ծով. թափել զձուս յեղեգնուտս Տօնաւիս գետոյ :

543. Յամաք կղզին Թամանու երկայնեալ 'ի ծով անդր դէպ 'ի Խրամիշ պուռնի. առաւել մերձ էր յա-ռաջ յեւրոպեան ցամաք Կերճի. այլ զկնի երկրաշար-ժութեան՝ մեծ մասն անյայտ եղև ասեն : Կայ փոքրիկ կղզի մերձ 'ի Խրամիշ պուռնի, որ յառաջ կցեալ էր ընդ ցամաք 10 վէրստ հեռի 'ի Կերճէ : Աստանօր է յոյժ ցուրտն Վոսփորոսի 'ի ձմերան. մինչ զի յա-ճախ սառի ողջոյն նեղուցն, և ոտիւք անցանեն յայն-կոյս. որպէս եղև յաւուրս մեր 'ի 1825 : Պատմի թէ Միհրդատ մեծ յաղթութիւն արար 'ի վերայ սառու-ցեալ նեղուցին ցամաքային զօրօք : Յիշէ Ստրաբոն, թէ զօրապետքն թողեալ զնաւախումբն յամարային, պատերազմեցան 'ի ձմերան ընդ գիմմէրացւոց որք էին ձիաւորք. Կոչէր է :

Պատմէ նաև ինքն թէ * Երատոսթէն աւանդեաց „ մեզ յիշատակարան ինչ գրեալ 'ի վերայ պղնձի անօ-„ թոյ եղելոյ 'ի տաճարն Ասկղեպիոսի 'ի Փանտիկա-„ փէոն : Այս անօթ բեկեալ էր (ասէ) 'ի ցրտոյ, և „ յիշատակարանն էր այս ինչ. Եթէ իցէ ոք որ ան-„ հաւան գտցի սաստկութեան ցրտոյ որ առ մեզ, հա-„ մոզեսցի 'ի տեսանելն զայս անօթ. զոր քուրմն Ստրա-„ տիոս եդ աստ ոչ իբր ընծայ արժանավայել աս-„ տուծոյն, այլ որպէս յիշատակ ինչ սաստկասառոյց „ ցրտոյ || : Գտաւ ընդ հողով և արձանաքար, որ ցու-ցանէր զչափ լայնութեան նեղուցին. զոր առեալ էին հուանաւ, յորժամ սառուցեալ էր ծովն :

ԹԱՄԱՆ կամ ՓԱՆԱԿՈՐԻԱ

544. Ի ցամաք կղզի յայնկոյս Վոսփորեան Կրճի յԱզախ, բարեբեր և վայելչադիր պարագրեալ 'ի հա-րաւոյ 'ի Սեաւ ծովէ. յարևելից 'ի Կուպան գետոյ, 'ի հիւսիսոյ յԱզախ ծովէ, և յարևմտից 'ի Վոսփո-րէ : Սա գոլով մասն Վոսփորեան Թագաւորութեան,

ունէր 'ի հնումն արքայանիստ հռչակաւոր քաղաք Ֆա-նակօրեա անուամբ կառուցեալ 'ի հին Յունաց. որ յե-տոյ կոչեցաւ Թամատարխան, որում տիրեցին Խազարք։ Նոյն յամի Տն 965 Ռուս մեծ իշխանն Սվեաթօսլավ Իղօրեվիչ յաղթանակեալ եառ 'ի Խազարաց զայս երկիր։ Նա ևս Ս. Վլատիմիր 'ի բաժանել զժառան-գութիս որդւոց իւրոց ետ Թամանն եօթներորդ որ-դւոյն Մստիսլավայ. որոյ յաղթեալ մերձակայ իշ-խանաց՝ հաստատեաց զիշխանութիւն Թամանայ և զայն քաղաք արար իշխանանիստ. ուր հետզհետէ տիրեցին Ռուս իշխանք մինչև ցժամանակս Թաթարաց։

Ի վերջին ժամանակս գտաւ ընդ հողով հին բեր-դին տապան երկայնաձև Գլեպ իշխանին փորագրեալ յամի Տն 1068. որ տիրէր անդ յամի 1064. այլ 'ի նմին ամի հալածական եղև 'ի Ռօսթիսլավայ իշխանէ. բայց զկնի մահու նորա անդէն տիրեաց Թամանայ. ապա յետ 4 ամաց չափեաց զկիրճն՝ որպէս գրի 'ի վե-րայ այնր տապանի այսպէս. „Յամի 6576 (Տն 1068) ինտիկտիոնի 6. Գլեպ իշխան չափեաց զծովն 'ի վերայ սառուցից 'ի Թամանէ մինչև ցԿէրճ 8054 սաժէն (եռականգնաչափ)„։

Նոյժմեան Թամանն է բերդաքաղաք քարաշէն ամ-րացեալ ընդդէմ Չերքեզից. ուր է պալատ մեծ զօ-րապետին Չեռնօմօռսքի խաղախաց Քօշչէվոյի (382). նաև բնակութիւնք զինուորաց առ ծովեզերբ, որպէս տեսաք։

Ուրանօր 'ի հնումն եղեալ էին երկու աւերակք վե-նետիկեցւոց. տեսաք և քանի մի դրամս (531)։

Յառաջագոյն կային 'ի սմա քաղաքում ամրոցք և բնակութիւնք. այլ այժմ չիք։ Ի մէջ աւերակաց հին Թամանու արտաքոյ ամրոցին գոյր մեծ աւազան սա-լաքար հին Ճարտարապետական ձևով և արձանագիր յունարէն։ Ուր յառաջ կային մեծամեծ պարտէզք և այգիք. ամենայն ուրեք երևէին մնացորդք հնու-թեանց, կիսարձանք և սիւնք ընդ վերնախարսխաց 'ի սպիտակ մարմարիոնէ։

Այս երկիր 'ի հն. Թիօֆ կոչեցեալ. է եռանկիւ-նաձև բաժանեալ իբր յերիս ցամաք կղզիս 'ի Թաման 'ի Թէմրուք և յԱնա. զոր տէրութիւն Ռուսաց ետ 'ի բնակութիւն և 'ի պահպանութիւն Զափօռօժսքի

խաղաղական, որք այժմ մերձ գալով [illegible] ծովեա կղզե-ցան [illegible] խաղաղական (582):

Թասմանն է հարաւային ցամաք կղզի շրջապատեալ յարեւելից և ի հարաւոյ ի Կոսոպանէ, յարեւմտից ի Ս[illegible], և ի հիւսիսոյ ի ծոցոյ [illegible]: [illegible] այժմ շինեցաւ առ ծովեզերբն երեւելի աւան. ունի բազում շինուածս, քարաշէն եկեղեցի, որ երեւելի էր [illegible]. և 6 բարեձեւ աղբիւրս: Շուրջանակի [illegible] [illegible], պարտէզք և անդաստ այգիք. ուր գայ և [illegible] [illegible]. [illegible] է հանդէպ և սպիտակ, որպէս [illegible]: [illegible] երկիրն է անհաւասար և [illegible]. [illegible] հողն [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible]: [illegible] են [illegible] և ջուրն. [illegible] երկիրն [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]. [illegible] է [illegible] [illegible]:

[illegible] Թասմանիա [illegible] [illegible] յաւանէն մերձ ի ծովն [illegible] [illegible], երկու [illegible] ընդ երկայն, [illegible] [illegible] [illegible]. ուր գան 80 [illegible] և բազում [illegible] շինուածք. Թէպէտ [illegible] է, բայց [illegible] է և [illegible]. [illegible] [illegible] [illegible] քարաշէնս և [illegible]:

Ի բազում [illegible] գան [illegible]. [illegible] մեր երեւեցան [illegible]. [illegible] է Թէ ի ծոց [illegible] [illegible] [illegible] [illegible] ընդ [illegible] [illegible] [illegible] և [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ի [illegible] երկիրն [illegible] [illegible] է [illegible]. [illegible] [illegible] Թ[illegible] [illegible] Թասմանն [illegible] Թ[illegible]. [illegible]: [illegible] երկայնութիւն [illegible] [illegible] ի Ս[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. ուր [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] ի [illegible] [illegible] [illegible] [illegible] Չ[illegible], որք [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible]: [illegible] [illegible] [illegible] Պ[illegible]. [illegible] 3 [illegible] 5 [illegible] [illegible]: Ի [illegible] [illegible] գան [illegible] [illegible] Պ[illegible]. [illegible] գան 40 և մինչև 60 [illegible]: Պ[illegible] և Կ[illegible], [illegible] [illegible] 100 [illegible]: [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. ի [illegible] [illegible] Ս[illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] գան [illegible] [illegible] և ի [illegible] [illegible]. ի [illegible] [illegible] [illegible]-

ունել այլ ամանէն 'ի հիւսիսոյ վայրս 'ի ձեռն բոլոր 'ի վայրկենի :

Այս է ցամաքակղզի աշխարհաձև 'ի հիւսիսակողմն Թամանու. յորմէ բաժանի 'ի ձեռն ծոցոյ Ենի Սու-փորայ, և կցի ընդ այն նեղ պարանոցաւ ընդ արևելեան ծայրին մերձ 'ի լիճն Սխոքնիկ, որ և երկայնեալ ընդ արևմուտս մերձենայ յԱչենիգալէ. ուր 'ի գլխոյ անտի շարունակի աւազուտ 'ի ծովակղզի խորև ընթ խողի սրածայր գետոյ 'ի Սերճ. զոր Թաւթարք կոչեն Չօշղա. որ է խաղ: Օայս երկիր պատի 'ի հիւսիսոյ և յարևելից ծով Ազախու. յարաւմ զան երկու գիւղօրէք միայն Թաթարաց և միւսն խաղախաց: Երկայնու-թիւն ծոցոյն է 18 մղոն ակնաւ յարևմտեան ծայրէ մինչև ցպարանոցն. իսկ միջին լայնութի 3: Նշմարելի է. երկայնութի ցամաքին Թամանու մինչև ցպարանոցն :

Նման ակնամեն պարանոցն Փէրէքօփ. որ է աւազուտ նեղ և երկայն 8 մղոն. յանձակողմն է լիճն, զոր Թաթարք ձայնեն Սխոքնիկ. և 'ի ձախակողմն է ծով Ազախու: 'Ի սկիզբն պարանոցին կառուցեալ կայ կամուրջ փայտաշէն մեծ, առ որով անցանէ ջուր լճին և հոսի 'ի ծով անդր: Նաև 15 մղոն անդր է վայրն կա-չեցեալ Ծուռ Թեմրուքի, որ է հեղեղատ լճին՝ երկայն 7 մղոն. յերկուց կողմանց գայ եղեգնուտ, ապառնօր միանան ջուր լճին և Ազախու. է որ անցանեն ուղև-որք: Այնպէս ջուր հեղեղատին 'ի տեղիս տեղիս զաղով խոր՝ կառուցեալ կան 8 կամուրջք. յետինն է մեծա-գոյն, ընդ որով հոսի ջուր լճին մերձ: Նաև մինչև յԱչու 'ի ծովեզերս են մեծամեծ ձկնարանք :

Սխոքնիկ է լիճ երկայնաձև պատուաւոր, որ անկանի ընդ մէջ Կուպանին և պարանոցին. ընդ արևելեան ծայրին հոսի ջուր լճին 'ի Կուպանէ և լճացեալ գնայ ընդ երկայնութիւն երկրին Թամանու 60 մղոն և հոսի 'ի ծով Ազախու: Նոյնք ընդ որ հոսի ջուր լճին կոչի Արապատ. այսինքն Պատաառուած : Ջուր լճին է քաղցրահամ և աւազք. կարծեն ոմանք թէ այս լիճ ի-ցէ ծոց Ազախու յետոյ բաժանեալ 'ի ծովէ անտի 'ի ձեռն աւազուտին (444) :

Օպատնեղիկոս է գիւղ առ լճին խորև 'ի միջակայրս. ուր զան 200 տունք խաղախաց հանդերձ քարաշէն եկեղեցեաւ: Նա երի գեղջ գոյ լեառն, յորոյ 'ի կա-

սար երեւի Խնձորաղանք, բլուր տղմոյ բոլորշի բարձր երեք մղոնաչափ. 'ի միջավայրին է երեւելի բերան խոր-հորդոյն Վուլքանոյ ձայնեալ, յորմէ բղխի տիղմ՝ թոյլ և ցուրտ յոյժ. տրամագիծն է երկկանգնաչափ: Որ երբեմն երբեմն սաստիկ ցայտէ ձայնիւ մեծաւ. և տիղմն՝ է զի մղոնաչափ, և է զի կանգնաչափ բարձրանայ: Ունի զերկու մեծ ցայտս 'ի կողմն արեւելեան միատեսաչափ տրամագծիւ և զերկուս փոքունս 'ի կողմն արեւմտեան: Է զի մինն և է զի միւսն ցայտէ. է զի մեծաձայն, և է զի մեղմաձայն: Այս տիղմն հանքային հոսի 'ի վայր միշտ յարեւմտեան կողմանէ, և ցամաքեալ առ սակաւ սակաւ լինի իբր կաւ մոխրագոյն. 'ի սկզբան անդ ցոլանայ փայլեալ յարեգդեմ: Ջրոտումն տղմոյն բաժանի 'ի զանազան ձիւղս գնալով իբրեւ 300 քայլ հեռի: Բայց յամենայն ընթացս միշտ հոսի ընդ արեւմուտս և ոչ երբեք դառնայ յարեւելս:

Բնութիւն այսր տղմոյ կարի իմն սեղմիչ և ցուրտ է. մինչ զի ոմն 'ի մէջ եդ. զմատն 'ի տիղմ անդր, իսկոյն ցամաքեալ տղմոյն՝ սկսաւ սեղմել զմատն, մինչև դժուարաւ շարժել յօդուածոյ մատին. ապա սկսաւ ցրտութիւնն տարածիլ 'ի ձեռն, անտի 'ի բազուկն և ընդ բոլոր մարմինն. 'ի շարժել բանի զմատն, սկսաւ ամին ցաւիլ: Իսկ արտաքուստ բոլորովին սառուցեալ էր ձեռն. և ս և բազուկն: Այլ իբրեւ մաքրեաց զմատն 'ի տղմոյ անտի՝ սկսաւ թմրիլ: Զկնի բազում աւուրց իբրեւ փորձեցաք զցամաքեալ կաւն՝ տակաւին պահէր զսեղմիչ զօրութիւնն և զհոտն ծծմբային, այլ կորուսեալ էր զցրտացուցիչ զօրութիւնն: Դառն է յոյժ համն. զոր և մերձեցուցեալ 'ի ծայր լեզուին, ցերկար ժամս ազդէր համն:

Փոքր ինչ առաւել գոյ այլ բերան, բայց փոքրիկ իբր կանգնաչափ. սակաւ ցայտէ տիղմն ըստ մեծութեան աչաց, և հոսի նոյնպէս ընդ արեւմուտս: Մնկայն 'ի հոսիլ անդ փախէ զընթացս՝ բաժանեալ 'ի բազում ձիւղս: Խուսի թէ ընդ առաջ եկանեն հակակրական նիւթք ինչ: Ընդ տիղմն գտանին և դեղնագոյն կամ ալխտակագոյն քարինք թքեալք 'ի բերանոյ անտի՝ թող զայն զի ջերմութիւն արեւու անդրադարձուցանէ զտիղմն ծամբակչքիւ. զոր լուծեալ, և եդեալ 'ի նմին զմատն՝ ցաւ ձգողութեան ընթացաւ:

Դ՚ վեր անդր երկու երևելի Թևք Կուպանին բա-ժանեալք անկանին յԱզու. և կոչին Չեռնայա Պրօթօքա, և Գուպանչէյ Եէրէք. ուր գան և աղէհամք. միոյն շրջապատն է 4 վէրստ։

ԹԷՄՐՈՒԿ

545. Ի փոքրիկ աւան բարձրադիր և բարեշէն, ուր է բանի և ջուրն առողջարար. բնակիչք են Չեռնոմօռաքի խազախք, ունին քարաշէն եկեղեցի։ Շուրջանակի գոն բազում գիւղօրէք. որոց բարեբեր դաշտք լի են անտառովք և մասամբք անձնային բարեաց։ Ի տեղիս տեղիս երևին աւերակք հին դղեկաց և մարտկոցաց։ Պաւլյապա հեռի է աստի 16 վէրստ. իսկ լայնութիւն երկրին է 12։ Ի Թէմրուքէ գնալով ընդ արևելս 20 վէրստ՝ եզերի ճանապարհ ծովեզեր. աստի և անդր դառնայ ուղին ՚ի ծովէ դէպ ՚ի Կուպան և գնացեալ 60 վէրստ՝ համդիպի Կոփիլ հին քաղաքին Թաթարաց, որ թարգմանի դռնաւոր. զի աստի իբրև ընդ դուռն հոսի երևելի թև Կուպանին, և անցեալ ընդ Ազու՝ թափի ՚ի ծով Ազախու, ընդ որ անցանեն լաստափայտիւ. զոր Թաթարք կոչեն Կյօբրիւկամին և Խազախք Փառօմ. յի հոսումն։

Աստի գնալով ընդ երկայնութիւն Կուպանին 100 վէրստ՝ համդիպի Եկատերինոտար նոր գլխաւոր քաղաքին Չեռնոմօռաքի խազախաց. ուր գոն 1000 տունք հանդերձ քարաշէն եկեղեցեաւ. ուրանօր լինի տօնավաճառ։ Աստ յառաջագոյն էր անտառ. զոր հատեալ խազախք շինեցին քաղաք։ Գլխապետ նոցա Ատըղ-չէվոյէ կոչեցեալ. որ է Ճէնէրալ մայօր, նստի ՚ի Թաման (544)։

Աստի մինչև ցԱնապա քաղաք ընդ երկայնութիւն Կուպանին է 40 վէրստ. և անտի մինչև ցԳէօրգիէվսկ մայրաքաղաք է 260 վէրստ (608)։

ԿՈՒՊԱՆ կամ ԱՆԹԻԶԻԹԷՍ

546. Ի երևելի գետ հոսեալ ՚ի կողմանց Կովկասու յապառաժէ անտի ձայնելոյ Էլբրուս գրեթէ 250 Վէրստ հեռի. ուր է սահման կառավարութեան Կով-

կասու. Այս գետ բաժանէ զՉերքեզստան 'ի Թա-մանէ. յորմէ պատճառաւ ընդ Հնանս և Չերքեզաց թէ յերկիրն Թամանու, և թէ Անափայի: Նաւելով ան-դամ բաղդաւէք նորա ողողանեն զերկիրն. յորում դաշտա-նոյն և կղզիք ևս: Ջուր գետոյն է բարեհամ օգտա-կար և թեթև, այլ գետնաջրոյն պղտոր. որ ընդ բե-րանն Կըզըլգաշ Թամիի 'ի Սեաւ ծով 12 մղոն հեռի 'ի Թամանէ:

Աներսան Կուպանին Լճին ձախակող՝ հաղորդի ընդ Սեաւ ծովու 'ի ձեռն կարճին փակելոյ 'ի մէջ երկուց լեզուաց, որ կոչի Պօղազ. որ է Կըզըլգաշ. որում հա-ղորդի այլ Լիման. պատճառն Թամանոց, թէ այս Լի-ման երբեմն էր աղեհան իբր ապաշեալ լիճ. այլ մար-դիկ բաղձացեալ բացին. կամ Կուպան ողողեալ ան-կաւ 'ի նմին, և 'ի ձեռն փոքրիկ վտակին հաղորդի նմին: Ընդ բերանն Կուպանին լաստիւ անցեալ գնան ընդ երկայն ատողոս Անափայի. ուրանոր գան և աղէհանք:

Հեռի մինչև զԱնափա բերդ՝ է 36 մղոն. ուր նաւի փոքրա Օսմանեանց և փոյթ մեծ ունի զարձա-ցանել զծառայաղաշտ Չերքեզս և Աբազայս 'ի գետ իւր: Տես 'ի Պէյսոնէլ. 179:

547. 'Ի կողմն Կըզըլգաշի 'ի հնումն գոյր հաստա-բնակութիւն ինչ Միլետացւոց. քաղաք նոցա կո-չէր Կորգիպպէ: Տեսաք դրամ նոցին, 'ի մի կողմն գլուխ Ապողոնի, և 'ի միւսն գիր ΓΟΡΓΙΠΠΕΩΝ. այսինքն Կոր-գիպպեացւոց և 'ի վերայ այլ դրամոյ տեսաք գլուխ նա-ւու. որ է նշան թէ ունէին նաւս և երթևեկութիւնս նաւուց:

ԽԱՄԻԿ ԳԱԽՌՆԻ

548. Ի երեկելի հրուանդան Սաֆարաշի այսինքն քիթ 'ի հիւսիսային բերան Կերճին մղոնաւ հեռի 'ի Կերճէ հանդէպ Թամանու 'ի կողմն Եւրոպիոյ. տա-րած է գեղեցիկ ծոց մինչ 'ի ցամաք Կերճի. որ երբեմն իբր պատսպարան ինչ ծովու. ուր ապահովանան նաւք 'ի ձմերային. իսկ յամարան անդ արգելանին նաւք մնալ 'ի ժամանակաւ: Տէրութիւն Ռուսաց տեսեալ զապահովութիւն նաւահանգստիս և զպիտանութիւն տեղւոյն՝ կառոյց արգելանոց մաքսից ապաքինե 'ի

պաշտպանութեան Սոփորոսին նաև մեծամեծ շահիճա-քանս տանս աղքատին ախարոյից և նուաց. խորհի եւ տանել քաղաք վաճառականութեան զԱերճ հաստա-տեալ անդ և մաքսատուն։ Մերձ է առ երևելի ա-ղեհանն Ունօրէուղաղ, եւ ո և Ր ունիկայից. Թէպէտ այժմ չէ այնչափ յայտնի։

'Ի կողմն Սեաւ ծովու հանդէպ լծին (535) մերձ 'ի ցամաք երևի 'ի ծովափին տապատաժն Լայենն գայն. որք իբր առապատա նաւաս երևին 'ի հեռուստ. բայց է կղզի եռապղուկս, մեծ մասն ծածկեալ ընդ ջրով։ Հա-րաւային մասն Աերճի կոչի 'ի Խաթարաց Վալկոլ. ուր 'ի հնումն էին այգեստանեայք 'ի բերան Սեաւ ծովու. քաղաքամ անգամ ալիք ծովու 'ի դարէ անտի հանեն զմեծամեծ կարասս, որք թաղեալ էին անդ 'ի հնումն։

ԱԳՌԱ և ՍԻԴԷՍ

549. Ագռա էին 'ի հնումն երևելի բերդաքաղաք Սոփորոսի մերձ 'ի Աերճ. Ագռա Թարգմանի սար որ է քիթ, 35 վէրստ հեռի 'ի Աերճէ 'ի հարաւակողմն, ընդ որում գնէ և Սորաքոն, որ է բուն եւրոպեան քիթ Սոփորոսի հանդէպ Պուլգուրդաշին։ Ս․ երակէք այսր բերդի. որպէս և տրապիզեան ձևն ցուցանեն զամ-րութիւն նորա. որոյ երկուքին կողմունք ամրացեալ էին կրկնապարիսպ աշտարակօք. առ որում գոյր և ներքնաբերդ քառակուսի։

Իսկ Սիդէս էր հզօր բերդ Սոփորոսի, կառուցեալ 50 ամօք յառաջ քան զՔն, ըստ որում պատմէ Սքի-լաքս։ Նա որպէս ցուցանէ հիմն՝ է երկայնաձև կիսա-բոլոր. 'ի տեղիս տեղիս երևին հետք աշտարակաց և դրանց, և 'ի մի ծայրին գոյ աւերակ կրկնապարիսպ ամրոցի։

ԾԷՆԻԳԱԼԻ ճամ ԿԱՐԿԱՑԱ

550. Յետ այսորիկ անցեալ մեր 'ի հիւսիսակողմն Աերճի առ 'ի շինել զբերան Ագախու, տեսաք 'ի ճանա-պարհի զքաղաքում բլուրս, որք էին գերեզմանք նախ-նեաց. տեսաք 'ի միումն զմեծամեծ հատորս վիմաց. թող զոր բազմն ալիք։ Յայս գեղեցիկ վայր, որ է

հանդերձ բերանոյ նեղուցին, ուստի զՀիւսն մեծի աշ-տարակին, զոր այժմ կոչեն Գրջրքոտ. որոյ տրամա-գիծ է 12 կանգուն. որ կառուցեալ էր մեծահասակ վիմօք կապելովք հապարաւ : Սա էր քիթ ձախակող-մեան նաւահանգստին Կերձի. որում յանձորդէ քիթն Պաւլաղուռունն, որ երթայ միանայ ընդ սարին Ենի-գալէի : Սա և անդ յայտնեցան 50 գերեզմանք նախ-նեաց : Յառաջագոյն ցայս վայր հասանէր տարածու-թիւն Բանդիգափէոնի, ուր էր և խրամ. ուստի ելին բազում անօթք կաւատանց և մացորդք նախնի շինուա-ծոց : Այժմ առ ոտքսառս են այգիք. այլ առ պակա-սութեան խնամոց գինին չէ 'ի համարի :

Արդ՝ Ենիգալէ հեռի է 'ի Կերձէ 11 վերստ, կա-ռուցեալ 'ի հիւսիսային անկեան Թերակղզւոյն Կերձի, և 'ի բերան ծովուն Ազախու : Այս ամրաշէն բերդ է գործ Օսմանեանց շինեալ 'ի վերայ բարձրադիր ժայ-ռի : 'Ի կողմանէ ծովուն երևի բազմանկիւնի անկա-նոն պաշտպանեալ 'ի քարաշէն պատնշաց հանդերձ մե-ծամեծ Թնդանօթիւք : Դուռն բերդին է 'ի հարա-ւակողմն. առ որով է մշտահոս աղբիւր բարեջուր, որ հոսի յերկոսին կճեայ աւազանս. որք էին հին գերեզ-մանք նախնեաց բերեալք 'ի Թամանէ : 'Ի հիւսիսա-կողմն այսր բերդի 'ի հնումն գոյր մարակոց և հին քա-ղաք. որպէս և 'ի հանդիպակաց ցամաքն Թամանա-կային 12 գղեակք (Պետ. 187) :

Բնակչքն Ենիգալէի է մերձ 'ի ծոցն երկայնանիստ, որպէս և շուկայն. այլ շինուածքն են անշուք և բնա-կիչք Յոյնք ձկնավաճառք. որպէս և բնակիչք Կերձի : Պալատ բերդակալ իշխանին ցուցանէ զմնացուածս խուց հնութեանց. ուր գոյր վէմ երկայն 6 Թզաչափ, և լայն 2. նաև այլ վէմ 4 Թզաչափ : Սոյն և անդ կային գեղեցիկ սիւնք և աղբերականք. ջուր միոյն էր ձիթախառն :

Յառաջագոյն կային աստ և Հայք, և ունէին եկե-ղեցի յանուն սրբոյն Յակովբայ, որպէս տեսաք զանեղծն 'ի քաղաքամիջի անդ. ընթերցաք այլուր զյիշատակա-րան 'ի վերայ խաչին, որ ասէ. * Յիշատակ է սուրբ „ խաչս 'ի դուռն Ենիկիղալէի որ Յակոբին. Թվին „ ռՄիգ ||: Սյելչադիր է եկեղեցին Յունաց կառու-ցեալ 'ի բարձր կայի յանուն Ննջման Աստուծածնին, կա-

մարաշէն և պայծառ ։ Սնծի գեղեցիկ կաթուղիկէ 'ի վերայ սեանց . զոր մզկիթ արարեալ էին Թաթարք . առ որում գոյ դպրոց վասն յոյն մանկանց ։

ԹԱԳԱՒՈՐՔ ՎՈՍՓՈՐՈՍԻ

551. Սոքա թէպէտ տիրէին մեծագոյն մասին Պոնտոսի, և իշխանութիւն նոցա սկսեալ 'ի Կիմմերեան Վոսփորոսէ ձգէր մինչև ցՎոսփոր բիւզանդեան . սակայն Թագաւորանիստ քաղաքք էին Պանտիկապէոն և Փանակօրիա ։ Իշխանութիւն նոցա 'ի սկզբան անդ չէր ընդարձակ, սկսեալ 'ի լերանց Կովկասու հազիւ հասանէր 'ի ծոց Վրեֆէի ։ Եւրանոր Սաւրոմատ արար պատերազմ ընդ Վրեսմեացւոց . իսկ այլ միւս Սաւրոմատ ոչ հաճեալ ընդ որոշումն սահմանաց՝ յարոյց պատերազմ . այլ 'ի պարտութիւն մատնեցաւ ։ Սրով առպեցան Վոսփորացիք յետս ընկրկել զսահման տէրութեան իւրեանց մինչև ցՊակերնիդոս 40 մղոնաւ հեռի 'ի Վոսփորէ ։

Ըստ պատմութեան Դիոդորոսի առաջին բնակիչք Վոսփորի եղեն հին յոյնք Միլեսացիք, և առաջին Թագաւոր իւրեանց կոչեցաւ Արքէնակտիդք . այսինքն առաջին գլուխ, որ նստաւ Թագաւոր 480 ամօք յառաջ քան զՔն . որում յաջորդեաց Է Արքէնակտիդք . և ապա՝ Ա Սպարտակոս յամի հռովմայ իբր 309 Թագաւորեաց ամս 7 ։

Սելևկոս տիրեաց ամս 4 ։

Բ Սպարտակոս Թագաւորեաց ամս 20 ։ Սոքա ընդարձակեցին զտէրութիւնն մինչև ցՊոնտոս ։ Սօթիրոս Թևաւոխն տիրեաց ամս 14 . և հաստատեաց զԹագաւորութիւն իւր . և այնչափ ծաղկեցոյց, զի Վոսփորացիք յետ մահուան նորա պաշտէին զարձան իւր՝ կոչելով զնա փրկիչ ։ Սա պաշարեաց զԹէոդոսիա . այլ ոչ կարաց առնուլ . գոյ առ մեզ դրամ սորա պղնձի (1) ։

Լեւկոն որդի Սօթիրոսի Թևաւիօնի յաջորդեաց հօրն 393 ամօք յառաջ քան զՔն և 40 ամս Թագաւորեաց քաջութեամբ և խոհեմութեամբ . էառ զԹէոդոսիա, և եհան անտի 2 միլիոն և 100 հազար չափ ցորենոյ ։ Սակաւ Թագաւորք հաւասարեցին մեծութեան և արդարութեան սորա ։

Է. Սպարտակոս յաջորդեաց վերջնոյն և Թագաւո-րեաց ամս 5 :

Ը. Պերիսադէս Թագաւորեաց ամս 38. ըստ ոմանց (2). 'Ի սորին ժամանակի մեծն Աղեքսանդր տիրեաց երից մասանց աշխարհի. յայնժամ եկեալ որդիք Պերի-սադեայ յաջորդեցին միմեանց Լևկոնոս, Սատիրոս, և Պերի-սադէս. ապա 304 ամօք յառաջ քան զՔս Է. Սպարտա-կոս պաշտպանեաց ամս 20. այլ յետ սորա պակասե-ցաւ յաջորդութիւն յերկուց խառնմանց ամս 170. ապա՝ ի Պերիսադէ և Լևկոնէ յաջորդեցին. այլ ոչ կարեմք խնդրելին գտանել՝ յանձն եղև տէրութիւն Մ՝իհրդատայ :

552. Պ՝արիսադէ 120 ամօք յառաջ քան զՔս Հռոմա-յականութիւն զերաւանդացւոց բարգաւաճ մեջտա. կեցեալ 'ի Սկիւթացւոց՝ խնդրեաց. զի Թագաւորն Պոնտոսի մեծն Մ՝իհրդատ պաշտպանեսցէ զնոսա կայմինս իւր իշխե-լով : 'Ի հաստատելն նորա անդ՝ զետեղեաց Փ՝առնակ և Մաքարոսի եղեն ընդդէմ նորա. սակայն Հռոմա-եցւոցն 50 կամ 80 որդւովք ընդդիմ եկաց Միհր-դատայ և յաղթեցաւ : Յետ այնորիկ Մ՝եկտոր տիրեաց մասանց զթագաւորութիւն Մաքարի ընդ հռոմա-յականութեամբ Պ՝երսանի (462), որ և տիրեաց զամս 52. զորոց տեսակ զոսկի և զարծաթի դրամս : Ըստ մեզ գտեալ է դրամ սորա այժմիկ (3) :

Փառնակ որդի Միհրդատայ 64 ամօք յառաջ քան զՔս մատնիչ եղեալ հօրն եհաս զաւէտութիւն Մաքարի ընդ իշխանութեամբ Հռոմայեցւոց, որով հաստատեցաւ և ինքն Թագաւոր. այլ զինի 10 ամաց Սկիւթացիք տիրեցին Մաքարի : Ըստ սորա դրամն (4) :

Ասանդր տիրեաց 48 ամօք յառաջ քան զՔս. ըստ սորա ասէ դրամն (5) :

Ասպուրգոս տիրեաց ամս 14. իսկ զի Օգոստոս կայսր տուեալ զնա լինել զօրավար զօրաց Մաքարի. այլ նորա ամուսնացեալ ընդ Պ՝իւթոդորիա Թագուհւոյն վեր-ջին Թագաւորի՝ ջանս եդ անկախ Թագաւորել, ստանա-նելով զինքն թոռն Միհրդատայ. սակայն Մաքարա-ցիք հասեալ յետոյ սպանին զնա :

553. Ը Պոլեմոն Թագաւորեաց 12 ամօք յառաջ քան զՔս Հրամանաւ Օգոստոս կայսեր. որ յԱնտոնիանէ կարգեալ էր Թագաւոր Պոնտոսի : Նոյն կողմնանու-թեան 'ի Սկիւթացւոց, որք բանակեցեալ էին յարևե-

ընծան կողմն Ագախու. գտանի 'ի վերայ սորա յուշարկն գովեսս վաղեմի, և ոսկի դրամ (6), որում յաջորդեաց Փիթոդորիա Թագուհին իւր:

Ա. Սաւրոմատ նոյնպէս Թագաւոր և բազում զօրութեան եղոյց. գոյ ոսկի դրամն (7):

Ա. Ռեսկուպորիս յաջորդեաց վերստին. ունիմք զդրամ սորա պղնձի որ ցուցանէ զանձնութիւն հօրեղբօրն (8):

Բ. Պօլեմոն յաջորդեաց յամի Տն 38, և տիրեաց զամս 26. գոյ դրամն:

Բ. Միհրդատ 'ի ցեղէ Արշակունեաց հաստատեալ՝ տիրեաց յամի Տն 64. զոր սպանին (10):

Ա. Կոտիս յաջորդեաց յամի տեառն 69. գոյ ոսկի դրամն (11):

Բ. Ռեսկուպորիս յաջորդեաց յամի Տն 83. գոյ դրամն. յետ սորա տիրեաց (9):

Բ: Սաւրոմատ. ունիմք զդրամն. գտանի այլ դրամ սորա հատեալ յամի Հռովմայ 870 (14):

554. Յամի Տն 123. Ադրիանոս կայսր եդ Թագաւոր Վոսփորոսի Բ. Կոտիս. որոյ գտանի ոսկի դրամն հատեալ յամի Հռ. 884: Սմա յաջորդեաց Ռիմետաղկես. ապա Եւպատոր. որոյ գտանի ոսկի դրամն հատեալ յամի Հռ. 910. որում յաջորդեաց

Գ. Սաւրոմատ որդի Ռիսքուպորիսի. որ բազում պատերազմունս մղեաց ընդ Կերամանացւոց, այլ ոչ կարաց յաղթել: 'Ի պատճառս այսր հաւատարմութեան եհատ դրամ մի մեծ. 'ի մի կողմն է պատկերաւ գլուխ և գիր ΒΑΣΙΛΕΩΣ ΣΑΥΡΟΜΑΤΟΥ. և 'ի միւս կողմն ձիաւոր զաջ բազուկն ձգեալ 'ի լանջս ձիոյն՝ առ նովին և փոքրիկ գլուխ հատեալ մերուսասար. որում յաջորդեաց

Գ. Ռեսկուպորիս. սորա ոսկի դրամն հատեալ է յամի Հռ. 968:

Գ. Կոտիս յաջորդեաց վերստին. ունի արծաթի դրամ յամի Հռ. 986. որում ապա յաջորդեաց Ինինթիմէոս. սորա արծաթի դրամն հատեալ է յամի Հռ. 988:

Դ. Ռեսկուպորիս յաջորդեաց վերստին. որոյ դրամն հատեալ է յամի Հռ. 995: Սմա յաջորդեաց Տեյրանէս. որոյ դրամ հատեալ է յամի Հռ. 1029. ապա.

Թոթորսէս. որոյ գոյ դրամ հատեալ յամի Հռ. 1050. (20).

Դ. Սաւրոմատ պարսպաղանեաց, այլ յաղթեալ ՚ի Քերսոնացւոց առեալ էառ. մինչ զի նոցա տիրեցին միայ մասին Թերակղզւոյն Կերձի յամի ՆՃ 292. որք և չոքան յօգնութիւն մեծին Կոստանդիանոսի, և յաղթեցին Սկիւթացւոց մերձ ՚ի Դանուբ գետ. նաև ՚ի պատերազմի մասին ընկալան ՚ի կայսերէ զաւկի արձան ծաղկեալ կայսերական վերարկուաւ ։

Ե. Սաւրոմատ յաջորդեաց վերոյին. ունիմք զպղինձի դրամ սորա, որպէս և նախորդին (18) ։

Զ. Ռեսկուպորիս պապագատեաց. որ ունի դրամ հատեալ յամի Ք՟Ա. 1073 ։

Է. Սաւրոմատ եղև վերջին Թագաւոր Վոսփորոսի. քանզի յամի ՆՃ 376. Սարմատացիք զօրացեալ իսպառ տիրեցին, և ՚ի վերջ հատուցին զԹագաւորութիւն Վոսփորոսի ։

Դրամք Վոսփորոսեան ինքնակալութեան ։

555. Տեսաք զաղամտեալ դրամս այսր ինքնակալութեան, որք հատեալ են յայլևայլ ժամանակս յանուն Թագաւորաց և քաղաքաց. որք և գտանին առ մեզ, բայց շատք պակասին. և այլք ՚ի յայտ գան հետազօտել. յորս յաձախ տեսանին և դէմք Կայսերաց Հռովմայ. որք Ը ձեռամբ ունէին զՎոսփոր. զդրամս զԹագաւորաց դիցուք ՚ի կարգիս.

1. Դրամ պղնձի մեծին Սօթերոսի Թասիոնի. յառաջին երեսն տպագրեալ կայ մեծադեմ գլուխ ծաղկապսակ երիտասարդի, և ՚ի միւսն երիտասարդ կանգուն լախտ ՚ի ձեռին և գիր ΗΡΑΚΛΕΥΣ ΣΩΤΗΡΟΣ ΘΑΣΙΩΝ. այ՟ Հերակլէս Սօթերոս Թասիոնն ։

2. Դրամ ար՟ Պերիսադ արքայի. ՚ի մի կողմն է դէմք անմօրուս՝ գլխին բաց. ՚ի միւս կողմն նստեալ այր առ զաւազանաւ՝ ՚ի ձեռին փոքրիկ կուռք. առ որով և ռաժանի և գիր կողմնակի. ΒΑΣΙΛΕΩΣ ΠΑΙΡΙΣΑΤΟΥ. այ՟ Թագաւորի Պերիսադի ։

3. Դրամ ար՟ Միհրդատայ. ՚ի մի կողմն գլուխ ահեղադէմ անմօրուս և հերապանծ. և ՚ի միւս կողմն ծաղկեայ շրջանակ. ՚ի միջոցին եղնիկ արածօղ ՚ի վեր և ՚ի

[illegible]. գիր ΒΑΣΙΛΕΟΣ ΜΙΘΡΑΔΑΤΟΥ ΕΥΠΑΤΟΡΟΣ. այսինքն Թագաւորի Միհրդատայ Եւպատորի ։ Կան և այլ տեսակք դրամոց սորա ։

4. Դրամ Փառնակայ. 'ի մի կողմն փառաւոր դէմք իւր անմօրուս. և 'ի միւսն Ապողոն նստեալ ոստ 'ի ձեռին և գիր ΒΑΣΙΛΕΟΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΜΕΓΑΛΟΥ ΦΑRΝΑΚΟΥ. այսինքն Թագաւորի Թագաւորաց մեծի Փառնակեայ ։

5. Դրամ Ասանդրեի. 'ի մի կողմն գլուխ պատանւոյ. և 'ի միւսն այր յաղթին կանգնեալ Թեւաւոր՝ 'ի ձեռս պսակ և արմաւենի. և գիր կողմնակի ΒΑΣΙΛΕΩΣ ΑΣΑΝΔΡΟΥ. Թագաւորի Ասանդրեի ։

6. Դրամ բ. Պոլեմոնի. 'ի մի կողմն դէմք իւր և գիր ΒΑΣΙΛΕΩΣ ΠΟΛΕΜΩΝΟΣ. Թագաւորի Պոլեմոնի. և 'ի միւսն դէմք կայսեր և գիր լատ. IMP. CAISAR AVG. Ինքնակալ Կեսար Օգոստոս ։

7. Դրամ բ. Սաւրոմատի. 'ի մի կողմն փառաւոր պատմուճանի կայսերական զգեստուք, և երիզ 'ի գլուխն կապեալ, և գիր ΤΙ. ΙΟΥΛΙΟΥ ΒΑΣΙΛΕΟΣ ΣΑΥΡΟΜΑΤΟΥ. այսինքն Իուլեա Հաւելէա Սաւրոմատա.

8. Դրամ Րեսկուպորիսի. 'ի մի կողմն դէմք իւր մօրուսաւոր և գիր ΒΑΣΙΛΕΩΣ ΡΗΣΚΟΥΠΟΡΙΣ. այսինքն Թագաւորի Րեսկուպորիսի. և 'ի միւսն նոյնպէս գլուխ մօրուսաւոր. յայս անուն քանի մի պղնձի դրամս ունիմք ։

9. Դրամ միւս Րեսկուպորիսի. 'ի մի կողմն պսակակապ գլուխ մօրուսաւոր և գիր ΒΑΣΙΛΕΩΣ ΡΗΣΚΟΥΠΟΡΙΔΟΝ. 'ի միւս կողմն նոյնպէս գլուխ դարձի պսակաւ և գիր ΖΝΦ ։

10. Դրամ բ. Միհրդատայ. 'ի մի կողմն դէմք իւր անմօրուս՝ երիզ կապեալ 'ի գլուխն, և գիր ΒΑΣΙΛΕΩΣ ΜΙΘΡΑΔΑΤΟΥ. այսինքն Թագաւորի Միհրդատայ. և 'ի միւս կողմն գաւազան եդեալ 'ի վերայ լախտի, և այլ նմին եռաժանիք ։

11. Դրամ ա. Կոտիսի. 'ի մի կողմն դէմք Ներոնի, և 'ի միւսն գլուխ պսակաւոր անմօրուս ։ Իսկ բ. Կոտիսին 'ի մի կողմն է ծաղկեայ պսակ, և 'ի միւսն գլուխ անմօրուս, և գիր ΒΑΣΙΛΕΩΣ ΚΟΤΥΟΣ. այսինքն Թագաւորի Կոտիսի ։ Կայ այլ դրամ, 'ի մի կողմն գլուխ խոյրաւոր, եռաժանի, և անուն նորա. իսկ 'ի միւսն հեծեալ սուր 'ի ձեռին ։

12. Դրամ Եւպատորի. 'ի մի կողմն գլուխ մօրուսա-

ւոր, և գիր ΒΑΣΙΛΕΩΣ ΕΥΠΑΤΟΡΟΣ. և 'ի միւսն գլուխ պատանւոյ, և ստորև ΒΝΤ:

13. Դրամ Ռեմետալկեսին. 'ի մի կողմն գլուխ երեսադարձի խոյրաւոր, եռամաճանի և գիր ΒΑΣΙΛΕΟΣ ΡΟΙΜΗΤΑΛΚΟΥ. և 'ի միւս կողմն պատկեր յաղթութեան, 'ի մէջն ստորև ΜΗ:

14. Դրամ Է Սաւրոմատայն. 'ի մի կողմն գլուխ մօրուսաւոր անդրի. և 'ի միւսն նոյնպէս գլուխ մօրուսաւոր և գիր ΒΑΣΙΛΕΩΣ ΣΑΥΡΟΜΑΤΟΥ. պղնձիքն Թագաւորէ Սաւրոմատայ: Տեսանք սորա և զանկի դրամն:

15. Դրամ Է Կոտիսին. 'ի մի կողմն գլուխ մօրուսաւոր և գիր ΒΑΣΙΛΕΩΣ ΚΟΤΥΟΣ. և 'ի միւսն գլուխ անմօրուս և գիր ΟΚΦ:

16. Դրամք զայլ դրամ Ռեսկուպորիսի. 'ի մի կողմն գլուխ մօրուսաւոր և գիր ΒΑΣΙΛΕΩΣ ΡΗΣΚΟΥΠΟΡΙΔΟΣ. և 'ի միւսն գլուխ խոյրաւոր ծածկեալ սաւանաւ յետուստ, և գիր ΚΑΡ: Դոյ և այլ դրամ պղնձի. 'ի մի կողմն գլուխ մօրուսաւոր, և առաջն նորա շուրջանակի. և 'ի միւս կողմն նոյնպիսի դէմք անդրի:

17. Դրամք զդրամ Պիսիստրատոսին. 'ի մի կողմն գլուխ կայսեր անմօրուս. և 'ի միւսն այր կանգնեալ և գիր ΒΑΣΙΛΕΩΣ ΠΙΣΙΣΤΡΑΤΟΥ:

18. Դրամ Է. Է Սաւրոմատի. 'ի մի կողմն պսակազարդ գլուխ մօրուսաւոր և գիր ΒΑΣΙΛΕΟΣ ΣΑΥΡΟΜΑΤΟΥ. և 'ի միւսն այր պատառազինեալ լախտ 'ի ձեռին և գիր Β: Դրամք զանազան գեղեցիկ դրամն Սաւրոմատի: 'Ի մի կողմն ոսկեզօծեալ դրամոյ՝ իւր գլխոյն մօրուսաւոր պսակազարդ և գիր 'ի շրջանակն ΒΑΣΙΛΕΟΣ ΣΑΥΡΟΜΑΤΟΥ. և 'ի միւսն Հերակլէս մերկ լախտ 'ի ձեռին. ստորև ընդ սրունիւք. նաև Հրեշ կենդանի յետնթայս. և գլուխ մարդոյ: Դոյ այլ դրամ. 'ի մի կողմն դէմք և անուն նորա. և 'ի միւսն դէմք կայսերաց. մին մօրուսաւոր, և միւսն անմօրուս, և գիր ΕϘΥ:

19. Դրամ Է Ռեսկուպորիսի. 'ի մի կողմն գլուխ նորա և գիր ΒΑΣΙΛΕΟΣ ΡΗΣΚΟΥΠΟ. և 'ի միւսն նոյնպէս գլուխ և նշանագիր Υ CIX:

20. Դրամ Թոթորեսին. 'ի մի կողմն դէմք անմօրուս, և գիր ΒΑΣΙΛΕΟΣ ΘΟΘΟΡΕΟΥ. և 'ի միւսն նոյնպէս գլուխ և գիր ΗϘΦ.

21. Դրամ Ռասաամէսադիսի. 'ի մի կողմն գլուխ երե-

առաւասրքն եւ գիր ΒΑΣΙΛΕΩΣ · ΡΑΔΑΜΒΑΔ · 'ի միւսն գլուխ կայսեր, Թէոփ Կոստանդիանոսի, զաւաւորքն, եւ Թուական Պոնտոսի ZX (607) : Գտանի սորա այլ դրամ 'ի Սէրժ Հատանայ 'ի ΕΙΧ (615) Թուականին · անուամբ ամբողջ գրի ΡΑΔΑΜΕΑΔΙΣ · է Ռադամսադիս · որ եւ պատերազմեցաւ ընդ քերսոնացւոց ընդ Կոստանդիանոսի Պերփիռածնին :

Դրամք Մայրաքաղաքաց Վոսփորայ :

556 · Տեսաք դրամ Պանդիկապէոնի կամ Կերճի · 'ի մի կողմն գլուխ Ապողոնի, եւ 'ի միւսն կապարճ եւ աղեղն եւ անուն քաղաքին ΠΑΝ · Պան · այսինքն Պանդիկապէոն :

2 · Դրամ այլոյ քաղաքի · 'ի մի կողմն եռոտանի · եւ 'ի միւսն մեծ աստղ 8 շառաւեղօք · յիւրաքանչիւրումն մի մի տառ ; որք յօդեն զանուն քաղաքին ΠΑΝΤΙΚΑΠ · Պանդիկապ :

3 · Դրամ · 'ի մի կողմն գլուխ Պանն չ̄ոյ, եւ 'ի միւսն աղեղն եւ նետ · առ որով գիր ΠΑΝ · Պան :

4 · Դրամ · 'ի մի կողմն գլուխ նոյն չ̄ոյ · եւ 'ի միւսն երիվար Թեւաւոր նստեալ եւ երեք տառք ΠΑΝ :

5 · Դրամ · 'ի մի կողմն գլուխ կնոջ, եւ 'ի միւսն աղ-ճաւարուծ եւ տառք ΠΑΝ :

6 · Դրամ · 'ի մի կողմն գլուխ Պանն չ̄ոյ · եւ 'ի միւսն գլուխ եզին եւ տառք ΠΑΝ :

7 · Դրամ · 'ի մի կողմն գլուխ Ապողոնի եւ 'ի միւսն կառք եւ գիր ΠΑΝΤΙΚΑΠΑΙΤΩΝ · է Պանդիկապէացւոց :

8 · Դրամ · 'ի մի կողմն գլուխ Պանն չ̄ոյ · եւ 'ի միւս կողմն եղջիւր առատութեան · եւ 'ի վերայ այնց երկու աստեղք եւ երկու գլխարկք եւ գիր ΠΑΝΤΙ :

9 · Տեսաք դարձեալ դրամ Փանագորիոյ կամ Թամանու · 'ի մի կողմն գլուխ մօրուաւոր, եւ 'ի միւսն աղեղն եւ նետ, առ որով գիր ΦΑ · Փա · է Փանագորիա ·

10 · Դրամ այլոյ քաղաքի · 'ի մի կողմն գլուխ Ապողոնի, եւ 'ի միւսն եղնիկ նստեալ · առ որով գիր ΦΑΝΑΓΟΡΗΤΩΝ · է Փանագորեացւոց :

11 · Գտաք դարձեալ գեղեցիկ դրամ ոսկեզօծեալ Պանդիկապէոնի · 'ի մի կողմն գոյ ծեր մօրուաւոր,

'ի գլուխն ձիագլխեայ պղտորի. և 'ի միւսն արծուակերպական Հրէշ կենդանական եղջերաւոր 'ի բերանն ունէր, և առ ոտիւք հասկ ցորենոյ և շուրջ 3 տառք ΠΑΝ:

12. Նոյն դրամ. 'ի մի կողմն ծեր մօրուսաւոր, և 'ի միւսն գլուխ եզին և տառք ΠΑΝ:

13. Գտաք և զոյգ դրամ պղնձի, 'ի մի կողմն գլուխ ծերոյ, և 'ի միւսն աղեղն և նետ. առ որով և գիր ΠΑΝ: Տեսաք և զոսկի դրամ փոքրիկ. 'ի մի կողմն դէմք ծերոյ մօրուքաւոր և պսակաւորի. և 'ի միւսն գլուխ խոյոյ և գիր ΠΑΝΤ:

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎԱԿՈՂՄՆ ԽՐԻՄԱՅ.

557. Մնայ մեզ այսուհետև ստորագրել զքաղաքս դէպ 'ի հիւսիսային ծովեզերս Խրիմու, որք սկսեալ յԵնի-գալէյէ երթան եզերբն յԱզովական և 'ի հիւսիսային կողմն Սղախու յԱզով Խոյա (566): Սորա՝ մնացեալ մեր ընդ ծովեզերս Սղախու հասանեն 'ի գետեզերն ծոցին Պաալանդոպոլի. ուր 'ի հնումն բազում էին երթևեկութիւնք նաւուց: Այս նաւահանգիստ պատսպարէ երևելի հրուանդանն բարձր, որ մօտ անձուկ պարսպաւորացեալ է ընդ ցամաք. ունի 'ի վերայ ընդարձակ դաշտս խոտաւէտս և արօտս խաշանց: Մերանօր 'ի հնումն դղեակ շինութիւն և գիւղակ, որոյ են գուշակին յաւերակաց. երևի և հին եկեղեցւոյ. առ որով գոյ եղեգնուտ, և ըստ Նոյեմբեր ամսոյ: Այս ծոց բազում նաւք կարեն պատսպարել. յաղագս եղանակ առատ ձկանց տափակաձև Թուրքեր կոչեցեալ:

ԱՐԱԲԱՏ

558. Ի՜ երևելի վայր 'ի հարաւային ծոց Սղախու, ուր եղերին ծովն. որ 'ի հնումն կոչէր Արտայիկն կամ Արտաբլին: Ասանօր Թագաւորք Մահմուդի շինեցին ամրոց և խրամ ընդդէմ հիւսիսային թշնամեաց. իսկ այժմեան բերդն է շինեալ 'ի Թաթարաց ամրաշէն քառակուսի 'ի կոփածոյ քարանց, կարգաւորեալ պատնիշօք և քարաշէն խրամով լայն 20 քայլ: Պատուած է երկաթապատ 'ի կողմն արևելեան. 'ի ներքս ոչ տեսաք զերևելի ինչ, եթէ ոչ քարաշէն մզկիթ և ամայս ինչ:

Այս բերդ շինեալ է 'ի միջավայրի մտից երկայնաձիգ
ցամաքալեզուին Ճինիչկէի · յերկոսին կողմանս բեր-
դին գոյր լայն խրամ և քարաշէն մարտկոցք յաջ և
յահեակ 'ի բերդէ 'ի ծով · որպէս տեսաք զաւերակս ։
Առ երի աջակողմեան մարտկոցին գոյր մեծ դուռն
Ճինիչկէի · ընդ որ միայն մարթ էր անցանել 'ի ցա-
մաք լեզուն, և կամ անտի մտանել 'ի Խրիմ ։
Վիրք տեղւոյս է զարմանաքանչ գործ բնութեան · զի
ծայր Ազախու հասեալ կայ յաջակողմեան մարտկոցն,
ուր տեսաք զաւազն սպիտակագոյն և զջուր ծովուն դեղ-
նախառն սպիտակ, և ոչ այնչափ աղի · Իբր զի Տանա-
ւիս և այլ գետք բարեխառնեն, մինչև անասնոց լինել
ըմպելի · և բազում տեղիք ցցեալ են տղմով · ուր տե-
սաք կանաչագոյն սէզ բուսեալ 'ի ծովն ։ Աստ ոչ գտա-
նի որդն նաւուց, որպէս գտանի 'ի ծոցս Սեաւ ծովու ։
559 · 'Ի ձախակողմն բերդին է ծոց բազմապը-
տոյտ և բազմախորշ Սասըխ ծովակին, որ կոչի Չու-
րըխ · այսինքն հոտեալ, զի միշտ հոտ բուրէ յեզերաց ։
Այս ծոց եւս հասանէր 'ի ձախակողմեան մարտկոցն ·
որ երբեմն առատանայ և երբեմն նուազեալ յետս
դառնայ · ընդ այս ծոց անցաք կառօք ընդ մղոնաւոր
տեղի ցամաքեալ յամարայնի ։ Թուեցաւ մեզ թէ 'ի
սկզբան անդ այս երկոքին ծովք մի էին · այլ յանցա-
նել դարուց տիղմն գետոց և աւազք Տնեբերայ ան-
ջրպետեցին 'ի ձեռն ցամաք լեզուին · որպէս ասա-
ցաւ (403) ։

ՃԻՆԻՉԿԻ · ԵՒ ԲԱՐԱԿ

560 · Այս ցամաք լեզու ձգեալ երկայնեալ դէպ 'ի
Ռուսաստան ընդ հիւսիս 110 վերստ · որ այնչափ մեր-
ձենայ առ ցամաքն Օզու խըռի, մինչև փոքրիկ բերան
կամ անձուկ կիրճ լինի միջոցն, որով հաղորդի Ազախ
ծով ընդ Սասըխի ։ Լայնութիւն ցամաքալեզուին չէ
հաւասար յամենայն տեղիս · սկիզբն է իբր նեղ բա-
զուկ · ապա ընդլայնի և 'ի տեղիս ինչ անձկանայ, յո-
րում գտանին խեցեմորթք և ժժմակք ծովու ։ Երկիրն
է աւազուտ, այլ խոտաւէտ · ջուրն է առատ · 'ի տե-
ղիս ինչ գտանին պանդոկք, եւս և լճակք · անպակաս
է անդ երթեւեկութիւն ուղևորաց ։

Ի Հիւսիսային ծայր լեռնուիս գան կրկին լաստա-փայտք կարգեալք յարդուածոյ, որք անցուցանեն յայն-կոյս ղուզեսոյ. ուր կապեալ կայ պորան 'ի լեռնակն գետ 'ի ցամաք յապահովութիւն լաստափայտից:

Յայս ցամաք լեռնու դիմեալ մեր յարեւելից և յարեւմտից առաւք յերկուց կողմանց ուղղակի ձգեալ-չուանի ոչ երեւելի ծոց ինչ կամ պտոյտ և խորշ, և ոչ տապառած ինչ, որով յապուշ կրթին միտք դիտողաց ընդ այս գործ բնութեան դէպ ուղիղ ձգեալ ընդ այն-չափ երկայնութիւն յանձրպետ Սաւրխ ծովակին: Ի հանդիպակայն Հիւսիսային ծայրի Ճենիճկէին գոյր յառաջագոյն բերդ 'ի պաշտպանութիւն. որ կոչէր Ենիքալէ. այժմ 'ի տեղի նորա շինեալ կայ բնակարան պահապանաց, նաեւ շտեմարանք, կրպակք, եկեղեցի և տունք. ուստի եղև անուն, որ կոչի Պոնտոս (571):

ՍԱՒՐԽ ԾՈՎԱԿ

561. Ի՛ բազմապտոյտ և աղեղնաձեւ ծովակ Խրի-մու, որ ձգեալ ընդ երկայն 'ի հարաւոյ ընդ հիւսիս՝ պատէ զարեւելեան մասն ցամաք կղզւոյս մինչև ցբե-րան Ճենիճկէի: Սորանօր հանդիպակաց երկիրն հա-րաւոյ մի մտեալ 'ի ծովակն մերձենայ 'ի Խրիմ և կազմէ նեղուց. ընդ որ անցանեն նաւակաւ ուղեւորք ընդ Զօնոր (405): Երասուստ գաւառայ ծովակն յարեւ-մուտս, և բազմաձեւ բաղկօք երթայ յՕդպարու, և անտի յառաջ խաղացեալ 'ի ցամաքն Օզու խրան՝ ե-զերի վերջին ծոցն 'ի տեղին Արէպջեքլար. որով պատէ նաև զՀիւսիսային մասն Խրիմու. որպէս տեսանի յաշ-խարհացուցի մերում բազում խնամով գծագրելոյ:

Այս ծովակ կոչի Պիճէօ, Չուրիւք, և Սիւաշ. զոր սա 'ի քաջ քննել՝ շրջեցաք 'ի ծովեզերս. ուր ոչ գոյ աւազ. այլ տղմալից է և գարշահոտ. նմին իրի դժուա-րին է մերձիլ 'ի ծով անոյր:

Ի սա երի Ճանղնքոյէ տեսաք զծովն միով մղոնաւ տե-ղի առեալ յափանց. ուր բազում դժուարութեամբ մերձեցաք 'ի տղմալից ափն: Գեղեցիկ են դաշտա-վայրք ծովեզերացն. երկիրն բաժանի յերկուս մա-սունս. առաջինն և գլխաւորն կոչի Զօնոր լի բարեբեր դիւզօրէիւք և լճակօք աղեհանից (405). որ սկսեալ

յՕւ է հասանել մինչև ցմիջավայրս, ուր մերձենան երկրին ցամաքք, մինչև յամարայնի անցանել երիվարաւ յայնկոյս յՕղու խըռ:

562. Ըստանոր երկայն բաղձուկ ծովու մնեալ ընդ-ցամաքս հարաւաւ մի երկայնի. առ որով երկիրն յերկուց կողմանց իբրև բարակ լեզու ձգի 'ի ծով. որոց այլ բազուկք յաջորդեն մինչև 'ի միջավայրն Ճինիչկէի: Ուր անձկացեալ ծովուն՝ ձևանայ նեղուց ինչ կամ պարանոց. որ կոչի 'ի Թոմաթարաց Պոմոխ. սոսի գէտ 'ի հարաւ և երկիրն կոչի Պոմամախ. ուրանօր Թափի նախ գետն Խոյարասու, ապա անդի 'ի վայր Պուլկանաք, Խնասալ, Խոյարակէօղ, եւն: 'Ի յորմոյ գետոց սոսի պատճառեալ են 'ի ծովակիս կղզիք. և առ հնարին տղմուտք 'ի ջրի, մինչև անհնարինելի լինել ծովակիս և անալէս:

ԲԵՐԱՆ ԽԱՐԱՍՈՒԻ

563. Բերան գետոյն Խոյարասուի անկանի 'ի միջավայրն հանդէպ Ճինիչկէի. որ ելեալ յականց անտի մերձ 'ի քաղաքն Խոյարասու (418) յետ ծախելոյ ժամս 5 զայ հանդիպի փոքր Խոյարասու գետակին (484). որ 'ի տեղւոջն Սառատնխոս անկեալ 'ի մեծ Խոյարասու կորուսանէ զանունն: Իսկ Խոյարասու յառաջեալ յընթացս իբր ժամս 2, հանդիպի Սալղըր գետոյն (428). ուր աղեղնաձև եկեալ երկուց գետոց 'ի տես զարմանալի խառնելին 'ի միմեանս 'ի տեղւոջն, որ կոչի Խոյաջալըն. անդ տեսանք զի երկնագոյն ջուրն Խոյարասուի և գեղձորակ ջուր Սալղըրի հարթուստ մի պահէին զգոյնս:

Ըստանոր Սալղըր կորուսանէ զանունն իւր իսպառ. իսկ Խոյարասու ընթանայ գէտ 'ի Սասըխ ընդ հիւսիս. և յետ երից ժամուց անցեալ ընդ Շէյան կամրջաւ հասանէ 'ի գիւղն Թիլէօղլի. անդ դարձեալ յերկուս բաժանեալ, և հոսեալ միով վէրատիւ հեռի 'ի միմեանց յետ 3 ժամուց կրկին բերանովք երկոքին բազուկք Թափին 'ի Սասըխ:

564. Ձախակողմեան բազուկն է Խոյարասու. որ միշտ պահեալ զանունն իւր՝ հոսի Է զաշտավայրս Խոյարա Թէօպէլի: Իսկ աջակողմեանն կոչի Ը.Ա. Ձըրաղան. որ բացուած Ըլլի. պատամեցին մեզ Թաթարք, թէ 'ի

յետոյն ժամանակս սա Ռուսք բացեալ է անդ առու. և ջուրն գաւեալ անցս կիսով չափ քաղաքին 'ի Կարասուբէ և երթայ դէպ 'ի Ղահն ջէզ. կամ Նոր գիւղ. և անտի դէպ ուղիղ գնայ Թափի 'ի Սալըխ յետ ծախելոյ ընդ-ամենայն ժամն 12 որպէս տեսաք:

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵԱՑ ԻՆՉ ԽՐԻՄՈՒ, ԵՒ ԸՐՁԱԿԱՑ ԾՈՎՈՒՑ ԵՒ ԳԵՏՈՑ

Նոր.	Հին.
565. Խրիմ . . .	Դաւրիա:
Սեաւ ծով	Պոնտոս աքսէնոս, Պոնտոս էւքսինոս. այսինքն Ան-հիւրընկալ. Հիւրընկալ. (Պոնտ 1):
Ազախ ծով	Խէմէրինտա 'ի մէջ Սկիւթացւոց. Օսպաք, Մէօտ. Միոտիս:
Սալըխ ծով	Սիվաշ. Պիչէս. Բուդրիս:
Մեռեալ ծով . . .	Կարկինիդեան ծոց:
Կուպան գետ . . .	Անթիքիթիս, Իպանիս, Վարդանուս:
Տօն գետ	Թանայիս:
Տնեպեր	Տանաբրիս, Եւլիւէ, Պորիսթէն:
Պուկ գետ	Հիբբանիս:
Տնեստեր, Թուրալա . .	Թիրաս, Դանաստրիս. Դիրէս:
Օռ	Բերեգոբ. Դաւրոս. Թափրէ:
Կէօզլէվ	Եւպատորիա, Պոմպէիպօլիս. Կէօզլէվէ:
Չոր Պաղչէսէրայի .	Դալաւիթա:
Ինքիրման	Դիթենոս. Տօռի. Խէրսոնի:
Ակտեառ. Չօրչին .	Սեւաստոպոլ. Քէրրօնիսոն. Քէրօնէ Քէրսոնէ:
Ագմէչիդ	Սիմֆէրոպոլ:

Սուրադ	Յուխնայա . Լաճինա . Սուրտայա :
Գալբգլաւն	Թաւրոս ակեմեչոլը . Սիմֆերոպօլն :
Էսկի Խրիմ	Սօլղաթ . Սուրղաթ . Խրօլաթ . Կաֆեա , Կրարեօնոլիս :
Քէֆէ	Արդաւանտա . Թէոդոսիա . Ֆէոդոսիա :
Արապաթ	Արապաթեօն :
Կերճ կամ Կերչ . . .	Միրմէկիոնք :
Կերչ քաղաք	Պանտիկապէոն , Կորկոնտոնա , Վօսփոր . Վոսփորոս . Բոսփորոմենթէ :
Էնիքի ղալէ	Փարթէնիոն . Կարկայա . Միրմէքիոն :
Թամանն	Ֆանակօրիա . Թմութ . Թմումնթարչա . Մաթրիկա . Թմուտարաքան :
Թայղան . Թաղանկարօք .	Տանայիս . Տանա :
Ազաք	Ազակար . Ազակալէ :

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՆ ՆՈՐ ՌՈՒՍԻԱՅ

566. Այս երկիր սկսեալ 'ի Տնեպէր գետոյ ձգի մինչև ցՏօնաւիս , որ փակէ զսահմանան Նօղայ Թաթարաց , ուր այժմ հաստատեցին զգաւառս գիւղօրէօ և ուսանս՝ անուանեալ զայն ( )ղա խոլով : Երկիրն է բարեբեր և խոտաւէտ ծածկեալ անհամար անասունովք և խաշամբք . ընդարձակ դաշտօրայք ընդերձ առատ ցորեան և զամենայն բարութիւնս :

Նօղայք .

567. Գլխաւոր բնակիչք մեծամեծ դաշտօրեկիցս են Նօղայ Թաթարք , որոց սահմանն է երկիրն 'ի մէջ Անգալիոս և Գարատա գետոյն . Սոքա 'ի կողմանց Անափայի փախեան աստ երբ առաւ Անապա 'ի Ռուսաց ; որք են զարմանալի փութաջան երկրագործք և արթուն խաշնարածք . ունին ամենայն աշխատանաց :

պարփակեալ են և ճարտարապետիւն ։ Այս են սերունդք նախնիք Մողոլաց, զէնք սոցա է աղեղ և անհամեմատ. երեսքն տափականձև ; աչքն մանր , և մօրուքն կնճռեալ ։ Նոյյ և այնպէս յամենայն գործողութիւնս իւրեանց ցուցանեն զխոնհեմութիւն. ոչ սիրեն զթեթևութիւն և զխեղկատակութիւն ։

Չանօթին սովորութեան ուտելոյ զհաց , այլ զմիս , մանաւանդ զձիոյ , զոր սիրեն ։ Այլ քան զամենայն սոնքա կերակուր նոցա է միս ձիոյ , և պատուականն ըմպելին է թթուաշ կաթն ձիոյն զոր նոքա կումզ ձայնեն. և է առողջարար և զուարճացուցիչ. որպէս փորձիւն բազումք ։ Այլ ուրեք գտանեն զսա առ կերակուր՝ այնչափ ուտեն անյագ՝ մի կարիցեն տոկալ սնուցեալ քանի մի աւուրս ։ Յամառնայնաւն պարարտին առ հօրն աղջկան զանատաւնս ՚ի վարձ. ուստի որչափ ող շատ աղջկունս ունին , այնչափ առաւել փարթամ է ։ Հայրն ոչ տայ աղջկան զպարգև՝ եթէ ոչ յետ ծնանելոյ զանդրանիկն ։ Սոքա առաւել են քան զ80 հազարս ։ Յառաջագոյն թափառականք էին. այլ իբրև հրամայեցաւ սոցա ՚ի տէրութենէ շինել և հաստատել զգիւղօրէս՝ աճեցան և փարթամացան ։

568. Յայսմանիկ կողմանս երևին տաճար և անդ բազում խաչարագործ հին արձանք ՚ի ձև մարդոյ կանգնեալք ՚ի վերայ գերեզմանաց նախնեաց ։ Կան նոյնպէս բազում բլուրք , զոր նոքա Օբա ձայնեն , յորս գտանին քարաշէն գերեզմանք և կամարք (374) ։ Սոքա յամարայնի յաճախ ժողովին ՚ի վերայ բլրոց. առ ծերքն խօսին առակս և խրատս բարոյականս ՚ի վերայ հիւրասիրութեան և բարեկամութեան ։ Այնչափ է յարգ ծերոց առ նոսա , մի զոր միաբանեալ որոշեն ծերք և հրամայեն՝ ոչ ոք կարող է ընդդիմանալ ։

Նօղայք ոչ միայն ճարտար են ասել բառ տեղւոյն զառակս և զառածաւոր բանս , որպէս լուաք ՚ի նոցանէ , այլ և ունին բնական ծանօթութիւն ինչ աստղաբաշխութեան. գիտեն որոշել զծագումն և զդիրս աստեղաց , զհամաստեղութիւնս և զատանաւորս ։ Ի վերայ մոլորակաց եղեալ են զայլևայլ անուանս. զ12 կենդանակերպս Մնջիկ կոչեն , և զարեգակն աստղն Կիւճիր խաղձի , զոր դիտելով առնեն ճանապարհորդս ոչ փափաքելոյն զանեղին. նաև յընթացից այլոց աստեղաց որոշեն զժամս և զժամս ։ Զեօթնաստեղեան աստղն կա-

ջէն Ղևոնդեա. ուստի առեալ յաւուրս. * Ղևոնդեանն Ձեռ-
կէ ամենայնմ այլ Ձեռն Թէոդոսոմ աւանդակ զառն խաչաւ ||: Յդ
Մինչ չև է ուղղեալ այլ եօթնասնեղեան զօրաւն
ցեղերածն.

Աւասիկ քեզ մի որք հաւաքէ տեսանել զգեղ աղաչալուրն
* Ղևոնդեանցըն Ձեռն երկասարգ ահ ան պող ան կեր
երկասարգ. զեկմքլասրդս Ձանդրը եպարգ ||

Յօթն սասող ուռն սայլն հիւսիսի,
Բանեղօ կէկկն սպիտակ Թուլս Հի.
Միջնակ կայ սասող քնեւոր:

* Խառնալեալասա Ճանչսա խոսաչ զօլոր, երգբեղան
Ճանչսա սասսս զօլոր ||:

Թէ անձրև յանկասոնքի՝
Ի խասանոց խոսք զեղմանէն.
Թէ սարակէ յեղասպանին՝
Ծնհմպասնք հասմարաք ընանէն:

Օրհնութեան Գ. Սոփեան աստուածութեան. բառս այսմ, Պատ-
նաերգ Գ. Սոփեան Նուագարան. յդ Մուշեղայն ծագեցաւ, ա-
րուեստին ծնաւ: Իսկ զՄիջնադարեան Իտալիոյ ձայնեն, որ
ձայնի ՚ի 24 մասինս, զոր գիտեն բաղդատ զգուշութիւ.
և ՚ի գիշերի ծագմանն տանսին փակեն զամենայն խա-
չեաս ՚ի խաղին սեղմա, զի մի տեսցեն զերգ այսր հանճա-
րեղութեան: Բանից ոչ միայն չեն բառք սակն որոց
տեսանելեն զերգ նորա, այլ և զատանի ոչխարս, որոց մորթ
Թիկանց կարմրագոյն է, և բերանն ընդ սոյց սև-
ագոյն. զոր և կոչեն Աղբյուղարս: Բայց ոչխարք ընդ տե-
սանելեն յաւուրսին անդ գիշերի զաւաշնն երեք նոյն հա-
մատեղութեան՝ այլայլեալ վարել առ սուրբն, այնչափ
երթայ. մինչև ՚ի քիրտն հանանելով խոնաւ և զսարնոյ
անզգեն առ հոտն: Այսպես քերթն ապականեալ Թու-
նաւորի. զոր ընդ տեսանելն հովուաց՝ սպանանեն. ա-
պա Թէ ոչ՝ եԹէ միանգամ մնացէ ՚ի հօտ անդր՝ Թու-
նաւորէ ամեն զամենայն ոչխարս, յորս հայի. հուռէ
յետոյ և ինքն սատակի:

Իսկ յորժամ այս հանճարեղութիւն անյայտանայ՝
յայտնեալ ձեռնամուխ է առ Նօղայս: Այսպէս գիտեն
որչափ ըմպելն հեն և նոր տօմարաց. զՀնին ամսու-
նան Մարտի եկեալէ. և զնորին Օգոստոս ծնունդ. հնգետա-
սներորդն 12 ամսոցն յառաջ հաշուեալ, և զանազան
զօրձոդութիւնս յայս հաշիւ միջամտեն. ասէ Ձագաւ է:

Բազումք դիտելով զշարժմունս և զզուգընթացութիւն մոլորակաց՝ գուշակեն ոչ միայն զփոփոխութիւն օդոց, այլև զառատութի և զնուազութի տարւոյ, զջերմութի, զցրտութիւն և զչորութի այլովքն հանդերձ։ Վաղ են 'ի պատասխանել և արագածին 'ի գիւտ պատճառաց. մինչ ոչ դժուարին է յաղթահարել զնոյն բանիւ։

569. Այլ մեծ իմաստութիւն հանճարի առ նոսա Թուահամայութիւնն, որով գուշակեն զապագայս. իբրև թէ հանեալ զԹիւ գառանց՝ նշանեն 'ի լոյս և զնոցին զնշանս, զբիծս և զգիծս, որք յանձինս նկարեալ երևին. յորոց գուշակեն զապագայ դիպուածս տարւոյն զյաջողութիւն և զձախորդութիւն տեառն գառին, որ զգածի տեսն ընտանեբար. մանաւանդ երբ հանդերձեալ են լինել փոփոխութիւնք օդոց զուգընթացութեամբ աստեղաց, ևն։

Սնոտի ծանօթութիւնս ևս է բժշկական խոտոց, և փուԹով փարմակեն զախտս բնական դեղորէիւք և շփմամբ ձեռաց. սակայն պարզ կերպիւ նոցա զայս ընդաշխատասիրութեան է պատճառ առողջութեան, յոր վայելեն կարի իմն ամրութեամբ։ Թող զի և խնդիր ըմպելեաց պատրաստական զօրացուցանէ զնոսա յոյժ. Նմին իրի բազումք յիշխանաւոր Ռուսաց երթան առ նոսա 'ի մայիսի ըմպել զայն՝ և զօրանան. մանաւանդ երբ 'ի վերայ անցեալ են աւուրք ինչ, և կաթն թթուաշ մաքրէ զարիւն և զօրացուցանէ։

Հիւրասէր են ամենեքեան, այլ հարկաւոր յամենայնի. սակայն անսուսաղ աւուրս ինչ. ոչ սիրեն զմաքրութիւն. արհամարհեն զամենայն դժուարինս. մինչ զի չէք վտանգ նոցա դժուարին ինչ յաշխարհի. ունին և զայլ զարմանալի առողջութիւնս սեպհականս ինքեանց. Գիտեն պահել զցեղս. յորս նախամեծար են երեք գլխաւոր ցեղք. Հէբեան, Հէբերաձեան, Հէմոզլեան, Թող զայլ սակաւորս ցեղս։

Գափտարոս.

570. Այն աղանդաւոր Ռուսք վարեալք 'ի Ռուսաստանէ առս 'ի Պօղոս կայսերէ, որք բնակին յանապատի առ մերձ 'ի Կոնքա 'ի զանազան գիւղօրէս խաշնարած են և փարթամ. առ որս ամենայն ինչ է

հաստատելոց, որք մեծամեծարարեն խորագանձներ գեր-
գաստանի զարդարս: Այդպէս կարծեն Ցիմպրոտոնկց. ՚ի հրո-
գեմոզրոց. բայց զգեստս հրապարակ են և ՚ի քրիստո-
նէութենէ և յամբարշտութենէ. և կեան իբր անտեղք:
Զանուին մերոսութի, ոչ եկեղեցիս և ոչ քահանայս, այլ
համարձեն զամենայն խորհուրդս և զերծոս: Միայն
աղթուն են յաղօթարին զործս, պատուեն զձերս, և
տանին նոցա զձեռնին զամենայն հարկաւոր զործս և
զզգեստս:

Հաւատարիմ են ՚ի բանս. ատելի է նոցա ստախօ-
սութիւն և անիրաւութիւն. անլուր է առ նոսա հա-
կառակութ, արբեցութիւն, և այլ ազնուականք: Ռուսին
միայն վարել առ արտաքս արգարութեամբ, զայրեն զօ-
րով յամենայնի քրիստոնէական բարեպաշտութեանց և
բարեպաշտութեանց: Ունել է առ նոսա աւելոր-
դապաշտութիւն և թանձր ագիտութիւն, զի ՚ի ժա-
զովս իւրեանց նախագահ նստուցանեն զաղջիկ մի և մե-
ծարեն: Նաև որպէս պատմեն, ՚ի ընթել ծանր հարկի
խորհուրդ հաղորդանեն զպատուերս նորա յարգեն իբրև
պատգամ բղխեալ յանմեղ սրտէ: Ժողովեալ յերեք և
զայլ խոստովանութիւն մնալորեալցն. զորս Հանն եր Պօ-
ղոս կայսր յուղղութիւն ածել, այլ չեղև հնար. նախն
իսկ վարեալ զնոսա այսր: Սոյն սոքա և այլ բազում
զիւզօրէք ուղղափառ և լուսաւորական Դէկրմանեայեանց,
և և Սուգաց, որք ունին եկեղեցիս և քահանայս,
բազմախառն և փարթամանան հասարակաց.

ԴՕՆԲԱ

571. Ի սաստկին սաստ Օդու խորոյ չմնեալ ՚ի յե-
տին ժամանակս ՚ի վերայ նոցուցին հանդէպ Ն՚ինիչկեի
(560). ուր զան բնակարանք և եկեղեցի Ռուսաց, և
և կրպակաւոր հարք: Յաճախ է առ երթևեկութի
անցաւորաց ՚ի պատճառս արքունի լաստափայտից,
որովք անցանեն ՚ի Ն՚ինիչկե յամարայեալքն իւրեանց.
ունի նաւարան, ուր զան և զնան նաւակք Ռուսաց:
Ներձ Ն՚ինիչկեի նեղ է սա և Ջուրն է միշտ ՚ի հաս-
մանս. քանզի երբ հողմն է արևելեան՝ Ջուրն հասի ՚ի
Սպառս ծովակ. և ընդհակառակն երբ հողմն է արև-
մտեան՝ Ջուրն հասի յՄ.զովու ծով: Ըստ ժողովեալ անցակ

ուղեւորք սպառեալ էին առ՝ յորժամ [illegible] հողմն . յայս առնէ կատարեալ հայր [illegible] զամենեսեան 'ի զա[illegible] մանս . [illegible] [illegible] ընդ [illegible] յաջողութիւն : 'Ի [illegible] անդ Ռուսաց շինեալ էին առ կամուրջ 'ի վերայ Տա-նաիսայ . այլ հոսանք ջրոցն [illegible] քանդեալ զայն :

Ըստ որում ասացեալ [illegible] ծանուցանէք Ազախու հա-մանեան մերձ [illegible] [illegible] գետոյ . ուր են են բա-զումք ծառոց [illegible] 'ի յարմարեալ կայս , և երկայնաձիգ զամենայն ընդ [illegible] մինչեւ 'ի ծով անդր . զոր օրինակ են՝ [illegible] , [illegible] , [illegible] [illegible] . [illegible] , [illegible] . [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] . [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] : 'Ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] : [illegible] [illegible] առ յԱ[illegible] և [illegible] (371) :

[illegible]

572. Ի նորաշէն փոքրիկ քաղաքս շինեալ յ[illegible] [illegible] մերձ 'ի ծովն Ազախու , զոր Ռուսք անուանեն Ազովսքոյ . [illegible] քաղաք նորաշէն . [illegible] քաղաք [illegible] նոցա . ուր յաճախեն [illegible] [illegible] [illegible] [illegible] , և [illegible] [illegible] [illegible] . [illegible] [illegible] [illegible] են անդ [illegible] . և [illegible] են Ռուսք , և [illegible] 20 [illegible] [illegible] 'ի Ա[illegible] . [illegible] և [illegible] [illegible] , [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Ա[illegible] : Ըստ [illegible] [illegible] Ա[illegible] , որ [illegible] [illegible] 'ի ծով Ազախու . [illegible] 'ի մէջ [illegible] և Ա[illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] 'ի ծով անդր :

ՄԱՐԻԱՄՊՕԼ

573. Ի նորաշէն քաղաքս [illegible] մերձ 'ի ծով Ա-զախու , ուր յաճախեն [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] , [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] : [illegible] [illegible] են [illegible] [illegible] . [illegible] [illegible] [illegible] [illegible] Ռուսաց՝ [illegible] նոցա [illegible] : Ըստ է [illegible] [illegible] Ա[illegible] , զոր [illegible] [illegible] [illegible] 'ի Ա[illegible] [illegible] (837) : [illegible] [illegible] [illegible] Ա[illegible]

եւ թափի 'ի ծով Ազովու։ Այս վայր եղեւ 'ի Թաթա-
րաց Խրիմ Գիրէյ։

ԹԱՂԱՆ

574. Է երեւելի քաղաք վաճառականութեան շի-
նեալ 'ի վերայ Ազովու. ուր յառաջագոյն գոյր կամ-
րջիք Դարեհականաց։ Այս քաղաք կոչի եւս Թագանրոկ, որ
ելեալ է 'ի կողմն բաւեից Ռուսաց, զի Թուրքաց նշանաւորէ
եւ ոստանն, եւ Սոք եղջիւր. որոյ մէջ 'ի Հնումն անկ-
զնելին լուսաւորս 'ի վերայ եւ ոստանն աշտարակին. ամե-
նայն Թագաւորաց. Տէրութիւն Ռուսաց գեղեցիկ զար-
դարեաց զայս քաղաք երեւելի շինուածովք եւ վաճա-
ռականութեամբ. ուր անպակաս են նաւք Եւրոպա-
ցւոց, որք անցեալ ընդ նեղուցն Վոսփորայ՝ թափեն
առս զվաճառս Եւրոպայ, եւ բառնան առաջի զվա-
ճառս Ռուսաստանի՝ զերկաթ, պղինձ, նաւթ, խա-
վիար, եւ մնացուածս ցորենոյ։

Այս քաղաք է գլխաւոր նաւահանգիստ 'ի հիւսիսային
ափն Ազովու. ուր գոն 2000 տունք. 8000 բնակիչք
յայլեւայլ ազգաց։ Գործարանք անդ վաճառականաց ա-
մենայն ազգաց. յաճախեն անդ եւ Հայ վաճառականք
'ի Նախիջեւանէ։ Ամենայն փողոցք քաղաքիս են ուղ-
ղաձիգ եւ լայն. երեւելի են եկեղեցիք Ռուսաց եւ Յու-
նացւոց. շուկ եւ մեծամեծ շտեմարանք վաճառաց
եւ պալատք մեծամեծաց։ Իսկ հին բերդն է կործանեալ
այժմ 'ի բնակութիւն զօրաց։ 'Ի սմին քաղաքի վախ-
ճանեցաւ զկեանս իւր ամենաօրհնեալ Հրամանողութեամբ
Մեծանուն կայսր Ռուսաց Ալեքսանդրն Առա-
ջին 'ի 19. նոյ. 1825. Թողեալ ասեն մեծ ոչ միայն այսր
քաղաքի, զոր ունէր ծաղկեցուցանել, այլեւ բոլոր աշ-
խարհի։ Օդ տեղւոյս առողջ է եւ զով. զի հիւսիսային
լայնութիւնն է 47°. 4'. եւ երկայնութիւնն 56°. 38'.

ՆԱԽԻՋԵՒԱՆ

575. Է բարեշէն քաղաք Հայոց 10 մղոնաւ հեռի
յԱզովու ծովէ շինեալ յընդարձակ դաշտի յամի Տն.
1779-1780։ Բնակիչքն են խրիմեցի Հայք վարեալք
անդ յամի 1779. օգոստ. 20. որք էին 3000 տունք եւ

ունէին առաջնորդ զոմն Պետրոս վարդապետ. յորոց 80 տունք յայնժամ մնացին 'ի Աստարինայլաւ, և շինեցին զայն քիչ հանդերձ պարգևագրով (576): Այս քաղաքս մեծամն յայնժամ 'ի Նախիջևան վասն լինելոյ անսովոր օդոյն, որ այժմ չէ այնպէս վնասակար: Այժմեան բնակիչք Նախիջևանու լինին 2300 տունք. որք հետզհետէ բազմանան և ծաղկին վաճառականութեամբ: Շինեցին երևելի շինուածս և տունս, նաև 6 եկեղեցիս. գլխաւոր մայր եկեղեցին կառուցեալ 'ի մէջ հրապարակին յանուն Լուսաւորչին՝ մեծ է և հոյակապ: Նորաշէն է եկեղեցի Ս. Ծածնին պայծառ և գեղեցիկ. փառաւոր են և եկեղեցիք Համբարձման, սրբոյն Գէորգայ, և սրբոյն Թէոդորոսի. որում մերձ է Ս. Խաչ վանքն շինեալ 'ի վերայ բլրոյ միոյ ժամաւ հեռի 'ի քաղաքէն. առ որով անցանէ վտակ: Իսկ դպրատունն է 'ի քաղաքամիջի հիմնեալ 'ի Յոհանջանէ Գուղայեցւոյ:

576. Այս տեղի էր անապատ և վայրն կոչէր Քէրճոտափի Ասպառն. մի բերդ Ասպասովայ, որ կայ մինչև ցայժմ քառորդաւ ժամու հեռի 'ի քաղաքէն: 'Ի շինելն զայս քաղաք՝ անուանեցին Նախիջևան 'ի յիշատակ հին Նախիջևանու. զի և սա նմանամանմամբ նոցա էր [illegible] իջևանն Նոյ 'ի [illegible]: Սոքա ունէին պարգևագիր և առանձին դատաւորս հանդերձ ազատութեամբ, և և 32 հազար տէսէթին երկիր. զոր ետուր Նորա Մ. Կատարինէ Թագուհին՝ ազատ կացուցեալ զնոսա յամենայն հարկաց առ 10. որ այսպէս սկսանի հրովարտակն. * Հաստատութիւն մերոյ Ամենակարողն Պետ„րոս [illegible] և [illegible] [illegible] Պ. [illegible] „[illegible] [illegible] [illegible] [illegible] „[illegible] [illegible]... 1779. նոյեմբերի 14 և 'ի Թագաւորութեան մերում 18 ին:

Յեկեղեցի Լուսաւորչին եդեալ կայ քառանկիւնաձև վէմ՝ երկայն մի կանգնաչափ և կէս, և լայն մի կանգնաչափ, մնացեալ 'ի վաղ ժամանակաց: 'Ի վերայ այսր վիմի երևին հետք երկուց ոտից երբեմն 'ի կաւի դրոշմելոց. առ որով է յիշատակարան յանուարէն գրեալ.

ΣΤΡΑΤΟΚΛΗΣ . ΥΠΕΡ . ΠΑΤΡΟΣ . ΤΟΥ . ΒΑΤΤΟΥ . ΔΕΙΝΟΣΤΡΑΤΟΥ . ΙΕΡΗΣΑΜΕΝΟΥ . ΑΠΟΛΛΩΝΙ . ΙΑΤΡΩ . ΑΝΕΘΗΚΕΝ . ΛΕΥΚΩΝΟΣ . ΑΡΧΟΝΤΟΣ . ΠΟΡΟΥ . ΚΑΙ . ΘΕΟΔΟΣΙΗΣ . ΚΑΙ . ΒΑΣΙΛΕΥΟΝΤΟΣ . ΣΙΝΔΩΝ . ΤΟΡΕΤΕΩΝ . ΑΝΔΑΡΙΩΝ . ΥΗΣΣΩΝ .

* Ստրատոկղէս սորա հօր իւրոյ Դէինոստրատեայ քահանայցելոյ. Ապողոնի բժշկապետի կանգնեաց 'ի ժամանակս Լևկոնի պաշտօնին Պօրոյ և Թէոդոսիոյ, և թագաւորեալ 'ի Սինդաց Տորետաց Դանդարեաց Թատեաց ||:

Յուշի թէ այս վէմ եղեալ էր 'ի հրապարակական տեղւոջ կամ 'ի տաճար Ապողոնի 'ի Վոսփորէ. բայց թէ զիարդ անկեալ է 'ի ձեռս սոցա՝ մեզ անգիտելի. Թերևս 'ի Վոսփորէէ տարեալ են անդ ընդ իւրեանս. և քարեհմտութեն իւն համարին զայն օծեալ 'ի սրբոյն Գէորգեայ և բերեալ յԱնւոյ, առ որ գնան յուխտ և եպիսկոպոսանեն: Սակայն մարթ է ասել թէ 'ի ժամանակի շինութեան բերդին գտեալ են զայն 'ի հիմունս կամ յաւերակս տաճարի իրիք, և պահեալ յեկեղեցւոջ. ուրանոր տեսեալ զայն յաճախ համարեցան սրբազան ինչ:

577. Եկեղեցիս Ախալքալակու բազում են զարդք և արծաթեղէն անօթք տարեալք 'ի Խրիմէ: Նոյն 'ի զգեստեղինաց են անդ 20 ջահք և բազում կանթեղք. թող զխաչս և զարծաթապատ աւետարանս եւս և զգրչագիր մատեանս այլովքն հանդերձ, յորոց զգաղութն էառ Յովսէփ Կաթուղիկոս:

Եկեղեցւոջն Լուսաւորչին գոյ աւետարան մագաղաթեայ գրչագիր. դնի 'ի յիշատակարանին. * Գրեցաւ ,, սբ աւետարանս ձեռամբ ստեփաննոսի գրչի 'ի Թուա- ,, կանիս հայոց չխզ (1297). 'ի Թագաւորութեան հայոց ,, սմպատայ և 'ի հայրապետութեան տն գրիգորի ||:

Նոյն պատմէ թէ Սիրախիրուննն, որ է դռնապան արքային Հայոց Լևոնի՝ շնորհեաց զսա սբ տաճարին Սծածնի՝ զոր ինքն վերստին շինեալ էր 'ի յատանոյ խէչ խորտնվայն, որ կոչի Սնհամբեր սծածին: Նոյն պատմէ թէ անօրէն նայիպն Հալպայ Ալթուն Պուղայն խաբեալ զարքայն Հայոց՝ կողոպտեաց զեկեղեցիս նորա, և գերի վարեցաւ սբ աւետարանս 'ի Հալապ ընդ այլ անօթս եկեղեցւոյն. զոր ազատեաց պարոն Պետրոս Խոջայենց դեսպան առ Ամիրայն:

578. Առաջնեան գիւղականք առաջիկայ էին 'ի գե-
ղէջ Խոտրամուք, ուրանօր շինեալ էին և զեկեղեցիս,
ըստ որում պատմեցաք (419). Նաև երբ 'ի փոխադրել
նոցա յայս անապատ շինեցին զգիւղօրէս և զեկեղեցիս
նոցին անուամբք. որ են

ա. Խօջին. նշանաւոր գիւղ բարեշէն. ուր կան 300
տունք Հայոց, որոց բազումք փարթամ են յոյժ և ու-
նին յարկս անապատունս և խաչքն. Եկեղեցի նոցա կոչի
սուրբ Աստուած, որպէս 'ի Խոտրամ (424).

բ. Հօրբողամիչ. ունի 200 տունս Հայոց, և եկեղեցի
յանուն Համբարձման (422).

գ. Մեծ ասլա. ունի 150 տունս Հայոց և եկեղեցի
յանուն Ծննդեան (425).

դ. Սաղեան ասլա. ունի նոյնպէս 150 տունս Հայոց
և եկեղեցի յանուն սրբոյն Գէորգայ. փարթամ և
աշխատասէր են գիւղականքն որպէս և այլքն.

ե. Կրաքէոս. ունի 50 տունս և եկեղեցի յանուն
սրբոյ Աստուածածնի՝ Հանգուցեալ ժամանակ, յորում
պահի կին գերեզմանի Յովհաննու, որ զկնի մկրտութեան
նոցին սրբոյն Սարգսի պատմէ զանուն Խոստովանողէ, Մելքոյ
և Մելքոյենց. որպէս ասեմք (502).

Յամի Տն 1817 բնակիչք 5 գիւղիցս էին 2815. իսկ
բնակիչք Նախիջևանու 7868.

ԱԶԱՊ

579. Մօտ 'ի Հնումն Հաշտարկուոր ներքագալագաք շի-
նեալ յայսկոյս 'ի ձախակողմն Տոնաւիս գետոյ. որ
կոչեցաւ բաղաքամայն 'ի սկզբանէ անտի մինչև ցհետին
աւուրս 'ի Սատան, ուր ղարդարեալ ղայն քաղաքն՝ շի-
նեցին 'ի նմին զեկեղեցի և բազում շինուածս ըստ ձե-
ռնարկութեան ձեռոյ. Մայ քաղաքն կոչի Մաշգին. որում առիթ
ղէն 600 անօք յաւուր Մեծնավագիս, յետոյ առիթեցին
Խանթարք և ապա Մուսայք. Ուրանօր բնակեցին բա-
ղումք 'ի Հայկազանց, որք յետոյ ցրուեցան յայլևայլ
կողմանս.

580. Ի գլխաւոր քաղաքէ Տնեպրի խաղաղեաց. զոր 'ի յետին ժամանակս բարեկարգեցին և ընդարձակեցին զեկեղեցին. շինուածովք ըստ եւրոպական ձևոյ՝ պայծառացեալ առաւելութեամբ և զինուք ընդդէմ Չէրքէզաց: Այս բերդաքաղաքս ամրականք են վաճառականաց այլևայլ ազգաց. ունի զամենայն պիտոյս՝ և բազում երթևեկութի. Գլխաւոր բնակիչքն են խազախք, որք հաւատարմութբ պաշտպանեն զայս նահանգ յայնկոյս Տնեպրիս գետոյ ամփոփեալք արթնութեամբ ընդդէմ Թշնամեաց աւազակաբարոյ Չէրքեզաց (Կովկ. 182):

Այս նահանգս կամ երկիր առաւել է ճանապարհորդութեան նոցա, որք բազում աղաւաղութեամբ անօրինեն զիշխանութիւն իւրեանց: Ամենեքեան են ձիաւոր զինուորք՝ որք պատերազմի և քաջութեան: Ի սոցանէ են, որք շուրջանակի պարաւեալ 'ի ծովեզերս Խրիմապահպանեն Կառափ անուամբ (444):

ՏՕՆԱՒԻՑ ԳԵՏ

581. Այս հաշակաւոր գետ 'ի հնումն կոչէր Թանանայիս. որ ելեալ 'ի լճէն Իւանաստամանու Իվան օզերօ՝ հոսի ընդ հարաւ, և բաժանեալ զԵւրոպիա յԱսիոյ՝ թափի յԱզախ ծով: Ջուր նորա կրային է և պղտոր. զի հանապազ բերէ զտիղմն և լցուցանէ զծովն. ուր լի են աւազաբլուրք և տղմուտք. մինչ զի 'ի լինել աւելածութեան՝ յատակ ծովուն երևի. բազում են մեծամեծ ձկունք գետոյս, որպէս Մուրինա, Մերսին, Նայլն կամ Սօմ, Սիւրիւք, Զելէք. թող զմանունս, որպէս Զուկէ, Զափախ, Թառան, Լուեպեց. եւն:

'Ի գետոյ աստի մինչև ցՑարիցին քաղաք առ Եթիլ գետով կառուցեալ կայ պատուար կոչեցեալ 4ից օսրեցնոյ. ուր մերձենան երկոքին գետք. նովին իրի մեծն Պետրոս կամէր հատանել խրամ և միացուցանել զՏօնաւիս ընդ Եթիլ գետոյ: Իսկ 'ի տեղիս տեղիս զան 4 ամրոցք, որք կոչին Մենչօղնայա. Կորոէ. Օսօւօչ. և Տճասկայա:

582. Ս[illegible] Օ[illegible], որ-[illegible] (382). [illegible] [illegible] Ս[illegible]. [illegible] Ս[illegible]: Ս[illegible] (544):

[illegible] (374) [illegible] Ս[illegible]: [illegible] Ս[illegible]:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՈՐ Է

ՅԱՒԵԼՈՒԱԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՍ

583. Ահա 'ի բոլորել զայս մեր աշխարհագրական պատմութիւն 'ի ձայն դառնեցաք ձգել անդր զընթացս բանիս մինչև ց Թագաւորութեան և ց Ա[illegible] բնատան 'ի խնդիր Հայկազանց բնակելոց յայլևայլ քաղաքս այլոց կողմանց :

ՀԱՅԿԱԶՈՒՆՔ ԹԱԳԱՒՈՐԵՑԵԱԼՔ

584. Տիրապետեալ Թագաւորութեան համբաւելի այն մասն Ասիոյ, որ սկսեալ 'ի նոր Սուրիոյ ձգի մինչև ց Ատրպատա-կան, ց Իրաքն և ց Սիւնիս : Այլ մեզ անկ է գրել-րել յայն միջոց որ փակի 'ի մէջ Սեաւ և Կասպից ծո-վուց մինչև ց Պարսկանդ, քերթելով զկողմամբ Աղուա-նանու : Այսպիսոր զիտեցին Անեցիք 'ի ժամանակս Զաքարեանցն և զկնի. նաև բնակեցան 'ի կողմանս Աժդերխանու և յԱստրախանայ, որ է 'ի մէջ Աժդերխա-նու և Խազարի առ Ծովաստորհաւ Կենդրաքին ; 60 մղոնաւ հեռի յԱժդերխանէ. ուր է Ախտուրայ առ-ելի մեզ յառաջին Սօլկայի. այժմ չիք անդ հետք ինչ շինուածոց և ոչ բնակութիւն. միայն յամապայնի Խուռուռոց Թաթարք զեղեցկին անդ :

585. Այդ՝ անուն Թաթար նշանակէ աղբ և թերթև. զոր անունք հանեն 'ի Թաթարս զետոյ, որ առա-ջանեն զերկիր նոցա : 'Ի հնումն առ Կասպից ծովու բնակէին 43. ցեղք խառնադրեալ ազգաց. յորս զկնա-ւորն կոչէր Թաթարք. յորմէ եկեալ հանեցին անուանն Թաթարք : Ոսկս չունեցին բնաւ պաշտօն ինչ. միայն

կրէին ՚ի վերայ իւրեանց պատկերս Թաղեայս. զար-մանալին ընդ գերազանցութիւն արեգական, համարե-լով զայն զօրութիւն ինչ ածային. զայլ ինչ ոչ գի-տէին: Նոյա մտաւորքն ՚ի նոսա առեալ զծանօթու-Թիս ինչ կրօնի յայլևայլ ազգաց՝ եդին զօրէնս, բայց այսպիսի ինն առասպելաբանութեամբ: Ասկեփեսուր արծուի մի ասեն երևեալ իբրև հրեշտակ՝ ձայնեաց զգլխաւորն նոցա Զանկըր և ետ նմա զօրէնս ութ Նո-սախ կոչեցեալ. ա. Սիրել զմիմեանս. բ. մի շնալ. գ. մի գողանալ. դ. մի սուտ վկայել. ե. մի մատնել զոք. զ. պա-տուել զծերս. և զաղքատս. է. որ ոչ պահէ զայսոսիկ օրէնս՝ մեռցի: Նոյա կոչեաց զանուն գլխաւորին Պայան. և աներևոյթ եղև:

586. Յետ տիրելոյ Չինկիզխանին բազում աշխար-հաց և ազգաց՝ Թաթարք ունան զկռապաշտութիւն. որք մերձենալով առ Օսմանեանս եղեն մահմետա-կան. ամենայն լի են աւելորդապաշտութեամբ. որք և ՚ի բազում ցեղս բաժանին և յայլևայլ աշխարհս բնա-կեն: Ի մասն՝ Նօղայ Թաթարաց բնակի յանապա-տին Աժտէրխանու յարևելեան կողմն Նեթիլ գետոյն ընդ հպատակութեամբ Ռուսաց, ունին զօրապետս Միրզէ անուանեալ. [illegible] Թաթարաստանեայն [illegible] և զկր-նակարգութիւն [illegible] ընդ իւրեանս. հիւրասէր են [illegible] Նօղայից Օզու [illegible]. յորս [illegible] և [illegible]:

587. Պ[illegible] են Դ[illegible] Թաթարք, [illegible] [illegible] Նեթիլ գետով և են հեթանոսք. [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] մի [illegible] ՚ի [illegible]. զոր [illegible] [illegible] [illegible] և [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] ոչ [illegible] [illegible] իւրեանց: [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible], [illegible] [illegible]. [illegible] [illegible] և [illegible] [illegible]. ոչ [illegible] [illegible], այլ [illegible] ՚ի [illegible]. [illegible] [illegible] [illegible] 50 հազար [illegible] [illegible] [illegible] [illegible] ՚ի Աստրախանայ [illegible]:

[illegible] յերկիր [illegible] [illegible] Թաթարաց՝ կէս մի [illegible], կէս մի մահմետականք և կէս մի քրիստո-նեայք. [illegible] են [illegible]. [illegible], [illegible] և [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] է. [illegible] Ս[illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]:

Օրինակ առեալ է քր. Հաշուածս այր. Նոյնը ունին գնալ-նա. (613):

588. Անուանք կենդանակերպից կամ Տաթարաց Թուականաց սկսեալ յամէ Հիճրեթին 1239.

ա. Սըչան.	Մուկն.	է. Եունդ.	Ձի.
բ. Սըւըր.	Եզն.	ը. Խոյին.	Խոյ.
գ. Փարս.	Յովազ.	թ. Մըչին.	Կապիկ.
դ. Դաւշան.	Նապաստակ.	ժ. Դաքուղու.	Մարի.
ե. Լուու.	Կոկորդիլոս.	ժա. Իթ.	Շուն.
զ. Լըլան.	Օձ.	ժբ. Թօնղուզ.	Խոզ:

ԱԺԴԵՐԽԱՆ

589. Սա դղեակ է և մեծանուն քաղաք Թաթարաստանու. և աթոռ կուսակալ իշխանին այսր նահանգի. Մեծ է և բազմամարդ, ըստ վաճառականօք ամենայն ազգաց և ամենայն աշխարհաց. իսկ այս անուն եղեալ է յանուանէ մեծի իշխանին Թաթարաց Աժդերխան:

Այս մեծահռչակ քաղաք կառուցեալ կայ 'ի Ասիայն կղզի, զոր գործէ Վոլգա կամ Եթիլ գետ, որոյ գնացս խառնուրդ առաւել լայն է քան 2200 ոտն, հոսեալ 'ի հիւսիսոյ, և անցեալ ընդ Ռուսիու վանս սրբոյն Թովմայի. գնայ դէպ 'ի հարաւ և թափի 'ի ծովն Կասպից հեռի իբր 46 մղոնաւ: Իսկ սոյն քաղաքաւ անցանէ և Կուտում գետ, որ յարեւմտից կողմանէ Վոլգային աղեղնաձև հոսի դէպ 'ի հարաւ. յոր թափի և վտակն անցեալ ընդ քաղաքամէջս. ընդ որ շրջեալ նաւակաց՝ բերեն զամենայն պիտոյս քաղաքին: Երկոքին եզերք սորա զօրով տախտակամած՝ են գեղեցիկ զբօսարան քաղաքացւոց: Իսկ այսր վտակի բաժանէ զքաղաքն յերկուս մեծամեծ թաղս. մին կոչի Ընծաձնի, և միւսն Պետրոսի և Պօղոսի՝ յանուն եկեղեցեացն:

590. Այս ընդարձակ քաղաք յառաջագոյն ունէր յարեւմտեան կողմն դղեակ և սորա շրջապատեալ փայտակերտ պատնշօք. զոր քանդեալ այժմու ղեկերն շինեցին և շուրջ զօրացուցին աղիւսակերտ մեծամեծ շինուածովք. 'Ի մեծագոյն փողոցի անդ կառուցեալ

կան կարգաւ եռայարկ պանդոկք և բնակարանք ։ Թող զերևելի պալատս մեծամեծաց, զիջևանս, զվաճառանոցս և զայլ մեծամեծ շինութիւնս ։ Բնակիչք քաղաքիս են յամենայն ազգաց, ուր ամենայն քրիստոնեայք ունին եկեղեցիս. գտանին անդ և հնդկաստանցի կռապարիշտք, որք ունին զմեհեան կռոց 'ի պանդոկի իւրեանց ։

Աթոռանիստ եկեղեցին Ռուսաց մեծ է բարձր և ընդարձակ՝ կառուցեալ 'ի վերայ բլրոյ յանուն սուրբ Ածածնին մերձ յԱթիլ գետ, 'ի Սամսոնէ Մետրապօլտէ, յամի տն 1696. և կոչի Սոբոր. այս սուրբ եկեղեցի ։ 'Ի շինութեան անդ տաճարին բազում զրամս ծախեաց Սապօժնիքով Ռուս վաճառական. միջին դուռն խորանին համակ արծաթապատ է ։ Նոյնպէս արծաթապատ է մեծ պատկեր Ածածնին, զորոյ վասն ծախեցան 20 հազար ռուբլիք. ուր հնգեքին բարձր կաթուղիկէք եկեղեցւոյն երևին յամենայն կողմանց քաղաքին ։ Առ սովին եկեղեցաւ են ապարանք բնակութեան Արքեպիսկոպոսին Ռուսաց, որք և ունին երկու մենաստանս կուսանաց և 25 եկեղեցիս ։

591. Հայք 'ի սմին քաղաքի են տունք 1200. և ունին 3 եկեղեցիս. մայր եկեղեցին է յանուն սուրբ Ածածնին մեծակառոյց և փառաւոր լի բազում արծաթեղէն անօթովք և ոսկեթել զգեստուք ։ Զայս զմեծաթաւոր և օրինաւոր եկեղեցի գեղազարդեցին 'ի յետին ժամանակս ոսկեզօծ նկարուք ։ Առ որով կառուցեալ կայ առաջնորդարանն մեծաշէն և եռայարկ, որ հայի 'ի հրապարակն ։ 'Ի ստորին և 'ի միջին յարկս են նկուղք և կրպակք. իսկ 'ի վերին յարկն է արքեպիսկոպոսարանն 'ի հիւսիսակողմն բաժանեալ 'ի 10 սենեակս ։ Եւ 'ի հարաւակողմն է դպրոցն Հայոց, ուր մարզին մանկունք 'ի լեզու Հայոց և Ռուսաց ։ Անդ է և տպագրատունն անգործ, որ ամ ըստ ամէ տպագրէ միայն զօրացոյցս ։ Այս առաջնորդարան վայելուչ կառուցաւ յառաջնորդութեան Հեզահոգի Յովհաննու Արքեպիսկոպոսին Հայոց բոլոր Ռուսաստանու. զի յառաջ էր փայտաշէն և անշուք ։

Սուրբ Պետրոս Պօղոս նոյնպէս է փառաւոր և հոյակապ եկեղեցի Հայոց կրկին գմբեթիւք և ծաղկանկար զարդարեալ 'ի ներքուստ. ունի զմեծագին անօթս, զգեստս և այլ զարդս ։

Յերկոսին եկեղեցիս գտանին 150 ծանրագին շուրջառք, արծաթապատ սաղաւարտք, բազում ջահք և կանթեղք, բուրվառք և խաչք: Արծաթապատ պատկեր Տիրամօրն երկայն 5 ոտն եդեալ կայ 'ի խորանի անդ:

Եկեղեցի սրբոյն Կարապետին փոքր է, շինեալ 'ի հանգստարանի արտաքոյ քաղաքին 'ի հարաւակողմն կէս մղոնաւ հեռի 'ի մայր եկեղեցւոյն. որ կոչի Հին հանգստարանի: Իսկ եկեղեցին սուրբ Յարութեան կոչեցեալ Նոր հանգստարանի է 'ի հիւսիսակողմեան հանգստարանի 3 մղոնաւ հեռի 'ի քաղաքէն: Բաց 'ի սոցանէ գոյ և եկեղեցի յանուն Աստուածածնի Հռովմէական Հայոց նորաշէն և գեղեցիկ. զգեստատունն է յետկոյս, և ունի կրկին զանգակատունս: Իսկ վանատունն է յարևմտեան կողմն աղիւսակերտ և կրկնայարկ, ունի 8 սենեակս և սեղանատունս: Համանդէպ եկեղեցւոյն է այլ կրկնայարկ շինուած. առ որին յարկն է դպրոց մանկանց: Ունին և զայլ եկեղեցի յանուն Գաբրիէլի Հրեշտակապետին արտաքոյ քաղաքին 'ի հանգստարանի անդ իւրեանց. ուր գոն և կրպակաւոր վաճառականք. ընդ ամենայն լինին 300 անձինք, և ունին ժողովրդապետ. գոն նաև 50 եւրոպացիք. Թէմղ վլուտերականս, որք և ունին եկեղեցի:

Լեզու Հայոց մաքուր է առաւել քան յայլ տեղիս, և մերձաւոր գրաբառին. յառաջագոյն բազում էին աստ Հայք, բայց բազումք չոքան 'ի Մաքութ 12 ժամաւ հեռի. ուր տեսանին հին գերեզմանք և հետք հին շինուածոց:

592. Հայք ունին պարգևագիր 'ի Պօղոս կայսերէն հանդերձ բազում արտօնութեամբք. որոց մասնակցէ և զՀայս Ղզլարի և Մօզդոգի, օրինակ զայս.

* Հաստատարմագունից մեզ Հայկազունն քրիստոնէ-
„ական օրէնի հասարակութեան բնակեցելոցն 'ի կայսե-
„րութեան մերում 'ի քաղաքն Աստրախան, Ղզլար, և 'ի
„Մօզդօգ. ամ կերպի կողմանց ամենեցուն ընդհան-
„րաբար և ամենիցն յատկապէս՝ մերս կայսերական
„ողորմածագոյն բան . . . . Յամի ծննդեան փրկչին
„1799. և 'ի 28 ին Հոկտեմբերի: Եւ 'ի Թագաւո-
„րութեան մերոյ յերրորդում ամի. Ստորագրեցեալ իւ-
„րոյ կայսերական իսկական ձեռամբն Պաւէլ».

593. Ի սոյն քաղաքի գոյ ծովափին զինուորաց կամ ամրոց պարսպապատ, առ որով է վաճառատանց Թաթարաց, որ ձեռնեալ իբր արուարձան։ Թէպէտ զվաճառատանս Հայոց 'ի Սպիտակ արուարձանի, ուր վաճառին բերք Պարսից։ Կան և արուարձանք Սպիտակաց, Կրպաղանաց, և Թաթարաց։ 'Ի 1746 շինեցաւ նոր արուարձան 'ի Հարաւակողմն քաղաքին, ուր ըստ մեծի մասին բնակին Հայք։ Ընդ մէջ այսր արուարձանի և քաղաքին է վերայատացեալ վտակն կիրխուշա, որ անցեալ ընդ լեռն ապի՝ միացուցանէ զԿուտում գետ ընդ Ադիլ. ուրանօր նաւք խարիսխ արկանեն։

Այս մեծանուն քաղաք կարի յարմար է վաճառականութեան, զոր մարթ է կոչել գանձարան վաճառաց Պարսից, Հնդկաց, Բուխարացւոց, Խիւայից, Հայոց և Թաթարաց. ուստի սփռին վաճառք ընդ ամենայն աշխարհ։ Ըստ ամենայ գաւառին առ 3000 վաճառականք, յորս զՀնդկաստանին ունին նաւս 'ի ծովն Կասպից և յԱդիլ գետ։ Նա առ զանազան գործարանս կաշեաց, բամբակի և մետաքսեայ կերպասուց, եւ։

Նա ունի Կուտում գետոյ է այգի Պրինեազ Իւսուփովի. ուր գոյ նշանաւոր ծառ տնկեալ 'ի Մեծէն Պետրոսէ յամի Տն 1722. 'ի դարձի անդ իւրում 'ի Պարսկաստանէ. ուր հանդէպ ծառոյն եդեալ կայ պատկեր նորին. առ որով և յիշատակարան ռուսերէն օրինակ զայս.

ИмператорЪ ПетрЪ Великій 1722 года вЪ сентябрѢ мѢсяцѢ на возвратномЪ пути СвоемЪ изЪ Персіи удостоилЪ городЪ АстраханЪ СвоимЪ вЪ немЪ пребываніемЪ; и сажалЪ собственными своими руками сіе дерево. Труды и дѢянія столь великаго и всею Европою почитаемаго человѢка достойны быть сохраняемы вЪ памяти нашей.

* Մեծն Պետրոս Կայսերն 'ի դարձի անդ իւրում 'ի Պարսկաստանէ պատուեալ զԱստրախան քաղաք գալստեամբ իւրով 'ի նմա. ուր և տնկեաց զայս ծառ յաջողակ ձեռօք իւրովք։ Աշխատանք և գործք այսպիսի մեծի առն տնկելոյ ընդ Եւրոպիա արժանի են յաւերժանալ 'ի յիշատակի մերում ։

Նա 'ի 1819. մայ. 10. զայս ծառ հատեալ տապալ ընդ հուր 'ի Մոսկով տեսք այգւոյն. և այժմ յարձանաց

անտի վերջնեմիւզեան է բաղաձուկ համադէպ յիշատա-կարանին ։

'Ի շրջակայս զոն բազում մեծագործ պալատք և այ-գիք. Թէպէտ զպաղպատեան բանջարեղէնս և սառ-ձկունս, որք ելանեն 'ի ջուրց անտի ։

594. Յայս քաղաք 'ի հնումն նստէին Իշխանք Խա-Թարաց, որք բազում անգամ ապշուեալ 'ի Ֆրանսիա-ցւոց աղարտ վարեցին. Բայց 'ի 1544 Զօր Ֆրանսաց Իսպան Խառնախեւէ յաղթահարեալ նուաճեաց զԽա-Թարս և տիրեաց մինչև 'ի ծովն Կորսիկայից. այնուհետև եղև Նժոտերեան առանձին կուսակալութիւն կմ՝ Սա-հման Ֆրանսաց ։ 'Ի նախնի ժամանակի հին Նժոտերեան քաղաքն էր 'ի Սեւերեպոլ ղաւառ. ուր այժմ մարգեն և պատարագանս բարակ վասն վառօդոյ ։

595. Նժոտերեայ կամ Նպէտոլա 30 մղոնաւ հեռի սա-տի 'ի կողմն Նախեպայի՝ Թուի լինել հին քաղաք. ուր գտանիին ընդ հողով մեծամեծ ճանապարհք հին շինուածոց, զորս մուծին 'ի շինուածս ապարանից և զղեկին Նժ-ոտերեանս ։ Պատանիին յայսոսիկ կողմանս և վաղեմի ապիւսակերս զամենաքանք Ը հողաբլրով, յորոց ելին մեծամեծ ոսկերք. մին 'ի նոցանէ էր 3 կանգնաչափ երկայն, և կէս կանգնաչափ թանձր. զոր փոխադրե-ցին 'ի Նեղղպոուրի յարքունիս ։

ՂԶԼԱՐ

596. Այս բարեշէն քաղաք 470 և կէս մղոնաւ հեռի յՆժոտերմանէ, շինեալ 'ի 1735 կէս մի ապիւսակերս, և մեծ մասն փայտակերս. որ շրջապատեալ 'ի Թեկրբ և 'ի Պ արտասու գետոց՝ ձևանայ կղզի ըստ նմանութեան Նժոտերմանոս ։ Նայսպիկ գետք ղաստիճանն անդրաժան հասին 'ի լերանց Կոմկասու յարևմտից կուսէ. և 7 մղոնաւ հեռի 'ի Պ ղպարէ՝ յերկուս առաջս բաժանին. որոց մին Թեկրբ անուանի զնայ ընդ արևելս և անկա-նի 'ի Սուր գետ, և նովաւ համդերձ 'ի ծովն Կասպից. իսկ միւսն Պ արտասու անուանի հարաւաս մի ընթանայ ընդ հիւսիս. ապա խառնեալ յարևելս՝ Թափի 'ի նոյն ծով Կասպից 41 մղոնաւ հեռի 'ի քաղաքէն առ Թեկր-քի քաղաքաւ ։

'Ի միջոց երկուց գետոց եղեալ կան տափարակա-

մեծ նաւակք կարս կամուրջ. 'ի մի կողմն ունելով գե-
րան. իսկ յերկուսին եզերս գետոյ տանի եւ անտի վար-
ժեալ կան գերանք, եւ կապեալ պարան, զոր ուղեւորք
ձգեն ձեռամբ եւ անցանեն յայնկոյս։ Ընդ Պ առատու-
գեստ գնան նաւակք ընդ Հիւսիս յԱժտերխան, եւ ընդ
արեւմուտս 'ի Մօզդոք եւ 'ի Կրաւօրցկա. այլ ընդ
Թերեք գետ գնան ընդ հարաւ 'ի Դարբանդ, 'ի Տաղ-
ստան, եւ 'ի գիւղն Էնդրէա (601).

597. Ի Ղզլար են զանազան ազգք, եւ ամենայն
քրիստոնեայք ունին եկեղեցիս։ Տունք Հայոց աւե-
լի են քան չհազար, եւ ունին 3 եկեղեցիս. յորս են
բազում արծաթեղէն անօթք, խաչք, կանթեղք, բուր-
վառք եւ խաչք, Թէզ զկերպասեայ զգեստեղէնս։ Ա-
ռաջինն է աւագ եկեղեցի յանուն Վերափոխման՝ փայ-
տաշէն, բայց փառաւոր. ունի 12 քահանայս։ Երկ-
րորդն է քարաշէն մեծադիր եւ հրաշակառոյց յանուն
Լուսաւորչին. յորոյ վերայ ցարդ ծախեցան բազում
դումարք դրամոց, եւ տակաւին չէ կատարեալ. ունի
6 քահանայս։ Երրորդն է փայտակերտ եւ փոքրա-
դիր յանուն սրբոյն Գէորգայ կառուցեալ 'ի հանգըս-
տարանի միով մղոնաւ հեռի 'ի քաղաքէն։

Են 'ի սմին քաղաքի երկու վաճառանոցք. մին բո-
լորաձեւ՝ յերկուս կարգս բաժանեալ, ուր վաճառեն
զկերպաս եւ զկտաւեղէնս՝ այլովքն հանդերձ։ Իսկ
միւսն երկայնաձեւ վաճառատեղի մրգեղինաց, ընդե-
ղինաց, ապակեղինաց եւ պղնձեաց։ 'Ի քաղաքի աստ
գտանին յարմարաւոր անձինք ուսմամբ եւ վաճառակա-
նութեան։ Աստի է ուսուցանէր Տէր Կարապետ Տօ-
տանեան ճարտարագիր Ոսկեանագիր Յովհաննու Ար-
քեպիսկոպոսին Հայոց։

598. Ընդ մէջ քաղաքին անցանէ վտակ Թերեք գետոյ
ընդ արեւելս եւ առոգանէ պտղատուական այգիս Թուով
2000. որոց մին բերէ երբեմն մինչեւ 500 նաեւ 800 տա-
կառ գինւոյ (ուր իւրաքանչիւր տակառ է 400 հօխայ).
յորմէ հանեալ ցքի՝ տանին 'ի Ռուսաստան։ Բարե-
բեր է յոյժ քաղաքս, առատ են անդ ամենայն տեսակք
արմտեաց, ցորեան, գարի, կորեակ եւ մանաւանդ որիզ
պտղատուական եւ տռատաղոյն։ Թուզ ղազզի ազգի
պտուղս ծառոց եւ պտղատուական բանջարեղէնս. եւս եւ
մետաքս եւ բամպակ առատ։ Բազում առատութիւն է

անոդ ձկանց . յորս առանձնակարգոյն է Ճահճահի ձուկն պա-րարտ և պատուական, որ չիք յայլ ուրեք . միայն աստ ելանէ, և այն 'ի ձմերայնի . մեծագոյնն է կէս կանգնա-չափ . զոր տանին յընծայ 'ի հեռաւոր տեղիս :

Արտաքոյ քաղաքիս գոյ բերդ հողապարիսպ շինեալ յընդարձակ դաշտի հանդերձ լայն և ջրալից խրամաւ . ունի 3 դրունս . և առաջի դրանցն տախտակամած և շարժական կամուրջս, զորս 'ի գիշերի բառնան 'ի վեր շղթայիւք : Ներքոյ տան միով ապարանիւ գոյ անտառա-ւոր ափն Թերեք գետոյն . ուրանօր յաւագակաց փախ-չի գոյ խնձորենի . առ որով և պատկեր սրբոյն Գէորգայ, ուր յաճախեն ուխտաւորք յամենայն ազգաց, և զենուն զուարակս և հաւս, համարելով զատանել ան-տի զբժշկութիւն ախտաժետաց :

ԲԷՔԷԹԷ, ՄՕՂԱԽԱԼԻ, ՂԱՐԱՔԱԼԻ

599 . Այն բարեշէն գիւղօրէք 25 մղոնաւ հեռի 'ի Ղզլարէ 'ի հիւսիսակողմն : Բնակիչք առաջնոյն են Ղարաբաղեցի Հայք 70 տունք . որք ունին զեկեղեցի փայտաշէն յանուն Ամենափրկչին : Բնակիչք երկրոր-դին են գիւղականք Ղարաբաղու, զորս վարեաց աստ Ռուսն, 'ի 1797 . ուր գոն 100 տունք Հայոց . որք ունին զեկեղեցի Աստուածածնին : Բնակիչք երրոր-դին են նոյնպէս գիւղականք Ղարաբաղու 150 տունք, ունին զեկեղեցի Աստուածածնի . որք առ հասարակ են այգեպանք և հողագործք . Ի իւրաքանչիւր գիւ-ղական ունի 30 տէսէթին երկիր՝ տուեալ նոցին պար-գեւաբար, որ սկսանի .

600 . * Համառօտագունից մեզ հայկազանց քրիս-
» տոնէական օրինի հասարակութեանն Դերբենդու և
» Մուսկուրու [illegible] կերպի կողմանց ամենեցուն ընդ-
» հանրաբար և ամենից յատկապէս մերս կայսերական
» ողորմածագոյն բան ... Յամի ծննդեան փրկչին 1799
» և 'ի 28ին հոկտեմբերի : Նա Թագաւորութեան մերոյ
» յերրորդումն ամի : Ստորագրեցեալ իւրոյ կայսերա-
» կան իւկական ձեռամբն Պաւել :

ՍԱՐԱՓԱՆ, ԱՆԴՐԷԱ

601. Սալեանն է գիւղ յարևմտեան կողմն. ուր գան 60 տունք Հայոց և եկեղեցի յանուն սուրբ Աստուածածնին։ Իսկ երկրորդն է Նոխալէս գիւղ Թաթարաց 'ի հարաւակողմն Ղզլարի՝ մի և կէսօրեայ ճանապարհաւ հեռի անտի. որ անկանի 'ի մէջ Սուլաք և Աքսայ գետոց՝ ամրացեալ բարձրաբերձ լերամբք և անտառօք։ Ուր գան 10 տունք Հայոց և 60 կրպակք Թիֆլիզեցի և Ղարաբաղեցի վաճառականաց Հայոց. ունին զեկեղեցի յանուն Աստուածածնին։

ԴԱՐԲԱՆԴ

602. Այս անուանի քաղաք վեցօրեայ ճանապարհաւ հեռի 'ի Ղզլարէ ընդ հարաւակողմն, որ ունի յարևելից զծովն Կասպից, յարևմտից զլեառն մեծ, 'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ զհռչակաւոր ամուր պարիսպն Ճնաշխարհիկ, որ կառուցեալ է կրկին անհնարին մեծահաստոր քարամբք եւեթ. զոր ասեն շինեալ 'ի Մեծէն Աղեքսանդրէ։ Այսքիկ պարիսպք ունին կրկին դըրունս. մին ընդ հարաւ, ընդ որ գնան յաշխարհն Պարսից, և միւսն ընդ հիւսիս, որ է դուռն Ճորայ, ընդ որ գնան 'ի Ղզլար և յԱժտերխան ընդ ցամաք։

603. Այլ դիտելի է, զի պարսկական անունս Տէրպէնտ նշանակէ դռնակապ. որովհետև այս բերդ շինեալ է 'ի կիրճս ձորամիջի իբր դուռն. որ կոչեցաւ 'ի տաճկաց Տէմիրգաբու։ Ուր լայնութիւն ձորամիջի է իբր կէս մղոն, և երկայնութիւնն յարևելից յարևմուտս իբր 3 մղոն. որ յարևելից կուսէ յանգի 'ի ծովն Կասպից, և յարևմտից կուսէ 'ի սարոտս ապառաժ լերանց։ Պարիսպք քաղաքին բարձր են յոյժ և թանձր 3 կանգնաչափ. զոր ոմանք համարին թէ շինեալ իցէ 'ի կրոյ և 'ի ծովային խեցեաց լօսելոց. զոր երկարութիւն ժամանակաց երևեցուցանէ վէմ իմն միաստանի։ Այլ այլք համարին միահաղոյր վէմս, յորս երևին տառք ինչ Ասորւոց և Արաբացւոց, կամ անծանօթ նշանագիրք ինչ։

604. Քեաթիպ չէլէպին այսպէս խօսի 'ի վերայ պարսպաց Դարբանդի. * Երկու պարիսպք են (ասէ)

„ 'ի ստորոտս բոլորակաձև լերին կառուցեալք. 'ի մէ-
„ ջոցէն հոսի աղբիւր բարեհամ: Երկայնութիւն պարըս-
„ պին 10500 կանգուն, և լայնութիւնն 550. ունի 70
„ բրգունս ... պարսպաւն ներքոյ և արտաքոյ է 'ի սրբա-
„ տաշ քարանց, յորս են քարինք մեծամեծք չորեք-
„ կանգնաչափք յերկայն և 'ի լայն ... սակս թէ պա-
„ րիսպ սորա մնացեալ է 'ի ծով անդր իբրև մղոնս 2.»:
Իսկ 'ի պատմութիւն Մողոլ Թաթարաց դնի, թէ պա-
րիսպք նորա շինեալ են վեցտասնաչափ թանձր 'ի մա-
նաւոր նիւթոյ զանգակոյ 'ի խեցեմորթից և 'ի գայլա-
խազ քարանց լուալոց 'ի ծովուն, որ կարծրագոյն է
քան զվէմս: Ընդ մէջ ծովուն և լերին գոյ ընդարձա-
կութիւն քառորդի միոյ փարսախի. ուր 400 տնա-
չափ պարիսպք կառուցեալք՝ Թուրն երկու մեծամեծ
վէմք հիմնեալք 'ի ժայռս լերանց, և ձգեալք 'ի լեռա-
նէ մինչև ցծով այնպիսի ամրութեամբ, զի հարկ է
ընդ երկաթի դրունս անցանել:

605. Այս քաղաք կոչի Շէհէրէստան. այսինքն քա-
ղաք Յունաց. ըստ որում շինեալ յԱղեքսանդրէ Մե-
ծէ. ընդարձակութիւնն, զոր պատպարեն պարիսպք,
է երրորդ մասն քաղաքին. իսկ բուն երկայնութիւն
քաղաքին է քառորդ փարսախի. զորմէ ասեն Պար-
սիկք թէ աւերեալ կայր. զոր մեծն Խոսրով նորոգեաց
առ Յուստինիանոսիւ:

Գոյ անդ նաւահանգիստ փակեալ շղթայիւք, արք
ձգին յերկուց ամրոցաց, և ոչ թողուն ասն նաւուց ա-
ռանց հրամանի մտանել 'ի ներքս: Զորս պաշտպանէ
բերդն, որ 'ի գլուխ լերին: Առ բերդիւ երևին աւե-
րակք երկայնաձիգ պարսպի, որ սկսեալ 'ի Կասպից
ծովէ հասանէր սակս մինչև ցՍեաւ ծով առաւել քան
150 մղոնս. զորմէ այսպէս խօսի Լեվեաք.* Այս գործ
„ կարէ միայն համեմատիլ ընդ մեծի պարսպին Չի-
„ նաց, և յանդիման առնել այժմ զզօրութիւն և
„ զճարտարութիւն նախնի բնակչաց այսոցիկ կողմանց»:
Պալ. Սաս:

606. Բնակիչք քաղաքիս են Պարսիկք և այլազ-
գիք. ուր այժմ գտանին 50 տունք Հայոց, և ունին
զեկեղեցի յանուն Ամենափրկչին: Աստանօր գոյ և
վանք վաղնջական սրբոյն Գրիգորիսի. որոյ եկեղեցին
մեծ է և ընդարձակ հանդէպ 'ի մեծահատոր վիմաց.

նոյնպէս և՝ գմբէթն է միմնաչէն կանգնեալ 'ի վերայ 80 սեանց 'ի չորս կարգս շինեալց ընդ երկայն. երկուքն կարգք կցորդեալ կան յերկուսին որմունս, և երկուքն 'ի մէջն հանդէպ միմեանց կարգաւորեալք ընդ երկայն։ Սոյն ահագործ եկեղեցի ունի ընդարձակ բակ, և շուրջանակի պարսպապատ օթևանս և աղբիւրս։ Սոյն այժմ գաւիթ 'ի ձեռս Պարսից՝ 'ի մզկիթ փոխադրեալ են. Թէպէտ քաղաքն է ընդ տէրութ֊ Ռուսաց. ուր նստի քաղաքապետ։

Դիրք քաղաքիս յարևմտից կուսէ է զառ 'ի վայր կառուցեալ յոյժ անտառախիտ լերինն. 'ի վերին մասն բնակեն Պարսիկք, և 'ի ստորինն Հայք։ Դրան արտաքոյ քաղաքին պարտեզք և այգիք պատուական խաղողոյ. այլ գինին չէ զօրաւոր։ Սւրանոր երևելի բազում հին հիւսաբոլոր գամբարանք հսկայից. երկայնութիւն տապանացն հասանէ մինչև ցհինգ կանգուն։ 'Ի սոցանէ ասեն կանգնեցան այն սոսկալի պարիսպք առ ժամանակաւ մեծին Աղեքսանդրի։ Սւրանոր գոյ և մեծ տապան ուրումն հռչակաւոր հսկայի. զորմէ բազում ինչ առասպելաբանեն Պարսիկք (Պետ. 172)։

ՀԱՑԿԱԶՕՒՆՔ ԿՈՎԿԱՍՈՒ ԵՒ ՎՐԱՍՏԱՆԻ

607. Սոյն կուսակալութի սկսեալ 'ի Կասպեան ծովու (250) մղի մինչև ցՍ[illegible]՝ պարագրեալ ընդ մեծի մասին զաւհագին և զժուարակոխ լեառն Կովկաս. որում տիրեալ Ռուսաց՝ անուանեցին Կուսակալութիւն Կովկասու. սորա գլխաւոր քաղաքք են Նորցկաս, Ստաւրոբոլ, Մօզտոք, Աղեքսանդրով, ևն. յորս աստ յաւելու և Ղզլար, զոր մեք ստորագրեցաք 'ի կուսակալութեան Աժտերխանու (596)։

ԽԱԿՕՐՑԿԱ

608. Սա գլխաւոր քաղաք կուսակալութեան Կովկասու, ընդարձակ և բարեշէն. ուր լինին բազում երթևեկութք յայլևայլ կողմանց. որովհետև ամօք յառաջ աստ նստէր կուսակալ իշխան Ռուսաց, որ տիրէ կողմանցն Կովկասու և լեռնաբնակ ազգաց։

Գլխաւոր բնակիչք քաղաքիս են Ռուսք. բայց գոն

անդ և 15 տունք Հայոց. որք ունին առանձին եկեղեցի: Արտաքոյ քաղաքին մերձ յարուարձանս են բալորաձև և սիւնազարդ կրպակք Թուով իբր 80 Հայ վաճառականաց Նախիջևանցւոց և Թիֆլիզեցւոց. Ի մէջ կրպակացս է ընդարձակ հրապարակ, որ ունի կրկին դրունս. զորս փակեն 'ի գիշերի: Ուրանօր յարևմտեան անկեան գոյ փոքրիկ եկեղեցի փայտաշէն յանուն սրբոյն Գէորգայ. յիւրաքանչիւր եօթնեկի լինի անդ տօնավաճառ ագանելեաց և ուտելեաց այլովքն հանդերձ:

Գաւառին աստ և անդ ջերմուկք և աղբիւրք Թթուահամ ջուրց 'ի վերայ սրածայր լերանց 40 մղոնաւ հեռի 'ի քաղաքէն. որպէս տեսանելին և յանցս Ճանապարհին, որ գոլով դժուարակոխ՝ իբր կիրճ իմն ձևացեալ է զկողմամբք երկուց բարձրաբերձ լերանց սեպացելոց դէմ ընդդէմ միմեանց. որոց ընդ մէջ անցանէ Թերք գետ, որ ելեալ 'ի լերանց աստի բաժանի յերկուս առաջս, մին անկանի 'ի Կուր գետ, և միւսն 'ի ծովն Կասպից. որպէս ասացաւ (596):

Բազմութիւն Ռուսաց և այլոց ազգաց 'ի հեռաւոր վայրաց յաճախեն 'ի մայիսի յայսոսիկ ջերմուկս և բնակին զամսօրեայ ժամանակ 'ի պատրաստական իջևանս, որք շինեալ են սակս ախտաժետաց, և գտանեն զառողջութիւն:

ՄԱՃԱՌ

609. Է երևելի գիւղ 60 մղոնաւ հեռի 'ի քաղաքէն ընդ հիւսիս. ուր գոն 60 տունք Հայոց և եկեղեցի փայտաշէն յանուն Սբ. Աստուածածնի: Բնակիչք առ հասարակ են հողագործք, և երկիրն է պտղաւանդ, որ բերէ զընդեղէնս ընտիրս և պտուղս:

'Ի մերձակայ վայրս երևին բազում աւերակք վաղեմի անձև շինուածոց. զորս հետզհետէ քանդեալ դնեն 'ի նոր շինուածս: Ուր գոն և հին գերեզմանք հսկայից ծածկեալք ընդ հողով. երկայնութիւն տապանաց է 5 կանգնաչափ, և լայնութիւն 2. յորոց վերայ երևին անծանօթ ձևք տառից՝ փորագրեալք 'ի մէջավայրի անդ ընդ երկայն, որ բարձր է քան զշրջանակն քառանկիւնաձև:

Սա էր արդեօք հին երևելի քաղաքն Մաճար շի-նեալ 'ի նախնի Սկիւթացւոց : Ուրանօր զառաջինն զանեղի առեալ Հիւսիսային Թաթարք յարշաւել ան-դ իւրեանց յարեւմուտս. յորմէ առեալ կալան զանուն այժմեան Մաճառք սերունդք նոցա (324):

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎ

610. Է փոքրիկ քաղաք ոչինչ կարի հեռի 'ի Մա-ճառէ. ուր գոլով զանազան ազգաց՝ լինի և երթևե-կութիւն անցաւորաց և վաճառականաց : Հայք աստ չունին բնակութիւն. այլ են կրպակաւորք անցաւորս 'ի Նախիջևանեցւոց և 'ի Մօզդօգցւոց :

ՍՏԱՒՐՕՊՕԼ

611. Է անուանի այժմեան մայրաքաղաք այսր նա-հանգի՝ մեծատարած և գեղեցկաշէն հեռի 'ի Գէորգ-կայէ 168 մղոն. ունի բազում միմակերտ շինուածս և փողոցս ուղղաձիգս : Երկիր նորա է արգաւանդ. օդն և ջուրն առողջ ; անտառք և գիւղօրէք բազում. մինչ զի ունի զամենայն պիտանիս :

Այս քաղաք շինեալ է 'ի բարձրաւանդակի. ուր գտա-նի 20 տունք Հայոց, և 30 կրպակաւոր տաճար-կանք : Ունին զեկեղեցի յանուն սուրբ Լուսաւորչին կառուցեալ 'ի կանգնաչափ միմատաշ քարանց. բայց զմբէթն է անկատար : Ուրանօր յիւրաքանչիւր եօթ-նեկի լինի տօնավաճառ. այլ յամին երիցս լինի մեծ. ուր ժողովին հազարաւոր անձինք յայլևայլ կողմանց :

Այժմ աստ փոխադրեցաւ 'ի Գէորգկայէ զաւա-ռական կառավարութիւն, եղեալ իշխանանիստ, որով օրըստօրէ ծաղկի և մեծանայ երևելի շինուածովք :

ՄՕԶԴՕՔ

612. Է բարեշէն քաղաք 115 մղոնաւ հեռի 'ի Գէօ-րգկայէ : 184 'ի Կզլարէ. և 398 և կէս 'ի Թիֆ-լիզէ. ուր գտանին զանազան ազգք՝ Ռուսք, Հայք, Վիրք, Չերքեզք, և Օսք : Տունք Հայոց են 250, ունին և 3 եկեղեցիս. սուրբ Լուսաւորչին և սուրբ

Սամփսոնեանս են 'ի քաղաքէ անտի. իսկ ասորք Պոնտոսի արտաքոյ քաղաքին 'ի հանգստարանի :

Նշուեալ է վաճառանոց քաղաքին բաժանեալ յեր-կուս կարգս բոլորաձեւ դէմ ընդդէմ միմեանց իբր Պեզազիստան . ուր վաճառին կերպասք եւ կտաւե-ղէնք : Գոն աստ եւ Հայկազն հաւատացեալք իբր 15 տունք, որք ունին առանձին եկեղեցի նորաշէն յանուն սրբոյն Պետրոսի, առ երի եւ վանատուն : Ընդ այս քա-ղաք ունին անցանել ամ ուղեւորք 'ի գնալն 'ի Թիֆ-լիզ, ուղեւորեալ ընդ երիս բերդս Կովկասու շինեալս 'ի վերայ ճանապարհին 'ի պաշտպանութիւն . յորս նստին բերդակալ իշխանք հանդերձ զօրօք Ռուսաց : 'Ի վեր-ջին ժամանակս շինեցաւ 'ի Սօղոտ գեղեցիկ արքե-լանոց բարեկարգ . ուր պարտին ապասել զաւուրս 4 . ամենայն ուղեւորք, որք եկեալք 'ի Տրաստանէ անցանեն ընդ բերդս :

613 . Ռայոզէկ բերդորայք կոչին Ռախոլլուղուխ, Կըլէ-դէլի, Սալանի-խան, որ է 'ի մնացս լերանց Կովկասու : Սաստ զի երեքօրեայ ճանապարհ մեծի լերին Կովկա-սու մինչեւ ցՍօղոտ կարի վտանգաւոր է սակս ուռա-կաց անդրանցելոց մանաւանդ յանտառի անդ առ Ռախոլլուղախաւ . ուր դարանեալ կան Զաշանք մահ-մէտականք նման Չերքեզաց, որք արեանարբուք, որոց լեզու տարբեր է (587) :

Ուստի բաղում անգամ եղեալք 'ի դարանէն յեղա-կարծում ժամու յառնեն 'ի վերայ անցաւորաց եւ կո-րուսանեն : Նմին իրի բերդականն տայ ուղեւորաց սուրհանդակ զօրս . որք բաղում պատրաստութեամբ եղանեն 'ի ճանապարհ : Յամենայն եօթնեկի արքունի սուրհանդակն կազմէ զկարաւան հարիւրաւոր զինուո-րօք եւ 3 թնդանօթովք տանի զթուղթս 'ի Վլադի-կաւկաս, եւ անտի 'ի Թիֆլիզ :

614 . 'Ի Վլադիկաւկասէ մինչեւ ցՍտեփան Ծմին-դայ են վերամբարձ եւ ձիւնապատ լերինք անուանեալք Նշաչֆուղ . 'ի գլուխ լերանց երեւին վանք կառուցեալք 'ի նախնի Վրաց : Յայս միջոց լերանց բնակին Օսէ-լեանականք, որք են աւազակք ծառայաշարք . բայց պատուեն եւ զկատու եւ զեղջ զարդարելով զեղջիւրսն թանձրանիւթ մետաղաշոտութեամբ :

'Ի Ստեփան Ծմինդայէ, ուր է վանք Վրաց յանուն

սրբոյն Վախտանգոսի, մինչև ցՄեթիփելզ էին վայրենիք լեռնականն ազգք Վրաց կոչեցեալք Թիանէթի :

ԹԻՖԼԻԶ

615. Ի մայրաքաղաք կուսակալութեան Վրաստանու, և երբեմն թագաւորանիստ վաղեմի քաղաք Վրաց. որ յարևմտից ընդ հարաւ պատեալ է ապառաժ լերամբք. յարևելից ունի զԿուր գետ հոսեալ ՚ի հիւսիսոյ ընդ հարաւ : Յայնկոյս գետոյն է լեառն Հաւլաբար. յորոյ վերայ է ընդարձակ դաշտ, ուր բնակին գիւղականք Էջմիածնի, զորս վարեաց աստ մեծ կուսակալն Ռուսաց Ցիցիանովն ՚ի վերջին պատերազմին ընդ Պարսից : Ուրանօր սկսան շինել բնակութիւն և ընդարձակել զքաղաքն :

Այս մեծահռչակ քաղաք կառուցեալ է ՚ի զառ ՚ի վեր լերին սկսեալ յեզերաց անտի Կուր գետոյն, և ունի պարիսպ կաւակերտ խճախառն : Ներքոյ քան զկամուրջն ՚ի հարաւակողմն ընդ արևելս են 5 բաղանիք բնական ջերմաջերմ ջուրց. որք շինեալ են բաղում կամարօք և մեծագործութեամբ, ունելով զանազան քարուկիր աւազանս խորինս : Ի ձախակողմն բաղանեաց է ճանապարհ Պարսկաստանու. իսկ յայնկոյս կամրրջին բաղանեաց է բարձր աշտարակ Նարինգալէ ձայնեալ. ուր պահեն զէնս և կարասիս պատերազմի :

616. Ի հիւսիսակողմն արտաքոյ քաղաքին կայ դաշտ տափարակ. ուրանօր է արուարձան, որ է ծայր մեծի թաղին կոչեցելոյ Տաֆիլաղ : Անդ մերձ ՚ի գետն է Վանք Հայոց, կամ Առաջնորդարան արքեպիսկոպոսանիստ. Հնաշէն եկեղեցին Կաթողիկէ անուամբ հիմնեալ է ՚ի 600 թուականին ՄՆ. որ ունի 3 սեղանս միակարգս և 5 կաթուղիկէս, նկարեալ ՚ի ներքուստ զանազան պատկերօք :

Երևելի է ուսումնարանն նորաշէն կանգնեալ ՚ի մեծանուն Ներսիսէ Արքեպիսկոպոսէ Հայոց Վրաստանու, յորում մարզին մանկունք հայկազնեայք ՚ի լեզու Հայ, Ռուս, Պարսիկ, ընդ վերակացութեամբ խոհական Յարութիւն վարդապետի Ալամդարեանց : Բնակիչք մեծի քաղաքիս են զանազան ազգք. ընդ ամենայն հաշուին քան հազար տունք. իսկ տունք Հայոց

են 5000, որք յառաջագոյն ունէին 24 եկեղեցիս. այլ յառնուլ Մէհէմմէտ խանին զայս քաղաք՝ շատք քանդեցան: Այժմեան եկեղեցիք Հայոց բաց 'ի վանաց են 10. զորս նոքա կոչեն ա Սուրբ Նշան Ժողով. բ Զէնճպաշէն. գ Բէթղեհէմ. դ Մեծ Բերդ. ե Փոքր Բերդ. զ Սուրբ Գէորգայ. է Սուրբ Սարգիս. որ է արտաքոյ քաղաքին մերձ 'ի վանս. ը Էջմիածին Խոճենց որ 'ի Հավլաբարն. թ Սուրբ Սարգիս մերձ 'ի բաղանիս. ժ Սուրբ Կարապետ յայնկոյս գետոյն:

617. Ս. Նաղարի Կուսանաց է մենաստան հայկազն միանձնուհեաց, որք կրօնաւորին 'ի վաղուց հետէ ընդ հպատակութեամբ աբբայուհւոյ:

Սիոն է մայր եկեղեցի Վրաց թագաւորաշէն գմբէթայարկ և բարձրագոյն հանդերձ բարձր զանգակատամբ, կառուցեալ յափն Կուր գետոյ. որ ընդարձակ է և մեծագործ՝ նկարեալ 'ի ներքուստ բոլոր պատմութիւն Աստուածաշնչի: Նոյնպէս մեծաշէն է եպիսկոպոսարանն Վրաց: Գոն 'ի Թիֆլիզ և հայկազն հռովմէականք իբր 40 տունք. ունին քարաշէն եկեղեցի յանուն սուրբ Աստուածածնին շինեալ 'ի 1803. ընդ նմին և վանատուն, յորում բնակեալ Լատին քահանայից՝ հովուեն զժողովուրդն: Ուրանօր գոն և Յոյնք եկեղք յայլևայլ կողմանց: Տունք մեծամեծաց են կրկնայարկք և աղիւսակերտք. միջակաց՝ միայարկ. իսկ հասարակ ժողովրդեան՝ կաւաշէն խճախառն. որոց տանիք կոչին Պարղաս: Փողոցք քաղաքիս նեղ են և անկանոնք. տունք այնպէս խճողեալ են առ միմեանս, զի տեղիս ինչ և ոչ փողոցս ունին:

Այժմ սկսան 'ի Տափիթաղի շինել տունս ձևաւորս 'ի վերայ լայնանձիգ և ուղիղ փողոցաց ըստ եւրոպեան կարգի. ուրանօր կառուցեալ կայ մեծ պալատ կուսակալին. առ որով և զարդարուն պարտէզ արքունի, կանոնաւոր կրպակք, և պալատք մեծամեծաց:

'Ի թիկանց Տափիթաղին ընդ արևմուտս են այգիք և գեղեցիկ պարտէզք. այնպէս զի 'ի նկատել 'ի բարձանց անտի կարի իմն զուարճալի երևի դիրք և տեսիլ մեծի քաղաքիս՝ ունելով 'ի մէջ իւր զգեղեցկահոս և զարարեալն Կուր գետ: Յերկոսին ծայրս քաղաքին շինեալ են կրկին արգելանոցք. մին տակս եկաւորելոց 'ի Պարսկաստանէ, և միւսն 'ի Կովկասէ:

618. Բազում Թմբկաբերդաց կառուցեալ կայ լայնա-
նիստ կամուրջ փայտաշէն ձգեալ 'ի վերայ Հավրա-
պար: Ակռաթոր աստ և անդ հաստատեալ կան 'ի գետ
անդր 10 չարքամահան Ըմբաղանք, որք հաղորդեալ 'ի հասա-
նաց գետոյն՝ մատակարարեն զամենայն քաղաքին. այլ եւ
քնամ յարմարակեալ 'ի բանսուեննէ ջրոց՝ աստ և անդ
տարրուբերին:

Կուր անուանի գետ կոչի հասարակօրէն Մտկուարի. որ ելեալ կրկին վտակօք 'ի լերանց Սողանլույ և 'ի լճէ Թաւչեթի՝ գայ միանայ յԱրագւայ. ապա անցեալ ընդ կիրճն Պեգրանեի և Ը Թիֆլիզ՝ ընդունի 7 երկուելի վտակս: Հասեալ յետոյ մերձ 'ի Ջաւատ խառնեալ յԵրասխ գետ՝ նովաւ հանդերձ թափի 'ի ծոցն Կաս-պից:

'Ի Կուր գետոյ յաճախ ելանեն բազմատեսակ ձկունք. մանաւանդ ձուկն Օրախալ պարարտ յոյժ, և Մէրում, զոր նաքա կոչեն Զամախ. յորմէ հանեալ խաւիար բազում մերձ 'ի Կենճէ, տարածեն այլուր: Կոտանի 'ի նմա և ջրշուն. այլ չէ այնչափ յաճախ մերձ 'ի Թիֆլիզ:

Կուր գետ 'ի սորին ծայր Թիֆլիզի յերկու թևս բաժանեալ, և 'ի մէջ նորա հասարակութեան անուրքն միաւորեալ կազմէ երկայնաձև գեղեցիկ կղզի, որ կոչի Օրթաճալա. ուր են փայտեղէն տաղաւարք և բուրաստանք ծառաստանաց:

619. Մօղլաք է վտակ, որ հոսեալ 'ի գլխոյ լերին՝ անկանի յաւազանն առ ստորոտով լերին. յորմէ բաշխեալ ուռոգանէ զայգիս: 'Ի վերայ այսր լերին գոյ եկեղեցի Ս. Դաւթեան Թագաւորաց կոչեցեալ. Տէր Լեւոն, ուր բնակեն յաճախեն ուխտաւորք յիւրաքանչիւր եօթնեկի յաւուր հինգշաբաթւոյ:

Կախեթ և Թիանեթ են անուանի գիւղօրէք նաև գինւոյն. զի կողմանքս են լեռնայինք, յորս բազում են այգիք և առատ գինին, զորս վաճառեն 'ի կրկին շուկայս երկայնաձիգս. ուր մասունք ամենեցուն մանկանց և ծերոց է գինի, զոր ըմպեն փոխանակ ջրոյ: Իսկ Թիֆլիս է ամբար ամենայն բարեաց և պտղոց: Բնակիչքն ընդ գետ զամենայն պիտոյս, և յաճախեն անդ յամենայն կողմանց վաճառականք ամենայն ազգաց:

Զիոնայ է ահագին լայնարձակ եկեղեցի Ս. յորոց կա-

մարականդ զմիեթմաւոր կառուցեալ 'ի մեծ գիւղն միով աւուրբ հեռի 'ի Թիֆլիզէ. ուր գոյ մեծ կամուրջ փայտաշէն։ Ներքանուշիւր անցանող պարոն տեղ այս եկեղեցւոյ 2 Մպպատ առ մի թեմն։

ԳԱՆՁԱԿ

620. Այս քաղաք սովորաբար կոչի Կէնձէ. այլ յետ անցանելոյ առ Ռուսս կոչեցաւ Ելիզաւէդբօլ. որ էր երբեմն բերդաքաղաք ամրացեալ երբեմն յՕսմանեանց։ Բայց 'ի վերջին պատերազմի պաշարեաց Ցիցիանով քաջ զօրապետ Ռուսաց, և կարի իմն արկ 'ի նեղ. մինչև խաբեբայ Պարսից ուխտել նմա երդմամբ անձնատուր լինել։ Ուստի բացին զդրունս քաղաքին, և խորամանկ քաղցր բանիւք յորդորեցին զնա գնալ 'ի կոչումն Պարսիկ խանին. որ ընդ մտանելն քանի մի զօրօք 'ի քաղաք անդր՝ փակեցին զդրունս, և սուր եդեալ 'ի վերայ կոտորեցին զամենեսեան։ Յաւրոց անդէն եհան զվրէժս տէրութիւն Ռուսաց չարաչար կոտորելով զմնացեալսն ընդ Խանին։ 'Ի Գանձակէ տանին ընդ գետն 'ի Թիֆլիզ զապխտեալ ձկունս և զայլ ուտելիս։

ԿՈՐԻ

621. Այս գիւղաքաղաք Սրաց կառուցեալ 'ի դաշտի 2 աւուրբք հեռի 'ի Թիֆլիզէ. ուր գոն զանազան ազգք. բայց տունք Հայոց են 150. և ունին զեկեղեցի քարաշէն. որք թէպէտ անգիտակ են հայկական լեզուի, զի առ հասարակ խօսին վրացերէն, սակայն գրասէր են և ընդունակք ուսման։ Գոն անդ և հռովմէական հայկազունք. ունին նորաշէն եկեղեցի և վանատուն քահանայի։

Առ թիկամբք քաղաքիս է մի ծայր Սովկատու, ընդ որ իջանէ մոխրագոյն գետն Լիախւ, և անցեալ ը քաղաքն անկանի 'ի Կուր գետ միով ժամաւ հեռի։ Ոչ կարի հեռի գտանի ատի մեծագործ կամուրջն երկքամարեան քարաշէն և աղիւսէն, որոյ մի ծայրն հաստատեալ կայ 'ի լեռան բարձր. ընդ որով անցեալ գնայ Կուր։

622. Ի հռչակաւոր վանք 2 աւուրբք հեռի 'ի Թլփիլիզէ ընդ հարաւ. որոյ արեւելեան կողմն է անտառախիտ շրջապատեալ 'ի լերանց անտի. 'ի հիւսիսային կողմն է ձորն աղօրեաց վանաց. իսկ յարեւմտեան կողմն է անապատ և այգեստանեայք մինչև ցԼօռի. ուր գետն հոսեալ 'ի հարաւոյ ընդ հիւսիս՝ խոտորի առ յարեւմուտս: Հաղբատայ լեառն ունի մի եւեթ ճանապարհ, որ ձգի մի ժամ ընդ զառ 'ի վեր՝ այնչափ դժուարակոխ, զի պատմին թէ Լէնկթէմուր չկարաց զօրութեամբ իւրով ելանել 'ի վեր անդր:

Ի մէջ ընդարձակ հովտին յարեւելեան կողմն կառուցեալ կայ վանքն Հաղբատայ սուրբ Նշան պարըսպապատ և ամրաշէն: Եկեղեցին է 'ի միջակէտի անդ ընդարձակ և հոյակապ՝ համակ 'ի վիմատաշ քարանց. առ որով են կրկնայարկ շինուածք քարաշէնք 'ի բնակութիւն միաբանից: Յարեւելեան կողմն գոյ դուռն և այլ եկեղեցի կցորդեալ նմին: Նոյնպէս 'ի հիւսիսակողմն գոյ այլ եկեղեցի յանուն Համազասպայ՝ ընդարձակ և գմբեթայարկ. բայց գմբէթն է անլրացեալ:

Կիրակոս պատմիչ յիշէ կրկին եկեղեցիս, մեծ և փոքր, և յարէ, թէ Համազասպ եպիսկոպոս * Շի-
„նեաց եկեղեցի 'ի տեղին հրաշալի, և զանգակատուն
„և ժամատուն մեծ և սքանչելի ||:

623. Այսոքիկ երեքին տաճարք միակցորդք են կրկնայարկք. թէ 'ի վերին և թէ 'ի ստորին յարկս գոն ընդ ամենայն 44 խորանք, և սեղանք, զանազան դրուագք, քարաշէն և սիւնազարդ դրունք, այլովքն հանդերձ: Սուքանօր լուսամուտք շրջանակաւորք և փառաւոր բարձրահայեաց կաթուղիկէք կամ գմբէթք հրաշալի երևին 'ի հեռուստ:

Ի հիւսիսակողմն ամփոփեալ կան մարմինք թագաւորաց մերոց Աշոտի և Սմբատայ, որք երբեմն փախուցեալք յերեսաց թշնամեաց՝ ամրացան յանմատչելի լեառն և յանտառախիտ մայրս, զորս ապա եռուն հատանել և առնել հովիտ գեղեցիկ: Անդ շինեցին զայս մեծահռչակ վանս. ուր հին պատմիչք միաբանամայն յիշեն զվանս Հաղբատայ և Սանահնի. ըստ որոյ և մեք եդաք 'ի սկիզբն մատենիս (17): Սակայն

Թուի թէ Սանահնին 'ի վաղուց շինեալ էր. սմանք աւանդութեամբ ասեն, թէ հիմնեալ է այն 'ի սրբոյ Լուսաւորչէն: Սոր 'ի Ժ դարուն կրօնաւորք փախուցեալք 'ի Հոռոմոց շինեցին զեկեղեցի: Ըստ այսմ բերէ և Վարդան յասելն * Շինեցին և զեկեղեցի
„ մի յանուն սբ. Ածածնին 'ի վանքն որ կոչի Սանահին
„ 'ի սահմանս Լոռէ քաղաքին ||:

Բայց որպէս ասացաք, զայս վանս և զՀաղբատ նորոգ հիմնարկեալ կանգնեալ Խոսրովանոյշ Թագուհին Աշոտոյ Թգրի ողորմածի. զոր յիշէ Վարդան Է այլոց յասելն. * Թագուհին մի շինեաց զՀաղբատ և զսա-
„ նահին զհռչակաւոր վանորայս 'ի թվին ՆԺ (961) ||:

Հաղբատ 'ի ԺԱ դարուն եղև եպիսկոպոսանիստ 'ի ձեռն Կիւրիկէ արքային. ուր ըստ պատմելոյ Կիրակոսի՝ Յովհաննէս եպիսկոպոս * Օգտութիւն փոքրա-
„ գոյն քակեաց, որ 'ի դուռն կաթուղիկէին Հաղբա-
„ տայ, և շինեաց մեծ և գեղեցիկ շինուածս, որ զար-
„ մացուցանէ զտեսողս հիացմամբ ||:

Պարծեալ նա ինքն ասէ վասն միւս Յովհաննու եղբօրորդւոյ առաջնոյս. * Շինեաց բերդ մի ամրագոյն
„ պարսպօք 'ի մէջ Հաղբատայ և Սանահնի. վասն որոյ
„ գժտութիւն ընդ երկուս մեծամեծ վանորայս եղև.
„ որպէս թէ 'ի հողոյ Սանահնին իցէ. և վրէժխնդիր
„ եղև իշխանն Շահնշահ որդին Զաքարէ Սանահնին...
„ զի Հաղբատ 'ի վրաց թագաւորին հաշուին էր յայնմ
„ ժամանակի. իբրև մեռաւ եպիսկոպոսն Յովհաննէս՝ քակե-
„ ցին և զպարիսպն բերդին հրամանաւ թաթարին ||:

624. Սմին իբրև ականատես պատմեաց, թէ բազում ամօք յառաջ կային յանկեան եկեղեցւոյն Հաղբատայ բազում գրչագիր մատեանք գրեալք հին գրով, զորս ապա փոխադրեցին 'ի Թիֆլիզ, և անտի ցրուեցան աստ և անդ 'ի պատերազմին: Նա տեղեաւս էր գերեզմանատուն վարդապետաց, զոր յիշէ և Կիրակոս յասելն սակս Թորոս վարդապետին. * Կայ
„ թաղեալ 'ի հռչականաւն վանքն Հաղբատ 'ի գլուխ
„ վանացն 'ի գերեզմանս եպիսկոպոսացն և վարդապե-
„ տացն ||: Տես և 'ի կարգս Յիշատակարանաց զգերեզմանս նախնեաց այլովքն հանդերձ (126): 'Ի հնումն առ ստս լերին կային գիւղօրէք Կոխմախուր, Խէչէ, և Խնձորագիւղ:

ՑԱՆԿ ՄԱՏԵՆԻՍ

ԸՍՏ ԿԱՐԳԻ ԱՅԲՈՒԲԵՆԻՑ

Ա

Բ

Գ

Դ

Ե

Զ

ՎԱԽՃԱՆ

ՎԱԽՃԱՆ

